



Տ Ա Ր Ե Վ Ա Ն Ջ Ե Վ Ո Ւ Յ Ց

2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	23
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	42
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.....	66
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.....	69
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ	77
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	91
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	123
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	137
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	149
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	156
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ.....	161
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ	177
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	184
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	192
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	197
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	207
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	220
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.....	237

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ247	247
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ254	254
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ.....258	258
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ278	278
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....288	288
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ295	295
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....298	298
ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ305	305
ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ327	327
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....339	339
ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ346	346
ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....352	352
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ357	357
ԱՌՈՂՋ ԵՎ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ.....361	361
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ368	368
ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ373	373
ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ378	378
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ384	384
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ389	389
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ ՈՐՊԵՍ ԲՈՆՈՒՅԹՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ393	393

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

Ներկայումս Պաշտպանն ունի 2 տեղակալ: Պաշտպանի 1-ին տեղակալը հանդիսանում է արդար դատաքննության և խոսքի ազատության հարցերով պատասխանատուն: Պաշտպանի երկրորդ տեղակալը պատասխանատու է զինծառայողների իրավունքների հարցերով: Պաշտպանի աշխատակազմում գործում է 6 վարչություն՝ Անհատական դիմումներով իրավունքների պաշտպանության վարչություն, Իրավական վերլուծության վարչություն, Արտաքին կապերի վարչություն, Արագ արձագանքման վարչություն, Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմ, Գործերի կառավարչություն: Բացի այդ Պաշտպանն ունի նաև 2 խորհրդական՝ կանանց, շրջակա միջավայրի պահպանության, փախստականների և երեխաների հարցերով, ինչպես նաև՝ հաշմանդամություն ունեցող անձանց, փոքրամասնությունների և սոցիալ-տնտեսական հարցերով: ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որով ՀՀ կառավարությունը նախատեսել էր Պաշտպանի գործունեության համար անհրաժեշտ բյուջեն ավելացնել մոտ 25 միլիոնով, ինչի արդյունքում շարունակեցին գործել Պաշտպանի արագ արձագանքման ծառայությունը և մարզային գրասենյակները Գավառում, Կապանում, Գյումրիում:

Անձանց դիմումների և օրենսդրական առաջարկությունների վիճակագրություն

Պաշտպանը և իր աշխատակազմն իրավական ծառայություն են մատուցել 6805 անձի: 2012թ. համեմատ՝ Պաշտպանի աշխատակազմի կողմից վարույթ ընդունած գործերի ընդհանուր թիվն աճել է 19%-ով: 2013թ. քննարկման ընդունված 1090 բողոքներից դրական լուծում են ստացել 273-ը, ինչը 2012թ. համեմատ, 25-ով պակաս է: Դրական լուծումների նվազման արդյունքում ավելացել է պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման մասին որոշումների թիվը, որը 2013թ. կազմել է 61, ինչը, 2012թ. համեմատ, 30-ով ավել է: Ընդ որում, 2010թ. քննարկման ընդունված 469 բողոքներից դրական լուծում են ստացել 123-ը, 2011թ.՝ ընդունված 607 բողոքներից դրական լուծում են ստացել 125-ը, իսկ 2012թ.՝ 999 բողոքներից դրական են լուծվել 295-ը:

Ցավոք, որոշ պետական մարմինների աշխատառճի և հիմնականում, ներկայացված խախտումների չվերացման հետևանքով է, որ դրական լուծում ստացած գործերի թիվը նվազել է 50.9%-ով, իսկ խախտում հայտնաբերելու մասին որոշումների թիվն աճել 49.1%-ով:

2013 թվականի ընթացքում Պաշտպանը ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված 112 օրենսդրական առաջարկություն՝ ի տարբերություն 2012 թվականին արված շուրջ 60 առաջարկությունների: 2013թ. ընթացքում նախագծերի հեղինակների կողմից ամփոփվել է 61 առաջարկություն, որի 51%-ն ընդունվել է՝ ի

տարբերություն 2012թ. ընթացքում ամփոփված 36 առաջարկությունների, որոնցից ընդունվել էր 42%-ը: 2013 թվականին պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման մասին 61 որոշում է կայացվել: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ամփոփ վիճակագրությունը, ըստ պետական մարմինների և ըստ մարզերի, ներկայացված է Հավելվածում:

116 թեժ գծի և արագ արձագանքման ծառայություններ

Պաշտպանի թեժ գծի ծառայությունը գործում է և տրամադրում է քաղաքացիներին իրավաբանական խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքմամբ այցելում էին դեպքի վայր և օգնում տեղում: 2013թ. թեժ գիծն ընդունել է 1175 ահազանգ: Արագ արձագանքումը հիմնականում իրականացվել է, երբ անձն անհիմն բերման է ենթարկվել իրավապահ մարմինների կողմից կամ ենթարկվել է բռնության: Արագ արձագանքմամբ քաղաքացիներին աջակցություն է տրամադրվել նաև հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության հետ ծագած խնդիրների պարագայում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 313 արագ արձագանքում, տրամադրվել՝ 1082 իրավաբանական խորհրդատվություն:

2013թ. նախագահական ընտրությունների ողջ ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի 116 թեժ գծին ստացվել է 255 ահազանգ՝ ի համեմատություն 2012թ. տեղի ունեցած ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների, երբ ստացվել էր ընդհանուր 310 ահազանգ: 225 ահազանգերից 43-ի դեպքում քաղաքացիները կարիք են ունեցել իրավաբանական խորհրդատվության, ստացել են այն և կարողացել են լուծել իրենց հուզող խնդիրը: 52 ահազանգ, նույնիսկ առերևույթ, հիմնավոր չի եղել: Առաջնորդվելով Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝ Պաշտպանը 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահի ընտրությունների վերաբերյալ հանդես եկավ արտահերթ զեկույցով:

2013թ. մայիսի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը, ընդհանուր առմամբ, դրական է գնահատվել, թեև այդ ընթացքում Պաշտպանի 116 թեժ գիծը ստացել էր 19 ահազանգ, որոնք հիմնականում վերաբերում էին ընտրացուցակներում առկա անճշտություններին, ընտրատեղամասում կուտակումներին, ընտրակաշառքի բաժանմանը, լրագրողի նկատմամբ բռնությանը, և այլն:

Այցելություններ կալանավայրեր, գորամասեր և այլ փակ հաստատություններ

Ազգային կանխարգելման մեխանիզմը, մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, իրականացրել են 212 այցելություններ քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր, գորամասեր, հոգեբուժարաններ, մանկատներ, հատուկ դպրոցներ, տուն-ինտերնատներ, գիշերօթիկ հաստատություններ: Այցելությունների արդյունքում բացահայտվել և/կամ վերհանվել են մի շարք մտահոգիչ խնդիրներ, մասնավորապես՝ գորամասերի կենցաղային պայմանների անբավարարություն, գորամասերում բժշկական ոչ պատշաճ սպասարկում, կանոնադրային վարքականոնների խախտման և խտրական

վերաբերմունքի դրսևորման դեպքեր, սահմանափակումով զորակոչված զինծառայողներին ծառայության ընթացքում իրենց առողջությանը հակացուցված պարտականությունների սահմանման դեպքեր, զորամասերում հոգեբանի հաստիքի բացակայություն, անորակ և միատեսակ սնունդ, զորամասերի հիվանդասենյակների մաքրմանը հիվանդ զինվորների մասնակցության դեպքեր, հատուկ հանրակրթական դպրոցներում երեխաների պահման և խնամքի ոչ բարեկարգ պայմաններ, նշված դպրոցներում մասնագիտական որակավորման վերապատրաստում ունեցող մասնագետների համալրման անհրաժեշտություն, սոցիալական խնամքի հաստատություններում թեքահարթակների բացակայություն, ժամկետանց դեղերի ու ներարկիչների բազմակի օգտագործման դեպքեր և այլն:

Բացահայտված խախտումների մասին պատշաճ ձևով տեղյակ են պահվել համապատասխան իրավասու մարմինները, և դրանց կապակցությամբ ներկայացվել են առաջարկություններ:

Զեկույցներ

Պաշտպանը ներկայացրել է 4 արտահերթ հրապարակային զեկույց: 2013 թվականի նախագահական ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումները և խնդիրները Պաշտպանը ներկայացրել է հատուկ արտահերթ զեկույցով: Առանձին զեկույցներ են ներկայացվել նաև արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ: ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն Ժնևում մեկնարկած 63-րդ նստաշրջանի ընթացքում քննարկեց Հայաստանի զեկույցը: Դրան զուգահեռ Մարդու իրավունքների պաշտպանն իր հերթին այլընտրանքային զեկույց էր ներկայացրել և բարձրաձայնել մեր երկրում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա համակարգային բացերը և հանդես եկել համապատասխան առաջարկություններով: 11 կետերից 7-ում Կոմիտեն անդրադարձել է Պաշտպանի կողմից բարձրաձայնված մտահոգություններին:

Պաշտպանը նաև իր դիտարկումներն է հայտնել ՌԱԵՀ-ի (ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողով) Հայաստանի վերաբերյալ զեկույցի հիման վրա տրված Հայաստանի Հանրապետության կողմից Միջանկյալ հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Պաշտպանի կողմից պատրաստվել էին ՄԱԿ-ի՝ Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ նախնական հարցերը, որոնք ներկայացվել են ՄԱԿ-ի համապատասխան կոմիտե: Նախատեսվում է նաև Կոնվենցիայի կատարման վերաբերյալ Պաշտպանի այլընտրանքային զեկույցի ներկայացումը:

Հայտարարություններ

2013 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից արվել են 97 հայտարարություններ, մասնավորապես՝ ՀՀ դատական իշխանության թերացումների, հավաքների ազատության, կենսաթոշակատուների իրավունքների խախտումների, կանանց, սոցիալապես անապահով

խավերի, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ:

Ապրիլին Պաշտպանը կոչ էր արել ՀՀ Ոստիկանությանը՝ համաչափ պատասխանատվության ենթարկել ապրիլի 9-ին Արմեն Մարտիրոսյանին ոստիկանական բաժանմունք բերման ենթարկելու ընթացքում օրենքը խախտած բոլոր անձանց՝ անկախ զբաղեցրած պաշտոնից ու դիրքից:

Մտահոգված լինելով հուշարձանների պահպանության խնդրով՝ մայիսին Պաշտպանը կոչ էր արել պատկան մարմիններին դադարեցնել Երևանի փակ շուկայում արդեն մեկ տարի ընթացող ապօրինի շինարարական աշխատանքները:

Ռուսաստանի դաշնությունում հուլիսի 15-ին Հրաչյա Հարությունյանին նվաստացուցիչ տեսքով դատարան բերման ենթարկելու վերաբերյալ Պաշտպանը բաց նամակ էր հղել Ռուսաստանի դաշնության Օմբուդսմեն Վլադիմիր Լուկինին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն իրավական օգնություն ցուցաբերելու միջնորդությամբ:

Ելնելով ՀՀ օրենսդրության պահանջներից, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունից, ինչպես նաև ղեկավարվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով՝ հոկտեմբերին Պաշտպանը հայտարարություն էր արել, որ Կոմիտաս 5-ի բողոքի ակցիայի ընթացքում ՀՀ ոստիկանությունը գործել է ոչ իրավաչափ, իսկ առանձին դեպքերում՝ խախտել որոշ մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

Օմբուդսմենն անդրադարձել էր նաև նախագահական, խորհրդարանական և ավագանու ընտրություններին, ընտրական և հետընտրական գործընթացներում արձանագրված դրական և բացասական երևույթներին:

Մտահոգված լինելով Նելսոն Ստեփանյանի անվան մանկական այգում տեղի ունեցող արատավոր երևույթներով՝ Օմբուդսմենը կոչ էր արել Երևանի քաղաքապետարանին և ՀՀ ոստիկանությանը վերացնել երեկոյան ժամերին Կոմայգում տիրող այլասերվածությունը:

Դիմումներ ՀՀ Սահմանադրական դատարան

2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 7 դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան, որոնց արդյունքում.

- Որպես քրեական պատիժ նախատեսված տուգանքը այլևս չի կարող փոխարինվել մեկ այլ քրեական պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով, եթե տուգանքի չվճարումը պայմանավորված է եղել անձի համար դրա վճարման անհնարինությամբ,
- Օրենքով սահմանված ժամկետներում հարկերը չվճարելու դեպքում հարկային մարմինը տնտեսվարող սուբյեկտներին այսուհետ կարող է ենթարկել կամ միայն վարչական, կամ միայն հարկային պատասխանատվության,
- Փաստաբաններն այլևս ստիպված չեն լինի ստանալ քննիչի թույլտվությունը իրենց միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցելու համար, ինչպես նաև կվերացվի դատավարական

գործողություններին փաստաբանների մասնակցության ոչ իրավաչափ ժամանակային սահմանափակումը,

- Սահմանադրական դատարանը հայտնեց իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում կիրառվող «ուսումնական հաստատությունների *ողջամիտ* ինքնավարություն» եզրույթը չպետք է երկիմաստություն առաջացնի՝ ելնելով իրավական որոշակիության սկզբունքի պահանջից, և հարկավոր է խնդրի վերաբերյալ իրականացնել օրենսդրական բարեփոխումներ:
- 2013թ. Սահմանադրական դատարան են ներկայացվել դիմումներ, որոնցով 2014 թվականին է ակնկալվում դատարանի որոշման կայացումը: Դիմումներում բարձրացված խնդիրները վերաբերում են հետևյալին.
- Քրեական դատավարության ընթացքում դատավորների համար օրենսդրությամբ նախատեսված է բացարձակ հայեցողության հնարավորություն վաղեմության ժամկետի կիրառման հարցում և օրենքով հստակեցված չեն այն հանգամանքները, որոնց բացակայության կամ առկայության դեպքում դատավորը պետք է որոշի վաղեմության ժամկետի կիրառման կամ մերժման հարցը,
- Տևող կամ շարունակվող եզրույթների հստակ օրենսդրական սահմանումների («Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք), որոշակի պարտադիր չափանիշների և/կամ հիմքերի բացակայությունը, որոնց վրա կհիմնվեր վարչական մարմինը զանցանք որպես այդպիսին որակելիս՝ արգելափակում է անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, քանի որ չկան մեխանիզմներ նշյալ որոշումների դեմ հակափաստարկներ ներկայացնելու համար,
- Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով («Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենք և ՀՀ Վարչապետի 04.11.1996 թ. թիվ 604 որոշման) ավագ զինվորական ներկայացուցիչ-դեկավար հաստիքի բացակայության պայմաններում, այդ պաշտոնը փաստացի զբաղեցրած անձը ստանում է ոչ համապատասխան և ցածր գործակիցով հաշվարկված կենսաթոշակ:

Օրենսդրական առաջարկություններ

2013 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից ներկայացված և ընդունված առաջարկությունների արդյունքում, մասնավորապես՝

- ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում կնախատեսվի, որ անձի ազատությունը սահմանափակելիս անձը բժշկական օգնություն կարող է պահանջել ոչ թե վարույթի յուրաքանչյուր փուլին, այլ՝ ազատության սահմանափակումից սկսած յուրաքանչյուր պահին :
- ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում կնախատեսվի, որ անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությանը պարտադիր մասնակցություն պետք է ունենա մանկավարժ, իսկ հատուկ դեպքերում՝ հոգեբան: Ելնելով անչափահասի շահերից՝ կնախատեսվի, որ անչափահասի հարցաքննությանը պարտադիր պետք է մասնակցի նաև նրա օրինական ներկայացուցիչը:

- ՀՀ դատական օրենսգրքում կհատակեցվի Դատավորների խորհրդի նիստերի՝ հանրության համար առավել մատչելի այնպիսի միջոցներով հեռարձակումը, ինչպիսիք են օրինակ՝ հանրային հեռուստատեսությունը/ռադիոն, Դատավորների խորհրդի պաշտոնական կայքէջը և այլն:
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կնախատեսվի, որ ոչ նյութական վնասի չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում վնասի բնույթը, այն պատճառելիս մեղքի առկայությունը, դրա առկայության դեպքում՝ ձևը և աստիճանը, ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը՝ նկատի ունենալով ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ:
- «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքում կհատակեցվի, թե ինչպիսի համաձայնություն է հարկավոր անձի կողմից՝ գրավոր թե բանավոր, որպեսզի համապատասխան մարմինները անձին ուղղորդեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ինչպես նաև կսահմանվի այնպիսի դրույթ, ըստ որի՝ համապատասխան մարմինները յուրաքանչյուր դեպքում պետք է ստանան անձի համաձայնությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, անձի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելիս:
- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում կնախատեսվի, որ եթե իրավունքը ծագում է դատական ակտի հիման վրա կամ իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի հիման վրա, ապա իրավունքի ծագման, փոփոխման, փոխանցման կամ դադարման պետական գրանցումն այդ իրավատիրոջ կողմից չկատարվելու դեպքում կարող է իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի դիմումի հիման վրա: Սույն փոփոխությունը, ըստ էության, կբացառի գույքի փաստացի տիրապետման, սակայն գրանցված չլինելու հետևանքով ալիմենտային պարտավորություններից խուսափելու դեպքերը:
- ՀՀ ընտանեկան օրենսգրքում և այլ ենթաօրենսդրական ակտերում կնախատեսվի պարտավորություն խնամակալության և հոգաբարձության մարմնի համար ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում երեխայի ազգանունը և անունը որոշելու ցուցում տալիս այն տալ պարտադիր կերպով գրավոր, ինչպես նաև պատշաճ հիմնավորումներով: Միաժամանակ կնախատեսվի խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտավորությունը այդ ցուցումը տալու հստակ սահմանված ժամկետներում:
- «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կշարունակվի կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվել մահացած կերակրողի 18 տարին չլրացած եղբորը, քրոջը և թոռանը, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի վերաբերյալ առաջարկվել էր վերանայել և պատշաճ կերպով շահագրգիռ անձանց հետ քննարկելուց հետո միայն համապատասխան շրջանառության մեջ դնել Նախագծերի փաթեթը, որի հիմնական փոփոխությունների համաձայն՝ փաստաբանների պետական գրանցամատյանը վարում էր ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, ինչպես նաև այն, որ ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված փաստաբանին փաստաբանների պետական գրանցամատյանում մեկ տարի ժամկետով հաշվառելու համար բազային տուրքի 60-ապատիկի չափով պետական տուրք էր սահմանվում: Արդյունքում Նախագծային փաթեթը հանվեց շրջանառությունից:

Պաշտպանի կողմից ուսումնասիրվել են մի շարք այլ օրենքների նախագծեր, ինչպիսիք են՝ «Ձբաղվածության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Խղճի և կրոնական ազատությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի մի քանի նախագծեր, «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Անհատական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և այլ օրենքների ու ենթօրենսդրական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ նույնպես ներկայացվել են մի շարք առաջարկներ:

Համագործակցություն ՀՀ Ազգային ժողովի հետ

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն ունեցել են տասնյակ հանդիպումներ ԱԺ մի շարք պատգամավորների հետ, որոնց ընթացքում քննարկվել են տարբեր օրենսդրական նախաձեռնություններ և ԱԺ օրակարգում ներառված օրենքի նախագծեր:

Տարբեր խնդրահարույց հարցերի և օրենսդրական կարգավորումների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպվել են մի շարք կլոր-սեղան քննարկումներ, որոնց հրավիրվել են ԱԺ պատգամավորներ, ԱԺ աշխատակազմի ներկայացուցիչներ, Արդարադատության նախարարության, Գլխավոր դատախազության, Ոստիկանության, Փաստաբանների պալատի, Դատական դեպարտամենտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտի այլ մասնագետներ:

Մասնավորապես 2013 թվականի ընթացքում քննարկվել են.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ կասկածյալին կամ մեղադրյալին, ելնելով նրա գույքային դրությունից, անվճար

իրավաբանական օգնություն տրամադրելու մասին որոշում ընդունելու քրեական վարույթ իրականացնող մարմնի հայեցողության իրավաչափության հարցը:

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքը և դրա վերաբերյալ խնդրահարույց օրենսդրական կարգավորումները:
- Վաղեմության ժամկետի կիրառման հարցը կարգավորող ՀՀ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի կարգավորումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումներին:
- ՀՀ բանկերի միության նախագահի, հայաստանյան խոշոր բանկերի կառավարիչների, Ֆինանսական արբիտրաժի նախագահի և ոլորտի այլ մասնագետների մասնակցությամբ՝ Ֆինանսական արբիտրաժի միջոցով քաղաքացիների և բանկերի միջև վեճերի լուծման կարգի խնդրահարույց առանձնահատկությունները
- Իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց օրինական գործունեությանը խոչընդոտելը, որպես քրեորեն հետապնդելի արարք նախատեսման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով առանձին անհատների կողմից իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ բռնության ու ծեծի ենթարկելու դեպքերը:

Քննարկումներ են անցկացվել նաև վարչական տուգանքի համաչափությանը, սեփականության իրավունքի օգտագործման սահմանափակմանը վերաբերող թեմաներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության նոր օրենսգրքեր նախագծերով առաջարկվող խնդրահարույց կարգավորումների վերաբերյալ:

Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ՍՕՍ մանկական գյուղեր կազմակերպության հետ համատեղ «Հետադարձ հայացք դեպի մանկատուն» ծրագրի շրջանակներում անցկացրեց վերապատրաստման հատուկ դասընթաց, որի նպատակն էր մանկատան շրջանավարտներին փոխանցել խնամքի հաստատություններում մոնիթորինգ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները: Վերապատրաստումից հետո մանկատան նախկին սաներից ստեղծվել է խորհուրդ, որը Պաշտպանի Ազգային կանխարգելման մեխանիզմի ներկայացուցիչների հետ այցելել են երեխաների խնամքի տարբեր հաստատություններ և ուսումնասիրություններ իրականացրել այնտեղի պայմանների, սաների նկատմամբ վերաբերմունքի, բուժ սպասարկման պայմանների, անձնակազմի համալրվածության և մասնագիտական պատրաստվածության հետ կապված:

ՍՕՍ մանկական գյուղեր կազմակերպության հետ իրականացվել է նաև «Մի կործանեք իմ ապագան» խորագրով ծրագիրը, որն ուղղված էր երեխաների մուրացկանության դեմ պայքարին: Ծրագրի շրջանակներում մոտ չորս ամիս կազմակերպության մասնագետները Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի հետ համատեղ մի շարք շրջայցեր են իրականացրել Երևան քաղաքի տարբեր համայնքներում մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և աջակցություն տրամադրելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում նկարահանվել է նաև երեխաների մուրացկանության խնդրի բարձրացմանն ուղղված սոցիալական հոլովակ, որը մոտ երկու ամիս ցուցադրվել է տարբեր հեռուստաալիքներով, հասարակությանը տեղեկացնելով, որ մուրացիկ երեխաներին գումար տալով, ոչ թե օգնում են նրանց, այլ նպաստում նրանց իրավունքների ոտնահարմանը:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա նախօրեին Պաշտպանը այցելեց Կոտայքի մարզում գտնվող ՍՕՍ մանկական գյուղ՝ հանդիպելու տեղի երեխաներին և Երիտասարդական խորհրդի անդամներին:

Պաշտպանի խորհրդականի կողմից այցելություններ են իրականացվել «Լայթ Հաուս» հիմնադրամ և «Մեր տունը» բարեգործական հասարակական կազմակերպություն, որտեղ բնակվող կանանց և մանկատան շրջանավարտների համար անց են կացվել կանանց իրավունքների վերաբերյալ դասընթացներ:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մի շարք հանդիպումներ են ունեցել մարզերի և Երևան քաղաքի դպրոցականների և ուսանողների հետ, որոնց ընթացքում անց են կացվել մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներ, ինչպես նաև քննարկվել են երեխաների և երիտասարդների կողմից բարձրացված մի շարք հարցեր, ինչպիսիք են օրինակ ընտրական գործընթացներին, երեխաների հիմնախնդիրներին վերաբերող հարցերը և այլն:

Ընտանեկան բռնության վերաբերյալ դասընթացներ են անցկացվել Գյումրու դպրոցների և մանկապարտեզների մանկավարժների հետ:

Պաշտպանի աշխատակազմում Պաշտպանի՝ կանանց հարցերով խորհրդականի մասնակցությամբ, կանանց իրավապաշտպան կազմակերպությունների հետ համատեղ, տեղի է ունեցել մամլո ասուլիս՝ ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման և առհասարակ ընտանեկան բռնությունը, որպես արդի հիմնախնդիր, բարձրացնելու նպատակով:

Շահագրգիռ բնապահպանական կազմակերպությունների և պետական իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել կլոր սեղան քննարկում, որի նպատակը բնապահպանական արդի հիմնախնդիրների վերհանումն էր և համապատասխան իրավական լուծումների առաջադրումը:

Պաշտպանի աշխատակազմի միջոցներով Հայաստանի 5 մաքսատներում և անձնագրային անցակետերում տեղադրվել են Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի ցուցանակներ: Տեղեկատվական հոլովակներ են ցուցադրվում նաև Զվարթնոց օդանավակայանի սրահներում:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացվել են հանդիպումներ և շրջայցեր տարբեր ԲՈՒՀ-երի (Երևանի պետական համալսարան, Հայաստանի Ամերիկյան համալսարան և այլն) ուսանողների և աշակերտների համար, որոնց ընթացքում մասնակիցները ծանոթացել են ինչպես Պաշտպանի ինստիտուտի գործունեության, այնպես էլ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին:

Քննարկումներ են կազմակերպվել և անցկացվել նաև Երևանի Կենտրոնական ծածկած շուկայի (Փակ շուկա) շենքին առնչվող խնդրի վերաբերյալ պետական պատկան մարմինների և քաղաքացիական ակտիվիստների մասնակցությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը, համագործակցելով ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի և Երևանում Բրիտանական դեսպանատան հետ, իրականացրել է «Բանավիճում ենք հանուն մարդու իրավունքների զարգացման» ծրագիրը ԲՈՒՀ-երի ուսանողների համար: Ծրագրին մասնակցել են շուրջ 180 երիտասարդներ Երևանից և ՀՀ հինգ մարզերից՝ Գեղարքունիքից, Շիրակից, Վայոց Ձորից, Տավուշից և Լոռուց՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մարզային մասնաձյուղերի հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրի նպատակն էր ուսանողների բանավիճելու հմտությունների զարգացումը, ակտիվ քաղաքացիական դիրքորոշումների ձևավորումը և դրանց արտահայտումը, մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը:

Անցկացվել են քննարկումներ իրավապաշտպան մի շարք հասարակական կազմակերպությունների հետ Մարդու իրավունքների ազգային ռազմավարության նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով, ինչպես նաև բաց քվեարկությամբ ընտրվել են առանձին հասարակական կազմակերպություններ, ինչի արդյունքում այդ կազմակերպությունները ներգրավվել են մարդու իրավունքների ազգային ռազմավարության իրականացման հանձնաժողովում:

2013թ. մայիսի 31-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել Մարդու իրավունքների պաշտպանի և «ՍՕՍ մանկական գյուղեր Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ազգային տնօրեն Աշոտ Քոչարյանի հետ՝ հետագա համագործակցության և երեխաների հիմնախնդիրները համատեղ ուժերով լուծելու համար:

Կնքվել է հուշագիր նաև «Հայկական Կարիտաս» բարեգործական ՀԿ-ի հետ, որի շրջանակներում համագործակցում ենք հաշմանդամություն ունեցող անձանց և, հատկապես, երեխաների իրավունքների պաշտպանության, հաստատություններում երեխաների խնամքի արդյունավետ կազմակերպման արտասահմանյան փորձի ուսումնասիրման ուղղությամբ: Հայկական Կարիտասի ջանքերով լուծվել է նաև Պաշտպանի գրասենյակի մատչելիության հարցը՝ ապահովելով գրասենյակի մատչելիությունը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Միջազգային համագործակցություն

2013 թվականին ՄԱԿ-ի Միջազգային համակարգող հանձնաժողովի կողմից ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին շնորհվել է «A» դասի բարձրագույն կարգավիճակ, որը հիմնականում շնորհվում է այն օմբուդսմեններին/մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտներին, ովքեր անկախ են, օբյեկտիվ և դրսևորում են խնդիրներն արդյունավետորեն ուսումնասիրելու և լուծելու կարողություն: ՄԱԿ-ի Միջազգային համակարգող հանձնաժողովն իր այս որոշմամբ հաստատել է, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը գործում է Փարիզյան սկզբունքների համաձայն և համապատասխանում է բարձրագույն կարգավիճակ ստանալու բոլոր չափանիշներին: «A» դասի կարգավիճակը ոչ միայն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի կարգավիճակի բարձրացումը, այլև ապահովում է տվյալ երկրի հեղինակության դերի բարձրացումը միջազգային ասպարեզում: Նման կարգավիճակ ստացած Օմբուդսմենները հնարավորություն են ստանում առավել արդյունավետորեն

հանդես գալ Միավորված ազգերի կազմակերպությունում և մի շարք այլ հեղինակավոր միջազգային կառույցներում, ինչպես նաև կարողանում են բարձրաձայնել և ներկայացնել մարդու իրավունքներին վերաբերող հիմնահարցեր միջազգային ամենաբարձր ամբիոններից:

2013 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և Պաշտպանի աշխատակազմը կազմակերպել և իրականացրել են մի շարք տեղական և միջազգային ծրագրեր: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում Օմբուդսմենների միջազգային ցանցերի, Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, ՄԱԿ-ի, Հայաստանում մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների, այլ երկրների օմբուդսմենների ինստիտուտների և այլ կառույցների հետ:

Մասնավորապես, 2013 թվականին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և խտրականության դեմ պայքարի դիրեկտորիատի և Ռուսաստանի Օմբուդսմենի ինստիտուտի հետ իրականացվել է համատեղ ծրագիր, որի շրջանակներում Հայաստանի Օմբուդսմենի աշխատակազմում վերապատրաստվելու նպատակով Ռուսաստանի Դաշնությունից Երևան էին ժամանել ճանաչված իրավապաշտպաններ: Փակ հաստատություններում Հայաստանի Օմբուդսմենի մոնիթորինգային փորձը համարելով օրինակելի՝ Եվրոպայի խորհուրդը նախաձեռնել էր փորձի փոխանակման այս ծրագիրը, որի նպատակն էր ռուս իրավապաշտպաններին ծանոթացնել Հայաստանի Օմբուդսմենի ինստիտուտում գործող Բոնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի արդյունավետ գործունեությանը: Եռօրյա այցի ընթացքում ռուս իրավապաշտպաններն այցելեցին բանտեր, ոստիկանության բաժանմունքներ, հատուկ դպրոցներ և հոգեբուժարաններ: Այցերի ժամանակ Հայաստանի Օմբուդսմենի ինստիտուտում ձևավորված Բոնությունների կանխարգելման մեխանիզմի իրավապաշտպանները ռուս գործընկերներին ներկայացրեցին փակ հաստատություններում մոնիթորինգ իրականացնելու իրենց փորձն ու հմտությունները, ինչպես նաև անցկացրեցին գործնական աշխատանքներ: Այցերն ամփոփվեցին կլոր-սեղան քննարկմամբ, որի ընթացքում ռուս իրավապաշտպանները Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրեցին իրենց ստացած տպավորությունները: Ծրագրի ընդհանուր ամփոփիչ կոնֆերանսը տեղի ունեցավ Մոսկվայում:

2012-2013 թվականներին Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում 2012-2013 թվականների ընտրությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի ընթացքում հանրապետության վեց մարզկենտրոններում, մասնավորապես՝ Վանաձորում, Գավառում, Իջևանում, Գյումրիում, Եղեգնաձորում, Կապանում հիմնվել են Պաշտպանի աշխատակազմի մարզային գրասենյակներ, որոնց ակտիվ գործունեության շնորհիվ Հայաստանի հեռավոր մարզերի, գյուղերի և համայնքների քաղաքացիները կարողացան վերականգնել իրենց խախտված իրավունքները, ստանալ իրավաբանական խորհրդատվություն և օգտվել գրասենյակի այլ ծառայություններից: Պաշտպանի վեց

մարզային գրասենյակները մասնակցել են ինչպես խորհրդարանական ու նախագահական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին՝ իրականացնելով մշտադիտարկում, արագ արձագանքում և տրամադրելով իրավաբանական խորհրդատվություն:

Մեկ այլ ծրագիր իրականացվեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուիթնիեկսի՝ Հայաստան կատարած առաջին այցի շրջանակներում, որի ընթացքում Պաշտպանը և Հանձնակատարը այց կատարեցին սիրիահայ փախստականների կացարան: Այցից հետո նրանք հանդես եկան համատեղ մամլո ասուլիսով, որի ընթացքում բարձրաձայնեցին վերհանած խնդիրները:

Պաշտպանը մասնակցել է Կիևում կայացած «Արևելյան գործընկերության երկրների Օմբուդսմենի ինստիտուտների միջև համագործակցության ամրապնդում» վերնագրով կոնֆերանսին, որի ընթացքում մասնակից պետությունների Օմբուդսմեններն ու ներկայացուցիչները կիսվել են ոլորտում ունեցած փորձով և մշակել համագործակցության մեխանիզմներ:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵֆ) միջև: ՅՈՒՆԻՍԵֆ-ի աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի 2013 թվականի 63-րդ նստաշրջանին: Բացի այդ, երկու գրասենյակների կողմից տարվա ընթացքում կազմակերպել են համատեղ միջոցառումներ, ինչպիսիք են Երեխաների միջազգային օրը և մի շարք այլ հանդիպումներ: ՅՈՒՆԻՍԵֆ -ի հետ համագործակցությամբ 2013 թվականին ձեռք է բերվել համաձայնություն 2014 թվականի ընթացքում համատեղ մշակել նաև երեխաների իրավունքների խախտման դեպքերի մասին Պաշտպանի աշխատակազմին առավել արդյունավետ տեղեկացնելու մեխանիզմի ստեղծման հարցը:

Միջազգային հանդիպումներ

2013 թվականին Պաշտպանն ունեցել է մի շարք գործնական հանդիպումներ ինչպես այլ երկրների Օմբուդսմենների, այնպես էլ միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ: Պաշտպանը և Աշխատակազմի այլ ներկայացուցիչներ մասնակցել են միջազգային համաժողովների, քննարկումների, գիտաժողովների և այլն:

Մասնավորապես, Պաշտպանը ներկայացուցչություն է ունեցել Եվրոպական Օմբուդսմենի ինստիտուտի Գլխավոր ասամբլեայի նիստում, որը այս տարի հատկապես կարևորվեց Եվրոպական Օմբուդսմենի ինստիտուտի, որի անդամն է հանդիսանում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, հիմնադրման 25-րդ տարեդարձի կապակցությամբ:

Պաշտպանը մասնակցել է նաև Վիենայում կայացած «Միասին ամրապնդելով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների փոփոխվող դաշտում» թեմայով կոնֆերանսին, որի ընթացքում քննարկվել են Եվրոպական երկրներում մարդու իրավունքների զարգացումներին վերաբերող հարցեր, մարդու իրավունքների միջազգային գործիքների կիրառության, մարդու իրավունքների պաշտպան ազգային ինստիտուտների ստրատեգիական համագործակցության ձևավորման ու զարգացման

վերաբերյալ խնդիրներ, ինչպես նաև եվրոպական ինստիտուտների հետ հետագա համագործակցությանն ուղղված քայլեր:

Պաշտպանի աշխատակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահության շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին, այդ թվում՝ «Պայքար Եվրոպայում ռասիզմի, այլատյացության և անհանդուրժողականության դեմ» բարձրաստիճան կոնֆերանսին, կլոր սեղան-քննարկումներին և այլն:

2013 թվականին փորձի փոխանակման և վերապատրաստման նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Բարձրաստիճան կոնֆերանս Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում երեխաների արդարադատության մասին» խորագրով համաժողովին, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից կազմակերպված «Օմբուդս հաստատությունների դերը զինված ուժերի անձնակազմի իրավունքների պաշտպանության մեջ» խորագրով համաժողովին, Ջինված ուժերի ժողովրդավարական կառավարման Ժնևի կենտրոնի հրավերով՝ «Ջինված ուժերի վերաբերյալ հինգերորդ միջազգային համաժողովին»:

Պաշտպանի ազգային կանխարգելման մեխանիզմի ներկայացուցիչները մասնակցել են Բռնությունների կանխարգելման մեխանիզմի կարողությունների ուժեղացման և փորձի փոխանակման համար կազմակերպված կոնֆերանսների շարքին, որոնք կազմակերպվել էին Եվրոպայի խորհրդի կողմից և կայացել են Ստրասբուրգում և Կիևում: Միաժամանակ, ԲԿԱՄ-ը ներկայացված է եղել սեպտեմբերի 24-ին Ստրասբուրգում կայացած միջազգային համաժողովին՝ «Ուժեղացնելով դաժան և անմարդկային վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարը» թեմայով, որտեղ քննարկվել են իրավապահ մարմինների կողմից մարդու իրավունքների ռոտահարման դեպքերը և դրանց դեմ պայքարի եղանակները: ԲԿԱՄ-ը մասնակցել է նաև նոյեմբերի 21-22-ին Ստրասբուրգում կայացած մեկ այլ կոնֆերանսի, որը ուղղված էր փախստականների համար նախատեսված կացարաններում մոնիթորինգի իրականացման չափանիշների մշակմանը տարբեր երկրների Ազգային կանխարգելման մեխանիզմների կողմից: ԲԿԱՄ ուժեղացմանն էր ուղղված նաև Կիևում դեկտեմբերի 2-3-ը կայացած «Բռնությունների կանխարգելման մեխանիզմը և խոշտանգումների դեմ պայքարի այլ միջոցները. ձեռքբերումները և զարգացման նախադրյալները» միջազգային կոնֆերանսը, որին ևս մասնակցեցին ԲԿԱՄ ներկայացուցիչները:

Դիմումներ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ

Իր իրավասությունների շրջանակներում Պաշտպանը 2013 թվականի ընթացքում ներկայացրել է 11 դիմում ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ՝ ներքոնշյալ հարցերի առնչությամբ առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանումներ ստանալու նպատակով, մասնավորապես.

- Անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը՝ որպես սեփականության տեսակ, պրակտիկայում կիրառելու վերաբերյալ, քանի որ նշված իրավունքը (օրինակ, երբ անձը օտարել է սեփականությունը փոխհատուցում ստանալու

պայմանով, և այդ պայմանն ամրագրվել է պայմանագրով, այդ դեպքում անձի փոխհատուցման պահանջի իրավունքը) պրակտիկայում տարբեր պետական մարմինների կողմից չի ընդունվում որպես անձի սեփականության տեսակ՝ հիմնավորելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը դա չի նախատեսում որպես սեփականության տեսակ: Նշվածի վերաբերյալ Խորհուրդը հայտնել է, որ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները՝ անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը կարող է համարվել սեփականություն, եթե բավարար չափով հիմնավորվել է, որ այդ պահանջը ենթակա է կատարման, և արդյունքում, դրանք պարտադիր են դատարանների և համապատասխան իրավակիրառ մարմինների համար: Արդյունքում՝ այն անձինք, ովքեր ունեն անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունք, օգտվում են սեփականության համար նախատեսված բոլոր երաշխիքներից:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ օրենսգրքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բացակայում է այն անձանց ցանկը, որոնք պարզաբանման ենթակա հոդվածի ուժով իրավունք ունեն հայցով դիմելու դատարան և, արդյունքում, խնդիր էր առաջացել այդ անձանց նշված իրավունքի իրականացման համար: Խորհուրդը հայտնել է, որ այն դեպքերում, երբ օրենսգրքի առանձին դրույթներով նախատեսված չեն համապատասխան պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող հատուկ սուբյեկտներ, ապա որպես այդպիսիք հանդես են գալիս օրենսգրքում նշված ընդհանուր սուբյեկտները: Մասնավորապես, չնայած, որ օրենսգրքով նախատեսված չէ, թե ով կարող է նման պահանջ ներկայացնել, սակայն վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջ կարող է ներկայացնել այդպիսի գործարքի առարկայի նկատմամբ իրավունքներ ունեցող ցանկացած շահագրգիռ անձ, անկախ այն հանգամանքից, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չէ նման պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը:
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ վիրավորական կամ զրպարտչական արտահայտության հրապարակայնության պայմանավորումը այն ներկայացնող անձի կողմից այլ անձանց հասանելի չդարձնելու, դրա գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ բավականաչափ միջոցներ ձեռնարկելու հանգամանքի հետ, լրագրողների հետ հարցազրույցի ընթացքում հարցվողի ներկայացրած արտահայտությունները կարող են ձեռք բերել հրապարակայնության բնույթ: Նշված իրավիճակում համապատասխան արտահայտություն ներկայացնողը, տեղեկացված լինելով լրագրողին հարցազրույց տրամադրելու հանգամանքի մասին (երրորդ անձի բացակայության պայմաններում), հարցազրույցի ընթացքում ներկայացված արտահայտությունները այլ անձանց հասանելի չդարձնելու, դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ չի ձեռնարկել բավականաչափ միջոցներ: Վերոնշյալի վերաբերյալ Խորհրդից ստացված պարզաբանման համաձայն՝ լրագրողների հետ հարցազրույցի ընթացքում հարցվող անձի կողմից արված

հրապարակային արտահայտությունների բնույթը (հրապարակային կամ ոչ հրապարակային բնույթի) կարելի է դիտարկել 2 ուղղությամբ.

1. Եթե լրագրողի հետ հարցազրույցի ընթացքում հարցվող անձն արտահայտություններ է կատարել հենց լրագրողի նկատմամբ, իսկ վերջինս այն հրապարակայնացրել է, ուստի 1087.1 հոդվածի պաշտպանությունից լրագրողը չի օգտվում:
2. Եթե հարցվող անձը արտահայտություններ է կատարում մեկ այլ անձի առնչությամբ (տուժող) լրագրողի հետ հարցազրույցի ընթացքում, ապա պետք է արձանագրել, որ հարցվող անձը զրպարտել կամ վիրավորել է տուժողին՝ երրորդ անձին (լրագրողին) հասանելի դարձնելով զրպարտչական բնույթի կամ վիրավորական արտահայտություններ:

Այն դեպքերում, երբ տուժողն ինքն է հրապարակայնացնում իր հասցեին հնչեցված արտահայտությունները, ապա չի կարող օգտվել 1087.1 հոդվածի պաշտպանությունից:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների համապատասխանելիության և հնարավոր կիրառման վերաբերյալ, քանի որ Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների համաձայն՝ պրակտիկայում դատավորները քրեական դատավարության շրջանակներում օրենսգրքի 78-րդ հոդվածի փոխարեն նախապատվությունը տալիս և կիրառում են Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը՝ մերժելով փաստաբան չհանդիսացող անձի՝ որպես դատավարության մասնակցի ներկայացուցիչ հանդես գալու հնարավորությունը:

Խորհրդից ստացված պարզաբանման՝ Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով նախատեսված քրեական գործերով պաշտպանությունը կարող է իրականացնել միայն փաստաբանը: Խորհուրդը, վկայակոչելով Օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը և 9-րդ հոդվածի 6-րդ մասը, նշել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսանում է դատավարական նորմ և պետք է համապատասխանի դատավարական օրենսգրքերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում դատական ներկայացուցչության այլ կարգ է նախատեսված, քան Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, քրեական և վարչական դատավարությունների ընթացքում դատական ներկայացուցչության վրա չի տարածվում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները:

Ներքոնշյալ հարցերով Խորհրդի պարզաբանումները դեռևս չեն ստացվել.

- «Փախստականների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-49-Ն, 03.03.2004թ.) 20-րդ հոդվածի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ հոդվածի կարգավորումները (որոնք նախատեսում են, որ փախստական երեխան կորցնում է փախստականի կարգավիճակը, եթե օրենքով սահմանված կարգով նրանց ծնողները ձեռք են բերում ՀՀ քաղաքացիություն) տարածվել են նաև մինչ օրենքում փոփոխություններն անելը ծագած իրավահարաբերությունների վրա՝ այն դեպքում,

երբ օրենքով խնդրո առարկայի կարգավորման վերաբերյալ որևէ առանձնահատկություններ չեն սահմանվել:

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ, որոշ դեպքերում, անձանց կողմից ՀՀ վարչական դատարանին դիմում է ներկայացվել՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու պահանջով, որպես հիմք ընդունելով ՀՀ առաջին ստյանի դատարանի վճիռները, որոնցով սեփականատիրոջ սեփականության իրավունքի պետական գրանցումը դատարանը համարել է հիմնագուրկ և առոչինչ է ճանաչել սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ հաշվի չառնելով այն, որ վարչական ակտը, ըստ ներկայացված ապացույցների, ընդունվել է հիմնագուրկ դարձած իրավունքի և դրա ծագման հիմքի առոչինչ ճանաչվելու պարագայում, և միաժամանակ պատճառաբանելով, որ սեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման դեպքում վարչական ակտը կորցնում է իրավաբանական ուժը, հետևաբար՝ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր չի կարող ճանաչվել:
- ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ վերջին ժամանակաշրջանում ձևավորվել է մտահոգություն, որ հավաքների մասնակցող անձինք իրենց բողոքն արտահայտելիս ոստիկանության ծառայողների պահանջները չկատարելու և/կամ որոշակի ագրեսիվությամբ իրենց բողոքը արտահայտելու դեպքերում ենթակա են պատասխանատվության իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Այս հարցով պարզաբանումն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 766 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին:
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-188-Ն, 04.10.2005թ) 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ նշված դրույթների համադրումից ստացվում է, որ եթե անձը մինչև 1999թ. հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված (գրանցված) է եղել բնակելի տարածությունում և մինչև Օրենքն ուժի մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում (Օրենքի 32-րդ հոդված, 2-րդ մաս, 1-ին պարբերություն), ապա մինչև 2006թ. դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմում ներկայացնելու դեպքում օգտագործման իրավունքն ունեցող անձին փոխհատուցում է տրվում Օրենսգրքով սահմանված կարգով: Իսկ եթե

սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացվում է դատարան 2007թ. հունվարի 1-ից հետո, ապա փոխհատուցում կտրվի միայն այն անձանց, ովքեր կատարել են բնակելի տարածության նկատմամբ իրենց օգտագործման իրավունքի պետական գրանցում: Այնինչ, անձանց միջև սեփականությանը վերաբերող իրավահարաբերությունների կարգավորման արդյունքում օրենքը անձանց միջև չպետք է ստեղծի այնպիսի անհավասարություն, որ հնարավոր լինի անձին կամայականորեն և անարդար կերպով զրկել գույքից՝ ի շահ այլ անձի:

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ անձը, օբյեկտիվ պատճառներով մասնակից չլինելով գործով նախորդ դատավարություններին, դիմում է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով կիրառել Օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգավորումը, թեև ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու նման իրավունքը անձը բխեցրել էր Օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներից: Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը՝ պատճառաբանելով, որ Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության, լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:
- ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ և 311.1-րդ հոդվածների 3-րդ մասերում «նույն արարքը» եզրույթի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ սույն եզրույթի մեկնաբանության կապակցությամբ իրավակիրառական պրակտիկայում առկա են տարբեր մոտեցումներ, ինչը, որպես կանոն, քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կիրառվում է մեղադրյալների համար անբարենպաստ տարբերակով՝ հաշվի չառնելով գործող օրենսդրության պահանջները: Այնինչ, ՀՀ Սահմանադրական դատարանը բազմիցս է վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հայտնած դիրքորոշումն առ այն, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պաշտպանի աշխատակազմի դիմաձև անձանց քանակը	6805
Պաշտպանի աշխատակազմին ներկայացված գրավոր դիմումներ (ըստ անձանց)	1862 (4058)
Պաշտպանին ուղղված բանավոր բողոքներ	1572
Թեժ գծին ստացված բողոքներ	1175
Պաշտպանի աշխատակազմի կողմից տրամադրված բանավոր խորհրդատվություններ	2747
Դրական լուծում ստացած դիմում-բողոքներ՝ ըստ անձանց	347
ՀՀ դատարանների դեմ ուղղված դիմում-բողոքներ	149

*Ըստ պետական մարմինների՝ վարույթ ընդունած գործերի տասնյակ.
/ընդհանուր թիվը՝ 1238/*

ՀՀ ոստիկանություն	278
ՀՀ արդարադատության նախարարություն	151
ՀՀ քաղաքապետարաններ	131
ՀՀ պաշտպանության նախարարություն	124
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	123
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	64
ՀՀ առողջապահության նախարարություն	30
ՀՀ դատախազություն	24
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	16
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի կոմիտե	15
Այլ մարմիններ	282

01.01.2013-31.12.2013 ժամանակահատվածում գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների.

Երևան	1059
Շիրակ	141
Լոռի	131
Գեղարքունիք	131
Կոտայք	99
Արարատ	57
Արմավիր	56

Սյունիք	49
Տավուշ	40
Վայոց ձոր	38
Արագածոտն	27
Անհասցե	33
<i>Ընդամենը</i>	<i>1861</i>

01.01.2013-31.12.2013 ժամանակահատվածում խոցելի խմբերից ստացված բողոքների վիճակագրություն.

Ազատագրվածներ	279
Հաշմանդամություն ունեցող անձինք	121
Երեխաներ	50
Զինձառայողներ	49
Սոցիալապես անապահով խավեր	48
Տարեց մարդիկ	34
Փախստականներ	23
Անօթևաններ	18
Կանայք	8
Բռնադատվածներ	4
Ազգային փոքրամասնություններ	4
Սեռական փոքրամասնություններ	1
Կրոնական փոքրամասնություններ	1
<i>Ընդամենը</i>	<i>640</i>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության Նախարարությունը ապահովում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, նոտարական գործունեության, Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացները: Արդարադատության Նախարարությունը ապահովում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հարկադիր կատարումը, դատական փորձաքննությունների, վարչական վարույթի ապահովումը և այլն: Նախարարությունը իրականացնում է նաև վերահսկողություն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, քրեակատարողական ծառայության գործունեության օրինականության նկատմամբ, ինչպես նաև ապահովում է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված լիազորությունը:

2013 թվականին, ինչպես նաև 2012 թվականին, Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ամենամեծ խնդիրը և բացթողումը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին և, հատկապես, դատական իշխանության համակարգում առկա անարդարություններին և ապօրինություններին: Բացի նշված հիմնական խնդիրներից տարվա ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված այլ խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Չնայած դատական համակարգում համատարած խախտումների՝ Արդարադատության նախարարն դատավորների նկատմամբ հարուցել է ընդամենը 3 կարգապահական վարույթ:
- Շարունակել են չհստակեցված մնալ նոտարների կողմից գանձվող վճարների չափերը, ինչի հետևանքով նոտարները միննույն ծառայության համար անձանցից գանձել են տարբեր չափերի վճարներ:
- Առանձին դեպքերում հարկադիր կատարողները պարտատերերին չեն տեղեկացրել գույքագրման աշխատանքների ժամանակի և վայրի մասին, բացի այդ բռնագանձված գույքը վաճառելու որոշումը կայացվել է ոչ թե գույքագրման պահին, այլ դրանից տևական ժամանակ հետո: Արդյունքում խախտվել են օրենքի պահանջները և անձինք գրկվել են իրենց հասանելիք գումարներից:
- Չնայած նոր ի հայտ եկած հանգամանքների ԴԱՀԿ-ն մի շարք դեպքերում մերժել է ավարտված կատարողական վարույթի վերսկսումը, արդյունքում՝ չեն վերականգնվել մարդկանց իրավունքները, որոնք դատարանի վճռով խախտված էին ճանաչվել:
- Մի շարք դեպքերում ԴԱՀԿ աշխատակիցները ոչ բարեխղճորեն են կատարել իրենց ծառայողական պարտականությունները, ինչի արդյունքում տուժել են մարդկանց օրինական շահերը:

- Հստակ կանոնների բացակայության հետևանքով՝ ազատագրկվածներին Դատապարտյալների հիվանդանոց տեղափոխելը կատարվել է երկակի ստանդարտներով: Միաժամանակ, բողոքների համաձայն՝ առանձին դեպքերում առողջ ազատագրկվածին նույնպես տեղափոխել են հիվանդանոց:
- 2013 թվականին ամբողջությամբ լուծում չեն ստացել քրեակատարողական հիմնարկների (ՔԿՀ) գերծանրաբեռնվածության, աշխատակիցների կողմից չարաշահումների և կոռուպցիոն երևույթների, ինչպես նաև հանձնույթների ընդունման հետ կապված խնդիրները:
- Դատապարտյալների, այդ թվում անչափահասների, աշխատանքի, ուսման և այլ ոլորտներում զբաղվածության մակարդակը շարունակել է մնալ ցածր՝ կազմելով ընդամենը 18,6% տոկոս:
- Բավարար քայլեր չեն ձեռնարկվել ՔԿՀ-ներում ազատագրկվածների պահման պայմանները բարելավելու ուղղությամբ, ինչի հետևանքով գրանցվել են մի շարք բողոքներ սննդի որակի, բժշկական օգնության, կոմունալ-կենցաղային վատ պայմանների և այլ խնդիրների վերաբերյալ:
- Օրենքով ընդհանրապես նախատեսված չեն հացադուլավորների իրավունքները և պարտականությունները: Արդյունքում՝ գրանցվել են հացադուլ հայտարարած ազատագրկվածներին պատժախցերում պահելու, մյուս ազատագրկվածներից չառանձնացնելու և նման այլ դեպքեր:
- Դեռևս չեն ընդունվել պատիժը կրելու հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների հստակ ցանկն ու դրանց կանխատեսելի չափորոշիչները: Արդյունքում, մի շարք դեպքերում, ծանր հիվանդություն ունեցող դատապարտյալները չեն ազատվել պատիժը կրելուց:
- «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում մինչ օրս չկան երկարատև տեսակցությունների սենյակներ, իսկ զուգարանները խցերից առանձնացված չեն:

Արձանագրված դրական զարգացումները

- 2012-2016 թվականների ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել են մի շարք իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին նախագծեր:
- ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա օրենսդրական փոփոխությունների և համապատասխան նախագծերի մշակման նպատակով ՀՀ արդարադատության նախարարի անհատական հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Խմբի կողմից կատարված աշխատանքների արդյունքում փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում և այլ օրենքներում:
- Նախարարության կողմից մշակվել է «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգին

հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի լրամշակված տարբերակը ներկայումս գտնվում է շրջանառության մեջ:

- Շահագործման է հանձնվել «Արմավիր» քրեակատարողական նոր հիմնարկի առաջին մասնաշենքը:
- ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալներին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու վերաբերյալ նախագիծը:

Ընդհանուր վերլուծություն

2013 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի նախաձեռնությամբ դատավորների նկատմամբ հարուցվել է ընդամենը 3 կարգապահական վարույթ: Նշվածներից 2-ով Արդարադատության խորհուրդը որոշում է կայացրել դատավորներին կարգապահական տույժի ենթարկելու, ինչի արդյունքում թվով 4 դատավորներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Հարուցված 1 կարգապահական վարույթը կարճվել է ՀՀ արդարադատության նախարարի կողմից: Որպես համեմատական կարելի է ներկայացնել 2012թ. արդյունքները, որի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի նախաձեռնությամբ դատավորների նկատմամբ հարուցվել է 9 կարգապահական վարույթ: ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատության նախարարը իրավունք ունի հարուցելու կարգապահական վարույթ առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ: Նախարարությունը պարտավոր է ավելի արդյունավետ նախաձեռնողականություն ցուցաբերել ոլորտում նոր մեխանիզմներ ներդնելու և չլուծված խնդիրներ վերհանելու նպատակով: Այս դեպքում մտահոգիչ է այն հանգամանքը, որ Արդարադատության նախարարի կողմից անարդյունավետորեն են կիրառվում օրենքով իրեն վերապահված լիազորությունները, ինչը պայմանավորված է ոչ միայն կարգապահական վարույթների հարուցման քանակի նվազմամբ, այլ նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու արդյունավետ ընթացակարգերի և հիմքերի բացակայությամբ: Այդուհանդերձ, միայն այսպիսի գործողությունների իրականացումը չի կարող արդյունավետորեն բարելավել ներկայիս դատական համակարգը: Իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորների թիվը չի կարող արտացոլել ոլորտում առկա խախտումների իրական քանակը: 2013թ. դեկտեմբերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցով (այսուհետ՝ Ձեկույց), որում մանրամասն անդրադարձ կատարվեց ՀՀ արդարադատության խորհրդի և Վճռաբեկ դատարանի գործունեությանը: ՀՀ արդարադատության խորհրդի 2006-2013թթ. ընդունված որոշումների, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 2011-2013թթ. ներկայացված 500 դիմումների ընթացքի, Խորհրդին ուղղված փաստաբանների դիմումների ուսումնասիրությամբ Ձեկույցում արձանագրվեցին դատավորների նկատմամբ Արդարադատության խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության կիրառման գործընթացում օրենքով սահմանված պահանջների խախտումներն ու կիրառված երկակի ստանդարտները, որոնք հիմնավորվել են տասնյակ

որոշումների և դատական գործերի ներկայացմամբ: Երկակի ստանդարտների կիրառման դեպքերն արձանագրվել են ԱԽ կարգապահական հանձնաժողովի կողմից քննության փուլում գտնվող գործերով վարույթ հարուցելու հարցը որոշելու, դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման և կարգապահական տույժի տեսակը ընտրելու գործընթացներում: Արձանագրվել են նաև բազմաթիվ գործեր, երբ Արդարադատության խորհրդի կողմից ուղղակիորեն խախտվել են Դատական օրենսգրքի պահանջները: Պաշտպանի համոզմամբ Ջեկույցում բացահայտված խախտումներն ու կիրառված երկակի ստանդարտները առավել սուր են դարձնում Արդարադատության խորհրդի գործունեության թափանցիկության ապահովման խնդիրը, ինչը մեծապես կարող է կանխել Խորհրդի կողմից ակնհայտ տարբերակված մոտեցումների կիրառման, ինչպես նաև դատավորների կողմից կարգապահական վարույթի ընթացքում ներկայացված փաստարկները հաշվի չառնելու և Խորհրդի որոշումները պատշաճ կերպով չպատճառաբանելու պրակտիկան: Մասնավորապես, Պաշտպանի կողմից առաջարկվել է ոլորտին առնչվող միջազգային չափանիշներին համապատասխան՝ Դատական օրենսգրքում ամրագրել Արդարադատության խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության դոնբացության սկզբունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջում է իր գործի դոնփակ քննություն: Գործող Դատական օրենսգրքում սահմանված է այս դրույթի հակառակ տրամաբանությունը. Խորհրդի նիստերը դոնփակ են, բացառությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության այն դեպքերի, երբ դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջում է իր գործի հրապարակային քննություն: Նման սահմանումը ոչ միայն հակասում է միջազգային չափանիշներին, այլև հաշվի առնելով դատավորների համայնքի առանձնահատկությունները հրապարակային քննության իրականացման գործնական դժվարություններ է առաջացնում այն դատավորների համար, որոնք կողմ կլինեին կարգապահական գործի դոնբաց քննությանը: Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկը չհիմնավորված պատճառաբանություններով չի ընդունվել Նախարարության կողմից: Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ զեկույցում Պաշտպանի կողմից մանրամասն անդրադարձ է կատարվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեությանը: Ներկայացված մի քանի գործերով արձանագրվել են միատեսակ խախտումներ, որոնք Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ չեն հանգեցրել որևէ կարգապահական գործընթացների, այն դեպքում, երբ ստորադաս դատարանների դատավորների նկատմամբ նման խախտումները հիմք են հանդիսացել կարգապահական վարույթների հարուցման համար: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ արձանագրվել է, որ երկու քաղաքացիական գործերով Վճռաբեկ դատարանի կողմից կիրառվել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ուժը կորցրած ճանաչված նորմը: Այնուամենայնիվ, այս խախտումները հիմք չեն հանդիսացել Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար: Մինչդեռ, նույնաբովանդակ հիմքով առաջին ատյանի դատավորների նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ (2010թ. ապրիլի 22-ի ԱԽ-6-Ո-06, ԱԽ-6-Ո-07 որոշումներ): Այս փաստերը ևս մեկ անգամ

հիմնավորում են Պաշտպանի կողմից Նախարարությանն ուղղված առաջարկը՝ Դատական օրենսգրքի փոփոխությունների նախագծում համապատասխան հիմքերով Վճռաբեկ դատարանի դատավորների կարգապահական պատասխանատվության բացառման դրույթները վերանայելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, այս առաջարկը տարաբնույթ պատճառաբանություններով նույնպես չի ընդունվել Նախարարության կողմից:

Չի կատարվել որևէ գործողություն նոտարների կողմից գանձվող վճարների սակագների հստակեցման կապակցությամբ, մասնավորապես՝ նախատեսված սակագների վճարման լայն միջակայքերի վերացման ուղղությամբ: Այս խնդրի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ յուրաքանչյուր նոտարական գրասենյակում փակցված են կոնկրետ նոտարի կողմից մատուցվող ծառայությունների սակագները կոնկրետ գումարի տեսքով՝ պահպանելով ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 733-Ն որոշմամբ սահմանված սակագների նվազագույն և առավելագույն սահմանները: Նմանատիպ միջակայքերի նախատեսումը կարող է հանգեցնել նոտարների համար հայեցողության հնարավորություն, քանի որ նշված որոշումը հստակ չի պարունակում այն չափորոշիչները, որոնցով կառաջնորդվեն նոտարները համապատասխան նոտարական գործողության համար սահմանված կոնկրետ վճարներ պահանջելիս: Օրինակ, նշված որոշման Հավելվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ այլ անշարժ գույքի դեպքում անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (փոխանակման, առուվաճառքի, հանձնման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար գանձվում է վճար նվազագույն աշխատավարձի 10-15-պատիկի չափով, որը հնարավորություն է տալիս նոտարներին բոլոր դեպքերում իրենց ծառայության համար գանձել առավելագույն վճարը:

Արձանագրվել են բազմաթիվ խախտումներ Դատական ակտերի հարկադիր կատարման (այսուհետ՝ ԴԱՀԿ) աշխատակիցների կողմից իրենց վերապահված լիազորությունների չարաշահման և/կամ ոչ պատշաճ կատարման վերաբերյալ: Նախարարությունից հայտնել են, որ ԴԱՀԿ աշխատակիցների կողմից իրենց վերապահված լիազորությունների չարաշահման կամ ոչ պատշաճ կատարման վերաբերյալ ստացվել են 75 դիմում-բողոքներ, որոնց արդյունքում պահանջվել են համապատասխան կատարողական վարույթները, կատարվել են ուսումնասիրություններ, կատարվել է բողոք ներկայացրած քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև կատարողական վարույթների համատեղ քննարկումներ: Բացի այդ, 2013 թ. ընթացքում ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից իրականացվել են թվով 21 ծառայողական քննություններ: Անցկացված ծառայողական քննություններից 12-ի արդյունքում 17 ԴԱՀԿ ծառայողներին հայտարարվել է բանավոր նախազգուշացում: Իրականացված 2 ծառայողական քննությունների արդյունքում «ԴԱՀԿ ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման 4-րդ մասի 2-րդ կետի պահանջների խախտման կապակցությամբ 4 ԴԱՀԿ ծառայողների նկատմամբ կիրառվել է «նկատողություն» և 2 ԴԱՀԿ ծառայողների նկատմամբ «խիստ նկատողություն» կարգապահական տույժեր: Իրականացված 1 ծառայողական քննությամբ հիմնավորվել է, որ ԴԱՀԿ ծառայողների կողմից խախտվել են «ԴԱՀԿ ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Դատական

ակտերի հարկադիր կատարման ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները, որի հետևանքով խախտվել են նաև «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 30-րդ հոդվածների պահանջները: Արդյունքում 2 ԴԱՀԿ ծառայողների նկատմամբ կիրառվել է «նկատողություն», իսկ 2-ի հանդեպ «ծառայությունից ազատում» կարգապահական տույժերը: Իրականացված 1 ծառայողական քննությանը հիմնավորվել է «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 30, 40, 44, 46-րդ հոդվածների, «ԴԱՀԿ ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման 4-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև բազմաթիվ այլ խախտումներ: Օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ քաղաքացի Կ.Հ.-ն գումարի բռնագանձման պահանջի բավարարման վերաբերյալ դատարանի վճռի հիման վրա կատարողական թերթ է ներկայացրել ԴԱՀԿ ծառայություն: Գույքագրված գույքը համապատասխան ստացականով պարտապանին ի պահ չի հանձնվել: Հարկադիր կատարողի գույքագրված կահույքը 2011 թվականի հոկտեմբեր ամսին գողացել են, չնայած այդ փաստին, հարկադիր կատարողի կողմից գույքագրված, սակայն գողացված կահույքի վերաբերյալ երեք անգամ կայացվել է որոշում՝ 09.01.2012թ. կահույքի ուղղակի վաճառքի մասին, իսկ 06.02.2012թ. և 05.03.2012թ. վաճառքի նոր գին սահմանելու մասին: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն՝ գույքագրման աշխատանքների ժամանակի և վայրի մասին հարկադիր կատարողը գույքագրման անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ գրավոր տեղեկացնում է պահանջատիրոջը: Մինչդեռ, դիմումատուն տեղեկացված չի եղել գույքագրման աշխատանքների ժամանակի և վայրի մասին: Բացի այդ, օրենքի համաձայն՝ ուղղակի վաճառքի մասին որոշումը կայացվում է գույքագրման ժամանակ, այնինչ պարտապան Ա.Հ.-ին պատկանող գույքի վրա արգելանք է դրվել 09.06.2011թ., իսկ գույքի ուղղակի վաճառքի մասին որոշումը կայացվել է 09.01.2012թ.: Ավելին, օրենքն ամրագրում է, որ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով պարտատիրոջ պահանջը բավարարելու դեպքում գույքի՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով որևէ այլ պարտատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը: Իսկ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը կատարվում է միայն արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախարարությանն առաջարկվել է միջոցներ ձեռնարկել օրենքի պահանջների չկատարումը բացառելու ուղղությամբ և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել խախտումը թույլ տված հարկադիր կատարողին /կատարողներին/, որին պատասխան գրությամբ Նախարարությունը հայտնել է, որ կատարողական գործողությունները իրականացվել են

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, որոնցով չեն խախտվել քաղաքացի Կ.Հ.-ի իրավունքները, ուստի հարկադիր կատարողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր չկան: Պաշտպանը ստացված դիմում-բողոքների արդյունքում, որոնցից երկուսը վերաբերում էին ԴԱՀԿ-ի աշխատակիցների կողմից օրենքով սահմանված գործողության կատարման ժամկետների չպահպանմանը, ուսումնասիրելով դրանք՝ խախտում հայտնաբերելու մասին համապատասխան որոշում է կայացրել: Վերլուծելով բոլոր խախտումներն ու բողոքները՝ հնարավոր է դառնում կատարել պարզ եզրակացություն այն մասին, որ ԴԱՀԿ աշխատակիցների կողմից համատարած չեն պահպանվում իրավական ակտերի պահանջները, և, որ Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումները չեն կարող արդյունավետ լուծում ապահովել վերոնշյալ խնդիրների բացառման համար:

ԴԱՀԿ-ի կողմից գործնականում խոչընդոտներ են ստեղծվում ավարտված կատարողական վարույթի վերսկսման և/կամ նոր վարույթի հարուցման կապակցությամբ: Նախարարությանը Պաշտպանի կողմից գրություն էր ներկայացվել՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով: Պարզաբանման ստացման անհրաժեշտությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթը ավարտելու դեպքերը, որտեղ հարկ է առանձնացնել 2-րդ և 8-րդ կետերը: Այսպես, 2-րդ կետի համաձայն կատարողական վարույթը ավարտվում է, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն, իսկ 8-րդ կետին համապատասխան՝ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը: Մինևույն ժամանակ, Օրենքում առկա են կատարողական վարույթի վերսկսման մեխանիզմներ: Այսպես, Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ: Սակայն ակնհայտ է, որ նման դեպքերը վերաբերելի են ոչ թե ավարտված, այլ՝ կասեցված վարույթներին: Որպես ավարտված վարույթը վերսկսելու միակ բացառություն՝ Օրենքը նախատեսում է 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացումը և այդ դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին: Սակայն Օրենքի տրամաբանությունից անհասկանալի է, թե ինչպիսի չափանիշներ են հաշվի առնվել վերոնշյալ բացառությունը միայն նշված կետով սահմանված իրավահարաբերության վրա տարածելու համար, մասնավորապես, եթե վիճարկվող հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված գործողությունների արդյունքում ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում դատական ակտի կատարումը անհնարին դարձնող հանգամանքների վերանալու դեպքում Օրենքում չի նախատեսվում այն վերսկսելու հնարավորություն: Նշվածի վերաբերյալ Նախարարությունը

մեր գրությանն ի պատասխան հայտնել է. «Հարկադիր կատարողի կողմից կայացված ավարտելու մասին որոշումը ինքնին դեռ չի նշանակում կատարողական թերթով նախատեսված գործողությունների վերջնական ավարտ, քանի որ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար: Վերոնշյալից հետևում է, որ դատական ակտի կատարմանը խոչընդոտող կամ ավարտման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացումից հետո հնարավոր է դառնում կատարողական թերթով նախատեսված պահանջի կատարումը»: Իսկ մեր կողմից ներկայացված մյուս հարցադրմանը, որը վերաբերում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված բացառությանը՝ Նախարարությունը պատասխան գրությամբ հայտնել էր, որ դրա առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ համաձայն նույն հոդվածի 3-րդ կետի՝ կատարողական վարույթն ավարտելու դեպքում կատարողական թերթը վերադարձվում է պահանջատիրոջը՝ բացառությամբ նույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերի: Եթե կատարողական վարույթն ավարտվում է պահանջատեր քաղաքացու մահվան պատճառով, ապա կատարողական թերթը վերադարձվում է մահացածի ժառանգներին՝ նրանց գրավոր պահանջի դեպքում: Կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար: Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին: Այսինքն, քանի որ ավարտված կատարողական վարույթով կատարողական թերթը գտնվում է կատարողական վարույթում (չի վերադարձվում պահանջատիրոջը) և պահանջատերը գրկված է այն նոր կատարման ներկայացնելու հնարավորությունից, այդ իսկ պատճառով հարկադիր կատարողը իր նախաձեռնությամբ (ավարտման հիմքերը վերանալու դեպքում) իրավունք ունի վերսկսելու կատարողական վարույթը: Կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու դեպքում պետք է հարուցվի նոր կատարողական վարույթ: Այսինքն, ձևական-իրավական տեսանկյունից չպետք է նախկինում ստացված կատարողական վարույթը վերսկսվի: Սակայն նման ձևական մեկնաբանությունը չի կարող դրվել վիճարկվող որոշումը վերացնելու հիմքում: Ինչպես երևում է, մնացած դեպքերում պետք է ընդամենը հարուցվի նոր կատարողական վարույթ: Սակայն վարչարարության տեսանկյունից որևէ տարբերություն չկա վերսկսված և նոր հարուցված կատարողական վարույթներով իրականացվող կատարողական գործողությունների մեջ: Իսկ կատարողական վարույթը նոր համարով վերսկսելն ընդհանրապես չի կարող ազդել կատարողական վարույթով իրականացվող կատարողական գործողությունների իրականացմանը, հետևաբար նաև կողմերի իրավունքներին ու շահերին: Այս դեպքում հարկ ենք համարում նշել, որ Նախարարության կողմից համապատասխան հոդվածին տրված մեկնաբանությունը գործնականում չի պահպանվում ԴԱՀԿ-ի կողմից, հավելյալ խոչընդոտներ են առաջանում նշված գործողությունների կատարման համար, օրինակ՝ քաղաքացին, ներկայացնելով կասեցված կատարողական վարույթը նոր կատարման, երբ վերացել են դատական ակտի

կատարմանը խոչընդոտող կամ ավարտման համար հիմք հանդիսացող հանգամանքները, պարզապես ԴԱՀԿ-ի կողմից այն վերսկսելու մերժում է ստանում՝ չնայած այն հանգամանքին, որ քաղաքացին այն ներկայացրել է ոչ թե վերսկսելու, այլ նոր կատարման:

Մի շարք դեպքերում ԴԱՀԿ աշխատակիցները ոչ բարեխղճորեն են կատարել իրենց ծառայողական պարտականությունները, ինչի արդյունքում տուժել են մարդկանց օրինական շահերը: ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշմամբ նախատեսված հարկադիր կատարման ծառայողների վարքագծի կանոնները, որոնք խախտելու համար վրա է հասնում պատասխանատվություն: Պատահական չէ, որ ՀՀ կառավարության որոշմամբ կոնկրետ սահմանվել են այդ կանոնները, քանի որ հարկադիր կատարման ծառայողներն իրենց լիազորությունների իրականացման ընթացքում հաճախ հաղորդակցվում են մարդկանց հետ: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Նախարարությունից Պաշտպանին հայտնել են, որ նշված հարցի վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների արդյունքում «ԴԱՀԿ ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման 4-րդ մասի 2-րդ կետի պահանջների խախտման կապակցությամբ 4 ԴԱՀԿ ծառայողների նկատմամբ կիրառվել է «նկատողություն» և 2 ԴԱՀԿ ծառայողների նկատմամբ «խիստ նկատողություն» կարգապահական տույժեր: Հարկավոր է համալիր միջոցառումներ իրականացնել նշված ծառայողների վերապատրաստման ուղղությամբ՝ նման դեպքերը կանխարգելելու նպատակով:

Արձանագրվել են ՔԿՀ-ների վարչակազմի կողմից դատապարտյալների նկատմամբ երկակի ստանդարտների կիրառման դեպքեր՝ դատապարտյալներին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ բուժման ուղարկելու կապակցությամբ: Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմն (այսուհետ՝ ԲԿԱՄ) իր այցելությունների ընթացքում արձանագրել է, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ինչպես բժշկական անձնակազմի (վիրաբույժ, սրտաբան, էնդոկրինոլոգ, պատանատու), այնպես էլ սոցիալ-հոգեբանական բաժնում և այլ ծառայություններում անձնակազմի համալրման կարիք ունի: Այցելության պահին հիմնարկում աշխատում էր միայն մեկ վիրաբույժ: Դեռևս 2012թ. ընթացքում ՔԿՀ-ից իրենց դիմումի համաձայն ազատվել էին շուրջ 30 աշխատողներ՝ պարզաբանելով, որ աշխատանքը ծանր և վտանգավոր է, ստացած աշխատավարձը չի բավարարում ընտանիքի հոգսերը հոգալու համար: Ներկայումս գիշերային հերթափոխը կազմակերպվում է մեկ բժշկի և մեկ բուժակի կողմից: Նման պայմաններում անհնարին է բոլոր բաժանմունքներում, որոնք գտնվում են տարբեր մասնաշենքերում պատշաճ բուժօգնություն տրամադրել գիշերային ժամերին, առավել ևս այն դեպքերում, երբ այցելության պահին ՔԿՀ-ում 46 ծանր և առանձնապես ծանր հիվանդ էր հաշվառված: Բուժանձնակազմի համալրվածությունից բացի, անհրաժեշտ է նաև համալրել հսկիչների հաստիքացուցակը, քանի որ քաղաքացիական հիվանդանոցում ազատազրկվածներին պահելու համար անհրաժեշտ հսկիչների տրամադրման հետևանքով ՔԿՀ-ում հսկիչների

քանակը նվազում է, ինչը հանգեցնում է ՔԿՀ-ում անվտանգության թուլացմանը: Անհրաժեշտ է նշել, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում խոհանոցը գտնվում է առանձին մասնաշենքում, ուր հասնելը, հատկապես եղանակային վատ պայմաններում, հիվանդ ազատազրկվածների համար դառնում է դժվար: Մինևույն ժամանակ, ազատազրկվածի առողջական խնդիրները համապատասխան բժշկական հաստատությունում կազմակերպելու համար ՔԿՀ-ն կարող է կաշկանդված լինել լրացուցիչ պահակային կետ ունենալու հարցում, ինչը լուրջ հետևանքներ կարող է ունենալ անձի բուժումը, հետազոտումը կամ բժշկական խորհրդատվությունը մասնագիտացված հաստատություններում կազմակերպելու համար: ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պատիժ կրող դատապարտյալները նաև հայտնել են, որ ՔԿՀ-ից դուրս իրենց բուժզննում և բուժապասարկում իրականացնելու, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու իրենց դիմումները ՔԿՀ-ի վարչակազմի կողմից մնում են անհետևանք: Արձանագրվել են բողոքներ առ այն, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխվելը և այնտեղ բժշկական օգնություն ստանալը կատարվում է որոշակի դրամական գումարի փոխարեն, հակառակ դեպքում՝ բուժհիմնարկ տեղափոխելը կամ միանգամից մերժվում է, կամ էլ անհարկի ձգձգվում: Բացի այդ, հիվանդասենյակները գտնվում են ոչ սանիտարահիգիենիկ վիճակում: Մի շարք բողոքների համաձայն՝ հիմնարկի բժշկի կողմից նշանակված դեղերը հիվանդներին ոչ միայն չեն օգնել, այլև հանգեցրել են վերջիններիս մոտ ալերգիաների և նոր հիվանդությունների առաջացմանը: Կալանավորված անձանց և դատապարտյալների՝ քաղաքացիական բուժհաստատություններում կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բուժում ստանալու վերաբերյալ դիմումները քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի կողմից պետք է մանրամասն ուսումնասիրվեն և վերլուծվեն, և, անհրաժեշտության դեպքում, ստացիոնար բուժման կարիք ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները պետք է տեղափոխվեն քաղաքացիական մասնագիտացված բուժհաստատություններ կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ: Խնդրահարույց է այն, որ առ այսօր բացակայում են հստակ չափորոշիչներ, որոնց հիման վրա քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի կողմից պետք է ուսումնասիրվեն դիմումները:

ԲԿԱՄ-ը 2013 թվականի ընթացքում օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս կրկին արձանագրել է քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման վերացման, ժամկետանց դեղորայքների տրամադրման բացառման, ՔԿՀ-ների աշխատակիցների պարտականությունների չարաշահումների և կոռուպցիոն երևույթների վերացման, հանձնույնների ընդունման հետ կապված խնդիրները: Հայտնի է, որ ազատազրկումը հանդիսանում է քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակներից ամենախիստը: Սակայն ՔԿՀ-ներում առկա գերբնակեցվածությունը զգալիորեն ուժեղացնում է սթրեսային գործոնների ազդեցությունը, քանի որ այն էականորեն փոքրացնում է ազատազրկված անձի անձնական տարածությունը, ինչպես նաև խախտում է ՔԿՀ-ում առկա անհրաժեշտ-հրատապ (օրինակ՝ զբոսանք, բժշկական օգնություն, հոգեբանական ծառայություն) և ժամանցային (օրինակ՝ մարզադահլիճ, գրադարան) հնարավորություններից օգտվելու իրավունքի ամբողջական իրականացումը: Անձնական

տարածության խիստ նվազեցումը ազատագրված անձանց ազրեսիան և ապահարմարումը խթանող ակնհայտ գործոն է, հատկապես՝ շոգ եղանակային պայմաններում: Գաղտնիք չէ, որ ՔԿՀ-ներում պահվող անձանց զգալի մասն ի սկզբանե ունի հակվածություն իմպուլսիվության և ազրեսիայի, ինչի վերահսկմանն ու ճնշմանն ուղղված միջոցների կիրառումը չափազանց շատ ջանք են պահանջում հիմնարկների աշխատակիցներից: Միաժամանակ հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ գերբնակեցման խնդիրը լուրջ խոչընդոտ է հանդիսանում քրեական օրենսգրքով նախատեսված պատժի նպատակների իրականացման համար, որոնք են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Այնինչ, գերբնակեցման արդյունքում ի հայտ են գալիս նշված բոլոր նպատակներին հասնելու լուրջ խոչընդոտներ: Օրինակ, ներկայացնենք ԲԿԱՄ-ի կողմից առաջին կիսամյակին գերբնակեցմանն առնչվող խնդիրները. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, ըստ լրակազմի, նախատեսված են 840 պահման տեղեր, սակայն ԲԿԱՄ-ի այցելության պահին պահվում էր 1184 ազատագրված, «Վարդաշեն» ՔԿՀ-ում, որի բնակեցման առավելագույն սահմանը կազմում է 150 անձ, փաստացի պահվում է 240 անձ, «Էրեբունի» ՔԿՀ-ն նախատեսում է 391 անձի պահման վայրեր(այդ թվում նաև 20-ը բաց տիպ), սակայն փաստացի պահվում են 442 դատապարտյալներ, «Արթիկ» ՔԿՀ-ում առավելագույն սահմանաչափը 373 անձանց համար է, բայց պահվում են 432 դատապարտյալներ: Նախարարությունը սույն խնդրի վերաբերյալ հայտնել է, որ նախատեսվում է առաջիկա 10 տարիների ընթացքում շահագործման հանձնել 4 նոր քրեակատարողական հիմնարկներ և կապիտալ վերանորոգել ևս 4-ը, որոնց ընդհանուր լրակազմը կկազմի 5500՝ դրանով իսկ, ի թիվս այլ խնդիրների, լուծելով քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության խնդիրը: Խնդիրը ժամանակավորապես իր լուծումը ստացավ ՀՀ Նախագահի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ Ազգային ժողովի համապատասխան որոշման ընդունմամբ, որի շնորհիվ ազատագրվածների թիվը նվազեց մինչև 3926, իսկ ՔԿՀ-ներում առկա է 4395 տեղ: Բայց, ինչպես արդեն նշեցինք, խնդրին տրված լուծումը կրում է ընդամենը ժամանակավոր բնույթ: Քրեակատարողական հիմնարկներում հանձնույններն ընդունելու, տեսակցությունները կազմակերպելու և այլ դեպքերում արձանագրվել են տարբեր տեսակի խախտումներ՝ կապված ինչպես խնդիրը կարգավորող օրենսդրական դաշտի, այնպես էլ ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետ: ՔԿՀ-ներում հանձնույնների ընդունումը, դրա հետ կապված կոնկրետ գործընթացները կարգավորումները սահմանված են համապատասխան ՔԿՀ-ի ներքին կանոնակարգով, որն էլ իր հերթին արդյունավետ չի կարգավորում այս գործընթացը և հնարավորություն է ընձեռում ՔԿՀ-ի վարչակազմի աշխատակիցներին կատարել այնպիսի գործողություններ, որոնք խախտում են դատապարտյալի՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված իրավունքը, այն է. «Դատապարտյալին թույլատրվում է ստանալ և իր հաշվին ուղարկել ծանրոցներ, հանձնույններ կամ փաթեթներ, առանց սահմանափակման կատարել և ստանալ դրամական փոխանցումներ, ինչպես նաև իր հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման»: Ծանրոցները, հանձնույնները,

փաթեթներն ու նամակներն ուղարկելու և ընդունելու, ինչպես նաև դրանք դատապարտյալին հանձնելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Մտահոգիչ է դատապարտյալների զբաղվածության ապահովման հարցը, մասնավորապես անչափահաս դատապարտյալների ներգրավվածությունը կրթական, մշակութային և սպորտային ոլորտներում: Նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ 2013թ. ընթացքում ընդհանուր քանակակազմի 18,6% դատապարտյալներ ապահովվել են աշխատանքային գործունեությամբ, մասնավորապես ընդգրկվել են հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման, «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի, այլ գործատուների մոտ (բաց ուղղիչ հիմնարկ) և ինքնագործ միավորումների աշխատանքներում: 2013թ. ընթացքում հանրակրթական ուսուցում ստացել են 17 անչափահաս դատապարտյալներ և կալանավորված անձիք, 1 դատապարտյալ ընդգրկվել է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում, 1 դատապարտյալ սովորում է բարձրագույն ուսումնական հաստատությունում, 9 դատապարտյալ ընդգրկվել են կավագործության, խեցեգործության և փայտամշակման դասընթացներին, իսկ պարբերաբար կազմակերպվող սպորտային, կրոնական և մշակութային միջոցառումներին մասնակցում են բոլոր անչափահաս դատապարտյալներն ու կալանավորված անձիք: Չնայած արձանագրված տվյալներին՝ Նախարարությունը պետք է ձեռնամուխ լինի ՔԿՀ-ներում առկա զբաղվածության (աշխատանքային, սպորտային, կենցաղային և այլն) բացակայության խնդրի ավելի արդյունավետ լուծմանը, որի պատշաճ կազմակերպումը կարող է հանգեցնել պահվող անձանց միջանձնային հարաբերությունների լավացմանը: Քրեակատարողական օրենսգրքի 16-րդ գլուխը սահմանում է որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի աշխատանքը, կրթությունը, ինչպես նաև կազմակերպվող մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումները: Նույն գլխում սահմանվում է, որ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, ինչպես նաև հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար: Վարչակազմը պետք է նաև արդյունավետ միջոցներ ձեռնարկի խթանելու իր հսկողությամբ դատապարտյալների կողմից մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումների ստեղծումը (89-րդ և 91-րդ հոդվածներ):

Ստացվել են բողոքներ կապված ՔԿՀ-ներում դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրվող բժշկական օգնության, սննդի որակի վերաբերյալ, ինչպես նաև արձանագրվել են կոմունալ-կենցաղային անբավարար պայմաններ: ՔԿՀ-ներում դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրվող բժշկական օգնության վերաբերյալ Նախարարություն է ներկայացվել 28 դիմում-բողոք, որոնց սահմանված կարգով ընթացք է տրվել: ԲԿԱՄ-ի կատարած այցերի ժամանակ հայտնի է դարձել, որ բուժմասերում, սանհանգույցներում հենաշարժողական խնդիրներ ունեցող ազատազրկվածների համար բացակայում են համապատասխան պայմանները, որը խոչընդոտում է նրանց ազատ տեղաշարժմանը: Քրեակատարողական օրենսգրքի 83-րդ հոդվածը կարգավորում է դատապարտյալների բուժսանիտարական օգնությունը, որի համաձայն դատապարտյալին բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնություն

արդյունավետ ապահովելու նպատակով կազմակերպվում է բուժական ուղղիչ հիմնարկ: Ուղղիչ հիմնարկի վարչակազմն ապահովում է դատապարտյալի առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կատարումը, ինչպես նաև ուղղիչ հիմնարկի վարչակազմը պատասխանատվություն է կրում դատապարտյալի առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Առկա է նաև բուժանձնակազմի համալրվածության խնդիր, մի շարք դեպքերում բացակայում են համապատասխան բժշկական սարքավորումներ և անհրաժեշտ դեղամիջոցներ, ինչպես նաև ոչ պատշաճ կերպով են լրացվում բժշկական փաստաթղթերը: Արձանագրվել են նույնիսկ դեպքեր, երբ բուժանձնակազմը չի գրանցել ազատազրկվածների մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքները: Խիստ անբարեկարգ վիճակում են գտնվում բուժկետերը, միաժամանակ, բուժհիմնարկի մասնաշենքերը հիվանդների համար անհարմար դասավորվածություն ունեն, ինչի հետևանքով հիվանդ ազատազրկվածը անբարենպաստ եղանակային պայմաններին ստիպված է դուրս գալ մասնաշենքից և իրեն անհրաժեշտ ներարկումները կամ դեղորայքը ստանալ այլ մասնաշենքում: Խնդիրներ են առաջանում նաև պատշաճ դեղորայք ձեռք բերելու առնչությամբ, քանի որ դեղորայքի չկանխատեսված անհրաժեշտություն առաջանալու դեպքում ՔԿՀ-ն չի կարողանում արագ կազմակերպել գնումը: Կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվող բժշկական օգնության վերաբերյալ 2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեակատարողական վարչություն ստացվել են 169 դիմում-բողոքներ: Նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին անհրաժեշտ սննդամթերքը տրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի թիվ 413-Ն որոշմամբ սահմանված չափաբաժիններով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցներին համապատասխան: 2013 թվականի ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող սննդի որակի վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Վարչակազմի ԲԿԱՄ-ին հայտնած բացատրության համաձայն՝ ազատազրկվածների 20-30 տոկոսն է օգտվում նախաճաշից և ընթրիքից, իսկ ճաշից՝ մոտ 50 տոկոսը: Ազատազրկվածները օգտվում են հիմնականում հանձնուքներից: Մույն բացատրությունը, ինչպես նաև հիմնարկի մթերքների պահման սենյակների ոչ սանիտարահիգիենիկ պայմանները վկայում են ազատազրկված անձանց տրվող սննդի ցածր որակի մասին: Ստացվել են բազմաթիվ բողոքներ առ այն, որ դատապարտյալների հարազատները սննդի հանձնուքներ փոխանցելու համար ստիպված գումար են վճարում հիմնարկի վարչակազմին: ՔԿՀ-ների ղեկավարության խոսքերով յուրաքանչյուր տարի ի հայտ է գալիս դատապարտյալներին բավարար սննդամթերքով ապահովման խնդիր, քանի որ տարեկան բյուջեի հաստատման և գնումներ կատարելու համար համապատասխան ֆինանսական փոխանցումների համար պահանջվում է երկար ժամանակ: Մինչդեռ, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է, ուստի նման դեպքերն անընդունելի են և հարկավոր է հետևողական լինել նման դեպքերը վերացնելու նպատակով: Չնայած, Նախարարության

կողմից իրականացվող որոշ վերանորոգման աշխատանքների՝ ՔԿՀ-ներում շարունակում է չլուծված մնալ ընդհանուր պահման պայմանների խնդիրը, որոնք ԲԿԱՄ-ի կողմից որակվել են անբավարար, ինչը հավասարապես վերաբերում է և դատապարտյալների պահման, և աշխատակազմի ծառայողական պայմաններին: Հարկ է շեշտել նաև, որ ազատազրկվածներին պահելու վայրերի խիստ անբարենպաստ պայմանները հանգեցնում են ոչ միայն անձի արժանապատվության՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքի ոտնահարման, այլև վերջիններիս մոտ մի շարք հիվանդությունների առաջացման: ԲԿԱՄ-ն, ինչպես նաև միջազգային մի շարք կազմակերպություններ ներկայացրել էին ազատազրկված անձանց պահման պայմանների վերաբերյալ իրենց մտահոգությունները և այդ խնդրի լուծման հրատապությունը: Հաշվի առնելով ՄԻԵԴ նախադեպային որոշումները՝ հարկ ենք համարում նշել, որ մի շարք դեպքերում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում անձանց պահման պայմանները կարող են հավասարեցվել անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: Գիտակցելով, որ խնդրին լուծում տալու համար հարկավոր են համալիր վերանորոգման և այլ աշխատանքներ, որոնք կապված են լուրջ ֆինանսավորման հետ, առաջարկում ենք հետևողական լինել սույն խնդիրների լուծման համար:

Գրանցվել են հացադուլ հայտարարած կալանավորներին կամ դատապարտյալներին պատժախցերում պահելու դեպքեր: Հացադուլավորների իրավունքները և պարտականությունները առհասարակ կարգավորված չեն օրենսդրությամբ: Նշված խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած անձանց պահման պայմանների իրավական կարգավորման խնդրի վերաբերյալ քրեակատարողական վարչությունը բազմիցս քննարկումներ և խորհրդատվական հանդիպումներ է ունեցել միջազգային փորձագետների, Եվրոպայի Խորհուրդը ներկայացնող պաշտոնատար անձանց և փորձագիտական խմբերի հետ, սակայն, ըստ վերջիններիս եզրակացության, իրավական կարգավորման պրակտիկա չի գործում որևէ եվրոպական երկրում, ինչը ցույց է տալիս, որ անհրաժեշտություն չկա հատուկ կարգ և չափանիշներ սահմանելու հացադուլ հայտարարած անձանց պահման պայմանների վերաբերյալ: Հացադուլը դիտվում է որպես անձի իրավունք, ուստի քրեակատարողական օրենսդրության մեջ հացադուլի մեջ գտնվող անձանց նկատմամբ այլ վերաբերմունք կամ հարկադիր պայմաններ սահմանված չեն: Չենք կարող համաձայնվել Նախարարության կողմից նշված դիրքորոշման հետ, քանի որ հաշվի առնելով ՀՀ-ում ՔԿՀ-ների վարչակազմերի որդեգրած պատժողական քաղաքականությունը չի կարելի պնդել, որ եվրոպական առաջատար երկրներում օրենսդրական կարգավորման բացակայությունը, թույլ է տալիս չկարգավորել նշված հարցը: Այն, որ տարբեր զարգացած երկրներում նման կարգավորումներ հատուկ նախատեսված չեն, պայմանավորված է այն հանգամանքով, որ հացադուլավորների հետ նման խնդիրներ, որպես այդպիսին, չեն ծագում՝ ի տարբերություն Հայաստանի: Նախարարությունը միաժամանակ նշել է, որ որոշ քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած կալանավորված անձինք կամ դատապարտյալները գերձանրաբեռնվածության պատճառով երբեմն պահվում են պատժախցում, սակայն օգտվում են իրենց բոլոր իրավունքներից՝ այդ թվում անկողնային պարագաների, արտաքին աշխարհի հետ կապի, տեսակցության և այլն, ինչն արգելված է

կարգապահական տույժի ենթարկվածներին: Հաշվի առնելով նրանց առողջական վիճակը՝ հացադուլի ընթացքում նրանք գտնվում են բժշկի հսկողության ներքո: Այս դեպքում խիստ մտահոգիչ է քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած կալանավորների կամ դատապարտյալների համար առանձին խցերի բացակայության հարցը, հատկապես խնդրահարույց է հացադուլ հայտարարած անձի ներկայությամբ այլ դատապարտյալների սնվելը կամ նրանց պատժախցերում պահելը: Ուստի, թեև սույն հարցում միջազգային փորձը հստակ պահանջներ չի առաջադրում, այնուամենայնիվ, գտնում ենք, որ հայաստանյան պայմաններում անհրաժեշտ է այլընտրանքային կարգավորումներ նախատեսել հացադուլ հայտարարած դատապարտյալների պահման համար:

Դեռևս ընդունված չեն պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների հստակ ցանկն ու դրանց կանխատեսելի և հստակ չափորոշիչները: Նախարարությունը հայտնել է, որ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություններ ունեցող դատապարտյալների պատժի հետագա կրումից ազատելու նպատակով միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին չներկայացնելու վերաբերյալ ներկայացվել են 4 դիմում-բողոքներ, որոնց առնչությամբ կատարվել են ուսումնասիրություններ, ինչպես նաև՝ այցելություններ համապատասխան ՔԿՀ-ներ, ինչի արդյունքում պարզվել է, որ դատապարտյալների մոտ առկա հիվանդությունները նախատեսված չեն ՀՀ կառավարության 825-Ն որոշմամբ հաստատված ցանկով: ԲԿԱՄ-ն իր այցերի ժամանակ պարզել է, որ հիվանդ դատապարտյալներից ոմանք ունենին բժշկական փաստաթղթեր, որոնցում ախտորոշումները համապատասխանում էին ՀՀ կառավարության N 825-ն որոշմանը՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին, բայց հիմնարկի վարչակազմը որևէ միջոցներ չի ձեռնարկել պատիժը կրելուց նրանց ազատելու ուղղությամբ: Դատապարտյալ հիվանդներից մեկը երեք ամիս գտնվել էր «Էրեբունի» բժշկական կենտրոնում և ստացել էր պատշաճ բժշկական օգնություն իր սեփական միջոցներով: Այնուհետև, իրականացվել է դատապարտյալի տեղափոխումը ՔԿՀ, թեև անհրաժեշտ բժշկական օգնության ապահովումը համապատասխան հիմնարկում հնարավոր չէր կազմակերպել: Պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդություններ ունեցող դատապարտյալների առողջական վիճակի վերաբերյալ Նախարարության քրեակատարողական վարչության կողմից ստացվել են որոշ բողոքներ, որոնք հիմնականում կապված են եղել միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության չկանոնակարգված լինելու հետ: Նախարարությունից հայտնել էին, որ ձեռնարկվել են համապատասխան քայլեր. նախատեսվում է լրացումների և փոփոխությունների միջոցով կանոնակարգել միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը: Համապատասխան նախագիծը դեռևս գտնվում է լրամշակման փուլում:

Շարունակվում են չլուծված մնալ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների բացակայության և խցերում զուգարանների առանձնացման խնդիրները: Այս խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի հատակագծային լուծումները թույլ չեն տալիս նոր սենյակներ հատկացնել երկարատև տեսակցությունների համար, սակայն երկարատև տեսակցությունները կազմակերպվում են «Նուբարաշեն»

քրեակատարողական հիմնարկում: Նախարարության քրեակատարողական վարչության կողմից յուրաքանչյուր տարի ՄԺԾ ծրագրով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացվել նոր «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ կառուցելու ծրագիր: Ինչ վերաբերում է խցերում գուգարանների առանձնացման խնդրին, Նախարարությունից տեղեկացնում են, որ շենքը չի պատկանում ՀՀ արդարադատության Նախարարության քրեակատարողական վարչությանը և, հետևաբար Նախարարությունը շինարարական աշխատանքներ իրականացնելու իրավունք չունի: Քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցությունների սենյակներ նախատեսված չլինելը խոչընդոտում է դատապարտյալների երկարատև տեսակցությունների իրավունքի իրականացման մատչելիությունը և չի կարող նպաստել այդ անձանց ուղղմանը:

Առկա են խնդիրներ Հայաստանի Հանրապետությունում որդեգրված, ինչպես նաև օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն որդեգրված և ՀՀ-ում մշտապես բնակվող երեխայի կյանքի և դաստիարակության վերաբերյալ տեղեկությունների ստացման և հետորդեգրյա վերահսկողության վերաբերյալ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմում-բողոք հասցեագրած քաղաքացի Լ.Հ.-ն իր դիմումում հայտնել է, որ ինքը հանդիսանում է ՌԴ քաղաքացի, ով մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում: Ցանկանալով որդեգրել ՌԴ քաղաքացիություն ունեցող երեխայի՝ Լ.Հ.-ն ՌԴ համապատասխան լիազոր մարմնից իրեն հայտնել են, որ անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ երկրում իրավասու մարմնի պարտավորությունը հաստատող փաստաթուղթ, որով վերջինս պարտավորվում է համապատասխան հսկողություն իրականացնել այդ երկրում որդեգրված երեխայի կենսապայմանների, դաստիարակության նկատմամբ և ներկայացնել դրա վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև վերահսկել որդեգրված երեխայի՝ ՌԴ հյուպատոսությունում հաշվառումը: Այնինչ, ըստ դիմումատուի՝ նշված պարտավորությունը հավաստող փաստաթուղթը ստանալու նպատակով Նախարարություն դիմելուց հետո նրան հայտնել են, որ իրավասու մարմնի նման պարտավորությունը որևէ իրավական ակտով կարգավորված չէ: Նշվածի հետևանքով դիմումատուի կողմից ՌԴ քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրումը դառնում է անհնարին: «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն. «Կենտրոնական մարմինները անմիջականորեն կամ պետական մարմինների կամ իրենց պետությունում հավատարմագրված այլ մարմինների միջոցով ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, մասնավորապես այն բանի համար, որ տեղեկատվություն հավաքեն, պահպանեն և փոխանակեն երեխայի վիճակի և որդեգրող ապագա ծնողների մասին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է որդեգրումը ձևակերպելու համար»: Հիմք ընդունելով վերոնշյալ Կոնվենցիայի դրույթները՝ ՀՀ կառավարությունը 2010 թվականի մարտի 18-ին ընդունել է թիվ 269-Ն որոշումը, որի 64-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական մարմինն օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմնին: Սակայն սույն որոշումը կարգավորում է միայն ՀՀ քաղաքացի չհանդիսացող և ՀՀ սահմաններից դուրս բնակվող անձանց կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի

որդեգրման գործընթացը՝ բաց թողնելով ՀՀ քաղաքացու և/կամ ՀՀ սահմաններում բնակվող անձի կողմից ՀՀ քաղաքացի չհանդիսացող երեխայի որդեգրման գործընթացի կարգավորումը: Այնինչ, Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 1994 թվականի Մինսկի կոնվենցիայի (որի մասնակից պետություն է հանդիսանում նաև Հայաստանը դեռևս 1994 թվականից) 1-ին հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, ինչպես նաև նրա տարածքում բնակվող անձինք, մյուս բոլոր Պայմանավորվող կողմերի տարածքներում իրենց անձնական և գույքային իրավունքների կապակցությամբ օգտվում են նույնպիսի իրավական պաշտպանությունից, ինչպիսին տվյալ Պայմանավորվող կողմի սեփական քաղաքացիները: Նշված դրույթն, ըստ էության, ուղղակի պարտավորություն է սահմանում մասնակից բոլոր պետությունների համար՝ համապատասխան ներքին օրենսդրական ակտեր ընդունել՝ ապահովելու համար իր քաղաքացիների, ինչպես նաև իր պետության սահմաններում բնակվող անձանց իրավունքները: Այս խնդրի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ խնդիրն առկա է և նշված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորված չեն: Այդ առումով արդեն իսկ առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարություն՝ շահագրգիռ պետական կառավարման մարմիններից կազմված միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու նպատակով, որը նշված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորելու համար կմշակի և համապատասխան իրավական ակտի նախագիծը քննարկման կներկայացնի ՀՀ կառավարություն: Իսկ ինչ վերաբերում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրման գործընթացին, ապա տվյալ դեպքում գործում է այն երկրի օրենսդրությունն ու ընթացակարգերը, որի քաղաքացին հանդիսանում է որդեգրման ենթակա երեխան: Նախարարությունը հստակ տեղեկատվություն չի ներկայացրել, թե, երբ իրենց լուծումը կստանան համապատասխան օրենսդրական թերի կարգավորումները,՝ այդ կերպ զրկելով մի շարք ՀՀ քաղաքացիների որդեգրել օտարերկրյա երկրում երեխա :

Բացակայում են հստակ կարգավորումներ երեխայի ազգանվան գրանցման դեպքում: ՀՀ արդարադատության նախարարի՝ 2007թ. մայիսի 14-ի թիվ 97-Ն Հրամանի հավելված 2-ով սահմանված «Հայրության որոշման գրանցման վերաբերյալ ընդհանուր հարցեր» վերտառությամբ բաժնի 9-րդ կետը մանրամասնում է, որ ծնողների համատեղ դիմումով հայրության որոշման գրանցման դեպքում երեխայի ազգանունը և անունը որոշվում է ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով: Հոր դիմումով հայրության որոշման գրանցման դեպքում երեխայի ազգանունը որոշվում է հոր ցուցումով: Այսինքն, ստացվում է, որ եթե հայրության ճանաչման համար երեխայի հայրն է միանձնյա դիմում ներկայացնում, ապա երեխայի ազգանունը կարող է գրանցվել հոր ազգանվամբ և դրա համար չի պահանջվում երկու ծնողների համաձայնությունը: Մակայն, եթե իրենց կամքով հայրության ճանաչման համատեղ դիմում են ներկայացնում ծնողները, ապա երեխայի ազգանունը գրանցելիս անհրաժեշտ է երկու ծնողների համաձայնությունը: Այստեղ փոքր-ինչ անհասկանալի է, թե որն է նման իրավակարգավորում սահմանելու իրավական հիմքը, հետապնդվող նպատակը և անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ

բազմաթիվ դեպքերում մոր կողմից մերժվում է երեխայի ազգանունը գրանցել հոր ազգանունով՝ առանց որևէ հիմնավորում ներկայացնելու, քանի որ առկա չէ անհամաձայնության դեպքում հիմնավորումներ ներկայացնելու օրենսդրական պարտավորություն մյուս ծնողի համար: Բացի այդ, խնդրահարույց է, որ նման օրենսդրական պարտականություն չի նախատեսվում նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի համար այն դեպքում, երբ ազգանվան ընտրության հարցում ծնողների անհամաձայնության հետևանքով ազգանվան ցուցումի իրավունքը վերապահվում է խնամակալության և հոգաբարձության մարմնին: Ավելին, խնամակալության և հոգաբարձության մարմնի համար սահմանված չեն նաև օրենսդրական իմպերատիվ պահանջներ այդ ցուցումը տալ գրավոր և հիմնավորված որոշում կայացնելու միջոցով՝ հստակ սահմանված ժամկետներում: Այս խնդրի վերաբերյալ Նախարարությունն իր պատրաստակամությունն է հայտնել քաղաքացիական կացության ակտերի գրանցումների ոլորտում քննարկել օրենսդրական փոփոխություններ և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել գործող օրենսդրության մեջ:

Առաջարկություններ

- Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության պարագայում արդյունավետ իրականացնել օրենքով վերապահված լիազորությունները՝ վարույթի օբյեկտիվությունն ու արդարությունը ապահովելու նպատակով: Հետևողական լինել ոլորտում նոր օրենսդրական մեխանիզմներ ներդնելու գործընթացի նկատմամբ:
- Մշակել Կառավարության որոշման նախագիծ ուղղված՝ նոտարների կողմից գանձվող վճարների սակագների լայն միջակայքերի վերացման ուղղությամբ:
- Իրականացնել պատշաճ վերահսկողություն ԴԱՀԿ աշխատակիցների կողմից իրենց վերապահված լիազորությունների չարաշահման և/կամ ոչ պատշաճ կատարման դեպքերը նվազեցնելու և/կամ կանխելու նպատակով:
- Ավարտված կատարողական վարույթի վերսկսման և/կամ նոր վարույթի հարուցման վերաբերյալ տարաբնույթ մեկնաբանությունները վերացնելու նպատակով նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և/կամ լրացումներ:
- Ստացիոնար բուժման կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին տեղափոխել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ կամ այլ քաղաքացիական մասնագիտական բուժհաստատություն՝ բացառելով խտրական մոտեցումները: Միջոցներ ձեռնարկել հիվանդանոց տեղափոխման երկակի ստանդարտների և կոռուպցիոն ռիսկերի վերհանման և կանխման ուղղությամբ:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ ՔԿՀ-ներում գերբնակեցման, վարչակազմի աշխատակիցների կողմից չարաշահումների և կոռուպցիոն երևույթների, ինչպես նաև հանձնույթների ընդունման հետ կապված խնդիրների վերհանման և կանխման ուղղությամբ:

- ՔԿՀ-ների վարչակազմի և դատապարտյալների միջև օրինական փոխհարաբերությունների կառուցման նպատակով վերհանել և փոխանցել պատկան մարմիններին ՔԿՀ-ներում դատապարտյալների և կալանավորների ճնշման, վարչակազմի կողմից բռնության կիրառման և այլ իրավունքների խախտման դեպքերը: Կազմակերպել հատուկ վերապատրաստման դասընթացներ ՔԿՀ-ների վարչակազմի համար :
- Մշակել և իրականացնել տարբեր ծրագրեր և միջոցառումներ դատապարտյալների զբաղվածության ապահովման հարցը լուծելու նպատակով, հատկապես՝ ապահովելով անչափահաս դատապարտյալների ներգրավվածությունը կրթական, մշակութային և սպորտային կյանքին:
- Արդյունավետ հսկողություն իրականացնել ՔԿՀ-ներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց տրամադրվող բժշկական օգնության, տրվող սննդամթերքի որակի և քանակի նկատմամբ, ինչպես նաև ՔԿՀ-ներում բարելավել կոմունալ-կենցաղային անբավարար պայմանները:
- ՔԿՀ-ներում ստեղծել պայմաններ հացադուլ հայտարարած կալանավորների կամ դատապարտյալների համար, հաշվի առնելով գործնականում հանդիպող խոչընդոտները և խախտումները՝ հացադուլավորների իրավունքները և պարտականությունները կարգավորել օրենսդրությամբ:
- Հետամուտ լինել պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների հստակ ցանկն ու դրանց չափորոշիչները սահմանող իրավական ակտի ընդունման կապակցությամբ:
- Որպես ոլորտի լիազոր մարմին՝ միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների կառուցման և խցերում զուգարանների առանձնացման խնդիրների լուծման համար:
- Օրենսդրորեն սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտականությունը ազգանվան ընտրության հարցում ծնողների անհամաձայնության հետևանքով այդ մարմնի կողմից ազգանվան ցուցում տալիս դա կատարել հստակ սահմանված ժամկետներում, գրավոր ձևով և պատշաճ հիմնավորմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանությունը կոչված է հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից պաշտպանելու մարդու կյանքն ու առողջությունը, սեփականությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները, հասարակության ու պետության շահերը:

2013 թվականին ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Չնայած եղել են բազմաթիվ բողոքներ, որ ոստիկանները ցուցմունքներ և այլ տեղեկություններ ստանալու նպատակով անձանց ենթարկել են բռնության, դաժան, անմարդկային վերաբերմունքի, Ոստիկանությունն արձանագրել է միայն 4 այդպիսի դեպք:
- Ձերբակալված և կալանավորված անձանց նկատմամբ արձանագրված բռնության 363 դեպքերից ընդամենը 3,4% -ի դեպքում է հարուցվել քրեական գործ, ինչը վկայում է, որ գործերը քննվել են մակերեսորեն (օրինակ՝ չեն իրականացվել բոլոր հնարավոր քննչական գործողությունները՝ հարցաքննություններ, առերեսումներ և այլն):
- Փակ շուկայի ապօրինի շինարարության դեպքով Ոստիկանությունը դրսևորել է անգործություն՝ մերժելով քրեական գործի հարուցումը: Արդյունքում՝ այդ պատմամշակութային հուշարձանին հասցվեց անդառնալի վնաս:
- Բազմաթիվ անձանց, այդ թվում անչափահասների, «հրավիրել» են Ոստիկանության բաժին և պահել այնտեղ իրենց կամքին հակառակ, չնայած նման իրավասություն Ոստիկանությունը չունի:
- Ոստիկանությունը առանձին դեպքերում հավաքների մասնակիցների նկատմամբ՝ դրսևորել է անհանդուրժողականություն և ոչ իրավաչափորեն ցրել հավաքը՝ խախտելով այդ մարդկանց խաղաղ հավաքի իրավունքը (Կոմիտաս 5 հասցեում բողոքի ակցիայի ժամանակ):
- Կոմայգում չեն իրականացվել անհրաժեշտ ստուգումներ, օպերատիվ այլ միջոցառումներ, ինչի հետևանքով մանկական զբոսայգում չեն վերացել մարմնավաճառությունը և հասարակական վայրերում խուլիգանություն համարվող սեռական հարաբերություններ ունենալու դեպքերը:
- Ոստիկանության ծառայողները, հավաքը ցրելու ընթացքում, որոշ մասնակիցների նկատմամբ կիրառել են ոչ իրավաչափ ֆիզիկական ուժ՝ քաշքշել և հարվածել են են մասնակիցներին՝ նույնիսկ դիմադրության բացակայության դեպքում:
- Առկա են եղել բողոքներ այն մասին, որ Ոստիկանության բաժանմունք բերման ենթարկված անձանց ուշ են գրանցել կամ, ընդհանրապես, չեն գրանցել հաշվառման մատյաններում: Արդյունքում՝ անձինք Ոստիկանության բաժնում պահվել են ավելի

երկար, քան պահանջում է օրենքը, ինչպես նաև անտեղյակ են եղել իրենց կարգավիճակի մասին (կասկածյալ, վկա և այլն):

- Գրանցվել են մի շարք դեպքեր, օրինակ՝ հավաքների ընթացքում, երբ ոստիկանության աշխատակիցները, գտնվելով ծառայության մեջ, եղել են քաղաքացիական հագուստով: Այնինչ, ըստ օրենքի պահանջների՝ հասարակական կարգը պահպանելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են համազգեստ կրել, որպեսզի ճանաչելի լինեն անձանց համար:
- Մի շարք դեպքերում Ոստիկանության ծառայողները անհարկի ձգձգել են քննչական գործողությունների իրականացումը, ինչպես օրինակ, առանց հիմքի երկարատև հարցաքննել են քաղաքացիներին:
- Գրանցվել է 1399 դեպք, երբ Ոստիկանության աշխատակիցները խախտել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետը:
- Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ազդանշանային լուսացույց է տեղադրվել ընդամենը մեկ խաչմերուկում, ինչի հետևանքով այդ մարդիկ գրկվել են ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից:
- Առանձին դեպքերում ճանապարհային երթևեկության խախտումներն արձանագրող արագաչափ սարքավորումները տեղադրվել և գործել են առանց նախազգուշացնող ցուցանակների:

Արձանագրված դրական զարգացումները

- Ոստիկանության կողմից սպասարկվող տարբեր վարչական տարածքներում կազմակերպվում և անցկացվում են նպատակային կանխարգելիչ միջոցառումներ, մասնավորապես՝ ստուգայցեր և շրջագայություններ հավանական քրեածին վայրեր, այգիներ, պուրակներ, ժամանցի ու մարդաշատ այլ վայրեր:
- Էապես բարելավվել է Ոստիկանության կողմից անձանց դիմում-բողոքների, ինչպես նաև մամուլում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրումը:
- Փախստականի կարգավիճակ ստացած անձանց կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերը միջազգայնորեն հաստատված չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ ոստիկանության կողմից նախապատրաստվել և շրջանառության մեջ է դրվել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
- ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերում շարունակվելու են տեղադրվել տեսախցիկներ:
- 2013 թվականի ընթացքում Ոստիկանության ներքին անվտանգության վարչության իրականացրած քննությունների արդյունքում 141 օրինախախտ ծառայողներ ենթարկվել են պատասխանատվության:
- ՀՀ ոստիկանության կողմից 2013 թ. ընթացքում իրականացվել է «Թափառաշրջիկ և մուրացիկ 2013» միջոցառումը, որի ընթացքում հայտնաբերվել են մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող 61 անչափահաս, որոնց մի մասի և ծնողների հետ

իրականացվել են կանխարգելիչ աշխատանքներ, իսկ մյուս մասը, որոնց հետ երկարատև սոցիալական և այլ ծառայություններ մատուցելու անհրաժեշտություն է առաջացել, ուղղորդվել են ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոն:

Ընդհանուր վերլուծություն

Չնայած եղել են բազմաթիվ բողոքներ, որ ոստիկանները ցուցմունքներ և այլ տեղեկություններ ստանալու նպատակով անձանց ենթարկել են բռնության, դաժան, անմարդկային վերաբերմունքի, Ոստիկանությունից Պաշտպանին հայտնել են, որ անձանց խոշտանգումների, դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու միայն 4 դեպք է արձանագրվել, և այդ դեպքերի հիման վրա հարուցվել են քրեական գործեր ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա: Նշված հոդվածը վերաբերում է անձի պաշտոնական լիազորությունների չարաշահմանը: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածը նախատեսում է կոնկրետ հանցակազմ՝ քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, սակայն նշված հոդվածի հիման վրա որևէ քրեական գործ չի հարուցվել: Սա մտահոգիչ է այնքանով, որ ԲԿԱՄ-ի կողմից իրականացված այցելությունների արդյունքում, ինչպես նաև ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ անձինք հիմնականում ենթարկվում են բռնությունների՝ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից որոշակի տեղեկություններ և/կամ ցուցմունքներ ստանալու նպատակով: Պարզվել է նաև, որ նշվածը հիմնականում տեղի է ունենում Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում: Իհարկե, խոշտանգումների, դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու դեպքեր են բացահայտվել Ոստիկանության կողմից, սակայն մտահոգիչ է, որ ամբողջ 2013 թվականի ընթացքում բացահայտվել է միայն 4 դեպք: Ավելին, պարզ չէ նաև, թե ինչ հիմնավորմամբ է, որ 341-րդ հոդվածի հատկանիշներով որևէ քրեական գործ չի հարուցվել, քանի որ անձինք հիմնականում ենթարկվում են նման վերաբերմունքի կոնկրետ տեղեկություններ ստանալու դիտավորությամբ, այլ ոչ միայն պաշտոնական լիազորությունները չարաշահելու դիտավորությամբ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարվել էր առաջարկություն, որ ուժեղացվի վերահսկողությունը Ոստիկանության բաժիններում՝ մասնավորապես բացատրություններ տալու և հարցաքննությունների ընթացքը մշտապես տեսաձայնագրելու միջոցով: Ոստիկանությունը որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որ իր ստորաբաժանումների վարչական շենքերում շարունակվեն տեղադրվել տեսախցիկներ, սակայն առ այսօր հարցաքննության և/կամ բացատրություններ տալու համար նախատեսված տեսախցիկներով կահավորված հարցաքննության սենյակներ չկան: Նշվածը չի կարող նպաստել Ոստիկանության ծառայողների կողմից անձանց խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող

վերաբերմունքի վերհանմանը: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ Ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգումների, բռնությունների միայն 4 դեպքի բացահայտումը վկայում է այն խնդրի մասին, որ նման դեպքերի վերաբերյալ բողոքները բավարար խորությամբ չեն ուսումնասիրվել և/կամ դրանց ուսումնասիրության համար պատշաճ միջոցառումներ չեն իրականացվել:

Ձերբակալված և կալանավորված անձանց նկատմամբ արձանագրված բռնության 363 դեպքերից ընդամենը 3,4% -ի դեպքում է հարուցվել քրեական գործ, ինչը վկայում է, որ գործերը քննվել են մակերեսորեն (օրինակ՝ չեն իրականացվել բոլոր հնարավոր քննչական գործողությունները՝ հարցաքննություններ, առերեսումներ և այլն): Համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը: ՀՀ կառավարության 05.06.2008թ. որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի համաձայն՝ ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալվածի անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն N 12 ձևի, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին: Ոստիկանությունից հայտնել են, որ ՁՊՎ-ներում 2013 թվականի ընթացքում ընդունված անձանցից 363-ի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ և դրանց վերաբերյալ իրազեկումներ են ներկայացվել վարույթն իրականացնող մարմիններին՝ համապատասխան ընթացքը որոշելու համար: Նշված դեպքերից 351-ի կապակցությամբ հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով կայացվել են որոշումներ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու համար: Իհարկե, Ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ների կողմից անձանց մարմնական վնասվածքները արձանագրվում են, և համապատասխան իրազեկումներ են ներկայացվում համապատասխան մարմիններին, և հայտնաբերված դեպքերից ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից 7-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Սակայն

հարկավոր է արձանագրել, որ խիստ մտահոգիչ է, որ արձանագրված 363 դեպքերից 351-ի կապակցությամբ կայացվում են քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ: Նշվածից կարելի է ենթադրել, որ չեն իրականացվել անհրաժեշտ քննչական գործողություններ և/կամ այդ դեպքերը բավարար խորությամբ և արագությամբ չեն ուսումնասիրվել, հատկապես հաշվի առնելով այն, որ քրեական գործ հարուցելու մերժումների հիմնական հիմնավորում է հանդիսացել ձեռքարկված և կալանավորված անձանց պնդումները, որ վերջիններս ստացել են վնասվածքները մինչև արգելանքի վերցվելը կամ արգելանքի վերցնելու ժամանակ սայթաքելու կամ ընկնելու հետևանքով: Խոշտանգումների, դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից ներկայացված ուղեցույցներում հատկապես կարևորվում է արգելանքի վերցված անձանց մոտ ցանկացած մարմնական վնասվածքի առկայության դեպքում քրեական գործերի հարուցումը, հաշվի առնելով հնարավոր խոշտանգումների ռիսկը: Ավելին՝ նման դեպքերում պաշտոնատար անձինք չպետք է բավարարվեն արգելանքի վերցված անձանց տեղեկություններով, այլ պետք է գիտակցեն, որ ապացուցման պարտավորությունը կրում են իրենք: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ուստի, այն դեպքերում, երբ նյութերի նախապատրաստման փուլում հնարավոր չէ պարզել գործի հանգամանքները, քրեական հետապնդում իրականացնող մարմինը՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար պարտավոր է առկա նյութերով կայացնել քրեական գործ հարուցելու մասին որոշում, որի շրջանակներում օրենսդիրը քննչական գործողություններ իրականացնելու համար որևէ սահմանափակում չի նախատեսում, որը, ի դեպ, նախատեսում է նախքան նման որոշում կայացնելը: Նշյալ խնդիրները հանգեցնում են քաղաքացիների իրավունքների և շահերի՝ մասնավորապես, քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումների, ինչպես նաև չեն նպաստում խոշտանգումների, դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորման կանխարգելմանը:

Երևանի Ծածկած (Փակ) շուկայի ապօրինի շինարարության դեպքով Ոստիկանությունը դրսևորել է անգործություն՝ մերժելով քրեական գործի հարուցումը: Արդյունքում՝ այդ պատմամշակութային հուշարձանին հասցվեց անդառնալի վնաս: Երևանի Ծածկած (Փակ) շուկայում իրականացված շինարարության վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները բազմիցս հանդես էին եկել հայտարարությամբ, որ Ծածկած շուկայում իրականացված շինարարությունն ապօրինի է: Վերջին գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել էր, որ «Երևանի թիվ 1 շուկա» ՄՊԸ-ի տնօրենը տեղեկացվել է Մաշտոցի պողոտայի 5 հասցեում գտնվող շուկայի տարածքում ապօրինությունները վերացնելու և դրանից հետո միայն քաղաքաշինական

փաստաթղթերին համապատասխան կառուցապատումը քաղաքապետարանի պահանջը ոչ միայն չկատարվեց, այլև ավարտվեց Ծածկած շուկայի տարածքում ապօրինի կառույցների իրականացումը: Նկարագրված խնդրով պետք է արդեն զբաղվեին իրավապահ մարմինները: Այս առումով անհասկանալի է իրավապահ մարմինների և առաջին հերթին՝ Ոստիկանության դիրքորոշումը այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված ինչպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կրկնակի վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո ապօրինի շինության կառուցումը չդադարեցնելու համար, այնպես էլ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոցներ չձեռնարկելու համար: Այսպես, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 3151-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելու և դրա հետևանքները չվերացնելու, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելու և անօրինական կառույցները չքանդելու համար, որոնք կատարվել են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Հանցագործության օբյեկտիվ կողմը երկրնտրելի է և դրսևորվում է հոդվածում թվարկված արարքներից որևէ մեկը կատարելով: Ընդ որում, օբյեկտիվ կողմը կազմող արարքները խառը բնույթ ունեն, և դրանցում հաճախ գործողությունը զուգակցվում է անգործությամբ: Դրանք են՝ 1)պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը. 2)օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը. 3)նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը. 4)անօրինական կառույցները չքանդելը: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ նշված արարքների կատարումը դեռևս բավարար չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պայման է, այսպես կոչված, վարչական պրեյուդիցիան, այսինքն՝ անձը պետք է կատարի հոդվածում թվարկված արարքներից որևէ մեկը այդ արարքի համար կրկնակի վարչական տույժ ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Ի սկզբանե հայ օրենսդիրը գտել է, որ արարքի բազմիցս կատարումը կարող է բնութագրել այն կատարող անձին, բայց ոչ արարքը: Ոստիկանության կողմից մերժվել է քրեական գործի հարուցումը թե՛ վերը նշված և թե՛ պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնելու կամ վնասելու հանցագործությունների դեպքերի կապակցությամբ: Գտնում ենք, որ նշված խնդրի շրջանակներում Ոստիկանությունը բավարար աստիճանի ուսումնասիրություն չի իրականացրել:

2013 թվականի ընթացքում բազմաթիվ անձանց, այդ թվում անչափահասների,

«հրավիրել» են Ոստիկանության բաժին և պահել այնտեղ իրենց կամքին հակառակ, չնայած նման իրավասություն Ոստիկանությունը չունի: Ըստ ՀՀ ոստիկանության կողմից խնդրի վերաբերյալ տրամադրված պարզաբանումից պարզ է դառնում, որ առանձին դեպքերում, անձինք ոստիկանության բաժին են հրավիրվում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի կարգով՝ պարզաբանելով, որ անձն ինքնակամ, առանց իրավունքների սահմանափակման, ներկայանում է ոստիկանության բաժին և ոստիկանության ստորաբաժանում հրավիրելն իրավաչափ է: Այնինչ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը նախատեսում է, որ հարցումը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով: Ուստի կարելի է եզրակացնել, որ այս դրույթը անձին ոստիկանության բաժին հրավիրելու և այնտեղ գտնվելու գործընթացի և/կամ իրավաչափության վերաբերյալ որևէ կարգավորում չի նախատեսում: Օրենքի վերոնշյալ դրույթի նմանատիպ մեկնաբանությունը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածին, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքի 15-րդ հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն բացառապես վերաբերում է ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից տեղեկությունների հավաքագրմանը, սակայն գործնականում այս դրույթի լայն և կամայական մեկնաբանության արդյունքում այն հիմք է ընդունվում, անձանց ՀՀ ոստիկանության բաժիններ հրավիրելու իրավաչափությունը հիմնավորելու համար: Մտահոգիչ է այն, որ Ոստիկանության կողմից հիմք է ընդունվում Օրենքի 15-րդ հոդվածի կարգավորումը, մեկնաբանելով այն. «Որևէ սահմանափակում չկա օպերատիվ հարցում իրականացնելու վայրի վերաբերյալ»: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ դրույթը, չնայած իր կիրառման և մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման ռիսկին՝ հստակ սահմանափակումներ և/կամ հստակեցումներ չի նախատեսում օպերատիվ հարցումներ իրականացնելու կարգի, վայրի, ժամանակի և այլ նման հանգամանքների վերաբերյալ, ինչպես նաև, չի նախատեսում հատուկ կարգ անչափահասների նկատմամբ տվյալ հարցման իրականացման վերաբերյալ: Օպերատիվ հարցման կարգի վերաբերյալ կարգավորումների բացակայությունը հանգեցնում է նրան, որ անձինք չեն տեղեկացվում համապատասխան հարցման կամավորության և իրենց իրավունքների, հատկապես՝ համապատասխան ստորաբաժանում չներկայանալու և յուրաքանչյուր պահին հրաժարվելու տեղեկություններ հայտնելուց: Հարկավոր է հաշվի առնել, որ տասնվեց տարին չլրացած անձի օպերատիվ հարցումը կարող է դիտարկվել իրավաչափ միայն նրա օրինական ներկայացուցչի մասնակցությամբ, մինչդեռ Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ Ոստիկանության աշխատակիցները տասնվեց տարին չլրացած անձանց օպերատիվ հարցումը իրականացնում են առանց օրինական ներկայացուցչի

մասնակցության, քանի որ Օրենքով նման պահանջ սահմանված չէ: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ այս հարցի վերաբերյալ առկա է ոչ միայն Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողության, այլև, առհասարակ, օրենքի բացի խնդիր: ՀՀ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումը օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»: Գտնում ենք, որ որպես ոլորտի լիազոր մարմին՝ Ոստիկանությունը պետք է մշակի խնդիրը կարգավորող համապատասխան օրենսդրական նախագիծ :

Ոստիկանությունը առանձին դեպքերում հավաքների մասնակիցների նկատմամբ դրսևորել է անհանդուրժողականություն և ոչ իրավաչափորեն ցրել հավաքը՝ խախտելով այդ մարդկանց խաղաղ հավաքի իրավունքը: Կոմիտաս 5 հասցեում շինարարական աշխատանքների դեմ բողոքող մի քանի տասնյակ քաղաքացիներ խաղաղ և առանց զենքի իրենց ժամանակավոր ներկայությունն էին ապահովել Կոմիտաս փողոցի մայթեզրին և երթևեկելի հատվածում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի կարևորությունը բարձրաձայնելու նպատակով: Երկու և ավելի քաղաքացիների նման գործողությունն, ըստ օրենքի, բնորոշվում է որպես իրազեկում չպահանջող, խաղաղ, ինքնաբուխ հավաք և կարող է տևել մինչև 6 ժամ («Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 2, 26 և 27 հոդվածներ): Հավաքի ընթացքում ոստիկանության աշխատակիցները, Կոմիտասի պողոտայի երթի խափանումը որակելով հասարակական կարգի խախտում, մի քանի անգամ դիմեցին քաղաքացիներին՝ պահանջելով դադարեցնել ակցիան: Հավաքը սկսելուց շուրջ 50 րոպե հետո Ոստիկանությունը կիրառեց ֆիզիկական ուժ, բերման ենթարկեց տասնյակ քաղաքացիների և ցրեց հավաքը: Համանման փաստական հանգամանքներով Օյա Աթամանն ընդդեմ Թուրքիայի գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրել է Հայաստանի համար նախադեպային և պարտադիր իրավունքի ուժ ունեցող որոշում: Այդ գործով ևս, մի քանի տասնյակ մարդ կազմակերպել էին ցույց՝ հանրության ուշադրությունը գրավելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները բազմիցս տեղեկացրել էին ցուցարարներին ցույցի անօրինականության, ինչպես նաև հասարակական կարգը խախտելու մասին և հրահանգել էին դադարեցնել ցույցը, մինչդեռ ցուցարարները, չկատարելով ոստիկանության պահանջը, շարունակել էին ցույցը: Հավաքը սկսելուց շուրջ 30 րոպե հետո Ոստիկանությունը ֆիզիկական ուժ էր կիրառել և հավաքը ավարտվել էր ցուցարարների ձերբակալությամբ: Եվրոպական դատարանը ոստիկանության գործողությունները գնահատել էր ոչ իրավաչափ և դրանք որակել իշխանությունների կողմից հավաքն ավարտին հասցնելու անհամբերության

(անհանդուրժողականության) դրսևորում: Եվրոպական դատարանը նման իրավիճակում գտավ, որ բացակայում էր ցուցարարների կողմից հասարակական կարգին վտանգ ներկայացնելու վերաբերյալ որևէ ապացույց, բացառությամբ երթևեկությանը խոչընդոտելու հանգամանքի: Եվրոպական դատարանը սահմանեց, որ հասարակական վայրում կազմակերպված հավաքը, անշուշտ, կարող է հանգեցնել առօրյայի բնականոն ընթացքի, այդ թվում՝ երթևեկության որոշակի խափանման: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը վճռեց, որ ոստիկանության կողմից ուժի կիրառմամբ հավաքին միջամտությունն անհամաչափ է եղել և անկարգությունների կանխման համար՝ ոչ անհրաժեշտ: Ուշադրության է արժանի նաև Եվրոպական դատարանի մեկ այլ որոշումը՝ Մահմուդովն ընդդեմ Ռուսաստանի գործով: Այս դեպքում ևս իշխանություններն արգելել էին նոր բազմաբնակարան շինության դեմ ուղղված խաղաղ հավաքի իրականացումը: Չնայած իշխանությունների արգելքին, հավաքն, այնուամենայնիվ, տեղի էր ունեցել, սակայն ոստիկանության աշխատակիցները դադարեցրել էին խաղաղ հավաքը: Ռուսաստանի իշխանություններն իրենց գործողությունները հիմնավորելու համար որպես փաստարկ բերել էին «ահաբեկչական գործողությունների բռնկման» վտանգը: Այս գործով ևս Եվրոպական դատարանը ոստիկանության գործողությունները որակել էր որպես մարդու իրավունքների խախտում՝ շեշտելով, որ հավաքի կազմակերպման նկատմամբ արգելքները պետք է միմիայն կիրառվեն հավաքների ընթացքում բռնության և անկարգությունների լուրջ վտանգի առկայության դեպքում, և պետությունը չպետք է ուռճացնի բռնության վտանգը՝ որպես հավաքի կազմակերպման խոչընդոտման միջոց: Կոմիտաս 5 հասցեում երթևեկության խոչընդոտումը լուրջ վտանգ չէր սպառնում ռազմավարական նշանակության որևէ օբյեկտի կամ պետական մարմնի բնականոն գործունեության համար: Ավելին, ոստիկանության աշխատակիցներն հավաքը դադարեցնելու փոխարեն ունեին իրավիճակը կարգավորելու այլընտրանք: Ոստիկանությունը կարող էր տրանսպորտային միջոցներին հրահանգել շրջանցել Կոմիտաս փողոցի այդ հատվածը և երթևեկել հարակից Հրաչյա Քոչար կամ Արամ Խաչատրյան ճանապարհներով: Անհրաժեշտ էր միայն շրջանցին ուղղված համապատասխան տեխնիկական միջոցների ձեռնարկում, երբ կարող է արգելափակվել տրանսպորտային երթևեկության իրականացման համար նախատեսված պողոտայի մի հատվածը: Նման պրակտիկա Երևանում շատ հաճախ կիրառվում է ճանապարհային նորոգման աշխատանքների, պաշտոնական պատվիրակությունների երթևեկության, հրապարակային միջոցառումների և այլ դեպքերում: Ոստիկանությունը նշվածի վերաբերյալ Պաշտպանին հայտնել էր, որ նշված ՄԻԵԴ որոշումները չեն կարող համադրելի լինել քննարկվող իրադրության հետ՝ այն տրամաբանությամբ, որ նշված գործերի և Երևանի Կոմիտասի պողոտայում օգոստոսի 24-ին տեղի ունեցած հավաքի փաստացի հանգամանքների միջև առկա է նույնատիպության բացակայություն: Այնինչ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան համարվում է «կենդանի փաստաթուղթ», քանի որ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախկին դատական վճիռները պետք է մեկնաբանվեն դինամիկ և ժամանակին համապատասխան՝ առավելագույն պաշտպանություն ապահովելու նպատակով (Թայփերն ընդ. Միացյալ Թագավորության, գործ (1978)): Ներպետական կիրառման հարթությունում «կենդանի փաստաթուղթ» դոկտրինան

նշանակում է, որ ՄԻԵԴ-ի դատական վճիռներն այնպիսի աղբյուր են, որոնք կարող են և պետք է կիրառվեն հասկանալու, թե ինչպես են փոխվում Կոնվենցիայի հոդվածների կիրառման և մեկնաբանման շրջանակները: Ավելին, ՄԻԵԴ-ն անհատական գանգատների քննության ընթացքում, հիմնվելով կոնկրետ գործի ինքնատիպ փաստական հանգամանքների վրա, կատարում է երկակի գործառույթ՝ անհատական գործի կապակցությամբ վերահսկողություն, միաժամանակ կատարելով մարդու իրավունքների վերաբերյալ ընդհանուր սկզբունքներ սահմանելու և պաշտպանության նվազագույն մակարդակը որոշելու առաքելություն: Այսինքն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից որոշման մեջ նշված ՄԻԵԴ գործերը վկայում են Կոնվենցիայի 11-հոդվածով ամրագրված հավաքների և միավորման ազատության անհարկի սահմանափակման մասին ՄԻԵԴ-ի կողմից կայացրած որոշման և դրա արդյունքում ձևավորված խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման ընդհանուր սկզբունքների և իրավական չափորոշիչների ձևավորման մասին, որոնք կաշկանդված չեն փաստական հանգամանքներով: Ուստի, տարբեր փաստական հանգամանքներով գործերի նկատմամբ կարող է կիրառելի լինել նույն օրենքի դրույթը կամ իրավունքի մեկնաբանումը: Այսինքն, ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներին հղում կատարելու նպատակը նույնանման փաստական հանգամանքների հայտնաբերումը չէ (որով էլ, թյուր կարծիքի համաձայն, պայմանավորված կլինի իրավունքի միատեսակ կիրառումը և կրկին հարկավոր է նշել, որ բացարձակ նույնանման փաստական հանգամանքները թե տեսության և թե գործնականում հնարավոր չեն), այլ անհրաժեշտությունը՝ ցույց տալու ՄԻԵԴ-ի կողմից Կոնվենցիայի դրույթներով սահմանված իրավունքի մեկնաբանության միջոցով ձևավորված իրավունքների պաշտպանության համընդհանուր չափորոշիչներ, որտեղ կոնկրետ գործերի փաստական հանգամանքների համընկնումն արդեն իսկ էական չէ: Ուստի, նշվածի լույսի ներքո, արդիականացվում է վերոգրյալ նախադեպային որոշումներում ՄԻԵԴ-ի խաղաղ հավաքների ազատության իրավունքի մեկնաբանության արդյունքում ձևավորված համընդհանուր սկզբունքների և իրավական չափորոշիչների կիրառելիությունը Կոմիտաս 5-ի դեպքերի նկատմամբ: ՄԻԵԴ-ի վերոգրյալ բոլոր մեկնաբանությունները բխում են և արտացոլում են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Կոնվենցիայի պահանջները՝ հաշվի առնելով վերջինիս «կենդանի փաստաթուղթ» բնույթը, ուստի Հայաստանի համար դրանք ունեն նախադեպային և պարտադիր իրավունքի ուժ: Այսպիսով, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ կարող ենք եզրակացնել, որ Կոմիտաս 5 հասցեի բողոքի ակցիայի ընթացքում Ոստիկանությունը գործել է ոչ իրավաչափ՝ դրսևորելով անհամբերություն և անհանդուրժողականություն, արդյունքում խախտելով անձանց խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը:

Նելսոն Ստեֆանյանի անվան մանկական զբոսայգում չեն իրականացվել անհրաժեշտ ստուգումներ, օպերատիվ այլ միջոցառումներ, ինչի հետևանքով մանկական զբոսայգում չեն վերացել մարմնավաճառությունը և հասարակական վայրերում խուլիգանություն համարվող սեռական հարաբերություններ ունենալու դեպքերը: Տևական ժամանակ է, ինչ մի շարք անձինք բողոքներ են ներկայացրել Պաշտպանին, որ որոշ անձինք Կոմայգում պարբերաբար զբաղվում են պոռնկությամբ, ինչպես նաև ունենում սեռական հարաբերություններ հենց մանկական այգու տարածքում: Այսպես, պոռնկությամբ

զբաղվելու համար պատասխանատվություն է նախատեսվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 179.1-րդ հոդվածով: Հասարակական վայրում սեռական հարաբերություններ ունենալը կարող է որակվել որպես խուլիգանություն՝ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համապատասխան: Ոստիկանությունից հայտնել էին, որ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում վերջին մեկ տարվա ընթացքում Նելսոն Ստեփանյանի անվան մանկական զբոսայգում և դրան հարող տարածքում մի շարք անձանց կողմից պոռնկությամբ զբաղվելու և սեռական հարաբերություններ ունենալու վերաբերյալ ահազանգեր չեն ստացվել, վարչական կամ քրեական գործերով վարույթներ չեն հարուցվել: Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական գործ հարուցելու առիթներից է նաև հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները: Նույն օրենսգրքի 179-րդ հոդվածը սահմանում է, որ լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններում: Զանգվածային լրատվության միջոցները բազմիցս անդրադարձել էին Նելսոն Ստեփանյանի անվան մանկական զբոսայգում և դրան հարող տարածքում մի շարք անձանց կողմից պարբերաբար դիտավորությամբ հասարակական կարգի կոպիտ խախտումներին, որոնք սպառնում են տարածքում բնակվող երեխաների անմիջական առողջությանը և ուղղված են հասարակական անդորրը, հասարակական բարոյականությունը, այդ թվում քաղաքացիների կողմից հասարակական վայրերում օրինապահ և կայուն վարքագծի պահպանմանը, անձանց ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությանը: Նշված տեսագրություններում և հոդվածներում զբոսայգուն հարող տարածքի բնակիչները ներկայացրել էին այնպիսի տեղեկություններ, մասնավորապես՝ գիշերային ժամերին լսվող բարձր ահաբեկիչ բղավոցները, զբոսայգու տարածքում առավոտյան հայտնաբերված օգտագործված պահպանակներն ու այլ առարկաներ, կասկածելի հեղուկներ պարունակող ներարկիչները և այլն, որոնք կարող էին պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի (օրինակ՝ խուլիգանություն, թմրանյութերի ապօրինի շրջանառություն և այլն) հատկանիշներ: Նշված տեղեկությունները փոխանցվել էին Ոստիկանությանը, որտեղից դրանց կապակցությամբ հայտնել էին, որ, «ներկայացված հրապարակումներում քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի ակնհայտ հատկանիշներ չեն մատնանշվում»: Մտահոգիչ է այն, որ Ոստիկանությունը նման հրապարակումների առկայության դեպքում, առանց բավարար խորությամբ ուսումնասիրություններ իրականացնելու ներկայացնում է իրավական գնահատական: Մտահոգիչ է նաև այն, որ Ոստիկանության կողմից 2013 թվականի ընթացքում փողոցային մարմնավաճառների հնարավոր հավաքատեղիներում իրականացված ստուգայցների արդյունքում մարմնավաճառությամբ զբաղվելու կասկածանքով ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերվել են 828 անձինք, սակայն Նելսոն Ստեփանյանի անվան մանկական զբոսայգում և դրան հարող տարածքից ոչ մի անձ համապատասխան ստորաբաժանումներ չի բերվել: Ոստիկանությունից հայտնել են, որ կոնկրետ տարածքների ստուգումների և դրանց պարբերականության հարցերը որոշվում են ելնելով սպասարկվող

տարածքի օպերատիվ իրավիճակից: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ չնայած տարիներ շարունակ հնչեցվել են քաղաքացիների բողոքները նշված այգում ոչ միայն ապօրինի, այլ նաև քրեորեն հետապնդելի արարքների վերաբերյալ, ինչպես նաև առկա են եղել պաշտոնատար անձանց հրապարակային դիրքորոշումներ նշված այգում տեղի ունեցող արարքների վերաբերյալ, սակայն ՀՀ ոստիկանության օպերատիվ աշխատակիցները որևէ խնդրահարույց դրսևորում չեն հայտնաբերել և որևէ դատավարական գործողություններ չեն իրականացվել:

2013 թվականի ընթացքում գրանցվել են առանձին դեպքեր, երբ Ոստիկանության ծառայողները, հավաքը ցրելու ընթացքում, որոշ մասնակիցների նկատմամբ կիրառել են ոչ իրավաչափ ֆիզիկական ուժ՝ քաշքշել և հարվածել են մասնակիցներին՝ նույնիսկ դիմադրության բացակայության դեպքում: Այսպես՝ ապրիլի 9-ին տեղի էր ունեցել Արմեն Մարտիրոսյանի և Ոստիկանության ծառայողների միջև միջադեպը: Նշվածի վերաբերյալ Ոստիկանությունից Պաշտպանին հայտնել են, որ ապրիլի 9-ի երեկոյան «Ազատության» հրապարակում կազմակերպված հանրահավաքից հետո՝ ժամը 19:00-ի սահմաններում, Արմեն Մարտիրոսյանը փորձել է ճեղքել ոստիկանության շղթան և չի կատարել ոստիկանության ծառայողների օրինական պահանջները՝ խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջը, ինչի արդյունքում տեղի է ունեցել ընդհարում, որի հետևանքով ոստիկանները, ղեկավարվելով նույն օրենսգրքի 258-րդ հոդվածով, Արմեն Մարտիրոսյանին բերման են ենթարկել ոստիկանության համապատասխան բաժանմունք: Զանգվածային լրատվության միջոցներում լայնորեն տարածված տեսագրության մեջ կարելի է տեսնել, որ ոստիկաններին որոշակի դիմադրություն ցույց տալուց հետո Արմեն Մարտիրոսյանը վնասազերծվում է Ոստիկանության մի խումբ աշխատակիցների կողմից, սակայն նույնիսկ դիմադրությունը դադարեցնելուց հետո ոստիկաններից մեկը շարունակում է ոտքով հարվածներ հասցնել Արմեն Մարտիրոսյանի դեմքին: Նման մեկ այլ դեպք վերաբերում է 2013 թվականի Օգոստոսի 24-ին, երբ Կոմիտաս փողոցում հավաքի մասնակիցների և ոստիկանության աշխատակիցների միջև տեղի ունեցան բախումներ: Զանգվածային լրատվամիջոցներում լայնորեն տարածված տեսագրության մեջ կարելի էր նկատել, որ հավաքի մասնակից Արգիշտի Կիվիրյանը, մի քանի դրվագներում չի կատարել ոստիկանության ծառայողների պահանջները դրանք որակելով անօրինական: Այնուհետև, ոստիկանության ծառայողներն Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ կիրառել են ֆիզիկական ուժ (գետնին տապալել և/կամ հարվածել)՝ նույնիսկ վերջինիս կողմից դիմադրության բացակայության պարագայում: Մինևույն ժամանակ, ակցիային մասնակցող, սակայն այլևս հասարակական կարգը չխախտող և այլ իրավախախտում չկատարող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից կիրառվել է ֆիզիկական ուժ և դրսևորվել անհարկի ագրեսիվ վերաբերմունք՝ հատկապես նշված անձանց ոստիկանության ծառայողական մեքենա նստեցնելիս: Բացի այդ, ոստիկանության կողմից մեկից ավել անգամներ ֆիզիկական ուժ (քաշքշել), ագրեսիվ վերաբերմունք է ցուցաբերվել այն քաղաքացիների նկատմամբ, որոնք սովյալ պահին չէին խախտում հասարակական կարգը: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

նստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ երբ անձն արդեն փաստացիորեն վնասագերծվել է՝ վերջինիս նկատմամբ ուժի չարդարացված կիրառումը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում (տես նաև՝ Կլասն ընդդեմ Գերմանիայի, Ռեբոքն ընդդեմ Սլովենիայի, Գյունայդինն ընդդեմ Թուրքիայի): Ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում անըդունելի է վնասագերծված և այլ իրավախախտում չկատարող անձանց նկատմամբ նստիկանների կողմից ֆիզիկական ուժի կիրառման դեպքերը:

2013 թվականի ընթացքում առկա են եղել բողոքներ այն մասին, որ Ոստիկանության բաժանմունք բերման ենթարկված անձանց ուշ են գրանցել կամ, ընդհանրապես, չեն գրանցել հաշվառման մատյաններում: Արդյունքում, անձինք Ոստիկանության բաժնում պահվել են ավելի երկար, քան պահանջում է օրենքը, ինչպես նաև անտեղյակ են եղել իրենց կարգավիճակի մասին (կասկածյալ, վկա և այլն): ՀՀ ՆԳ նախարարի հերթապահ մասերի գործունեությունը կարգավորող 01.12.1994թ. թիվ 977 հրամանով սահմանվում է պահանջ, համաձայն որի՝ Ոստիկանության բաժին բերված յուրաքանչյուր անձ գրանցվում է հերթապահ մասի բերման ենթարկվածների հաշվառման գրքում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուսումնասիրած բողոքներից մեկի համաձայն Դ.Ի-ին 2013թ. օգոստոսի 24-ին իրեն Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքից, առանց իրավական հիմնավորման, բերման էր ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, որտեղ վերցրել էին իր անձնական տվյալները: Հայտնել է նաև, որ շուրջ 3 ժամ իրեն պահել են ոստիկանության հիշյալ բաժնում և իր նկատմամբ որևէ արձանագրություն չի կազմվել: Նշվածի վերաբերյալ Ոստիկանությունից հայտնել էին, որ գործնականում անձանց բաժին բերելիս վերջիններիս համախոհները հաճախ ցանկություն են հայտնում գալ ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին՝ իրենց ընկերոջ կողքին գտնվելու համար: Նման երևույթի Ոստիկանությունը մոտենում է ըմբռնումով և, ելնելով իր որդեգրած սկզբունքներից, արգելք չի հանդիսանում: Ողջունելի է ՀՀ ոստիկանության կողմից իրենց աշխատանքի թափանցիկության ապահովմանն ուղղված քաղաքականությունը, որով բերման ենթարկված անձանց մտերիմներին չեն արգելում մուտք գործել Ոստիկանության բաժանմունք: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ միջազգային փորձում ընդունված է այն մոտեցումը, որ անկախ այն հանգամանքից անձը բերման է ենթարկվում, թե սեփական կամքով է այցելում ոստիկանության բաժանմունք, պետք է վերջինիս տվյալները արձանագրվեն: Նշվածը հետապնդում է նպատակ բացառելու հնարավոր այն դեպքերը, երբ բերված անձինք համապատասխան մատյաններում պաշտոնատար անձանց դիտավորությամբ ուշ են գրանցելու կամ առհասարակ չեն գրանցել:

Գրանցվել են մի շարք դեպքեր, օրինակ՝ հավաքների ընթացքում, երբ ոստիկանության աշխատակիցները, գտնվելով ծառայության, մեջ եղել են քաղաքացիական հագուստով: Այնինչ, ըստ օրենքի պահանջների՝ հասարակական կարգը պահպանելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են համազգեստ կրել, որպեսզի ճանաչելի լինեն անձանց համար: Ոստիկանությունից հայտնել էին, որ ոստիկանության ծառայողի

համազգեստ կրելու կարգը սահմանված է ՀՀ ոստիկանության պետի 07.08.2012թ. թիվ 11-Ն հրամանով: Համաձայն նշված հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելվածի 2-րդ կետի՝ ծառայության ընթացքում ոստիկանության ծառայողները շնորհված կոչմանը համապատասխան կրում են հաստատված նմուշի համազգեստ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտություն է առաջանում ծառայության ժամանակ կրելու քաղաքացիական հագուստ: Ոստիկանությունից հայտնել էին նաև, որ հավաքների իրականացման վայրերում հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերելու, հանցածին տարրեր, հանցագործություն կատարելու հակում ունեցող անձանց հայտնաբերելու, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով, համաձայն Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքի, Ոստիկանությունն իրականացնում է օպերատիվ հետախուզական միջոցառումներ, որի ընթացքում համապատասխան ծառայողները կրում են քաղաքացիական հագուստ: Այնինչ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Համանման կարգավորում է նախատեսված «Ոստիկանության գործերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով: Նման պահանջ է նաև սահմանված ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի կողմից հրատարակած «Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց»-ում, որտեղ նշվում է, որ իրավապահ մարմինների ներկայացուցիչները պետք է լինեն հստակորեն և անհատապես ճանաչելի: Համազգեստ կրող նշված անձինք պետք է համազգեստի վրա փակցնեն նույնականացնելու տարբերանշաններ, որոնք չպետք է թաքցվեն կամ հանվեն և պետք է հասանելի լինեն անձանց՝ հավաքի ժամանակ ընթերցելու համար: Տվյալ դեպքում, նշյալ միջազգային կառույցների ուղեցույցներում խոսքն, առհասարակ, գնում է համապատասխան կառույցների՝ խաղաղ հավաքների ընթացքում իրենց հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման գործառնություններն իրականացնելիս հասարակության համար ճանաչելի լինելու կարևորագույն սկզբունքի մասին: Ուստի գտնում ենք, որ Ոստիկանության որոշ աշխատակիցներ իրենց լիազորությունների իրականացման ժամանակ խախտել են օրենսդրական պահանջները :

Մի շարք դեպքերում Ոստիկանության ծառայողները անհարկի ձգձգել են քննչական գործողությունների իրականացումը, ինչպես օրինակ, առանց հիմքի երկարատև հարցաքննել են քաղաքացիներին: Հիմնականում անձանց բողոքները վերաբերել են հիմնավոր անհրաժեշտության բացակայության պարագայում՝ երկարատև հարցաքննություններ անցկացնելուն: Ոստիկանությունից այս խնդրի կապակցությամբ հայտնել են, որ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության կողմից կատարվել է 10 ծառայողական քննություն, որոնցով 6 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժի: Հարկավոր է հաշվի առնել, որ նույն խնդիրը առկա էր նաև 2012 թվականին, որը վկայում է խնդրի շարունակականության մասին: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ հարկավոր է համակարգային գործողություններ ձեռնարկել նման երևույթի պատճառը վերհանելու և այն վերացնելու համար:

Գրանցվել է 1399 դեպք, երբ Ոստիկանության աշխատակիցները խախտել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետը: 2013 թվականին գրանցվել է 16 բողոք, երբ հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված թվով 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու փոխարեն Ոստիկանության աշխատակիցների կողմից կազմվել է եզրակացություն և «կցվել է շարք», որի արդյունքում անձը զրկվել է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման», այլ ոչ թե «եզրակացության» բողոքարկման հիմքերն ու կարգը: Գրանցվել են նաև 1399 դեպքեր, երբ խախտվել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար սահմանված ժամկետները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի («Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը») համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Ոստիկանությունից հայտնել են, որ այդ 1399 դեպքերից 48-ը տեղի է ունեցել ոչ օբյեկտիվ պատճառների արդյունքում, իսկ մնացածը՝ օբյեկտիվ. օրինակ՝ ուշանում է կատարված հարցումների կամ նշանակված փորձաքննությունների պատասխանները: Ողջունելի է այն, որ Ոստիկանության կողմից այդ 48 դեպքերով Ոստիկանության ծառայողները ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ խիստ նախազգուշացվել են: Միաժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ նման քանակի խախտումների առկայությանը նպաստում է գործող Քրեական դատավարության օրենսգրքի ոչ ճկուն կարգավորումները, այնուամենայնիվ իրավական պետությունում նշվածը չի կարող ընդունվել որպես հիմնավորում, քանի որ արդյունքը գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգի խախտումն է: Նշված օբյեկտիվ պատճառները, ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի, չեն հանդիսանում հիմնավորում 10-օրյա ժամկետը խախտելու համար:

Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ազդանշանային լուսացույց է տեղադրվել ընդամենը մեկ խաչմերուկում, ինչի հետևանքով այդ մարդիկ զրկվել են ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից: 2013 թվականին Երևան քաղաքի միայն Տերյան-Հին Երևանցի փողոցների խաչմերուկում տեղադրվել է տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ազդանշանային լուսացույց: Պաշտպանին հասցեագրված բողոքների համաձայն՝ այդ ազդանշանային լուսացույցը հաճախ չի աշխատել: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը՝ հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ներգրավելը, դիտարկում է որպես պետության պոզիտիվ պարտականություն: Հարկավոր է հաշվի առնել, որ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար փողոցներում ազդանշանային լուսացույցներ տեղադրելը վերջիններիս ինքնուրույն տեղաշարժի համար հանդիսանում է անհրաժեշտություն:

2013 թվականի ընթացքում գրանցվել են դեպքեր, երբ ճանապարհային երթևեկության խախտումներն արձանագրող արագաչափ սարքավորումները տեղադրվել և գործել են առանց նախազգուշացնող ցուցանակների: Այսպես, Պաշտպանի աշխատակազմի կողմից

նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ Հանրապետության որոշ ճանապարհներին արագաչափ սարքավորումների առկայության մասին բացակայել են համապատասխան նախազգուշացնող ցուցանակներ և/կամ արագաչափ սարքավորումների փաստացի գործարկումից որոշ ժամանակ անց են միայն դրանք տեղադրվել: Այսպես, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ժ կետի համաձայն՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ ...ճանապարհային երթևեկության կանոնների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտումների նախականիսումը, հայտնաբերումը (ներառյալ՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով) և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների ձեռնարկումը»: Միաժամանակ, նույն օրենքի 1-ին հոդվածը ամրագրում է, որ նշյալ օրենքը «սահմանում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման իրավական հիմքերը, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման բնագավառի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև ճանապարհային երթևեկության մասնակիցների իրավունքները և պարտականությունները»: Այնինչ, սույն օրենքը արագաչափ սարքավորումների գործելու և դրա կազմակերպման վերաբերյալ որևէ կարգավորում չի նախատեսում, այդ թվում նաև՝ արագաչափ սարքավորումների առկայության մասին նախազգուշացնելու հստակ պարտավորություն: Նշենք, որ Ոստիկանության կողմից տեղադրվել են արագաչափ սարքավորումների առկայության մասին նախազգուշացնող ցուցանակներ, սակայն հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Այսինքն, նույնիսկ այն դեպքերում, երբ բացակայում են հստակ կարգավորումներ, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Պատահական չէ, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով՝ որպես գերակա նպատակ և քաղաքականության ուղղություն է դիտարկվում խախտումների կանխումը, այլ ոչ վարորդին ուղղակի պատժելը: Ավելին, մի շարք եվրոպական երկրների, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Նիդեռլանդները, Շվեդիան, փորձը ցույց է տալիս, որ արագաչափ սարքավորումների առկայության մասին նախազգուշացնելը բխում է պետության իրավախախտումների կանխարգելման, այլ ոչ անձանց պատժելու քաղաքականությունից: ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված է, որ անձինք պարտավոր են բոլոր դեպքերում պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները, որոնց խախտման դեպքում ենթակա են պատասխանատվության: Համապատասխան պատասխանատվության միջոցները նշված են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում: Միաժամանակ նույն օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանելով վարչական տույժի նպատակները, որպես նպատակ չի դիտարկում իրավախախտին պատժելը, այլ կարևորում

է վերականգնումը և կանխարգելումը: Ուստի գտնում ենք, որ արագաչափ սարքավորումների առկայության մասին համապատասխան զգուշացնող ցուցանակների բացակայությունը և/կամ արագաչափ սարքավորումների փաստացի գործարկումից որոշ ժամանակ անց տեղադրումը վկայում է պետության կողմից իրավախախտներին միայն պատժելու նպատակի մասին, ինչն ինքնին չի կարող իրավաչափ լինել:

2013 թվականի ընթացքում ստացվել են բազմաթիվ բողոքներ և արձանագրվել դեպքեր, երբ Ոստիկանության մի շարք ծառայողներ քաղաքացիների հետ հաղորդակցման ընթացքում չեն պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները՝ թույլ տալով կոպիտ խախտումներ, մասնավորապես՝ օգտագործելով անհարգալից, վիրավորական արտահայտություններ: Ավելին, զանգվածային լրատվամիջոցներում տարածում էր գտել մի տեսագրություն, որտեղ խաղաղ հավաքի ժամանակ ոստիկանության աշխատակիցն իր լիազորություններն իրականացնելիս թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում՝ սեռական բնույթի գործողություն կատարելով հավաքի մասնակցի նկատմամբ: Ի պատասխան նշվածի վերաբերյալ Պաշտպանի քննադատական հայտարարության՝ Ոստիկանությունն իր աշխատակցի կողմից հավաքի մասնակցի Շողիկ Մելքոնյանին համբուրելու կապակցությամբ նշել է, որ, «եվրոպական արժեքները որդեգրած որևէ պետություն համբույրը կամ առավել ևս, համբուրելու վերաբերյալ կասկածները սեռական գործողություններ չեն համարում»: Մինչդեռ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը, հիմք ընդունելով *Կանանց դեմ խտրականության* բոլոր ձևերի *վերացման* մասին կոնվենցիան (որի անդամ է նաև Հայաստանի Հանրապետությունը), իր թիվ 12 Ընդհանուր մեկնաբանությամբ բոլոր անդամ պետություններից պահանջել է միջոցներ ձեռնարկել վերացնելու կանանց նկատմամբ ցանկացած տեսակի բռնությունները, այդ թվում նաև սեռական բռնությունն ու ոտնձգությունները: Ավելին, աշխարհի գրեթե բոլոր, այդ թվում նաև «եվրոպական արժեքներ որդեգրած» պետությունների, մասնավորապես, վերոնշյալ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հիման վրա, ՄԱԿ-ի շրջանակներում մշակվել է «Կանանց դեմ բռնության օրենսդրության ձեռնարկ»: Նշյալ ձեռնարկում առանձնակի ուշադրություն է դարձվում «սեռական ոտնձգություն» իրավական կատեգորիային, որի քրեականացումը պետությունների ուղղակի պարտավորությունն է: Հատկանշական է, որ, ըստ ձեռնարկում ՄԱԿ-ի միջազգային փորձագետների կողմից հայտնած դիրքորոշման, «սեռական ոտնձգություն» եզրույթն իրենից ներկայացնում է անցանկալի սեռական բնույթի վարքագիծ, որը ներառում է (ուղղակիորեն կամ ենթադրաբար) ֆիզիկական վարք կամ առաջընթաց (advances); կամ ցանկացած այլ անցանկալի ֆիզիկական, բանավոր կամ ոչ բանավոր սեռական բնույթի վարքագիծ: Այսինքն, վերոգրյալի ներքո, անգամ անցանկալի համբույրը, իսկ տեսագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դա անցանկալի էր, ներառյալ եվրոպական արժեքներ որդեգրած պետությունում դիտարկվում է որպես սեռական ոտնձգություն, այն է՝ անցանկալի սեռական բնույթի վարքագիծ: Առավել ևս հարցն ավելի սուր է դրվում, երբ սեռական ոտնձգությունը կատարվում է Ոստիկանության աշխատակցի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում: Ոստիկանությունից Պաշտպանին հայտնել են, որ Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու 23 դեպքերով

անցկացվել են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում 24 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի, այդ թվում նրանցից 6-ն ազատվել են Ոստիկանությունում ծառայությունից: Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունների արդյունքում պարզ էր դարձել, որ Ոստիկանության ծառայողների կողմից անձանց, օրինակ, վիրավորական արտահայտություններ կատարելը պայմանավորված էր լինում նրանով, որ այդ անձինք էին առաջինը վիրավորում ծառայողներին: Սակայն պետք է հաշվի առնել, որ նույնիսկ, երբ քաղաքացիները վիրավորում են ոստիկանին՝ դրանով իսկ կատարելով իրավախախտում, ապա նման իրավիճակներում ոստիկանները պետք է ոչ թե հակադարձեն հայհոյանքներով և վիրավորանքներով, այլ այդ անձին՝ օրենքով սահմանված կարգով ենթարկեն պատասխանատվության: Ողջունելի են Ոստիկանության ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցներն այս խնդրի կապակցությամբ, սակայն նման դեպքերը լրջորեն վնասում են ՀՀ ոստիկանության նկատմամբ հանրության մեջ հարգանքի և վստահության ձևավորմանը: Գտնում ենք, որ անհրաժեշտ է օրինախախտ ծառայողներին պատասխանատվության ենթարկելուց բացի նախաձեռնել համակարգային միջոցառումների իրականացում, որոնք ուղղված կլինեն Ոստիկանության բոլոր ծառայողների էթիկայի կանոնների և մասնագիտական հմտությունների բարձրացմանը:

2013 թվականին գրանցվել են դեպքեր, երբ անձանց ազատության սահմանափակման պահից, ոստիկանության աշխատակիցների կողմից չեն պարզաբանվել անձանց որոշ իրավունքները: Անձանց ազատությունը սահմանափակելու պահից, (Վճռաբեկ դատարանի ԵԱԴԴ 0085/06/09) բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը), բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, (բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին, (գ) հրավիրելու իր փաստաբանին, (դ) լռելու: ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերման ենթարկված անձինք «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.06.2007թ. թիվ 818-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ պարտադիր պետք է ծանուցվեն որոշ իրավունքների մասին: Միաժամանակ առկա է նաև ՀՀ ոստիկանության պետի 17.09.2007թ. թիվ 3-Ն հրամանը, համաձայն որի ոստիկանության աշխատակիցների կողմից իրավունքների ծանուցումից հետո, կազմվում են համապատասխան արձանագրություններ: Նշվածից ենթադրվում է ոստիկանության աշխատակիցները անձանց ազատության սահմանափակման պահից պարտավորվում են, վերջիններիս պարզաբանել նշված իրավունքները: Ողջունելի է այն հանգամանքը, որ Ոստիկանության կողմից իրականացված համալիր-տեսչական ստուգումների ընթացքում հայտնաբերվել են հետաքննության մարմնի կողմից անձանց ազատությունների սահմանափակման պահից վերջիններիս սահմանված իրավունքների չպարզաբանման 4 դեպքեր: Միաժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ գործնականում նման դեպքերը ավելի հաճախ են հանդիպում: Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում, պարզվել է, որ անձանց իրենց մինիմալ իրավունքների մասին տեղեկացվելու իրավունքը հիմնականում

խախտվում է այն դեպքերում, երբ ինչ-ինչ պատճառներով անձի նկատմամբ ֆիզիկական ուժ է գործադրվում (օրինակ հավաքների ժամանակ) և հարկադրաբար տեղափոխվում է ոստիկանության ստորաբաժանում, չնայած այն հանգամանքին, որ տեղափոխման ընթացքում անձի ազատությունը փաստացի սահմանափակված է, սակայն ոստիկանության աշխատակիցները այդ պահից սկսած չէ, որ տեղեկացնում են անձանց իրենց իրավունքների մասին, ինչը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին :

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2013թ. ընթացքում գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 580 դեպք : Պաշտպանի աշխատակազմը պարբերաբար դիմում բողոքներ է ստանում ընտանեկան բռնության գոհ հանդիսացող կանանց կողմից, որոնք վերաբերում են ոստիկանության աշխատակիցների կողմից ոչ պատշաճ արձագանքին: Նման դրսևորումները հիմք են հանդիսանում, որպեսզի կանանց մոտ անվստահության մթնոլորտ ստեղծվի ոստիկանության նկատմամբ , այդ իսկ պատճառով էլ հաճախ կանայք իրենց նկատմամբ կիրառված բռնությունների մասին հրաժարվում են բարձրաձայնել: Ողջունելի է, որ Ոստիկանությունում ստեղծվել է անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն, ինչը վկայում է պետական մարմինների կողմց խնդրի կարևորման և դրա վերացմանն ուղղված պետական կամքի առկայության մասին, այնուամենայնիվ դեռևս խնդիր կա ոստիկանության ծառայողների ընտանեկան բռնության մասին մասնագիտական գիտելիքների բարձրացման, գոհի հետ աշխատելու հմտությունների, ընտանեկան բռնության դեպքերով մասնագիտացված աշխատակիցների նախատեսման հետ կապված և առհասարակ օրենսդրական հստակ կարգավորման: Միաժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ, օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով, շատ հաճախ Ոստիկանության աշխատակիցները չեն կարողանում պատշաճ արձագանքնել ընտանեկան բռնությանը վերաբերող դեպքերին, քանի որ դրանք չեն բավարարում քրեորեն հետապնդելի արարք հանդիսանալու և/կամ վարչական զանցանք հանդիսանալու պահանջներին (օրինակ ընտանեկան բռնության գոհի նկատմամբ եղել է մեկ հարված, որը չի հանդիսացել ծեծ կամ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը): Այդ իսկ պատճառով նման դեպքերը չեն կարող լինել Ոստիկանության վիճակագրության մեջ: Այսպես, ՀՀ Կառավարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 02/14.9/12124-12 հանձնարարականով նախատեսվել էր «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը: Նման օրենքի մշակումը բխում է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի /1995թ./ հանձնարարականների, Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջների, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի առաջարկությունների և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը: Բռնությունը համընդհանուր խնդիր է, որի դեմ պայքարը կարևորվում է աշխարհի առաջատար ուժերի, գրեթե բոլոր միջազգային կազմակերպությունների և ողջ հանրության կողմից: Միջազգային նորմերով բռնությունը գնահատվում է որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում և համարվում է անհանդուրժելի երևույթ քաղաքակիրթ հասարակության համար: 2000

թվականից ի վեր, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, բռնության կանխարգելման և զոհերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ են իրականացրել նաև հասարակական կազմակերպությունները: Երևանում, Մարտունիում, Գյումրիում, Եղեգնաձորում իրականացվել են բռնության զոհերի պաշտպանության ծրագրեր, գործել են թեժ գծեր, վստահության հեռախոսներ, ստեղծվել են ապաստարաններ, տրամադրվել են բժշկական, իրավաբանական և սոցիալական խորհրդատվություններ, աշխատել են ճգնաժամային կենտրոններ («Հույս», «Ընտանեկան կենտրոն», «Մոր և մանկան կենտրոն»), իրականացվել են տեղեկատվական, վերլուծական և կրթական ծրագրեր: Հանրապետությունում ընտանեկան բռնության տարածվածությունը գնահատելու նպատակով միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կատարվել են մի շարք ուսումնասիրություններ: Մասնավորապես, 2008-2009թթ. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունն իրականացրել է Հայաստանում կանանց հանդեպ ներընտանեկան բռնության վերաբերյալ համապետական առաջին հարցումը: Պաշտոնական վիճակագրությունը փաստում է, որ, «իրենց կյանքի ընթացքում երբևէ զուգրնկեր ունեցած հարցման ենթարկված կանանց 61.0%-ը ենթարկվել է վերահսկողական վարքի, 25.0%-ը ենթարկվել է հոգեբանական բռնության, 8.9%-ը ենթարկվել է ֆիզիկական բռնության, 3.3%-ը ենթարկվել է սեռական բռնության, իսկ 9.5%-ը ենթարկվել է ֆիզիկական և սեռական բռնության: Ստացված տվյալներն ապացուցում են, որ խնդիրը գոյություն ունի և պահանջում է հատուկ ուշադրություն: Անհրաժեշտ է նաև բարեփոխել ազգային օրենսդրությունը, քանի որ գործող իրավական ակտերով չի սահմանվում «ընտանեկան բռնությունը» և չեն կարգավորվում դրանից բխող հարաբերությունները: Համապատասխան Օրենքի նախագիծը պետք է կարգավորի ընտանեկան բռնության հետ կապված հարաբերությունները, սահմանի ընտանեկան բռնության հասկացությունը, ընտանեկան բռնության կանխարգելման բնագավառում լիազորություններ ունեցող մարմինները և այդ մարմինների ֆինանսավորման աղբյուրները, ընտանեկան բռնությունները կանխարգելելու հատուկ միջոցների տեսակները, դրանք ընդունելու և կիրառելու հիմքերը, հատուկ միջոցների կիրառման ժամանակ ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունը, ընտանեկան բռնություն կատարելու համար պատասխանատվությունը և այլն, քանի որ գործող օրենսդրությամբ այս հարաբերությունները կարգավորվում են ոչ լիարժեք և շատ դեպքերում բռնության կանխարգելումը դառնում է անհնար, որովհետև ոչ բոլոր արարքներն են իրենց մեջ ներառում ներկայիս օրենսդրությամբ սահմանված հակաիրավական տարրերը:

2013 թվականին ստացվել են բողոքներ այն մասին, որ Ոստիկանության բաժիններ բերման ենթարկված կամ ձերբակալված անձինք զրկվել են փաստաբան ունենալու իրավունքից: Ոստիկանության իրավասու պաշտոնատար անձինք չեն ապահովել բերման ենթարկվածի՝ փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, քանի դեռ բերման ենթարկված անձի վերաբերյալ չի կազմվել ձերբակալման արձանագրություն կամ չի կայացվել խափանման միջոց ընտրելու մասին որոշում: Այդ կերպ խախտվել է անձի՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքը: Նշված խնդրին անդրադարձել էին նաև միջազգային կազմակերպությունները

Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իրենց համապատասխան եզրակացություններում: Ավելին, նման պրակտիկան նաև ուղղակիորեն հակասում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ սահմանված կարգին: Նշված որոշմամբ դատարանը հստակ սահմանել է, որ բերման ենթարկված անձը ստանում է բերվածի կարգավիճակ և օգտվում առնվազն հետևյալ իրավունքներից. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին, գ) հրավիրելու իր փաստաբանին, դ) լռելու: Ոստիկանությունը սույն խնդրի կապակցությամբ հայտնել է, որ նման դեպքերի վերաբերյալ բողոքներ չի ստացել, այնինչ Պաշտպանին ուղղվել են դիմում-բողոքներ այն մասին, որ ոստիկանության համապատասխան աշխատակիցները անձանց ուղղորդել են հրաժարվելու պաշտպանից կամ, առհասարակ, չեն տրամադրել: Այս խնդրի լուծման համար հարկավոր է հրատապ միջոցներ ձեռնարկել գործնականում վերացնելու ձևավորված արատավոր պրակտիկան:

Ինչպես 2012, այնպես էլ 2013 թվականին շարունակվել են գրանցվել դեպքեր, երբ տարբեր հավաքների ժամանակ հավաքի մասնակիցների նկատմամբ համապատասխան մարմինների կողմից դրսևորվել են տարբերակված մոտեցումներ, օրինակ՝ հավաքի ժամանակ վրանի տեղադրման հարցում: Այսպես, Երևանի քաղաքապետարանի առջև նստացույցի միջոցով իրենց բողոքն արտահայտող մի խումբ քաղաքացիներ հրապարակայնորեն դիմել են Պաշտպանին և հայտնել, որ կիզիչ արևից պաշտպանության միջոցներ չթույլատրելու, լուսավորության անջատումների եղանակներով պարբերաբար հոգեբանական և ֆիզիկական ճնշումներ են գործադրվում իրենց նկատմամբ: Նստացույցի ողջ ընթացքում ստացվել են բազմաթիվ ահազանգեր, և Պաշտպանի ներկայացուցիչները տեղում արձանագրել են, որ նշվածի կապակցությամբ առանձին պնդումներ համապատասխանում են իրականությանը: Բացի նշվածից, 2013 թվականին արձանագրվել է նաև դեպք, երբ խաղաղ հավաքների մասնակիցներին Ոստիկանության կողմից արգելվել է գիշերային ժամերին և եղանակային վատ պայմանների դեպքում պատսպարվել վրանում: Ոստիկանության նման գործունեության հետևանքով, ըստ էության, ոչ միայն խախտվում է անձի՝ հավաքների ազատության իրավունքը, այլև միաժամանակ վտանգվում է հավաքի մասնակիցների առողջությունը և անվտանգությունը: Խաղաղ հավաքների ժամանակ առարկաների օգտագործման, տվյալ դեպքում՝ վրանի տեղադրման հետևանքով այլ անձանց սահմանադրական իրավունքների իրականացման (ազատ տեղաշարժման իրավունք, հանրային վայրերից օգտվելու իրավունք) հնարավոր սահմանափակման կամ կանաչապատ տարածքների վնասելու և այլ տարբեր պատճառաբանություններին ի պատասխան՝ բազմիցս նշել ենք, որ մարդու կյանքի և առողջության իրավունքները չպետք է ստորադասվեն այլ անձանց՝ իրավունքներին: Այսպես, հավաքներ անցկացնելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են այդ ոլորտի հատուկ օրենքով, այն է՝ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքում բացակայում է հավաք անցկացնելիս վրաններ կամ այլ ժամանակավոր կառույցներ տեղադրելու վերաբերյալ արգելքի մասին դրույթ: Ավելին, նախատեսվում է նաև խաղաղ բնույթ ունեցող հավաքներին ոստիկանության կողմից աջակցություն ցուցաբերելու պարտականության վերաբերյալ դրույթ: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը անդամ պետությունների համար հստակ սահմանել է այն պահանջը, որի համաձայն՝ հավաքների մասնակիցները նույնքան

իրավունք ունեն ողջամիտ ժամկետում օգտագործելու համապատասխան ընդհանուր օգտագործման տարածքները, որքան այլ անձինք՝ այլ առօրեական նպատակներով: Այս մոտեցումը հստակորեն ամրագրվել է Դատարանի մի քանի նախադեպային որոշումներում: Այսպես, Դատարանը նշել է, որ խաղաղ հավաքների ազատության իրավունքը պետք է ապահովվի և հանրային, և մասնավոր վայրում (Բարանկևիչն ընդ. Ռուսաստանի գործ): Հավաքները, երբեմն, կարող են «որոշ չափով խախտել առօրյա կյանքը», ինչը, սակայն, բավարար չէ այդ իրավունքը սահմանափակելու համար (Բալցիկն ընդ. Թուրքիայի գործ, (2007): Ընդ որում, հավաքների ժամանակ հանրային տարածքի օգտագործումը նույնքան իրավաչափ է, որքան նման տարածքը առևտրային գործունեության կամ տրանսպորտի կամ հետիոտնի երթևեկության համար օգտագործելը: Ցանկացած ցույց հասարակական վայրում կարող է որոշակի անհարմարություն պատճառել, այդ թվում հանգեցնել երթևեկության համար որոշ խոչընդոտների, սակայն եթե ցուցարարները բռնի գործողություններ չեն կատարում, ապա շատ կարևոր է, որ պետությունը խաղաղ հավաքների անցկացման նկատմամբ ցուցաբերի որոշակի աստիճանի հանդուրժողականություն, որպեսզի չիմաստազրկվի Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված հավաքների ազատության իրավունքը (Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2010թ.): Բալցիկն ընդդեմ Թուրքիայի գործ (2007): Աշուղյանն ընդդեմ Հայաստանի գործ (2008): Պետությունը պետք է ոչ միայն ապահովի խաղաղ հավաքների ազատության իրավունքը, այլև ձեռնպահ մնա նշված իրավունքի անուղղակի և անհիմն սահմանափակումներից (Ջավիտ Անն ընդ. Թուրքիայի գործ): Խաղաղ հավաքների ազատության իրավունքը ենթակա չէ սահմանափակման, քանի դեռ հավաքի մասնակիցները հավաքի ընթացքում չեն կատարել դատապարտելի արարքներ (Էզելինն ընդ. Ֆրանսիայի գործ): Հարկ է հավելել, որ Ոստիկանությունը խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրավաչափ միջամտության հնարավորությունը որոշելիս պետք է հաշվի առնի ստեղծված փաստացի իրավիճակը: Նշյալ իրավունքի իրականացման մերժումը՝ հաշվի չառնելով փաստացի իրավիճակը, հանգեցնում է մի կողմից խաղաղ հավաքների ազատության իրավունքից օգտվել ցանկացող անձանց և մյուս կողմից՝ այլ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման միջև անարդար հավասարակշռությանը: Բացառություն են կազմում այն ցույցերը և/կամ հավաքները, որոնք չեն կրում խաղաղ և հանդուրժողական բնույթ և արտահայտվում են բռնի գործողություններով, որոնց դեպքում միայն Ոստիկանության կողմից հավաքի անցկացմանը միջամտելը կլինի իրավաչափ: Ուստի տրամաբանական է, որ ՄԻԵԴ-ի վերոնշյալ հստակ դիրքորոշումների համատեքստում և պահանջների բավարարման դեպքում հավաքների, ցույցերի ընթացքում ոչ մշտական կառույցների և վրանների տեղադրման արգելումը պետության կողմից չի կարող իրավաչափ դիտարկվել: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից, կենդանի փաստաթուղթ է հանդիսանում և պետք է մեկնաբանվի «արդի օրվա պայմանների» լույսի ներքո՝ հասարակության զարգացմանը զուգընթաց: Ուստի հավաքներ անցկացնելու և դրանց ընթացքում առնվազն մեկ վրան տեղադրելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը

ոչ միայն հանդիսանում է ՀՀ օրենսդրության խախտում, այլ նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտում:

Առաջարկություններ

- Ձերբակալված կամ բերման ենթարկված անձանց նկատմամբ բռնություններն ու անմարդկային վերաբերմունքը կանխելու նպատակով բարձրացնել Ոստիկանության աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակն ու ուժեղացնել վերահսկողությունը Ոստիկանության բաժիններում, մասնավորապես՝ հարցաքննությունների ընթացքը մշտապես տեսաձայնագրող սարքեր տեղադրելու միջոցով:
- Իրականացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրեր ընդունված անձանց մոտ մարմնական վնասվածքների առկայության փաստերով:
- Հետագայում ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսված արարքների հատկանիշներ պարունակող դեպքերում, նախքան քրեական գործի հարուցումը մերժելը՝ իրականացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:
- Նախաձեռնել օրենսդրական փոփոխություն՝ անձանց Ոստիկանության բաժին «հրավիրվելու» դեպքերը, մասնավորապես՝ գործողության կամավոր բնույթը հստակեցնելու և անչափահասների հետ օպերատիվ հարցման առանձնահատկությունները սահմանելու համար:
- Պատշաճ պատասխանատվության միջոցներ կիրառել՝ բողոքի ակցիաների ընթացքում ոստիկանության այն աշխատակիցների նկատմամբ, որոնք կցուցաբերեն անհանդուրժողականություն ակցիայի մասնակիցների նկատմամբ:
- Կատարել պատշաճ ստուգումներ, օպերատիվ այլ միջոցառումներ ուղղված Նելսոն Ստեփանյանի անվան մանկական զբոսայգում (Կոմայգում) և այլ վայրերում պոռնկությամբ զբաղվելու դեպքերը բացահայտելու և կանխարգելելու ուղղությամբ:
- Բացառել գործնականում ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման դեպքերը հավաքների մասնակիցների նկատմամբ:
- Ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ոստիկանության աշխատակիցների կողմից բաժանմունք բերման ենթարկված կամ պարզապես Ոստիկանության շենք մուտք գործած անձանց հաշվառման մատյաններում ուշ գրանցելու կամ առհասարակ չգրանցելու դեպքերը վերացնելու նպատակով:
- Պատշաճ միջոցներ ձեռնարկել ոստիկանության ծառայողների հասարակական կարգը պահպանելիս համազգեստ կրելու պարտավորությունը կատարելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս ճանաչելի լինեն անձանց համար: Միաժամանակ հետևողական լինել օրենքի պահանջը չկատարած Ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու հարցում :
- Սպահովել ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ողջամիտ ժամկետներում քննչական գործողությունների իրականացումը, միաժամանակ, հաշվի առնելով խնդրի շարունակականությունը, խստացնել պատասխանատվության միջոցները:

- Հաշվի առնելով ներկայիս օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության սկզբունքի պահանջները՝ միջոցներ ձեռնարկել հանցագործության մասին քաղաքացիների հաղորդումները քննարկելիս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ներկայիս կարգը պահպանելու ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար փողոցներում ազդանշանային լուսացույցներ տեղադրելու ուղղությամբ:
- Հետևողական լինել ճանապարհային երթևեկության խախտումներն արձանագրող արագաչափ սարքավորումների վայրերում համապատասխան նախազգուշացնող ցուցանակներ տեղադրելու ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցառումներ և կազմակերպել համապատասխան սեմինար-դասընթացներ՝ Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերը վերացնելու համար, միաժամանակ՝ խստացնելով պատասխանատվության միջոցները:
- Հետևողական գտնվել ապահովելու համար Ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ հարգալից վարքագիծ դրսևորելու, ինչպես նաև պատասխանատվության համաչափ միջոցներ կիրառել նման վերաբերմունք չցուցաբերած աշխատակիցների նկատմամբ:
- Հաշվի առնելով համապատասխան Վճռաբեկ դատարանի և Կառավարության որոշման պահանջները՝ յուրաքանչյուր դեպքում Ոստիկանության աշխատակիցներին պարտավորեցնել պարզաբանել ազատությունը սահմանափակված անձանց իրենց իրավունքները:
- Ապահովել ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց դիմումների պատշաճ ուսումնասիրությունը: Օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ օրենքում առկա բացերի և թերացումների վերացման նպատակով:
- Ոստիկանության բաժիններում բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հատկապես՝ վերջիններիս ցանկության դեպքում, ապահովել փաստաբանով: Ցուցաբերել հետևողականություն փաստաբանով չապահովելու դեպքերի վերհանման և համապատասխան ծառայողներին պատասխանատվության ենթարկելու հարցում:
- Հետամուտ լինել խաղաղ բնույթ ունեցող հավաքներին Ոստիկանության կողմից աջակցություն ցուցաբերելու պարտականության պահպանմանը, այդ թվում նաև միջազգային փորձով հաստատված առնվազն մեկ վրանի իրավունքի ապահովմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունն ապահովում է անձի, հասարակության ու պետության անվտանգությունը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից և այլն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2013 թվականի ընթացքում ԱԱԾ-ի գործողությունների իրավաչափության և ենթադրյալ մարդու իրավունքների խախտման վերաբերյալ ինչպիսիք են, օրինակ, փաստաթղթեր վերցնելը, անձանց ազատ տեղաշարժը սահմանափակելը, որոշ տեղեկությունների տրամադրումը մերժելը ստացել է ընդամենը 7 դիմում-բողոք:

Ստացված ահազանգերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Ծառայության աշխատակիցները առանձին դեպքերում մարդկանց «հրավիրել» են ԱԱԾ: Նշված գործողությունն իրականացվել է հաշվի առնելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, որոնք վերաբերում են օպերատիվ հարցմանը: Այնինչ, նշված հոդվածը սահմանում է, որ օպերատիվ հարցումը՝ հարցումը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ, հավանաբար, այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով: Այսինքն՝ նշված դրույթը անձին համապատասխան բաժին հրավիրելու և այնտեղ գտնվելու գործընթացի և/կամ իրավաչափության վերաբերյալ որևէ կարգավորում չի նախատեսում: Օրենքի 15-րդ հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն բացառապես վերաբերում է իրավասու պետական մարմինների աշխատակիցների կողմից տեղեկությունների հավաքագրմանը, սակայն գործնականում այս դրույթի լայն և կամայական մեկնաբանության արդյունքում այն հիմք է ընդունվում անձանց բաժիններ հրավիրելու իրավաչափությունը հիմնավորելու համար: Օրենքի 15-րդ հոդվածին տրված մեկնաբանումը առաջացնում է մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման ռիսկ՝ չնախատեսելով հստակ սահմանափակումներ և/կամ հստակեցումներ օպերատիվ հարցումներ իրականացնելու կարգի, վայրի, ժամանակի և այլ նման հանգամանքների վերաբերյալ: Օպերատիվ հարցման կարգի վերաբերյալ կարգավորումների բացակայությունը հանգեցնում է նրան, որ անձինք չեն տեղեկացվում համապատասխան հարցման կամավորության և իրենց իրավունքների հատկապես՝ համապատասխան ստորաբաժանում չներկայանալու և յուրաքանչյուր պահին հրաժարվելու տեղեկություններ հայտնելուց: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ այս հարցի վերաբերյալ առկա է, առհասարակ, օրենքի բացի խնդիր: Նշենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ

արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Հետևաբար, նախքան նշված հարցին օրենսդրական լուծումներ տալը, ԱԱԾ-ն պետք է հետևողական լինի անձանց բաժին «հրավիրելու» գործողության կամավոր բնույթը պարզաբանելու ուղղությամբ:

Խնդրահարույց է նաև այն, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի որոշ կարգավորումների թերի և/կամ ոչ հստակ լինելու հետևանքով ԱԱԾ աշխատակիցների կողմից որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման, մասնավորապես՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գործընթացը առաջացնում է մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման ռիսկ: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և 14-րդ հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և, եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է: Վերոնշյալ օրենքում չի հստակեցվում, թե որոնք են այդ հիմնավոր ապացույցները, որոնց ներկայացման դեպքում միայն թույլատրվում է իրականացնել նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումները և ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում արդյո՞ք հավաքագրված ապացույցները հիմնավոր են, թե՛ ոչ: Վերոնշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումները պետք է լինեն խիստ կանոնակարգված, քանի որ հակառակ դեպքում կարող է առաջանալ անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման իրական ռիսկ: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում «հիմնավոր ապացույցներ» հասկացությունը օրենսդրորեն հստակեցնելու նպատակով:

Մեկ այլ խնդիր վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերի և փաստաթղթերի, այդ թվում նաև հեռախոսային ու այլ հաղորդումների գաղտնալսման արդյունքում ստացված նյութերի ոչնչացմանը: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-մասի համաձայն՝ իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը ենթակա են ոչնչացման անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց, կամ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Սակայն գործնականում չկան հստակ մեխանիզմներ պարզելու՝ արդյո՞ք եռամսյա ժամկետում այդ նյութերը ոչնչացվել են, թե՛ ոչ: Հետևաբար, խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է սահմանել հստակ մեխանիզմներ և

երաշխիքներ անձի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերի և փաստաթղթերի ոչնչացման փաստը պարզելու համար:

2013 թվականին ԱԱԾ-ն իր գործունեության ընթացքում շատ դեպքերում հանրությանը տեղեկացրել է իրենց կողմից քննվող, լայն արձագանք ստացած գործերի ընթացքի և/կամ արդյունքի վերաբերյալ: Հաշվի առնելով հասարակության կողմից տեղեկացված լինելու իրավունքը և դրա կարևորությունը՝ ողջունելի է նշված հարցի վերաբերյալ ԱԱԾ-ի կողմից որդեգրած քաղաքականությունը և անհրաժեշտ է հետևողական լինել ԱԱԾ մարմինների կողմից քննվող և հանրության մեջ լայն արձագանք գտած գործերի նախաքննության ընթացքի և միջանկյալ/վերջնական արդյունքների վերաբերյալ Քրեադատավարական օրենսդրության պահանջների շրջանակներում հանրությանը պարբերաբար տեղեկատվություն տրամադրելու գործում՝ այնքանով, որքանով դա չի վտանգի քրեական գործում ներգրավված անձանց իրավունքներն ու քննության շահերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հատուկ քննչական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի հետ կապված հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն և այլն:

2013 թվականին Ծառայության իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Պաշտոնյաների կողմից անձանց բռնության ենթարկելու 87 դեպքերից ընդամենը 2-ով Ծառայության կողմից հարուցվել է քրեական գործ, ինչը կարող է վկայել, որ գործերը քննվել են մակերեսորեն (օրինակ՝ չեն իրականացվել բոլոր հնարավոր քննչական գործողությունները՝ հարցաքննություններ, առերեսումներ և այլն):
- Արդեն 6 տարի է, ինչ շարունակվում է մարտի 1-ի 10 գոհերի վերաբերյալ նախաքննությունը: Չնայած, որ նշված հարցը մշտապես գտնվել է հանրության ուշադրության կենտրոնում և ստացել լայն հնչեղություն, Ծառայությունը 2013 թվականին հանրությանը չի ներկայացրել որևէ կարևոր տեղեկություն գործերի ընթացքի վերաբերյալ (ի տարբերություն 2012 թվականի):
- Ծառայությունը մի շարք դեպքերում չի ուսումնասիրել մամուլում՝ պաշտոնյաների կողմից անձանց բռնության ենթարկելու տեղեկությունները, մինչդեռ, օրենքով պարտավոր է դրանք ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում՝ քրեական գործ հարուցել:
- Բավարար քայլեր չեն ձեռնարկվել ընտրությունների ընթացքում քվեաթերթիկների լցումն և լրագրողի նկատմամբ բռնության դեպքը բացահայտելու ուղղությամբ, ինչի արդյունքում մեղավորները չեն հայտնաբերվել, իսկ քրեական գործը կասեցվել է:
- Ծառայությունն իր կողմից քննության առած գործերը ստիպված փոխանցել է այլ քննչական մարմիններին, որոնք օժտված չեն Ծառայության բացառիկ անկախությամբ: Չնայած Ծառայությունը մշակել է խնդրի լուծմանն ուղղված օրենքի նախագիծ, սակայն այն դեռևս չի ընդունվել: Արդյունքում՝ գործերի նման փոխանցումը էապես վնասել է դրանց արդար քննությանը:
- Բազմաթիվ դեպքերում ՀՔԾ քննիչները խախտել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10- օրյա ժամկետը:

Արձանագրված դրական զարգացումները

- 2013 թ. ընթացքում Ծառայության կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 48 գործ, որոնցից 35-ը եղել են պաշտոնատար անձանց կողմից կատարված քրեորեն հետապնդելի արարքների վերաբերյալ:
- Ծառայության նախաձեռնությամբ մշակվել և ներկայումս շրջանառության մեջ է դրվել ՀՀ օրենքների նախագծեր, որոնցով նախատեսվում է ընդլայնել հատուկ քննչական ծառայության ենթակայության գործերի շրջանակը և հնարավորություն ընձեռել ծառայության քննիչներին վարույթ ընդունել նաև այլ քննչական մարմիններին ենթակա գործեր:
- Ծառայությունը հիմնականում ապահովել է իր գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ինչով ապահովվել է իրենց գործունեության նկատմամբ հասարակության իրազեկվածությունը:

Ընդհանուր վերլուծություն

Պաշտոնյաների կողմից անձանց բռնության ենթարկելու 87 դեպքերից ընդամենը 2-ով Ծառայության կողմից հարուցվել է քրեական գործի հարուցումը, ինչը կարող է վկայել, որ գործերը քննվել են մակերեսորեն (օրինակ՝ չեն իրականացվել բոլոր հնարավոր քննչական գործողությունները՝ հարցաքննություններ, առերեսումներ և այլն): Նշված դեպքերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը պատճառաբանվել է կա՛մ հանցադեպի, կա՛մ հանցակազմի բացակայությամբ: Մակայն պարզ չէ՝ արդյոք առանց քրեական գործ հարուցելու Ծառայությունն իրականացրե՞լ է բոլոր անհրաժեշտ միջոցառումները: Պարզ չէ նաև՝ արդյոք այդ 85 դեպքերը բավարար խորությամբ են ուսումնասիրվել: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ուստի, այն դեպքերում, երբ նյութերի նախապատրաստման փուլում հնարավոր չէ պարզել գործի համար էական հանգամանքները, քրեական հետապնդում իրականացնող մարմինը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար պարտավոր է առկա նյութերով կայացնել քրեական գործ հարուցելու մասին որոշում, որի շրջանակներում օրենսդիրը քննչական գործողություններ իրականացնելու համար որևէ սահմանափակում չի նախատեսում՝ ի տարբերություն մինչ քրեական գործ հարուցելը: Հետևաբար՝ պարզ չէ այն մոտեցումը թե՛ ինչ նպատակ է հետապնդվում նման դեպքերի գերակայող մեծամասնության ժամանակ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելը: Ծառայության կողմից հայտնած տեղեկությունների ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ 2013 թվականին անձանց ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի առնչությամբ միայն 2 գործ է մեղադրական եզրակացությամբ

ուղարկվել դատարան: Նման ցուցանիշը այնքանով է մտահոգիչ, որ այն ոչ միայն չի համապատասխանում իրականում տիրող իրավիճակին, այլև նպաստում է նման արարքների գործող պաշտոնատար անձանց համար անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը:

Արդեն 6 տարի է, ինչ շարունակվում է մարտի 1-ի 10 գոհերի վերաբերյալ նախաքննությունը: Չնայած, որ նշված հարցը մշտապես գտնվել է հանրության ուշադրության կենտրոնում և ստացել լայն հնչեղություն, Ծառայությունը 2013 թվականին հանրությանը չի ներկայացրել որևէ կարևոր տեղեկություն գործերի ընթացքի վերաբերյալ (ի տարբերություն 2012 թվականի): Ծառայությունը պատճառաբանում է, որ նշված գործի շահերից ելնելով է, որ հանրությանը նշված հարցի վերաբերյալ այլ տեղեկություններ չեն տրամադրվում: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ այդ գործերով նախաքննությունը դեռևս չի ավարտվել և նույնիսկ գործերի նախաքննությունը չի կասեցվել: Մեր կողմից նախկինում (2011 և 2012 թվականների Տարեկան զեկույցներ) բարձրացվել էին 2008թ. մարտի 1-ի 10 գոհերի մահվան փաստով կատարվող նախաքննության վերաբերյալ մտահոգությունները: Մահացած անձանց ընտանիքների անդամներն ու հարազատներն այն համոզման են, որ Ծառայությունը բավարար արդյունավետությամբ չի կատարում իր գործառույթները: Նշված խնդրի առնչությամբ իր քննադատությունն էր հայտնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իր եզրակացությունում: Այդ եզրակացությամբ անդրադարձ է կատարվել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին և կարևորվել է այդ իրադարձությունների ժամանակ ուժի անհամաչափ կիրառման համար պատասխանատու իրավապահների և ղեկավարների հայտնաբերման և նրանց պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ միջոցառումների իրականացումը: Հարկավոր է հաշվի առնել, որ նման երկարատև նախաքննությունը կարող է հանգեցնել մահացած անձանց իրավահաջորդների իրավունքների խախտմանը: ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային որոշումներով հստակ սահմանվել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները մահվան ելքով գործերի դեպքում պարտավորվում են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն: Ողջամիտ ժամկետի առնչությամբ կարևոր է այն, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել կոնկրետ դեպքի առանձնահատուկ հանգամանքները, օբյեկտիվ պատճառները և այլն: Նախկինում Ծառայությունը հանրությանը ներկայացրել էր թե կոնկրետ ինչ զարգացումներ էին տեղի ունեցել նշված քրեական գործերի շրջանակներում: Միաժամանակ, շուրջ 6 տարի ընթացող նախաքննությունը դեռևս չի հիմնավորվել առանձնահատուկ հանգամանքների և օբյեկտիվ պատճառների առկայությամբ, սակայն նույնիսկ, եթե ենթադրենք, որ առկա են նման հանգամանքներ, ապա դրանք չեն ներկայացվել շահագրգիռ կողմերին և/կամ հանրությանը: Ավելին, 2013 թվականին Ծառայությունը հանրությանը չի ներկայացրել թե ինչ նոր զարգացումներ են տեղի ունեցել նշված քրեական գործերով: Հարկավոր է հաշվի առնել, որ 2008թ. մարտի 1-ի 10 մահվան դեպքերի հնարավոր կանխարգելումը և սոցիալական արդարության վերականգնումը կարող է տեղի ունենալ միայն համապատասխան պատասխանատու անձանց հայտնաբերելու և օրենքով սահմանված պատժի նպատակները բավարարելու միջոցով:

Ծառայությունը մի շարք դեպքերում չի ուսումնասիրել մամուլում՝ պաշտոնյաների կողմից անձանց բռնության ենթարկելու տեղեկությունները, մինչդեռ, օրենքով պարտավոր է դրանք ուսումնասիրել և, անհրաժեշտության դեպքում, քրեական գործ հարուցել: Ծառայությունը նշվածի վերաբերյալ հայտնել է, որ որպես քրեական գործ հարուցելու առիթ հանդիսացել են մամուլում տեղ գտած հրապարակումները՝ խոշտանգումների և այլ դաժան, անարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների այլ խախտումների վերաբերյալ, սակայն, քանի որ Ծառայությունում քրեական գործերի հարուցման առիթների առանձին հաշվառում չի տարվում՝ առավել մանրամասն տեղեկություններ վերջիններս չեն կարողացել տրամադրել: Այնուամենայնիվ, փաստաբանների և իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքներով հայտնած տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գրանցվել են դեպքեր, երբ Ծառայությունը որևէ միջոց չի ձեռնարկել խոշտանգումների և այլ դաժան, անարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների այլ խախտումների վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակման կապակցությամբ: Այսպես, օրինակ մի շարք լրատվամիջոցների կողմից հրապարակվել էր Վարդան Պետրոսյանի փաստաբան՝ Նիկոլայ Բաղդասարյանի բարձրացված գործով քննիչի կողմից կատարված հետևյալ խնդրահարույց գործողությունները՝ որպես կասկածյալ հարցաքննության ժամանակ Վարդան Պետրոսյանի ցուցմունքի չարձանագրվելը, փորձագիտական եզրակացությունները Վարդան Պետրոսյանին չձանթագնելը, թեև վերջինս պահանջել է իրեն ձանթագնել եզրակացություններին, քննչական և դատավարական գործողությունների (հարցաքննություն և որպես մեղադրյալ ներգրավում) առանց փաստաբանի մասնակցության կատարվելը, մինչդեռ կալանավորումը, որպես խափանման միջոց կիրառելու քննիչի միջնորդության որոշման մեջ նշվել է, թե Վարդան Պետրոսյանը հրաժարվել է ցուցմունք տալ և ստանալ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը: Ըստ նշված տեղեկությունների՝ քննիչը իրեն թույլ է տվել մեղադրյալի նկատմամբ կատարել վիրավորական արտահայտություններ, որոնք կարող են վիրավորել անձի արժանապատվությունը, ինչն էլ իր հերթին հանդիսանում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված քաղաքացու իրավունքների խախտում: Այսինքն, տվյալ դեպքում, քննիչի նշված գործողություններում առկա է առերևույթ պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմի տարրերից հանցագործության օբյեկտիվ կողմը, այն է՝ իր լիազորությունների մեջ չնախատեսված, ինչպես նաև ծառայողական անհրաժեշտությամբ չնախատեսված արարք կատարելը, որը ոտնձգել է օբյեկտին՝ Վ. Պետրոսյանի իրավունքներին ու ազատություններին: Սուբյեկտը վարույթ իրականացնող քննիչն է, որը դասվում է հատուկ սուբյեկտների թվին: Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված վերլուծությունը թույլ էր տվել եզրակացնել, որ քննիչի գործողություններում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հանցակազմի տարրերն այնքանով, որքանով քրեական իրավունքի տեսությունը հնարավորություն է տալիս հանգելու նման եզրակացության, բայց, այդուհանդերձ, նրա արարքների վերջնական գնահատական կարող է տալ միայն համապատասխան մարմինը և միայն համապատասխան գործողություններ

կատարելուց հետո: Հարկավոր է հաշվի առնել, որ նշված դեպքով որևէ միջոց Ծառայության կողմից չէր ձեռնարկվել: Պաշտպանի գրության հիման վրա Ծառայության կողմից նշված դեպքի կապակցությամբ նյութեր նախապատրաստվեցին և հետագայում դրանց հիման վրա կայացվեց քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

Բավարար քայլեր չեն ձեռնարկվել ընտրությունների ընթացքում քվեաթերթիկների լցուման և լրագրողի նկատմամբ բռնության դեպքը բացահայտելու ուղղությամբ, ինչի արդյունքում՝ մեղավորները չեն հայտնաբերվել, իսկ քրեական գործը կասեցվել է: ՀՀ Նախագահի ընտրությունների ընթացքում արձանագրված քվեաթերթիկների լցուման և լրագրողի նկատմամբ բռնության դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է հնարավոր մեղավորներին չհայտնաբերելու պատճառաբանությամբ: 2013թ. Փետրվարի 18-ին ՀՀ նախագահի ընտրությունների ընթացքում Արտաշատի թիվ 17/5 ընտրական տեղամասում քվեաթերթիկների լցուման փաստի առթիվ ՀՔԾ-ի կողմից հարուցվել էր քրեական գործ: Հարկավոր է նշել, որ նշված ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները ՀՀ Սահմանադրական դատարանը գտել էր, որ չէին կարող համարվել հավաստի և դրանք ճանաչել էր անվավեր: Նշված քրեական գործով որպես վկա անցնող Նարինե Իսմայիլին հայտարարել էր, որ իր նկատմամբ Ծառայությունում ճնշումներ են գործադրվել, սահմանափակվել են իր իրավունքները: Այդ տեղեկությունները հերքվել էին Ծառայության կողմից: Միաժամանակ, խնդրո առարկա քրեական գործի ընթացքի վերաբերյալ Ծառայությունից Պաշտպանին հայտնել են, որ Արտաշատի թիվ 17/5 ընտրական տեղամասում քվեաթերթիկի լցուման և ընտրությանը մասնակցող զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու պատճառաբանությամբ: Նշվածից կարելի է ենթադրել, որ չնայած այն հանգամանքին, որ գործի շրջանակներում ձեռնարկվել են քննչական գործողություններ, կան վկաներ, սակայն բավարար և/կամ օպերատիվ չեն գործել համապատասխան պաշտոնատար անձինք՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձին հայտնաբերելու ուղղությամբ:

Ծառայությունն իր կողմից քննության առած գործերը ստիպված փոխանցել է այլ քննչական մարմիններին, որոնք օժտված չեն Ծառայության բացառիկ անկախությամբ: Չնայած Ծառայությունը մշակել է խնդրի լուծմանն ուղղված օրենքի նախագիծ, սակայն այն դեռևս չի ընդունվել: Արդյունքում՝ գործերի նման փոխանցումը էապես վնասել է դրանց արդար քննությանը: 2013 թվականի ընթացքում Ծառայությունը քննել է 102 քրեական գործ՝ ստացված այլ քննչական մարմիններից: Սակայն այդ գործերից 49-ը ուղարկվել է ՀՀ ոստիկանության, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և ՀՀ ՊՆ-ի քննչական մարմիններին: ՀՀ օրենսդրությամբ երաշխավորվել է Ծառայության անկախությունը և որևէ գերատեսչության ենթակայության տակ չգտնվելը, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված հատուկ սուբյեկտների մասնակցությամբ քրեական գործերը: Նման անկախությամբ օժտված չեն այլ գերատեսչությունների համապատասխան նախաքննություն իրականացնող մարմինները, ուստի Ծառայության կողմից ուսումնասիրված դեպքերի հետագա փոխանցումը այլ մարմիններ ոչ միշտ է

ապահովվում այդ գործերի բազմակողմանի, օբյեկտիվ, լրիվ ուսումնասիրությունը: Դեռևս 2012 թվականին Պաշտպանն իր տարեկան գեկույցում ներկայացրել էր այն դիրքորոշումը, որ հարկավոր է օրենսդրորեն ամրագրել, որ Ծառայության կողմից ուսումնասիրված գործերը ավարտվեն վերջիններիս կողմից, ինչպես նաև հարկավոր է լայնացնել Ծառայության ենթակայության տակ գտնվող գործերի շրջանակը և հնարավորություն տրամադրել վերջիններիս, ըստ անհրաժեշտության, վարույթ ընդունել նաև այլ քննչական մարմիններին ենթակա գործերը: Նշվածի համատեքստում հատկապես ողջունելի է այն, որ Ծառայության նախաձեռնությամբ ծառայությունում մշակվել և ներկայումս շրջանառության մեջ է դրվել «Հատուկ քննչական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով նախատեսվում է ընդլայնել Ծառայության ենթակայության գործերի շրջանակը և հնարավորություն ընձեռել Ծառայության քննիչներին ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ վարույթ ընդունել նաև այլ քննչական մարմիններին ենթակա գործեր՝ այդ քրեական գործերով առավել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ նախաքննություն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ, նախքան նշված նախագծերի վերջնական ընդունումը, նկարագրված խնդիրը մնում է չլուծված :

Բազմաթիվ դեպքերում ՀՔԾ քննիչները խախտել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետը: Խնդրին ի պատասխան՝ քրեական գործերի քննարկման կարգի՝ օրենքով սահմանված ժամկետների երկարաձգումը հիմնավորելու նպատակով Ծառայությունը ներկայացրել է այն դիրքորոշումը, որ այդ ժամկետների խախտումներ եղել են, սակայն բոլոր դեպքերում դրանք չեն հանգեցրել մարդու իրավունքների խախտմանը, քանզի հատկապես վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների կապակցությամբ նախապատրաստվող նյութերով վարույթն իրականացնող մարմինը ձգտել է առաջին հերթին ապահովել պատշաճ և արդյունավետ քննություն կատարելու իր պարտականությունը, բացի այդ, մշտապես պահպանվել են նշված ժամկետների խախտմամբ ընդունված որոշումների վիճարկման օրենսդրական երաշխիքները, ինչպես նաև ժամկետի խախտումը պայմանավորված է եղել փորձաքննության արդյունքների ուշացմամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի («Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը») համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Հարկավոր է հաշվի առնել, որ խախտումների առկայությանը նպաստում է գործող Քրեական դատավարության օրենսգրքի ոչ ճկուն կարգավորումները, այնուամենայնիվ, իրավական պետությունում նշվածը չի կարող ընդունվել որպես հիմնավորում, քանի որ արդյունքը գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգի խախտումն է: Նշված օբյեկտիվ պատճառներ, ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի, չեն հանդիսանում հիմնավորում 10-օրյա ժամկետը խախտելու համար: Ավելին, ժամկետների չպահպանումը չի ապահովում անձի սահմանադրորեն ամրագրված իրավական երաշխիքները և ակնկալիքները, ինչն ինքնին օրինախախտում է: Այդ տրամաբանությունից

ելնելով՝ անհասկանալի է, թե ինչու Ծառայությունը չի սկսել այդ գործերի վերաբերյալ քննությունը օրինախախտներին պատասխանատվության ենթարկելու նպատակով: Ծառայությունից հայտնել են նաև, որ այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումները հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար տվյալների առկայության մասին տեղեկություն չեն պարունակել, այդպիսիք, համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 նախադեպային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ չեն դիտարկվել, այլ դրանք քննարկվել և դրանց ընթացքը լուծվել է Հատուկ քննչական ծառայության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին և ՀՀ հատուկ քննչական ծառայությունում դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման, անձանց ընդունելության և գործավարության կարգին համապատասխան: Հարկավոր է նշել, որ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ ներկայացվել է այն մոտեցումը, որ քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին և միայն այդ դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար: Սակայն այդ մոտեցումից ենթադրվում է, որ պետք է ստուգվի՝ արդյոք Ծառայությանը հայտնած տեղեկությունները պարունակել են որևէ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալներ, թե՛ ոչ, այսինքն՝ դրա ապացուցման պարտավորությունը կրում է Ծառայությունը: Պաշտպանին հասցեագրված բողոքներում հայտնել էին, որ Ծառայությունը ոչ բոլոր դեպքերում է հիմնավորել թե՛ ինչ պատճառաբանությամբ է, որ չի կայացվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված թվով 3 որոշումներից որևէ մեկը:

Առաջարկություններ

- Պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումների և/կամ դեպքերի կապակցությամբ պատշաճ կերպով հարուցել քրեական գործեր և իրականացնել առավել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ նախաքննություն, որից հետո միայն կայացնել գործի վերաբերյալ վերջնական որոշում:
- Արդյունավետ միջոցներ ձեռնարկել հնարավորինս սեղմ ժամկետներում մարտի 1-ի 10 գոհերի մահվան փաստով նախաքննությունն ավարտելու և համապատասխան որոշում ընդունելու ուղղությամբ, ինչպես նաև հանրությանը պատշաճ իրազեկելու գործի ընթացքի վերաբերյալ:
- Բոլոր դեպքերում պատշաճ ուսումնասիրել մամուլում առկա պաշտոնատար անձանց կողմից դաժան վերաբերմունքի դեպքերի մասին տեղեկությունները:
- Հետևողական լինել ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների բացահայտման նկատմամբ, մասնավորապես՝ իրականացնել քննչական գործողությունները անհապաղ, հետագայում մեղավորներին առհասարակ չհայտնաբերելու դեպքերը կանխելու նպատակով:

- Հետևողական լինել Ծառայության նախաձեռնությամբ մշակված և ներկայումս շրջանառության մեջ դրված ՀՀ օրենքների նախագծերի ընդունման գործընթացին, որոնցով նախատեսվում է ընդլայնել հատուկ քննչական ծառայության ենթակայության գործերի շրջանակը, և հնարավորություն ընձեռել ծառայության քննիչներին վարույթ ընդունել նաև այլ քննչական մարմիններին ենթակա գործեր:
- Հաշվի առնելով ներկային օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության սկզբունքի պահանջները՝ պատշաճ հսկողություն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգի պահպանման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը (այսուհետ՝ Դատախազություն) իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ և այլն:

2013 թվականին ՀՀ դատախազության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Ոստիկանության բաժիններում արձանագրված բռնության 363 դեպքերից ընդամենը 12 դեպքերով են հարուցվել քրեական գործեր, ինչը վկայում է, որ Դատախազության ոչ բարեխիղճ հսկողության արդյունքում բռնության դեպքերը քննվել են մակերեսորեն: Այսինքն՝ չեն իրականացվել բոլոր հնարավոր քննչական գործողությունները (հարցաքննություններ, առերեսումներ և այլն):
- Նախաքննական մարմինները հաճախ կասկածյալին քննությանը ներգրավել են նախ որպես վկա, քանի որ վկան պարտավոր է տրամադրել իրեն հայտնի բոլոր տեղեկությունները, այնուհետև նույն գործով նույն վկային ներգրավում են որպես կասկածյալ կամ մեղադրյալ՝ իր դեմ օգտագործելով իր իսկ հայտնած տեղեկությունները: Այսինքն, Դատախազության թողտվությամբ շրջանցվել է օրենքի այն պահանջը, ըստ որի չի կարելի մարդուն ստիպել իր դեմ ցուցմունք տալ:
- Խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց քրեական գործերը շարունակվել են մնալ չբացահայտված կամ չավարտված, քանի որ Դատախազությունը չի ապահովել այդ գործերով անհրաժեշտ հարցաքննություններ, առերեսումներ և այլ քննչական գործողություններ:
- Խափանման միջոց ընտրելիս Դատախազությունը մշտապես նախապատվությունը տվել է կալանավորմանը, չնայած օրենսդրությամբ առկա են նաև այլ խափանման միջոցներ, ինչպես գրավը, չեռանալու մասին ստորագրությունը, անձնական երաշխավորությունը և այլն: Կալանավորման նման համատարած կիրառումը շատ դեպքերում ոչ միայն անհարկի սահմանափակել է անձի ազատությունը, այլև նպաստել է քրեակատարողական հիմնարկների գերձանրաբեռնվածությանը:
- Հատուկ քննչական ծառայությանը ենթակա գործերը Դատախազության կողմից հաճախ փոխանցվել են այլ քննչական մարմինների, որոնք չունեն այդ ծառայության անկախությունը և չեն կարող ապահովել այդ գործերի արդար քննությունը: Այսինքն, Դատախազությունը ողջամտորեն չի օգտագործել իրեն օրենքով տրված հայեցողությունը:

- Չնայած Դատախազությունը պարտավոր է ապահովել կալանավորված անձի խնամքի տակ գտնվող անչափահասների և անաշխատունակ անձանց գոյատևման միջոցները, այդ պարտավորությունը հիմնականում չի իրականացվել:
- Դատախազությունը մի շարք դեպքերում համապատասխան հսկողություն չի սահմանել քննիչների և հետաքննիչների գործողությունների նկատմամբ, ինչի արդյունքում տուժողին չի տրամադրվել քրեական գործը կասեցնելու մասին որոշումը, չի պահպանվել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը: Արդյունքում խախտվել են օրենքի պահանջները, և անձինք զրկվել են իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանությունից:
- Օրենսդրական ակնհայտ բացի պատճառով առանձին դեպքերում մարդուն մեղադրանք առաջադրելիս դատախազը և քննիչը ունենում են հակադիր դիրքորոշումներ: Դատախազի և քննիչի հակադրության արդյունքում մեղադրանքի մասին որոշումը հաճախակի փոփոխվել է և մի շարք մարդիկ ամիսներ շարունակ հայտնվել են անորոշ վիճակում՝ այդպես էլ չիմանալով, թե արդյոք իրենք մեղադրվում են ինչ որ հանցագործության մեջ, թե ոչ:

Ընդհանուր վերլուծություն

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ հսկողության իրականացման թերությունների և բացթողումների արդյունքում ՔԿՀ-ներում և ՀՀ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերում գտնվող ազատազրկվածների մոտ արձանագրված մարմնական վնասվածքների փաստերով Դատախազությունը չի իրականացրել պատշաճ հսկողություն: Ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրեր ընդունված անձանց մոտ մարմնական վնասվածքների առկայության փաստով բազմաթիվ դեպքերում կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ: Համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: ՀՀ կառավարության 05.06.2008թ. որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում՝ գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի համաձայն՝ ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի: ՀՀ ոստիկանությունից Պաշտպանին հայտնել են, որ ՁՊՎ-ներում 2013 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրեր տեղափոխած անձանցից 363-ի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ և դրանց վերաբերյալ իրազեկումներ են ներկայացվել վարույթն իրականացնող մարմիններին՝ համապատասխան ընթացքը որոշելու համար: Հայտնաբերված դեպքերից Ծառայության կողմից 7-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Արձանագրված 363 դեպքերից 351-ի կապակցությամբ կայացվել է

քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ: Նշվածից կարելի է ենթադրել, որ չեն իրականացվել անհրաժեշտ դատավարական գործողություններ և/կամ այդ դեպքերը բավարար խորությամբ և արագությամբ չեն ուսումնասիրվել, հատկապես հաշվի առնելով այն, որ քրեական գործ հարուցելու մերժումների հիմնական հիմնավորում է հանդիսացել ձերբակալված և կալանավորված անձանց պնդումները, որ վերջիններս ստացել են վնասվածքները մինչև արգելանքի վերցվելը կամ արգելանքի վերցնելու ժամանակ սայթաքելու կամ ընկնելու հետևանքով: Նման դեպքերում պաշտոնատար անձինք չպետք է բավարարվեն արգելանքի վերցված անձանց տեղեկություններով, այլ պետք է գիտակցեն, որ ապացուցման պարտավորությունը կրում են իրենք: 2013 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ մարմնական վնասվածքներով ընդունված անձանց 257 դեպք է գրանցվել: ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության՝ 26.05.2008 թվականի թիվ 17/4-253 գրության և Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի՝ 04.06.2008 թվականի թիվ 40/8-1768 հանձնարարականների համաձայն՝ մարմնական վնասվածքներով քրեակատարողական հիմնարկներ ընդունված բոլոր անձանց դեպքերով գրություններ են ուղարկվում և տեղեկացվում են վարույթն իրականացնող մարմինները և Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ուստի, այն դեպքերում, երբ նյութերի նախապատրաստման փուլում հնարավոր չէ պարզել գործի բոլոր անհրաժեշտ հանգամանքները, քրեական հետապնդում իրականացնող մարմինը՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար պարտավոր է առկա նյութերով կայացնել քրեական գործ հարուցելու մասին որոշում, որի շրջանակներում օրենսդիրը քննչական գործողություններ իրականացնելու համար որևէ սահմանափակում չի նախատեսում՝ ի տարբերություն մինչ քրեական գործ հարուցելը: Վերը նկարագրվածը հանգեցնում է քաղաքացիների իրավունքների և շահերի, մասնավորապես՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումների, ինչպես նաև չի նպաստում խոշտանգումների, դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորման կանխարգելմանը: Դատախազությունը, հանդիսանալով պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին, արդյունավետ չի միջամտել ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում բռնությունների և խոշտանգումների հնարավոր դրսևորումների օրենսդրությամբ սահմանված կարգով արձագանքելու գործընթացին, չնայած այն հանգամանքին, որ դրա համար նախատեսված գործընթացը Դատախազության համակարգում խիստ կանոնակարգված է:

Ուսումնասիրվել են բողոքներ, երբ անձը, գործով որպես վկա ներգրավվելուց կարճ ժամանակ անց նույն գործով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, հիմք ընդունելով վերջինիս, որպես վկա հայտնած տեղեկությունները: Կասկածյալի և մեղադրյալի հիմնարար իրավունքներից է լռելու և ինքն իր դեմ վկայություն չտալու իրավունքը, որը թեև Կոնվենցիայում հստակ ամրագրված չէ, այնուամենայնիվ, հետևողականորեն ճանաչված է Եվրոպական դատարանի վճիռներում, որպես համընդհանուր ճանաչված միջազգային նորմ, որը ընկած է 6-րդ հոդվածում նշված արդարացի դատավարության հասկացության հիմքում: Դատարանը կասկածյալի և մեղադրյալի լռելու իրավունքը տարածել է նաև վկաների վրա: Համաձայն օրենսդրության՝ վկան կրում է ցուցմունքներ տալու պարտավորություն, սակայն եթե անձը, որպես վկա հարկադրման կամ այլ մեթոդների կիրառման արդյունքում տալիս է ցուցմունք, իսկ հետագայում ներգրավվում է որպես մեղադրյալ և վկայի կարգավիճակում տրված ցուցմունքներն օգտագործվում են նրա մեղավորությունը հիմնավորելու համար, ապա դա համարվում է լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի, ինչպես նաև անմեղության կանխավարկածի խախտում: Բոլոր այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել անձի լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտմամբ, չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում և օգտագործվել որպես ապացույց՝ անձի մեղավորությունը հաստատելու համար: Այս դիրքորոշումը հստակ ձևակերպված է Սանդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության, Սերվեսն ընդդեմ Ֆրանսիայի և այլ գործերով ՄԻԵԴ վճիռներում: ՄԻԵԴ-ի դիրքորոշումն է, որ լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը պետք է ուղղված լինի նրան, որ «անձը չվերածվի իր իսկ դատապարտման գենքի»: ՄԻԵԴ նախադեպային իրավունքն էլնում է այն սկզբունքից, որ նույնիսկ այն դեպքում, երբ անձը (օրինակ՝ վկան) կամովին է հայտնել իրեն հայտնի տեղեկությունները, այդ թվում նաև իր դեմ, ապացույցներ համարվել չեն կարող, եթե դրանք տված անձն ինքն իրեն մերկացրել է հանցագործության կատարման մեջ: Հարկավոր է նշված մոտեցումը որդեգրել նաև ներպետական պրակտիկայում և բացառել այն դեպքերը, երբ ապացույցները, որոնք ձեռք էին բերվել անձի լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտմամբ դրվեն մեղադրանքի հիմքում և/կամ օգտագործվեն որպես անձի մեղավորությունը հաստատելու ապացույց:

Խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց քրեական գործերը շարունակվել են մնալ չբացահայտված կամ չավարտված, քանի որ Դատախազությունը չի ապահովել այդ գործերով անհրաժեշտ հարցաքննություններ, առերեսումներ և այլ քննչական գործողություններ: Հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ զինվորական դատախազության կողմից իրականացվել են որոշակի միջոցառումներ՝ զինված ուժերում մահվան դեպքերը պարզելու, մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Սակայն, չնայած ձեռնարկված որոշ միջոցների, այնուամենայնիվ, ընթացիկ տարում շարունակվել են ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում զոհված կամ սպանված զինծառայողների ծնողների և մտերիմների դժգոհությունները, որոնք վերաբերել են ՀՀ զինվորական դատախազության ոչ պատշաճ հսկողության արդյունքում նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության իրականացմանը, ողջամիտ ժամկետների չպահպանմանը, անհրաժեշտ քննչական գործողությունների, օրինակ՝ առերեսումների, հարցաքննությունների

չիրականացմանը: Նման դեպքերից մեկի վերաբերյալ Պաշտպանի կողմից իրականացվել էր մանրամասն ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել էր, որ նախկին զինծառայող Ժ.Մ.-ին, ապօրինի կերպով մարտական հերթապահության ուղարկած պաշտոնատար անձանց արարքներին համապատասխան քրեաիրավական գնահատական չէր տրվել: Հարկ է նշել, որ նշված գործով քրեական գործը հարուցվել է 2011 թվականին, սակայն այն հանգուցալուծում էր ստացել միայն 2013 թվականին, ինչը կարող է վկայել այն մասին, որ գործի էլքով շահագրգռված պաշտոնատար անձինք, պատշաճ ջանասիրություն չեն ցուցաբերել ողջամիտ ժամկետներում գործն ավարտելու համար, որը հանդիսանում է վերջիններիս պարտավորությունը:

ՀՀ զինվորական դատախազության նախաձեռնությամբ 2013 թվականի հուլիսին ստեղծվել էր աշխատանքային խումբ, որը պետք է իրականացներ ՀՀ զինված ուժերում արձանագրված մահվան էլքով քրեական գործերի ուսումնասիրություն և ներկայացներ իր գնահատականը: Փաստացի աշխատանքային խումբը ստեղծված էր ուսումնասիրելու այդ դեպքերի կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությունը: Սակայն, աշխատանքային խումբը պետք է ուսումնասիրեր միայն 2011 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում հարուցված քրեական գործերը, ինչը լուրջ դժգոհությունների տեղիք էր տվել մինչ այդ նշված ժամանակահատվածը սպանված կամ զոհված զինծառայողների ազգականների մոտ: Փաստորեն, այն քրեական գործերը, որոնցով ամփոփիչ որոշումները կայացվել են մինչև 2011թ. հունվարի 1-ը չեն հանդիսանում աշխատանքային խմբի ուսումնասիրության առարկա, սակայն նման ծանր դեպքերը նույնպես պետք է բավարար ուշադրության արժանանան Դատախազության կողմից, քանզի գործերի ուսումնասիրման նման սահմանափակումը ինքնին պարունակում է տարբերակված մոտեցման հատկանիշներ: Այստեղ նաև պարզ չէ, թե ինչպիսի հանգամանքներ են հաշվի առնվել ժամանակային նման սահմանափակում նախատեսելու համար: ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային որոշումներով հստակ սահմանվել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները մահվան էլքով գործերի դեպքում պարտավորվում են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն և կայացնել որոշում: Ավելին, այդ քրեական գործերով ընթացող նախաքննությունների վերաբերյալ տուժողների բարեկամների և մտերիմների մոտ դեռևս առկա են հիմնավոր մտահոգություններ, մասնավորապես կոնկրետ քննչական գործողություններ չկատարելու վերաբերյալ: Գտնում ենք, որ միայն նախկին (նույնիսկ տասնամյա հնության) գործերի լրիվ և օբյեկտիվ քննությունն ու այդ գործերով արդարության վերականգնումը կարող է ապահովել այսօրվա մահվան դեպքերի քննության նկատմամբ վստահությունը և ապագայում հնարավոր մահացությունների ու սպանությունների կանխարգելումը:

Դատախազությունը խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս՝ նախապատվությունը մշտապես տալիս է կալանավորմանը: Մինչդեռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, բացի կալանավորումից նախատեսված են նաև այլ խափանման միջոցներ: Միջազգային փորձում, ինչպես նաև ՄԻԵԴ նախադեպային որոշումներում ընդունվել է այն մոտեցումը, համաձայն որի՝ կալանավորումը պետք է դիտվի, որպես բացառիկ խափանման միջոց և կիրառվի այն դեպքում, երբ օրենսգրքով

սահմանված մյուս խափանման միջոցներով հնարավոր չէ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը քրեական վարույթի ընթացքում: Կալանավորումը, որպես խափանման միջոցի միայն բացառիկ դեպքերում կիրառելը, կարող է նաև նպաստել ՔԿՀ-ների բեռնաթափմանը: ՀՀ դատարանների 2012-2013թթ. գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծությամբ արձանագրվել է, որ 2013թ. ընթացքում ՀՀ առաջին աստյանի դատարաններում ստացվել է 3172 միջնորդություն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որոնցից 3011-ը (94.9%) բավարարվել է, 153-ը (4.85%) մերժվել, իսկ 8-ը թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին աստյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 576 միջնորդություն, որից 129-ը (22.4%) բավարարվել է, 427-ը (74.1%)՝ մերժվել, 16-ը թողնվել է առանց քննության: Արդարադատության նախարարության պաշտոնական տվյալներով ՔԿՀ-ների ընդհանուր լրակազմը 4395 է, իսկ 08.01.2014թ. դրությամբ ՔԿՀ-ներում գտնվում է թվով 3926 ազատազրկված՝ այն էլ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013թ. ընթացքում ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է համաներում հայտարարելու մասին որոշում: Մինչդեռ, գերբնակեցման խնդիրը լուծում չի ստացել, քանի որ կալանավորված անձինք միևնույն է բնակվում են գերբնակեցման պայմաններում: Տվյալ իրավիճակը հատկապես պայմանավորված է կալանավորման լայն կիրառմամբ: Ակնհայտ է, որ նշված հարցում որդեգրված քաղաքականության փոփոխումը՝ կալանավորումը, որպես խափանման միջոցի միայն բացառիկ դեպքերում կիրառելը, մեծապես կարող է նպաստել ՔԿՀ-ների բեռնաթափմանը: Որպես այս խնդրի դրական լուծում կարող է հանդիսանալ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդունումը, քանի որ այն խափանման միջոց ընտրելու ավելի ճկուն համակարգ է նախատեսում և նախագծում է ապես ավելացվել են այլընտրանքային խափանման միջոցների տեսակները և ավելի մատչելի են դարձել դրանց կիրառման մեխանիզմները: Սակայն հարկ ենք համարում նշել, որ այն ևս զերծ չի մնացել խնդրահարույց դրույթների նախատեսումից, հատկապես Նախագծի 116-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է ծանր ու առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի կամ այլընտրանքային խափանման միջոցի կիրառում առանց նույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերում նշված հանգամանքների հիմնավորման: Այսինքն, քննիչը առանց որևէ հիմնավորում կամ փաստարկ դատարան ներկայացնելու կարող է միջնորդել տվյալ անձին կալանավորելու կամ նրա նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ: Մինչդեռ քրեաիրավական հարաբերություններում ամբողջ ապացուցման պարտականությունը ընկած է մեղադրող կողմի վրա:

Գործող օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս Դատախազությանը Հատուկ քննչական ծառայությանը ընդդատյա քրեական գործերը նախաքննություն իրականացնելու համար փոխանցել այլ քննչական մարմիններին: Այսպես, ստացվել են բողոքներ, որոնց համաձայն Դատախազությունը Ծառայությանը ընդդատյա քրեական գործերը չի փոխանցել նրանց նախաքննություն իրականացնելու համար: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության

մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154¹, 154² հոդվածներով կատարում են *հատուկ քննչական ծառայության քննիչները*: Նշվածը գործողությունների հիմք է հանդիսացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 10-րդ մասը, որի համաձայն՝ տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը: ՀՀ օրենսդրությամբ երաշխավորվել է Ծառայության անկախությունը և դրա՝ որևէ այլ գերատեսչության ենթակայության տակ չգտնվելու հանգամանքը, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված հատուկ սուբյեկտների մասնակցությամբ քրեական գործերը: Նման անկախությամբ օժտված չեն այլ գերատեսչությունների համապատասխան նախաքննություն իրականացնող մարմինները: Ուստի պարզ չէ հետապնդվող նպատակը, երբ Ծառայության ենթակայությանը վերաբերող գործերը չեն փոխանցվում նրանց կամ դատախազի որոշմամբ փոխանցվում են այլ մարմնի: Պարզ չէ նաև արդյո՞ք այդ դեպքում ապահովվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քրեական հետապնդում իրականացնող մարմնի պարտավորությունը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Նշված հարցի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունից թիվ 12/6-13 պատասխան գրությամբ հայտնել էին, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը ենթակա գործերի նախաքննությունն այլ մարմինների հանձնարարվում է ՀՀ քրեական դատավարության 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-կետի պահանջի համաձայն, որով նախատեսվում է, որ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է նաև քրեական գործը նույն օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով: Հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված է Ծառայության անկախությունը և դրա՝ որևէ այլ գերատեսչության ենթակայության տակ չգտնվելու հանգամանքը և նման կարգավիճակ այլ քննչական մարմինները չունեն, ուստի պարզ չէ, թե ինչպես կարող են Ծառայությանը ենթակա գործերի կապակցությամբ այլ քննչական մարմինները իրականացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Դատախազության կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել ազատությունը սահմանափակված և նրանց խնամքի տակ գտնվող անձանց գոյատևման միջոցներն ապահովելու համար: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի՝ անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Քրեական

վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությունները՝ կազմակերպելու վերոհիշյալ անձանց հսկողությունը, խնամքը և սոցիալական օգնության պետական կազմակերպությունում կամ բժշկական հաստատությունում անաշխատունակ անձանց ժամանակավոր տեղավորումը պարտադիր են խնամակալության և հոգաբարձության մարմնի, ինչպես նաև նշված կազմակերպությունների և հաստատությունների ղեկավարների համար: Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի նաև անչափահաս և անաշխատունակ անձանց հանձնել նրանց ազգականների խնամակալությանը՝ վերջիններիս համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը, որի գույքն իրեն արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել է առանց հսկողության, իր գույքի հսկողության, այդ թվում՝ տնային կենդանիների կերակրման իրավունք ունի, որը նշված մարմինը պարտավոր է ապահովել նրա խնդրանքով և նրա հաշվին: Քրեական վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությունները՝ կազմակերպելու անձի գույքի հսկողությունը և կերակրելու նրան պատկանող կենդանիներին, պարտադիր են համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկությունների համար: Նշյալ կարգավորումը սահմանելիս ՀՀ օրենսդիրը հաշվի է առել ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Տվյալ դեպքում Օրենսգրքով նախատեսվել է կոնկրետ «այլ դեպք», որի պարագայում պետությունը կրում է պարտավորություն ապահովելու որոշ խմբի (օրինակ՝ կալանավորված անձի խնամքի տակ գտնվող անչափահասների) սոցիալական ապահովության իրավունքը: Հարկավոր է նշել նաև, որ համանման կարգավորում առկա է նաև այլ պետությունների համապատասխան քրեադատավարական օրենսդրություններում, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածը, Ուկրաինայի համապատասխան օրենսգրքի 378-րդ հոդվածը և Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածը: Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների՝ քրեական վարույթ իրականացնող պաշտոնատար անձինք գործնականում չեն կիրառում նշված հոդվածը՝ չնայած դրա կարգավորումների կարևորությանը: Ավելին, համաձայն դիմում-բողոքների՝ այն սակավաթիվ դեպքերում, երբ այն կիրառվում է համապատասխան անձանց խնամքի իրավունքը ապահովելու համար, տրամադրվում է գումար, որը չի բավարարում նույնիսկ նվազագույն խնամքի և գոյատևման միջոցների ապահովման համար: ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանը հռչակված է որպես սոցիալական պետություն: Սոցիալական պետության հիմնական խնդիրներից է՝ իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կապահովի հանրության յուրաքանչյուր անդամի համար բավարար կենսամակարդակ, այդ թվում՝ բոլոր այն դեպքերում, երբ անձն իրենից անկախ պատճառներով անկարող է աշխատել: Այդպիսի սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝

ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը կյանքի տարբեր իրավիճակներում, երբ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը:

Արձանագրվել են հետաքննության և նախաքննության մարմինների նկատմամբ դատախազական հսկողության թերացման դեպքեր, ինչպիսիք են՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման տուժողին չտրամադրելը և հետաքննության ու նախաքննության մարմինների կողմից հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը չպահպանելը: Դատախազությունը Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, նախատեսելով քրեական վարույթը կասեցնելու ինստիտուտը և դրա հիմքերը, չի սահմանել պարտականություն քրեական վարույթն իրականացնող մարմնի համար տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին (այսուհետ՝ շահագրգիռ անձանց) տրամադրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը: Ավելին, Օրենսգրքով մանրամասն թվարկված են տուժողի նույն իրավունքները, բացառությամբ՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը ստանալուց: Խնդրի արդիականությունը չի սահմանափակվում միայն տեսական հարթության մեջ: Գործնականում նմանատիպ հարց առաջանալու դեպքում քննիչները հղում են կատարում Օրենսգրքի՝ որոշում տրամադրելու ընթացակարգի բացակայությանը, ինչպես նաև տուժողի՝ նման իրավունք չունենալուն: Օրենսգրքի 257-րդ հոդվածի համաձայն քննիչը, դատախազն իրավունք ունեն կասեցնել քրեական գործով վարույթը՝ դրա մասին կայացնելով պատճառաբանված որոշում: Համաձայն օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի՝ քննիչը պարտավոր է շահագրգիռ անձանց գրավոր տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին և միաժամանակ պարզաբանել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով նախատեսված կարգով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին հոդվածի մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քննիչը գրավոր կերպով միայն տեղեկացնում է որոշման գոյության մասին: Այսինքն՝ շահագրգիռ անձինք, տեղեկանալով կասեցված վարույթի մասին, չեն ստանում որոշման պատճենը, այլ ուղղակի վերջիններիս բացատրում են դրա բողոքարկման հնարավորության մասին: Ըստ որոշ իրավագետների՝ քննիչների կողմից վերոնշյալ որոշումների միայն տեղեկացման և դրանց բողոքարկման կարգի պարզաբանման, ինչպես նաև արդյունքում փաստացի չտրամադրման հիմնավորում է հանդիսանում այն, որ Օրենսգրքով նման դատավարական կարգ սահմանված չէ և ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Մինչդեռ, հարց է առաջանում, թե Օրենսգրքի վերոնշյալ հոդվածում նշված շահագրգիռ անձինք քննիչի կողմից քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ որ հիմքերը կարող են բողոքարկել համապատասխան մարմին, եթե քննիչն ընդամենը գրավոր

տեղեկացնում է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին՝ չնշելով այդ որոշումը կայացնելու հիմքերը: Իրականացնելով քննարկվող ինստիտուտի համեմատական վերլուծություն Օրենսգրքի այլ դրույթների և կարգավորումների միջև՝ պարզեցինք, որ համեմատելով խնդրո առարկա կարգավորումը մեկ այլ փուլի և գործողության հետ, մասնավորապես՝ քրեական գործով վարույթի կարճման հետ, որն ամրագրված է Օրենսգրքի 262-րդ հոդվածում, պարզ է դառնում, որ այնտեղ կարգավորումը ընթացել է այլ ուղղով. մասնավորապես, տուժողին ուղարկվում է կարճման որոշման պատճենը՝ դրանով իսկ նախատեսելով բոլոր իրական հնարավորությունները նշված որոշումը բողոքարկելու համար: Հարկավոր է հաշվի առնել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը ուղղակիորեն վերաբերում է տուժողի շահերին, և հաշվի առնելով այն, որ անձանց արդյունավետ պաշտպանության իրավունքի իրականացման համար միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է, միայն տրամաբանական կլիներ, որ քննիչը տուժողին տրամադրեր քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը և պարզաբաներ, որ նշված որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Խնդրո առարկա պրակտիկան, որի ընթացքում տուժողին քննիչը չի տրամադրում վերոնշյալ որոշումը, իրական վտանգ է առաջացնում անձանց մինչդատական վարույթում նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց որոշումների դատական բողոքարկման հնարավորությունից օգտվելու համար: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՄԴՆ-844 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածին, նշել էր, որ այն, որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց, կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության ինչպես 18 և 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միասնական պրակտիկան ապահովելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին ապահովել տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին քրեական գործով վարույթը կասեցնելու մասին իրազեկումը: Ըստ հանձնարարականի՝ իրազեկումը պետք է լինի գրավոր, որում միաժամանակ պետք է պարզաբանվի, որ վերոնշյալ անձանց կողմից գրավոր պահանջի դեպքում նրանց կարող է տրամադրվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ այն ՀՀ քրեական դատավարության կարգով բողոքարկելու նպատակով: Ճիշտ է հանձնարարականի ընդունումը ողջունելի է և իրականում լուրջ ձեռքբերում է իրավահարաբերության կարգավորման շրջանակներում միանման պրակտիկա ձևավորելու տեսանկյունից՝ հատկապես հաշվի առնելով տուժողի խնդրո առարկա որոշումը բողոքարկելու իրավունքը, այնուամենայնիվ, մեր դիրքորոշումն այն է, որ համապատասխան պաշտոնատար անձինք, կասեցման մասին որոշում կայացնելիս, բոլոր դեպքերում, անկախ այն հանգամանքից անձը դիմել է այդ որոշումը ստանալու համար թե՛ ոչ, փոխանցեն այն շահագրգիռ անձանց:

Այսինքն՝ այն պետք է դիտարկել պետության պոզիտիվ այլ ոչ նեգատիվ պարտավորությունների տեսանկյունից: Հաջորդ խնդիրը վերաբերում է Ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործության մասին քաղաքացիների հաղորդումները քննարկելիս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգը չպահպանելուն: 2013 թվականին գրանցվել է 16 բողոք, երբ հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված թվով 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու փոխարեն Ոստիկանության աշխատակիցների կողմից կազմվել է եզրակացություն և «կցվել է շարք», ինչի հետևանքով անձը գրկվել է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման», այլ ոչ թե «եզրակացության» բողոքարկման հիմքերն ու կարգը: Գրանցվել է նաև 1399 դեպքեր, երբ խախտվել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար սահմանված ժամկետները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի («Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը») համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Ոստիկանությունից հայտնել են, որ այդ 1399 դեպքերից 48-ը տեղի են ունեցել ոչ օբյեկտիվ պատճառների արդյունքում, իսկ մնացածը՝ օբյեկտիվ, օրինակ՝ ուշանում է կատարված հարցումների կամ նշանակված փորձաքննությունների պատասխանները: Նշված օբյեկտիվ պատճառները, ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի չեն հանդիսանում հիմնավորում 10-օրյա ժամկետը խախտելու համար: Պաշտպանին ուղղված բողոքները վկայում են, որ եղել են դեպքեր, երբ դատախազի ոչ պատշաճ հսկողության արդյունքում ակնհայտ քրեական հատկանիշներ պարունակող նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է: Այսինքն, դատախազի կողմից չի դրսևորվել հետևողականություն՝ քննչական անհրաժեշտ գործողություններ իրականացնելու և գործի քննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության ապահովմանն ուղղված: Նշյալ խնդիրները հանգեցնում են քաղաքացիների իրավունքների և շահերի, մասնավորապես՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումների:

Դատախազական և քննչական գերատեսչությունների ոչ միասնական դիրքորոշումների հետևանքով շատ դեպքերում անձինք անորոշ ժամկետով հայտնվում են քրեական հետապնդման վիճակում, ինչը հակասում է նույն արարքի համար կրկին չդատվելու (non bis in idem) սկզբունքին: Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ առկա է խնդիր կապված ՀՀ գլխավոր դատախազի և հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու լիազորության տարանջատման հետ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի

կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Արդյունքում առաջանում է քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելու ոլորտում հսկողություն իրականացնող դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունների տարանջատման խնդիրը: Նշված հոդվածը տարբեր ժամանակահատվածներում ենթարկվել է փոփոխությունների, ներկայացվել է նոր խմբագրությամբ, սակայն այդ փոփոխությունների ընթացքում չեն պահպանվել քրեական դատավարության հանրային և մասնավոր շահերի գույակցման, դատախազ – քննիչ փոխհարաբերություններում նրանց դատավարական գործառույթների հստակ տարանջատման հիմնարար մոտեցումները, ինչի հետևանքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածն ինքնին պարունակում է խիստ անորոշ և հակասական կարգավորումներ: Իրավակիրառ պրակտիկայում ՀՀ գլխավոր դատախազի և հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելու լիազորությունների տարանջատման վերաբերյալ առկա են հակասական մոտեցումներ: Ոլորտի որոշ մասնագետներ գտնում են, որ հսկող դատախազն իրավասու է վերացնել քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը՝ առանց քանակական սահմանափակման, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում, բացի ժամկետային սահմանափակման, այլ բնույթի սահմանափակումներ նախատեսված չեն: Հսկող դատախազը քննիչի որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում իրավասու է վերացնել այն: Եթե քննիչը կրկին կարճում է քրեական վարույթը (դադարեցնում է քրեական հետապնդումը), ապա հսկող դատախազը իրավասու է նոր որոշումը ստանալու պահից յոթնօրյա ժամկետում կրկին վերացնել այն: ՀՀ գլխավոր դատախազը վեցամսյա ժամկետում իրավասու է վերացնել քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը, եթե հսկող դատախազը չի վերացրել այն: Այս մոտեցումն ընդունելի չէ այնքանով, որ եթե հսկող դատախազը անսահմանափակ քանակով վերացնի քննիչի նշված որոշումները, ապա անձը դատախազական և քննչական գերատեսչությունների դիրքորոշումների անհամաձայնության հետևանքով անորոշ ժամկետով կհայտնվի քրեական հետապնդման մեջ, ինչը հակասում է նույն արարքի համար կրկին չդատվելու (non bis in idem) սկզբունքի բուն էությանը: Իսկ մասնագետների այլ խումբ մեկնաբանում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է հսկող դատախազի կողմից որոշումը վերացնելու գործողությանը (և ոչ թե յոթնօրյա ժամկետին), գտնում են, որ հսկող դատախազը կարող է

վերացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում թվարկված որոշումները միայն մեկ անգամ, որից հետո քննիչի որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն ՀՀ գլխավոր դատախազի կողմից: Նմանատիպ մեկնաբանությունը խոցելի է այն իմաստով, որ եթե հիմք ընդունենք, որ «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է ոչ թե յոթնօրյա ժամկետին, այլ հսկող դատախազի կողմից որոշումը վերացնելու գործողությանը, ապա կստացվի, որ ՀՀ գլխավոր դատախազը վեցամսյա ժամկետում քրեական հետապնդման մարմնի՝ օրենքով նախատեսված որոշումները կարող է վերացնել միայն այն դեպքում, երբ հսկող դատախազը մեկ անգամ դրանք վերացրել է: Մինչդեռ, ձևավորված կայուն իրավակիրառական պրակտիկան վկայում է այն մասին, որ ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է վերացնել քրեական հետապնդման մարմնի՝ օրենքով նախատեսված որոշումները նույնիսկ այն դեպքում, երբ հսկողություն իրականացնող դատախազը չի վերացրել դրանք: Այս մոտեցման պարագայում ստացվում է, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելուց հետո քննիչն իրավասու է կրկին կարճել քրեական վարույթը՝ արգելափակելով Դատախազության քրեական հետապնդման տնօրինման գործառույթը: Կարծում ենք, որ նման հակասական կարգավորումների և մեկնաբանությունների հիմնական պատճառն այն է, որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի քրեական հետապնդման ոլորտում քննիչի և դատախազի լիազորությունները հստակ տարանջատված չեն: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունը և պրակտիկայի ձևավորումը չպետք է հանգեցնեն նախաքննության մարմնի կողմից Դատախազության քրեական հետապնդումը տնօրինելու (քրեական հետապնդում հարուցել և մեղադրանք պաշտպանել) սահմանադրական գործառույթի արգելափակմանը: Ի տարբերություն քրեական հետապնդման այլ մարմինների գործունեության՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը քրեական վարույթին մասնակցող անձանց օրինական շահերի և իրավունքների պահպանման կարևորագույն երաշխիքներից է: Դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի պատշաճ իրականացման համար պետք է առկա լինեն անհրաժեշտ նախադրյալներ և պայմաններ: Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածում առկա անորոշ և հակասական կարգավորումները խաթարում են քրեական արդարադատության բնականոն իրականացումը, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը՝ ստեղծելով հակասահմանադրական իրավիճակ: Նման հակասությունների վերացումը պահանջում է օրենսդրական և համակարգային լուծումներ:

Առաջարկություններ

- Դատախազական հսկողության մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու միջոցով կանխարգելել ՀՀ ԱՆ ՔԿԸ-ներում և ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման և դրանց անպատիժ մնալու դեպքերը:

- Բացառել անձանց գործով որպես վկա ներգրավվելուց կարճ ժամանակ անց նույն կամ մեկ այլ գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվելու այն դեպքերը, որոնց հիմքում դրված են վերջինիս, որպես վկա հայտնած տեղեկությունները:
- Խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց քրեական գործերի բացահայտման կապակցությամբ իրականացնել արդյունավետ հսկողություն նախաքննությունն իրականացնող մարմնի նկատմամբ, ներկայացնել ցուցումներ և դրսևորել հետևողականություն մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ՝ միաժամանակ հաշվի առնելով, որ նման երկարատև նախաքննությունը մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց է:
- Ինչպես բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, մշտապես ղեկավարվել ՀՀ Սահմանադրության 83.1-րդ հոդվածի պահանջներով՝ պատշաճ կերպով արձագանքելով Պաշտպանի գրություններին և հարցումներին: Միաժամանակ, ելնելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, գերծ մնալ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի դրույթների տարաբնույթ մեկնաբանություններից:
- Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությամբ դատարան դիմել միայն այն դեպքերում, երբ հստակ հիմնավորվում է այլ խափանման միջոցով քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման անհնարինությունը:
- Մշակել համապատասխան օրենքի նախագիծ որով կհստակեցվի Դատախազության կողմից Հատուկ քննչական ծառայությանը ընդդատյա քրեական գործերի փոխանցման արգելքը այլ մարմիններին նախաքննություն իրականացնելու համար:
- Միջոցներ ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ազատությունը սահմանափակված անձանց խնամքի տակ գտնվողներին համապատասխան գոյատևման միջոցներով ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել համապատասխան գոյատևման միջոցները՝ նվազագույն սպառողական զամբյուղին համապատասխանեցնելու ուղղությամբ:
- Արդյունավետ հսկողություն իրականացնել հետաքննության և նախաքննության մարմինների կողմից օրենքով սահմանված քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը տուժողին տրամադրելու և հետաքննության ու նախաքննության մարմինների հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը պահպանելու նկատմամբ:
- Օրենսդրական և համակարգային լուծումներ նախաձեռնել դատախազական և քննչական գերատեսչությունների դիրքորոշումների անհամաձայնության հետևանքով առաջացած տարաբնույթ մեկնաբանությունները վերացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական պաշտպանության ու սոցիալական աջակցության, քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության, կենսաթոշակի իրավունքի իրականացումն ապահովելու, բնակչության զբաղվածության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության բնագավառների պետական քաղաքականության, սոցիալական ապահովության նպատակային ծրագրերի մշակման և իրականացման համար:

2013 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Ներդրված պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը եղել է վիճահարույց և առաջացրել է մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ աշխատավարձի և կուտակած գումարի օգտագործման որոշակի սահմանափակում, առանձին դեպքերում կուտակված գումարների ստացման անհնարինություն, պարտադիր կուտակային վճարների իրավական տեսակի անորոշություն, տարիքային տարբերակում:
- Նվազագույն աշխատավարձը սահմանվել է 45.000 դրամ, որը նույնիսկ ավելի քիչ է, քան գոյատևելու համար մարդուն անհրաժեշտ ամսական նվազագույն գումարը (նվազագույն սպառողական զամբյուղը կազմում է մոտ 56.000 դրամ):
- Բազմազավակ ընտանիքներին չի տրամադրվել բավարար սոցիալական աջակցություն, ինչի հետևանքով մի շարք այդպիսի ընտանիքներ գտնվում են աղքատության եզրին:
- Արհեստակցական միությունները հիմնականում կայացած չեն և չեն կարող արդյունավետ գործել, քանի որ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել դրանց կայացման ուղղությամբ: Արդյունքում անձանց աշխատանքային իրավունքները բավարար չեն պաշտպանվում գործատուների չարաշահումներից:
- Բազմաթիվ են եղել դեպքեր, երբ աշխատողին չի տրամադրվել կնքված աշխատանքային պայմանագրի օրինակը, չի վճարվել աշխատավարձը, ապօրինի դադարեցվել է աշխատանքային խեղման համար վճարվող փոխհատուցումը և խախտվել են մի շարք այլ աշխատանքային իրավունքները:
- Չեն մշակվել հստակ չափորոշիչներ, որոնք թույլ չեն տա գործատուին մարդուն ազատել աշխատանքից կենսաթոշակային տարիքին հասնելու պատճառաբանությամբ:

- Եղել են դեպքեր, երբ Նախարարությունը, խախտելով օրենքը, սոցիալապես անապահով քաղաքացուն չի տրամադրել հասանելիք բնակարանը:
- Օրենսդրական թերի կարգավորման և Նախարարության անարդյունավետ հսկողության արդյունքում խնամակալության և հոգաբարձության մարմինները պատշաճ չեն իրականացնում իրենց գործառնությունները, մասնավորապես՝ չեն իրականացվել երեխաների կյանքի հետազոտություններ, տնայցեր, ինչպես նաև հաճախ տրվել են սուբյեկտիվ եզրակացություններ:
- Նախարարության անարդյունավետ գործունեության հետևանքով շարունակվում են չլուծված մնալ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և ապաստան տրամադրելու, մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելու, հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման հարցերը:
- Շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցը, քանի որ նույնիսկ նոր օրենքով նրանց համար չնախատեսվեցին բավարար պարտադիր աշխատանքի տեղեր:
- Թերի օրենսդրության պատճառով մի շարք աշխատողների չի հատուցվել աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պատճառված վնասը:
- Սահմանվել է թաղման նպաստի նոր ֆիքսված չափ՝ 200.000 դրամ, որը շատ ավելի քիչ է, քան սահմանված է եղել նախկինում: Արդյունքում՝ պակասել է կենսաթոշակառուների մահվան դեպքում նրանց ընտանիքի անդամներին վճարվող թաղման նպաստի չափը, որը նախկինում կազմել է կենսաթոշակի 25-ապատիկը:
- Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով մարդիկ չեն կարողացել օրինական լիազորագրով ստանալ իրենց ազգականների նպաստները:
- Օրենքների միջև առկա հակասությունների հետևանքով կենսաթոշակառուի մահվան դեպքում իր հարազատները հիմնականում չեն կարողացել որպես ժառանգություն ստանալ հանգուցյալին չվճարված կենսաթոշակը:
- Առանձին դեպքերում՝ Նախարարությունը մերժել է օտարերկրյա նոտարների և Հայաստանի դեսպանության հյուպատոսների վավերացրած լիազորագրով հաշմանդամության կենսաթոշակ տրամադրելը՝ խախտելով օրենքը և Սահմանադրական դատարանի որոշումը:
- Օրենքով չեն սահմանվել և «մասնագիտական աշխատանքային ստաժ»-ին չեն հավասարեցվել «մասնագիտական ստաժ» ու «գիտամանկավարժական ստաժ» հասկացությունները, ինչի հետևանքով մի շարք անձինք կարող են զրկվել այն արտոնություններից, որոնք նախատեսված են մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձանց համար (օրինակ՝ աշխատանքի ընդունվելիս, կենսաթոշակ ստանալիս և մի շարք այլ դեպքերում):

Արձանագրված դրական զարգացումները

- Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների համար հաշմանդամության որոշման չափորոշիչներ են նախատեսվել:

- Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը իրականացրել է մասնագիտացված 3 մանկատների 136 մասնագետի և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող այլ հաստատությունների՝ 226 մասնագետի վերապատրաստումներ:
- Երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու նպատակով «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ /բեռնաթափում և կանխարգելում/» ծրագրի շրջանակներում Լոռու մարզում 25 երեխայի մուտքը հաստատություններ կանխարգելվել է, իսկ 25 երեխա հաստատություններից վերադարձել է ընտանիք:
- Մշակվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման մեթոդաբանություն՝ ըստ նրանց ախտորոշումների, ախտաբանական վիճակների և հիվանդության ծանրության աստիճանի՝ նախատեսելով նաև տեղեկատվության էլեկտրոնային եղանակով պահպանման և վարման մեխանիզմներ:

Ընդհանուր վերլուծություն

Նախարարությունը 2013 թվականին նախաձեռնեց պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման գործընթացը, որը իր հերթին առաջացրեց քաղաքական և իրավական խնդիրներ: Քաղաքական խնդիրների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունը սահմանափակվում է քաղաքականության մշակման պատշաճ ընթացակարգերի պահպանմանը հետևելով, քանի որ բնակչության սոցիալական ապահովության, այդ թվում կենսաթոշակային, ոլորտի քաղաքականության մշակումը ՀՀ կառավարության, իսկ դրա ընդունումը Ազգային ժողովի լիազորություններն են: Այս առումով պետք է նշել, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել և ուժի մեջ է մտել օրենքով սահմանված կարգով՝ անցնելով բոլոր անհրաժեշտ փուլերը: Միաժամանակ Պաշտպանի կողմից առանձնացվել էին կուտակային կենսաթոշակային համակարգի մի շարք իրավական խնդիրներ: Այսպես՝

1. Օրենքով նախատեսված պարտադիր կուտակային բաղադրիչում կենսաթոշակների բաշխողական կամ սերունդների համերաշխության համակարգից պարտադիր անցում է կատարվում անհատական կամ «ինքնաֆինանսավորվող» կուտակային համակարգին, որն իր հերթին առերևույթ խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխանության համատեքստում: Այս հոդվածի համաձայն, չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար: Ըստ էության Սահմանադրության 36-րդ հոդվածը, հիմք ընդունելով Սահմանադրության նախաբանը, պաշտպանում է յուրաքանչյուր ընտանիքում և քաղաքացիական հասարակությունում սերունդների համերաշխության գաղափարը, որը կենսաթոշակային ապահովության ոլորտում, որպես անաշխատունակ անձանց

սոցիալական պաշտպանության համակարգ կիրառվում է որպես սերունդների համերաշխության սկզբունքի հիման վրա ձևավորված բաշխողական համակարգ:

2. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ մասնակցի կենսաթոշակային հաշվում հաշվառված կենսաթոշակային ֆոնդերի փայերը համարվում են մասնակցի *անձնական սեփականությունը*: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ մասնակցի *տնօրինման իրավունքը սահմանափակվում է* մինչև մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալը (13-րդ հոդված, 2-րդ մաս): Օրենքի 54-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում, *եթե լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը*: Ստացվում է, որ անձը զրկվում է իր սեփականությունը հանդիսացող գույքը տնօրինելու և օգտագործելու իրավունքներից: Այնինչ, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածն ամրագրում է, որ. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: ...Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: Համաձայն «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» գիտագործնական ժողովածուի («Իրավունք», 2010թ.)՝ «զրկել սեփականությունից» հասկացությունը սահմանադրական իրավունքում ունի փոքր-ինչ այլ իմաստ, քան քաղաքացիական իրավունքում, որում այն ավանդաբար հավասարեցվում է սեփականության իրավունքը հարկադրաբար դադարեցնելու հետ: Սահմանադրական իրավունքում սեփականությունից զրկելուն շատ ավելի լայն մեկնաբանություն է տրվում: Այստեղ այն ենթադրում է կոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի ոչ միայն դադարում, այլև այնպիսի սահմանափակում, որի արդյունքում սեփականատերը զրկվում է իրեն պատկանող օբյեկտն իր հայեցողությամբ տիրապետելու, ըստ նշանակության օգտագործելու և այն տնօրինելու հնարավորությունից: Եվ եթե նույնիսկ այդպիսի սահմանափակումը կատարվում է որևէ ընդհանուր, հանրային նպատակներից ելնելով, դա ևս դիտարկվում է որպես սեփականությունից զրկում սահմանադրաիրավական առումով: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132 հոդվածի համաձայն՝ գույք են համարվում նաև անձի դրամական միջոցները: Իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ անձի աշխատավարձը նույնպես հանդիսանում է անձի սեփականությունը: Նման դիրքորոշում է հայտնել նաև Սահմանադրական դատարանը իր 2006 թվականի թիվ ՄԴՈ 649 որոշմամբ, ընդգծելով, որ աշխատավարձը քաղաքացու վաստակած միջոցներ են և նրա սեփականությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ սեփականության իրավունքի սահմանափակումը պետության կողմից ընդունելի է միայն այն դեպքերում, երբ նման սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառվում է ելնելով ընդհանուր հանրային շահից և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, այսինքն՝ սեփականության իրավունքի սահմանափակումը համաչափ է հետապնդվող նպատակի հետ (տես՝ *Ջեյմսն և այլոք ընդ. Մեծ Բրիտանիայի, Հենտրիխն ընդ. Ֆրանսիայի*): Ելնելով վերոգրյալից հարց է ծագում, թե որքանով է Օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված, անձի սեփականություն

հանդիսացող դրամական միջոցների սահմանափակումը *անհրաժեշտ* ժողովրդավարական հասարակությունում, *համաչափ* անձի արժանավայել ծերությունն ապահովելու Օրենքի նպատակի հետևից *համահունչ* Սահմանադրության սեփականության իրավունքը երաշխավորող 8-րդ և 31-րդ հոդվածներին *այն պարագայում, երբ անձը, Օրենքով չենթարկվելով իր դրամական միջոցների տնօրինման նման սահմանափակման, կարող էր իր հայեցողությամբ որպես ավանդ ներդնել Օրենքով սահմանափակման ենթակա դրամական միջոցները բանկում և ստանալ տարեկան առավել բարձր տոկոս կազմող եկամուտ:*

3. Պարզ չէ նաև Օրենքի այն պահանջի իրավաչափությունը համաձայն որի՝ կուտակային վճարների արդյունքում ձևավորված գումարը անձին վերադարձվում է միայն կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կարգավորում նախատեսված է պետության կողմից անձին տրամադրվող տարիքային կենսաթոշակի համար: Ավելին, Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը կարող է սույն օրենքով սահմանված կարգով տնօրինել իր պարտադիր կուտակային կենսաթոշակը՝ անկախ պետական կենսաթոշակը ստանալու փաստից (օրինակ՝ աշխատանքային (տարիքային), սոցիալական (ծերության), և այլն («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 8)): Այսինքն, ստացվում է, որ կուտակային կենսաթոշակը տնօրինելու և օգտագործելու հնարավորությունը միայն կենսաթոշակային տարիքից հետո տրամադրելը, ըստ էության, կուտակային կենսաթոշակը նույնացնում է ՀՀ օրենսդրությամբ արդեն առկա մեկ այլ՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակին: Օրենքը նշված ընդհանուր կանոնից սահմանում է որոշ բացառություններ, որոնք են. «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ մասնակցի տնօրինման իրավունքը սահմանափակվում է մինչև մասնակցի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելը, առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմնի տված եզրակացության հիման վրա մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելը, մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելը և ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը»: Սակայն պարզ չէ, թե արդյոք իրավաչափ է դեպքերի սպառնիչ ցանկ նախատեսելը, քանի որ տարբեր հանգամանքներում հնարավոր են դեպքեր, երբ անձը գտնվում է օրենքով չնախատեսված, բայց ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում, սակայն Օրենքի նշյալ դրույթների պատճառով չի կարող օգտվել իր կատարած պարտադիր վճարումներից գոյացած միջոցներից:

4. Մեկ այլ խնդրահարույց հարց վերաբերում է Օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումներին: Օրենքի 8-րդ հոդվածը, նշելով, որ վարձու աշխատող և պայմանագրային եկամուտ ստացող մասնակիցների համար (անունից) կուտակային վճարները հաշվարկելու և փոխանցելու պարտականությունը կրում են գործատուները՝ որպես հարկային գործակալ, այնուամենայնիվ Օրենքով չի հստակեցնում, թե նշված վճարները անձանց կողմից որպես ինչ է գանձվում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»: Այսպես, նշված հոդվածի վերաբերյալ Սահմանադրության մեկնաբանություններում նշվում է, որ հանրային գործառույթների իրականացման ընթացքում պետության ծախսերի ծածկման նպատակով նախատեսված են հարկեր, իսկ տուրքերը և պարտադիր այլ վճարները՝ ի տարբերություն հարկերի, ֆինանսական խնդիրներ չեն լուծում, այլ հետապնդում են որոշակի նպատակներ (իրավունքի ձեռքբերում կամ իրավունքի իրացում): Այստեղից, տուրքերը և պարտադիր այլ վճարները պետք է դիտարկել ոչ թե օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար պարտադիր վճար («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված), կամ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց պարտադիր գանձույթ, կամ լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար պարտադիր գանձույթ («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներ), այլ ընդամենը *պայման՝ բացառապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու, այդ թվում որոշակի իրավունքներ կամ թույլտվություններ տրամադրելու համար*: Մեկնաբանություններում նաև նշվում է, որ, քանի որ հարկերի բյուջե մուտքագրումը չի ենթադրում պետության կողմից հարկ վճարողի օգտին փոխադարձ պարտավորությունների կատարում, ապա, հետևաբար հարկն *անհատուցելի պարտավորություն է*: Օրենքում նշված կուտակային վճարները գանձելը հարկ չեն դիտարկվում, քանի որ, ինչպես նշեցինք, հարկը անհատուցելի պարտավորություն է, իսկ Օրենքով սահմանված կուտակային վճարները վերադարձվում են անձին իր կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո, ինչպես նաև՝ այլ պայմանների դեպքում: Միևնույն ժամանակ, այդ վճարումները չեն կարող դիտարկվել նաև որպես տուրք կամ պարտադիր այլ վճարներ, քանի որ վերջիններս գանձվում են միմիայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու, այդ թվում՝ որոշակի իրավունքներ կամ թույլտվություններ տրամադրելու համար, իսկ կուտակային վճարների դեպքում անձի համար որևէ իրավաբանական նշանակության գործողություն չի կատարվում, որևէ իրավունք կամ թույլտվություն չի տրամադրվում: Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ ըստ էության, նշված կուտակային վճարներն իրենցից չեն ներկայացնում ոչ հարկ, ոչ տուրք, և ոչ էլ պարտադիր այլ վճար: Հետևաբար՝ պարզ չէ, թե ՀՀ Սահմանադրության, որ դրույթից է բխում անձից պարտադիր կերպով կուտակային վճարներ գանձելու նման կարգավորման իրավաչափությունը:

5. Օրենքը հստակ ու մանրամասն չի կարգավորում մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարումների վերադարձելիության երաշխավորումը և դրա ընթացակարգը: Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումարի՝ ճշգրտված տարեկան գնաճով, վերադարձելիությունը երաշխավորվում է՝ միևնույն ժամանակ

նշելով, որ *կուտակային վճարների գումարի՝ տարեկան գնաճով ճշգրտման կարգը* սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ավելին, Օրենքի 50-րդ հոդվածը կոնկրետացնում է, որ պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպք է համարվում այն իրավիճակը, երբ Օրենքի *54-րդ հոդվածով սահմանված դիմումը* ստանալու օրվա դրությամբ անձի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի հաշվարկային արժեքների հանրագումարը *փոքր է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գումարից*: Իր հերթին 54-րդ հոդվածի 1-ին մասը նշում է, որ մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում, *եթե լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը*: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը նշում է, որ. «Պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալու ցանկություն ունենալու դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալ ցանկացող մասնակիցը *դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին... տեղեկանք ստանալու վերաբերյալ*»: Նշված երկու դրույթներից անհասկանալի է, արդյոք պարտադիր վճարումներ կատարած մասնակիցը ամեն դեպքում պետք է հասած լինի կենսաթոշակային տարիքին, որպեսզի կարողանա դիմում ներկայացնել ըստ Օրենքի 50-րդ հոդվածի (և, հետևաբար ""-րդ հոդվածի 2-րդ մասով) սահմանված կարգի: Մինևույն ժամանակ, Օրենքի 50-րդ հոդվածի նման ձևակերպումը վտանգում է քաղաքացու պարտադիր կուտակային վճարումներ կատարած անձանց լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի իրավունքն առ այն, որ նույնիսկ հետագայում երկրի հնարավոր ծանր տնտեսական վիճակի դեպքում իրենք կարող են հետ ստանալ պարտադիր կատարված վճարումներին համարժեք գումար՝ չկրելով որևէ ֆինանսական կորուստ:

6. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցում են *1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված համապատասխան անձինք*: Պարզ չէ, թե ինչ չափորոշիչների և հաշվարկների հիման վրա է որոշվել պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակից համարել հենց 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված համապատասխան անձանց: Նշված դրույթից բխող խնդիրն այն է, որ պարտադիր մասնակցությունը մեծապես վատթարացնում է գործող օրենքի թիրախային տարիքային խմբում գտնվող անձանց ֆինանսական վիճակը: Ֆինանսական վիճակի վատթարացման օրինակներից մեկը կարող է հանդիսանալ այն, որ այդ տարիքային խմբում գտնվող անձանց մեծամասնությունն ունի վարկային պարտավորություններ, որոնք կատարելը անհնարին է դառնում կուտակային պարտադիր բաղադրիչի ամենամյա վճարման դեպքում: Նշվածի նման մի շարք այլ հանգամանքները հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ Օրենքի կիրառումը վատթարացնելու է մի խումբ անձանց սոցիալական վիճակը՝ դրանով իսկ հակասելով Օրենքի ընդհանուր տրամաբանությանը և նպատակին: Համապատասխան տարիքային ցենզ սահմանելիս պետք էր հաշվի առնել նաև անձանց վրա հնարավորինս քիչ ֆինանսական բեռ դնելը: Օրինակ, նման պարագայում ավելի ողջամիտ կլինեք «1974 թվական»-ի փոխարեն

նախատեսել «1996 թվական», որի արդյունքում աշխատանքային հարաբերությունների մեջ նոր մտնող 18 տարեկան անձը ավելի քիչ ռիսկեր կկրեր Օրենքով առաջարկվող դրույթների դեպքում: Պարզ չէ նաև, թե ինչ չափորոշիչների և ինչ հաշվարկների հիման վրա է որոշվել պարտադիր կուտակային վճարների դրույքաչափերը՝ սահմանելով ըստ էության 5% մինչև 500.000 ՀՀ դրամ եկամտի դեպքում և 10% եկամտի 500.000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում (Օրենքի 7-րդ հոդված):

Նվազագույն աշխատավարձը սահմանվել է 45.000 դրամ, որը նույնիսկ ավելի քիչ է, քան գոյատևելու համար մարդուն անհրաժեշտ ամսեկան նվազագույն գումարը: Ներկայումս բնակչության զգալի մասը դեռևս միայն տարրական սոցիալական ապահովության խնդիր ունի, ինչի լուծման հարցում ակնկալվում է պետության աջակցությունը: Մինչդեռ, ըստ «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքի ներկա կարգավորումների, Հայաստանում նվազագույն աշխատավարձը կազմում է ընդամենը 45000 դրամ: Այնինչ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության՝ 2013թ. չորրորդ եռամսյակում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 56.2 հազար դրամ, որից միայն պարենային զամբյուղի արժեքը՝ 31.7 հազար դրամ է: Այսինքն, նվազագույն աշխատավարձի հաշվարկման հիմքում դրված չէ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, և այն չի դիտարկվում որպես պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության, սոցիալական վճարների հաշվարկման հիմք: Բացի այդ, պետք է հաշվի առնել իրական գների մակարդակից բխող նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկները, որոնցով նվազագույն զամբյուղը կբավարարի մեկ մարդուն՝ որպես նվազագույն կենսապահովման բյուջե: Թեև Կառավարության 2013թ. հուլիսի 4-ի N 740-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, որով նվազագույն աշխատավարձի չափի համար որպես հիմք է ընդունված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, այնուամենայնիվ, 2013թ. նշված ոլորտում չեն ձեռնարկվել գործուն քայլեր՝ ուղղված հասարակության լայն խավի կենսամակարդակի բարելավմանը:

Բազմազավակ ընտանիքներին չի տրամադրվել բավարար սոցիալական աջակցություն, ինչի հետևանքով մի շարք այդպիսի ընտանիքներ գտնվում են աղքատության եզրին: 2013թ. դրությամբ առկա են շուրջ 15.000 բազմազավակ ընտանիքներ, որոնցից 8000 ստանում են պետական նպաստ: Պայմանավորված երկրի ծանր սոցիալ-տնտեսական վիճակով՝ չորս և ավելի երեխաներ ունեցող ընտանիքները, առավել հավանական է, հայտնվեն ամենացածր եկամուտ ունեցող ընտանիքների թվում: Մտահոգիչ է, որ Կառավարությունը բացասական եզրակացություն է տվել «Բազմազավակ ընտանիքների աջակցության և բազմազավակ մայրերի պետական խրախուսման մասին» ՀՀ օրենքի նախագծին՝ պայմանավորված նախևառաջ ՀՀ պետական բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների նախատեսման անհրաժեշտությամբ: Մինչդեռ, նշյալ օրինագիծը մի շարք արտոնություններ է նախատեսում բազմազավակ ընտանիքների համար, ինչպես, օրինակ, կոմունալ ծախսերի զեղչ 50%-ով, դեղերի անվճար տրամադրում, նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով յուրաքանչյուր երեխայի նպաստ, նշյալ ընտանիքներին անվճար բնակարանով ապահովում և այլն: Չնայած ՀՀ կառավարության

2013 թվականի սեպտեմբերի 28-ի N 39 արձանագրային որոշմամբ 2014 թվականին երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար միանվագ նպաստի չափը կազմելու է 1000.000, որից 500.000-ը, որպես կապիտալ ընտանիքի երկարաժամկետ զարգացման համար, իսկ հինգերորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.500.000 միլիոն դրամ, որից 1000.000-ը, որպես կրկին ընտանիքի երկարաժամկետ զարգացմանն ուղղված կապիտալ, այդուհանդերձ, նշված միջոցները բավարար չեն էապես խթանելու ծնելիությունն ու բարելավելու բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանները: Միաժամանակ, բազմազավակ ընտանիքների կյանքի որակի բարձրացման համար բավարար չեն նաև ՀՀ կառավարության 2013 թ. հունվարի 10-ի N 1-Ն որոշմամբ բազմազավակ 4 և ավելի (բազմազավակ) մինչև 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամին տրվող հավելման չափերը, այն է՝ 6500-ից մինչև 8000 դրամով:

Արհեստակցական միությունները հիմնականում կայացած չեն և չեն կարող արդյունավետ գործել, քանի որ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել դրանց կայացման ուղղությամբ: Ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում անձանց աշխատանքային իրավունքների երաշխավորման և պաշտպանության համար կարևորվում է արհեստակցական միությունների դերակատարությունը: ՀՀ գործող օրենսդրությունը, որպես այդպիսին, թեև չի պարունակում արհեստակցական միությունների կայացմանը խոչընդոտող դրույթներ, սակայն նշված ոլորտում նույնպես առկա են խնդիրներ: Այսպես, ՀՀ սահմանադրության 32-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով: Միաժամանակ, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ արհեստակցական միությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել գործադուլներ: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ գործադուլը արհեստակցական միության կողմից կազմակերպվում է աշխատանքային վեճի լուծման նպատակով: Արդյունքում, բացի նշված դրույթից, ՀՀ օրենսդրությունը չի պարունակում որևէ այլ օրենք, որով կսահմանվեր, թե երբ աշխատողները կարող են գործադուլ անցկացնել իրենց սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության համար, որը կապված է պետական մարմինների գործողությունների հետ: Այսինքն, ստացվում է, որ գործադուլ, այդ թվում նաև արհեստակցական միությունների միջոցով, կարելի է իրականացնել միայն կոլեկտիվ աշխատանքային վեճերի դեպքում և բացառապես գործատուի հետ ծագած աշխատանքային հարաբերությունների շրջանակում: Ուստի, առկա է օրենսդրական բաց, որը կարող է գործնականում սահմանափակել սահմանադրորեն երաշխավորված սոցիալական և տնտեսական աշխատանքային շահերի՝ գործադուլի միջոցով պաշտպանության երաշխիքը: Միաժամանակ, հարկ է նշել, որ արհեստակցական միությունների ինստիտուտը դեռևս կայացած չէ մեր հասարակությունում: Դեռևս 2012թ. Նախարարությունը շարունակել է համագործակցությունը Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ՝ երկարաձգելով համագործակցության պայմանագիրը մինչև 2015 թվականը: Այդուհանդերձ, գործնականում բացակայում են սոցիալական գործընկերության զարգացման ու աշխուժացման խթանման

նախադրյալները: Նշվածը պայմանավորված է, նախևառաջ, աշխատանքի շուկայի առաջարկի և պահանջարկի անհավասարակշռությամբ, գործազրկության իրական բարձր մակարդակով: Փաստացի, անհրաժեշտության դեպքում, գործատուներն ունեն աշխատանքից, առանց բարդությունների, աշխատողին ազատելու և աշխատաշուկայից նոր աշխատողներ ընտրելու բոլոր հնարավորությունները: Նշվածը կաշկանդում է աշխատողներին իրենց իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում նաև արհեստակցական միությունների միջոցով՝ նկատի ունենալով սուր մրցակցությունը և, հետևաբար, աշխատանքից ցանկացած ժամանակ զրկվելու էական վտանգը:

Բազմաթիվ են եղել դեպքեր, երբ աշխատողին չի տրամադրվել կնքված աշխատանքային պայմանագրի օրինակը, չի վճարվել աշխատավարձը, ապօրինի դադարեցվել է աշխատանքային խեղման համար վճարվող փոխհատուցումը և խախտվել են մի շարք այլ աշխատանքային իրավունքները: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածը սահմանում է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում բարձրացվել էր այն խնդիրը, որ դեռևս 2010թ. հունիսի 24-ին ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենսգրքից հանվել է այն դրույթը, որը նախատեսում է գործատուի կողմից կնքված աշխատանքային պայմանագրի օրինակը աշխատողին տալու պարտականությունը և միայն կնքված պայմանագրի իր օրինակը ստանալուց հետո աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնելը: Նշված օրենսդրական փոփոխություններն իրենց մեջ պարունակում են էական վտանգ, քանի որ հնարավորություն են ընձեռում գործատուին արդեն իսկ կնքված պայմանագրում կամայական փոփոխություններ կատարել, ինչը կարող է հանգեցնել աշխատողի խախտված իրավունքների վերականգնման անհնարինությանը և այլ չարաշահումների: Տվյալ խնդիրը վերացնելու նպատակով Պաշտպանի կողմից դեռևս 2012 թվականի տարեկան զեկույցում առաջարկվել էր գործնականում գործատուի կողմից արդեն իսկ կնքված պայմանագրում կամայական փոփոխությունների և/կամ այլ չարաշահումների կատարումը բացառելու համար օրենսդրական ճանապարհով կարգավորել այդ հարցը, սակայն մինչ օրս քայլեր չեն ձեռնարկվել: Բացի այդ, 2013 թվականի ընթացքում կրկին արձանագրվել են բողոքներ գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի ընդունելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու, աշխատանքի ժամանակացույցը ներքին իրավական ակտով ընդունելու պարտականության խախտման վերաբերյալ: Մեր հարցմանն ի պատասխան Նախարարությունից հայտնել են, որ Նախարարություն աշխատանքի պետական տեսչության արխիվային, արխիվացման ենթակա, ինչպես նաև ընթացիկ վարույթների նյութերն ու փաստաթղթերն ամբողջությամբ հանձնվել են ՀՀ առողջապահության նախարարությանը: Մինչդեռ, մինչև 2013 թվականի օգոստոս ամիսը ոլորտի լիազոր մարմին է հանդիսացել Նախարարությունը: Ուստի, մտահոգիչ է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի խախտման և պատասխանատվության ենթարկման վերաբերյալ, մասնավորապես, գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի ընդունելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական

ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու վերաբերյալ Նախարարության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել՝ պատճառաբանվելով աշխատանքի պետական տեսչության վերակազմավորմամբ: Մակայն, աշխատանքի պետական տեսչության վերակազմավորմամբ, վերջինս իր գործառույթները սկսել է փաստացի իրականացնել միայն 2013թ. հոկտեմբերի 28-ից: Նախարարության կողմից չի իրականացվել վերակազմակերպման աշխատանքների արդյունքում համապատասխան արխիվային փաստաթղթերի պատշաճ փոխանցումը ՀՀ առողջապահության նախարարություն, ինչի հետևանքով Պաշտպանին չի տրամադրվել մինչև 2013թ. հոկտեմբեր ամիսը աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ քաղաքացիների դիմումների մասին տեղեկատվություն:

Չեն մշակվել հստակ չափորոշիչներ, որոնք թույլ չեն տա գործատուին մարդուն ազատել աշխատանքից կենսաթոշակային տարիքին հասնելու պատճառաբանությամբ: Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն, իսկ 14.1-րդ հոդվածը սահմանում է բոլոր մարդկանց հավասարությունը օրենքի առջև և խտրականության արգելքը: Միաժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ, աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը մինչև այդ պայմանագրի գործողության ժամկետի լրանալը: Արդյունքում, ըստ Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, գործնականում ստեղծվում է մի իրավիճակ, երբ մի շարք անձինք, կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում, աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու պարագայում, ենթարկվում են գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի միակողմ լուծելու հայեցողության վտանգին և փաստացի չեն պաշտպանվում վերջիններիս աշխատանքի ընտրության ազատությունը և խտրականության բացառումը: Թեև ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ թիվ ՍԴՈ-991 որոշմամբ գտել է, որ Օրենսգրքի վերոգրյալ կարգավորումը համապատասխանում է Սահմանադրությանը, միաժամանակ ընդգծել է նաև, որ առկա են օրենսդրական կարգավորման թերացումներ: Նշված թերացումների արդյունքում է, որ գործնականում աշխատանքային հարաբերություններում ի հայտ են գալիս խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, կենսաթոշակային տարիքում անձի սահմանադրական իրավունքների առանձնահատկությունները հետևողականորեն հաշվի չառնելը: Բացի այդ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է նաև, որ անհրաժեշտ է Աշխատանքային օրենսգրքով նախատեսել կենսաթոշակային տարիքի հասած անձի աշխատանքային պիտանիությունը, ինչպես նաև՝ աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի և գործատուի միջև երկկողմ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորությունը *գնահատելու* հստակ ընթացակարգեր: Միայն նշվածով կբացատրվի գործատուի սուբյեկտիվ հայեցողությունը: Վերոգրյալից պարզ է դառնում, որ առ այսօր բացակայում են Սահմանադրական դատարանի ՍԴՈ-991 որոշմամբ նշված՝ անձի աշխատունակության (աշխատանքային պիտանիության) գնահատման հստակ մեխանիզմները, որոնք թույլ կտան պարզել, թե կենսաթոշակային տարիքի հասած անձը պատշաճ կերպով կատարում է իր

աշխատանքային պարտականություններն ամբողջ ծավալով, համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին և չի կորցրել գործատուի վստահությունը թե՛ ոչ: Ըստ Նախարարության հայտնած տեղեկատվության՝ նշված խնդիրը հաշվի կառնվի Կառավարության 2014 թվականի միջոցառումների ծրագրով նախատեսված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման շրջանակներում: Այնուամենայնիվ, 2011թ. ի վեր, Նախարարության կողմից չեն ձեռնարկվել միջոցներ՝ ուղղված ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-991 որոշմամբ նշված՝ կենսաթոշակային տարիքի հասած անձանց վերոգրյալ աշխատանքային իրավունքների հստակ օրենսդրական կարգավորմանը:

Եղել են դեպքեր, երբ Նախարարությունը, խախտելով օրենքը, սոցիալապես անապահով քաղաքացուն չի տրամադրել հասանելիք բնակարանը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին նշված խնդրի վերաբերյալ հասցեագրել էր դիմում-բողոք անօթևան տարեց Երեմ Դուկասյանը, վերջինս դեռևս 2012թ. հաշվառված էր Մարայիկ քաղաքի սոցիալական բնակարանային համալիրից բնակարան ստացողների հերթացուցակում: Նրան պետք է հատկացնեին իրեն հասանելիք բնակարանը, սակայն նախատեսված հերթականությամբ 2012թ. սեպտեմբերին բնակարանների բաշխման ժամանակ, նրան չէին տեղեկացրել այդ մասին, ինչի արդյունքում նա չէր ստացել բնակարան և ստիպված էր եղել հերթագրվել նոր համարով: Բնակարանը չհանձնելու վերաբերյալ Նախարարությունը պարզաբանել է, որ Երեմ Դուկասյանին հեռախոսակապի միջոցով իրազեկել չի հաջողվել: Նշված պատճառաբանությունը, սակայն, հիմնավոր չէ, քանի որ ծանուցումը պատշաճորեն չի իրականացվել, ինչը չի կարող հիմք հանդիսանալ բնակարան չհատկացնելու և հերթացուցակի փոփոխության համար: Միաժամանակ, Ե. Դուկասյանի պնդմամբ, 2012 թվականի սեպտեմբեր ամսին ինքը գտնվել է ՀՀ-ում և վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ-ից բացակայել է ընդամենը մեկ օրով (05.09.2012-06.09.2012թթ.), ինչը հաստատվում է նաև քաղաքացու անձնագրում առկա գրառումներով: Նշենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Միաժամանակ սահմանված է, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Պետք է նշել, որ որպես Մարայիկ քաղաքում կառուցված սոցիալական բնակարանային համալիրի շենքերում բնակելի տարածություն տրամադրելու գործընթացը կարգավորող իրավական հիմք վկայակոչվել է ՀՀ ԱՍՀ նախարարի 2010թ. նոյեմբերի 11-ի թիվ 105-Ա/1 հրամանը, որով, մասնավորապես, չի կարգավորվում սոցիալական տանը բնակվելու համար հաշվառված քաղաքացիներին բնակարանները բաշխելու ժամանակ ծանուցման ընթացակարգը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ այդ գործընթացը պետք է իրականացվեր ընդհանուր վարչարարությանը վերաբերող դրույթներին համապատասխան, այսինքն՝ պետք է կիրառվեին «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները: Իսկ այդ օրենքը սահմանում է, որ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Բացի այդ, 2013թ. Նախարարության կողմից մշակվել են սոցիալական բնակարանի կարիք ունեցող անձանց ընտրության նոր չափորոշիչներ և Կառավարության կողմից հաստատվել է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը: Նշվածի արդյունքում, Նախարարության պարզաբանմամբ, Երեմ Ղուկասյանը չի համապատասխանել կառավարության թիվ 894-Ն որոշմամբ նոր սահմանված կարգի չափորոշիչներին և կորցրել է բնակարան ստանալու իրավունքը՝ առհասարակ դուրս մնալով հաշվառումից: Հարկ է նշել, սակայն, որ Նախարարության նման դիրքորոշումը ևս իրավաչափ չէ. որպես բնակելի տարածության կարիք ունեցող, Երեմ Ղուկասյանը նախկին կարգով արդեն հաշվառվել էր, հետևաբար չէր կարող նոր սահմանված կարգով զրկվել բնակելի տարածություն ստանալու իրավունքից, քանի որ ՀՀ Սահմանադրության ուժով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Հետևաբար, այս դեպքում ևս հետադարձ ուժ չի կարող տրվել անձի իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, ինչպես նաև նրա իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերին: Ուստի, Նախարարության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում խախտվել են Երեմ Ղուկասյանի իրավունքները, և Պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների խախտման մասին որոշում:

Օրենսդրական թերի կարգավորման և Նախարարության անարդյունավետ հսկողության արդյունքում խնամակալության և հոգաբարձության մարմինները պատշաճ չեն իրականացնել իրենց գործառույթները՝ մասնավորապես չեն իրականացվել երեխաների կյանքի հետազոտություններ, տնայցեր, ինչպես նաև հաճախ տրվել են սուբյեկտիվ եզրակացություններ: Ճիշտ է, ոլորտում ձեռնարկվել են որոշակի քայլեր, ինչպես, օրինակ, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով (գտնվում է ՀՀ Ազգային ժողովում) համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմին տրվել է նոր լիազորություն, համաձայն որի՝ այն խնամակալության և հոգաբարձության մարմին տալիս է եզրակացություն առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին: Բացի այդ, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հաշվառման տեղեկատվական համակարգի ներդրման նպատակով 2013թ. կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ, որոնց մասնակցել են համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների շուրջ 400 անդամներ: Այնուամենայնիվ, 2012 թվականի տվյալների համեմատ, ընդհանուր 2013 թվականում իրավիճակի առաջընթաց չի արձանագրվել: Խնդիրն այն է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի կյանքի հետազոտություն, ով հավակնում է նրա դաստիարակությանը: Անհրաժեշտ է պարբերաբար տնայցեր կազմակերպել երեխաների բնակության վայր, ինչպես նաև շարունակական կերպով հետազոտել երեխաների կյանքի պայմանները, մասնավորապես այն ծնողի վերաբերմունքը

դեպի երեխաները, որի հետ բնակվում են, երեխաների հոգեբանական վիճակը, նրանց առաջադիմությունը և այլն: Այնինչ, խնամակալության և հոգաբարձության մարմինները պատշաճ կերպով չեն հետազոտում երեխայի կյանքը և հաճախ տրվում են եզրակացություններ մեկ տնային այցելությունից հետո, որոնք հետագայում օգտագործվում են դատարանի կողմից տվյալ երեխայի գործով դատաքննության ժամանակ: Ստացվել են մի շարք բողոքներ՝ կապված սույն ինստիտուտի գործունեության կարգի օրենսդրական ոչ բավարար կարգավորման, ինչպես նաև խնամակալների և հոգաբարձուների մասնագիտական պատրաստվածության բացակայության և վերջիններիս գործունեության թափանցիկության վերաբերյալ: Մասնավորապես, խնամակալության և հոգաբարձության մարմնի հանձնաժողովները կազմված են կամավոր հիմունքներով աշխատող 5-8 անձանցից, ում համար այս աշխատանքը հիմնական բնույթ չի կրում, և վերջիններս հատկացնում են ընդամենը 2-3 ժամ՝ փորձելով լուծել իրենց համայնքի՝ կյանքի դժվարին պայմաններում հայտնված ընտանիքների և երեխաների խնդիրները: Հանձնաժողովի անդամները տարբեր մասնագիտություններ ունեցող անձինք են, մինչդեռ նրանց վրա դրված են երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության հետ կապված մի շարք մասնագիտական պարտականություններ: Նման պայմաններում հանձնաժողովի աշխատանքը արդյունավետ չի կարող լինել: Խնամակալության հանձնաժողովից պահանջվում է ներկայացնել երեխաների շահերը դատարանում, բայց միշտ չէ, որ հանձնաժողովի անդամները իրավական գիտելիքներ ունեն և դատական նիստում ընդամենը ապահովում են իրենց ֆիզիկական ներկայությունը: Բացառությամբ ՀՀ քաղաքացիական և ՀՀ ընտանեկան օրենսգրքերի, որոնցում ամրագրված են խնամակալության և հոգաբարձության մարմնի և նրա գործունեության վերաբերյալ ընդհանուր և կոնցեպտուալ դրույթներ, հանձնաժողովի ամենօրյա աշխատանքը կարգավորող և նրա անդամներին ներկայացվող պահանջները նախատեսվում են միայն այդ մարմնի կանոնադրությամբ, որը բավականին թերի փաստաթուղթ է նման կարևոր ոլորտը կարգավորելու համար: Օրենքով նշյալ հանձնաժողովներն ու նրանց անդամները կրում են պարտականություն և պատասխանատվություն, այնուամենայնիվ, վերջիններիս աշխատանքը բավարար միջոցների, մոտիվացիայի և փորձառություն բացակայության պայմաններում արդյունավետ չէ: Նման աշխատանք կարող են ապահովել միայն համայնքին կից մասնագիտացված սոցիալական ծառայությունները: Անհրաժեշտ է նշանակալից փոփոխություններ կատարել այս ոլորտում հանձնաժողովի անդամների մասնագիտական պատրաստվածությունը և իրենց կատարած աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացումը ապահովելու համար: Հարկավոր է ոլորտում իրականացնել նաև օրենսդրական փոփոխություններ՝ հստակեցնելու հանձնաժողովի անդամներին առաջադրվող պայմանները և նրանց կողմից կատարվող աշխատանքը: Թեև Նախարարության կողմից 2013 թվականին ստացված պատասխանի համաձայն՝ ՀՀ կառավարությունը 2012թ. հուլիսի 26-ին ընդունել է N 952-Ն որոշումը, որի արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրմամբ կկարգավորվեն նաև Պաշտպանի գրությամբ բարձրացված՝ երեխայի (ընտանիքի) կենսապայմանների հետազոտության, անհրաժեշտ սոցիալական ծառայությունների տրամադրման ողջ գործընթացի, դրա մոնիթորինգի և գնահատման հետ կապված

հարաբերությունները, այնուամենայնիվ, խնդիրը փաստացիորեն շարունակում է չլուծված մնալ՝ շարունակաբար առաջացնելով անբարենպաստ հետևանքներ երեխաների համար: Հիշյալ հանձնաժողովների առկայությունը ներկայումս կրում է գուտ ձևական բնույթ: 2013թ. ընթացքում բազմաթիվ են եղել այն դիմումները, որոնք ուղղված են եղել խնամակալության և հոգաբարձության մարմինների անգործությանը: Դեպքերի մի մասը վերաբերել է նրանց փաստացի անգործությանը, իսկ մյուս մասի համաձայն՝ հիշյալ մարմինները նույնիսկ տեղյակ չեն եղել իրենց համայնքում առկա խնդիրներից: Մտահոգիչ է նաև, որ բացակայում են խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության օրենսդրական մեխանիզմները:

Նախարարության անարդյունավետ գործունեության հետևանքով՝ շարունակվում են չլուծված մնալ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և ապաստան տրամադրելու, մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելու, հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման հարցերը: Ըստ Նախարարության կողմից հայտնած տեղեկատվության՝ 2013թ. մուրացկանությամբ զբաղվող ընդամենը 16 անչափահաս է վերցվել հաշվառման: Ողջունելի է, որ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի համար ստեղծվել է 3 կենտրոն՝ մեկը Գյումրիում, երկուսը՝ Երևանում: ՀՀ երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի 2013թ. ապրիլի 25-ի նիստում քննարկվել և 2013թ. նոյեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության պետի թիվ 3837-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կրթության նախարարության ներկայացուցիչները, և, որը կոչված է մարզերի համապատասխան կառույցների հետ կանխարգելել մուրացկանության և թափառաշրջիկության երևույթը: Այնուամենայնիվ, պարզ չէ՝ արդյոք վերոգրյալ 16 անչափահասները ապահովվել են ապաստանով, թե՛ ոչ: Բացի այդ, ըստ մեզ հայտնի աղբյուրների, թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների իրական թիվը գերազանցում է հաշվառվածներինը: Ուստի, առաջարկում ենք մշակել առավել արդյունավետ և համապարփակ քաղաքականություն՝ ուղղված 6-ից մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև ծնողների խնամքի տակ գտնվող, մուրացկանությամբ զբաղվող, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաների հայտնաբերմանն ու տրամադրվող սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական և անհրաժեշտ այլ ծառայությունների բարելավմանը:

Շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցը, քանի որ նույնիսկ նոր օրենքով նրանց համար չնախատեսվեցին բավարար պարտադիր աշխատանքի տեղեր: Այնինչ, հաշմանդամություն ունեցող անձանց համար զբաղվածությունը կենսական անհրաժեշտություն է, տնտեսական անկախության հնարավորություն: Պատահական չէ, որ Սահմանադիրը բնակչության զբաղվածությանը նպաստելը և հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ներգրավվելը դիտարկում է որպես պետության պոզիտիվ պարտականություններ: Նման դրույթ նախատեսված է նաև մի շարք ժողովրդավարական պետությունների համապատասխան օրենսդրություններում, ինչպես նաև միջազգային մի շարք պայմանագրերում: 2013թ.

դեկտեմբերի 11-ին ընդունված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա): Ընդ որում, օրենքով նախատեսվել է քվոտայի փուլային ներդրում: Արդյունքում, նշված օրենքով, հաշմանդամություն ունեցող անձանց քվոտայի պահանջը սահմանվում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական կազմակերպությունների համար՝ աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 3 տոկոսի չափով, ոչ պետական կազմակերպությունների համար՝ առնվազն 1 տոկոսի չափով: Այնինչ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի սկզբնական տարբերակում քվոտայի պահանջը սահմանվել էր հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական և ոչ պետական կազմակերպությունների համար՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի 5 տոկոսի չափով, չորս տարի հետո՝ հիսուն և ավելի աշխատողներ ունեցող պետական և ոչ պետական կազմակերպությունների համար՝ 5 տոկոսի չափով, իսկ հինգ տարի հետո՝ 20-ից մինչև 50 աշխատողներ ունեցող կազմակերպությունների համար կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի 5 տոկոսի չափով: Իհարկե, ողջունելի է, որ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է, որ պետական կազմակերպությունների համար քվոտայի պահանջն ուժի մեջ կմտնի 2015 թվականից, իսկ ոչ պետական կազմակերպությունների համար՝ 2016 թվականի, այնուամենայնիվ մտահոգիչ է, որ «Զբաղվածության մասին» արդեն իսկ գործող օրենքով զգալիորեն նվազել են հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող պարտադիր աշխատանքային քվոտաները: Պաշտպանի կողմից առաջարկվել էր վերանայել վերոգրյալ օրենքով սահմանված քվոտաները՝ համապատասխանեցնելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի սկզբնական տարբերակին, ինչը Նախարարության կողմից չի ընդունվել: Նշվածը խիստ մտահոգիչ է, քանի որ չի նպաստում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության պատշաճ ապահովմանն ու վերջիններիս հասարակական կյանքին ներգրավմանը և ինքնուրույնությանը: Ինչպես նաև, նախագծում չի հստակեցվում, թե հաշմանդամության որ ձևերի դեպքում է անձը ապահովվում քվոտավորված աշխատատեղով: Մասնավորապես, աշխատանքի ոլորտում հաշմանդամության հիմքով խտրականության են ենթարկվում տեսանելի հաշմանդամություն ունեցող անձինք, և նրանք են հատկապես խոցելի ու կարիք ունեն լրացուցիչ պաշտպանության պետության կողմից: Սա հաշվի առնելով՝ քվոտաներն ավելի արդյունավետ կծառայեն իրենց նպատակին, այն է՝ անձանց տնտեսական անկախության ապահովմանը և ինտեգրմանը, եթե դրանք սահմանվեն տեսանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բացի այդ, ըստ Նախարարության կողմից հայտնած տեղեկատվության, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային կենտրոններում 2013թ. ընթացքում հաշվառված է եղել 1310 հաշմանդամ, որոնցից աշխատանքի է տեղավորվել ընդամենը 200 անձ: Ավելին՝ առկա է եղել աշխատանքի ընդունված հաշմանդամների աշխատատեղերի կայունության ապահովման խնդիր: Այսպես, ըստ Նախարարության կողմից հայտնած տվյալների, աշխատանքի տեղավորված անձանցից 7-ը աշխատանքից ազատվել են առնվազն 6 ամիս աշխատելուց հետո, 11-ը՝ առնվազն 3 ամիս աշխատելուց հետո: Նշյալ

տվյալներից կարելի է եզրակացնել, որ բավարար միջոցներ պետության կողմից չեն ձեռնարկվել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի, զբաղվածության ապահովման խնդիրը լուծելու և/կամ բարելավելու համար:

Թերի օրենսդրության պատճառով, մի շարք աշխատողների չի հատուցվել աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պատճառված վնասը: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում քաղաքացիներն իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ ՀՀ կառավարության՝ 22.07.2004թ. թիվ 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 15.11.1992թ. թիվ 579-Ն որոշման 16-րդ կետը, որի համաձայն. «Կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին»: Կառավարության թիվ 1094-Ն որոշմամբ՝ նշված դրույթը ուժը կորցրած ճանաչվելու հետևանքով հարյուրավոր քաղաքացիներ, ովքեր տուժել են 2004թ. օգոստոսից հետո լուծարված կազմակերպություններում աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով, չեն ստացել վնասի փոխհատուցում: Մինչդեռ, ՀՀ կողմից վավերացված «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925թ. Կոնվենցիայի համաձայն՝ ազգային օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այնպիսի կարգավորումներ, որոնք պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց կապահովեն համապատասխան փոխհատուցման վճարում, եթե նման վճարում գործատուն կամ ապահովագրողն ի վիճակի չեն կատարել: Միաժամանակ, ՀՀ կողմից ընդունված և արդեն ուժի մեջ մտած «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992թ. Կոնվենցիայի համաձայն՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները: Միջազգային փորձի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նմանատիպ երաշխիքային հաստատություններ (միջազգային փորձում՝ Երաշխիքային ֆոնդ (Guarantee Fund) սկսել են գործել Արևմտյան Եվրոպայում դեռևս 1960-ական թվականներից՝ Բելգիա, Հոլանդիա, Շվեդիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Նորվեգիա, Ավստրիա, Չեխիայի Հանրապետություն, Էստոնիա, Հունաստան, Իտալիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Սլովակիա, Իսպանիա, ինչպես նաև՝ Շվեյցարիա, Ավստրալիա, Ճապոնիա, Իսրայել և այլն: Երաշխիքային հաստատություններին գործատուների մասնակցությունը պարտադիր բնույթ է կրում, որտեղ վճարումները կատարվում են՝ հաշվի առնելով աշխատավարձերի չափերը: Նման հաստատությունները բավարարում են աշխատողների պահանջները, երբ սնանկության ընթացքում գործատուն այլևս չունի միջոցներ պարտատերերի պահանջները բավարարելու համար: Մտահոգիչ է սակայն, որ Կառավարությունը ձեռնպահ է մնում «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիայով նախատեսված երաշխիքային հաստատությունների միջոցով աշխատողների պահանջների բավարարման մեխանիզմների ներդրումից: Նշվածը պատճառաբանվում է նրանով, որ երաշխիքային հաստատությունների ստեղծումը

կհանգեցնի գործատուների ֆինանսական բեռի ավելացմանը, քանի որ գործատուները պետք է որոշակի մասհանումներ կատարեն երաշխիքային հաստատություններին: Տվյալ մոտեցումը լրջորեն խոչընդոտում է խնդրի լուծումը, քանի որ առ այսօր ՀՀ քաղաքացիական օրենսգրքով իրավահաջորդի բացակայության դեպքում վնասի հատուցում կատարելու պարտականություն կրող կազմակերպություն կամ հատուցման որևէ համակարգ նախատեսված չէ: Նշենք նաև, որ Նախարարության և ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգը: Սակայն պարզ չէ նաև, թե այդ հայեցակարգի ընդունումը կարող է արդյոք լուծել առողջությանը վնաս պատճառած և փոխհատուցում չստացած անձանց խնդիրները մինչև համապատասխան օրենքի ընդունումը: Խիստ մտահոգիչ է նաև, որ դեռևս 2011թ. մշակված հայեցակարգը 2013թ. ընթացքում չի ընդունվել, քանի որ, ըստ Նախարարության, հայեցակարգային վերջնական լուծումները դեռևս գտնված չեն:

Սահմանվել է թաղման նպաստի նոր ֆիքսված չափ՝ 200.000 դրամ, որը շատ ավելի քիչ է, քան սահմանված է եղել նախկինում: Արդյունքում պակասել է կենսաթոշակատուների մահվան դեպքում նրանց ընտանիքի անդամներին վճարվող թաղման նպաստի չափը, որը նախկինում կազմել է կենսաթոշակի 25-պատիկը: Խնդրահարույց է Կառավարության՝ 2010թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1734-Ն որոշմամբ սահմանված թաղման նպաստի չափը: Խնդիրն այն է, որ մինչև 2010թ. նոյեմբերի 1-ը գործում էր «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, որով զինվորական կենսաթոշակատուի մահվան դեպքում նրա ընտանիքին վճարվում էր թաղման նպաստ՝ կենսաթոշակի 15-ապատիկի չափով, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» հին օրենքով աշխատանքային և սոցիալական կենսաթոշակատուների մահվան դեպքում տրվող թաղման նպաստը վճարվում էր կենսաթոշակի 25-ապատիկի չափով: Մինչդեռ, օրենսդրական փոփոխությունների արդյունքում միասնականացվել է կենսաթոշակատուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի չափը՝ կազմելով 200000 դրամ: Այսինքն, նշված փոփոխությունների հետևանքով, ըստ էության, պակասել է որոշ կենսաթոշակատուների մահվան դեպքում նրանց ընտանիքի անդամներին վճարվող թաղման նպաստի չափը: Մինչդեռ, համաձայն 2011թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» նոր օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասի՝ թաղման նպաստի սահմանվող չափը չի կարող պակաս լինել նախկին չափից: Նշված խնդրին ի պատասխան Նախարարությունից հայտնել են, որ վերոգրյալ փոփոխությունները տարածվել են 2010թ. նոյեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա, և դրանց հետադարձ ուժ չի տրվել, քանի որ թաղման նպաստի իրավունքը ծագում է կենսաթոշակատուի մահվան դեպքում: Այնինչ, մինչև Կառավարության կողմից թաղման նպաստի նոր չափը սահմանելը, համապատասխան անձինք ունեին մահվան դեպքում համապատասխան չափի թաղման նպաստի ստացման լեզիտիմ ակնկալիք, քանի որ այն սահմանվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 44-րդ հոդվածով, նախատեսելով տվյալ իրավահարաբերությունների առաջացում անձի կենսաթոշակային տարիքը լրանալուն պես, անկախ այն դեպքից՝ կենսաթոշակատուն մահացել է 2010թ. նոյեմբերի 1-ից առաջ, թե՛ հետո: Նշենք, որ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-649,

ՄԴՈ-723, ՄԴՈ-758, ՄԴՈ-881, ՄԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով, բազմիցս արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով»: Մինչդեռ, վերոգրյալ փոփոխությունների արդյունքում չի պահպանվել կենսաթոշակառուի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքը: Ուստի, նշված համատեքստում, գտնում ենք, որ վերը քննարկված փոփոխությունները պետք է տարածվեն ոչ թե 2010թ. նոյեմբերի 1-ից հետո կենսաթոշակառուների մահվան դեպքերի վրա, այլ 2010թ. նոյեմբերի 1-ից հետո համապատասխան կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց նկատմամբ:

Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով մարդիկ չեն կարողացել օրինական լիազորագրով ստանալ իրենց ազգականների նպաստները: Գործնականում, բազմաթիվ դեպքերում բարդություններ են առաջանում, երբ ՀՀ քաղաքացին, անձնական շարժառիթների պատճառով որոշ ժամանակ գտնվելով օտարերկրյա պետությունում (օր.՝ երկարատև բուժման և այլն) կամ գտնվելով ստացիոնար բուժման մեջ ՀՀ որևէ բժշկական հաստատությունում՝ հնարավորություն չի ունենում անձամբ ստանալու իրեն հասանելիք նպաստը: Նման և այլ դեպքերի համար, օրինակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում նախատեսված է ներկայացուցչության ինստիտուտը: Նշված օրենքը հստակորեն սահմանում է, որ կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարի տրամադրումն է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հստակ սահմանում է լիազորագրի ինստիտուտը և նախատեսում է լիազորագրի միջոցով մի շարք գործողությունների կատարումը, այդ թվում նաև՝ նպաստ ստանալու հնարավորությունը: Ավելին, օրենսգիրքը այդ դեպքի համար նույնիսկ նախատեսում է լիազորագրի ստացման ավելի հեշտ ընթացակարգ. համաձայն 321-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ լիազորագիր ստացողն

աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ»: Հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի հստակ պահանջն է, որ այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն (այսինքն՝ ՀՀ քաղաքացիական) օրենսգրքին: Ավելին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին: Այնինչ, «Պետական նպաստների մասին» ՀՀ գործող օրենքում վերը նկարագրված դեպքերի համար որևէ կարգավորում նախատեսված չէ: Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել անձի հնարավորությունը՝ լիազորագրի միջոցով ստանալու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած տեսակի նպաստ:

Օրենքների միջև առկա հակասությունների հետևանքով, կենսաթոշակատուի մահվան դեպքում իր հարազատները հիմնականում չեն կարողացել որպես ժառանգություն ստանալ հանգուցյալին չվճարված կենսաթոշակը: Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կենսաթոշակատուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակատուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Նշված ժամկետում չդիմելու դեպքում՝ կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակատուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է առանձին կարգավորում աշխատավարձի, թոշակների, նպաստների և վնասի հատուցման վճարների չնուժված գումարների ժառանգության վերաբերյալ: Մասնավորապես, օրենսգրքում նշվում է, որ վճարման ենթակա, սակայն քաղաքացու կյանքի օրոք որևէ պատճառով չվճարված նշված գումարները վճարելու վերաբերյալ պահանջները պետք է ներկայացվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, Օրենսգրքի նույն հոդվածում նշվում է, որ մահացածին չվճարված գումարները մահացածի ընտանիքի անդամներին, ինչպես նաև նրա խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձանց բացակայության կամ նրանց կողմից այդ գումարները սահմանված ժամկետում վճարելու պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան գումարները ներառվում են ժառանգության զանգվածի մեջ և ժառանգվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով: Ժառանգական իրավունքի ընդհանուր դրույթների համաձայն՝ թեև ժառանգության ընդունման համար վեցամսյա ժամկետ է նախատեսում, այնուամենայնիվ, նույն ընդհանուր դրույթները նաև սահմանում են, որ ժառանգությունն առանց դատարան դիմելու կարող է ընդունվել նաև այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը, ինչպես նաև՝ ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողնման պատճառները հարգելի համարելու նպատակով դատարան դիմելու

հնարավորություն: Այսինքն, ստացվում է, որ Օրենքը կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ժառանգություն ստանալու համար պահանջում է համապատասխան փաստաթղթերը ներկայացնել առավելագույնը 12 ամսվա ընթացքում, իսկ Օրենսգիրքը որոշակի պայմանների առկայության դեպքում նման ժամանակային սահմանափակում չի նախատեսում: Սույն իրավիճակը չի բխում «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից, որի համաձայն՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում ՀՀ մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին: Նշվածը խնդրահարույց է նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի իրականացման տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածն ամրագրում է, որ «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ՝ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: Այս առումով հատկանշական է ՀՀ Սահմանադրական դատարանի 04.10.2006թ. թիվ ՄԴՌ- 649 որոշումը, որում դատարանը նշել է, որ «Կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը քաղաքացու վաստակած միջոցներ են և նրա սեփականությունը: ... Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործը)»: Ողջունելի է, որ Նախարարությունը նկարագրված իրավիճակը նույնպես խնդրահարույց է գնահատել, ինչի արդյունքում նախատեսվում է առաջիկայում կազմակերպել համատեղ քննարկումներ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նշված հարցը կարիք ունի լուծման հնարավորինս սեղմ ժամկետներում՝ հաշվի առնելով, որ գործող իրավակարգավորման արդյունքում շարունակվում են խախտվել բազմաթիվ քաղաքացիների իրավունքները:

Առանձին դեպքերում Նախարարությունը մերժել է օտարերկրյա նոտարների և Հայաստանի դեսպանության հյուպատոսների վավերացրած լիազորագրով հաշմանդամության կենսաթոշակ տրամադրելը՝ խախտելով օրենքը և Սահմանադրական դատարանի որոշումը, պատճառաբանելով, որ կենսաթոշակը վճարվում է ՀՀ-ում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագիրը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում, իսկ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները ոչ թե նոտարներ են, այլ ՀՀ անունից նոտարական գործողություններ են կատարում այլ պետությունների տարածքում: Այնինչ, հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի: Իսկ «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նոտարական գործողությունները կատարվում են ՀՀ հյուպատոսական հիմնարկներում: Բացի այդ, 02.10.2012թ. թիվ ՄԴՌ-1050 որոշմամբ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն առանձնացնում է այն սուբյեկտներին, որոնց կողմից տրված լիազորագրերը հավասարեցված են նոտարի կողմից հաստատվող լիազորագրերին: Ավելին, օրենսգիրքը հատուկ իրավակարգավորում է նախատեսում որոշակի դեպքերի, այդ թվում՝ կենսաթոշակ ստանալու լիազորագրի վերաբերյալ, համաձայն որի՝ կենսաթոշակ ստանալու

լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ կենսաթոշակառուն աշխատում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ: Վերոնշյալի առնչությամբ Պաշտպանը Նախարարությանն առաջարկել է ապահովել իրավակիրառ պրակտիկայի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանությունը, ինչը մերժվել է Նախարարության կողմից:

Օրենքով չեն սահմանվել և «մասնագիտական աշխատանքային ստաժ»-ին չեն հավասարեցվել «մասնագիտական ստաժ» ու «գիտամանկավարժական ստաժ» հասկացությունները, ինչի հետևանքով մի շարք անձինք կարող են գրկվել այն արտոնություններից, որոնք նախատեսված են մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձանց համար (օրինակ՝ աշխատանքի ընդունվելիս, կենսաթոշակ ստանալիս և մի շարք այլ դեպքերում): Այսպես՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը «մասնագիտական աշխատանքային ստաժը» բնութագրում է որպես ստաժ, որում հաշվարկվում են այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել է որոշակի մասնագիտությամբ աշխատանք կամ զբաղեցվել է որոշակի պաշտոն կամ կատարվել է աշխատանք առանձնահատուկ պայմաններում, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել տվյալ տիպի աշխատանքային ստաժում: Թեև «մասնագիտական ստաժ» և «գիտամանկավարժական ստաժ» եզրույթները կիրառվում են տարբեր իրավական ակտերում և իրավական ակտերի նախագծերում, այնուամենայնիվ, այդ եզրույթների բովանդակությունը որևէ իրավական ակտում բացահայտված չէ, ինչը հնարավորություն է տալիս պրակտիկայում դրանց տալ տարբեր կամայական մեկնաբանություններ: Արդյունքում, գործնականում գրանցվել են դեպքեր, երբ անձի «մասնագիտական ստաժը» և «գիտամանկավարժական ստաժը» պետական համապատասխան մարմնի կողմից երբեմն չի դիտարկվել որպես «մասնագիտական աշխատանքային ստաժ»՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի բովանդակությանը համապատասխան: Նախարարության կողմից տրված պարզաբանման համաձայն՝ «մասնագիտական ստաժ» և «մասնագիտական աշխատանքային ստաժ» հասկացություններն ունեն բովանդակային նույն իմաստը՝ թեև «մասնագիտական ստաժ» հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, ինչպես նաև՝ անձի մասնագիտական որակավորմանը համապատասխանող գիտամանկավարժական ստաժը պետք է համարվի մասնագիտական աշխատանքային ստաժ՝ նկատի ունենալով գիտամանկավարժական աշխատանքների բնույթը: Նախարարությունը հավելել է նաև, որ նշված ինդրահարույց հարցերը կքննարկվեն ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման ժամանակ:

Պաշտպանին հասցեագրված մի շարք այլ դիմումներում բարձրացվել է, ՀՀ օրենսդրությամբ սահմանված, աշխատանքային գրքույկում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին քավարաք տվյալներ չլինելու պարագայում կազմակերպությունից համապատասխան տեղեկանք ներկայացնելու պահանջի ոչ իրավաչափության հարցը, քանի որ կազմակերպությունները, որտեղ աշխատել են

դիմումատուները, վաղուց լուծարվել են, չունեն իրավահաջորդ, և այնտեղից տեղեկանքներ կայացնելը դառնում է անհնարին: Ավելին, քաղաքացիների աշխատանքային բնույթը հաստատող արխիվային տեղեկանքը այս պարագայում չի ընդունվում որպես արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք հավաստող փաստաթուղթ, երբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում նախատեսվում է ընդհանուր նորմ, որի համաձայն աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ ՀՀ կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Փաստորեն, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 2 հավելվածի 39-րդ կետով սահմանված մասնավորեցնող նորմը սահմանափակում է քաղաքացիների արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ նախատեսելով միայն գործատու հանդիսացող կազմակերպության կողմից տրված տեղեկանքի առկայություն, մինչդեռ համարժեք տեղեկատվությունը կարող է հաստատվել նաև արխիվային տեղեկանքով (գործատու կազմակերպության լուծարման դեպքում): Մեր գնահատմամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնյալ կենսաթոշակ ստանալու իրավունքի նման սահմանափակումը չունի որևէ օբյեկտիվ հիմնավորում և չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից: Միաժամանակ, «բավարար» եզրույթի սահմանումով կառավարության որոշմամբ չի հստակեցվում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին տվյալների ցանկը, որը հնարավորություն է տալիս պետական մարմնին աշխատանքային գրքույկում առկա տվյալները գնահատել ոչ բավարար և անձին գրկել արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքից: Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել օրենսդրական կարգավորման ճանապարհով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված սահմանափակման վերացման և «բավարար» եզրույթի հստակեցման ուղղությամբ: Հետագայում Նախարարությունը հայտնել էր, որ շրջանառության մեջ է գտնվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի շրջանակներում կհստակեցվի խնդրո առարկա՝ «բավարար» եզրույթի կիրառական նշանակությունը, ինչը ողջունելի է, սակայն մտահոգիչ է, որ խնդիրը դեռևս շարունակում է մնալ, ըստ էության, չլուծված: Արդյունքում՝ ստացվում է, որ օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով շատ քաղաքացիներ գրկվում են կենսաթոշակ ստանալու իրավունքից: Օրինակ, քաղաքացի Ա.Մ.-ի՝ 1951-1964թթ. Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանի տեխնիկական վերահսկողության բաժնում որպես հսկիչ, այնուհետև կենտրոնական և արտադրամասի լաբորատորիաներում որպես լաբորանտ աշխատած ժամանակահատվածի աշխատանքային ստաժի նկատմամբ արտոնյալ հաշվարկման կարգ չկիրառելու և դրան համապատասխան կենսաթոշակը վերահաշվարկելու պահանջի մերժման վերաբերյալ Նախարարությունը հայտնել էր, որ նշված ժամանակահատվածում Երևանի «Պոլիվինիլացետատ գործարանի տեխնիկական վերահսկողության բաժնում որպես հսկիչ, այնուհետև կենտրոնական և արտադրամասի լաբորատորիաներում որպես լաբորանտ

աշխատած ժամանակահատվածի առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում թիվ 1 ցուցակով արտոնյալ պայմաններով աշխատանքային ստաժ հաշվառելու մասին պահանջն անհիմն է, քանի որ այդ պաշտոններն ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենսդրությամբ թիվ 1 ցուցակում նախատեսված չեն»: Սակայն հարկ ենք համարում նշել, որ ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենսդրությամբ (ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1987-Ն որոշում (ուժը կորցրած է ճանաչվել 06.02.2012թ.) և 12.01.2012թ. թիվ 12-Ն որոշում) սահմանվում է քիմիական և նավթաքիմիական արդյունաբերության ճյուղերի ձեռնարկությունների բանվորների, ղեկավարների և մասնագետների, ովքեր լրիվ աշխատանքային օրը զբաղված են ստորև թվարկվող արտադրություններում և աշխատանքներով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքը .

- 1080Ա010 ակրիլային և մեթակրիլային թթուների և դրանց ածանցյալների պոլիմերների և հակապոլիմերների, պարզ վինիլային եթերների պոլիմերների, պոլիէթիլենտերեֆտալատներ, բուտադիենի, պոլիիզոբուտիլենի, իզոպրենի, լատեքսների
- 1080Ա010 աշխատողներ, ովքեր աշխատում են հատուկ արտադրություններում (ներառյալ՝ գլանատակառներ, տարողություններ մաքրելը, հատուկ արտադրությունների և քիմիական նյութերի համար նախատեսված ապրանքամաններ լվանալը, նորոգելը և մշակելը) և քիմիական հատուկ նյութերի լաբորատորիաներում:

Սույն հիմնավորմանը Նախարարությանը հետագայում պատասխանել է, որ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5 -ի N 665-Ն որոշման N 2 հավելվածի 39-րդ կետով սահմանված՝ «կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու» կանոնների համաձայն՝ եթե աշխատանքային գրքույկում չկան արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար՝ ՀՀ կառավարության հաստատած N 1 և N2 ցուցակներում նշված մասնագիտություններին և պաշտոններին ամբողջությամբ համապատասխանող տվյալներ, ապա աշխատանքի բնույթը հաստատվում է կազմակերպության տված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մասին տեղեկանքով: Մինչդեռ, քաղաքացի Ա.Մ.-ի աշխատանքային գրքույկում կան 1951-1964թթ. ընկած ժամանակահատվածն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատած N 1 և N 2 ցուցակներում նշված մասնագիտություններին և պաշտոններին ամբողջությամբ համապատասխանող տվյալներ, որոնք ներկայացվել էին կենսաթոշակը տրամադրող մարմնին:

Պաշտպանին հասցեագրվել են դիմումներ, որոնցով քաղաքացիները հայտնել են, որ շատ դեպքերում համապատասխան մարմինը կամայականորեն է մեկնաբանում օրենսդրական որոշ կարգավորումները, ինչի հետևանքով անձին չի տրամադրվում ժամանակավոր անաշխատունակության նպաստ համապատասխան ժամանակահատվածի համար: Օրինակ, քաղաքացի Ս.Հ.-ն Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ

2011թ. դեկտեմբերի 30-ին ընդունվել է աշխատանքի ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության Վայոց ձորի մարզային գործակալությունում՝ կնքելով որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, որի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը: Կնքված պայմանագիրը լուծվել է 2013թ. հուլիսի 15-ին հիմնական աշխատողի վերադարձի հիմքով, իսկ վերջինիս ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվել և վճարվել է 04.07.2013-15.07.2013թթ. ընկած ժամանակահատվածի՝ 7 աշխատանքային օրերի համար: Մինչդեռ, հայտնի է, որ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով, նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի՝ նույն օրենքով սահմանված օրերի համար, բայց ոչ ավելի, քան մինչև օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիրը լուծելը (աշխատանքից ազատվելը), որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը (անկախ լուծվելու հանգամանքից): Այսինքն, համաձայն օրենսդրության՝ Ս.Ն.-ի ժամանակավոր անաշխատունակության նպաստը պետք է հաշվարկել մինչև 31.12.2013թ. (պայմանագրի ժամկետի ավարտը): Այնինչ, նշվածի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է այն ժամկետները, որից հետո ընկած ժամանակահատվածի համար ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի կարող վճարվել: Նախարարությունը մեկնաբանել է նաև, որ նշված հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ որևէ դեպքում, անկախ աշխատանքային պայմանագրի տեսակից, աշխատանքային պայմանագիրը լուծելուն (աշխատանքից ազատվելուն) հաջորդող ժամանակահատվածի համար ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի կարող վճարվել (ընդհանուր կանոն), իսկ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի հետ կապված դրույթը ոչ թե ընդհանուր կանոնից բացառություն է, այլ առանձնահատկություն, որը սահմանված է ի լրումն ընդհանուր կանոնի: Այնինչ, նշենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը հստակորեն սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Ուստի, ակնհայտ է, որ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ Նախարարության մեկնաբանությունը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, և հետևապես իրավաչափ չէ:

2013թ. Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ «Ժամանակավոր անաշխատունակության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ: Խնդիրն այն է, որ նշված դրույթի համաձայն՝ բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի, որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին նպաստ նշանակվում է, եթե նա վերջին 1 տարվա ընթացքում՝ մինչև ժամանակավոր անաշխատունակության ծագումը, աշխատել է 3 ամսից ոչ պակաս կամ վերջին 2 տարվա ընթացքում՝ 10 ամսից ոչ պակաս: Արդյունքում, եթե վերջին 1 տարվա ընթացքում անձի ժամանակավոր անաշխատունակությունը ծագել է մինչև 3 ամիսը, իսկ վերջին 2 տարվա ընթացքում՝ մինչև 10 ամիսն ընկած ժամանակահատվածում, ապա նա զրկվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իրավունքից: Նշված կարգավորումները լուրջ մտահոգության տեղիք են տալիս, քանի որ ժամանակավոր

անաշխատունակությունը, ըստ էության, ի հայտ է գալիս անկախ անձի կամքից: Այսինքն, անձը, ըստ էության չի կարող կանխատեսել՝ արդյո՞ք ժամանակավոր անաշխատունակությունը կարող է առաջանալ վերը նշված ժամկետների ընթացքում, թե նախքան այդ ժամկետների լրանալը: Ի պատասխան նշված խնդրին՝ Նախարարությունից տեղեկացրել էին, որ առաջիկայում շրջանառության մեջ կդրվի համապատասխան օրենքի նախագիծ, որով նաև լուծում կտրվի վերոգրյալ խնդրին, այսինքն՝ կսահմանվեն նպաստի իրավունքի նույնական պայմաններ բոլոր վարձու աշխատողների համար՝ անկախ աշխատանքային պայմանագրի տեսակից: Բայց նայնպես, մինչ համապատասխան օրենսդրական կարգավորումը, մի շարք վարձու աշխատողներ ժամանակավոր անաշխատունակության ի հայտ գալու դեպքում զրկված են լինելու նպաստի իրավունքից:

Մեկ այլ խնդիր վերաբերում է այն դեպքերին, երբ թաղման նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին համապատասխան մարմինների կողմից մերժվում է նպաստի տրամադրումը՝ պահանջելով ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթեր, ինչը, սակայն, որոշ դեպքերում (օրինակ՝ ստորև ներկայացված դեպքում) չի բխում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Օրինակ, քաղաքացի Հ.Բ.-ն 2013թ. հունիսի 20-ին դիմել է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին՝ ներկայացնելով ՀՀ իրավասու մարմնի կողմից իր կնոջ հոր՝ Վ.Ա.-ի մահվան վկայականը՝ թաղման նպաստը ստանալու նպատակով: Սակայն դիմումը մերժվել է, պատճառաբանվելով, որ ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման ուժով, եթե մահվան վկայականը տրված է օտարերկրյա պետության կողմից, կամ ՀՀ իրավասու մարմնի կողմից տրված մահվան վկայականում կատարված գրառման համաձայն կենսաթոշակատուն մահացել է օտարերկրյա պետությունում, պահանջվում է գերեզմանատան տնօրինության տված տեղեկանքն անձին ՀՀ-ում հուղարկավորելու մասին: Այնինչ, վերոհիշյալ որոշման պահանջը տարածվում է միայն այն իրավահարաբերության վրա, երբ անձը հուղարկավորվում է Հայաստանի Հանրապետությունում: Իսկ Հ.Բ.-ի դիմելու պահին գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ թաղման նպաստը նշանակվում է, եթե հուղարկավորությունը կատարվել է Հայաստանի Հանրապետությունում կամ մահվան վկայականը տվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը: Նշված պարագայում Վ.Ա.-ն հուղարկավորվել է Վրաստանի Հանրապետությունում, մահվան վկայականը տրվել է ՀՀ իրավասու մարմնի կողմից, ինչն էլ բավարար է թաղման նպաստ վճարելու համար: Այսինքն, Հ.Բ.-ից Վ.Ա.-ին Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորելու մասին գերեզմանատան տնօրինության կողմից տրվող տեղեկանք պահանջելը չի բխում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Նշված իրավական ակտերի վերլուծությունից պարզ է դառնում, որ թաղման նպաստի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ նախատեսվել է այնպիսի դրույթ (մասնավորապես սահմանվել է ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 16-ի թիվ 1084-Ն որոշմամբ) և

իրավակարգավորում, որը ենթադրում և կյանքի է կոչում օրենքով («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք) սահմանված թաղման նպաստ ստանալու իրավունքի ծագման միայն մեկ պայմանը, այն է՝ մահացածի՝ ՀՀ-ում հուղարկավորված լինելը: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, այդ պահին գործող օրենքի դրույթները նախատեսում են թաղման նպաստի իրավունքի ծագման այնպիսի պայման, երբ կենսաթոշակառուի թաղման վկայականը տրվել է ՀՀ իրավասու մարմնի կողմից՝ անկախ ՀՀ-ում հուղարկավորված լինելու հանգամանքից: Փաստորեն, Նախարարության աշխատակիցների կողմից չի պահպանվել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի ուղղակի պահանջը, Հ.Բ.-ին չի վճարվել Վ.Ա.-ի թաղման նպաստը՝ խախտելով քաղաքացու իրավունքները: Առաջարկվել է միջոցներ ձեռնարկել թաղման նպաստը, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, քաղաքացուն վճարելու ուղղությամբ: Այնինչ, Նախարարության կողմից ստացվել է պատասխան, որի համաձայն՝ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակիցների գործողությունները եղել են իրավաչափ, և բացակայում է քաղաքացի Հ.Բ.-ի իրավունքների որևէ խախտում: Գտնում ենք, որ օրենքի և Կառավարության որոշման միջև նույնիսկ չնչին անհամապատասխանության դեպքում Նախարարությունը պետք է հետևողական գտնվի, որպեսզի գործնականում նման դեպքերով կիրառվեն օրենքի դրույթները՝ որպես ավելի քարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ:

2013 թ. կրկին ստացվել են բողոքներ, որոնք վերաբերել են գործատուների կողմից անձանց արտադրական խեղման համար վնասի փոխհատուցման ոչ իրավաչափ դադարեցմանը: Պաշտպանին հասցեագրված քաղաքացիների դիմումներից պարզ է դարձել, որ աշխատանքի ընթացքում ստացված արտադրական խեղման համար աշխատողին նշանակվել է վնասի փոխհատուցում, սակայն վնասի փոխհատուցումը վճարելը դադարեցվել է գործատուի կողմից՝ պատճառաբանելով, որ քաղաքացին ձեռք է բերել կենսաթոշակի իրավունք: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածը, որով կարգավորվում է վերոնշյալ խնդիրը, նման դադարեցման հիմք չի նախատեսում: Գրանցվել են նաև դեպքեր, երբ ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից հղում է կատարվել ՀՀ վճարեկ դատարանի 14.10.2005թ. թիվ 3-2004 (ՎԴ) քաղաքացիական գործով որոշմանը և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 13.01.2006թ. թիվ 06-206 վճռին, որոնց համաձայն՝ ՀՀ վճարեկ և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտել են այն դիրքորոշումը, որ քաղաքացու կենսաթոշակի անցնելու հիմքով առողջությանը պատճառած վնասի հատուցման հիմքերը վերանում են: Գտնում ենք, որ նշված որոշումը կիրառելի է եղել միայն այդ գործի շրջանակներում և չի կարող կիրառվել որպես նախադեպային որոշում: Ավելին, Վճարեկ դատարանն իր 27.12.2011թ. որոշմամբ սահմանել է, որ առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը: Բարձրաձայնված խնդրի շրջանակներում Պաշտպանի կողմից կայացվել է 2 քաղաքացիների իրավունքների խախտման որոշում: Նշվածի կապակցությամբ Նախարարության աշխատանքի պետական տեսչությունում 2013թ. հուլիսին

իրականացված վարչական վարույթի արդյունքներով քաղաքացիների առողջությանը պատճառած վնասի փոխհատուցման գումարները վճարելու պահանջով գործատուին մինչև 2013թ. օգոստոսի 15-ը տրվել է պարտադիր կատարման հանձնարարականը: Նշյալ ժամկետը երկարաձգվել է Նախարարության աշխատանքի պետական տեսչության՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության վերակազմավորվելուց հետո մինչև 2014թ. փետրվարի 5-ը, սակայն նշված քաղաքացիների խախտված իրավունքներն առ այսօր չեն վերականգնվել:

Խնդրահարույց է մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու հարցը: Նշված խնդրին ի պատասխան՝ Կառավարության կողմից դեռևս 2012թ. մշակվել էր մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու նոր հայեցակարգ, որով պետությունը պարտավորվում է վերջիններիս ապահովել բնակելի տարածքներով: Արդյունքում, ՀՀ կառավարության 02.08.2012թ. N 1009-Ն որոշմամբ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է հանձնվել Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղու 3/14 հասցեում գտնվող ուսումնաարտադրական մասնաշենքը, որտեղ կառուցվում են հանրակացարանային տիպի մի քանի տասնյակ բնակարաններ, ինչպես նաև հաստատվել են ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի NN 25, 33 և 34 հասցեներում գտնվող շենքերում բնակարան ստացող մանկատան 35 շրջանավարտների ցուցակները: Միաժամանակ, Կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ, կարգավորվում են նաև բնակելի տարածության կարիք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքներին) հաշվառելու, հերթացուցակի ձևավորման, կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ, N 894-Ն որոշմամբ բնակելի տարածությունից օգտվելու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) ցուցակը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Արդյունքում՝ մանկատաների մի շարք շրջանավարտներ շարունակում են զրկված մնալ անհրաժեշտ բնակելի տարածքից: Բացի այդ, մտահոգիչ են Կառավարության վերոգրյալ N 894-Ն որոշման կարգավորումները, այնքանով, որ սոցիալական տան կացարանների թվաքանակի բաշխումը իրականացնելիս բացառվում է նույն հասցեում գտնվող կացարաններում որևէ սոցիալական խմբին կացարանների 50%-ից ավելի թվաքանակի տրամադրումը: Մինևույն ժամանակ, նույն խմբին տրամադրվող բնակարանների նվազագույն թվաքանակը, նշված որոշմամբ, որևէ կերպ չի սահմանվում: Հաշվի առնելով, որ մանկատան շրջանավարտներին հատկացվելիք նույն հասցեում գտնվող կացարանների թիվը մնում է անորոշ՝ կախված հայեցողական լիազորություններից, Պաշտպանի աշխատակազմի կողմից առաջարկվել էր սահմանափակել ոլորտի լիազոր մարմնի պաշտոնատար անձանց անհարկի հայեցողական լիազորությունները և հստակեցնել մանկատան շրջանավարտներին հատկացվելիք նույն հասցեում գտնվող կացարանների թիվը: Նշված առաջարկը, սակայն, որոշման նախագծում չի ներառվել:

Հասարակության զարգացման կարևորագույն գրավականներից է հանդիսանում երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ և ծրագրեր ուղղված մանկատաների բեռնաթափմանը և այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելմանը, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուն,

խնամակալության, որդեգրման հանձնելուն, խնամատար ընտանիքներ ստեղծելուն և որդեգրումը խթանելուն: Ողջունելի է «Զատիկ», «Թոչունյան տուն», Մ. Իզմիրյանի անվան մանկատների վերակազմակերպումը, համապատասխանաբար, երեխաների աջակցության կենտրոնի, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ խնամքի հաստատության, մասնագիտացված մանկատան, ինչպես նաև թվով 17 երեխաների ցերեկային կենտրոնների (4՝ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ համաֆինանսավորմամբ Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքներում, 13-ը՝ հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված) բացումը: Ողջունելի է նաև «Հայաստանի Հանրապետության խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիք կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանը ներկայացված որոշման նախագիծը: Այնուամենայնիվ, չնայած նշված միջոցառումներին, մանկատների բեռնաթափման խնդիրը չի ստացել համակարգային լուծում: Մասնավորապես, Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ ապրում են մտավոր և ֆիզիկական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, ունի գերբեռնվածության լուրջ խնդիր: Չնայած նրան, որ հաստատությունը նախատեսված է մինչև 18 տարեկան երեխաների համար, այնտեղ 2013թ. դրությամբ ապրում են, նույնիսկ, մինչև 35 տարեկան մոտ 100 անձինք: Մինչև հիմա գործող պրակտիկայի համաձայն՝ նրանցից հատկապես հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցողները, 18 տարեկանը լրանալուց հետո տեղափոխվել են Վարդենիսի տուն-ինտերնատ: Սակայն այժմ գործնականում դա նույնպես չի ապահովվում, քանի որ վերջինս նույնպես գերբեռնված է և ազատ տեղ չունի: Արդյունքում՝ մանկատանն առաջացել է գերբեռնվածություն. նոր երեխաներն ավելանում են, բայց շրջանավարտներ չկան: Բացի այդ, միջազգային փորձում ընդունված է խնամատար ընտանիքների ինստիտուտը, որի նպատակն է մանկատների երեխաներին հանձնել ընտանիքների դաստիարակությանը: Ավելին, այս ինստիտուտը նպաստում է խնամատար ընտանիքներում գտնվող երեխաների՝ մանկատներից դուրս հետագա կյանքի կազմակերպման և անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Այնինչ, այսօր ՀՀ-ում խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանը նպաստող գործոնները բացակայում են, իսկ ՀՀ կառավարությունը նշված ինստիտուտի՝ որպես մանկատների այլընտրանք, խթանման համար չի ձեռնարկում նշանակալից և արդյունավետ միջոցներ:

2013 թվականի ընթացքում կենտրոնացված հաշվառման տվյալներով մանկատներից որդեգրվել է որևէ հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող ընդամենը 33 երեխա: Նշվածը վկայում է հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման ուղղությամբ անհրաժեշտ համալիր քայլերի բացակայության մասին: Մրան ավելանում են նաև պրակտիկայում գործող անհարկի քաջքուկներն ու ավելորդ խոչընդոտները, որոնց արդյունքում երեխայի որդեգրումը դառնում է խրթին գործընթաց: Արդյունքում՝ սահմանափակվում է հաշմանդամություն ունեցող երեխաների ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված՝ ընտանիքում ապրելու իրավունքը:

ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման արդյունքում վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության: Հասկանալի է, որ նման փոփոխությունները տեղի են ունեցել օրենսդրական պահանջների խախտմամբ: Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացնում է աշխատանքի պետական տեսչությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ պետական մարմիններ: Միաժամանակ, դեռևս շարունակում է գործել «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը: Այսինքն, թեև Կառավարության վերոգրյալ 857-Ն որոշմամբ դադարեցվել է Աշխատանքի պետական տեսչության գործունեությունը՝ որպես առանձին կառույց, նոր՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը ստեղծվել է՝ շրջանցելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդվածը և գործող «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության դիրքորոշման՝ գործող Առողջապահական պետական տեսչությունը, Կառավարության վերոնշյալ որոշմամբ, հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդը: Սակայն պարզ չէ, թե ինչպես կարող է Կառավարության որոշմամբ սահմանվել նման դրույթ՝ չկատարելով անհրաժեշտ փոփոխություններ համապատասխան օրենքի մեջ: Նշենք, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի, ինչպես նաև Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: Հետևաբար, պարզ չէ, թե ինչ իրավական հիմքով է գործում Նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը, հաշվի առնելով, որ ըստ «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ներկա կարգավորումների շարունակում է գործել Աշխատանքի պետական տեսչություն մարմինը: Ուստի, գտնում ենք, որ ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 857-Ն որոշման և նշված իրավական ակտերի միջև առկա է անհամապատասխանության հարց:

Առաջարկություններ

- Միջոցներ ձեռնարկել նվազագույն աշխատավարձի չափը նվազագույն սպառողական զամբյուղի չափին համապատասխանեցնելու և դրանց վերաբերյալ նոր ուսումնասիրություններ իրականացնելու ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել բազմազավակ ընտանիքներին բավարար սոցիալական աջակցություն տրամադրելու հարցում:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ, այդ թվում նաև օրենսդրական՝ ուղղված արհեստակցական միությունների կայացմանը:
- Միջոցներ ձեռնարկել վերհանելու և կանխելու կնքված աշխատանքային պայմանագրի օրինակն աշխատողին չտրամադրելու, աշխատավարձ չվճարելու, արտադրական խեղման (առողջության քայքայում) համար վճարվող փոխհատուցումը ապօրինի դադարեցնելու և աշխատանքային մի շարք այլ իրավունքների խախտման դեպքերը:
- Հետևողական գտնվել՝ ապահովելու համար համապատասխան մարմինների կողմից, Սահմանադրական դատարանի որոշմամբ, օրենսդրական փոփոխություններ իրականացնելու պահանջների պրակտիկայում կատարումը՝ կանխելու համար կենսաթոշակային տարիքի հասնելու պատճառով անձանց աշխատանքից ազատելու դեպքերը:
- Հետևողական գտնվել սոցիալապես անապահով քաղաքացիներին օրենքով հասանելիք բնակարանների տրամադրումն առանց որևէ ձգձգումների իրականացման հարցում: Միաժամանակ, միջոցներ ձեռնարկել անձանց շահերը ոտնահարած պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու համար:
- Օրենսդրական բարեփոխումներ իրականացնել՝ ապահովելու համար Խնամակալության և հոգաբարձության ինստիտուտի արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության վստահությունը:
- Արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ լուծելու թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և ապաստան տրամադրելու, մանկատներում երեխաների քանակի նվազեցման և դրանց շրջանավարտներին բնակարանով ապահովելու, հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման խնդիրները:
- Զբաղվածության մասին ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ ավելացնելով հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված պարտադիր աշխատանքային քվոտաները:
- Օրենսդրորեն սահմանել աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը (դժբախտ դեպքեր և մասնագիտական հիվանդություններ) հատուցելու կարգը:
- Վերանայել թաղման նպաստի նոր չափի սահմանմանն առնչվող օրենսդրական կարգավորումները՝ ապահովելու համար կենսաթոշակառուի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքը:

- Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները՝ օրենսդրորեն նախատեսել անձի հնարավորությունը՝ լիազորագրի միջոցով ստանալու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած տեսակի նպաստ :
- Հարմոնիզացնել տարբեր օրենքների հակասական դրույթները՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում վերջինիս ժառանգների համար ապահովելու չվճարված կենսաթոշակը՝ որպես ժառանգություն ստանալու իրավունքը:
- Հետևողական գտնվել օրենքի և Սահմանադրական դատարանի որոշման պահանջների կատարմանը՝ ապահովելու համար արտերկրում գտնվող Հայաստանի քաղաքացիների՝ այնտեղի նոտարների, ՀՀ դեսպանության հյուպատոսների վավերացրած լիազորագրով կենսաթոշակ ստանալու իրավունքը :
- Օրենսդրորեն նախատեսել «մասնագիտական ստաժ» ու «գիտամանկավարժական ստաժ» եզրույթների նույնականությունը «մասնագիտական աշխատանքային ստաժ» եզրույթին:
- Օրենսդրական կարգավորման ճանապարհով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված սահմանափակումը վերացնել և հստակեցնել «բավարար» եզրույթը :
- Հետևողական լինել՝ կանխելու համար պրակտիկայում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի դրույթների կամայական մեկնաբանությունը և մեկնաբանել դրանք «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջների համաձայն :
- Մշակել օրենսդրական համապատասխան կարգավորումներ՝ ուղղված «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի վերանայմանը:
- Հետևողական գտնվել, որ թաղման նպաստ տրամադրելիս համապատասխան մարմինը պահպանի առաջին հերթին «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ, այնուհետև՝ ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման համապատասխան դրույթները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առողջապահության նախարարության նպատակներն ու խնդիրներն են հանրության և ամեն մարդու առողջության պահպանումը, բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, աշխատողների առողջության պահպանումը, հանրապետությունում արտադրվող և ներմուծվող դեղերի անվտանգության, որակի և արդյունավետության ապահովումը և այլն:

2013 թվականին ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Չնայած կառավարության որոշմանը՝ բազմաթիվ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաները չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր:
- Դեռևս չեն սահմանվել բժշկական էթիկայի կանոններ, ինչի հետևանքով բազմաթիվ դեպքերում բժշկական գաղտնիքը չպահպանող, պացիենտների նկատմամբ անհարգալից վերաբերվող բժիշկները չեն պատժվել:
- Օրենքում դեռևս բացակայում է «բժշկական սխալ» հասկացությունը, ինչի հետևանքով հնարավոր չէ օբյեկտիվ գնահատել բժշկի անփութության, սխալ բժշկական միջամտության և այլ դեպքերը, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքներ:
- Բավարար չի ֆինանսավորվել սոցիալապես անապահով անպտուղ զույգերի արտամարմնային բեղմավորումը, որը միջինում կազմում է 3500-5000 ԱՄՆ դոլար: Արդյունքում հազարավոր անպտուղ զույգեր զրկվել են երեխա ունենալու հնարավորությունից:
- Մարդու կյանքին սպառնացող «ցրված սկլերոզ» հիվանդությունը դեռևս չի ներառվել Կառավարության որոշման այն հիվանդությունների ցանկում, որոնց դեպքում բուժման դեղերը տրվում են անվճար: Արդյունքում նման ծանր հիվանդությամբ տառապող անձանց համար այդ թանկ դեղերը հիմնականում հասանելի չեն լինում:
- Չեն մշակվել օրենսդրական կարգավորումներ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման համար, մինչդեռ այդ խնդիրը կրում է համատարած բնույթ:
- Ցածր վարձատրության և ԲՈՒՀ-երում անվճար ուսման քիչ տեղերի հետևանքով խիստ անբավարար է եղել հոգեբույժների քանակը:
- Մի շարք դեպքերում քաղցկեղով հիվանդ անձանց չի տրամադրվել օրենքով հասանելիք անվճար քիմիոթերապիան:

- Օրենսդրական թերի կարգավորման պատճառով բժիշկները պաշտպանված չեն եղել պացիենտների հոգեբանական ճնշումներից և վիրավորանքներից:

Արձանագրված դրական զարգացումները

- Էապես կանոնակարգվել և հստակեցվել է դեղերի որակի, արդյունավետության և անվտանգության նկատմամբ պետական վերահսկողությունը:
- Կապանի ԲԿ-ում և Երևանի քաղաքապետարանի N 9 մանկական պոլիկլինիկայում ստեղծվել են երեխայի զարգացման վերականգնողական կենտրոններ:
- Ազգաբնակչության հետ կապն առավել մատչելի դարձնելու համար տեղադրվել է ռադիոկայ, որը, մասնավորապես, հնարավորություն է տալիս հրատապ դեպքերում ուղիղ կապ հաստատել խոշոր բժշկական կենտրոնների, 1-03 շտապ բուժօգնության ծառայության հետ:
- Նախարարության միջնորդությամբ անվճար վերապատրաստվել է մոտ 300 բուժաշխատող, որոնց հիմնական մասն են կազմել մարզերում աշխատող բժիշկները:

Ընդհանուր վերլուծություն

Չնայած կառավարության որոշմանը՝ բազմաթիվ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաները չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր: Պաշտպանի կողմից 2013թ. կրկին ստացվել են մի շարք դիմում-բողոքներ, որոնք վերաբերել են հաշմանդամություն ունեցող անձանց խախտված իրավունքներին: Բանն այն է, որ հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են արտոնյալ կամ անվճար հիմունքներով դեղեր ստանալու իրավունքից: Այսպես, «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությունն ամրագրում է 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխաներին, ըստ դեղատոմսերի անվճար դեղորայքով ապահովումը, իսկ 3-րդ խմբի հաշմանդամների համար՝ 50 տոկոս զեղչով ապահովումը, եթե նրանք չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից: Բացի այդ, ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի 1717-Ն որոշմամբ հստակեցվում են անվճար պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերը և այն հիվանդությունները, որոնց առկայության դեպքում դեղերը տրվում են անվճար: Այնուամենայնիվ, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ապահովման գործող համակարգն արդյունավետ չէ և չի ապահովում այս ոլորտում սոցիալական արդարության սկզբունքի լիարժեք կիրառումը: Արդյունքում, գործնականում արձանագրվել են այս իրավունքի չարաշահման բազմաթիվ դեպքեր: Նշենք, որ Պաշտպանի կողմից ստացվել են մի շարք դիմում-բողոքներ անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվելիք դեղորայք չտրամադրելու, անբավարար չափաքանակով տրամադրելու կապակցությամբ: Սա վկայում է նշյալ ոլորտում Նախարարության ցուցաբերած անհետևողականության և շատ դեպքերում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված ոչ բավարար միջոցառումների

նախաձեռնման մասին: Հաշվի առնելով խնդրի լուծման հրատապությունը՝ Նախարարության կողմից մշակվել է «Բնակչության սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են բարելավելու բնակչության սահմանված սոցիալական խմբերին տրամադրվող դեղերի ապահովման գործընթացը՝ սպասարկման և մատակարարման առավել պարզ և արդյունավետ համակարգի ներդրման ճանապարհով: Բայցնայնպես, տվյալ նախագիծը դեռևս չի ընդունվել: Արձանագրվել են դեպքեր, երբ մինչև յոթ տարեկան երեխաներին չեն հատկացվել Կառավարության որոշմամբ սահմանված անվճար դեղերը: Այսպես, համաձայն ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի 1717-Ն որոշման՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների կողմից մինչև յոթ տարեկան երեխաներին դեղերը հատկացվում են անվճար: Սակայն մի շարք ծնողներ, պայմանավորված բժշկի կամ բուժհաստատության կողմից նման իրավունքի մասին տեղեկատվության տրամադրման բացակայությամբ, սեփական միջոցներով են դեղատներից ձեռք բերել դեղատոմսով նշանակված մանկական դեղորայքը, որն ի դեպ, բավական թանկ արժե: Այնինչ, բժշկական հաստատությունը պարտավորվում էր նշանակված դեղերը տրամադրել անվճար: Նշվածը վկայում է այն մասին, որ բացակայում է Կառավարության վերոգրյալ որոշման կատարման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողությունը: Հետևաբար, անհրաժեշտ է հետամուտ լինել բուժհաստատությունների արդյունավետ վերահսկողության իրականացման նկատմամբ, բացառելու նման դեպքերը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել հանրության լայն զանգվածներին իրազեկելու մինչև յոթ տարեկան երեխաներին սահմանված կարգով անվճար դեղերի տրամադրման վերաբերյալ:

Դեռևս չեն սահմանվել բժշկական էթիկայի կանոններ, ինչի հետևանքով բազմաթիվ դեպքերում բժշկական գաղտնիքը չպահպանող, պացիենտների նկատմամբ անհարգալից վերաբերվող բժիշկները չեն պատժվել: Նման կանոնների բացակայությունը գործնականում հաճախ բացասաբար է ազդում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձ-պացիենտ նորմալ հարաբերությունների ձևավորման վրա և չի խթանում հարգանքի, վստահության մթնոլորտի ձևավորումը: Այսպես, Նախարարության կողմից հայտնած տեղեկությունների համաձայն, 2013թ. «Թեժ գիծ» ծառայության միջոցով արձանագրվել է բժիշկների կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ 31 բողոք: Սակայն էթիկայի կանոնների բացակայությունը գործնականում անլուծելի է դարձնում նման բողոքներին արձագանքելը՝ հաշվի առնելով արարքի որակման անհնարինությունը: Գտնում ենք, որ բժշկական էթիկայի օրինակելի կանոններում, ի թիվս այլ կանոնների, պետք է զետեղվի նաև բժշկական գաղտնիքի պահպանման պահանջը: Հարկ է նշել, որ դեռևս 2012թ. Նախարարության կողմից պատրաստվել էր «Բժշկական էթիկայի օրինակելի կանոնները և բժշկական էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության օրինակելի կարգը և գործառույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Սակայն նկատի ունենալով, որ նման պարտականությունների սահմանումը համաձայն ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի, պետք է ամրագրվի օրենքով, որոշվել է այդ կանոնները ներառել «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծում, որը ներկայումս

լրամշակվում է Նախարարության կողմից և որի վերաբերյալ քննարկումները կազմակերպվելու են միայն 2014թ. ընթացքում: Արդյունքում՝ 2012թ. ի վեր անհարկի ձգձգվում է բժշկական էթիկայի կանոնների սահմանումը, ինչի հետևանքով պացիենտ-բուժաշխատող հարաբերություններում արդյունավետորեն չի ապահովվում փոխադարձ հարգանքն ու վստահությունը:

Օրենքում դեռևս բացակայում է «բժշկական սխալ» հասկացությունը, ինչի հետևանքով հնարավոր չէ օբյեկտիվ գնահատել բժշկի անփութության, սխալ բժշկական միջամտության և այլ դեպքերը, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքներ: 2013թ. ընթացքում Պաշտպանը կրկին ստացել է բազմաթիվ ահազանգեր, որոնք վերաբերել են բժշկի անփութության կամ բժշկական սխալի հետևանքով ոչ ճիշտ բժշկական միջամտություն ցուցաբերելուն, ինչը հանգեցրել է անցանկալի հետևանքների: Նշվածը մասնավորապես պայմանավորված է նրանով, որ ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվում «բժշկական սխալ» եզրույթը, ինչն իր հերթին ՀՀ-ում՝ ընդունված բժշկական չափորոշիչների (ստանդարտների) բացակայության հետևանք է: Ուստի հնարավոր չէ պարզել բուժաշխատողի արարքում սխալն առկա է, թե՛ ոչ, քանի որ հիվանդությունների ախտորոշման, բուժման հստակ ուղեցույցներ չկան, որոնց հետ համեմատելու արդյունքում պարզ կդառնա բուժաշխատողի կողմից նման սխալ թույլ տրվել է, թե՛ ոչ: Նշվածի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ դեռևս 2012թ. Նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից սկսվել է բժշկական ստանդարտների մշակման գործընթացը: Բայցևայնպես, տվյալ չափորոշիչները դեռևս չեն ընդունվել, ինչը թույլ կտար ապահովել «բժշկական սխալ» եզրույթի օրենսդրական սահմանումը: Նշվածը խոչընդոտում է կատարված արարքին հստակ որակում տալուն և սխալ թույլ տված անձի նկատմամբ պատասխանատվության համապատասխան միջոցներ կիրառելուն: Գիտակցելով, որ նման նախագիծ պատրաստելը չափազանց աշխատատար և ծախսատար գործընթաց է, որի իրականացումը նաև բավականաչափ ժամանակ կպահանջի, միաժամանակ, գտնում ենք, որ նման կարևորագույն նախաձեռնությունը բխում է թե՛ հանրության և թե՛ Նախարարության շահերից: Ուստի՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերոգրյալ խնդիրը հնարավորինս սեղմ ժամկետներում հստակ կարգավորելու ուղղությամբ:

Բավարար չի ֆինանսավորվել սոցիալապես անապահով անպտուղ զույգերի արտամարմնային բեղմնավորումը, որը միջինում կազմում է 3500-5000 ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ հազարավոր անպտուղ զույգեր զրկվել են երեխա ունենալու հնարավորությունից: Արտամարմնային բեղմնավորման մատչելիության բացակայության հետևանքով անպտուղ և բավարար ֆինանսական միջոցներ չունեցող հազարավոր զույգեր զրկվում են երեխա ունենալու հնարավորությունից: Նշենք, որ արտամարմնային բեղմնավորման մատչելիության ապահովման նպատակով Նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի շրջանակներում անապահովության համակարգում ներգրավված 30 և ավելի միավոր ունեցող ընտանիքների կանայք կստանան պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների

շրջանակներում օժանդակ տեխնոլոգիաների կիրառում: Կարևորելով նման քայլի ձեռնարկումը, այդուհանդերձ, քիչ չեն դեպքերը, երբ 30-ից ցածր միավոր ունեցող զույգերը կրկին զրկված են արտամարմնային բեղմնավորման հնարավորությունից պայմանավորված սուղ ֆինանսական միջոցներով: Պատճառն այն է, որ արտամարմնային բեղմնավորման համար գործածվող տեխնոլոգիաները, նյութերը, էապես թանկ են. Հայաստանում, արտամարմնային բեղմնավորման մեկ փորձը միջինում կազմում է 3500-5000 ԱՄՆ դոլար: Արդյունքում, երկրում, որն ունի դեմոգրաֆիկ լուրջ խնդիր, հազարավոր զույգեր, ֆինանսական բավարար միջոցների, ինչպես նաև պետական աջակցության բացակայության հետևանքով զրկված են ժամանակակից բուժական մեթոդների դիմելու և երեխա ունենալու հնարավորությունից:

Մարդու կյանքին սպառնացող «ցրված սկլերոզ» հիվանդությունը դեռևս չի ներառվել Կառավարության որոշման այն հիվանդությունների ցանկում, որոնց դեպքում բուժման դեղերը տրվում են անվճար: Արդյունքում նման ծանր հիվանդությամբ տառապող անձանց համար այդ թանկ դեղերը հիմնականում հասանելի չեն լինում: Մտահոգիչ է, որ «ցրված սկլերոզ» հիվանդությունը դեռևս ընդգրկված չէ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1717-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում այն հիմնավորմամբ, որ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը դեռ քննարկման փուլում է: Արդյունքում, նշված հիվանդությամբ տառապող անձինք զրկված են բուժման համար անվճար դեղեր ստանալու հնարավորությունից: Նշենք, որ «ցրված սկլերոզ» հիվանդությունը հանդիսանում է կենտրոնական նյարդային համակարգի աուտոիմունային հիվանդություն, երբ իմունիտետը, չճանաչելով սեփական բջիջները, սկսում է քայքայել դրանք: Այն անբուժելի է և պահանջում է թանկարժեք դեղամիջոցների օգտագործում հիվանդության ազդեցության ուժգնությունը նվազեցնելու համար: Կառավարության վերոգրյալ որոշմամբ հաստատվել է որոշ հիվանդությունների ցանկ, այդ թվում, տուբերկուլյոզ, շաքարային և ոչ շաքարային դիաբետ, էպիլեպսիա, որոնց առկայության դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով դեղերը հիվանդներին տրվում են անվճար: Մինչդեռ, վերջին տարիներին Հայաստանում կտրուկ աճել է ցրված սկլերոզով տառապողների թիվը որոնք, որպես կանոն, 20-30 տարեկան երիտասարդներ են և որոնցից շատերի ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս ձեռքբերել անհրաժեշտ թանկարժեք դեղամիջոցները: Հետևաբար, խիստ անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել ներառելու նաև «ցրված սկլերոզ» հիվանդությունը Կառավարության վերոնշյալ որոշման մեջ:

Չեն մշակվել օրենսդրական կարգավորումներ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների (սելեկտիվ աբորտների) կանխարգելման համար, մինչդեռ այդ խնդիրը կրում է համատարած բնույթ: Ըստ Նախարարության կողմից հայտնած տվյալների՝ 2013թ. ընթացքում որոշակի աշխատանքներ են կատարվել հանրության մեջ սելեկտիվ աբորտների նկատմամբ վերաբերմունքի փոփոխման ու աբորտների կանխարգելման ուղղությամբ: Այդ նպատակով նախաձեռնվել և լրատվության տարբեր միջոցներով հանդես են եկել Նախարարության ներկայացուցիչները՝ տարբեր կազմակերպությունների ներգրավմամբ՝ սելեկտիվ աբորտների հետևանքների և

հասարակության մեջ մերժողական վերաբերմունքի ձևավորման համար: Այնուամենայնիվ, նման միջոցները բավարար չեն առկա համատարած խնդրին համակարգային լուծում տալու համար: Ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տվյալների՝ եթե Հայաստանում շարունակվեն սեռով պայմանավորված արհեստական ընդհատումները, ապա մինչև 2060թ. 93 000 մայր չի ծնվի: Ընդ որում, նշված երևույթն արդեն 20 տարի է ինչ նկատվում է Հայաստանում. ավելի շատ տղա է ծնվում, քան աղջիկ՝ ներկայում կազմելով 114 տղա՝ 100 աղջկա հարաբերակցությամբ: Այսինքն, ապագա երեխայի սեռի վրա հիմնված հղիության սելեկտիվ ընդհատումը հանգեցնում է ոչ միայն երեխայի սեռի նկատմամբ խտրականության դրսևորմանը, այլև ժողովրդագրական հավասարակշռության խախտմանը, ինչը վտանգավոր է Հայաստանի նման փոքր երկրի համար: Միաժամանակ հարկ է նշել, որ տվյալ խնդրին է անդրադարձել նաև Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը շեշտելով, որ իգական սաղմի արհեստական ընդհատման երևույթը հասարակության մեջ կանանց ունեցած խոցելի կարգավիճակի արդյունք է: Հարկ է նշել, որ թեև նշյալ հարցի շուրջ բացակայում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, այնուամենայնիվ, որոշ միջազգային մարմիններ այս հարցի վերաբերյալ արտահայտել են իրենց մոտեցումը: Մասնավորապես, Մարդու իրավունքների և բիրժշկության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան արգելում է «ապագա երեխայի սեռն ընտրելու նպատակով» բժշկական միջամտությունը, «բացառությամբ, եթե դա արվում է սեռով պայմանավորված ժառանգական բնույթի լուրջ հիվանդությունից խուսափելու համար»: Բացի այդ, ինչպես Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW), այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կոչ են արել կառավարություններին՝ ընդունելու սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն արգելելու վերաբերյալ ազգային օրենսդրություն: Հարկ է նշել, որ համաձայն «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք, որտեղ հղիության արհեստական ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ դիմումի համաձայն, իսկ հղիության արհեստական ընդհատումը մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կարող է կատարվել միայն բժշկասոցիալական ցուցումների դեպքում՝ կնոջ համաձայնությամբ: Որպես կանոն, երեխայի սեռը հնարավոր է որոշել միայն 12 և ավելի շաբաթական հղիության դեպքում, ուստի, ըստ օրենքի պահանջների՝ այդ ժամկետում իրականացվող հղիության ընդհատումը կարող է իրականացվել միայն հատուկ բժշկասոցիալական ցուցումների հիման վրա: Այնուամենայնիվ, անգամ 12 շաբաթից սկսած հղիության ընդհատման նման ընդհանուր սահմանափակումը գործնականում նույնպես հաճախակի շրջանցվում է: Հետևաբար, անհրաժեշտ են լրացուցիչ հստակ իրավական և գործնական երաշխիքներ, սեռով պայմանավորված հղիության ընդհատումը կանխարգելելու համար: Այսինքն, անհրաժեշտ է կատարել փոփոխություններ համապատասխան իրավական ակտերում, համաձայն որոնց կարգելվի երեխայի սեռի կանխորոշումը, եթե դա անհրաժեշտ չէ կանխելու սեռով պայմանավորված ժառանգական հիվանդությունները, կամ սեռը հայտնել հղիության այնպիսի շրջանում, երբ առանց հատուկ բժշկական ցուցումի հղիության արհեստական ընդհատումը արգելվում է: Բացի այդ, անհրաժեշտ է վերացնել

կանանց նկատմամբ առկա խտրականությունը և քայլեր ձեռնարկել հասարակության մեջ կանանց դերի բարձրացման ուղղությամբ:

Ցածր վարձատրության և ԲՈՒՀ-երում անվճար ուսման քիչ տեղերի հետևանքով խիստ անբավարար է եղել հոգեբույժների քանակը: Լուրջ մտահոգության տեղիք է տալիս, հատկապես մարզերում, հոգեբույժների կադրային համալրման, ինչպես նաև վերջիններիս պետական պատվերի շրջանակներում անհրաժեշտ ուսուցման ապահովման խնդիրը: Ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ 2013-2014թթ. ուսումնական տարվա ընդունելության նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագրի շրջանակներում հայտարարվել էր մրցույթ հոգեբույժի միայն 2 անվճար տեղի համար: Իսկ ամբողջ հանրապետությունում 2013 թվականի ընթացքում աշխատանքի են նշանակվել ընդամենը 3 հոգեբույժներ: Հարկավոր է նշել, որ ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտի մասնագետների, մասնավորապես, հոգեբույժների պակասը լուրջ խնդիր է հանդիսանում, ինչը պայմանավորված է, նախևառաջ, վերջիններիս աշխատանքի ցածր վարձատրությամբ: Արդյունքում՝ քիչ թվով երիտասարդներ են ընտրում նշյալ մասնագիտությունը: Նշենք նաև, որ ներկայումս ՀՀ-ում առկա են շուրջ 150 հոգեբույժ, որն առնվազն կրկնապատկման կարիք ունի՝ հաշվի առնելով վերջիններիս ծառայությունների պահանջն ունեցող անձանց քանակը: Այսպես, օրինակ, Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում 1 հոգեբույժը սպասարկում է մոտ 450 անձի, Սևանի հոգեբուժական հիվանդանոցում աշխատում է ընդամենը 6 հոգեբույժ, որոնք սպասարկում են մոտ 400 հիվանդների, իսկ Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում հոգեբույժի հաստիքն, առհասարակ համալրված չէ: Արդյունքում՝ հոգեբույժների քանակն ակնհայտորեն բավարար չէ մարդկանց հոգեկան առողջության պահպանման համար: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է ձեռնարկել գործուն քայլեր՝ ուղղված հոգեբույժների քանակի համալրմանը, մասնավորապես՝ պատշաճ վարձատրություն սահմանելով նշված մասնագիտության ներկայացուցիչների համար և ավելացնելով պետական պատվերի շրջանակներում սովորող հոգեբույժների թվաքանակը:

Մի շարք դեպքերում քաղցկեղով հիվանդ անձանց չի տրամադրվել օրենքով հասանելիք անվճար քիմիոթերապիան: Պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ քաղցկեղով հիվանդ անձանց անվճար քիմիոթերապիայի ոչ պատշաճ տրամադրման վերաբերյալ: Ըստ Նախարարությունից հայտնած տեղեկատվության՝ 2013թ. ընթացքում փոխհատուցվել է չարորակ նորագոյացությունների քիմիոթերապիայի 6,541 սեանս, որի համար քիմիաթերապիա իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից գնվել է 184 միլիոն դրամի դեղեր: Այդուհանդերձ, առկա են եղել մի շարք բողոքներ, որոնք, մասնավորապես, վերաբերել են համապատասխան քիմիոթերապիան ստանալու համար երկարատև հերթերի և դեղերի տրամադրման գործընթացի ոչ թափանցիկ լինելուն, ինչպես նաև վերջիններիս անորակության և/կամ ոչ նպատակային օգտագործմանը: Նշվածն ինքնին նպաստում է կոռուպցիոն դրսևորումների առաջացմանը, հատկապես՝ հաշվի առնելով անվճար քիմիոթերապիա ստանալու իրավունք ունեցող անձանց հսկայական հերթերն ու, հետևաբար, վերջիններիս բուժման հետաձգումները:

Օրենսդրական թերի կարգավորման պատճառով բժիշկները պաշտպանված չեն եղել պացիենտների հոգեբանական ճնշումներից և վիրավորանքներից: Ընթացիկ տարում մի

շարք բուժաշխատողներ բարձրաձայնել են վերջիններիս հասցեին հիվանդների կողմից վիրավորական արտահայտությունների հնչեցման դեպքերը: Մասնավորապես, առկա են եղել հիվանդանոցներում բուժաշխատողի տրամադրած ծառայությունից դժգոհ քաղաքացիների կողմից հնչեցված հայհոյանքներ, անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ: Հարկ է նշել, որ Երևան քաղաքում արձանագրվել է անգամ 2 դեպք, երբ շտապ բուժօգնության աշխատակիցներն իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս բռնության են ենթարկվել հիվանդի բնակարանում: Գտնում ենք, որ նշվածը լուրջ խոչընդոտ է վերջիններիս գործունեության պատշաճ իրականացման համար: Ուստի՝ անհրաժեշտ է հետամուտ լինել բուժաշխատողների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումների յուրաքանչյուր միջադեպի նկատմամբ և արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու բուժաշխատողների բարենպաստ պայմաններում աշխատելու իրավունքը, այդ թվում նաև սահմանելով բժշկի՝ վիրավորանքից պաշտպանության օրենսդրական երաշխիքներ:

Մտահոգիչ է անձի՝ արտերկրում բուժումն իրականացնելու համար անհամաչափ մեծ գումարների տրամադրումը՝ հաշվի առնելով բուժօգնության կարիք ունեցող բազմաթիվ այլ անվճարունակ անձանց առկայությունը: Բանն այն է, որ Նախարարության առաջարկությամբ ՀՀ կառավարությունն ընդունել էր 2013թ. մարտի 28-ի թիվ N 291-Ա որոշումը, համաձայն որի պահուստային ֆոնդի հաշվին Նախարարությանը տրամադրել էր 20 մլն 500 հազ. դրամ՝ ՀՀ նախագահի նախկին թեկնածու Պարույր Հայրիկյանի բուժումն արտերկրում իրականացնելու նպատակով: Կառավարության այս որոշումն առաջացրել էր լրատվամիջոցների ու հասարակության լայն զանգվածի դժգոհությունը: Նշենք, որ 2013թ. հունվարի 31-ին տեղի ունեցած մահափորձի արդյունքում Պարույր Հայրիկյանն աջ անբակի շրջանում ստացել էր հրազենային վնասվածք: Հավելենք նաև, որ Նախարարությունը հանդես էր եկել Կառավարության կողմից Պ. Հայրիկյանի բուժումն արտերկրում կազմակերպելու համար նման զգալի գումարի տրամադրման առաջարկությամբ՝ հաշվի առնելով Պ. Հայրիկյանի «ունեցած նշանակալի ավանդը Հայաստանի Հանրապետությունում անկախության կայացման և երկրում ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործում»: Այնուամենայնիվ, պարզ չեն Հայաստանի անկախացման և ժողովրդավարության ամրապնդման գործում ավանդ ունենալու չափորոշիչները, որոնց համապատասխանելու դեպքում անձի բուժումն իրականացնելու նպատակով կարող են նման զգալի գումարներ տրամադրվել՝ հաշվի առնելով, որ երկրում նվազագույն աշխատավարձը կազմում է ընդամենը 45.000 դրամ, իսկ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013թ. չորրորդ եռամսյակում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն է եղել ընդամենը 56.2 հազար դրամ: Բացի այդ, եթե առաջնորդվենք վերոնշյալ տրամաբանությամբ, ապա արտերկրում բուժման կարիք ունեցող մի շարք զինծառայողներ նույնպես կարող են հավակնել նման խոշոր գումարների հատկացմանը: Ավելին, պարզ չէ նաև, թե ուսի հատվածում կրակոցից ստացած մարմնական վնասվածքի վիրահատությունն կոնկրետ ի՞նչ հիմնավորմամբ հնարավոր չէր իրականացնել ՀՀ-ում: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է հետևողական լինել անձանց արտերկրում բուժում իրականացնելու, զգալի գումարների հատկացման հարցում՝ առաջնորդվելով նման ֆինանսական միջոցների

տրամադրման համաչափության, անհրաժեշտության և պատշաճ կերպով հիմնավորվածության սկզբունքներով, ինչպես նաև ոլորտում առկա լուծման ենթակա անհետաձգելի խնդիրների առաջնահերթությամբ:

Պաշտպանին հասցեագրվել են դիմումներ, որոնց համաձայն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք դժգոհ են պետական պատվերով գնված դեղերի որակից: Օրինակ, «Հոգեկան առողջության վերականգնման հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը բարձրացրել է պետության կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող հիվանդներին անվճար տրամադրվող դեղերի որակի և հիվանդների վրա դրանց բացասական ազդեցության հարցերը: Մասնավորապես, դիմումում նշվել է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պետությունից անվճար ստանում են հնդկական հումքից պատրաստված «Ձուլաքսա» դեղը, որն, իրենց պնդմամբ, ավելի վատ է ազդում հիվանդների առողջության վրա, քան նախկինում տրամադրվող «Զիպրեքսա» դեղամիջոցը: Վերջինիս օգտագործման ժամանակ լավացել է իրենց ինքնազգացողությունը, և չեն գրանցվել սուր վիճակում հոսպիտալացման դեպքեր հիվանդանոցային բուժման նպատակով, մինչդեռ «Ձուլաքսա» դեղի օգտագործումից հիվանդների մոտ նկատվել են կտրուկ հոգեկան սրացումներ, ագրեսիվ վարքագիծ, անհանգիստ քուն և ախորժակի վատացում: Այս կապակցությամբ հիվանդներից շատերը դիմել են ՀՀ առողջապահության նախարարություն՝ բացատրելով իրենց առողջական վիճակի վատթարացումը և խնդրելով իրենց տրամադրել նախկին «Զիպրեքսա» դեղամիջոցը, սակայն պատասխան են ստացել, որ 2013 թվականի երկրորդ կիսամյակում նշված դեղի կենտրոնացված կարգով ձեռքբերում չի իրականացվել: Հատկանշական է, որ Նախարարության կանոնադրության համաձայն, Նախարարության գործառույթներից է պետական պատվերի շրջանակներում իրականացվող դեղերի կենտրոնացված գնումների իրականացումը, գնումների դիմաց ֆինանսական միջոցների հատկացումը: Իսկ ըստ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի՝ դեղերի որակի ապահովման պետական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարությունը: Խնդրի վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ օրիգինալ դեղերի չափազանց թանկարժեքության պատճառով միջազգային պրակտիկայում ընդունված է գնել ջեներիկ (վերարտադրված) դեղեր, որոնց մատչելիությունը պայմանավորված է նրանով, որ ջեներիկ դեղերի անվտանգության, արդյունավետության վերաբերյալ նոր կլինիկական հետազոտություններ չեն իրականացվում, այլ ապահովում են միջազգայնորեն ընդունված կենսահամարժեքության պահանջը, իսկ դեղամիջոցի որակը պետք է համապատասխանի ընդունված դեղագրքերի պահանջներին: Տվյալ դեպքում «Ձուլաքսա» դեղը, որի գրանցման ժամանակ արտադրողը ներկայացրել է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք ենթարկվել են փորձաքննության, հաստատվել է տվյալ դեղի կենսահամարժեքությունը օրիգինալ «Զիպրեքսա» դեղի նկատմամբ, և դեղը երաշխավորվել է գրանցման: «Ձուլաքսայի» ներմուծման ժամանակ իրականացվել է բոլոր խմբաքանակների լաբորատոր փորձաքննություն, որի արդյունքում պարզվել է, որ դրանք համապատասխանում են ՀՀ-ում ընդունված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Նախարարությունը հավելել է, որ, եթե կողմնակի ազդեցության դեպքերի դրսևորման հաճախականությունը գերազանցի դեղի կիրառման հրահանգում նշված

սահմանները, կամ ի հայտ գան կյանքին սպառնացող երևույթներ, ապա ՀՀ առողջապահության նախարարությունը իրավասու է կասեցնել դեղի գրանցումը և շրջանառությունը հանրապետությունում: Ընդունելի են Նախարարության վերոնշյալ պարզաբանումները, սակայն մտահոգիչ է, որ Նախարարությունը գտնում է, որ օգտագործվող դեղը ենթակա է փոխարինման միայն դեղի կիրառման հրահանգում նշված կողմնակի ազդեցության դեպքերի դրսևորման հաճախականությունը գերազանցելու դեպքում, այն դեպքում, երբ դեղի օգտագործման արդյունքը ոչ թե կողմնակի, այլ լրիվ հակառակ ազդեցություն է ունենում հիվանդի վրա (կտրուկ հոգեկան սրացումներ, ագրեսիվ վարքագիծ)՝ ըստ էության չբարելավելով հիվանդի վիճակը: Նման բողոք են բարձրացրել նաև շաքարային դիաբետով հիվանդ անձինք: Մասնավորապես, վերջիններս հայտնում են, որ պետությունից միջոցներով իրենց տրվող դեղորայքը փոխվել է վերջին մեկ տարում՝ Առողջապահության նախարարի որոշմամբ: Դրանից առաջ շաքարախտով հիվանդները պետությունից ստանում էին ֆրանսիական արտադրության Diabeton MR, Amaril և եվրոպական տարբեր երկրների արտադրության Medformin կամ Glyukofash դեղամիջոցները: Այժմ Նախարարությունը գտնում է հնդկական դեղամիջոցներ՝ Diazon MR, Diamar M, Diamed M, որոնք, որոշ հիվանդների ու բժիշկների պնդմամբ, արդյունավետ չեն: Ավելին, բողոքը բարձրացրած անձանց հայտնած տեղեկություններով՝ հնդկական այդ դեղամիջոցները չեն օգտագործվում որևէ երկրում: Դրանց մասին տեղեկություն դժվար է գտնել համացանցում: Խնդրի վերաբերյալ Նախարարությունը կրկին հայտնել է, որ նշված դեղերը ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված են ՀՀ-ում: Գրանցման ընթացքում արտադրողի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը ենթարկվել են մանրակրկիտ վերլուծության, իսկ նմուշները՝ որակի լաբորատորային փորձաքննության, այնուհետև գնահատվել են դեղի որակական ցուցանիշները, և դեղը գրանցվել է: Միաժամանակ, Նախարարությունից տեղեկացրել են, որ Նախարարության կողմից մոտ մեկ տարի իրականացվում է վերը նշված դեղերով ապահովումը պետության կողմից հատկացված միջոցների հաշվին և ոչ մի թունավորման դեպքեր չեն արձանագրվել: Սակայն հարկ է նկատել, որ մեր բարձրացրած խնդիրը վերաբերում էր ոչ թե վերոնշյալ դեղորայքից թունավորման դեպքերին, այլ դեղամիջոցի անարդյունավետությանը:

Գործնականում շարունակվում են գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի ընդունելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու, աշխատանքի ժամանակացույցը ներքին իրավական ակտով ընդունելու պարտականության խախտման դեպքերը: Նշենք, որ Նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության: Վերջինս իր գործառույթները սկսել է փաստացի իրականացնել միայն 2013թ. հոկտեմբերի 28-ից: Մտահոգիչ է, որ վերակազմակերպման աշխատանքների և համապատասխան արխիվային փաստաթղթերի փոխանցման ոչ պատշաճ կազմակերպման արդյունքում, Նախարարության կողմից տրամադրվել է միայն 2013թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին աշխատանքային

իրավունքների խախտումների վերաբերյալ քաղաքացիների դիմումների մասին տեղեկատվություն: Այսպես, նշված ժամանակահատվածում առկա դիմումների հիման վրա, Նախարարությունն իրականացրել է 35 վարչական վարույթ: Ստուգումների արդյունքում արձանագրված ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների խախտումները վերացնելու և դրանք կանխարգելելու նպատակով՝ գործատուներին տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ և կիրառվել են վարչական տույժեր: Այնուամենայնիվ, չնայած ձեռնարկված միջոցների, նշված համակարգային խնդիրը դեռևս լուծում չի ստացել: Բացի այդ, Նախարարության կողմից տրված պատասխանից պարզ է դառնում, որ Նախարարությունը սեփական նախաձեռնությամբ չի իրականացրել ստուգումներ և մշտադիտարկումներ նշված խնդիրների կանխարգելման ուղղությամբ, այլ արձագանքել է դրանց միայն անհատական դիմումներ ստանալու դեպքում: Հետևաբար, այն հանգամանքը, որ նշյալ խնդիրները տարիներ շարունակ չեն ստանում իրենց լուծումները վկայում են նաև ներկայիս կանխարգելման մեխանիզմների թերի լինելու մասին:

Կարևորում ենք Նախարարության կողմից որդեգրած այն քաղաքականությունը, ըստ որի նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող սրտի վիրահատությունները, կորոնար անոթների ստենտավորումը և աորտայի անևրիզմաների պատվածքների և շերտազատումների վիրահատությունները, ինչպես նաև օրթեզավորումը և կորսետավորումը 0-7 տարեկան երեխաների, ինչպես նաև 7-18 տարեկան սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների համար կատարվում են անվճար՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: Այնուամենայնիվ, Նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ մինչև 18 տարեկան ոչ բոլոր երեխաներին են տրամադրվում նորագույն և թանկարժեք բժշկական ծառայությունները, պայմանավորված պետական բյուջեի սահմանափակ հնարավորություններով: Արդյունքում, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական ծառայությունները հասանելի են միայն նման ծառայությունների կենսական անհրաժեշտություն ունեցող առանձին հիվանդների համար: Նշվածը սահմանված է ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. փետրվարի 21-ի թիվ 361-Ա հրամանով, համաձայն որի նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական ծառայությունները, առանձին դեպքերում, կարող են իրականացվել պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահության նախարարի հրամանով: Այդուհանդերձ, հաշվի առնելով Հայաստանում երեխաներին անհրաժեշտ բուժօգնության տրամադրման հասանելիության անհրաժեշտությունը կարևորում ենք շուտավարյալ միջոցների ձեռնարկումը ապահովելու մինչև 18 տարեկան բոլոր երեխաներին նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով բժշկական ծառայությունների անխտիր մատուցումը:

Մտահոգիչ է Քաջարանի բաց հանքի շահագործման արդյունքում տեղի բնակչությանը հասցված առողջական վնասը: Նշենք, որ Քաջարան գյուղի բնակիչները և բնապահպանական հասարակական կազմակերպությունները դեռ նախորդ տարիներից բազմիցս բարձրաձայնել են այն խնդիրը, որ Քաջարանում տեղակայված բաց հանքի շահագործման հետևանքով հանքին հարակից բոլոր տարածքների մթնոլորտը լցվում է ծանր մետաղներով և թունավոր տարրերով, որոնք ոչ միայն վնասում են շրջակա

միջավայրին, այլև լուրջ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության և կյանքի համար: Թեև ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները քաղաքի մթնոլորտային օդում դիտվել են սահմանային թույլատրելի նորմաների տիրույթում, այնուամենայնիվ, շարունակվում են գանգատները քաղաքի բնակիչներից և բնապահպան ակտիվիստներից օդի ծայրաստիճան աղտոտվածության վերաբերյալ: Նախարարությունից հայտնել են, որ վերջին տարիներին կատարվել է նաև Քաջարանի հանքարդյունաբերության ազդեցությամբ պայմանավորված հանրապետության բնակչության հիվանդացության վերլուծություն, որը ներառել է, մասնավորապես, կրծքագեղձի, ստամոքսի, թոքի չարորակ նորագոյացություններով, բնածին արատներով, սուր ինֆարկտով, լեյկեմիաներով հիվանդացությունները և նորածինների մահացած ծնվելու դեպքերը: Սակայն, վերլուծության արդյունքում պատճառահետևանքային կապ հանքարդյունաբերության և դրա ազդեցության հետ կապված բնակչության հիվանդացության, այդ թվում չարորակ նորագոյացություններով, միջև չի արձանագրվել, թեև հետազոտությունները շարունակվում են: Ի տարբերություն Նախարարության տվյալների՝ ոլորտի մի շարք անկախ փորձագետներ և հասարակական կազմակերպություններ իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ նշված տարածքի բնակչության, մասնավորապես, երեխաների մոտ ի հայտ են եկել առողջական լուրջ խնդիրներ հանքի բաց շահագործման պատճառով օդի մեջ, իսկ այնուհետև՝ մարդկանց օրգանիզմ ներթափանցած ծանր և թունավոր մետաղների հետևանքով: Մասնավորապես, Գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի առաջատար մասնագետ, երկրաբանական գիտությունների դոկտոր Հ.Ա.-ի կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ Քաջարանից և հարակից գյուղերից, նաև Կապանից ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնը 10 երեխաների է տարել ստուգման, որի արդյունքում հայտնաբերվել է, որ բոլորը հիվանդ են. մազերի մեջ կուտակված ծանր մետաղներ են հայտնաբերել, սնդիկ կադմիում, որը նույնիսկ լվանալուց հետո չի հեռանում: Այդ տարրերը քաղցկեղածին հարուցիչներ են: Բացի այդ, հետազոտված երեխաների (մոտ 43 տոկոս) արյան մեջ հայտնաբերվել է բավականին բարձր կապարի պարունակություն, իսկ 3 տոկոսի մոտ առկա է տոքսիկացիա: Հայտնի է, որ կապարի բարձր պարունակությունն օրգանիզմում ազդում է նյարդային համակարգի վրա, կարող է առաջացնել մտավոր թերզարգացվածություն, տեսողության, լսողության և խոսքի խախտումներ, ազդում է նաև երիկամների և ստամոքսի, նյութափոխանակության համակարգերի վրա: Օրգանիզմում պղնձի բարձր պարունակությունը թույն է: Եթե մետաղի պարունակությունը օրգանիզմում երկար ժամանակ բարձր է մնում, կարող են զարգանալ ուռուցքներ: Մետաղն ախտահարում է նյարդային համակարգը, երիկամները, լյարդը: Կադմիումի բարձր պարունակությունն առաջացնում է կմախքի տձևացում, թոքերի ախտահարում: Իսկ այս մետաղների՝ օրգանիզմ թափանցելու ուղիները բազմաթիվ են՝ հոդը, ջուրը, օդը և ընտանի կենդանիները: Մտահոգիչ է, որ դեռևս անավարտ են Նախարարության կողմից Քաջարանում հանքարդյունաբերության ազդեցության վերաբերյալ իրականացվող հետազոտությունները, ինչի արդյունքում անհարկի վտանգվում է տեղի բնակչության առողջական վիճակը: Մտահոգիչ է նաև, որ Քաջարանի, որպես

հանքարդյունաբերության ազդեցությանը ենթարկվող բնակավայր, բնակիչների համար նախատեսված չէ պետպատվերով հատուկ բուժսպասարկում, որն ՀՀ իրականացվում է միայն ընդհանուր կարգով՝ ՀՀ Կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն և 2013թ. դեկտեմբերի 26-ի N 1515-Ն որոշումների համաձայն:

Առաջարկություններ

- Ձեռնարկել միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաներին տրամադրվող դեղերի գործընթացը՝ օրենքին համապատասխանեցնելու ուղղությամբ, միաժամանակ բարելավելով դրանց սպասարկումը և մատակարարումը:
- Հետևողական լինել բժշկական էթիկայի կանոնների ընդունման հարցում, որի արդյունքում՝ օրինակ, բժշկական գաղտնիքը չպահպանող, հիվանդների նկատմամբ անհարգալից վերաբերվող բժիշկները կենթարկվեն պատասխանատվության:
- Սահմանել «բժշկական սխալ» եզրույթը, որի արդյունքում հնարավոր կլինի օբյեկտիվորեն գնահատել անփութության, սխալ բժշկական միջամտության և այլ դեպքերը և դրանց հնարավոր հետևանքները:
- Միջոցներ ձեռնարկել անպտուղ և սոցիալապես անապահով զույգերի արտամարմնային բեղմնավորումը մատչելի դարձնելու ուղղությամբ (բարձրացնել պետական աջակցությունը, նախատեսել արտոնություններ):
- Մշակել Կառավարության որոշման նախագիծ՝ ուղղված մարդու կյանքին լուրջ վտանգ ներկայացնող «ցրված սկլերոզ» հիվանդությունը ներառելու ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1717-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում:
- Օրենսդրական կարգավորումներ նախատեսել գործող օրենսդրության շրջանակներում՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման համար, որին զուգահեռ իրականացնել այդ թեմայով ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումներ:
- Ձեռնարկել գործուն քայլեր՝ ուղղված հոգեբույժների քանակի համալրմանը, մասնավորապես՝ պատշաճ վարձատրություն սահմանելով նշված մասնագիտության ներկայացուցիչների համար և ավելացնելով պետական պատվերի շրջանակներում սովորող հոգեբույժների թվաքանակը:
- Միջոցներ ձեռնարկել անվճար քիմիոթերապիայի անօրինական չտրամադրման դեպքերը վերհանելու և կանխելու ուղղությամբ:
- Գործող օրենսդրության շրջանակներում նախատեսել բժշկին վիրավորելը, հոգեբանորեն ճնշելը և նման այլ քրեորեն հետապնդելի չհանդիսացող արարքները՝ որպես վարչական պատասխանատվություն առաջացնող արարք, ինչպես նաև նշված խնդրի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
- Արտերկրում բուժում իրականացնելու նպատակով զգալի գումարների հատկացման հարցում առաջնորդվել նման ֆինանսական միջոցների տրամադրման

համաչափության, անհրաժեշտության և պատշաճ կերպով հիմնավորվածության սկզբունքներով:

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և շաքարային դիաբետով հիվանդ անձանց ապահովել այնպիսի դեղորայքով, որոնք կնպաստեն վերջիններիս առողջական վիճակի բարելավմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ապահովում է մարդու կրթության իրավունքի իրացումը, մարդու, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը, ուսումնական հաստատություններում պետական կրթական քաղաքականության սկզբունքների պահպանումը, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ և այլն: Բացի այդ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարտավոր է ապահովել հանրակրթության համակարգում ազգային փոքրամասնությունների՝ մայրենի լեզուներով կրթություն և դաստիարակություն ստանալու իրավունքը:

2013 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Հայաստանի 1400 դպրոցներից ընդամենը 117-ում է իրականացվել ներառական կրթություն, ընդ որում՝ ակնհայտ բացթողումներով: Արդյունքում խախտվել է հազարավոր հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը, քանի որ իրենց հասանելի է դպրոցների ընդամենը 8%-ը:
- Որպես կանոն չի երկարացվել բարձր առաջադիմությամբ սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի վճարման ժամկետը, ինչը լուրջ խնդիրներ է առաջացել այդ ուսանողների համար՝ անհարկի ֆինանսական բեռ, ընդհուպ մինչև համալսարանից հեռացում:
- Կրթության ոլորտում շարունակվել են դրամահավաքության, մանկավարժների նկատմամբ տարբերակված մոտեցման, ինչպես նաև տնօրենների կողմից անօրինականության դեպքերը:
- Առանձին դեպքերում գիտական մրցույթներում հանձնաժողովների անդամները հանդես են եկել նաև որպես մասնակից և ցուցաբերել են կանխակալ վերաբերմունք, սակայն օրենսդրական բացի հետևանքով մրցույթի մասնակիցները զրկված են եղել այդ անդամին բացարկ հայտնելու հնարավորությունից:
- Թերի ստուգումների արդյունքում չեն բացահայտվել դպրոցներում բուժօգնության մակարդակի, ժամկետանց դեղերի կամ առհասարակ դրանց բացակայության դեպքերը:
- Նախարարությունը միջոցներ չի ձեռնարկել՝ լուծելու որոշ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելու խնդիրը, քանի որ դա հակասում է ԲՈՒՀ-երի չքաղաքականացված լինելու սկզբունքին:

- Չեն բարեկարգվել Երևանի և մարզերի դպրոցների կոմունալ պայմանները, ինչի հետևանքով մի շարք դպրոցներ առ այսօր գտնվում են ծայրահեղ վատ վիճակում:
- Առանձին դեպքերում, դպրոցների տնօրինության սխալ հաշվարկի հետևանքով ուսուցիչները չեն ստացել իրենց սոցիալական փաթեթի գումարները:
- Դպրոցների տնօրենների ընտրություններն անց են կացվել բացթողումներով, ինչի պատճառն է հանդիսացել այն կարգավորող թերի հրամանը:
- Գիտական աստիճանի շնորհման ընթացքում Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշ լիազորությունները, ինչպես նաև ատենախոսի կրկնակի պաշտպանությունը, պետք է նախատեսված լինեն օրենքով: Մինչդեռ դրանք նախատեսված են ոչ թե օրենքում, այլ, օրինակ, որոշումներում, հրամաններում:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի նիստի N 52 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հայեցակարգը, ինչի արդյունքում հանրապետության տարածքում գործող շուրջ 700 դպրոցի տարրական դասարանների աշակերտներ ապահովվել են սննդով:
- ՀՀ Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունել է Նախարարության նախաձեռնությամբ մշակված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 21.11.2012թ N 1061-Ա/Ք հրամանով հաստատվել է «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը», որն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ գրանցման:

Ընդհանուր վերլուծություն

Հայաստանի 1400 դպրոցներից ընդամենը 117-ում է իրականացվել ներառական կրթություն, ընդ որում՝ ակնհայտ բացթողումներով: Արդյունքում խախտվել է հազարավոր հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը, քանի որ իրենց հասանելի է դպրոցների ընդամենը 8%-ը: Դեռևս ներդրված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցության եռաստիճան համակարգը: Նախարարությունը տեղեկացրել է, որ 2013 թվականին ՀՀ Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, որով պետք է ներդրվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցության եռաստիճան համակարգը: Նշված օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է «Կրթություն բոլորի համար» հոչակագրի,

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալա-կան խարտիայի» պահանջներով, որոնց միանալով Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Սակայն ամբողջ 2013 թվականի ընթացքում նշված օրենքը չի ընդունվել: Հարկավոր է հաշվի առնել, որ նշված օրենսդրական նախաձեռնությամբ հանդես էր եկել Կառավարությունը, և 2013 թվականին գրանցվել են մի շարք դեպքեր, երբ, հաշվի առնելով համապատասխան օրենքների նախագծերի կարևորությունը և հրատապությունը, Կառավարությունը դիմել էր Ազգային ժողովին՝ դրանք արտահերթ քննարկելու համար: Խիստ մտահոգիչ է, որ 2011 թվականից առ այսօր Հայաստանի Հանրապետությունում 1400 դպրոցներից ընդամենը 117 հանրակրթական ուսումնական հաստատություն է իրականացվում ներառական կրթություն:

Որպես կանոն չի երկարացվել բարձր առաջադիմությամբ սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի վճարման ժամկետը, ինչը լուրջ խնդիրներ է առաջացել այդ ուսանողների համար՝ անհարկի ֆինանսական բեռ, ընդհուպ մինչև համալսարանից հեռացում: Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վճարների պետության կողմից մասնակի կամ ամբողջական փոխհատուցման ոլորտում 2013 թվականին մեկնարկել է «Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին» գործընթացը, համաձայն որի բարձրագույն ուսումնական հաստատություններում պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում է իրականացվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ /30.01 և ավելի/ ունեցող սոցիալապես անապահով շուրջ 845 ուսանողների: 2013 թվականին «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքներում առաջարկվել է փոփոխություններ և լրացումներ, համաձայն որի՝ հնարավորություն է ընձեռվում բուհերի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցում իրականացնել և ընդլայնել սոցիալապես խոցելի ուսանողներին խմբերը և ստեղծել ֆինանսական աջակցության հավասար պայմաններ բոլոր բուհերում սովորող միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար: ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից իրենց միջոցների հաշվին իրականացվել է 12163 ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում, այդ թվում՝ սոցիալապես անապահով ուսանողների: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ այն դեպքերում, երբ համապատասխան ուսանողների ուսման վարձի վճարման ժամկետը չի հետաձգվում մինչև համապատասխան ուսումնական տարվա կեսը կամ ավարտը, չնայած բարձր առաջադիմություն ապահովելու հանգամանքին, կարող են առաջանալ լուրջ խնդիրներ՝ ընդհուպ մինչև այդ ուսանողների հեռացման: Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների՝ որպես ուսանող հրամանագրումը, չպետք է կախվածության մեջ դրվի ուսման վարձի վճարման հանգամանքից: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Նախարարության քաղաքականությունը ուսման վճարների փոխհատուցման մասով և դրանց կիրառումը հիմնականում ուղղված են սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին,

սակայն ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-1075 որոշմամբ ներկայացրել էր այն դիրքորոշումը, որ յուրաքանչյուր ուսանող, անկախ սոցիալական վիճակից, իր ցանկացած մասնագիտության գծով անհրաժեշտ առաջադիմությունն ապահովելու դեպքում չի զրկվի մասնագիտական բարձրագույն կրթությունն ստանալու հնարավորությունից: Նշվածը փաստում է, որ հարկավոր է նաև սոցիալապես ոչ անապահով, սակայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար նույնպես նախատեսել ուսման վճարների փոխհատուցման գործուն մեխանիզմներ:

Ավելին, «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 22.02.2013թ. ՄԴՈ-175 որոշման 8-րդ կետում, անդրադառնալով ուսանողական նպաստի միջոցով ուսման վարձի մասնակի փոխհատուցման վերաբերյալ սահմանված իրավակարգավորումներին, ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել էր այն հանգամանքի վրա, որ ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշումը չի ապահովում «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ բուհերի հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթի համարժեք իրացումը: Որը նաև գտնվում է տրամաբանական անմիջական կապի մեջ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 4-րդ պարբերության հետ: ՀՀ կառավարությունը, սահմանադրական դատարանի 22.02.2013 թվականի ՄԴՈ-1075 որոշման ընդունումից հետո, ՀՀ կառավարության 27.07.2006 թվականի թիվ 1183-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու հարցին 2013 թվականին չի անդրադարձել: Ստեղծված իրավիճակը Սահմանադրական դատարանի կողմից գնահատվել է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր:

Կրթության ոլորտում շարունակվել են դրամահավաքության, մանկավարժների նկատմամբ տարբերակված մոտեցման, ինչպես նաև տնօրենների կողմից անօրինականության դեպքերը: Տարվա ընթացքում ուսումնական հաստատություններում աշակերտներից տարբեր միջոցառումների անցկացման, ինչպես նաև այլ հիմնավորումներով տեղի են ունեցել դրամահավաքներ: «Դրամահավաք» երևույթի դեմ պայքարի հիմնական բարդությունը և/կամ խոչընդոտը նրանում է, որ առկա չեն բավարար մեխանիզմներ՝ խնդրահարույց դեպքերը կանխարգելելու համար: Առանձին դեպքերում մանկավարժները բարձրացրել են տնօրենների կողմից տարբերակված մոտեցման խնդիրը, որը հիմնականում պայմանավորված է լինում տնօրենի անձնական շահագրգռվածությամբ: 2013թ. համապատասխան անձինք Նախարարությանը ներկայացրել են տնօրենների կողմից անօրինականությունների վերաբերյալ թվով 17 բողոք, որից հաստատվել է միայն 7-ը: Դրանց կապակցությամբ ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Այդուհանդերձ, ձեռնարկված միջոցառումը չի կարող համարվել համարժեք, քանի որ պատասխանատվության նպատակներից է հանդիսանում նաև հետագայում նշված արարքի կատարման կանխարգելումը, իսկ այս պարագայում պատասխանատվության որևէ միջոց չի կիրառվել: Նախարարությունը 2013 թվականի ընթացքում «Կրթության և գիտության համակարգում

կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագրից» ելնելով, մշակել է մի շարք կարգեր, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը», «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը»: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին նշված խնդրի առնչությամբ հասցեագրված բողոքները, ինչպես նաև ոլորտի մասնագետների հայտնած տեղեկությունները, հարկավոր է արձանագրել, որ Նախարարությունը պետք է հետևողականություն դրսևորի նշված խնդիրների վերացման ուղղությամբ: Հարկ է նշել, որ Նախարարությունում նվազել է նշված դեպքերով ահազանգերի քանակը, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ նշված խնդիրների հայտնաբերման դեպքում սակավաթիվ դեպքերում են կիրառվել կարգապահական տույժեր՝ հետագայում նման արարքները բացառելու համար, որոնք Նախարարությունը հիմնականում փորձել է բացառել միայն հանձնարարականների միջոցով:

Առանձին դեպքերում գիտական մրցույթներում հանձնաժողովների անդամները հանդես են եկել նաև որպես մասնակից և ցուցաբերել են կանխակալ վերաբերմունք, սակայն օրենսդրական բացի հետևանքով մրցույթի մասնակիցները զրկված են եղել այդ անդամին բացարկ հայտնելու հնարավորությունից: 2013 թվականին Պաշտպանին հասցեագրվել են դիմում-բողոքներ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում անցկացվող մրցույթներում բացարկի հնարավորության բացակայության վերաբերյալ: Դիմումներից մեկի համաձայն՝ մրցույթներից մեկում հաղթող է ճանաչվել մասնագիտական փորձագիտական խորհրդի անդամներից մեկը, որը, փաստացի, հնարավորություն է ունեցել գնահատելու մրցույթին ներկայացված հարցերը: ՀՀ Կառավարությունը 2001 թվականի նոյեմբերի 7-ին ընդունել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1122 որոշումը: Որոշման մեջ հաստատված կարգով բողոքարկման գործընթացի որոշ իրավահարաբերությունները հստակ սահմանված չեն: Այսպես, կարգի 6-րդ կետի «թ» ենթակետի համաձայն՝ մրցույթի հրավերը, ամենից գատ, պետք է պարունակի Նախարարության կամ խորհրդի գործողությունները կամ որոշումները, մասնակցի բողոքարկելու իրավունքի պարզաբանումները: Կարգի 10-րդ կետի համաձայն՝ Խորհուրդների բացասական եզրակացության մասին տեղեկացվում է թեմայի ղեկավարին (հեղինակին), ով կարող է բողոքարկել նշված եզրակացությունը Նախարարությունում՝ տեղեկացվելուց հետո 15 օրվա ընթացքում: Խորհուրդը Նախարարության ներկայացմամբ տալիս է կրկնակի եզրակացություն: Եզրակացության հիման վրա Նախարարության ընդունած որոշումը վերջնական է: Բացի այդ, համաձայն Կարգի՝ հնարավոր չէ բացարկ հայտնել խորհրդի անդամներին, ինչը հանդիսանում է ցանկացած խորհրդի անաչառության և օբյեկտիվության կարևորագույն երաշխիք: Նախարարության տեղեկացմամբ Խորհրդի անդամները չեն կարող ազդել ոչ փորձաքննության ընթացքի և արդյունքների, ոչ էլ մրցույթի վերջնական արդյունքի վրա, և, հետևաբար, բացարկ հայտնելու օրենսդրական կարգավորման մեխանիզմների կարիք չկա: Այնուամենայնիվ, թե մրցույթին Խորհրդի անդամի մասնակցելու թույլատրելիության և թե Խորհրդի անդամին բացարկ հայտնելու

հնարավորության ինստիտուտները պետք է պատշաճ ամրագրվեն ՀՀ Կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ին թիվ 1122 որոշմամբ հաստատված կարգում:

Թերի ստուգումների արդյունքում չեն բացահայտվել դպրոցներում բուժօգնության մակարդակի, ժամկետանց դեղերի կամ առհասարակ դրանց բացակայության դեպքերը: ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N82 հրամանով, «...դպրոցական տարիքի երեխաների առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման սկզբունքներից ելնելով՝ հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարահիգիենիկ պահանջներ սահմանելու նպատակով», հաստատված են «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N 2.III.4.2... սանիտարական կանոնները», այդ թվում՝ «Դպրոցի բժշկական առանձնատեսչակի սարքավորումների և գործիքների ցանկը»: Համաձայն նույն հրամանի՝ հրամանի հսկողությունը հանձնարարված է Հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության Երևան քաղաքի, մարզային կենտրոնների և ներմարզային կայանների գլխավոր բժիշկներին: Սակայն Նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ գործող ընթացակարգերով հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության կողմից սաներին մասնագիտացված բժշկական օգնություն չի ցուցաբերվում, հետևաբար մասնագիտացված բուժօգնության ցուցաբերելու համար դեղորայք հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության կողմից ձեռք չի բերվում: Նշվածը չի կարող որևէ պարագայում հիմք հանդիսանալ ժամկետանց դեղերի առկայության համար: 2013 թվականին փոփոխություն է կատարվել «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.03.2006 թվականի N420-Ն որոշման մեջ: Համաձայն փոփոխության՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի ԱԱՊ բժշկի ընտրությունը և նրա մոտ գրանցումն իրականացվում է երեխայի օրինական ներկայացուցչի կողմից՝ համապատասխան հայտարարագրի լրացման միջոցով: Կրթության պետական տեսչության տարեկան գործունեության ընթացքում (ստուգումներ, ուսումնասիրություններ) նախարարի հրամանով հաստատված ձևաթղթերի շրջանակում իրականացվում է ուսումնական միջավայրի վերաբերյալ ուսումնասիրություն, այդ թվում գնահատվում է ուսումնական հաստատությունում բուժկետի առկայությունը և առաջին օգնության պարագաներով հագեցվածությունը: Այնուամենայնիվ քննարկվող տարվա ընթացքում ոլորտում արձանագրված թերացումները վկայում են այն մասին, որ Նախարարության կողմից իրականացվող ուսումնասիրությունները և ստուգումները չեն եղել բավարար, որպեսզի վերհանվեն բոլոր խախտումները կամ եղել են դրվագային և փոքրամասշտաբ:

Նախարարությունը միջոցներ չի ձեռնարկել՝ լուծելու որոշ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելու խնդիրը, քանի որ դա հակասում է ԲՈՒՀ-երի չքաղաքականացված լինելու սկզբունքին: Ուսանողական խորհուրդները կոչված են պաշտպանելու ուսանողների շահերը և ներկայացնելու դրանք պրոֆեսորադասախոսական անձնակազմի նիստերին: Ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելը ի սկզբանե բացառում է այդ կառույցի անկախությունն ու անաչառությունը: Հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ ուսանողական խորհուրդները, ունենալով կուսակցական

պատկանելիություն, օգտագործում են իրենց տրամադրված հնարավորությունները կուսակցության քարոզի և շահերի պաշտպանության համար, ինչը որևէ առնչություն չի կարող ունենալ դասընթացների և ուսանողների շահերի հետ: Ավելին, 2013 թվականին գրանցվել են դեպքեր, երբ ուսանողական խորհրդի նախագահները ուղղորդել են ուսանողներին իրականացնել հանրության համար առերևույթ վտանգավոր արարք, այն է՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտում: Սա միանգամայն անընդունելի է, քանի որ ուսանողական խորհուրդը պետք է լինի ապաքաղաքականացված կառույց: Նախարարությունն ընդհանրապես անդրադարձ չի կատարել այն հարցադրմանը, թե իր կողմից ուսումնասիրվել են արդյո՞ք բողոքներ հանրապետության տարբեր համալսարանների ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելու վերաբերյալ: Նշված հարցի վերաբերյալ Նախարարությունից հայտնել էին, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իրավասու չէ որևէ ուսանողի արգելելու անդամագրվել որևէ կուսակցության և, որ ՀՀ բուհերի ուսանողական խորհրդի անդամներն ընտրվում են տվյալ բուհերի ուսանողների կողմից: Հարկավոր է նշել, որ Կրթության մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2012 թվականի տարեկան զեկույցում բարձրացվել էր այս խնդիրը: Որպես խնդրի լուծում չէր առաջարկվել Նախարարությանը որևէ ուսանողի արգելել անդամագրվել որևէ կուսակցությանը, այլ առաջարկվել էր միջոցներ ձեռնարկել նշված խնդրի լուծման կապակցությամբ: Միջոցներից կարող էր հանդիսանալ Նախարարի համապատասխան հրամանը համաձայն, որի բոլոր ուսանողական խորհուրդների կանոնադրություններում ամրագրվեր պայման, որ ուսանողական խորհրդի նախագահը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ և/կամ ուսանողական խորհրդի նախագահը և անդամները խորհրդի շրջանակներում քննարկում և լուծում են բացառապես ուսանողական կյանքին վերաբերող հարցեր:

Չեն բարեկարգվել Երևանի և մարզերի դպրոցների կոմունալ պայմանները, ինչի հետևանքով մի շարք դպրոցներ առ այսօր գտնվում են ծայրահեղ վատ վիճակում: Բացի այդ, մշակված չեն գազի սպառման դիմաց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մեխանիզմներ: Նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ Երևան քաղաքի դպրոցներն ամբողջությամբ զինված են ջեռուցման լոկալ համակարգերով, իսկ Նախարարության ենթակայության չջեռուցվող դպրոցների թիվը զգալիորեն նվազում է: Այնուամենայնիվ, հանրակրթական ուսումնական հաստատություններին գազի սպառման դիմաց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մեխանիզմներ դեռևս մշակված չեն, ինչը հավելյալ ֆինանսական բեռ է հանրակրթական հաստատությունների համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է փաստել, որ 2013 թվականի ընթացքում Նախարարությունը որևէ բողոք չի ստացել հանրակրթական ուսումնական հաստատություններում կոմունալ վատ պայմանների և դրանց արդյունքում դասապրոցեսների խաթարման վերաբերյալ: Սակայն հանրապետությունում դեռևս բազմաթիվ են այն հանրակրթական հաստատությունները, որտեղ բացակայում են կամ ոչ պատշաճ վիճակում են գտնվում կոմունալ հարմարությունները: Հարկ ենք համարում նշել, որ մարզերի մի շարք

դպրոցներում կոմունալ վատ պայմանների պատճառով անհնար է դասապրոցեսի անցկացումը: Սակայն Նախարարությունը պատշաճ կարգով ընթացք չի տվել նշված խնդիրներին և իր նախաձեռնությամբ չի իրականացրել բավարար թվով մշտադիտարկումներ՝ վերհանելու և համապատասխան լուծումներ տալու բոլոր առկա խնդիրներին:

Առանձին դեպքերում դպրոցների տնօրինության սխալ հաշվարկի հետևանքով ուսուցիչները չեն ստացել իրենց սոցիալական փաթեթի գումարները: Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի 1691-Ն որոշմամբ հաստատված Սոցիալական փաթեթի հատկացման կարգի պահպանման ոլորտում խախտումներ 2013թ. ընթացքում չեն գրանցվել, մասնավորապես՝ ոչ համարժեք նվազեցումներ մեկ դրույքից պակաս աշխատանքային ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչների համար: Սակայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նշված խնդրի կապակցությամբ ներկայացվել են բազմաթիվ դիմում-բողոքներ: Այսպես, Կարգի 2-րդ բաժնի 4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ սոցիալական փաթեթի հատկացման սկզբունքներից է հանդիսանում այն, որ դրա սահմանաչափը մեկ անձի հաշվով չի կարող գերազանցել մեկ դրույքի (նորմալ աշխատաժամանակի) համար սահմանված գումարի չափը: Այն դեպքերում, երբ անձը ունի մեկ դրույքից պակաս աշխատանքային ծանրաբեռնվածություն (աշխատաժամանակ), ապա գումարը նվազեցվում է համապատասխան չափով (օրինակ՝ կես դրույք աշխատանքային ծանրաբեռնվածություն ունենալու դեպքում (նորմալ աշխատաժամանակի 50 տոկոս աշխատաժամանակ ունենալու դեպքում) սոցիալական փաթեթի սահմանաչափը կկազմի սահմանված գումարի կեսը): Սակայն գործնականում նման դրույթը չի պահպանվում և այն դեպքերում, երբ, օրինակ՝ հանրակրթական դպրոցի ուսուցիչը զբաղեցնում է մեկ դրույքից պակաս, սակայն ոչ կես դրույքի հաստիք՝ սոցիալական փաթեթի նրա գումարը նվազեցվում է 50 տոկոսի, այլ ոչ՝ համապատասխան չափով: Նշված հանգամանքից պարզ է դառնում, որ Նախարարության կողմից չեն իրականացվում վերահսկողության գործուն քայլեր՝ հայտնաբերելու և վերացնելու նման երևույթները, ինչպես նաև ձևավորելու միատեսակ նախադեպ՝ սոցիալական փաթեթի վճարների տրամադրման հետ կապված, որի արդյունավետ լուծման համար հարկավոր է կատարել համապատասխան փոփոխություն որոշումով հաստատված կարգում: Այս առիթով Պաշտպանը դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջարկելով վերացնել սոցիալական փաթեթի շահառուներին, այդ թվում՝ ուսուցիչներին տրամադրվող գումարների ոչ ամբողջական հատկացնելու պրակտիկան և համապատասխանեցնել այն Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի որոշմամբ հաստատված Կարգի պահանջներին: Ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը Պաշտպանին հայտնել է, որ իրենք գրությամբ դիմել են համապատասխան լիազոր մարմիններին՝ Նախարարությանը, ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին՝ Պաշտպանի կողմից մատնանշված բացթողումները շտկելու համար:

Դպրոցների տնօրենների ընտրություններն անց են կացվել բացթողումներով, ինչի պատճառն է հանդիսացել այն կարգավորող թերի հրամանը: Բացի այդ, արձանագրվել են տնօրենների կողմից անօրինականության բազմաթիվ դեպքեր: Նշված խնդրի առնչությամբ

2013 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են մի շարք դիմում-բողոքներ, որոնցում բարձրաձայնաձայն խնդիրների լուծման համար Պաշտպանի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Այսպես, նշված խնդիրները հիմնականում առնչվել են 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգին, որի 28-րդ կետի ձևակերպումն առաջացնում է տարբերություններ: Նշված կետի համաձայն՝ «Եթե տնօրեն չի ընտրվում, նույն օրվա ընթացքում անցկացվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առնվազն երկու ձայն ստացած հավակնորդները»: Յուրաքանչյուր նմանատիպ իրավիճակում կարող է ձևավորվել այնպիսի մեկնաբանություն, որ ցանկացած դեպքում, երբ կա առնվազն 2 ձայն ստացած հավակնորդ, պետք է անցկացվի կրկնակի քվեարկություն: Պաշտպանի կողմից ներկայացվել էր առաջարկություն՝ նշված կարգում փոփոխություն կատարելու մասին, մասնավորապես՝ 28-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե տնօրեն չի ընտրվում, նույն օրվա ընթացքում անցկացվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավել թվով կողմ ձայներ ստացած երկու հավակնորդները»: Ի պատասխան՝ Նախարարությունից տեղեկացել ենք, որ Կարգի 28-րդ կետում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ նախատեսված է լրամշակում: Սակայն, մինչ այժմ տնօրենների ընտրություններն անց են կացվում նշված խնդրահարույց նորմի հիման վրա, որը նաև խնդիր է առաջացնում իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Իրավական որոշակիության սկզբունքը նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով («Սանդի Թայմսը» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 26.04.1979; Մարկլիսը ընդդեմ Բելգիայի գործով վճիռ 13.06.1979): Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-753 մեջ հայտնել է դիրքորոշում, համաձայն որի՝ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը՝ հնարավորություն ունենալով կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել իրենց գործողությունը:

Գիտական աստիճանի շնորհման ընթացքում Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշ լիազորությունները, ինչպես նաև ատենախոսի կրկնակի պաշտպանությունը, պետք է նախատեսված լինեն օրենքով: Մինչդեռ դրանք նախատեսված են ոչ թե օրենքում, այլ, օրինակ, որոշումներում, հրամաններում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են դիմում-բողոքներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի, ՀՀ կառավարության՝ 08.08.1997թ. թիվ 327 որոշման (այսուհետ՝ Որոշում) և Բարձրագույն

որակավորման հանձնաժողովի 12.11.1997թ թիվ 149 Հրամանի (այսուհետ՝ Հրաման) որոշ դրույթների վերաբերյալ: Այսպես, Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ կառավարության իրավասություններից է գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի ու չափանիշների հաստատումը: Համապատասխանաբար, Որոշման 34-րդ կետը սահմանում է, որ եթե որակավորման գործի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի այնպիսի խախտումներ, որոնք հնարավորություն չեն տալիս գիտական աստիճանի վկայագիր հանձնելու մասին վերջնական որոշում ընդունելու, Բարձրագույն որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ ԲՈՀ) աշխատանքը վերադարձնում է խորհուրդ՝ կրկնական քննարկման, որի կարգը սահմանվում է խորհրդի աշխատանքի կանոնակարգով: Ստացվում է, որ կրկնական քննարկման կարգը հաստատվում է ոչ թե օրենքով, այլ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի կանոնակարգով, ինչը հաստատվել է Հրամանով: Մասնավորապես, Հրամանի 21-րդ կետի համաձայն՝ խորհուրդը ատենախոսության կրկնական քննարկումը կազմակերպում է ԲՈՀ-ի սահմանած պայմանների համաձայն: Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, երբ կրկնական քննարկում անցկացնելը, ըստ էության, ատենախոսի համար սահմանում է պարտավորություն կրկին հանդես գալ ատենախոսության պաշտպանությամբ, այնինչ, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Ավելին, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այսինքն, ԲՈՀ-ի իրավասությունները պետք է ամրագրված լինեն կամ ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքով: Այնինչ, տվյալ դեպքում վերջինիս Կարգ սահմանելու իրավասությունը սահմանվել է Կառավարության որոշմամբ, ինչը անհամապատասխանության խնդիր կարող է առաջացնել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ: Օրենքի 14-րդ հոդվածով՝ գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում Կառավարության համար սահմանված իրավասությունները, մասնավորապես՝ գիտության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինների և նրանց խնդիրների սահմանումը, չեն կարող հանդիսանալ պատշաճ հիմնավորում՝ ԲՈՀ-ի իրավասությունները Կառավարության որոշմամբ սահմանելու համար: Բացի այդ, Օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին առընթեր մասնագիտական խորհուրդները՝ Կառավարության սահմանած կարգով, իսկ 8-րդ մասը միաժամանակ ամրագրում է, որ գիտական աստիճանները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը՝ Կառավարության սահմանած կարգով: Դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը: Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներից պարզ է դարձել, որ ԲՈՀ-ը առանձին դեպքերում, առանց որևէ հիմնավորում ներկայացնելու, մերժում է մասնագիտական խորհրդի կողմից շնորհված գիտական աստիճանների հաստատումը և համապատասխան դիպլոմներով ամրագրումը: Ավելին, մերժման դեպքում պատշաճ հիմնավորումների ներկայացնելու

պարտականությունն նախատեսված չէ ոչ Օրենքով, ոչ Որոշմամբ: Հատկանշական է, որ Որոշման 33-րդ կետով նախատեսված է, որ ԲՈՀ-ը կարող է մերժել խորհրդի՝ գիտական աստիճանի վկայագիր հանձնելու միջնորդությունը՝ ելնելով որակավորման գործի ուսումնասիրության արդյունքներից: Մակայն «ելնելով որակավորման գործի ուսումնասիրության արդյունքներից» ձևակերպումը բավականին լայն է, ինչը շատ հաճախ չի պարզաբանվում ԲՈՀ-ի կողմից գիտական աստիճանի վկայագիր հանձնելու միջնորդությունը մերժելիս: Այսինքն, ԲՈՀ-ը չի մանրամասնում, թե որակավորման գործի ուսումնասիրության կոնկրետ ինչ հանգամանքների կամ փաստերի առկայության դեպքում է միջնորդությունը մերժվում: Ավելին, նշված լայն ձևակերպումը ենթադրում է հնարավոր չարաշահումների իրական ռիսկ: Նշված մտահոգությունները ներկայացվել էին նաև ՀՀ կրթության և գիտության նախարարին, որին ի պատասխան վերջինս հայտնել էր, որ՝ Նախարարության ուշադրության կենտրոնում են գիտական աստիճանաշնորհման հետ կապված հիմնահարցերը: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի /ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին/, ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» N 327 որոշման և ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի 1997 թվականի նոյեմբերի 12-ի N 149 հրամանի դրույթները ժամանակի ընթացքում գրեթե փոփոխություններ չեն կրել: Հայտնել էին նաև, որ Նախարարությունը նախաձեռնել է գիտական աստիճանաշնորհման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերանայման և լրամշակման, դրանք ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու գործընթաց, որտեղ իրենց անդրադարձը կգտնեն նաև մեր գրությամբ բարձրացված հարցերը: Ողջունելի է Նախարարության նման դիրքորոշումը, միաժամանակ գտնում ենք, որ հաշվի առնելով գիտական աստիճանաշնորհման գործընթացում առկա օրենսդրական խնդիրների հատկապես ստենախոսներին ենթաօրենսդրական ակտերով այլ ոչ օրենքներով պարտականություններ սահմանելու խնդրի կարևորությունը, դրանց պետք է լուծում տրվի 2014 թվականին:

Առաջարկություններ

- Հաշվի առնելով համապատասխան պարտավորությունները՝ ձեռնարկել միջոցներ՝ բոլոր հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ներդրումը ապահովելու համար:
- Հաշվի առնելով գործնականում հանդիպող բարդությունները՝ սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողների ուսման վարձի վճարման ժամկետը հետաձգել մինչև ուսումնական տարվա կեսը կամ ավարտը: Միաժամանակ միջոցներ ձեռնարկել ապահովելու համար ոչ միայն սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողների, այլև բոլոր ուսանողների՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն

ստանալու իրավունքը: Հետևողական լինել Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1075 որոշման մեջ արտահայտած պարտադիր դիրքորոշումների կատարմանը:

- Մշակել և ներդնել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված առավել արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև նման դեպքերի դեմ պայքարելու մեթոդներ:
- Օրենսդրորեն նախատեսել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում անցկացվող մրցույթներում համապատասխան հանձնաժողովների անդամներին բացարկյի հնարավորությունը:
- Իրականացնել պատշաճ ուսումնասիրություններ և ստուգումներ՝ ուսումնական հաստատություններում բուժօգնության մակարդակի բարձրացման, դեղերի բացակայության կամ ժամկետանց դեղերի առկայության խնդիրները վերհանելու ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել ուսանողական խորհուրդների քաղաքականացվածությունը վերացնելու նպատակով, ինչպես օրինակ՝ Նախարարի համապատասխան հրամանը, համաձայն որի բոլոր ուսանողական խորհուրդների կանոնադրություններում ամրագրվեր պայման, որ ուսանողական խորհրդի նախագահը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ և/կամ ուսանողական խորհրդի նախագահը և անդամները խորհրդի շրջանակներում քննարկում և լուծում են բացառապես ուսանողական կյանքին վերաբերող հարցեր:
- 2013 թվականին իրականացնել միջոցառումներ՝ Երևանի և ՀՀ մարզերի բոլոր հանրակրթական դպրոցներում ջեռուցման խնդիրը լուծելու, անբավարար պայմաններում գտնվող դպրոցները հիմնանորոգելու և «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով նախատեսված արդյունքին հասնելու ուղղությամբ:
- Հետևողական լինել «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը» ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցելու և այն համակարգ մտցնելու ուղղությամբ:
- Հետևողական գտնվել մամուլում հրապարակված տեղեկությունների, ինչպես նաև Նախարարությանն ուղղված դիմում-բողոքների միջոցով ոլորտին առնչվող խնդիրների պատշաճ քննարկման և լուծման հարցում՝ այդ կերպ ամրապնդելով Նախարարության և քաղաքացիական հասարակության միջև կապը:
- Օրենսդրության բարեփոխումների շրջանակներում լուծում տալ գիտական աստիճանաշնորհման գործընթացում առկա օրենսդրական խնդիրներին, հատկապես ատենախոսներին ենթաօրենսդրական ակտերով, այլ ոչ օրենքներով պարտականություններ սահմանելու խնդրին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ մշակույթի նախարարությունն ապահովում է յուրաքանչյուրի՝ գրական, գեղարվեստական ազատության և մշակութային կյանքին մասնակցելու ու մշակութային գործունեություն իրականացնելու իրավունքի իրականացումն ու պաշտպանությունը, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, ազատ ու մատչելի ծառայություններ մատուցելու համար պայմանների ստեղծումը:

2013 թվականին ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Նախարարությունը բարեխղճորեն չի ապահովել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը, ինչի հետևանքով, օրինակ, Երևանի Փակ շուկան կորցրեց իր կերպարային ամբողջականությունը:
- Տարիներ շարունակ չեն վերանորոգվել և տեխնիկապես չեն վերազինվել մի շարք պետական թատրոններ, ինչպես օրինակ Գ. Մունդուկյանի, Հ. Պարոնյանի անվան թատրոնները: Որոշ թատրոններ չունեն նույնիսկ առանձին տարածքներ, օրինակ՝ Մնջախաղի պետական թատրոնը:
- Մի շարք մշակութային շենքեր շարունակում են մնալ անմատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Անտեսելով մի շարք հրատապ մշակութային խնդիրներ՝ Նախարարությունը, առանց բավարար հիմնավորումների, առանձին միջոցառումների համար տրամադրել է չափազանց մեծ ֆինանսական միջոցներ:
- Մշակութային դահլիճները ապահովված չեն անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, ինչը խոչընդոտում է արվեստագետների կենդանի համերգային կատարումներին:
- Նախարարության կողմից սոցիալապես անապահով մարդկանց համար չեն նախատեսվել զեղչեր և այլ արտոնություններ, ինչի արդյունքում այդ մարդիկ զրկվել են մշակութային կյանքին մասնակցելու հնարավորությունից (օրինակ՝ համերգներ, թանգարաններ, թատրոններ և այլ մշակութային միջոցառումներ):

Արձանագրված դրական զարգացումները

- 2013 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք եկեղեցիների և այլ պատմամշակութային կենտրոնների վերանորոգման ու վերականգնողական աշխատանքներ:

- Իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես Գյումրի քաղաքում, Լոռու, Արմավիրի, Արարատի մարզերում՝ ուղղված ՀՀ մարզերում մշակույթի զարգացմանը:
- Մշակվել է «Թանգարանների և ՀՀ թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով կկարգավորվեն ոլորտի մի շարք խնդիրներ:
- Կառավարության որոշմամբ սահմանվել են հուշարձաններում կատարվող փոփոխությունների չափորոշիչները:

Ընդհանուր վերլուծություն

Նախարարությունը բարեխղճորեն չի ապահովել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը, ինչի հետևանքով, օրինակ, Երևանի Փակ շուկան կորցրեց իր կերպարային ամբողջականությունը: Նշենք, որ Երևանի Մաշտոցի պողոտայում գտնվող ու որպես հանրապետական նշանակության պատմաճարտարապետական հուշարձան պետության պահպանության տակ վերցված Կենտրոնական ծածկած շուկայի (Փակ շուկայի) տարածքում ապօրինի շինարարությունն առաջացրել էր հասարակության լայն շերտերի դժգոհությունը: Նշված շինարարությունն իրականացվել է կառույցի սեփականատեր «Թիվ 1 շուկա» ՍՊԸ-ի կողմից, որը կատարել է նշված վերանորոգման աշխատանքները առանց համապատասխան թույլտվության և անհրաժեշտ փաստաթղթերի: Թեև նշվածի կապակցությամբ Նախարարության կողմից ձեռնարկվել են միջոցներ կանխելու հուշարձան-շենքում ապօրինի վերգետնյա աշխատանքները և պահպանելու վերականգնմանն առնչվող խնդիրները, այնուամենայնիվ, խնդրին լուծում չի տրվել: Արդյունքում, պատմամշակութային հուշարձանի վերակառուցման՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ հուշարձանը կորցրել է իր կերպարային ամբողջականությունը: Նշենք, որ Նախարարության գնահատմամբ Կենտրոնական ծածկած շուկայում իրականացված շինարարական աշխատանքները չեն համապատասխանել պատմամշակութային հուշարձանի վերակառուցման՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Այդուհանդերձ, մտահոգիչ է Նախարարության դիրքորոշումն առ այն, որ Կենտրոնական ծածկած շուկան, չնայած վերոգրյալ ապօրինի շինարարական աշխատանքների, պահպանել է պատմամշակութային հուշարձանի կարգավիճակը: Նշենք, որ «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան», որին անդամակցում է նաև Հայաստանը, հստակ սահմանել է անդամ պետությունների պարտավորությունը՝ ապահովելու հուշարձանների, ճարտարապետական համալիրների և տեսարժան վայրերի պահպանությունը, ինչպես նաև խուսափելու պահպանվող արժեքների աղավաղելուց, խարխիլելուց կամ քանդելուց: Տվյալ դեպքում, բացի ներպետական օրենսդրությունից, տեղի է ունեցել նաև միջազգային պարտավորությունների խախտում: Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախարարությունն առավել վտանգված հուշարձանների տեխնիկական վիճակի մշտադիտարկումներից զատ մշտադիտարկում է իրականացնում նաև այլ հուշարձանների նկատմամբ՝ պարբերաբար շրջայցերի կազմակերպմամբ: Այդուհանդերձ, միայն շրջայցերի կազմակերպումը բավարար չէ պատմական նշանակություն ունեցող հուշարձանների արդյունավետ պահպանման

համար: Գործնականում կարող է խնդրահարույց լինել շրջայցերի արդյունավետությունը նաև այն տեսանկյունից, որ դրա հիման վրա չեն կարող անհրաժեշտ պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ կիրառվել: Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել նաև տվյալ հուշարձանների նկատմամբ վերահսկողական գործառնությունների իրականացմանն ու պատասխանատվության միջոցների կիրառմանը, ինչը Նախարարության կողմից դեռևս չի իրականացվում:

Տարիներ շարունակ չեն վերանորոգվել և տեխնիկապես չեն վերազինվել մի շարք պետական թատրոններ, ինչպես օրինակ Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի անվան թատրոնները: Որոշ թատրոններ չունեն նույնիսկ առանձին տարածքներ, օրինակ՝ Մնջախաղի պետական թատրոնը: Այսպես, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի շենքը, թեև շահագործման է հանձնվել 1962թ., այն մինչ օրս չի վերանորոգվել: Շենքային վատ պայմանների պատճառով վերջերս ժամանակավորապես դադարեցվել էին անգամ թատրոնի աշխատանքները: Մեկ այլ՝ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, չնայած իրականացված վերանորոգման աշխատանքներին, ունի նյութատեխնիկական հագեցվածության խնդիր, ինչի կապակցությամբ Նախարարության կողմից դեռևս միջոցներ չեն ձեռնարկվել: Բացի այդ, որոշ թատերահամերգային կազմակերպություններ, այդ թվում նաև Մնջախաղի պետական թատրոնն ունեն սեփական տարածքի խնդիր: Չունենալով սեփական տարածք, նշյալ կազմակերպությունները շարունակում են գործել այլ կառույցներում: Մասնավորապես, Մնջախաղի պետական թատրոնն իր գործունեությունն իրականացնում է պատանի հանդիսատեսի թատրոնի շենքում: Այնինչ, խնդրի լուծման համար անհրաժեշտ է ոչ միայն Նախարարության պատրաստակամությունը, այլև՝ գործնականում արդյունավետ միջոցների ձեռնարկումը:

Մի շարք մշակութային շենքեր շարունակում են մնալ անմատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Խնդիրն այն է, որ գործող մշակութային կառույցները մեծամասամբ հին են և հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար, ինչը խոչընդոտում է վերջիններիս լիարժեք կերպով մասնակցել մշակութային կյանքին: Նախարարությունից տեղեկացրել են, որ խնդիրը լուծում է ստանում միայն մշակութային կազմակերպությունների հիմնանորոգումների ընթացքում: Այնինչ, հաշվի առնելով, որ ոչ բոլոր մշակութային հաստատություններն են ենթակա հիմնանորոգման, սակայն, միևնույն ժամանակ, ապահովված չեն թեքահարթակներով կամ այլ անհրաժեշտ հարմարանքներով՝ գտնում ենք, որ հարկավոր է վերոնշյալ խնդրին լուծում տալ՝ անկախ հաստատության հիմնանորոգման ենթակա լինելու կարգավիճակից: Ողջունելի է Նախարարության կողմից միջոցների ձեռնարկումը մի շարք մշակութային հաստատությունների շենքերը նման հարմարանքներով ապահովելու ուղղությամբ, ինչի արդյունքում ներկայում 17 հաստատությունների շենքեր հարմարեցված կամ մասամբ են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի ու ելքի համար: Այդուհանդերձ, անհրաժեշտ է այն բոլոր մշակութային հաստատություններում, որտեղ բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքը դյուրինացնող հարմարանքները, ժամանակավոր լուծումներ նախատեսել՝ թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ կառուցելով՝ հաշմանդամություն

ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ապահովելու համար: Ընթացիկ տարում Նախարարության աջակցությամբ հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպվել են միջոցառումներ, մասնավորապես, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացվել է Մանկապատանեկան արվեստի 1-ին ինտեգրատիվ հանրապետական փառատոնը, Հայաստանի կույրերի միավորման ժողովրդական գործիքների խմբի և երգչախմբի «Մեր հոգու լույսը քեզ, հայրենի՛ք» համերգային ծրագիրը, «Էխո» հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաներին աջակցող հասարակական կազմակերպության կողմից բարեգործական համերգը և այլն: Բայցնայնպես, նշված միջոցառումները, հիմնականում, կազմակերպվել են մայրաքաղաքում: Ուստի, անհրաժեշտ է նմանօրինակ միջոցառումներ կազմակերպել ՀՀ բոլոր մարզերում՝ այդ կերպ ապահովելով յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի լիարժեք մասնակցությունը մշակութային կյանքին:

Անտեսելով մի շարք հրատապ մշակութային խնդիրներ՝ Նախարարությունը, առանց բավարար հիմնավորումների, առանձին միջոցառումների համար տրամադրել է չափազանց մեծ ֆինանսական միջոցներ: Նման երևույթները Նախարարությունը պատճառաբանում է նրանով, որ համաչափության սկզբունքով ֆինանսական միջոցների բաշխումը անհնար է և ոչ նպատակահարմար՝ ելնելով ստեղծագործական գործունեության ոլորտային և ժանրային առանձնահատկություններից: Մինչդեռ, մասնավորապես, մեկ համերգի համար Նախարարության կողմից տրամադրվել են այնքան ֆինանսական միջոցներ, որոնք կարող էին լուծել մի շարք ակնհայտորեն առավել հրատապ և հույժ կարևոր մշակութային խնդիրներ: Այսպես, Անկախության հռչակման 22-րդ տարեդարձին նվիրված Նունե Եսայանի տոնական համերգի կազմակերպչական աշխատանքների համար բյուջեից փոխանցվել է 54 մլն 691 հազար 400 դրամ, որը հասարակական բողոքի մեծ ալիք է բարձրացրել: Նշված գումարը բյուջեում ձևակերպվել էր որպես նվիրատվություն, իսկ դրա պատասխանատու մարմին էր նշանակվել Նախարարությունը: Ընդունելի է այն մտտեցումը, որ ստեղծագործական գործունեության ոլորտային և ժանրային առանձնահատկություններից ելնելով համաչափության սկզբունքով ֆինանսական միջոցների բաշխումը կարող է առաջացնել դժվարություններ, սակայն այն պարագայում, երբ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձը կազմում է ընդամենը 45.000 դրամ, իսկ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության՝ 2013թ. չորրորդ եռամսյակում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն ընդամենը 56.2 հազար դրամ, 54 մլն 691 հազար 400 դրամ մեկ անձի և մեկ միջոցառման համար տրամադրելը հիմնավոր մտահոգության հիմք է հանդիսանում: Գտնում ենք, որ անհրաժեշտ է հետամուտ լինել՝ զգալի ֆինանսական միջոցների՝ ըստ առկա խնդիրների առաջնահերթության բաշխելուն՝ հաշվի առնելով երկրում, մասնավորապես, մշակույթի ոլորտում առկա մի շարք անհետաձգելի լուծման կարիք ունեցող խնդիրները:

Մշակութային դահլիճները ապահովված չեն անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, ինչը խոչընդոտում է արվեստագետների կենդանի համերգային կատարումներին: Արդյունքում տուժում է համերգների ձայնային որակը, ինչը լուրջ խոչընդոտ է արվեստագետների, մասնավորապես, երգիչների գործունեության պատշաճ իրականացման համար: Հարկ է նշել, որ նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների

արդյունքում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», ինչպես նաև «Գովազդի մասին» ՀՀ օրենքներում սահմանվեցին դրույթներ, համաձայն որոնց մշակութային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը (գովազդատուները) թատերահամերգային, հանրային միջոցառումներին, փառատոներին, համերգային հյուրախաղերում պարտավորվեցին պարտադիր տեղեկացնել հանրությանը նշյալ միջոցառումներում կենդանի կատարման կամ որևէ տեսակի ձայնագրվածքի (ֆոնոգրամայի) օգտագործման մասին: Այսինքն, օրենսդրորեն ամրագրվեցին սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված կարևոր պահանջներ: Միաժամանակ, հարկ է առանձնացնել ՀՀ մշակույթի նախարարի 2009թ. փետրվարի 18-ի թիվ 43-Ա հրամանը, որով խստացվեց Նախարարության ենթակայության պետական կազմակերպությունների դահլիճներում ձայնագրվածքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը: Մասնավորապես, նշյալ հրամանագրի համաձայն՝ պետական համերգների և միջոցառումների անցկացման ընթացքում բացառվեց ձայնագրվածքի (ֆոնոգրամայի) գործածումը: Մինչդեռ մի շարք նման դահլիճներում առ այսօր բացակայում են բավարար տեխնիկական միջոցներ, որոնք կապահովեն բարձրորակ կենդանի երգեցողությունը: Նշյալն էապես սահմանափակում է երգարվեստի ներկայացուցիչների՝ որակյալ երաժշտական կատարում ներկայացնելու հնարավորությունը: Ուստի հարկավոր է արդյունավետ և համալիր միջոցներ ձեռնարկել համերգային դահլիճների պատշաճ տեխնիկական սարքավորումներով ապահովման ուղղությամբ:

Նախարարության կողմից սոցիալապես անապահով մարդկանց համար չեն նախատեսվել զեղչեր և այլ արտոնություններ, ինչի արդյունքում այդ մարդիկ գրկվել են մշակութային կյանքին մասնակցելու հնարավորությունից (օրինակ՝ համերգներ, թանգարաններ, թատրոններ և այլ մշակութային միջոցառումներ): Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի գրական, զեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Նշված հոդվածի վերաբերյալ անդրադարձ է կատարվել «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» 2010թ. գիտագործնական մեկնաբանությունների ժողովածուում, որի համաձայն՝ գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ունի երկու՝ հարաբերականորեն իրարից անկախ բաղադրիչներ՝ 1) գիտության նվաճումներից օգտվելու իրավունք, 2) մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Հատկանշական է, որ նշված երկու իրավունքները հանդես են գալիս միասնաբար՝ որպես մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Բացի այդ, 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 27-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից օգտվելու, գիտական առաջընթացից և դրա բարիքներից օգտվելու իրավունք»: Նույն կերպ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածն ամրագրում է, որ դրա մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝ ա) մասնակցելու մշակութային կյանքին, բ) օգտվելու գիտական առաջընթացի և

դրա կիրառման բարիքներից, գ) օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ: Ըստ նույն հոդվածի 2-րդ կետի՝ այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկվող միջոցներին դասվում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է կրթության ու մշակույթի նվաճումների պահպանման, զարգացման և տարածման համար: Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով պետությունները պարտավորվում են հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը, ճանաչել գիտական ու մշակութային բնագավառներում միջազգային կապերի և համագործակցության խրախուսման և զարգացման անհրաժեշտությունը: Արդյունքում, մշակութային կյանքին մասնակցելը և մշակույթի մատչելիությունը բոլորի և յուրաքանչյուրի՝ խմբերի և անհատների համար դիտարկվում է որպես ազատ ինքնադրսևորման, շփման, գործողության, արարման հնարավորություն՝ սեփական ծաղկումը և հասարակության ներդաշնակ կյանքն ու մշակութային առաջընթացն ապահովելու նպատակով: Ուստի, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու՝ Մահմանադրությամբ երաշխավորված այդ իրավունքը առաջին հերթին նշանակում է, որ մարդը կարող է մասնակցել դրանց (այդ նվաճումների) ստեղծմանը, երկրորդ՝ կարող է ազատորեն օգտվել մշակութային արժեքներից և նվաճումներից, երրորդ՝ ՀՀ պարտականությունն է յուրաքանչյուրի համար ապահովել ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ ժողովրդի մշակութային հաստատությունների (գրադարաններ, թանգարաններ, արխիվային ֆոնդեր, թատրոններ, համերգասրահներ, պատկերասրահներ, կինոթատրոններ, պատմամշակութային հուշարձաններ, երաժշտական, պարարվեստի, կրկեսային արվեստի կենտրոններ և այլն) մատչելիությունը, ինչը, սակայն, պետության կողմից պատշաճ չի ապահովվում:

Առաջարկություններ

- Ցուցաբերել հետևողականություն՝ պատմության և մշակութային հուշարձանների արդյունավետ պահպանության ապահովման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, պատշաճ պատասխանատվության միջոցների կիրառման հարցերում:
- Միջոցներ ձեռնարկել մի շարք պետական թատրոնների վերանորոգման և անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության ապահովման ուղղությամբ: Միաժամանակ առանձին տարածքով ապահովել դրա կարիքն ունեցող առանձին թատրոնները:
- Մի շարք մշակութային հաստատությունների շենքերը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար:
- Հետամուտ լինել զգալի ֆինանսական միջոցների՝ բացառապես ըստ առկա խնդիրների առաջնահերթության բաշխելուն, մասնավորապես հաշվի առնելով մշակույթի ոլորտում առկա մի շարք անհետաձգելի լուծման կարիք ունեցող խնդիրները:

- Մշակութային դահլիճները վերագինել անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով՝ արվեստագետների կենդանի համերգային կատարումներն ապահովելու և սպառողների հնարավոր մոլորության դեպքերը կանխելու համար:
- Սոցիալապես անապահով անձանց մշակութային կյանքին լիարժեք մասնակցելու հնարավորությունը ապահովելու համար՝ սահմանված կարգով նախատեսել զեղչեր և այլ արտոնություններ նշված անձանց համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հանրապետությունում բնակչության ֆիզիկական դաստիարակության գործի և մարզիկների պատրաստման նկատմամբ կազմակերպական-մեթոդական ղեկավարումը, մշակում է քաղաքականությունը սպորտի և երիտասարդության բնագավառում, իրականացնում է սպորտի և երիտասարդության ոլորտի քարոզչությունը և այլն:

2013 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Մարզերում բնակվող մի շարք երիտասարդների ու երիտասարդ ընտանիքների չի տրամադրվել բավարար սոցիալական աջակցություն, ինչի հետևանքով այդ մարդիկ գտնվում են աղքատության եզրին:
- Նախարարությունն ընդամենը մեկ միջոցառում է իրականացրել երիտասարդներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ, ինչի հետևանքով բազմաթիվ երիտասարդներ շարունակում են գործազուրկ մնալ:
- Առանձին դեպքերում ստացվել են բողոքներ «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական ծրագրի վերաբերյալ, քանի որ պարզ չեն եղել երիտասարդ ընտանիքների ընտրության չափանիշները:
- Բավարար ֆինանսավորում չի տրամադրվել հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքին ներգավելու, և մարզիկների՝ պարասօլիմպիկ խաղերին մասնակցելու համար:
- Հակառակ օրենքի պահանջի՝ բավարար միջոցներ չեն ձեռնարկվել մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչների վերապատրաստման, ինչպես նաև նրանց աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ մարզերում 2013 թվականին կառուցվել և շահագործման են հաձնվել նոր մարզական բակեր, մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում, ինչպես նաև վերջին տարիների ընթացքում բակերում տեղադրվել են 60 խաղահրապարակներ՝ փոքր ֆուտբոլային դաշտերով, այդ թվում՝ 25-ը Երևանում:
- Ազգային սպորտային խաղերի պահպանման և տարածման ուղղությամբ անցկացվել է «ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոն» միջոցառումը:

- 2013 թվականի ընթացքում գրանցվել է «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շահառուների թվի աճ:

Ընդհանուր վերլուծություն

Մարզերում բնակվող մի շարք երիտասարդների ու երիտասարդ ընտանիքների չի տրամադրվել բավարար սոցիալական աջակցություն, ինչի հետևանքով այդ մարդիկ գտնվում են աղքատության եզրին: Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ մարզերում երիտասարդների և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ: Հարկավոր է նշել, որ Նախարարությունը մշակել և ՀՀ կառավարություն է ներկայացրել «Մարզաբնակ երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով բիզնես վարկերի տրամադրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Սակայն 2013 թվականի ընթացքում Նախարարության կողմից չեն իրականացվել բավարար թվով համալիր միջոցառումներ՝ իրավիճակը բարելավելու նպատակով: Մարզերում երիտասարդների համար չեն կազմակերպվել և անցկացվել տեղեկատվական և/կամ ժամանցի բավարար քանակի միջոցառումներ: Տարբերակված մոտեցում է դրսևորվել մարզերում և Երևան քաղաքում բնակվող երիտասարդներին Նախարարության կողմից իրականացվող ծրագրերում ներգրավվածությունը ու մասնակցությունը ապահովելու ուղղությամբ: Ինչպես նաև բավարար չափով չի ընդարձակվել համագործակցությունը տարբեր երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ:

Նախարարությունն ընդամենը մեկ միջոցառում է իրականացրել երիտասարդներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ, ինչի հետևանքով բազմաթիվ երիտասարդներ շարունակում են գործազուրկ մնալ: Նախարարության աշխատանքը երիտասարդական քաղաքականության ոլորտում միտված է, ի թիվս այլ գործողությունների, երիտասարդների զբաղվածության ապահովման և աշխատատեղերի ստեղծմանը, սակայն այս ուղղությամբ Նախարարության կողմից ձեռնարկված միջոցները սակավաթիվ են եղել, և երիտասարդների համար զբաղվածության և աշխատատեղերի ստեղծման խնդիրը գործնականում շարունակում է մնալ չլուծված: Յուրաքանչյուր տարի Նախարարության կողմից իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելուն, ինչպես նաև բիզնես սկսելու և վարելու հմտությունների զարգացմանը: Մասնավորապես, երիտասարդության շրջանում զբաղվածության խնդիրների դրական զարգացման ուղղությամբ Նախարարության կողմից 2013 թվականի ընթացքում իրականացվել է ընդամենը մեկ միջոցառում՝ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում անցկացված «Աշխատանքի տոնավաճառ» ծրագրի շրջանակներում: Այնինչ, նման միջոցառումների անցկացման կարիքը զգացվում է հանրապետության բոլոր մարզերում և համայնքներում: Նշված միջոցառումները նաև պետք է կրեն շարունակական բնույթ՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդրի կարևորությունը:

Առանձին դեպքերում ստացվել են բողոքներ «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական ծրագրի վերաբերյալ, քանի որ պարզ չեն եղել երտասարդներ

ընտանիքների ընտրության չափանիշները: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը: 2013 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ վերաֆինանսավորվել է 1336 վարկ՝ 10,025.4 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով, որից 647 վարկ 5,876.2 միլիարդ ՀՀ դրամ պայմանագրային գումարով տրամադրվել է Երևանում, իսկ 689 վարկ 4,149.2 միլիարդ ՀՀ դրամ պայմանագրային գումարով՝ ՀՀ մարզերում: Այդ թվում 2011 թվականի ընթացքում վերաֆինանսավորվել է 469 վարկ՝ 3,435 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով, 2012 թվականին՝ 355 վարկ՝ 2,622.7 միլիարդ ՀՀ դրամ և 2013 թվականին՝ 1011 վարկ՝ 7,598.7 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով: Մակայն, պետական նպատակային ծրագրի իրականացման շրջանակներում, առանձին դեպքերում, քաղաքացիների կողմից խնդիր է բարձրացվել վերոնշյալ ծրագրի գործընթացի թափանցիկության բացակայության և առկա չարաշահումների վերաբերյալ: Հատկապես խնդրահարույց են նաև այդ գործընթացի ընթացքում հնարավոր կոռուպցիոն դրսևորումները և դրանց նպաստող հանգամանքները:

Բավարար ֆինանսավորում չի տրամադրվել հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքին ներգավելու և մարզիկների՝ պարաօլիմպիկ խաղերին մասնակցելու համար: Հաշմանդամություն ունեցող երիտասարդների սոցիալական ներգրավվածության ապահովման ուղղությամբ Նախարարության կողմից իրականացվում են համապատասխան ծրագրեր, ինչը բխում է նաև ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարության միջոցառումների ծրագրից: Մասնավորապես, 2013թ. իրականացվել են «Բաց աչքերով», «Զբաղվածության աջակցություն սահմանափակ կարողություններով երիտասարդներին», «Տեղեկատվության իրավունք», «Հողված 30» ծրագրերը: Հայաստանի Հանրապետությունում 1994 թվականին հիմնադրվել է Պարաօլիմպիկ կոմիտեն: Հաշմանդամների համար ստեղծված այս մրցույթը զարգացած է Հայաստանում, և մարզիկները գրանցել են բազում հաջողություններ: Այդուհանդերձ, բացակայում է անհրաժեշտ ֆինանսավորում հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքը ակտիվացնելու, վերջիններիս սպորտային կյանքին ներգրավելու համար և հատկապես, մարզիկներին պարաօլիմպիկ խաղերին մասնակցելու հնարավորություն տրամադրելը: Հաշմանդամություն ունեցող անձանց համար չի հարմարեցվել մարզակառույցների մուտքն ու ելքը: 2013 թվականին ՀՀ պետական բյուջեի «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով ոլորտում գործող թվով 4 հասարակական կազմակերպությունների տրամադրվել է 9.000.000 դրամ մարզական միջոցառումներ անցկացնելու համար, ինչպես նաև «2013 թվականին Բուլղարիայում կայանալիք խուլերի ամառային օլիմպիադային (սուրդլիմպիկ խաղեր) մասնակցության ապահովում» ծրագրով՝ 7.948.800 (յոթ միլիոն ինը հարյուր քառասունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ է տրամադրվել սուրդլիմպիկ խաղերին մասնակցության ապահովման համար: Չնայած ոլորտում կատարված որոշակի հատկացումներին, պետության կողմից բավարար չափով չեն ապահովվել հաշմանդամային սպորտի զարգացումը և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը սպորտի բնագավառում:

Հակառակ օրենքի պահանջի՝ բավարար միջոցներ չեն ձեռնարկվել մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչների վերապատրաստման, ինչպես նաև նրանց աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ: Նախարարությունը համաձայն «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, որպես ոլորտի լիազոր մարմին, պարտավոր է կազմակերպել մանկապատանեկան սպորտի բնագավառի մասնագետների (մարզիչների, մանկավարժների և այլն) պատրաստումը և վերապատրաստումը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Ինչը վկայում է այն բանի մասին, որ Նախարարությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է կազմակերպեր մանկապատանեկան սպորտի բնագավառի բոլոր մասնագետների (մարզիչների, մանկավարժների և այլն) պատրաստումը և վերապատրաստումը: Օրենսդիրը, նման իրավադրույթ ամրագրելով, լայն պարտավորություն է սահմանել Նախարարության համար, սակայն վերջինս այն պատշաճ կերպ չի կատարել: 2013 թվականին լուծում չեն ստացել բյուջետային մանկապատանեկան մարզադպրոցների աշխատակազմերի աշխատավարձերի և հավելավճարների վճարման հետ կապված խնդիրները: 2013 թվականին ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային մանկապատանեկան մարզադպրոցների ռազմավարական զարգացման և նրանցում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի և հավելավճարների վճարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Մակայն, բյուջետային մանկապատանեկան մարզադպրոցների ռազմավարական զարգացման և նրանցում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային աշխատավարձերի և հավելավճարների վճարման խնդիրների լուծմանն ուղղված էական բարեփոխումներ Նախարարության կողմից չեն իրականացվել: Միննույն ժամանակ մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի № 02/14.3/18425-13 գրությամբ հանձնարարել է հայեցակարգով առաջարկվող ծրագրերի ֆինանսավորման հարցերը սահմանված կարգով ներկայացնել և քննարկել ՀՀ 2015-2017 թթ. ՄԺԾԾ-ի մշակման շրջանակներում, այսինքն՝ նշվածը կարող է հանգեցնել նշված խնդիրների լուծման ձգձգմանը:

Մտահոգիչ է նաև բակերի, մասնավորապես՝ ֆուտբոլային դաշտերի, խաղահրապարակների կառուցապատման խնդիրը: Խնդիրը Երևանում գրեթե լուծվել է, այնուամենայնիվ, այն շարունակում է արդիական մնալ ՀՀ մարզերում: Այսպես, համաձայն Նախարարության գրության՝ 2013 թվականի ընթացքում կառուցվել և շահագործման են հանձնվել նոր մարզական բակեր: Մակայն մտահոգիչ է այն հանգամանքը, որ մարզական բակեր կառուցվել և շահագործման են հանձնվել ՀՀ մարզերից միայն մի քանիսում, մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում: Անհրաժեշտ է, որպեսզի Նախարարությունը, որպես պատասխանատու գերատեսչություն, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակի քաղաքականություն՝ ուղղված վերոնշյալ խնդրի լուծմանը, ինչպես նաև հետևողական լինի ֆուտբոլային

դաշտերով և խաղահրապարակներով համալրված բակերի պահպանման նկատմամբ, ինչը սպորտի զարգացման էական խթան կհանդիսանա հանրապետությունում:

Առաջարկություններ

- Հստակ միջոցներ ձեռնարկել ՀՀ մարզերում երիտասարդների և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ:
- Նախաձեռնել քայլեր երիտասարդների համար զբաղվածության և աշխատատեղերի ստեղծման խնդիրը գործնականում լուծելու համար՝ միաժամանակ հանրությանը իրազեկելով Ջբաղվածության մասին ՀՀ օրենքի կարգավորումների վերաբերյալ:
- Սահմանել հսկողություն «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի գործընթացի թափանցիկության վերաբերյալ՝ միաժամանակ միջոցներ ձեռնարկելով չարաշահումների վերհանման ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքը ակտիվացնելու, վերջիններիս սպորտային կյանքին ներգրավելու և մարզիկներին պարասպորտային խաղերին մասնակցելու հնարավորություն տրամադրելու համար:
- Իրականացնել բարեփոխումներ՝ ուղղված բյուջետային մանկապատանեկան մարզադպրոցների աշխատակազմերի դրույքաչափերի և հավելավճարների վճարման հետ կապված խնդիրների լուծմանը, ինչպես նաև օրենքով սահմանված մարզիչների վերապատրաստման պահանջը ապահովելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ապահովելով պետական բյուջեի մուտքերը և հարկային ու մաքսային վարչարարությունը՝ իրականացնում է հարկ վճարողների սպասարկում, հարկ վճարողների հաշվառում, հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում, հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում, վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացում, ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխելիս՝ մաքսասակագնային մեխանիզմների կիրառման, ներմուծման ու արտահանման սահմանված կարգի կիրառման ապահովում, մաքսային հսկողության ու ձևակերպումների կազմակերպում և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Ստվերային գործունեության վերաբերյալ ՊԵԿ-ն ուսումնասիրել է 225 դեպք, որոնցից միայն 25-ով են հարուցվել քրեական գործեր, քանի որ եղած գործերի 89% քննել է մակերեսորեն: Արդյունքում ստվերային տնտեսության ցուցանիշը տարիներ շարունակ չի փոփոխվել՝ կազմելով շուրջ 35 - 40%:
- Հարկային կամ մաքսային մարմինների որոշ պաշտոնյաներ կամ նրանց հարազատները՝ ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը, եղբայրները, միաժամանակ զբաղվել են նաև ձեռնարկատիրական գործունեությամբ: Արդյունքում, այդ անձինք անօրինական առավելություններ են ստացել միևնույն շուկայում գործող այլ գործարարների նկատմամբ:
- ՊԵԿ-ը գործարարների նկատմամբ կայացրել է չափազանց մեծ քանակի՝ 5712 հարկային արգելանքի որոշումներ՝ առանց սպառելու սահմանափակման այլ միջոցները, ինչպես օրինակ՝ տույժեր, կրկնապատկվող տույժեր: Ընդ որում, գործարարների գույքի և ամբողջ դրամական միջոցների վրա դրված արգելանքը զգալիորեն գերազանցել է հարկային պարտքի չափը: Արդյունքում գործարարները տևական ժամանակով զրկվել են թե՛ իրենց բանկային հաշիվները, թե՛ գույքը տնօրինելու հնարավորությունից:
- Օրենսդրական բացի հետևանքով ՊԵԿ-ին տրվել է հայեցողություն՝ տուգանքը կիրառել ոչ միայն խախտումը կատարելու, այլև այն բացահայտելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Արդյունքում, ՊԵԿ-ը, ոչ բարեխղճորեն օգտագործելով իրեն տրված հայեցողությունը, մի դեպքում մարդկանց ենթարկել է պատասխանատվության, մյուս դեպքում՝ ոչ:

- Մի շարք դեպքերում ՊԵԿ-ը նույն արարքի համար գործարարներին ենթարկել է և վարչական, և հարկային պատասխանատվության՝ խախտելով նույն արարքի համար կրկին չպատժվելու Սահմանադրության սկզբունքը:
- «Շրջանառության հարկի մասին» օրենքում կիրառվող «անձ» հասկացության ոչ հստակ մեկնաբանության արդյունքում գործարարները ստիպված են եղել վճարել թե՛ ԱԱՀ-ի գումարները և թե՛ շրջանառության հարկը՝ տույժերով ու տուգանքներով: Նշվածի հետևանքով գործարարները կրել են լուրջ ֆինանսական վնասներ, իսկ որոշները նույնիսկ հայտնվել են սնանկացման վտանգի առաջ:
- Նոր հաշվիչ դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) ներդնումը իրականացվել է մի շարք թերություններով՝ ՀԴՄ-ների գները չեն եղել մատչելի, նրանց տեխնիկական սպասարկումը եղել է թերի, գործարարների և այլ շահագրգիռ անձանց հետ նոր ՀԴՄ-ների վերաբերյալ պատշաճ քննարկումներ չեն կազմակերպվել:
- ՊԵԿ-ը չի ներկայացրել որևէ մատչելի փաստաթուղթ, որտեղ հստակ նշված կլինեն ապրաքների և մեքենաների մաքսային արժեքները և դրանց որոշման կանոնները: Արդյունքում մարդիկ հնարավորություն չեն ունեցել կանխատեսելու իրենց գնած ապրանքների կամ մեքենաների մաքսազերծման գումարի չափը և դրա որոշման կարգը:

Արձանագրված դրական զարգացումները

- «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետում նշված «անձ» եզրույթի օրենսդրական հստակեցման նպատակով մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության է ներկայացվել մի շարք նախագծերի փաթեթ:
- ՊԵԿ Ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպվել են հարկային և մաքսային ծառայողների բոլոր հիմնական մասնագիտական խմբերի (հարկ վճարողներին սպասարկող անձնակազմ, ստուգումներ, իրավաբաններ, օպերատիվ հետախուզական անձնակազմ, ՏՏ մասնագետներ և այլն) գծով նախապատրաստական և վերապատրաստման դասընթացներ, որի շրջանակներում ընդգրկվել է ընդհանուր առմամբ 4073 ունկնդիր:
- Միջոցներ են ձեռնարկվել ՀՀ ողջ տարածքում բացօթյա վայրերում խաղային ավտոմատների միջոցով ծխախոտի խաղարկություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների հայտնաբերման և նրանց նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցների կիրառման ուղղությամբ:

Ընդհանուր վերլուծություն

Ստվերային գործունեության վերաբերյալ ՊԵԿ-ն ուսումնասիրել է 225 դեպք, որոնցից միայն 25-ով են հարուցվել քրեական գործեր, քանի որ եղած գործերի 89% քննել է մակերեսորեն: Արդյունքում, Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ղեկավարը՝ հայտնել էր, որ ստվերային տնտեսության ցուցանիշը տարիներ շարունակ չի փոփոխվել

կազմելով շուրջ 35 - 40%: Տնտեսության ստվերայնությունը պայմանավորող հիմնական գործոններն են՝ կոռուպցիան, հարկային ոչ լիբերալ քաղաքականությունը, բազմաթիվ օրենսդրական ոչ հստակ կարգավորումները և բացերը, համակարգի ոչ արդյունավետ աշխատանքը և այլն: 2010 թվականից առ այսօր Կառավարության կողմից իրականացվել և/կամ իրականացվում են մի շարք միջոցառումներ ստվերային տնտեսության դեմ պայքարելու համար: Սակայն 2013 թվականին անցկացված տնտեսագիտական վերլուծությունների համաձայն՝ Հայաստանում ստվերային տնտեսությունը կազմում է շուրջ 30-ից մինչև 40%: Նշվածը փաստել է նաև ՀՀ ֆինանսների նախարարը: Ստվերային տնտեսության նման կայուն ցուցանիշը վկայում է այն մասին, որ ոլորտում իրականացվող միջոցառումները բավարար և արդյունավետ չեն: Ստվերային տնտեսության վերաբերյալ Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն, ստվերային տնտեսության դեմ պայքարը չի կարող սահմանափակվել բացառապես պատժողական քաղաքականության կիրառմամբ: Նշվածի հետ մեկտեղ հարկավոր է հարկային քաղաքականությունը դարձնել հնարավորինս մատչելի՝ հատկապես նվազեցնելով հարկային պարտավորությունները, և կոնկրետ միջոցներ ձեռնարկել կառավարության նկատմամբ տնտեսվարողների վստահության մակարդակի բարձրացման համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ ստվերային տնտեսության դեմ պայքարի կարևորագույն բաղադրիչներից են՝ ստվերային շրջանառության փաստի վերաբերյալ ցանկացած դեպքի օբյեկտիվ և լրիվ քննությունը, ոլորտի լիազոր մարմինների աշխատանքի որակի բարձրացումը և տնտեսվարողների վստահության և մասնակցության մակարդակի բարձրացումը:

Հարկային կամ մաքսային մարմինների որոշ պաշտոնյաներ կամ նրանց հարազատները՝ ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը, եղբայրները, միաժամանակ զբաղվել են նաև ձեռնարկատիրական գործունեությամբ: Արդյունքում, այդ անձինք անօրինական առավելություններ են ստացել միևնույն շուկայում գործող այլ գործարարների նկատմամբ: «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են, որ մաքսային ծառայողն իրավունք չունի զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Նմանատիպ դրույթներ են նախատեսված նաև «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում: Հարկային և մաքսային ծառայողների նկատմամբ օրենքով կիրառվող սահմանափակումները հատկապես ստեղծված են ապահովելու հավասար պայմաններ և առողջ մրցակցություն տնտեսության ոլորտում: Հարկային և մաքսային ծառայողների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը նաև առաջացնում է շահերի լրջագույն բախում: Մտահոգիչ է նաև, երբ ձեռնարկատիրական գործունեություն են ծավալել նշված մարմինների ծառայողների մտերիմ ազգականները և բարեկամները, ովքեր հաճախ օգտվել են օրենքով չսահմանված արտոնություններից ի օգուտ իրենց գործարար շահերի: Այսպիսի չարաշահումների դեպքերն արդյունավետ չեն վերահսկվում ոլորտի լիազոր մարմնի կողմից, որն էլ իր հերթին հանգեցրել է օրենսդրության տարատեսակ խախտումների: Հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ օրենսդրությամբ չկա հստակ արգելք կառավարության և կառավարությանն առընթեր մարմինների պաշտոնատար անձանց

մտերիմ ազգականների և բարեկամների կողմից ձեռնարկատիրական կամ այլ գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական գործունեությունից: Սակայն, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանում է «շահերի բախում» եզրույթը, այն է՝ իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի թե մասնավոր և թե հանրային շահը պետք է բացառվի: Բոլոր այն դեպքերում, երբ ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում նշված մարմինների ծառայողների մտերիմ ազգականները և բարեկամները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծվում է մի իրավիճակ, երբ համապատասխան հարկային կամ մաքսային մարմնի պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում է որոշում, որը ոչ թե բխում է հանրային շահերից, այլ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերից: Նույն օրենքով առաջարկվում է այն մոտեցումը, որ շահերի բախման առանձնահատկությունները կարող են սահմանվել նաև այլ օրենքներով: Գտնում ենք, որ ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է հարկային ծառայության և մաքսային ծառայության մասին ՀՀ օրենքներով հստակ սահմանել շահերի բախում եզրույթը, որից հետո մշակել արդյունավետ մեխանիզմներ դրա դեմ պայքարելու համար: 2013 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում կրկին ստացվել են բողոքներ վերոնշյալ խնդրի վերաբերյալ: 2013 թվականին Պաշտպանի կողմից ՊԵԿ-ի նախագահին ներկայացվել է առաջարկություն, որ նշված խնդրի առնչությամբ իրականացվեն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություններ: Հարկավոր է արձանագրել, որ 2013 թվականի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում հարկային մարմնի պաշտոնատար անձանց կամ նրանց հետ ուղղակի փոխկապակցված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու երկու դեպք է հայտնաբերվել, որոնց կապակցությամբ իրականացված ծառայողական քննությունների արդյունքում երկու հարկային ծառայողներ ազատվել են հարկային ծառայությունից:

ՊԵԿ-ը գործարարների նկատմամբ կայացրել է չափազանց մեծ քանակի՝ 5712 հարկային արգելանքի որոշումներ՝ առանց սպառելու սահմանափակման այլ միջոցները, ինչպես օրինակ՝ տույժեր, կրկնապատկվող տույժեր: Ընդ որում, գործարարների գույքի և ամբողջ դրամական միջոցների վրա դրված արգելանքը զգալիորեն գերազանցել է հարկային պարտքի չափը: Արդյունքում գործարարները տևական ժամանակով զրկվել են թե իրենց բանկային հաշիվները, թե գույքը տնօրինելու հնարավորությունից: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածով նախատեսվում է հարկային մարմնի հարկ վճարողի գույքի արգելադրման ինստիտուտը: ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք միջազգային պայմանագրերով սահմանվում է յուրաքանչյուրի իրավունքը՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է նաև, որ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված

դեպքերում: Իսկ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթի բովանդակության համաձայն՝ անձին «գրկել» սեփականությունից հնարավոր է միայն դատական կարգով, այն էլ՝ օրենքով նախատեսված դեպքերում: Պաշտպանը, կարևորելով նշված իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձևերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չի ենթարկվի ոչ իրավաչափ սահմանափակման, 2012 թվականին դիմում էր ներկայացվել ՀՀ Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1073 որոշմամբ հստակ սահմանեց, որ գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը պետք է իրացնել միայն հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ օրենքով նախատեսված այլ հնարավորությունների սպառման պարագայում և խիստ վերահսկելի ձևով: Այսինքն, հարկային մարմնի կողմից գույքի նկատմամբ արգելանքը կարող է կիրառվել միայն այլ տույժեր, կրկնապատկվող տույժեր և այլ պատասխանատվության միջոցների սպառման դեպքում և իրականացվելու է միայն դատական խիստ վերահսկողության պարագայում: Մինչդեռ, 2013 թվականին գույքի նկատմամբ արգելանքի ինստիտուտը ոչ թե կիրառվել է որպես բացառիկ, այլ կրկին որպես հիմնական միջոց: Պաշտպանին ՊԵԿ-ից հայտնել են, որ վերջիններիս կողմից կայացվել է գույքի արգելադրման 5712 որոշում: Ավելին, մի շարք տնտեսվարողներ բարձրաձայնել էին այն խնդիրը, որ գույքի արգելադրման արդյունքում արգելադրվում են բանկային հաշիվներին առկա ամբողջ դրամական միջոցները, առանց հաշվի առնելու պարտավորության չափը, ինչը լուրջ խոչընդոտներ է առաջացնում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների համար՝ ընդհուպ մինչև ամբողջ ձեռնարկատիրական գործունեության խափանումը: Գտնում ենք, որ նշված ինստիտուտի կիրառման նման քաղաքականությունն անհամապատասխանության մեջ է գտնվում Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշման հետ:

Օրենսդրական բացի հետևանքով ՊԵԿ-ին տրվել է հայեցողություն տուգանքը կիրառել ոչ միայն խախտումը կատարելու, այլև այն բացահայտելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Արդյունքում, ՊԵԿ-ը, ոչ բարեխղճորեն օգտագործելով իրեն տրված հայեցողությունը, մի դեպքում մարդկանց ենթարկել է պատասխանատվության, մյուս դեպքում՝ ոչ: Այսպես, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի: Օրենսգրքի 37-րդ հոդվածը վերաբերում է կոնկրետ վարչական տույժ նշանակելու ժամկետներին: Օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն նախատեսել է, որ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Նշվածից կարելի է եզրակացնել, որ եթե տեղի է ունեցել վարչական զանցանք և առկա են զանցակազմի բոլոր պարտադիր տարրերը, ապա համապատասխան վարչական մարմինը տույժ կարող է նշանակել անձի կողմից այդ իրավախախտումը կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Նման կանոն նախատեսելը բխում է այն տրամաբանությունից, որ կոնկրետ ժամանակ անց, եթե անձը չի ենթարկվում վարչական տույժի՝ նվազում է կատարված զանցանքի և վարչական տույժի կիրառման

նշանակությունը: Ուստի՝ բոլոր այն դեպքերում, երբ բաց են թողնվել և/կամ անցել են այն ժամկետները, որի ընթացքում կարող էր նշանակվել վարչական տույժը և, հետևաբար, այլևս բացակայում է իրավախախտման վտանգավորությունը, ինչպես նաև վարչական տույժի նշանակությունը, համապատասխան մարմնի կողմից վարչական տույժի նշանակման անհրաժեշտությունը բացակայում է: Միննույն ժամանակ, Օրենսդրի կողմից սահմանվել է բացառություն վերոնշյալ ընդհանուր կանոնից. Օրենսդիրը նախատեսել է վարչական իրավախախտման առանձին ձևեր, այն է՝ շարունակվող և տևող: Նման բացառիկ դեպքերում վարչական տույժ նշանակվում է իրավախախտումը բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Փաստացի, վերոնշյալի արդյունքում նախատեսվում են այնպիսի կարգավորումներ, որոնց դեպքում, ըստ էության, ստեղծվում է ոչ բարենպաստ պայման անձանց համար: Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներից մեկի համաձայն, անձը կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.1-րդ հոդվածով սահմանված զանցանքը, վարչական տույժի է ենթարկվել սահմանված երկամսյա ժամկետից համեմատաբար ավելի ուշ ժամանակահատվածում: Ըստ դիմումատուի՝ հարկային մարմնի աշխատակիցը պատճառաբանել է երկամսյա ժամկետից ուշ նրան պատասխանատվության ենթարկելը այն հիմնավորմամբ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.1-րդ հոդվածով սահմանված իրավախախտումը կրում է շարունակվող բնույթ: Սակայն պարզ չէ հարկային մարմնի կողմից նման որոշում կայացնելու հիմնավորումը, քանի որ ՀՀ օրենսդրության մեջ նշված չէ, թե որոնք են շարունակվող և տևող իրավախախտումները: Իրավական որոշակիության սկզբունքը նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների արդյունքում («Մանդի Թայմսը» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 26.04.1979; Մարկիսը ընդդեմ Բելգիայի գործով վճիռ 13.06.1979): ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-753 մեջ հայտնել է դիրքորոշում, համաձայն որի՝ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Օրենսգրքի վիճարկվող դրույթի ուսումնասիրությունից բխում է, որ միայն նախատեսելով խնդրո առարկա կարգավորումների հնարավոր կիրառումը և չնախատեսելով, թե որոնք են դրանք և կոնկրետ, որ դեպքում և/կամ հիմքերի առկայության դեպքում կարող են կիրառվել, առաջացնում է նորմի հստակության խնդիր, ուստի Օրենսդրի կամքը և քաղաքականությունը հստակորեն արտահայտված չեն: Ավելին, նման իրավիճակը արգելափակում է անձի՝ իր վարքագիծը վիճարկվող նորմի հետ համատեղելու

հնարավորությունը, ինչպես նաև նշված նորմով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում գործողության հետևանքները կանխատեսելը: Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հարցադրումները և Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքները այս հարցի վերաբերյալ՝ վիճահարույց խնդիրը պարզելու նպատակով 2013 թվականին Պաշտպանը դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան, որի կապակցությամբ դատարանի նիստը տեղի կունենա 2014 թվականի ապրիլի 8-ին:

Մի շարք դեպքերում ՊԵԿ-ը նույն արարքի համար գործարարներին ենթարկել է և վարչական, և հարկային պատասխանատվության՝ խախտելով նույն արարքի համար կրկին չպատժվելու Սահմանադրության սկզբունքը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170(3)-րդ հոդվածը սահմանում է, որ հարկերը սահմանված ժամկետներում չվճարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով: Այսինքն՝ օրենսդիրը, որպես պատասխանատվություն առաջացնող արարք դիտարկել է հարկային պարտավորությունների ոլորտում անձանց կողմից հարկերի սահմանված ժամկետներում չվճարելը: Միաժամանակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը նախատեսում է, որ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ օրենսդիրը, որպես պատասխանատվություն առաջացնող արարք դիտարկել է հարկային պարտավորությունների ոլորտում անձանց կողմից հարկերի սահմանված ժամկետներում չվճարելը: Մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է կրկնակի դատապարտման և պատժման անթույլատրելիության սկզբունքը (non bis in idem): ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար»: Նույն արարքի համար կրկին չդատվելու իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում, որի համաձայն՝ «ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում կրկին դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»: Առաջին հայացքից (prima facie) ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված նշյալ դրույթն ամրագրում է սկզբունք, որը նախատեսում է արգելք կրկին դատվելու վերաբերյալ, ինչը ենթադրում է կրկնակի քրեական պատասխանատվության անթույլատրելիություն: Սակայն Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատը 2011 թվականին Զոլոտուխինն ընդդեմ Ռուսաստանի գործով (2009թ.) որոշման մեջ անդրադարձել է non bis in idem սկզբունքին և նույն իրավախախտման համար կրկնակի դատական պատասխանատվության չենթարկվելը դիտարկել է որպես հիմնարար իրավունք: Դատարանն իրավական գնահատական տալուց մեջբերել է Գրանդիգերն ընդդեմ Ավստրիայի գործը (1995թ.), որի վճռում նշված է, որ. «թեև նշված գործով երկու իրավախախտումների նշանակությունը, բնույթը և նպատակը տարբեր են, դրանք հիմնված

են անձի նույն գործողության վրա: Ուստի, կարևորելով նույն արարքի համար կրկին չդատապարտվելու անձի իրավունքը, դատարանը վճռել է, որ տեղի ունեցածը non bis in idem սկզբունքի խախտում է»: Նույն արարքի համար կրկին չդատվելու իրավունքի վերաբերյալ անդրադարձ է կատարվել «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» 2010 թվականի գիտագործնական մեկնաբանությունների ժողովածուում, համաձայն որի՝ նույն արարքի համար կրկին չդատվելու սահմանադրական երաշխիքը տարածվում է ոչ միայն հանցագործությունների քրեական օրենսգրքով արգելված արարքների, այլ նաև վարչական իրավախախտումների վրա: Այսինքն, թե ՀՀ Սահմանադրությամբ և թե միջազգային պայմանագրերով հստակ սահմանված է նույն արարքի համար կրկին չդատվելու անձանց երաշխիքը, որը, հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները, վերաբերում է ոչ միայն քրեական գործերին այլ, առհասարակ, նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկելուն: Մինչդեռ Օրենսգրքով և Օրենքով նախատեսված է իրավական հիմք նույն արարքի համար անձանց կրկին անգամ պատասխանատվության ենթարկելու համար: Այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների և ձևավորված պրակտիկայի արդյունքում առաջանում է իրական ռիսկ անձանց՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտման համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախատեսվելով հարկային ոլորտում իրավախախտումների համար պատասխանատվության միջոցներ, տարբեր երկրներում միաժամանակ հստակ տարանջատում է նախատեսված հարկատուի՝ որպես իրավաբանական անձի և/կամ անհատ ձեռնարկատիրոջ, և իրավաբանական անձի և/կամ անհատ ձեռնարկատիրոջ պաշտոնատար անձի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները: Մասնավորապես, ՌԴ օրենսդրությամբ հստակեցված է, որ հարկային իրավախախտումը (հարկատուի) պաշտոնատար անձի կողմից կատարելու դեպքում վերջինս ենթարկվում է վարչական պատասխանատվության, այնինչ, երբ իրավաբանական անձը ենթարկվում է հարկային պատասխանատվության, իսկ դրա պաշտոնատար անձը միևնույն արարքի համար՝ վարչական պատասխանատվության, ապա անհատ ձեռնարկատիրոջ պարագայում անհատ ձեռնարկատերը ենթարկվում է միմիայն հարկային պատասխանատվության: Ի տարբերություն ՌԴ ՎԻՎ և Հարկային օրենսգրքերի՝ Հայաստանի Հանրապետությունում սուբյեկտների տարանջատում օրենսդրորեն նախատեսված չէ: Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հարցադրումները և Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքները այս հարցի վերաբերյալ՝ 2013 թվականին Պաշտպանը դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան, որի կապակցությամբ Դատարանը հստակ նշել է, որ «... Հիմնավոր է դիմողի դիրքորոշումն առ այն, որ քննության առարկա իրավական ակտերում պատասխանատվության միջոցներ սահմանելիս օրենսդիրը պետք է առավել հստակ իրավակարգավորումներ նախատեսի՝ բացառելու համար հարկային եւ վարչական պատասխանատվության ենթակա որևէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Ներկա իրավակարգավորումների շրջանակներում նույնպես այս մոտեցումը պետք է դրվի իրավակիրառական պրակտիկայի հիմքում»:

«Շրջանառության հարկի մասին» օրենքում կիրառվող «անձ» հասկացության ոչ հստակ մեկնաբանության արդյունքում գործարարները ստիպված են եղել վճարել թե՛ ԱԱՀ-ի գումարները և թե՛ շրջանառության հարկը՝ տույժերով ու տուգանքներով: Նշվածի հետևանքով գործարարները կրել են լուրջ ֆինանսական վնասներ, իսկ որոշները նույնիսկ հայտնվել են սնանկացման վտանգի առաջ: Այսպես, հարկային օրենսդրությունը հնարավորություն է տալիս տնտեսվարողներին, շրջանառության հարկ վճարող լինելով հանդերձ, համապատասխան հայտարարություն ներկայացնելու դեպքում ձեռնարկատիրությամբ զբաղվել որպես ավելացված արժեքի հարկ վճարող: Ընդ որում, օրենսդրությամբ նախատեսված է հայտարարության երկու ձև՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին, որոնց ուսումնասիրությունը վկայում է, որ բովանդակային առումով դրանք էապես չեն տարբերվում: Այնուամենայնիվ, շրջանառության հարկ վճարողները պետք է հայտարարություն ներկայացնեն ԱԱՀ վճարող համարվելու մասին: Դրա հետ մեկտեղ՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող չեն կարող համարվել այն անձինք (ֆիզիկական անձինք), ում միաժամանակ պատկանում է երկու կամ ավելի առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի բաժնեմասերը (4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետ): Հենց այս մեկնաբանության հիման վրա բոլոր այն առևտրային կազմակերպությունները, որոնց բաժնետեր ֆիզիկական անձանցից թեկուզ մեկը երկու և ավելի կազմակերպությունում ունեցել է 20 տոկոս և ավելի բաժնեմաս, բացառել են իրենց՝ շրջանառության հարկ վճարող լինելու հնարավորությունը, արդեն իսկ իրենց համարել են ԱԱՀ վճարողներ և 2013 թվականի սկզբում հայտարարություն են ներկայացնել որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին: Սակայն, ըստ ՊԵԿ-ի, այդ կազմակերպությունները ներկայացրել են որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին հայտարարություն, մինչդեռ պետք է ներկայացնեին ԱԱՀ վճարող համարվելու մասին հայտարարություն, քանի որ ըստ օրենքի հանդիսացել են շրջանառության հարկ վճարողներ: Այս ձևական պահանջի չպահպանման հետևանքով ՊԵԿ-ը տնտեսվարողներին պարտադրում է վճարել հարկային հաշիվներում առկա ԱԱՀ-ի գումարները, դրանց տույժերն ու տուգանքները, ինչպես նաև տույժերով ու տուգանքներով վճարել շրջանառության հարկը 2013 թվականի ընթացքում իրականացված գործունեության համար: Եթե նույնիսկ համարենք, որ նշվածը չի հանդիսանում ձևական պահանջ և, որ այդ երկու հայտարարությունների տարբերությունն էական է և համարենք կարևոր էր, թե որ տեսակի հայտարարությամբ տնտեսվարողը պետք է հրաժարվեր սեփական արտոնությունից և դառնար ԱԱՀ վճարող, ապա նույնիսկ այդ դեպքում տնտեսվարողները ճիշտ են մեկնաբանել օրենքը և տվյալ դեպքում ի վնաս իրենց հաշվառվել են որպես ԱԱՀ վճարող, քանի որ իրենց հիմնադիր ֆիզիկական անձինք բաժնետեր են եղել նաև այլ ընկերություններում: Սակայն հարկային մարմնի մեկնաբանմամբ «անձինք» բառի տակ պետք է հասկանալ ոչ թե ֆիզիկական անձ բաժնետերերին, այլ՝ առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին, այդ թվում՝ նոր ստեղծված հարկ վճարողներին: Սակայն, եթե առաջնորդվենք ՊԵԿ-ի մեկնաբանությամբ, ապա օրենքի մի շարք իրավադրույթներ կդառնան անտրամաբանական կամ անհեթեթ, մասնավորապես՝ նույն 4-րդ հոդվածի 3-րդ մասում առկա «հաստատագրված վճար և (կամ)

արտոնագրային վճար վճարող անձինք» ձևակերպման դեպքում, քանի որ նոտարներն ընդհանրապես չեն կարող լինել արտոնագրային վճար կամ հաստատագրված վճար վճարողներ: Բացի այդ, եթե «անձինք» բառը մեկնաբանվի ոչ «ֆիզիկական անձ» իմաստով, ապա դա կհանգեցնի օրենքում առկա դրույթների նույնության, կրկնության՝ «բ» ենթակետի բովանդակությունում կներառվեն նաև նույն կետի «ա» և «գ» ենթակետերը, որոնցում ևս թվարկվում են այն տնտեսվարողների շրջանակը, որոնք չեն կարող լինել շրջանառության հարկ վճարող, և ուստի «ա» և «գ» ենթակետերի նախատեսումը կդառնա ինքնանպատակ: Ավելին, ՊԵԿ-ի մեկնաբանությունը չի բխում նաև հենց օրենքի ընդունման նպատակներից, մասնավորապես՝ աջակցել փոքր և միջին ձեռնարկատիրությանը և թույլ չտալ, որպեսզի խոշոր բիզնեսը արհեստականորեն մասնատվի փոքր մասերի: Մինչդեռ, նման մեկնաբանության պայմաններում ստացվում է, որ ֆիզիկական անձը կարող է իր բիզնեսը բաժանել մի քանի առևտրային կազմակերպություններում, խուսափել ԱԱՀ վճարելուց և ձեռնարկատիրությամբ զբաղվել որպես շրջանառության հարկ վճարող, ինչպիսի դիրքորոշման հետ համաձայնվել է նաև ՊԵԿ-ն իր պաշտոնական հայտարարության մեջ: Արդյունքում, «Շրջանառության հարկի մասին» օրենքում կիրառվող «անձ» եզրույթի ոչ հստակ և ոչ միատեսակ մեկնաբանության արդյունքում տնտեսվարողները պարտադրված են եղել վճարել թե՛ ԱԱՀ-ի գումարները և թե՛ շրջանառության հարկը՝ տույժերով ու տուգանքներով: Ստեղծված իրավիճակը վկայում է օրենսդրական փոփոխությունների և անհրաժեշտ հստակեցումներ կատարելու անհրաժեշտության մասին:

Նոր հաշվիչ դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) ներդնումը իրականացվել է մի շարք թերություններով՝ ՀԴՄ-ների գները չեն եղել մատչելի, նրանց տեխնիկական սպասարկումը եղել է թերի, գործարարների և այլ շահագրգիռ անձանց հետ նոր ՀԴՄ-ների վերաբերյալ պատշաճ քննարկումներ չեն կազմակերպվել: Նշվածի հետևանքով վաճառքի է հանվել նոր ՀԴՄ, որի շուկայական արժեքը բողոքների առիթ է հանդիսացել: ՊԵԿ-ի տեղեկացմամբ նոր սերնդի ՀԴՄ-ներն ապահովում են ֆիսկալային տվյալների պահպանության առավել բարձր մակարդակ (ՀԴՄ-ի սարք մուտք գործելու ցանկացած փորձի դեպքում ՀԴՄ-ն արգելափակվում է և դադարում է աշխատել): Բացի այդ նոր սերնդի ՀԴՄ-ները հնարավորություն են տալիս անհրաժեշտ փոփոխություններ կատարել աշխատանքային ծրագրում, ներբեռնել և աշխատացնել լրացուցիչ ծրագրեր, կազմակերպել կտրոններով վիճակահանություն իրական ժամանակում (կտրոնը ստանալիս հնարավոր է պարզել շահած լինելու կամ չլինելու հանգամանքը): Ճիշտ է ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվել է, որ բացի 500 միլիոն դրամից ավելի հասույթ ունեցող հարկատուներից, մյուս հարկատուներին այն վաճառվելու է ավելի մատչելի գնով, սակայն մշակված չեն եղել նման տեսակի գեղչեր, մասնավորապես՝ չեն կիրառվել գեղչեր փոքր ձեռնարկությունների համար՝ մասնակի վճարումներ կատարելու դեպքում: Իրավական և տնտեսական առումով ապահովված չի եղել հավասար մրցակցային պայմաններ ՀԴՄ-ների իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար, քանի որ բազմիցս բողոքներ են գրանցվել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ը հանդիսանալով պետական կազմակերպություն օգտվում է բոլոր արտոնություններից, որի հետևանքով ՀԴՄ ներմուծող ցանկացած այլ կազմակերպություն հայտնվում է ոչ շահեկան իրավիճակում, ինչի հետևանքով վերջիններս ունենում են բավական մեծ կորուստներ: Դրանից բացի 2013

թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկումը պատշաճ կերպով չի իրականացվել կամ իրականացվել է թերի, ինչի արդյունքում անխուսափելի են եղել կազմակերպությունների նկատմամբ կիրառվելիք տուգանքները:

ՊԵԿ-ը չի ներկայացրել որևէ մատչելի փաստաթուղթ, որտեղ հստակ նշված կլինեն ապրաքների և մեքենաների մաքսային արժեքները և դրանց որոշման կանոնները: Արդյունքում մարդիկ հնարավորություն չեն ունեցել կանխատեսելու իրենց գնած ապրանքների կամ մեքենաների մաքսազերծման գումարի չափը և դրա որոշման կարգը: Ողջունելի են ոլորտի լիազոր մարմնի կողմից նախաձեռնած ՀՀ մաքսային օրենսգրքի կատարելագործմանն ուղղված աշխատանքները: Սակայն, ինչպես տնտեսվարող սուբյեկտներն, այնպես էլ ՀՀ քաղաքացիները չեն կարողանում ստանալ ներմուծվող ավտոմեքենաների, ինչպես նաև ապրանքների մաքսային արժեքի որոշման չափանիշների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, քանի որ այն հասանելի չէ քաղաքացիների համար: Ավելին, ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը պատշաճ ձևով ներկայացված չեն մաքսային արժեքի վրա ազդեցություն ունեցող և ավտոմեքենայի վրա տեղադրված լրացուցիչ պահեստամասերի արժեքները: Համաշխարհային մաքսային կազմակերպությունը միջազգայնորեն ճանաչված մաքսային փորձաքննության համաշխարհային կենտրոն է և առաջատար դեր է խաղում մաքսային գործունեության և օրենսդրության քննարկման, զարգացման և կատարելագործման ոլորտում: Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է ՀՄԿ-ին 1992 թվականից: ՀՄԿ-ի շրջանակում ընդունված մաքսային քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է մաքսային գործընթացի թափանցիկությունը և մատչելիությունը: Նման մոտեցումն իր արտացոլումն է գտել նաև Կիոտոյի վերանայված կոնվենցիայում (Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման միջազգային կոնվենցիա(ՀՀ-ն միացել է 2013թ. հուլիսի 19): Ուստի կարող ենք եզրակացնել, որ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի որոշման կանոնների կիրառման կանխատեսելի և թափանցիկ պրակտիկայի ձևավորումը ոչ միայն բխում է նշված իրավահարաբերությունների սուբյեկտների շահերից, այլև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից:

Պաշտպանին հասցեագրվել էին դիմում-բողոքներ հարկային մարմինների կողմից ցեսիայի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ միջոցառումներ չկատարելու վերաբերյալ: Խնդիրն այն է, որ հարկատուն հանդես է գալիս մի կողմից՝ որպես հարկատու հարկային իրավահարաբերությունների շրջանակում, և որպես ցեղենտ /սկզբնական պարտատեր/՝ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակում: Քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում հարկատուն /ցեղենտը/ պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից նոր պարտատիրոջ /ցեսիոնարի/ նկատմամբ ցեսիայի պայմանագրով պարտավորության կատարման համար, սակայն հարկային իրավահարաբերություններում շարունակում է կրել համապատասխան պարտավորությունները: ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1106 որոշման մեջ նշված է, որ. «Ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային

պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտն ավելի մեծ երաշխիքներ է ստեղծում իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու տնտեսավարման բնականոն պայմանների երաշխավորելու առումով»: ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ ցեսիայի պայմանագրի կնքումը, ինքնին չի կարող հավասարեցվել հարկատուի կողմից պարտավորության կատարմանը: Այս կապակցությամբ ցեսիայի պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, իսկ այդ դրույթների հիման վրա առաջացած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ՝ անկախ այն հանգամանքից, որ դրանք առնչվում են նաև հարկային հարաբերությունները կարգավորող նորմերին: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ցեսիայի պայմանագրի կնքումը չի կարող ինքնանպատակ լինել, և հարկատուի հարկային պարտավորությունների կատարման ինստիտուտը կիրառելիս՝ հարկային մարմինները պետք է ձեռնամուխ լինեն ցեսիայի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը և ստացված գումարը հարկատուի հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելուն: Դիմում-բողոքների համաձայն հարկային մարմինները, անտեսելով հարկատուների շահերը և ցեսիայի պայմանագրի էությունը, որևէ միջոցառում չեն ձեռնարկում ցեսիայի պայմանագրի կատարումն ապահովելու համար, ինչի արդյունքում հարկային պարտավորությունների չկատարման հետևանքով անհարկի ավելանում են տոկոսները, որն էլ իր հերթին հանգեցնում հարկատուների նյութական վիճակի էական վատթարացմանը: Այդպես, օրինակ, «Նոյան Տապան» ՍՊԸ տնօրեն Տիգրան Հարությունյանը դիմում-բողոք էր ներկայացրել Պաշտպանին նշյալ խնդրով: ՊԵԿ-ից նշված հարցի վերաբերյալ հայտնել էին, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման նպատակով, պարտապանի հետ պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելիս, վերջիններս առաջնորդվել են բացառապես գործող իրավական ակտերի կարգավորումների շրջանակներում՝ մասնավորապես «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի կիրառման մի քանի հարցերի վերաբերյալ՝ ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 16.04.12թ. թիվ 15 պաշտոնական պարզաբանման դրույթներով՝ և այդպիսով ապահովելով անհրաժեշտ բոլոր միջոցների կատարումը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածով սահմանված՝ պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքը ձեռք բերելու և ստացված գումարները հարկ վճարողի պարտավորությունների մարմանն ուղղելու իր իրավունքի պատշաճ իրականացման համար: Սակայն «Նոյան Տապան» ՍՊԸ-ի հետ համապատասխան պայմանագրի դեպքում անհրաժեշտ միջոցառումներ չէին իրականացվել հարկային մարմնի կողմից: Ավելին, ըստ ոլորտի մասնագետների կողմից հայտնած տեղեկությունների՝ նույնիսկ վերոնշյալ ՍԴ որոշումից հետո ՊԵԿ-ը միասնական մոտեցում չի որդեգրել ցեսիայի պայմանագրի կատարումն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների կիրառման վերաբերյալ:

Պաշտպանը ստացել է բողոքներ, որոնց համաձայն հարկային մարմնի տարեկան ստուգումների պլանում չներառված հարկ վճարողների մոտ հաճախակի կատարվում են

պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումներ, ինչի իրականացման հիմք են հանդիսանում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը և ՊԵԿ-ի քննչական վարչության քննիչի «Մասնագիտական ստուգում նշանակելու մասին» որոշումները: Հարկ վճարողներին չի տրամադրվում ՊԵԿ-ի քննչական վարչության քննիչի «Մասնագիտական ստուգում նշանակելու մասին» որոշման պատճենը, որից կարող է պարզ դառնալ ստուգման «մասնագիտական» ուղղվածությունը: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, մինչդեռ քննիչի կողմից պատճառաբանված որոշման կրկնօրինակի չներկայացումը խոչընդոտում է բողոքարկման իրավունքի իրականացմանը: Սույն խնդրի վերաբերյալ ՊԵԿ-ը հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը որևէ դրույթ չեն սահմանում վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված ստուգում նշանակելու մասին որոշումը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ դրան փոխարինող անձին ներկայացնելու կամ որոշման օրինակը տրամադրելու վերաբերյալ բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի և 65-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ կետի, որոնց համաձայն՝ քրեական դատավարությունում միայն կասկածյալը և մեղադրյալը վարույթն իրականացնող մարմնի միջոցով իրավունք ունեն ծանոթանալ փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների վերաբերյալ ընդունված որոշումներին: Այնինչ նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: Այսինքն՝ բողոքարկման իրավական հնարավորություն նախատեսված է ոչ միայն քրեական դատավարության մասնակիցների, այլև այլ անձանց (օրինակ՝ տվյալ դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի) համար: Իսկ ինչ վերաբերում է ստուգում նշանակելու մասին որոշումը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին ներկայացնելու կամ որոշման օրինակը տրամադրելու վերաբերյալ օրենքով նախատեսված պարտավորության բացակայությանը, ապա այն իրավական որոշակիության առումով զուտ ձևական պատճառ է, քանի որ որոշման բողոքարկման իրավունքի նախատեսումը ողջամտորեն ենթադրում է նաև որոշման բովանդակությանը ծանոթանալու հնարավորության ապահովումը: Այդ մասին է վկայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Սույն համատեքստում հարկ ենք համարում նշել նաև, որ խնդրի վերաբերյալ

ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնել է իր դիրքորոշումը, համաձայն որի՝ ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման կրկնօրինակը չտրամադրելու ՊԵԿ-ի որդեգրած քաղաքականությունը հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին և ՄԻԵԴ-ի հայտնած դիրքորոշմանը, ինչպես նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին:

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված են հարկային և մաքսային ոլորտում քրեորեն հետապնդելի արարքներ: Այսպես, օրինակ՝ Օրենսգրքի 205-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն խոշոր և առանձնապես խոշոր չափերով հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու և օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով արարքների համար: Նշված հանցագործությունն ուղղված է պետության ֆինանսական և հարկային համակարգերի բնականոն գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դիսպոզիցիան լիարժեք չի կարելի համարել: Բանն այն է, որ հոդվածի դիսպոզիցիայում օրենսդիրը ներկայացնում է հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարումներից խուսափելու եղանակների սպառիչ թվարկումը: Ստացվում է, որ այն դեպքերում, երբ հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարումներից խուսափելը կատարվում է ոչ թե կոնկրետ հոդվածով մատնանշված, այլ մեկ ուրիշ եղանակով (օրինակ՝ հարկման օբյեկտները թաքցնելով), ապա քրեական պատասխանատվություն չի առաջանում: Նման կարծիք հայտնել են նաև մի շարք հայ իրավագետներ: Այսինքն, կոնկրետ նշված հարկային հանցագործության դեպքում առկա է որոշակի օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը նախատեսում է մաքսանենգությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք: Համաձայն նշյալ հոդվածի՝ մաքսանենգություն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխումն առանց մաքսային հսկողության, դրանից թաքցնելը, մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելը, դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը կամ ոչ իր անվամբ հայտարարագրելը: ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ ապրանքներ են համարվում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները: Մաքսանենգության դեմ պայքարելու ընդունված միջոցը՝ մաքսային հսկողությունն է: Մաքսային հսկողություն է համարվում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը: Նշվածի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների, ներառյալ Պաշտպանի աշխատակազմի կողմից նախաձեռնած ոլորտի իրավապաշտպանների և մասնագետների հետ հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ հիմնականում, հարկային և մաքսային հանցագործությունների վիճակագրական բարձր տվյալները էապես

պայմանավորված են հարկային և մաքսային ոչ լիբերալ քաղաքականությամբ, որը ձեռնարկատերերին ստիպում է դիմել ապօրինի գործողությունների: ՊԵԿ-ից ի պատասխան մաքսային և հարկային հանցագործությունների վիճակագրական բարձր տվյալների վերաբերյալ Պաշտպանի մտահոգությանը հայտնել էին, որ հարկային հանցագործությունների աճը պայմանավորված է դրանց դեմ պայքարի արդյունավետության բարձրացմամբ, իսկ մաքսային հանցագործությունների աճը պայմանավորված է տեղեկատվության փոխանակման արդյունքում դրանց բացահայտման շնորհիվ, մասնավորապես՝ 2010 թվականին բացահայտվել է մաքսանենգության 68 դեպք, 2011թ.՝ 41 դեպք, 2012թ.՝ 38, իսկ 2013 թվականին՝ 101 դեպք: Առհասարակ, անընդունելի է անձանց կողմից հանրության համար վտանգավոր արարքների միջոցով թե տնտեսական և թե ցանկացած գործունեության ծավալումը: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ, եթե արձանագրվում է որևէ հանցագործության վիճակագրական աճ, ապա դա վկայում է այն մասին, որ չեն բավարարվում և/կամ իրենց նպատակին չեն ծառայում Քրեական օրենսգրքով սահմանված պատժի նշանակման նպատակները: Պատժի նպատակն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Քրեական իրավունքի տեսության մեջ որպես պատժի նշանակման կարևորագույն նպատակ դիտարկվում է հենց հանցագործությունների կանխումը: Հաշվի առնելով ՊԵԿ-ի պարզաբանումները, ինչպես նաև հարկային և մաքսային հանցագործությունների բարձր վիճակագրական տվյալները, կարող ենք եզրակացնել, որ հանցագործությունների պատշաճ կանխում տեղի չի ունեցել:

Առաջարկություններ

- Արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու ստվերային տնտեսության ցուցանիշները, ինչպես օրինակ՝ լիբերալիզացնել հարկային քաղաքականությունը, վերանայել օրենսդրական ոչ հստակ կարգավորումները և բացերը:
- Հետևողական լինել՝ կանխելու հարկային կամ մաքսային մարմինների որոշ պաշտոնյաների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը: Միաժամանակ, մշակել հարկային ծառայության և մաքսային ծառայության մասին ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու նախագծեր, որոնց նպատակը կլինի սահմանել հարկային և մաքսային ծառայողների համար «շահերի բախում» եզրույթը:
- Հետևողական լինել՝ պահպանելու Սահմանադրական դատարանի որոշումները, մասնավորապես՝ հարկային արգելանք կիրառել միայն այն դեպքերում, երբ սպառվել են հարկային պարտավորությունների կատարումն ապահովող այլ միջոցները, օրինակ՝ տույժեր, կրկնապատկվող տույժեր:
- Օրենսդրորեն հստակեցնել վարչական խախտումները որպես շարունակվող և/կամ տևող որակելու չափանիշները՝ այդ կերպ կանխատեսելի դարձնելով համապատասխան կարգավորումները և կանխելով հնարավոր տարբերակված մոտեցումները և ոչ միասնական պրակտիկան:
- Օրենսդրորեն նախատեսել հստակ կարգավորումներ, որոնց արդյունքում գործարարները նույն արարքի համար (օրինակ՝ սահմանված ժամկետներում

հարկերը չվճարելը) չեն ենթարկվի միաժամանակ և վարչական, և հարկային պատասխանատվության:

- Արդյունավետ մեթոդներ կիրառել՝ կանխարգելելու մաքսային և հարկային հանցագործությունների դեպքերը:
- Հետևողական գտնվել, որպեսզի օրենսդրորեն հստակեցվի «Շրջանառության հարկի մասին» օրենքում կիրառվող «անձ» հասկացությունը:
- Միջոցներ ձեռնարկել՝ կարգավորելու նոր հաշվիչ դրամարկղային մեքենաների ներդրման արդյունքում արձանագրված թերությունները:
- Բավարար միջոցներ ձեռնարկել կանխատեսելի և թափանցիկ դարձնելու ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի որոշման կանոնների կիրառումը, ինչի արդյունքում անձինք հնարավորություն կունենան իմանալ, թե իրենց գնած ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսագերծման գումարի չափը ինչպես է որոշվելու և որքան է կազմելու:
- Միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման կրկնօրինակի տրամադրումը տնտեսվարող սուբյեկտին՝ ապահովելու համար վերջինիս կողմից այդ ակտի բողոքարկման սահմանադրական իրավունքը: Միաժամանակ, այն դեպքերում, երբ համապատասխան որոշումը չի տրամադրվի, պատասխանատվության միջոցներ կիրառել այդ պաշտոնյաների նկատմամբ:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը բարեխիղճ և ազատ մրցակցության համար ապահովում է անհրաժեշտ միջավայր, կանխարգելում, սահմանափակում և նախազգուշացնում է հակամրցակցային գործունեությունը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ իրականացնում վերահսկողություն: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրացումը նպաստում է մարդկանց սոցիալ-տնտեսական իրավունքների առավել պաշտպանվածությանը:

2013 թվականին Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Հանձնաժողովի՝ օրենքով նախատեսված չափազանց լայն հայեցողության հետևանքով մինևույն կամ նման խախտում կատարած ընկերությունների նկատմամբ տուգանքի չհիմնավորված տարբեր չափեր են նշանակվում: Արդյունքում՝ Հանձնաժողովի կողմից կիրառվել են երկակի ստանդարտներ, ինչը խոչընդոտել է առողջ մրցակցության ձևավորմանը:
- Առկա են եղել դեպքեր, երբ Հանձնաժողովը վարույթ է հարուցել խոշոր գերիշխող դիրք ունեցող գործարարների նկատմամբ, սակայն որևէ խախտում չի հայտնաբերել: Օրինակ՝ 2013 թվականի միայն առաջին եռամսյակում իրացված շաքարավազի 99,8%-ը բաժին է հասել «Ալեքս Գրիգ» ընկերությանը, սակայն, ըստ Հանձնաժողովի, դա գերիշխող դիրքի չարաշահում չի հանդիսացել:
- Չնայած հնչել են բազմաթիվ հրապարակային բողոքներ ձկնաբուծության և ձկան կերի շուկայում որոշ գործարարների գերիշխող դիրքի վերաբերյալ, այդուհանդերձ, Հանձնաժողովն այդ շուկայում ընդհանրապես ուսումնասիրություններ չի կատարել:
- Իրական և լիարժեք տնտեսական մրցակցության բացակայության մթնոլորտում, Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել է ընդամենը մեկ դեպք, երբ խոչընդոտվել է նոր գործարարների շուկա մուտք գործելը:
- Հանձնաժողովը, ունենալով օրենքով նախատեսված հնարավորություն, որևէ քայլ չի նախաձեռնել մանրածախ առևտրի ոլորտում ընկերությունների ոչ անհրաժեշտ միացման դեպքերը զսպելու ուղղությամբ:
- Շարունակում է ցածր մակ Հանձնաժողովի նկատմամբ հասարակության վստահությունը, ինչի մասին են վկայում Հանձնաժողովին ներկայացրած ընդամենը 68 բողոքները:

Արձանագրված դրական զարգացումները

- Բարելավվել են տեղական մրցակցության ուժգնության և հակամենաշնորհային քաղաքականության ցուցանիշները:
- 2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մրցակցային օրենսդրության ենթադրյալ խախտումների կապակցությամբ Հանձնաժողովի կողմից հարուցվել է 165 վարչական վարույթ և վարչական վարույթների արդյունքում ընդունվել է շուրջ 200 վարչական ակտ:
- Հանձնաժողովը մշակել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Սնանկության մասին», «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր:

Ընդհանուր վերլուծություն

Հանձնաժողովի՝ օրենքով նախատեսված չափազանց լայն հայեցողության հետևանքով մինևույն կամ նման խախտում կատարած ընկերությունների նկատմամբ տուգանքի չհիմնավորված տարբեր չափեր են նշանակվում: Արդյունքում, Հանձնաժողովի կողմից կիրառվել են երկակի ստանդարտներ, ինչը խոչընդոտել է առողջ մրցակցության ձևավորմանը: Ընկերությունների նկատմամբ մինևույն կամ համանման խախտման տուգանքի չափը որոշվում է տարբեր մոտեցումներով, կամ մի դեպքում ընկերությունը տուգանվում է, իսկ մյուս դեպքերում՝ պարզապես տրվում է նախազգուշացում: Նշվածը բխում է առկա օրենսդրական թերի կարգավորումներից: Այսպես, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում 5 միլիոնից 200 միլիոն դրամի չափով: Մինչդեռ, տուգանքի նշանակման չափերի միջև նման լայն միջակայքի նախատեսումը խնդրահարույց է, քանի որ տուգանքի չափն ընտրելու չափազանց լայն հայեցողություն է նախատեսում Հանձնաժողովի համար՝ ստեղծելով իրավախախտ ընկերությունների նկատմամբ տուգանք նշանակելիս ոչ միատեսակ մոտեցման ռիսկ: Նշվածի արդյունքում իրավախախտ ընկերությունը կարող է ենթարկվել անհամաչափ բարձր տուգանքի, ինչն իր հերթին կարող է ընկերության հետագա գործունեության լուրջ խոչընդոտ հանդիսանալ, ընդհուպ մինչև սնանկացումը: Բացի այդ, 2013 թվականի ընթացքում արձանագրվել են տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ ոչ միատեսակ մոտեցում ցուցաբերելու մի շարք բողոքներ: Այսպես, Հանձնաժողովի տրամադրած տվյալների համաձայն՝ ստացվել են ընդամենը 4 բողոքներ, որոնց կապակցությամբ իրականացվել է ուսումնասիրություն: Դրանց արդյունքում հիմնավորվել է միայն 1 բողոք, որում էլ բարձրացված խնդիրը Հանձնաժողովի կողմից լուծում է ստացել: Նշվածը վկայում է այն մասին, որ Հանձնաժողովը չի իրականացրել անհրաժեշտ միջոցառումներ՝ բացառելու համար նման երևույթների կրկնությունը: Ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել նման դեպքերի կանխարգելման և վերացման համար:

Նշվածից կարելի է եզրակացնել, որ շահագրգիռ անձանց մոտ բացակայում է վստահությունը Հանձնաժողովի գործունեության նկատմամբ, ինչը պարզ է դառնում 2013 թվականի ընթացքում ստացված բողոքների սակավաթվությունից: Ինչ վերաբերում է Հանձնաժողովի՝ օրենքով նախատեսված չափազանց լայն հայեցողությանը, հարկավոր է արձանագրել, որ առկա է խնդրի օրենսդրորեն հստակ կարգավորման անհրաժեշտություն՝ ուղղված իրավախախտների համար արդարացի պատասխանատվության միջոցների սահմանմանը: Հատկանշական է, որ նշված խնդրի առկայությունը դեռևս 2012 թվականին հավաստել է ՀՀ վերահսկիչ պալատը:

Առկա են եղել դեպքեր, երբ Հանձնաժողովը վարույթ է հարուցել խոշոր գերիշխող դիրք ունեցող գործարարների նկատմամբ, սակայն որևէ խախտում չի հայտնաբերել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թվականին գրանցվել էին մի շարք բողոքներ շաքարավազի շուկայում գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ, Պաշտպանի կողմից համապատասխան հարցում էր ուղարկվել Հանձնաժողով: Ի պատասխան այդ գրությանը՝ Հանձնաժողովը հայտնել էր, որ 2013 թվականին ուսումնասիրվել էր շաքարավազի շուկան: Այդ ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ 2013 թվականի առաջին եռամսյակի տվյալներով «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներմուծել է շաքարավազի հումք, իսկ շաքարավազի ներմուծում է իրականացրել թվով 25 կազմակերպություն, որոնց ներմուծման ծավալները կազմել են 1603,3 տոննա: «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը արտադրել է 22425,4 տոննա և Հայաստանի Հանրապետությունում իրացրել է 12142,5 տոննա շաքարավազ: 2013 թվականի առաջին եռամսյակի տվյալներով Հայաստանի Հանրապետությունում իրացվել է 12162,1 տոննա շաքարավազ, որի 99,8 տոկոսը բաժին է հասել «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որն էլ համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Շաքարավազ» ապրանքային շուկայում ուսումնասիրության արդյունքներով գերիշխող դիրքի չարաշահման մասին վկայող երևույթներ չեն հայտնաբերվել: Այսինքն, ըստ Հանձնաժողովի, «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործողությունները գերիշխող դիրքի չարաշահում չեն հանդիսացել:

Չնայած հնչել են բազմաթիվ հրապարակային բողոքներ ձկնաբուծության և ձկան կերի շուկայում որոշ գործարարների գերիշխող դիրքի վերաբերյալ, այդուհանդերձ Հանձնաժողովն այդ շուկայում ընդհանրապես ուսումնասիրություններ չի կատարել: Քննարկվող տարվա ընթացքում մամուլում բազմաթիվ են եղել դեպքերը, երբ անձինք իրենց բողոքն են հայտնել որոշ տնտեսվարող սուբյեկտների՝ ձկնաբուծության և ձկան կերի ոլորտում ձևավորված մենաշնորհային դիրքի հնարավոր չարաշահման մասին: Ըստ Հանձնաժողովի՝ որևէ ահազանգ վերջիններս չեն ստացել նշվածի մասին, և 2013 թվականին ձկնաբուծության ոլորտում ուսումնասիրություն չի իրականացվել: Սակայն անհրաժեշտ է փաստել, որ բազմաթիվ դեպքերում անձինք չեն դիմել Հանձնաժողովին՝ խուսափելով վերջիններիս կողմից իրենց անունների հրապարակումից: Այդուհանդերձ, Հանձնաժողովը պարտավոր էր պատշաճ ուշադրության արժանացնել մամուլի հաղորդագրություններին և առերևույթ խնդրահարույց իրավիճակներ հայտնաբերելու պարագայում ընթացք տալ դրանց:

Իրական և լիարժեք տնտեսական մրցակցության բացակայության մթնոլորտում Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել է ընդամենը մեկ դեպք, երբ խոչընդոտվել է նոր գործարարների շուկա մուտք գործելը: 2013 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել մի շարք դիմում բողոքներ՝ նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման միջոցով գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից 2013 թվականին դիմումի հիման վրա ուսումնասիրություն է իրականացվել դեղերի շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտներ ստեղծելու ուղղությամբ: Մասնավորապես, էստերալ զոնդային սննդի համար հայտարարված մրցությունը դեղերի շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտը ներկայացրել է ավելի ցածր գին այն չափաբաժինների համար, որոնցով ունեցել է մրցակից (այդ հանգամանքը հիմնավորելով իր արտասահմանյան մատակարարից գեղչերի տրամադրմամբ), իսկ այն չափաբաժնի համար, որի գծով չի մրցակցել այլ ընկերությունների հետ, հակառակը՝ էապես բարձր գին: Բացի այդ, ընկերությունն էստերալ զոնդային սննդի ձեռք բերման գնի նվազմանը համարժեք չի իջեցրել դրա մանրածախ վաճառքի գները: Հանձնաժողովն ընկերության գործողությունները և վարքագիծն «էստերալ զոնդային սնունդ» ապրանքային շուկայում համարել է գերիշխող դիրքի չարաշահում, նշանակվել է տուգանք 10 մլն դրամի չափով: Հարկ է նկատել, որ Հանձնաժողովի կողմից Պաշտպանին տրամադրվել է գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ ընդամենը մեկ դեպք՝ դեղերի շուկային վերաբերող, որի առնչությամբ իրականացվել են գործողություններ: Սակայն դա չի արտացոլում արձանագրված խախտումների ողջ պատկերը: Այսպես, գերիշխող դիրքի չարաշահման տարրեր են պարունակվել նաև «ԱրմենՏել» ընկերության գործունեության մեջ: Մասնավորապես, Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում, քանի որ ֆիքսված հեռախոսակապի ծառայության բաժանորդները բողոքել էին, որ «ԱրմենՏել» ընկերությունը, միջքաղաքային/բջջային զանգեր արգելափակելիս, արգելափակում էր նաև ֆիքսված հեռախոսակապի այլ օպերատորների ցանցեր ուղղված հեռախոսազանգերը: «ԱրմենՏել» ընկերության նման վարքագիծը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և վերջինիս տրվել է նախազգուշացում՝ խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարությամբ: Ուստի, պետք է փաստել այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կողմից չեն իրականացվել լայնածավալ աշխատանքներ այլ ոլորտներում և այլ ընկերությունների կողմից նման արատավոր երևույթների հայտնաբերման, կանխարգելման, պատասխանատվության միջոցների կիրառման և հետագայում դրանք բացառման նպատակով: Հանձնաժողովի նման գործելաոճը չի կարող լուծել ոլորտում առկա խիստ մտահոգիչ խնդիրները և չի կարող խթանել Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ապահովումը: Հետևաբար, նման սահմանափակ ուսումնասիրությունը բավարար չէ ոլորտում առկա խախտումները բացահայտելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել խոցելի ոլորտների ուսումնասիրություն՝ նաև սեփական նախաձեռնությամբ: Մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ Հանձնաժողովի կողմից շարունակական հսկողությունը թույլ կտա օպերատիվ

հայտնաբերել և կանխարգելել մենաշնորհը և գերիշխող դիրքի չարաշահումները, մասնավորապես, ծառայությունների ոչ բավարար տրամադրումը, ինչը սպառողների համար ստեղծում է արհեստական խոչընդոտներ:

Հանձնաժողովը, ունենալով օրենքով նախատեսված հնարավորություն, որևէ քայլ չի նախաձեռնել մանրածախ առևտրի ոլորտում ընկերությունների ոչ անհրաժեշտ միացման դեպքերը զսպելու ուղղությամբ: Հանձնաժողովի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջինս չունի մանրածախ առևտրի ոլորտում կենտրոնացվածության ուղղակի զսպման որևէ կոնկրետ իրավասություն: Մակայն հարկ ենք համարում նշել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ համակենտրոնացման պետական կարգավորումը հանդիսանում է Հանձնաժողովի իրավասությունը: Ավելին, նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու համակենտրոնացումների հետ կապված համապատասխան կարգեր: Հետևաբար, ապակենտրոնացման նպատակով որևէ տարբերակում օրենքը չի դնում մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտներում Հանձնաժողովի լիազորությունների մեջ: Բացի այդ, դեռևս 2012թ. արձանագրված տարեկան արդյունքների հիման վրա ՀՀ վերահսկիչ պալատը արձանագրել էր, որ համակենտրոնացումը չհայտարարագրելու համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ համակենտրոնացմանը մասնակցելու նախորդ տարվա հասույթի 4 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 500 մլն դրամի չափով տուգանքի նշանակման գործընթացը ռիսկային է, քանի որ սույն հարցը կանոնակարգված չէ և չկա որևէ հաստատված մեթոդաբանություն:

Շարունակում է ցածր մնալ Հանձնաժողովի նկատմամբ հասարակության վստահությունը, ինչի մասին են վկայում Հանձնաժողովին ներկայացրած տվյալները: 2013 թվականի ընթացքում քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով է ներկայացվել 68 դիմում-բողոք: Ըստ Հանձնաժողովի՝ նշված բողոքների կապակցությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան կամ հարուցվել են վարչական վարույթներ կամ բողոքները սահմանված կարգով վերահասցեագրվել են այլ գերատեսչության: Հարկավոր է հաշվի առնել, որ ամբողջ տարվա ընթացքում, իրական և լիարժեք տնտեսական մրցակցության բացակայության մթնոլորտի պարագայում Հանձնաժողովին ընդամենը 68 դիմում-բողոքի հասցեագրումը, վկայում է հասարակության կողմից Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ ոչ բավարար տեղեկացվածության և վստահության պակասի մասին, քանի որ գործնականում անհամեմատ ավելի շատ են այս ոլորտում թե խնդիրները և թե անձանց բողոքները:

Ինչ վերաբերվում է ապրանքային շուկաներում մրցակցային օրենսդրության խախտումներին, ապա դրանք հայտնաբերելու նպատակով 2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է 70 դիտանցում, որոնց արդյունքում հարուցվել են թվով 18 վարչական վարույթներ: Հարկ է նկատել, որ Հանձնաժողովի տեղեկացմամբ բոլոր 18 վարույթների դեպքում Հանձնաժողովն ընդունել է պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ համապատասխան որոշումներ: Դրական գնահատելով խախտումների բացահայտումները և դրանց սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու Հանձնաժողովի վճռականությունը՝ այնուամենայնիվ, Հայաստանի

Հանրապետության առևտրային շուկայի ներկա իրավիճակը կարիք ունի ավելացնելու նշված գործողությունների քանակը: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ մրցակցային օրենսդրության խախտումները շարունակում են մնալ արդիական խնդիր, ինչի մասին են վկայում Հանձնաժողովի 2013 թվականին իրականացված սոցիալական ոլորտում գործող 88 հաստատության կողմից (ծերանոց, մանկատուն, գիշերօթիկ հաստատություն, մանկապարտեզ) սննդամթերքի, գույքի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված շուրջ 200 մրցույթի ուսումնասիրության արդյունքները: Հանձնաժողովի կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն՝ մրցութային փաթեթների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ սննդամթերքի ձեռքբերման մրցույթներում, որոնց մասնակցել են շուրջ 35 տնտեսվարող սուբյեկտ, 8 տնտեսվարող սուբյեկտի վարքագծում առկա են մրցակցության օրենսդրության խախտումների մասին վկայող հանգամանքներ: Հանձնաժողովը մի շարք հանգամանքներ է բացահայտել, որոնք վկայում են ընկերությունների՝ պետական գնումների մրցութային գործընթացների շրջանակներում համատեղ փոխհամաձայնեցված քաղաքականություն վարելու մասին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակամրցակցային համաձայնությունները հանդիսանում են մրցակցային օրենսդրության խախտումներից առավել վտանգավորներից մեկը և, միևնույն ժամանակ, պահանջում են ապացույցների ձեռքբերման համար լայն իրավասությունների առկայություն՝ Հանձնաժողովը պետք է առանձնահատուկ ուշադրությամբ հետևողական լինի հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ:

Հանձնաժողովի հայտնած տեղեկատվության համաձայն՝ վերջինիս գործունեության առավել արդյունավետ լուսաբանման նպատակով Հանձնաժողովի մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայությունը մշտապես ակտիվ քայլեր է իրականացնում: Հանձնաժողովի կողմից իրականացված բոլոր միջոցառումների, նիստերի, պաշտոնական հանդիպումների և այցերի վերաբերյալ հասարակությունը իրազեկվել է ինչպես հեռուստաընկերությունների, այնպես էլ մամուլի և էլեկտրոնային լրատվամիջոցների միջոցով: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ www.competition.am Հանձնաժողովի կայքում վերջինիս գործունեության վերաբերյալ նորությունները վերջին անգամ թարմացվել են 2013 թվականի մայիսին: Հանձնաժողովի կողմից տրամադրած տեղեկության համաձայն՝ կայքում կատարվում են ծրագրային վերազինման աշխատանքներ, ինչի հետևանքով այժմ դրանք ժամանակավորապես հասանելի չեն՝ կապված տեխնիկական խնդիրների հետ: Հարկ է նշել, որ այդ տեղեկատվությունը պետք է հասանելի դառնա նաև հասարակության լայն շերտերի համար, ուստի անհրաժեշտ է կայքում տեղադրել համապատասխան տեղեկություն և հետևողական լինել կայքի տեխնիկական խնդիրները հնարավորինս սեղմ ժամանակահատվածում վերացնելու հարցում:

Առաջարկություններ

- Միննույն կամ համանման խախտման տուգանքի չափը որոշելիս՝ բացառել տարբերակված մոտեցումները և հստակեցնել Հանձնաժողովի չափազանց լայն հայեցողությունը:
- Խոշոր գերիշխող դիրք ունեցող գործարարների նկատմամբ վարույթ հարուցելու դեպքերում իրականացնել բազմակողմանի և լրիվ վարչարարություն: Միաժամանակ որևէ խախտում չհայտնաբերելու դեպքերում, հանրությանը ներկայացնել նման որոշումների հիմնավորումները:
- Մանրամասն ուսումնասիրել ձկնաբուծության և ձկան կերի ոլորտում մրցակցության օրենսդրության պահանջների խախտման և մենաշնորհային դիրքի չարաշահման սահազանգերը և հնարավոր դեպքերը:
- Հետևողականություն ցուցաբերել նոր գործարարների շուկա մուտք գործելու խոչընդոտման դեպքերի վերհանման և կանխման ուղղությամբ:
- Հաշվի առնելով Հանձնաժողովի օրենքով սահմանված լիազորությունը՝ ընդունել համապատասխան կարգեր մանրածախ առևտրի ոլորտում համակենտրոնացման զսպման ուղղությամբ:
- Քայլեր ձեռնարկել հասարակության կողմից Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկացվածության և վստահության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:
- Ապահովել գերիշխող դիրքի չարաշահման բոլոր դեպքերի լուսաբանումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության խնդիրներն ու նպատակներն են խթանել տնտեսության ձևավորումն ու նորարարությունը, ապահովել մրցակցային տնտեսության պայմանների ու սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացումը, ինչպես նաև մասնակցել զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, նվազեցնել տարածքային զարգացման անհամաչափությունները: Բացի այդ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը կոչված է մասնակցելու գործարարության, ներդրումների և արտահանման խթանմանը, գործարարության համար բարենպաստ և մրցունակ միջավայրի ապահովմանը, ինչպես նաև բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացմանը:

2013 թվականին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Նախարարությունը չի ապահովել բավարար պայմաններ արտահանող գործարարների համար, ինչպես օրինակ՝ ձևական պահանջների նվազեցում, օտարերկրյա շուկաների հասանելիության ապահովում:
- Օտարերկրյա ներդրողներին պատշաճ չեն ներկայացվել տեղական շուկայի առավելություններն ու ձեռքբերումները, ինչպիսիք են օրինակ բիզնեսը սկսելու և անշարժ գույքի գրանցման հեշտացված գործընթացները, օտարերկրյա ներդրողների համար ոչ խտրական պայմանները:
- Չեն իրականացվել բավարար միջոցառումներ տնտեսության ավանդական ոլորտների զարգացումն ապահովելու ուղղությամբ, ինչը հանգեցրել է նրանց աստիճանաբար վերացմանը (օրինակ՝ ժամագործություն, թեթև արդյունաբերություն, ոսկեգործություն և այլն):
- Դեռևս չի ստեղծվել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող և ոլորտի նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնող միասնական պետական մարմին, ինչի արդյունքում պաշտպանված չեն եղել սպառողների իրավունքներն ու շահերը:
- Առկա թերի օրենքները, ինչպես նաև անհամաչափ բարձր հարկերը խոչընդոտում են փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը:

Արձանագրված դրական զարգացումները

- Նախարարության կողմից մշակվել է «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թվականի ծրագիրը, ինչպես նաև

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագիրը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 26.12.2013թ. N1511-Ն որոշմամբ:

- Զբոսաշրջության զարգացման բնագավառում Նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:
- Սպառողների լայն շրջանակի իրազեկվածության ապահովման նպատակով նախարարության կողմից Երևանում և մարզերում կազմակերպվել են հանդիպում-սեմինարներ՝ շահագրգիռ թիրախ խմբերի ներկայացուցիչների, այդ թվում նաև Հայաստանում գործող սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

Ընդհանուր վերլուծություն

Նախարարությունը չի ապահովել բավարար պայմաններ արտահանող գործարարների համար, ինչպես օրինակ՝ ձևական պահանջների նվազեցում, օտարերկրյա շուկաների հասանելիության ապահովում: Հանդիսանալով վերը նշված ոլորտները կարգավորող պետական իրավասու մարմին՝ Նախարարությունը պետք է ձեռնարկի հնարավոր բոլոր միջոցները՝ բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման, առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, նրանց շահերը ներկայացնող միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության, տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակման մասնակցության, ներքին շուկաների ուսումնասիրության, առկա խոչընդոտների բացահայտման, ներքին շուկայի պաշտպանության և հակազնազցման միջոցների կիրառման քաղաքականության մշակման ուղղությամբ: Այդուհանդերձ, Նախարարության կողմից արդյունավետ միջոցների չձեռնարկման պատճառով գրանցվել են դեպքեր, երբ արտաքին առևտրի տարբեր ճյուղերում արձանագրվել է անկում, սպառողական շուկայում նվազել է տնտեսական ակտիվությունը, ինչպես նաև եղել են բազմաթիվ խախտումներ առողջ մրցակցության ապահովման բնագավառում: Որպես օրինակ կարող ենք նշել գերիշխող դիրքի չարաշահումը դեղերի շուկայում, որոնց արդյունքում խոչընդոտեր են ստեղծվել այլ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ շուկա մուտք գործելու ոլորտում: Հարկ է նշել, որ մրցակցային միջավայրի ձևավորման և շուկայի պաշտպանության ոլորտի պետական քաղաքականությունը, գտնվելով մասնավոր ձեռնարկատիրական և հասարակական տնտեսաիրավական հարաբերությունների կիզակետում, ուղղված է դրանց արդյունավետ փոխհարաբերակցության հաստատմանը, որի հաջողությունը կախված է ինչպես օրենսդրության լիարժեք կիրառումից, այնպես էլ շուկայի մասնակիցների միջև քաղաքակիրթ գործարար սովորույթների առկայությունից, որի երաշխիք պետք է հանդիսանա Նախարարությունը՝ տարբեր միջոցառումների նախաձեռնությամբ: Արտաքին

առևտրի և ներքին շուկայի փոխհարաբերության խնդիրներից է, որ մեր երկիրը առևտրային ոլորտում համարվում է ներկրող երկիր, այլ ոչ արտահանող: Այնինչ, բացակայում են գործուն կարգավորումներ և/կամ պայմաններ, որոնք կբարելավեն մեր տնտեսվարող սուբյեկտների մուտքը արտաքին և ներքին շուկա, քանի որ ներկրվող ապրանքների քանակը և տարատեսակությունը կարող են ստեղծել լուրջ խոչընդոտներ ՓՄՁ-ների համար: Ուստի, հարկավոր է զգալի աջակցություն ցուցաբերել հայրենական արտադրողին՝ նրա մրցունակությունը տարբեր շուկաներում բարձրացնելու համար: Միաժամանակ, հարկ ենք համարում նշել որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 4-րդ և 5-րդ հոդվածների՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, և վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված է, որ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Օտարերկրյա ներդրողներին պատշաճ չեն ներկայացվել տեղական շուկայի առավելություններն ու ձեռքբերումները: Կառավարությունը, ի դեմս Նախարարության, պետք է ներդրողների համար տեղական շուկայի առավելությունների ու ձեռքբերումների վերաբերյալ պատշաճ լուսաբանում իրականացնի: Հատկապես օտարերկրյա ներդրողներին պետք է բավարար կերպով լուսաբաներ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակված ամենամյա Doing Business 2014 («Գործարարությամբ զբաղվելը – 2014») զեկույցում Հայաստանի ձեռքբերումները (օրինակ՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ 189 երկրների շարքում զբաղեցրել է 37-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ դիրքը բարելավելով 3 հորիզոնականով, բիզնեսը սկսելու և անշարժ գույքի գրանցման հեշտացված գործընթացները, օտարերկրյա ներդրողների համար ոչ խտրական պայմանները): Մի շարք Եվրոպական երկրներ նման դեպքերում օգտվում են տարբեր միջազգային հեռուստաընկերությունների գովազդային ծառայություններից, որոնք ունեն միլիոնավոր հեռուստադիտողներ: Նշվածը հանդիսանում է պատշաճ լուսաբանման միջոցներից մեկը: Հարկ է նշել նաև, որ Նախարարությունը պետք է հետևի աշխարհում ընթացող արդիական փոփոխություններին, որպեսզի կարողանա անհրաժեշտ պայմաններ ստեղծել օտարերկրյա ներդրողներին գրավելու համար:

Չեն իրականացվել բավարար միջոցառումներ տնտեսության ավանդական ոլորտների զարգացումն ապահովելու ուղղությամբ, ինչը հանգեցրել է նրանց աստիճանաբար վերացմանը (օրինակ՝ ժամագործություն, թեթև արդյունաբերություն, ոսկեգործություն և այլն): Նախարարությունից մեզ հայտնել են, որ ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման նպատակով՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում: Մասնավորապես, ՀՀ

կառավարությունը 2011թ. դեկտեմբերի 15-ին հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը»: Փաստաթուղթը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ուղորտների ձևավորմանն ու զարգացմանը: Սույն քաղաքականության շրջանակներում պետք է համակարգվեն այն բոլոր միջոցառումները և գործիքները, որոնք կառավարությունն օգտագործում է՝ օժանդակելու տնտեսության իրական հատվածի զարգացմանը: Նշված փաստաթղթում նախանշվել են արտահանման տեսանկյունից հեռանկարային 11 ոլորտներ, որոնցից 8-ի (կոնյակագործություն, դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, ճշգրիտ ճարտարագիտություն, գինեգործության, թեթև արդյունաբերության, ոսկեգործության, ադամանդագործության ու ժամագործության) ոլորտային ռազմավարություններն և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերն արդեն իսկ մշակվել և հավանության են արժանացել ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստում և ներկայումս իրականացման փուլում են: Ողջունելի է այն հանգամանքը, որ Նախարարությունը շարունակում է միջոցներ ձեռնարկել հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ուղղությամբ: Մակայն խիստ մտահոգիչ է, որ տնտեսության ավանդական ոլորտների (օրինակ՝ գորգագործություն, ասեղնագործություն, խեցեգործություն և այլն) զարգացման համար առանձին, կոնկրետ միջոցներ չեն ձեռնարկվում, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում տնտեսության ավանդական ոլորտների զարգացումն ապահովելու և դրանք վերացումից պաշտպանելու ուղղությամբ: Կազմակերպությունների և ձեռնարկատիրության պետական աջակցության քաղաքականության մշակման ընթացքում անհրաժեշտ է, որպեսզի Նախարարությունը պատշաճ ուշադրություն դարձնի նաև տնտեսության ավանդական այլ ոլորտներին՝ հատուկ ծրագրեր իրականացնելով տնտեսության ավանդական ճյուղերի զարգացման ոլորտում:

Դեռևս չի ստեղծվել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող և ոլորտի նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնող միասնական պետական մարմին, ինչի արդյունքում պաշտպանված չեն եղել սպառողների իրավունքներն ու շահերը: ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են սպառողների իրավունքները և շահերը, սակայն գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ վերոգրյալ իրավունքները խախտվում են անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից: Նախարարության գործունեության ոլորտում առկա հիմնական բացերը և/կամ թերացումները վերաբերում են հենց սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության ոլորտին: Մասնավորապես, Նախարարությունը հայտնել է, որ 2013 թվականի ընթացքում Նախարարության շուկայի վերահսկողության պետական տեսչության կողմից ստացվել են ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների անհամապատասխանության վերաբերյալ թվով 80 դիմում-բողոքներ, որոնցից 65-ը բավարարվել է, իսկ մնացածին, տեսչության իրավասության շրջանակներից դուրս լինելու պատճառով, ընթացք չի տրվել՝ առաջարկելով սահմանված կարգով դիմել իրավասու մարմիններին: Ստացվել են նաև թվով 8 բողոքներ սպառողներից ավտոգազալիցքավորման ճնշակայանների, տաքսի ծառայությունների մատուցման վերաբերյալ: Նշված բողոքների կապակցությամբ տեսչության աշխատակիցները ձեռնարկել

են հնարավոր բոլոր միջոցները՝ սպառողների խախտված իրավունքները վերականգնելու համար: Որոշ դեպքերում բարձրացված պահանջները չեն ապացուցվել, ուստի համապատասխան ընթացք չի տրվել և տեղեկացվել է սպառողին: Սակայն արդի է մնում տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքի վաճառքի դեպքում դրա ետ չընդունելու խնդիրը (արձանագրվել են նույնիսկ դեպքեր, երբ տնտեսվարող սուբյեկտները վաճառքի կետերում փակցրել են ապրանքը ետ չընդունելու մասին գրառումներ): Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 517-րդ հոդվածի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել, գնված ապրանքն այն գնելու կամ վաճառողի հայտարարած այլ վայրում փոխարինել այլ չափի, ձևի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ: Ավելին, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ սպառողն իրավունք ունի արտադրողին վերադարձնել ոչ պատշաճ որակի ապրանքը և հետ պահանջել դրա համար վճարված գումարը: Սակայն վերոնշյալ դրույթները գործնականում անտեսվում են և պատշաճ չեն կատարվում բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների կողմից: Հաշվի առնելով, որ այս ոլորտի պատասխանատու մարմինը հանդիսանում է Նախարարությունը, վերջինիս կողմից պետք է նախաձեռնողականություն դրսևորվի անհրաժեշտ համալիր միջոցառումների իրականացման համար՝ վերոնշյալ խնդրի վերացման նպատակով: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրառման ոլորտում համապատասխան վերահսկողական գործառնություններ իրականացնող պետական լիազոր մարմինների լիազորությունների հստակեցման անհրաժեշտությունից ելնելով՝ տեսչական բարեփոխումների խումբը մշակել է ոչ պարենային արտադրանքի անվտանգության բարձրացմանն ուղղված վերահսկողության ապահովման վերաբերյալ օրենսդրական փաթեթ: Միաժամանակ, որպես սպառողների իրավունքների պաշտպանության մի մաս ներկայումս մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև իրականացվում է ստուգում իրականացնող մարմինների օպտիմալացման ծրագիր: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ Սահմանադրության 31.1 հոդվածի համաձայն՝ պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

Առկա թերի օրենքները, ինչպես նաև անհամաչափ բարձր հարկերը խոչընդոտում են փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Նշյալ ոլորտում Նախարարության կողմից, թեև իրականացվել են որոշ միջոցառումներ, սակայն էապես չեն լուծվել առկա խնդիրները: Այսպես, նշյալ խնդրի կապակցությամբ Նախարարությունն առանձնացրել է 2013թ. փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2013թ. միջոցառումների ծրագիրը», որի համակարգումն իրականացվել է իր կողմից: Նախարարությունից հայտնել են նաև, որ գործարարությամբ զբաղվելու վարչարարական խոչընդոտները նվազեցնելու նպատակով իրականացվել են իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքներ: Բացի այդ, 2013թ. ընթացքում փորձաքննության են ենթարկվել շուրջ 360 իրավական ակտեր,

որոնցից 13%-ին (47 իրավական ակտ) տրվել է տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում դրական ազդեցությամբ, իսկ 9.7%-ին՝ (35 իրավական ակտ) բացասական ազդեցությամբ եզրակացություն: Վերջիններս ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել միայն նախագծողների կողմից լրամշակվելուց հետո: Միաժամանակ, կարևորելով տեսչական բեռի թեթևացման դրական ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վրա՝ Նախարարությունը կատարել է աշխատանքներ տեսչական ստուգումների ռիսկի վրա հիմնված համակարգի ներդրման համար: Ներկայումս, համաձայն ՀՀ կառավարության 23.10.2013թ. N 1194-Ա որոշման, թվով 10 տեսչական գործառույթներ իրականացնող մարմիններ արդեն անցել են ստուգումների վերը նշված համակարգին և վերջիններիցս հանվել է 2009թ. գործող ստուգումների անցկացման արգելքը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումները չեն լուծել, և չեն կարող լուծել փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում առկա օրենսդրական խնդիրները, որոնց լուծումները պետք է ուղղված լինեն ոլորտի արդյունավետ զարգացմանը: Չեն իրականացվել արդյունավետ միջոցառումներ՝ ուղղված տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող անհամաչափ բարձր հարկային բեռը նվազեցնելուն: Այսպես, 2013թ. հունվարի 1-ից կիրառության մեջ դրված «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը, որի փոփոխված դրույթները միտված էին բարելավելու տնտեսվարող սուբյեկտների, հատկապես՝ ՓՄՁ-ների իրավական վիճակը, տվեցին հակառակ արդյունք և որոշ դեպքերում վատթարացրեցին տնտեսվարող սուբյեկտների դրությունը: Ըստ օրենսդրական փոփոխությունների՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառություն), չի գերազանցել 58,35 մլն դրամը: Իսկ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը հստակորեն նշում է այն չափանիշները, ըստ որոնց ՀՀ-ում ձեռնարկատիրությունը դասակարգվում է ըստ մեծության, մասնավորապես՝ ՀՀ-ում գերփոքր ՓՄՁ սուբյեկտներ են այն առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը: Փոքր ՓՄՁ սուբյեկտներ են առևտրային կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը, իսկ միջին ՓՄՁ սուբյեկտներ են առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը: Ելնելով վերոգրյալից՝ հայտնի

չէ, թե ինչ չափանիշներով է որոշվել «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառման 58,35 մլն դրամի նվազագույն շեմը: Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում ձեռնարկությունների մեծ մասը փոքր ձեռնարկություններ են՝ հարկային բեռի մեծ մասը նրանց վրա է ընկնում: Որպես ոլորտի լիազոր մարմին՝ Նախարարության խնդիրներից է մրցակցային տնտեսության զարգացման պայմանների ապահովումը, իսկ անմիջական գործառույթներից է ձեռներեցության ոլորտում կազմակերպությունների և ձեռնարկատիրության պետական աջակցության քաղաքականության մշակումը, ինչը, ըստ փաստացի արձանագրված արդյունքների, անբավարար է: Նշվածի վառ օրինակներից է «Արտոնագրային վճարների մասին» օրենքով 2013 թվականի հունվարի 1-ից Երևան քաղաքում աստամնաբուժական գործունեությամբ զբաղվող անձանց համար ներառյալ մինչև երեք բազկաթոռի դեպքում յուրաքանչյուր բազկաթոռի համար 80 հազար դրամ արտոնագրային վճար կատարելու պարտավորության սահմանումը: Գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել վերը նկարագրված հարկային կարգավորումները՝ բարենպաստ պայմաններ ստեղծելու ՓՄՁ-ների գործունեության համար:

Դեռևս բազմաթիվ են տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողության իրականացման ընթացքում արձանագրված խախտման դեպքերը: Նախարարության Շուկայի վերահսկողության պետական տեսչության կողմից 2013թ. տեխնիկական կանոնակարգման և չափագիտական կանոնների պահպանման ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել են թվով 189 խախտումներ, որոնցից 28-ը՝ հայերեն լեզվով մակնշման պահանջների խախտմամբ: Հայտնաբերված խախտումների արդյունքում տրվել են արտադրանքների իրացումը կասեցնելու, չափման միջոցների շահագործումն արգելելու վերաբերյալ կարգադրեր, որոնց պահանջները սահմանված կարգով և ժամկետներում կատարվել են, որից հետո միայն թույլատրվել է արտադրատեսակների իրացումն ու չափման միջոցների շահագործումը: Միաժամանակ, Տեսչության կողմից կազմակերպվել և իրականացվել են հանդիպումներ տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ և սահմանված կարգով պարզաբանվել են նրանց իրավունքներն ու պարտականությունները՝ տեխնիկական կանոնակարգման և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանության ոլորտներում: Տեսչության կողմից «Վաղարշ և որդիներ կոնցեռն» ՍՊԸ-ում կայացած ստուգումների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ խախտումներ և կիրառվել է տուգանք 65 մլն դրամի չափով: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ խախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտներին տրվել են տարբեր տեսակի հանձնարարագրեր, մասնավորապես՝ արտադրանքի իրացումը կասեցնելու, արգելելու, արտադրանքը շրջանառությունից հանելու, սպառողներին այդ մասին տեղեկացնելու և սպառողներից արտադրանքը հետ վերցնելու, կարգադրագրեր՝ չստուգաչափված չափման միջոցների շահագործումը արգելելու մասին: Ապրանքների մակնշման պահանջի ու դրա կիրառման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման անհրաժեշտությունը և կարևորությունը պայմանավորված է սպառողների իրազեկման իրավունքի ապահովմամբ: Դա վկայում է այն մասին, որ Նախարարությունը բավարար միջոցներ չի ներդնում տնտեսավարող սուբյեկտների կողմից տեխնիկական

կանոնակարգերի պահանջները և չափազիտական կանոններն ու նորմերը պահպանելու ուղղությամբ: Պարզ չէ նաև Նախարարության որդեգրած քաղաքականությունը՝ խնդրի լուծումն ապահովել միայն խախտումներ թույլ տված տնտեսվարող սուբյեկտների պատասխանատվության ենթարկելու միջոցով: Նախարարությունը պետք է մշակի խախտումները կանխելու քաղաքականությունը, որը ոլորտում առկա խնդիրների նվազեցման ավելի արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ:

Առաջարկություններ

- Ձեռնարկել հստակ միջոցներ՝ արտաքին առևտրի ծավալները ընդլայնելու, կայուն սպառողական շուկա ստեղծելու և բարեխիղճ մրցակցության ապահովելու համար:
- Հաշվի առնելով միջազգային փորձը՝ միջոցներ ձեռնարկել օտարերկրյա ներդրողներին տեղական շուկայի առավելություններն ու ձեռքբերումները պատշաճ ներկայացնելու ուղղությամբ:
- Տնտեսության ավանդական ոլորտների զարգացումն ապահովելու և դրանք վերացումից պաշտպանելու ուղղությամբ մշակել և գործարկել հատուկ ծրագրեր:
- Մշակել և գործնականում կիրառել սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում գործուն մեխանիզմներ, ինչպես նաև օրենքով նախատեսել համապատասխան գործառույթներ իրականացնող միասնական պետական լիազոր մարմին և դրա լիազորությունները:
- Մշակել հստակ և արդյունավետ օրենսդրական մեխանիզմներ՝ հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը ապահովելու համար:
- Միջոցներ ձեռնարկել ՓՄՁ-ների նկատմամբ կիրառվող անհամաչափ և վերջիններիս գործունեությանը որևէ կերպ չնպաստող բարձր հարկային բեռը նվազեցնելու նպատակով:
- Տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափազիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ որդեգրել խախտումները նախականիչելու և կանխելու քաղաքականություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության խնդիրներն ու նպատակներն են էներգետիկայի և էներգասպառման բնագավառում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության ապահովումը, ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը, ընդերքի օգտագործման տրամադրման ապահովումը, օգտակար հանածոների ողջամիտ օգտագործման, ուսումնասիրման և հանքարդյունահանման արդյունավետ իրականացմանը նպաստելը, ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողության ապահովումը և այլն:

2013 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Գրանցվել են ընդերքի օգտագործման օրենսդրության մի շարք խախտումներ, ինչպես օրինակ՝ ընդերքի օգտագործում առանց դրա իրավունքի, օգտագործման պայմանագրի խախտում: Նշվածը վկայում է Նախարարության ոչ պատշաճ վերահսկողության և ոչ բավարար կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու մասին:
- Օրենքների թերի լինելու պատճառով վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացումն ու փոխադրումը որևէ կերպ չի կարգավորվում: Արդյունքում՝ լուրջ վտանգ է առաջանում հանրության առողջության և շրջակա միջավայրի համար:
- Թեև ընդունվել են ռիսկայնության գնահատման կանոնները, սակայն դրանց թերի լինելու հետևանքով էներգետիկ կայանների ստուգումների ընթացքում առաջացել են մի շարք բարդություններ:
- Չնայած հանրությանը հուզող մի շարք հարցերի, ինչպես օրինակ՝ ընդերքի օգտագործումը, ՀԷԿ-երի կառուցումը և շահագործման վտանգները, Նախարարությունը կազմակերպել է ընդամենը մեկ հանրային քննարկում:

Արձանագրված դրական զարգացումները

- 2013 թվականին ՀՀ էներգետիկայի բնագավառում տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված անվտանգության նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունքում հայտնաբերվել են թվով 677 անհամապատասխանություններ ու թերություններ, որոնց վերացման համար տրվել

են կարգադրագրեր, իսկ խախտում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ:

- 2013 թվականի ընթացքում ՀՀ ընդերքօգտագործման ոլորտում իրականացվել են ռիսկի վրա հիմնված բազմաթիվ ստուգումներ, որի արդյունքներով 53 տնտեսվարող սուբյեկտների մոտ արձանագրվել են «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջների խախտումներ, և խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ:

Ընդհանուր վերլուծություն

Գրանցվել են ընդերքի օգտագործման օրենսդրության մի շարք խախտումներ, ինչպես օրինակ՝ ընդերքի օգտագործում առանց դրա իրավունքի, օգտագործման պայմանագրի խախտում: Նշվածը վկայում է Նախարարության ոչ պատշաճ վերահսկողության և ոչ բավարար կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու մասին: 2013 թվականի ընթացքում Նախարարությունը ընդերքօգտագործողների կողմից բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության նորմերի խախտման վերաբերյալ ստացել է թվով 30 բողոք՝ 19 կազմակերպությունների և երկու ֆիզիկական անձանց վերաբերյալ: Ստացած բողոքների վերաբերյալ իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում կազմակերպությունների տնօրենները, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք թույլ են տվել «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջների խախտումներ, ենթարկվել են վարչական պատասխանատվության՝ տուգանքի տեսքով: Թույլ տված խախտումները վերացնելու համար ընդերքօգտագործող կազմակերպություններին տրվել են հանձնարարական-ծանուցումներ՝ 90-օրյա ժամկետում կատարված խախտումները վերացնելու համար: Նախարարության իրականացրած դիտարկումների արդյունքում նույնպես հայտնաբերվել են ընդերքօգտագործողների կողմից բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության նորմերի խախտումներ, իսկ դրանք կատարած կազմակերպությունների նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ, ինչպես նաև նյութեր են ներկայացվել իրավապահ մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու համար: Մինևնույն ժամանակ 2013 թվականի ընթացքում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ընթացակարգի իրականացման հետ կապված խախտումներ չեն արձանագրվել: Ստուգումների ընթացքում, մասնավորապես հայտնաբերվել են «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի հետևյալ խախտումները. չի իրականացվել ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքության, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների ապահովում, ընդերքօգտագործման աշխատանքներն իրականացում՝ համաձայն լիազորմարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագրի, իրականացվել է ընդերքօգտագործում առանց ընդերքօգտագործման իրավունքի, աշխատանքներն իրականացվել են օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին հակառակ, չեն ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը և այլն: Հատկանշական է, որ 2012 թվականի ընթացքում դիմում-

բողոքների հիման վրա Նախարարությունում հարուցվել էր շուրջ 8 վարչական վարույթ: Դիմում-բողոքների քանակային ավելացումը վկայում է Նախարարության նկատմամբ հասարակության վստահության բարձրացման մասին: Սակայն գտնում ենք, որ անհրաժեշտ է, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն դիտարկումների հաճախականությունը ավելացնելու ուղղությամբ՝ նշված ոլորտում թեկուզև քանակապես ոչ շատ, սակայն դեռևս առկա խնդիրները վերացնելու համար: Նախարարության աշխատակազմի Ընդերքի պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կանոնադրության համաձայն՝ Տեսչության նպատակը և խնդիրն է, ի թիվս այլոց, Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման ոլորտում վերահսկողություն իրականացնելու միջոցով ապահովել իրավախախտումների, այդ թվում՝ նաև ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի բացահայտումը, կանխարգելումը և բացահայտված իրավախախտումների վերացումը: Անհրաժեշտ է համապատասխան վերահսկողություն իրականացնելու միջոցով բարձրացնել նմանօրինակ իրավախախտումների կանխարգելման ցուցանիշը: Մինևույն ժամանակ, ողջունելի է Նախարարության կողմից ՀՀ էներգետիկայի բնագավառում տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված անվտանգության նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունավետ իրականացումը, ինչի արդյունքում հայտնաբերվել են թվով 677 անհամապատասխանություններ ու թերություններ, որոնց վերացման համար, կոնկրետ ժամկետներով, տրվել են կարգադրագրեր, միջոցառումների կատարման նկատմամբ իրականացվել է մշտական վերահսկողություն, իսկ խախտում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ:

Օրենքների թերի լինելու պատճառով վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացումն ու փոխադրումը որևէ կերպ չի կարգավորվում: Արդյունքում լուրջ վտանգ է առաջանում հանրության առողջության և շրջակա միջավայրի համար: «Հանքահանման թափոններ» և «պոչանքների արտանետումներ» հասկացությունների օրենսդրորեն ձևակերպման բացակայության պատճառով բացակայում է վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացման և փոխադրման հստակ իրավական կարգավորումը, ինչը ստեղծում է դրանք հանրության համար վտանգավոր ճանապարհով իրացնելու իրական վտանգ: Մասնավորապես, «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով սահմանված չեն «հանքահանման թափոններ» և «պոչանքների արտանետումներ» եզրույթները, որի հետևանքով այս թափոնները դուրս են մնում համապատասխան իրավական կարգավորումից: Բացի այդ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (նաև՝ Կառավարության՝ սույն ոլորտը կարգավորող որոշումներով) նախատեսված չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշներ, այլ ներկայացված են միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացակարգերը: Մինչդեռ, առանց գիտականորեն հիմնավորված և իրավական ակտի ուժով հստակեցված ազդեցության գնահատականի, հնարավոր չէ կատարել պատշաճ և վստահելի փորձաքննություն: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքը փորձագիտական նշանակություն և արժեք ունեցող փաստաթուղթ է, իսկ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքում տրված փաստաթուղթը՝ վարչական ակտ: Նույնիսկ, եթե ենթադրենք, որ միջավայրի վրա

ազդեցության փորձաքննության իրականացման հստակ չափանիշների սահմանումը դուրս է Նախարարության իրավասության շրջանակներից, մինչև այն է, որպես ոլորտի նկատմամբ հսկողություն իրականացնող և շահագրգիռ մարմին՝ Նախարարությունը պետք է քայլեր ձեռնարկեր՝ ուղղված վերոհիշյալ փորձաքննությունների նորմատիվ իրավական չափանիշների սահմանը:

Թեև ընդունվել են ռիսկայնության գնահատման կանոնները, սակայն դրանց թերի լինելու հետևանքով էներգետիկ կայանների ստուգումների ընթացքում առաջացել են մի շարք բարդություններ: Նախարարությունը 2013 թվականի ընթացքում ՀՀ ընդերքօգտագործման ոլորտում իրականացրել է ռիսկի վրա հիմնված 88 ստուգում, իսկ ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց մասնաճյուղերում, նրանց կողմից շահագործվող էներգատեղակայանքներում կատարվել են ռիսկի վրա հիմնված թվով 67 տեխնիկական ստուգումներ՝ հիմք ընդունելով 06.12.2012թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված N1568-Ն և N1569-Ն որոշումները: 53 տնտեսվարող սուբյեկտների մոտ արձանագրվել են «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջների խախտումներ: Խախտում կատարած կազմակերպությունների նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ, ընկերություններին՝ թույլ տված խախտումները վերացնելու համար տրվել են հանձնարարական-ծանուցումներ՝ 90-օրյա ժամկետում խախտումները վերացնելու համար: Պաշտպանի կողմից նախկինում որպես դրական զարգացում արձանագրվել էր 2012 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված N1568-Ն և N1569-Ն որոշումները: Այդ որոշումների հիման վրա էլ հնարավոր դարձավ իրականացնել ռիսկայնության գնահատման գործընթացը: Սակայն գործնականում այն կիրառելու արդյունքում պարզ է դարձել, որ առաջացել է անհրաժեշտություն՝ սահմանելու ռիսկայնության գնահատման ավելի ճշգրիտ բնութագրող տեխնիկական նորմերի պահանջներ, քանի որ ներկայում գործող ստուգաթերթերով ստուգումների իրականացումը ոչ միշտ է ճշգրիտ արտացոլում ռիսկայնության իրական աստիճանը: Նշվածը իրագործելու համար հարկավոր է համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել Կառավարության նշյալ որոշման մեջ: Նախարարությունը ցուցաբերել է նախաձեռնողականություն՝ մշակելու «ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 6-ի՝ «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1569-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ համապատասխան ստուգաթերթերում անհրաժեշտ է ներառել ստուգման ենթակա էներգատեղակայանքների տեխնիկական վիճակն ավելի ճշգրիտ բնութագրող տեխնիկական նորմերի պահանջները, որոնք կհստակեցնեն ռիսկայնության գնահատման գործընթացը:

Չնայած հանրությանը հուզող մի շարք հարցերի, ինչպես օրինակ՝ ընդերքի օգտագործումը, ՀԷԿ-երի կառուցումը և շահագործման վտանգները, Նախարարությունը կազմակերպել է ընդամենը մեկ հանրային քննարկում: 2013 թվականի հոկտեմբերի 8-ին տեղի են ունեցել «Ընդերքօգտագործման ոլորտում տեղ գտած առկա խնդիրները» թեմայով խորհրդարանական լսումներ՝ ընդերքօգտագործողների, հասարակական

կազմակերպությունների, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, ՀՀ ԳԱԱ-ի երկրաբանական ինստիտուտի, Օրհուսի կենտրոնի ներկայացուցիչների և ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ: Սակայն մտահոգիչ է այն հանգամանքը, որ 2013 թվականի ընթացքում Նախարարությունը կազմակերպել է ընդամենը մեկ քննարկում: Հասարակության իրազեկվածության աստիճանի բարձրացման նպատակով և հաշվի առնելով, որ Նախարարության կողմից կարգավորվող մի շարք խնդիրներ գտնվում են հանրության ուշադրության կենտրոնում, անհրաժեշտ է հանրային քննարկումներ ավելի հաճախակի դարձնել, ինչը կնպաստի Նախարարության գործունեության թափանցիկությանը:

Առաջարկություններ

- Սահմանել խիստ հսկողություն ընդերքօգտագործման օրենսդրության նորմերի և էներգետիկայի բնագավառում տեխնիկական կանոնակարգերի և իրավական այլ ակտերի պահպանման նկատմամբ:
- Մշակել համապատասխան օրենքի նախագիծ՝ վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացման և փոխադրման ոլորտում օրենսդրական բացերի լրացման նպատակով, մասնավորապես՝ նախատեսելով «Հանքահանման թափոններ» և «պոչանքների արտանետումներ» հասկացությունները:
- Օրենսդրորեն սահմանել ռիսկայնության գնահատման ավելի ճշգրիտ բնութագրող տեխնիկական նորմերի պահանջներ:
- Պարբերաբար կազմակերպել և իրականացնել ոլորտին վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ հանրային քննարկումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մշակում և իրականացնում է ագրոպարենային ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականությունը, ապահովում է գյուղատնտեսական գործունեության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անտառերի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականությունը:

2013 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Մի շարք դեպքերում գյուղատնտեսությամբ զբաղվողները չեն ստացել որևէ շահույթ, քանի որ տրվող վարկերի տոկոսադրույքները եղել են չափազանց բարձր, իսկ դրանց մարման ժամկետները՝ խիստ սահմանափակ:
- Բնական աղետների հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվողներին հասցված վնասը Պետության կողմից բավարար չափով չի փոխհատուցվել: Արդյունքում՝ հազարավոր ընտանիքներ մնացել էին առանց ապրուստի միջոցի:
- Դեռևս չի լուծվել գյուղատնտեսական ապահովագրության հարցը, որի արդյունքում գյուղատնտեսությամբ զբաղվողներին բնական աղետների հետևանքով հասցված վնասի փոխհատուցումն ընդհանրապես երաշխավորված չէ:
- Դեռևս չի լուծվել որոշ մարզերում հակակարկտային կայանների հիմնման և ռադիոլակացիոն ցանցի ներդրման հարցը, ինչի արդյունքում մարդիկ շարունակում են տուժել կարկտի հետևանքներից:
- Բավարար քանակի սպանդանոցներ չեն հիմնվել անասնազլխաքանակի մորթը պատշաճ իրականացնելու համար: Արդյունքում՝ տեղի է ունեցել ժամկետն անցած և անհայտ ծագման մսամթերքի վաճառք, որը վտանգում է սպառողի կյանքն ու առողջությունը:
- Նախարարությունը չի իրականացրել արդյունավետ ծրագրեր անասնազլխաքանակի, դրանց մթերատվության բարձրացման, ինչպես նաև ցորենի սերմնաբուծության զարգացման ուղղությամբ:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից 2013 թվականին իրականացվել է 220 ստուգում, որից 91-ը՝ պլանային, 114-ը՝ ոչ պլանային և 15-ը՝ ստուգման արդյունքում

հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված հանձնարարականի կատարման մասին, որոնցից 75 գործով կազմվել է տեղեկանք, իսկ 145 գործով՝ վարչական տուգանք նշանակելու մասին որոշում: Ծառայության պետի 110 հրամաններով իրականացվել են դիտարկումներ 1551 տնտեսավարող սուբյեկտի մոտ, որոնցից 1106-ում հայտնաբերվել են անհամապատասխանություններ և կազմվել է իրացումը կասեցնելու վերաբերյալ 360 արձանագրություն:

- 2013 թվականի ընթացքում միջոցներ են ձեռնարկվել գյուղացիական տնտեսությունների չափերը մեծացնելու և գյուղատնտեսության և գյուղի սպասարկող ենթակառուցվածքների ձևավորումը արագացնելու ուղղությամբ:
- Օրենսդրական դաշտի կարգավորման և բարելավման համար Նախարարությունը մի շարք օրենսդրական առաջարկություններ է ներկայացրել:
- 2013 թվականի ընթացքում գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով՝ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի աստիճանաբար նորացման միջոցառումների շրջանակներում ցածր գներով Հայաստան է ներկրվել գյուղատնտեսական տեխնիկա:

Ընդհանուր վերլուծություն

Մի շարք դեպքերում գյուղատնտեսությամբ զբաղվողները չեն ստացել որևէ շահույթ, քանի որ տրվող վարկերի տոկոսադրույքները եղել են չափազանց բարձր, իսկ դրանց մարման ժամկետները՝ խիստ սահմանափակ: Նախարարությունից հայտնել են, որ գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգով տրամադրվող վարկերի օգտագործման նպատակայնությունը բարելավելու համար տրամադրվող վարկերի որոշ մասն առաջարկվում է տրամադրել վերամշակող ընկերություններին՝ պտուղբանջարեղենի, թարմ հատիկաընդեղենի և խաղողի գնումների համար անհրաժեշտ շրջանառու միջոցները համալրելու համար: Այստեղ հարկ է առանձնացնել Նախարարության որդեգրած այն քաղաքականությունը, որ արտոնությունների տրամադրումը կատարվում է իրենց ցանկալի գյուղատնտեսության բնագավառում: Այդ նպատակով Նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման մեջ լրացում կատարելու, ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է 4 տոկոսային կետով սուբսիդավորել վերամշակող ընկերություններին տրամադրվող վարկերը: Տրամադրված վարկի մոտ 40 տոկոսը պետք է մարվի բերքի գնման ժամանակ, այսինքն, եթե հաշվարկենք նաև բերքի ստացման նպատակներով կատարված ծախսերը, ապա այս դեպքում վարկառուն կարող է և շահույթ չստանալ նույնիսկ հաջորդ տարվա համար տնտեսությունը պահպանելու համար, որն էլ կհանգեցնի լրացուցիչ վարկային բեռի: ՀՀ պետական բյուջեով 2013 թվականին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման համար նախատեսվել էր հատկացնել 634.5 մլն դրամ: Ընդհանուր առմամբ, սկսած 2011 թվականի ապրիլի 1-ից, 2013 թվականի դեկտեմբերի 31-ի

դրությամբ տրամադրվել է 63.0 հազար միավոր վարկ շուրջ 54.7 մլրդ դրամ գումարով: Սուբսիդավորված գումարը կազմել է ընդամենը 1526.0 մլն դրամ: Գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին վարկավորման նպատակով գյուղատնտեսության ոլորտի համար հատկացվել են 14 % տոկոսադրույքով վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ առավել աղքատ (անբարենպաստ) 225 համայնքների համար կրկին պետության կողմից սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: Պաշտպանի կողմից ստացված բողոքների համաձայն՝ տրամադրվող վարկերի սուբսիդավորված տոկոսադրույքները ոչ միշտ են պահպանվել, և հաճախ գյուղացիները ստիպված են եղել պայմանագրում նախատեսված 10 կամ 8% տոկոսադրույքով ստացված վարկի փոխարեն վճարել 14 տոկոսադրույքով: Գտնում ենք, որ տրամադրվող վարկերի ժամկետների և տոկոսադրույքների չափերի առումով անհրաժեշտ է մշակել հատուկ պայմաններ, որոնք գյուղացիների համար ավելի բարենպաստ կդարձնեն նշված ոլորտում վարկավորումը:

Բնական աղետների հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվողներին հասցված վնասը Պետության կողմից բավարար չափով չի փոխհատուցվել: Արդյունքում հազարավոր ընտանիքներ մնացել են առանց ապրուստի միջոցի: Արմավիրի մարզում 2013 թվականին դիտված ուժգին կարկտահարության հետևանքով պատճառված վնասի գնահատման համար ստեղծված համայնքային և մարզային հանձնաժողովների կողմից արձանագրված վնասի չափը թվով 12817 հողօգտագործողների մոտ 11090 հա հողատարածության վրա կազմել է շուրջ 25,3 մլրդ դրամ: Մարզում 2013 թվականի մայիսի 12-ին և 17-ին տեղացած կարկտահարության հետևանքները մեղմացնելու նպատակով՝ ՀՀ կառավարության որոշմամբ, Նախարարության կողմից Արմավիրի մարզպետարանին՝ համաձայն իրենց ներկայացված պահանջարկի, սեղմ ժամկետում հատկացվել է 87 մլն դրամ ընդհանուր արժեքով 24028 կգ գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի սերմացու (որից ընդամենը 22000 կգ ներկրվել է ՌԴ-ից, այդ թվում՝ առվույտի՝ 9000, եգիպտացորենի՝ 9000 և արևածաղկի՝ 4000 կգ)՝ 3795 հեկտարի վրա ցանքեր կատարելու նպատակով, որոնք մարզպետարանի կողմից անհատույց հատկացվել են կարկտահարությունից տուժած 48 համայնքի հողօգտագործողներին, իրականացվել են նաև պատճառված վնասները հատուցելու այլ միջոցառումներ: Չնայած այն հանգամանքին, որ ձեռնարկված համալիր միջոցառումների շնորհիվ մեղմվել են պտղին, բանջարեղենին, բոստանային և կերային մշակաբույսերին կարկտահարության հետևանքով պատճառված վնասները, այնուամենայնիվ, դեռ առկա են մտահոգիչ խնդիրներ պատճառված վնասների արդյունավետ վերացմանն հետ: Վարկային կազմակերպությունների կողմից հողօգտագործողներին հատկացված վարկերի վերադարձման ժամկետը անհատական մոտեցմամբ երկարաձգվել է 1-3 տարով, արտարժույթով տրամադրված վարկերը վերաձևակերպվել են դրամայինի և նույնպես երկարաձգվել 1-3 տարով: Այստեղ խնդիրն այն է, որ կարկտահարված պտղատու այգիները և, հատկապես, խաղողի այգիները վերականգնվում են և դառնում են բերրի 2-3 տարիների ընթացքում, և միանվագ օգնությունը չի կարող համարվել արդյունավետ, քանի որ հաջորդ տարիների ընթացքում նշված անձանց հարկավոր կլինեն միջոցներ տնտեսությունները մշակելու, վերամշակելու, ինչու չէ նաև ապրուստի միջոց, և, հետևաբար, ֆերմերները և գյուղացիները ի վիճակի չեն լինելու

ապահովելու այդ ամենը, ինչպես նաև մարելու կառավարության կողմից տրամադրված վարկերը: Անհասկանալի է, թե ինչպես պետք է գյուղացին մարի տրամադրված վարկը, եթե նա եկամուտ կարող է ակնկալել առնվազն 2-3 տարի հետո: Ելնելով նշված հանգամանքներից, կարելի է եզրակացնել, որ գյուղացին կամ ֆերմերը վարկային պարտավորություններից ելնելով ստիպված է լինելու վաճառել իր տնտեսությունը՝ սեփականությունը, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել արտագաղթի:

Դեռևս չի լուծվել գյուղատնտեսական ապահովագրության հարցը, որի արդյունքում գյուղատնտեսությամբ զբաղվողներին բնական աղետների հետևանքով հասցված վնասի փոխհատուցումը ընդհանրապես երաշխավորված չէ: Նախարարությունից մեզ հայտնել են, որ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծման դրույթն ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում: Նախարարությունը գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման հնարավորությունների գնահատման ուղղությամբ քննարկումներ են իրականացրել տարբեր շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես, քննարկումներ է կազմակերպվել Ապահովագրական ընկերությունների ասոցիացիայի նախագահի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության «Ինգոստրախ» ապահովագրական բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցիչների հետ: 2013 թվականին գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ որոշակի համագործակցություն է եղել «ԻՆԳՈ Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի հետ: Արձակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հուլիսի 13-ի «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 156-Ա հրամանը, որով հաստատվել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար ուսումնասիրություններ կատարող և առաջարկություններ մշակող աշխատանքային խմբի կազմը: Նախարարությունը նախատեսում է Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական կենդանիների ապահովագրական փորձնական ծրագրի իրականացում անասնապահության ոլորտում: Խիստ մտահոգիչ է, որ շարունակվելու է չլուծված մնալ գյուղատնտեսական ապահովագրության խնդիրը: Գյուղատնտեսական ապահովագրության բացակայության պայմաններում գյուղացին զրկվելու է բնական աղետների հետևանքով առաջացած վնասի համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությունից: Այս խնդրին անդրադարձ էր կատարվել նաև ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երկրորդ և երրորդ պարբերական համատեղ զեկույցում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը շարունակում է մնալ բավականին խոցելի, և հատուկ շեշտվել էր, որ ոլորտի ապահովագրությունը կարող է մեծապես նպաստել գյուղատնտեսության զարգացմանը, երաշխավորել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքի ընտրության ազատության իրավունքը, քանի որ հակառակ դեպքում՝ գյուղատնտեսության ոլորտի թերի լինելը խոցելի է դարձնում

գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքի ընտրության ազատության իրավունքը:

Դեռևս չի լուծվել որոշ մարզերում հակակարկտային կայանների հիմնման և ռադիոլակացիոն ցանցի ներդրման հարցը, ինչի արդյունքում մարդիկ շարունակում են տուժել կարկտի հետևանքներից: 2013 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի համակարգում գործում են ընդամենը 2 ռադիոլակացիոն կենտրոններ, 4 մարզային հակակարկտային կենտրոններ և 154 ռադիոմոնիթորային հեռակառավարմամբ հակակարկտային գազագեներատորային կայանքներ (որից 9-ը շարժական), որոնք տեղակայված են՝ ՀՀ Արագածոտնի մարզում՝ 30 հատ, ՀՀ Արարատի մարզում՝ 48 հատ, ՀՀ Արմավիրի մարզում՝ 69 հատ և ՀՀ Լոռու մարզում՝ 7 հատ: Կայանքների շնորհիվ կարկտահարությունից պաշտպանված են վերոգրյալ մարզերի 50 համայնքի ընդամենը 13 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ: Գազագեներատորային հակակարկտային կայանքներն առաջնահերթ տեղակայվում են տվյալ տարածաշրջանի առաջին պաշտպանական գոտում: Առաջին պաշտպանական գոտում ամբողջությամբ կայանքներ տեղակայելուց հետո՝ հաջորդ փուլում, դրանք պետք է տեղակայվեն նույն տարածաշրջանի 2-րդ և 3-րդ պաշտպանիչ գոտիներում: Մարզում նախատեսվել է կառուցել 50 հակակարկտային կայան, իսկ այլ կազմակերպությունների կողմից կառուցված 32 կայանները՝ համալրել հեռակառավարման համար անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումներով և հանձնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շահագործմանը: Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 25-ի նիստի N 24.11/[54222]-10 արձանագրության 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հակակարկտային կայանքների կառուցման պատվիրատուի լիազորությունը վերապահված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը, իսկ Նախարարությունը վերջինիս հետ համագործակցում է հակակարկտային կայանքների տեղակայման տարածքների ընտրության գործում: Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ ՀՀ տարածքում դեռ ոչ բոլոր մարզերն են համալրված հակակարկտային տեղակայանքներով և ռադիոլակացիոն ցանցով, ինչն իր հերթին կարող է հանգեցնել 2013 թվականի ընթացքում տեղի ունեցած բնական աղետների կրկնությանը չպաշտպանված տարածքում: Հարկավոր է ոչ միայն վերականգնել պատճառված վնասը, այլ կանխարգելել դրանց առաջացումը, որն ավելի մատչելի է և խնդրի համար ավելի արդյունավետ լուծում է:

Բավարար քանակի սպանդանոցներ չեն հիմնվել անասնազվաքանակի մորթը պատշաճ իրականացնելու համար: Արդյունքում՝ տեղի է ունեցել ժամկետն անցած և անհայտ ծագման մսամթերքի վաճառք, որը վտանգում է սպառողի կյանքն ու առողջությունը: Հայաստանի և Հունաստանի կառավարությունների միջև գյուղատնտեսության զարգացմանն առնչվող համագործակցության շրջանակներում Միավորված Ազգերի Կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից 2009 թվականից իրականացվում է «Հայաստանում

սպանդանոցների զարգացման» ծրագիրը, որի նպատակն է հանրապետությունում հիմնել մոդելային մարզային սպանդանոցներ և զարգացնել տեղական կազմակերպությունների կարողությունները՝ մսի և մսամթերքի անվտանգության և որակի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում 2012 թվականի դեկտեմբերի 19-ին մրցությային կարգով ընտրված հինգ մասնավոր ընկերությունների՝ Խասիկ Տիտանյան ԱԶ (ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն), «Արալեռ» ՍՊԸ (ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Վայք), «Զօր» ՍՊԸ (ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գեղադիր), «Արգնի ԹՏԽ» ԲԲԸ (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արգնի) և «Ագատ 777» ՍՊԸ (ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Վարդենուտ) և Նախարարության միջև ստորագրված համագործակցության պայմանագրի համաձայն՝ մասնավոր ընկերությունները պարտավորվել են կառուցել կամ վերակառուցել մոդելային ժամանակակից սպանդանոցներ, որոնք կհագեցվեն ծրագրի շրջանակներում ձեռք բերված սպանդանոցների համար անհրաժեշտ սարքավորումներով: Ծրագրի գործողության ժամկետը երկարացվել է մինչև 2014 թվականի մայիսի 1-ը: 2013 թվականի ընթացքում Օձուն համայնքում կառուցվող սպանդանոցի շինարարական աշխատանքների հիմնական մասը ավարտվել է, իսկ մյուս սպանդանոցների կառուցման շինարարական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: Սպանդանոցների համար նախատեսված սարքավորումների՝ մրցությային կարգով ձեռք բերման փաստաթղթերի վերջնական փաթեթի կազմման գործընթացն ավարտվել է 2013 թվականի օգոստոս ամսին, իսկ սեպտեմբեր ամսից ՊԳԿ-ի Հոմի գրասենյակի մատակարարման բաժնի կողմից հայտարարվել է միջազգային մրցույթ, որի արդյունքներն ամփոփվել և գնահատվել է 2013 թվականի դեկտեմբեր ամսին: Ներկայումս ՊԳԿ ղեկավարությունը և մատակարար հավանական ընկերությունը բանակցում են սարքավորումների տեղափոխման, մոնտաժման աշխատանքների ժամկետների և այլ հարցերի շուրջ՝ համապատասխան պայմանագիր կնքելու նպատակով: Ըստ նախնական տվյալների սարքավորումները հանրապետություն կտեղափոխվեն 2014 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում: 2012-2013թթ. մասնավոր ներդրումների միջոցներով հանրապետությունում կառուցվել են սպանդանոցներ ՀՀ Կոտայքի մարզի Զորավան և ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքներում: «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումից հետո կկանոնակարգվի նաև անասնազվաքանակի սպանդանոցային մորթի հիգիենային ներկայացվող պահանջները: Չնայած «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման առկայությանը՝ անհրաժեշտ է նշել, որ գործնականում չեն կատարվում նշված իրավական ակտերի պահանջները, ինչը կարելի է պայմանավորել Կառավարության որոշմամբ ոչ հստակ մեխանիզմների սահմանմամբ և հանրապետությունում սպանդանոցների ցանցի բացակայությամբ: Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման պահանջները չկատարելը հանդիսանում է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված՝ տուգանքի ձևով վարչական պատասխանատվության ցածր չափերի արդյունք, այնինչ՝ պիտանիության ժամկետն անցած և անհայտ ծագման մսամթերքի վաճառքի՝ գործնականում հաճախ

հանդիպող դեպքերն իրական վտանգ են ներկայացնում սպառողի կյանքին ու առողջությանը: Գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման պահանջները կղադարեն դեկլարատիվ բնույթ կրել, եթե մորթը սպանդանոցներում իրականացնելն ամրագրվեր օրենքում՝ որպես պարտադիր պահանջ: Նշված խնդրի լուծումն իսպառ կվերացնի անասնազվաքանակի մորթը փողոցներում և բակերում, ինչն էլ իր հերթին կբացառի տարբեր հիվանդությունների ներթափանցումը ստացված մսամթերքի մեջ: Նշենք, որ ՀՀ Սահմանադրության 31.1-րդ հոդվածը սահմանում է, որ. «Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ»: Նշված նորմի մեկնաբանության համաձայն՝ սպառողի իրավունքն է ձեռք բերել իր պահանջները բավարարող, որակյալ ու անվտանգ ապրանք: Հատկանշական է, որ, «պետությունը պաշտպանում է սպառողների շահերը» ձևակերպման մեջ «պաշտպանություն» եզրույթն ունի ավելի լայն իմաստ, քան դրա սովորական իրավաբանական բովանդակությունն է (մինչև այս կամ այն իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակի վերականգնումը): Այս հարցում պաշտպանությունը, նախ և առաջ, ենթադրում է պետության պարտականությունը՝ երաշխավորել սպառողների շահերի իրավական ապահովման և պաշտպանության պատշաճ կառուցակարգը, այնուհետև գործի դնել, կենսագործել այդ կառուցակարգը: Իսկ սպառողների շահերի «պաշտպանության» երկրորդ բաղադրատարրը պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրավապահպան և իրավապաշտպան գործունեությունն է՝ ուղղված սպառողների ոտնահարված իրավունքների ու շահերի պաշտպանությանը: Վերոնշյալ նորմի մեկնաբանությունը հստակ նշում է, որ պետությունը պարտավոր է իրականացնել օրինական միջոցառումներ՝ ապրանքների որակի վերահսկողության ուղղությամբ: Ավելին, այդ միջոցառումները պետք է նախատեսված լինեն օրենքով: Այսպիսով, Սահմանադրության 31.1-րդ հոդվածի ուժով պետությունը, ի թիվս այլ պատասխանատվության, կրում է պոզիտիվ սահմանադրական պարտավորություն՝

- պաշտպանել սպառողների, այսինքն՝ բոլոր նրանց շահերը, ովքեր իրենց կենսական պահանջները բավարարելու, ամենօրյա կարիքները հոգալու համար ձեռք են բերում տարատեսակ ապրանքներ,
- օրենսդրորեն նախատեսել ապրանքների որակի վերահսկողությանն ուղղված միջոցառումներ, մշակել դրանց կառուցակարգերը և իրականացնել դրանք,
- ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ՝ անորակ կամ ոչ պատշաճ որակի ապրանքներ արտադրող և այդ կերպ սպառողների իրավունքները խախտող սուբյեկտների նկատմամբ:

Նշվածից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում սպառողների իրավունքների պաշտպանությունը սահմանադրական պահանջ է, պետության սոցիալ-տնտեսական, իրավական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը, ուստի կարևոր է սպառողների պաշտպանության երաշխիքների գործուն համակարգի ստեղծումը:

Նախարարությունը չի իրականացրել արդյունավետ ծրագրեր անասնազվաքանակի, դրանց մթերատվության բարձրացման, ինչպես նաև ցորենի սերմնաբուծության զարգացման ուղղությամբ: Այսպես, ըստ Նախարարությունից ստացված տեղեկության՝ 2013

թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ հանրապետությունում մսի իրացման ծավալները ավելացել են 1.9 %-ով կամ 2.4 հազ. տոննայով, կաթինը՝ 2.8 %-ով կամ 16.7 հազ. տոննայով: ՀՀ կառավարության կողմից հաստատված տավարաբուծության 2007-2015թթ. ծրագիրը նախատեսում է եվրոպական երկրներից ներկրել բարձր կաթնատվություն ունեցող ցեղատեսակների երինջներ: Ծրագրի շրջանակներում մինչ այսօր ներմուծվել է մոտ 2000 խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակ, որոնցից մի մասը՝ շուրջ 35-40 տոկոսը, անկել է ներմուծումից հետո առաջին 1-2 տարվա ընթացքում, իսկ մնացած գլխաքանակը չի ապահովում ծրագրով նախատեսված կաթնատվությունը, քանզի մեր երկրում տավարաբուծությունը իրականացվում է ավանդական հեռագնաց արոտավայր օգտագործելու եղանակով, իսկ ներկրված կենդանիները պահանջում են հատուկ պահվածք: Ոլորտի տարբեր մասնագետներ գտնում են, որ ավելի արդյունավետ կլինի համեմատաբար ավելի քիչ ներդրում պահանջող հայկական ավանդական կովկասյան գորշ ցեղատեսակի վրա կատարել հատուկ տոհմային սելեկցիոն բարելավման աշխատանքներ՝ կիրառելով արհեստական սերմնավորման մեթոդը՝ կովկասյան գորշ ցեղատեսակը բարելավելով շվից ցեղատեսակով և ստանալ ավելի բարձր մթերատվություն ապահովող և մեր բնակլիմայական պայմաններին համապատասխանող կենդանիներ, որոնք ի վիճակի են օգտագործել տեղի արոտավայրերը: Ըստ ոլորտի մասնագետների՝ այդ փորձը Հայաստանում ներդրվել է շուրջ 12 տարի առաջ՝ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, և կաթնատվությունը 1800 կիլոգրամից բարձրացել է մինչ 3800 կիլոգրամի: Ինչպես նաև, հաշվի առնելով ծրագրի անարդյունավետությունը, հարկավոր է դադարեցնել ծրագրի նմանատիպ իրականացումը, և մթերատվությունը բարելավել արդեն ներկրված անասուններից ստացված սերունդների միջոցով՝ կատարելով համապատասխան աշխատանքներ, որը համեմատաբար ավելի մատչելի կլինի, քան դրանք ներկրելը: Դրանով իսկ հնարավորություն կստեղծվի աջակցել մեր ֆերմերներին, և ՀՀ բյուջեով նախատեսված միջոցները կօգտագործվեն երկրի ներսում: Գյուղացիներին և ֆերմերներին նաև մտահոգության տեղիք է տալիս Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շրջանակներում ներկրված էլիտային վերարտադրության սերմացուների անորակ լինելը և կառավարության կողմից փոխզիջման չգնալը: Համաձայն «Սերմերի գործակալության» ՊՈԱԿ-ի և ծրագրով շահառու ճանաչված անձանց և կազմակերպությունների միջև կնքված փոխառության համաձայնագրի՝ նախատեսված քանակի և որակի սերմացու ետ չվերադարձնելու դեպքում, այն է՝ 1:2 հարաբերակցությամբ, շահառուները պարտավորվում են ստացած աշնանացան ցորենի յուրաքանչյուր կիլոգրամ էլիտային վերարտադրության սերմնացուի համար վճարել 700 ՀՀ դրամ: Այստեղ խնդիրն այն է, որ պայմանագրերում նախատեսված չէ անհաղթահարելի գործոնների դեպքում ծագած խնդիրների լուծումը: Միաժամանակ շահառուները նաև նշել են, որ ներկրված սերմերն անորակ էին, և էլնելով այդ հանգամանքից, նրանք չէին կարող ետ վերադարձնել համաձայնագրերով սահմանված ցորենի սերմնացուի չափը: Պաշտպանի միջամտությամբ ՀՀ կառավարության կողմից շահառուների պարտավորությունները մասնակիորեն զիջվել են և 700 դրամի փոխարեն յուրաքանչյուր կիլոգրամ սերմնացուի դիմաց հնարավորություն է ընձեռել «Սերմերի գործակալության» ՊՈԱԿ-ին վճարել 420 դրամ՝ յուրաքանչյուր ամսվա համար 20 տոկոսի

չափով: Իսկ նշված պայմանները չընդունած և համապատասխան համաձայնագրեր չկնքած շահառուների գործերը սահմանված կարգով ներկայացվել են համապատասխան դատական ատյաններին:

Չնայած Նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից 2013 թվականին իրականացվել են խախտումների հայտնաբերմանն ու կանխմանն ուղղված տարբեր միջոցառումներ, այնուամենայնիվ, ոլորտում առկա են օրենսդրորեն հաստատված նորմատիվների չպահպանման վերաբերյալ որոշ խախտումներ: Նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից 2013 թվականին իրականացվել է 220 ստուգում, որից 91-ը՝ պլանային, 114-ը՝ ոչ պլանային և 15-ը՝ ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված հանձնարարականի կատարման մասին, որոնցից 75 գործով կազմվել է տեղեկանք, իսկ 145 գործով՝ վարչական տուգանք նշանակելու մասին որոշում: Ծառայության պետի 110 հրամաններով իրականացվել են դիտարկումներ 1551 տնտեսավարող սուբյեկտի մոտ, որոնցից 1106-ում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, և կազմվել է իրացումը կասեցնելու վերաբերյալ 360 արձանագրություն, իսկ ՀՀ Վարչական դատարան է ներկայացվել 25 հայցադիմում: Ողջունելի է այն հանգամանքը, որ խախտում թույլ տված մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից կատարված խախտումների բացահայտման արդյունքում վերջիններիս նկատմամբ կիրառվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական տույժեր: Սննդի անվտանգության այս համակարգի միջոցով իրականացվում են մշտադիտարկումներ և ստուգումներ, որոնք ուղղված են մարդու կյանքի և առողջության համար վտանգավոր սննդամթերքի արտադրության և շրջանառության կանխմանն ու արգելմանը: Լիազոր մարմնի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում՝ վտանգավոր մի շարք սննդամթերքների ներմուծումը կամ իրացումը կասեցվել ու արգելվել է, իսկ անորակ սննդամթերքը՝ ոչնչացվել: Համակարգը գործում է ամբողջ հանրապետության տարածքում. գոյություն ունեն դրա գործունեությունն ապահովող մարզային կենտրոններ, ինչպես նաև սահմանային հսկիչ կետեր: Այնուամենայնիվ, հարկավոր է ոչ միայն ծավալուն աշխատանքներ կատարել խախտումները հայտնաբերելու և կանխելու ուղղությամբ, այլ նաև պետք կիրառվեն նախականիման և կանխարգելման այլ մեխանիզմներ և/կամ համալիր միջոցառումներ՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Նման քաղաքականությունը կնպաստի առանձին շուկաներում անորակ և վնասակար սննդի զգալի նվազմանը:

Առաջարկություններ

- Գյուղատնտեսությամբ զբաղվողներին տրամադրվող վարկերը, դրանց սուբսիդավորման, ժամկետների և տոկոսադրույքների չափերը պետք է հատկացվեն ավելի բարենպաստ պայմաններով՝ հաշվի առնելով վերջիններիս շահերը:
- Անհրաժեշտ է մշակել ավելի ճկուն մեխանիզմներ՝ արդյունավետ կերպով ապահովելու համար բնական աղետների հետևանքով գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողներին հասցված վնասի փոխհատուցումը:

- Մշակել մեխանիզմներ գյուղատնտեսական ապահովագրման ինստիտուտի արդյունավետ ներդրման համար, մասնավորապես՝ ներմուծելով պետական օժանդակության համակարգը ապահովագրության շրջանակներում:
- Հաշվի առնելով բնական աղետների կրկնության հավանականությունը՝ հարկավոր է գյուղատնտեսության նշանակության տարածքներում հիմնել հակակարկտային տեղակայանքներ և ներդնել ռադիոլոկացիոն ցանց:
- Անասնազվաքանակի մորթը պատշաճ իրականացնելու համար ՀՀ տարածքում պետք է հիմնվեն բավարար քանակի սպանդանոցներ: Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել անասնազվաքանակի մորթը սպանդանոցներում իրականացնելու պահանջը, որն էլ կհանդիսանա հասարակության առողջության պաշտպանության կարևոր երաշխիք:
- Հետևողական գտնվել, որպեսզի ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվող և իրականացվող ծրագրերը լինեն արդյունավետ, հատկապես անասնազվաքանակի, դրանց մթերատվության բարձրացման, ինչպես նաև ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության ոլորտներում:
- Նախարարության կողմից պետք է մշակվեն և կիրառվեն սննդամթերքի անվտանգության պահպանման ոլորտում խախտումների նախականիման և կանխարգելման լրացուցիչ մեխանիզմներ և/կամ համալիր միջոցառումներ՝ ուղղված տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պաշտպանության նախարարությունը հսկողություն է իրականացնում պարտադիր զինվորական ծառայության գորակոչի և վարժական հավաքների անցկացման նկատմամբ, ապահովում է զինված ուժերում պաշտպանության բնագավառի օրենսդրության պահանջների կատարումը, իրականացնում է ընդհանուր կամ մասնակի զորահավաքների անցկացումը, իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանությունը և այլն:

2013 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Հրամանատարների ոչ բավարար ուշադրության հետևանքով մեկ տարվա ընթացքում բանակում մահացել է 16 զինծառայող՝ որոնցից 8-ը՝ ինքնասպանության, 4-ը՝ հիվանդության, 3-ը՝ սպանության և 1-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման պատճառներով:
- Պաշտոնական տվյալներով գրանցվել է ոչ կանոնադրային հարաբերությունների 241 դեպք, ինչպես օրինակ՝ զինծառայողին ծաղրածանակի կամ հալածանքի եթարկելը, նրա պատիվն ու արժանապատվությունը ստորացնելը:
- Առողջական խնդիրներով զորակոչիկները նախապես չեն տեղեկացվել իրենց հակացուցված ծառայության ձևերի մասին, օրինակ՝ ֆիզիկական մեծ լարվածություն պահանջող աշխատանքներ, գիշերային հերթապահություն և այլն: Արդյունքում լրջորեն վտանգվել է մի շարք զինծառայողների առողջությունը, ընդհուպ մինչև հաշմանդամություն:
- Ձորակոչիկները բազմաթիվ դեպքերում չեն անցել մանրակրկիտ բուժհետազոտություն: Ըստ պաշտոնական տվյալների ռազմաբժշկական հանձնաժողովների որոշումների վերաբերյալ ստացվել է 728 բողոք:
- Բազմաթիվ դեպքերում անձանց չեն տրամադրվել ռազմաբժշկական հանձնաժողովների որոշումները, ինչի հետևանքով անձինք փաստացի զրկվել են այդ որոշումները բողոքարկելու իրավունքից:
- Ի տարբերություն նախորդ տարվան, զորամասերի հրամանատարները չեն վերհանել զինծառայողների առողջությանը վնասող հրամանների դեպքերը: Արդյունքում, նման հրամաններ տված անձինք չեն պատժվել, և նման դեպքերը չեն կանխվել:
- Չնայած, որ գրանցվել են զորամասերում զինծառայողներին թերի բուժօգնության բազմաթիվ բողոքներ, Նախարարությունը հայտնաբերել է ընդամենը 2 դեպք, որոնց կապակցությամբ նույնիսկ քրեական գործ չի հարուցվել:

- Ջորամասերում հայտնաբերվել է զինծառայողներին պարենամթերքի բաշխման չարաշահման 51 դեպք, որոնցից ընդամենը 7-ով է քրեական գործ հարուցվել, ինչը կարող է վկայել, որ Նախարարությունը նման դեպքերը քննել է մակերեսորեն: Այսինքն՝ գրանցված դեպքերի շուրջ 86%-ով չեն իրականացվել բոլոր հնարավոր քննչական գործողությունները (հարցաքննություններ, առերեսումներ և այլն):
- Նախարարության կողմից դեռևս չի լուծվել մի շարք զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդիրը:
- Պարտադիր զինվորական ծառայության վայրի վիճակահանությամբ ընտրության կարգը ներդրվել է բացթողումներով: Մասնավորապես՝ այն սահմանող Պաշտպանության նախարարի հրամանի նույնիսկ սկզբունքները հասանելի չեն հանրությանը, և պարզ չէ, թե նման վիճակահանության դեպքում ինչպես են ապահովվելու արտոնություն ունեցող զորակոչիկների իրավունքները (օրինակ՝ միայնակ և թոշակառու հոր կամ մոր միակ զավակը կամ ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկը):
- Բազմաթիվ դեպքերում խախտվել է սպաների պայմանագիրը վաղաժամկետ լուծելու իրավունքը, քանի որ բարձրագույն հրամանատարական կազմը ամիսներով ձգձգել է զեկուցագրի ստորագրումը:

Արձանագրված դրական զարգացումները

- Ջինծառայողների կողմից կանոնադրային կանոնների և կանոնադրային փոխհարաբերությունների խախտման դեպքերը կանխարգելելու նպատակով իրականացվել են պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի միջոցառումներ:
- 2013 թվականին թվով 37 զինծառայողներ ապահովվել են բնակարաններով, իսկ 1204 զինծառայողի տրամադրվել է վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում:
- Ջինծառայողների իրավագիտակցության բարձրացման նպատակով Նախարարության կողմից անցկացվում են մարդու իրավունքների վերաբերյալ տարբեր դասընթացներ և դասախոսություններ:
- Ընդունվել է Ջինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության նոր կարգը:

Ընդհանուր վերլուծություն

Նախարարության կողմից հայտնած պաշտոնական տվյալների համաձայն՝ 2013 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում գրանցվել 30 մահվան դեպք: Հարկավոր է հաշվի առնել, որ մահվան պատճառները տարբերվել են: Այսպես, գրանցվել են՝ շփման գծում հրադադարի խախտման արդյունքում հակառակորդի կրակից 6 սպանության, ծառայության հետ կապված ավտովթարից 4, դժբախտ պատահարից 3 և ականի պայթյունից 1 մահվան դեպքեր: Այսինքն կարող ենք եզրակացնել, որ նշված 14 դեպքերը Նախարարության ուղղակիորեն վերագրելի չեն: Միաժամանակ, հրամանատարության ոչ բավարար

ուշադրության հետևանքով մեկ տարվա ընթացքում բանակում մահացել է 16 զինծառայող՝ որոնցից 8-ը՝ ինքնասպանության, 4-ը՝ հիվանդության, 3-ը՝ սպանության և 1-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման պատճառներով: Միայն Նախարարության կողմից բոլոր նշված դեպքերի պատշաճ քննության, պատասխանատուներին հայտնաբերման և նշված արատավոր երևույթների, ինչպիսիք են՝ սպանությունը, ինքնասպանության հասցնելը, ոչ պատշաճ բժշկական օգնություն տրամադրելը, կանխարգելման հստակ և թափանցիկ միջոցառումների իրականացման պարագայում է հնարավոր դրանց կանխումը: Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի «2013թ. զինված ուժերում մահացության դեպքերի մասին» տեղեկանքին: Այսպես, տեղեկանքում նշված է, որ 2013 թվականին գրանցվել է 31 մահվան դեպք: Չնայած այն հանգամանքին, որ առերևույթ նկատվում է հակասություն Նախարարության տրամադրած տեղեկությունների և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների միջև, ինչն իրականում բացակայում է, քանի որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի մշակած տեղեկանքում ներկայացված երկու զինծառայողների մահվան դեպքերը վերագրելի չեն եղել ՀՀ զինված ուժերին, քանի որ այդ անձինք՝ Թովմաս Առաքելյանը և Ալեքսանդր Ատավինը (տե՛ս Աղյուսակ 1. Կետ 11 և 15) հանդիսացել են ՌԴ զինված ուժերի այլ ոչ ՀՀ զինված ուժերի սպաներ: Այսինքն՝ նշված տեղեկանքում ներկայացված են ՀՀ զինված ուժերի 29 զինծառայողների մահվան դեպքեր: Նախարարության կողմից ներկայացված 30 մահվան դեպքերը հանդիսանում են պաշտոնական և վերջնական տվյալներ:

Նախարարության կողմից հայտնած տվյալների համաձայն՝ 2013 թվականի ընթացքում զինծառայողների կողմից կանոնազրգային կանոնների և կանոնադրային փոխհարաբերությունների խախտման վերաբերյալ հայտնաբերվել են ընդհանուր թվով շուրջ 241 դեպքեր: Նախարարությունից հայտնել են նաև, որ ՀՀ զինված ուժերի զորամասերում բացասական երևույթների կանխման, զինծառայողների շրջանում արատավոր բարքերը, դրանց դրսևորմանը նպաստող հանգամանքների, պայմանների ու շարժառիթների վերացման ուղղությամբ զորամասերի հրամանատարության, ՀՀ ԱԱԾ, ոստիկանության, զինվորական իրավապահ մարմինների համակարգված աշխատանքների իրականացման նպատակով դրանց կիրառումը բացառելու համար նախապատրաստվել է զինծառայողների կանոնազրգային հարաբերությունների վրա բացասաբար ազդող արատավոր երևույթների, իրավիճակի գնահատման, բացահայտման և կանխարգելման միջոցառումների պլան: Ողջունելի է նաև այն, որ Նախարարության կողմից նման երևույթները բացառելու նպատակով անցկացվում են մարդու իրավունքների վերաբերյալ տարբեր դասընթացներ և դասախոսություններ: Թեև կանոնազրգային կանոնների և կանոնադրային փոխհարաբերությունների խախտման դեպքերի կապակցությամբ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի պահանջները՝ 10 զորամասերի հրամանատարներ ենթարկվել են պատասխանատվության և Նախարարության կողմից իրականացվել են համալիր միջոցառումներ այս խնդրի կանխարգելման նպատակով, այնուամենայնիվ, նշյալ դեպքերի քանակը վկայում է այն մասին, որ շարունակում է թերի մնալ զինծառայողների մոտ զինվորական կարգապահության պահանջների անշեղ կատարման պարտքի, անձնական

արժանապատվության և զինվորական պարտքի ու պատվի գիտակցման կայացումը: Նման մթնոլորտը միայն խթանում է զինվորական կարգապահության կանոնների խախտմանը: Խիստ մտահոգիչ են նման դեպքերի չափազանց մեծ քանակը և ոչ բավարար պատասխանատվության միջոցների կիրառումը նաև նրանով, որ կարգապահության կանոնների խախտումներն են հաճախ հանդիսանում զինծառայողների սպանության, ինքնասպանության կամ դրան հասցնելու պատճառը: Հարկավոր է հաշվի առնել, որ նշված 241 դեպքերը հանդիսանում են պաշտոնական տվյալներ: Այսինքն՝ դրանք բոլորը գրանցվել էին համապատասխան հրամանատարների կողմից: Սակայն կանոնազրքային կանոնների և կանոնադրական փոխհարաբերությունների խախտման դեպքերը հաճախ կրում են լատենտային (գաղտնի) բնույթ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գործառնաբերում տեսախցիկների տեղադրման և/կամ դրանց թվաքանակի ավելացման ուղղությամբ: Միայն բոլոր նման դեպքերի բացահայտման և պատասխանատուների նկատմամբ պատասխանատվության խիստ միջոցների ձեռնարկման դեպքում է հնարավոր նվազեցնել կարգապահության կանոնների խախտումների դեպքերը և էապես բարելավել մթնոլորտը զինված ուժերում:

Առողջական խնդիրներով զինվորական ծառայության գորակոչված զինծառայողների իրավունքների հետ կապված հարցերը շարունակում են մնալ չլուծված: Այսպես, համաձայն Նախարարության թիվ 410 հրամանի՝ եթե շարքային կազմի պարտադիր զինծառայողն անհատական կարգով ճանաչվում է պիտանի ծառայությանը՝ սահմանափակումով, ապա ԿՌԲՀ-ի որոշման մեջ նշվում է, թե ծառայության որ ձևերն են տվյալ անձին հակացուցված (օրինակ՝ ֆիզիկական մեծ լարվածություն պահանջող աշխատանքներ, ցրտի կամ խոնավության երկարատև ազդեցություն, զիջերային հերթապահություն, և այլն): Այսինքն, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ԿՌԲՀ-ի կողմից հետազոտված շարային ծառայությանը սահմանափակումներով ենթակա զինծառայողը, ստանալով ԿՌԲՀ-ի համապատասխան որոշումը, տեղեկանում է, թե ծառայության որ ձևերն են տվյալ անձին հակացուցված: Ողջունելի է ՀՀ պաշտպանության նախարարի 2013թ. ապրիլի 8-ի N 410-Ն հրամանը, որով գործողության դրված «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգի» համաձայն՝ զինծառայությանը պիտանելիության հողվածներով ՀՀ ԶՈՒ ժամկետային պարտադիր զինծառայողներին հաստիքներին նշանակման հակացուցումները որոշելու, ՀՀ ԶՈՒ զինծառայողներին բուժական ֆիզկուլտուրայի խմբերում ընդգրկելու և թույլատրվող վարժությունների ցանկը սահմանելու նպատակով 2014թ. հունվարից գործում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության պիտանելիության սահմանափակումների հարցերը կարգավորող ձեռնարկ: Սակայն գորակոչիկները նախքան զինվորական ծառայության անցնելը ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից ենթարկվում են փորձաքննության: Ավելին, համապատասխան հանձնաժողովը գորակոչիկների առողջական վիճակի մասին գրավոր եզրակացություն է տալիս, եթե նրանք պիտանի են ճանաչվել կամ պիտանի են սահմանափակումով: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Պաշտպանի կողմից առաջարկություն էր արվել, որ նախքան զինվորական

ծառայության փաստացի անցնելը, առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկներին հնարավորություն ընձեռվի ծանոթանալու իրենց վերաբերող որոշմանը և այդ որոշման մեջ հստակ նշվի, թե ծառայության, որ ձևերն են վերջիններիս հակացուցված: Առողջական խնդիրներով զինապարտները ծառայության իրենց հակացուցված ձևերի մասին տեղեկանում են պարտադիր ժամկետային զինվորական ծառայության պիտանելիության սահմանափակումների հարցերը կարգավորող ձեռնարկի միջոցով, որի վերաբերյալ իրազեկումն իրականացվում է զորամասի բուժծառայության և հրամանատարական կազմի միջոցով: Անհրաժեշտ է մշակել զորակոչիկների՝ իրենց վերաբերող ռազմաբժշկական հանձնաժողովների որոշման և այդ որոշման մեջ հստակ նշված ծառայության հակացուցված ձևերին ծանոթանալու առավել հստակ և արդյունավետ միջոցներ, նախքան զինվորական ծառայության փաստացի անցնելը: Նման մոտեցումը կնպաստի նաև զինծառայողի մարտական ոգու բարձրացմանը, քանի որ վերջինս հստակ կպատկերացնի թե որտեղ և ինչ պայմաններում է անցնելու զինվորական ծառայությունը: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ դեռևս օրենքով սահմանված չէ «պիտանի ծառայության՝ սահմանափակումով» եզրույթը: Նշվածը հարկավոր է սահմանել ՀՀ օրենքով՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության պահանջն այն մասին, որ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Նման օրենսդրական կարգավորումը կնպաստի նաև նշված անձանց իրավական կարգավիճակի հստակեցմանը:

2013 թվականին գրանցվել են Նախարարության ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումների վերաբերյալ շուրջ 728 դիմում-բողոքներ: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կրկնակի փորձաքննության արդյունքում 21 դիմում - բողոքների վերաբերյալ որոշումները փոխվել են: Նախարարությունից հայտնել են, որ որոշման փոփոխության պատճառը հանդիսացել է թերի հետազոտումը կամ զորակոչիկների կողմից իրականացված լրացուցիչ հետազոտությունները: Նախարարությունից հայտնել են նաև, որ նշված որոշումների փոփոխության մեջ հանձնաժողովի բժշկի սխալ չի եղել: Բողոքների նման քանակը խիստ մտահոգիչ է, քանի որ դրանից կարելի է ենթադրել բժշկական հանձնաժողովների անարդյունավետության և/կամ դրանց նկատմամբ հանրության վստահության պակասի մասին: Շարունակում է չլուծված մնալ նաև ռազմաբժշկական հանձնաժողովների հետազոտությունների թափանցիկության հարցը: Նշված հարցի վերաբերյալ Նախարարությունից հայտնել էին, որ բժիշկների կողմից սխալի դեպքեր չէին արձանագրվել: Միաժամանակ, պարզ չէ, թե ինչպես են բացակայել բժիշկների կողմից սխալի դեպքերը, այն պարագայում, երբ բժշկական հանձնաժողովի կողմից իրականացվել է թերի հետազոտում: Նման դիրքորոշումից պարզ չէ՝ թերի հետազոտման համար որևէ բժիշկ պատասխանատվության ենթարկվել է թե՛ ոչ: Այսպես օրինակ՝ Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում, Ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության աշխատակիցների աջակցությամբ առողջական բարդ խնդիրներ ունեցող երկու զորակոչիկների ճանաչել էին ոչ պիտանի զինծառայության համար և սահմանված կարգով նրանց տրվել էր տարկետման իրավունք: Մինչդեռ, ռազմաբժշկական հանձնաժողովից մաշկային հիվանդություն ունեցող քաղաքացուն ուղարկել էին կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով, իսկ մյուս դեպքում ռազմաբժշկական հանձնաժողովի հոգեբույժը քաղաքացուն ուղեգրել էր ստացիոնար հետազոտման, սակայն

զինկոմիսարիատի ղեկավարը մերժել էր առանց պատճառաբանության՝ ենթադրելով, որ քաղաքացին պիտանի է ծառայության համար: Պաշտպանին հասցեագրվել էին բազմաթիվ նման այլ բողոքներ: Ակնհայտ է, որ Նախարարության ռազմաբժշկական հանձնաժողովների պարտավորությունն է բոլոր դեպքերում իրականացնել գորակոչիկների համալիր հետազոտում: Թերի հետազոտումները և դրանց համար բավարար խստությամբ բժիշկներին պատասխանատվության չենթարկելը նպաստում է գորակոչիկների և զինծառայողների մոտ առողջական լուրջ խնդիրների առաջացմանը:

Գրանցվել են դեպքեր, երբ գորակոչիկի կողմից պահանջած բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովի կայացրած որոշումների տրամադրումը ձգձգվել է կամ առհասարակ չի տրամադրվել շահագրգիռ անձանց: Նման վարչարարության արդյունքում քաղաքացին, ի սկզբանե, հնարավորություն չի ունենում դիմելու վերադաս մարմիններին կամ դատարան՝ նշված որոշումը բողոքարկելու համար: Արդյունքում՝ չի պահպանվում Սահմանադրությամբ ամրագրված՝ անձանց արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը: Բացի այդ, նշված խնդրի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ բժշկական հանձնաժողովի որոշումները տրամադրվում են միայն գորակոչիկի կողմից պահանջվելու դեպքում: Բժշկական հանձնաժողովը, հանդիսանալով վարչական մարմին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտի ընդունումից հետո եռօրյա ժամկետում պետք է այն հանձնի վարույթի մասնակիցներին, անկախ նրանից թե մասնակիցները պահանջել են վարչական ակտը, թե՛ ոչ: Այսինքն՝ այն պետք է դիտարկել պետության պոզիտիվ այլ ոչ նեգատիվ պարտավորությունների տեսանկյունից: Ուստի, բժշկական հանձնաժողովների կողմից որոշումների տրամադրման վերաբերյալ նման պրակտիկան հակասում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և միայն նպաստում է իրենց որոշումների հանդեպ հասարակության մեջ անվստահության մթնոլորտի ամրապնդմանը:

Դեռևս լուծում չի ստացել առողջական խնդիրներով զինվորական ծառայության գորակոչված զինծառայողների գորամասերի հրամանատարության կողմից իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի հրամաններ ստանալու դեպքերի վերհանման հարցը: Նախարարության հավաստմամբ, այդպիսի զինծառայողների նկատմամբ առանձին հաշվառում է իրականացվում և նրանց նկատմամբ խիստ վերահսկողություն է սահմանված հրամանատարության կողմից: Նույնիսկ ֆիզիկական պատրաստության պարապմունքների ժամանակ նրանց գործողությունները հսկվում են բժիշկների կողմից: Նախարարությունից հայտնել են նաև, որ գորամասի մարտունակության պահպանման անհրաժեշտությունից ելնելով, երբեմն լինում են դեպքեր, երբ հրամանատարությունը ստիպված է լինում ընդգրկել պիտանի ծառայությանը սահմանափակումով ճանաչված զինծառայողներին՝ որոշակի խնդիրներ լուծելու համար (սահմանելով նրանց առողջական վիճակի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն): Գիտակցելով գորամասի մարտունակության կարևորությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության համար՝ այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության 43 և 44-րդ հոդվածները սահմանում են այն դեպքերը և հիմքերը, երբ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներն ու ազատությունները կարող են ժամանակավորապես սահմանափակվել, այդ թվում նաև՝ պետական անվտանգության, ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Չնայած նշված հոդվածների

կարևորագույն հիմքերին՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված են որոշ իրավունքներ, որոնք առհասարակ սահմանափակման ենթակա չեն: Վերոնշյալի օրինակ է հանդիսանում 17-րդ հոդվածը, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Պիտանի ծառայությանը սահմանափակումով ճանաչված զինծառայողներին պատահական չէ, որ տրվում է նման կարգավիճակ, քանի որ այն հանդիսանում է վերջիններիս առողջական խնդիրների հետևանքը: Ուստի, այդ անձանց նույնիսկ պետության անվտանգության կամ, ինչպես նշվել էր՝ Նախարարության կողմից, գորամասի մարտունակության պահպանման անհրաժեշտությունից ելնելով ներգրավվելը որոշակի խնդիրներ լուծելու համար, անտեսելով, որ վերջիններիս առողջությանը հակացուցված է այդ գործողությունների կատարումը, կարող է որակվել որպես դաժան և/կամ անմարդկային վերաբերմունք իրենց հանդեպ, որն, անկախ իրավիճակի կարևորությունից կամ հիմնավորումից, ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրությանը և անընդունելի է ժողովրդավարական հասարակությունում: Միաժամանակ, առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների մահվան փաստերը վկայում են, որ նշված անձանց հանդեպ չի իրականացվում պատշաճ բժշկական հսկողություն: Ողջունելի է նաև Կառավարության պատրաստակամությունը խնդրի լուծման վերաբերյալ, ինչը արտահայտվում է Վարչապետի հանձնարարականի մեջ, համաձայն որի՝ ՀՀ պաշտպանության նախարարը՝ համագործակցելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ, պետք է ապահովի զինվորական ծառայությանը սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողների զինվորական ծառայության անցնելու ընթացքում առողջության համար վնասակար ծառայության ձևերում (մարտական հերթափոխի արգելք, մարտական զենքի հետ ինքնուրույն գործ ունենալ, վազքի սահմանափակում, ծառայությունը հատուկ գորատեսակներում և այլն) ներգրավման բացառումը, նման դեպքերը վերհանման և կանխարգելման նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներգրավմամբ ստեղծեն անկախ վերահսկման մեխանիզմներ:

Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2013 թվականին ՀՀ ՋՈՒԻ գորամասերում արձանագրվել են ոչ պատշաճ բուժօգնության տրամադրման ընդամենը երկու դեպք: Դեպքերի առթիվ կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքում՝ բժիշկները ենթարկվել են կարգապահական տույժերի: Սակայն, հակառակ նշվածի, համաձայն Պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքների, ինչպես նաև ոլորտի մասնագետների տեղեկությունների՝ ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրման դեպքերը բազմաթիվ են եղել: Ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրման միայն երկու դեպքի բացահայտումը մտահոգիչ է նաև այնքանով, որ դա չի կարող կանխարգելել նման դեպքերը: Հարկավոր է խստացնել հսկողությունը նմանօրինակ արարքների նկատմամբ:

Խիստ մտահոգիչ են գորամասերում գրանցված զինծառայողներին պարենամթերքի բաշխման չարաշահման դեպքերը: Այսպես, համաձայն Նախարարության գրության՝ 2013 թվականի ընթացքում Ռազմական ուստիկանության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է զինծառայողներին պարենամթերքի բաշխման թվով 51 չարաշահումների դեպքեր: Նշված դեպքերից 7-ով հարուցվել են

քրեական գործեր, 44-ով անցկացվել են ծառայողական քննություններ և մեղավոր զինծառայողները ենթարկվել են կարգապահական տույժի, իսկ հասցված վնասը նրանց կողմից վերականգնվել է: Նման արարքների կանխարգելման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է նախատեսել կանխարգելման առավել արդյունավետ միջոցներ: Միաժամանակ, պարզ չէ, թե 51 դեպքերից ինչ հիմնավորմամբ է, որ միայն 7-ով են հարուցվել քրեական գործեր: Նշված 44 դեպքերով անցկացված ծառայողական քննությունները չեն կարող ապահովել կատարված արարքի բազմակողմանի ուսումնասիրությունը և նմանօրինակ արարքների դեմ արդյունավետ պայքարը: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ուստի, այն դեպքերում, երբ նյութերի նախապատրաստման փուլում հնարավոր չէ պարզել գործի հանգամանքները, քրեական հետապնդում իրականացնող մարմինը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար պարտավոր է առկա նյութերով կայացնել քրեական գործ հարուցելու մասին որոշում, որի շրջանակներում օրենսդիրը քննչական գործողություններ իրականացնելու համար որևէ սահմանափակում չի նախատեսում, որը, ի դեպ, նախատեսում է նախքան նման որոշում կայացնելը:

Դեռևս լուծում չի ստացել զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդիրը: Նախարարությունը շատ դեպքերում զինծառայողների բնակարանային ապահովումը իրականացնում է ծառայողական բնակարանների տրամադրման և վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով: Այսպես, 2013 թվականին թվով 37 զինծառայող ապահովվել է բնակարաններով, իսկ 1204 զինծառայողի տրվել է վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցման թույլտվություն: Սակայն, զինծառայողների բնակարանային հաշվառում իրականացնելը և դրանցով ապահովելու գործընթացը դեռևս հստակ կանոնակարգված չէ: Մտահոգիչ են նաև սահմանամերձ գորամասերում ծառայություն անցնող սպաների բնակարանային պայմանների բարելավման խնդիրները: Զինծառայողներին բնակարան տրամադրելու հարցում Նախարարության կողմից պետք է մշակվեն հստակ մեխանիզմներ, քանի որ գործնականում, օրինակ, միևնույն ֆինանսական աջակցություն է տրամադրվում թե՛ բազմազավակ ընտանիք ունեցող զինծառայողներին, և թե՛ միայնակ զինծառայողներին: Ավելին, հաճախ հաշվի չեն առնվում բնակարանների վարձակալության շուկայական գներն ըստ քաղաքների և մարզերի:

2013 թվականի ձմեռային գորակոչը ՀՀ պաշտպանության նախարարի 19.11.2013թ. N 1325 հրամանի համաձայն անցկացվել է զինվորական ծառայության վայրի ընտրությունը վիճակահանությամբ կատարելու սկզբունքի հիման վրա: Նշված կարգով գորակոչի անցկացումը ուղղված է առավել արդար ու թափանցիկ գորակոչ իրականացնելուն: Սակայն, գորակոչի անցկացման նշված կարգը սահմանող համապատասխան հրամանի և դրա դրույթների մասին պատշաճ կերպ չի իրականացվել հանրության իրազեկում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ հանրությունը հնարավորություն չի ընձեռվել ծանոթանալ վերոնշյալ հրամանին և/կամ դրա սկզբունքային մասերին, ինչի հետևանքով բազմաթիվ հարցեր են

առաջացել այն գործնականում կիրառման վերաբերյալ: Հաշվի առնելով ՀՀ պաշտպանության նախարարի 19.11.2013թ. N 1325 հրամանի առանցքային նշանակությունը հանրության համար՝ հարկավոր էր այն պատշաճ կերպով հրապարակել և կազմակերպել դրա վերաբերյալ հանրային քննարկումներ՝ ապահովելով բոլոր շահագրգիռ անձանց և կազմակերպությունների մասնակցությունը: «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ժամանակ, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության ընթացքում բնակության վայրին մոտ գտնվող գորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են՝

ա) միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը

բ) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս գոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող զորակոչիկները

գ) ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկները

դ) երկկողմանի ծնողազուրկ զորակոչիկները, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ այն զորակոչիկները, որոնք չունեն չափահաս քույր կամ եղբայր

ե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ այլ զորակոչիկները

Բնակության վայրին մոտ գտնվող գորամաս է համարվում զորակոչիկի հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 150 կմ տեղակայված գորամասը»: Չնայած այն հանգամանքին, որ Նախարարությունից հայտնել են, որ կիրառվում է որակավորման և օրենքով նախատեսված արտոնությունների հիմունքներով վիճակահանության մոդելը, որը երաշխավորում է կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված արտոնությունների համակարգի ապահովումը, անհասկանալի է վերոնշյալ իրավունքից օգտվող անձանց զինվորական ծառայության վայրի վիճակահանությամբ ընտրություն կատարելու կարգը և նշված անձանց իրավունքի ապահովման մեխանիզմները:

2013 թվականին կրկին գրանցվել են դեպքեր, երբ ՀՀ զինված ուժերի որոշ սպաներ ցանկություն են հայտնել զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագիրը վաղաժամկետ լուծել, սակայն բարձրագույն հրամանատարական կազմը անհիմն ձգձգել է այդ զեկուցագրերի ստորագրումը: Նախարարությունը դա պայմանավորում է արձակման դիմելու հիմքերի ու պատճառների ուսումնասիրությամբ, հնարավորության դեպքում դրանք լուծելու համար միջոցների ձեռնարկմամբ: Նախարարությունից հայտնել են նաև, որ որոշ դեպքերում ձգձգումները կարող են պայմանավորված լինել պայմանագիրը վաղաժամկետ լուծելու ցանկություն հայտնած զինծառայողների զբաղեցրած պաշտոնների կադրերի սղությամբ: Ողջունելի է Նախարարության այն մոտեցումը, որի արդյունքում խորը և մանրամասնորեն ուսումնասիրվում են զինծառայողների մտահոգությունները և/կամ բողոքները, սակայն նշվածը հնարավոր է նաև իրագործել սեղմ և ողջամիտ ժամկետներում,

այլ ոչ ամիսների ընթացքում: Մակայն, հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ Կառավարության 08.04.2010թ. թիվ N 393-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու զեկուցագիր ստացած լիազոր մարմինը պարտավոր է ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում պատասխան ներկայացնել: Այսինքն՝ ներկայիս օրենսդրական կարգավորումները նախատեսում են հստակ ժամկետ, այն է՝ 15 օր: Ըստ էության՝ նշված ժամկետը հանդիսանում է ողջամիտ: Միաժամանակ, հաշվի առնելով, որ սպաների համար զինվորական ծառայությունը ընտրված աշխատանքի ձև է, ուստի անընդունելի է ամիսներով պայմանագրի վաղաժամկետ լուծարելու անձի օրինական պահանջը չբավարարելը, քանի որ նման իրավիճակը, ըստ էության, հավասարեցվում է հարկադիր աշխատանքի, որը ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային չափանիշներով արգելված է:

Չնայած իրականացվող որոշ վերանորոգման աշխատանքների, գորամասերում շարունակում է չլուծված մնալ ընդհանուր պայմանների բարելավման խնդիրը, որոնք ոլորտի մասնագետների կողմից որակվել են անբավարար: Հարկ է շեշտել նաև, որ գորամասերի անբարենպաստ պայմանները հանգեցնում են ոչ միայն անձի արժանապատվության՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքի ոտնահարման (ինչը պետք է պաշտպանվի պետության կողմից, որպես բարձրագույն արժեք), այլև վերջիններիս մոտ մի շարք հիվանդությունների առաջացման՝ ըստ էության խախտելով նաև անձի իրավունքը ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում: Հաշվի առնելով այն, որ գորանոցներից շատերը ոչ տիպային են, այլ հարմարեցված՝ բացակայում են կենցաղսպասարկման, ժամանցի կազմակերպման սենյակներ, սանհանգույց:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ զինվորական պաշտոնը համարվում է հավասար, եթե նախկին և նոր հաստիքային պաշտոններին համապատասխանում են նույն զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը: ՀՀ վարչապետի 04.11.1996թ. «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման և համապատասխան հավելվածի մեջ սահմանված են բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, որտեղ նաև առանձին սանդղակներում նախատեսված են ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, և ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության նախարարության և արտակարգ իրավիճակների վարչության զինվորական միավորումների և ստորաբաժանումների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը: 15.05.1992 թվականի Տաշքենդում ԱՊՀ մասնակից երկրների կողմից ստորագրված «Զինվորական և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ մասնակից-պետությունների կողմից սահմանվող զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության մակարդակը, ըստ 1992 թվականի փետրվարի 14-ի զինծառայողների, զինվորական ծառայությունից ազատված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների

համաձայնագրի, չի կարող Խորհրդային Միության կողմից նախկինում սահմանված օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի համեմատ ավելի ցածր մակարդակի լինել: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Զինվորական ծառայության և զինվորական պաշտոններին վերաբերող Օրենքի և ՀՀ կառավարության 19.04.1993թ. թիվ 170 որոշմամբ սահմանված կարգավորումները չեն նախատեսում հստակ սպառիչ ցանկ, որը թույլ կտար արդարացիորեն սահմանել բոլոր զինծառայողների, մասնավորապես՝ զինվորական ծառայություն անցնող այն անձանց պաշտոնները, որոնք առկա էին ԽՍՀՄ ժամանակաշրջանում: Համաձայնագրի և ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից բխում է, որ համաձայնագրի պահանջների պատշաճ կատարման համար հարկավոր է, որ այն հստակ և կանխատեսելի արտացոլում ստանա ՀՀ օրենսդրության մեջ, օրինակ՝ նախատեսելով ԽՍՀՄ ժամանակաշրջանում գործող զինվորական պաշտոնների սպառիչ և/կամ համապարփակ ցանկ: Նշվածը կբխի նաև Համաձայնագրով նախատեսված այն պահանջի տրամաբանությունից, որ ՀՀ օրենսդրությամբ անձին չպետք է վերագրվի պաշտոն, ինչի արդյունքում անձի սոցիալական ապահովության մակարդակը, ի համեմատ նախկին ԽՍՀՄ օրենսդրության, ավելի ցածր կլինի: Այնինչ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներից մեկի համաձայն՝ քաղաքացի Գ. Մարգարովը զբաղեցրել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության զինվորական ներկայացուցչության ավագ զինվորական ներկայացուցչի ղեկավար պաշտոն, սակայն, հաշվի առնելով վերոնշյալ որոշման կարգավորումները, դրույքաչափերի հաշվարկման արդյունքում, նրա համար սահմանվել է որոշման թիվ 1 հավելվածի 2-րդ սանդղակի՝ զինվորական միավորումներ և ստորաբաժանումներ, բրիգադի հրամանատարին համապատասխանող հաշվարկման բազմապատիկ գործակից (8,8): Ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը՝ կարելի է հստակ նշել, որ «ավագ զինվորական ներկայացուցիչ-ղեկավար» պաշտոնին համապատասխանում է «27» գործակիցը, այնինչ դիմումատուին վերագրված «բրիգադի հրամանատար»-ի հաստիքը, ըստ Ռուսաստանի Դաշնության գործող սանդղակի, ստացել է «26» գործակից: Այսինքն՝ այստեղից կարելի է եզրակացնել, որ դիմումատուին՝ ավագ զինվորական ներկայացուցիչ-ղեկավար հաստիքի բացակայության պայմաններում, վերագրվող գործակիցը սահմանվել է իրեն չհամապատասխանող ավելի ցածր պաշտոնի գործակցով: Բարձրացված խնդրի պարզաբանման կապակցությամբ պաշտոնական գրագրություն է տեղի ունեցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ պաշտպանության նախարարի միջև: ՀՀ պաշտպանության նախարարությունը թիվ ՊՆ/510-1734, ՊՆ/510-1904 և ՊՆ/510-2115 պատասխան գրություններով, համապատասխանաբար, ի թիվս այլ տեղեկությունների հայտնել էր. «Զեր թիվ 01/14.5/5085-13 գրության քննարկման արդյունքներով հայտնում են, որ ՀՀ կառավարության 19.04.1993թ. թիվ 170 որոշումն ուժը

կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 01.04.1997թ. 62 որոշմամբ: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստացված պատասխան թիվ ՊՆ/510-2115 գրությունից նաև պարզ է դարձել, որ նշյալ խնդիրները կարգավորվում են ՀՀ վարչապետի 04.11.1996թ. «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման համաձայն՝ կազմվել է ՀՀ պաշտպանության նախարարի՝ 10.01.1997թ. թիվ 6 հրամանը, որով սահմանվել են ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողների պաշտոնային դրույքաչափերը, զինվորական կոչման դրույքաչափերը ու հավելումները և զինվորական կոչում չունեցողների աշխատավարձերի չափերը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ ՀՀ պաշտպանության նախարարի 1993 թվականի մայիսի 17-ի թիվ 0185 հրամանի գործողությունը 1997 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է և կորցրել է ուժը: Ավելին, համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ կառավարությունն է հաստատում զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաչափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»: Իսկ տվյալ դեպքում գործընթացի կարգավորման հիմքը ՀՀ վարչապետի թիվ 604 որոշումն է և ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 6 հրամանը, այլ ոչ ՀՀ կառավարության որոշում: Հարկավոր է նշել նաև, որ ՀՀ Կառավարության կողմից 05.05.2011 թվականին ընդունված N 665-Ն որոշմամբ հաստատվել է հավելված 16-ը, որը վերնագրված է «Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի և դրա ենթակայության ստորաբաժանումների սպայական, ենթասպայական և պայմանագրային զինծառայության շարքային կազմի պաշտոնային դրույքաչափերը»: Սակայն նշված հավելվածում ներառված չեն այն բոլոր պաշտոնները, որոնք եղել են ԽՍՀՄ ժամանակաշրջանում: Դրանով իսկ չի կատարվել թե՛ օրենքով, և թե՛ Տաշքենդի համաձայնագրով իր վրա դրված պարտականությունը: Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց նորմերի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան, որի կապակցությամբ դատարանի նիստը տեղի կունենա 2014 թվականի հունիսի 10-ին:

Առաջարկություններ

- Ձեռնարկել միջոցներ ոչ թշնամու գնդակից զինծառայողների մահվան դեպքերը կանխելու ուղղությամբ՝ հատկապես վերհանելով դրանց հիմնական պատճառները, մեխանիզմներ մշակելով դրանց դեմ:
- Խիստ միջոցներ ձեռնարկել գորամասերում կարգապահության և կանոնադրական կարգի պահպանման նկատմամբ, ինչպես նաև, թերություններ և/կամ խախտումներ հայտնաբերելու դեպքում, պատասխանատվության ենթարկել թե՛ համապատասխան

գործամասերի հրամանատարներին և թե օրինախախտ զինծառայողներին: Միաժամանակ, միջոցներ ձեռնարկել գործամասերում տեսախցիկների տեղադրման և/կամ դրանց թվաքանակի ավելացման ուղղությամբ:

- Ձեռնարկել միջոցներ սահմանափակումներով շարային ծառայությանը պիտանի զինծառայողներին իրենց առողջությանը հակացուցված ծառայության ձևերի մասին նախքան զինվորական ծառայության անցնելը պատշաճ տեղեկացնելու համար և նախաձեռնությամբ հանդես գալ վերոգրյալը օրենսդրությամբ ամրագրելու համար:
- Ուսումնասիրելով հարյուրավոր բողոքներ՝ ռազմաբժշկական հանձնաժողովների որոշումների և գործունեության վերաբերյալ՝ մշակել հստակ մեխանիզմներ՝ ուղղված բժշկական հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման և թերացումների վերացմանը:
- Ձեռնարկել միջոցներ գորակոչիկներին վերաբերող ռազմաբժշկական հանձնաժողովների որոշումները ժամանակին տրամադրելու և նախատեսված պարտադիր կարգը պահպանելու համար:
- Վերհանել գործամասերի հրամանատարության կողմից առողջական սահմանափակումներով շարային ծառայությանը պիտանի զինծառայողների առողջական վիճակի հետ անհամատեղելի հրամաններ արձակելու դեպքերը և մշակել մեխանիզմներ դրանք կանխելու ուղղությամբ:
- Հետամուտ լինել ՀՀ ԶՈՒ գործամասերի բժիշկ-սպաների բժշկական պատշաճ հսկողություն իրականացնելու ուղղությամբ՝ պարզելու համար թերացումների պատճառները: Միաժամանակ, թերացումների հայտնաբերման դեպքում, կիրառել պատասխանատվության միջոցներ օրենքի ողջ խստությամբ:
- Սահմանել խիստ հսկողություն գործամասերում գրանցված զինծառայողներին պարենամթերքի հատկացման վերաբերյալ: Միաժամանակ նման դեպքերի հայտնաբերման դեպքում հաշվի առնել ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները հետամուտ լինել քրեական գործ հարուցելու և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն իրականացնելու հարցում:
- Հետամուտ լինել զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդրի լուծմանը՝ մասնավորապես մշակելով դրա իրականացման հստակ մեխանիզմները և ուսումնասիրելով գործնականում հանդիպող խնդիրները:
- Միջոցներ ձեռնարկել պարտադիր զինվորական ծառայության վայրի ընտրությունը վիճակահանությամբ կատարելու սկզբունքը սահմանող ՀՀ ՊՆ նախարարի հրամանը և/կամ դրա սկզբունքային, մարդու իրավունքներին և շահերին վերաբերող մասերը մատչելի դարձնելու ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել սպաների կողմից զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագրի վաղաժամկետ լուծման ողջամիտ ժամկետների պահպանման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության նպատակներն ու խնդիրներն են ՀՀ շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը, ՀՀ բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը, ՀՀ տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովումը և այլն:

2013 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) իրավասությունների ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Ըստ պաշտոնական տվյալների՝ 2013 թվականին ապօրինի հատված ծառերի ընդհանուր քանակը կազմել է 2031 դեպք, ինչը շուրջ 10%-ով ավել է 2012թ. ցուցանիշից:
- «Խոսքովի անտառ» արգելոցում, Փարոսի անտառում և հանրապետության այլ պահպանվող տարածքներում գրանցվել են ապօրինի որսի և որսագողության մի շարք դեպքեր, քանի որ Նախարարությունը գործել է ոչ հետևողական և ոչ բավարար:
- ՀԷԿ-երի անօրինական և անբարեխիղճ օգտագործման հետևանքով մի շարք գետեր կանգնած են եղել չորացման եզրին:
- Նախարարությունը որևէ միջոց չի ձեռնարկել Թաիրով գյուղի տարածքում կեղտաջրերից առաջացած հողերի քայքայումն ու ճահճացումները կանխելու համար:
- «Խոսքովի անտառ» արգելոցի տնօրենի պաշտոնի համար անցկացված մրցույթն իրականացվել է Կառավարության որոշման խախտմամբ, քանի որ այն բաց չի եղել հասարակական կազմակերպությունների և լրագրողների համար:
- Չնայած մի շարք բողոքների, Նախարարությունը չի իրականացրել անհրաժեշտ ստուգումները՝ պարզելու, թե արդյոք Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծն անցել է փորձաքննություն, թե՛ ոչ:
- Թեև Նախարարության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Քաջարանի բաց հանքի շահագործումը չի հանգեցնում օդի աղտոտվածության՝ ոլորտի մասնագետները շարունակում են պնդել հակառակը: Վերջիններիս հետազոտությունների համաձայն՝ օդի աղտոտվածության հետևանքով մի շարք երեխաների մոտ հայտանբերվել են քաղցկեղ առաջացնող նյութեր:

- Չի ստեղծվել Օրհուսի կոնվենցիայով նախատեսված հատուկ անկախ մարմին, որտեղ, դատարաններից բացի, հնարավոր կլիներ բողոքարկել Նախարարության որոշումները:
- Դեռևս չի լուծվել քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացման և ոչնչացման խնդիրը, մինչդեռ դա հանդիսանում է Նախարարության կանոնադրական խնդիրը:
- Նախարարությունը մշակել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի նախագիծը հաշվի չառնելով բնապահպանների կարծիքը, որ այն ավելի շատ ուղղված է բիզնես միջավայրի զարգացմանը, քան բնապահպանական խնդիրների լուծմանն ու կանխմանը:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ կառավարության 10.01.2013 թվականի N 11-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքում և ստեղծվել է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, որում ներառվել է տեղեկատվության և էկոլոգիայի բաժինը:
- Կապան քաղաքի, Լիճք և Գեղի գյուղերի դպրոցներում անցկացվել են ապօրինի որսի կանխարգելման ճանաչողական դասընթացներ:
- Բացահայտվել են անօրինական ծառահատումների և ապօրինի որսագողության մի շարք դեպքեր, ինչի արդյունքում իրավախախտները ենթարկվել են համապատասխան պատասխանատվության:
- Իրականացվել են Քաջարանի օդային ավազանի որակի մոնիթորինգի միջոցառումներ պասիվ նմուշառման մեթոդով:

Ընդհանուր վերլուծություն

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2013 թվականին ապօրինի հատված ծառերի ընդհանուր քանակը կազմել է 2031 դեպք, ինչը շուրջ 10%-ով ավել է 2012թ. ցուցանիշից: Նախորդ տարում գրանցած ցուցանիշների համեմատությամբ հանրապետությունում իրականացված անօրինական ծառահատումների դեպքերը ոչ թե նվազել են, այլ ընդհակառակը՝ աճել: Այսպես, Նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ 2012 թվականին Նախարարության թեժ գծով ստացվել է ընդհանուր թվով (ներառյալ ծառահատումների վերաբերյալ բողոքները) 54 ահազանգ (2011 թվականի ընթացքում եղել է 36-ը), որոնք ներառել են բողոքներ նաև կապված ապօրինի ծառահատումների հետ: Իսկ 2013 թվականին Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից հայտնաբերվել է ապօրինի ծառահատումների 536 դեպք՝ պատճառելով 102.450.000 ՀՀ դրամի վնաս: Իսկ ըստ Հայաստանում ապօրինի հատումների դեմ պայքարի աշխատանքները համակարգող անտառների պետական մոնիթորինգի խորհրդի ներկայացված հաշվետվությունների՝

2013թ. ընթացքում ապօրինի հատված ծառերի ընդհանուր քանակը կազմել է 2031` 2012թ. տարվա 1860-ի դիմաց: 2013թ. անտառվերականգնման աշխատանքներ են իրականացվել ընդհանուր առմամբ շուրջ 542 հեկտար տարածքի վրա, որից 448.3 հեկտարը` «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսություններում, 94 հեկտարը` բնության հատուկ պահպանվող տարածքներում: Ելնելով նշված տվյալներից` գտնում ենք, որ խնդրին արդյունավետ լուծում տալու նպատակով անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել` հաշվի առնելով նորատունկ ծառերի աճի ընթացքը: Հատկանշական է այն, որ ոլորտի հասարակական կազմակերպությունները բազմիցս ահազանգել էին զանգվածային ապօրինի ծառահատումների մասին Լոռու մարզի Սարատովկա համայնքի ճանապարհի մոտ, «Խոսրովի անտառ» արգելոցում, Սյունիքում, Սևանի թերակղզու տարածքում, Փարոսի անտառում և հանրապետության այլ տարածքներում: Ողջունելի է, որ Նախարարությունը միջոցներ է ձեռնարկել իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, ինչի արդյունքում կազմվել է 419 վարչական իրավախախտման ակտ` 27.950.000 ՀՀ դրամի չափով: Այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ իրավախախտման ոչ բոլոր դեպքերն են բացահայտվել:

«Խոսրովի անտառ» արգելոցում, Փարոսի անտառում և հանրապետության այլ պահպանվող տարածքներում գրանցվել են ապօրինի որսի և որսագողության մի շարք դեպքեր, քանի որ Նախարարությունը գործել է ոչ հետևողական և ոչ բավարար: Թեև 2013 թվականին արձանագրվել է առաջընթաց ապօրինի որսի իրավախախտումների դեպքերի բացահայտման ուղղությամբ, որի արդյունքում արձանագրվել է մեկ որսագողության դեպք «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում և անօրինական ձկնորսության 43 դեպք (կազմվել է 2.150.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի ակտ), այնուամենայնիվ, գտնում ենք, որ անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ միջոցներ խախտումները կանխելու համար` հաշվի առնելով այն, որ ոչ բոլոր դեպքերում իրավախախտման համար կիրառված տուգանքը կարող է փոխհատուցել արդեն պատճառված վնասը: Այսպես, Գեղարքունիքի տարածքային բաժնի, ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի և «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների համատեղ իրականացված շրջայցերի արդյունքում հայտնաբերված խեցգետնի ապօրինի որսի դեպքերի համար 3 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 150.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով վարչական տուգանքի 3 որոշում: Առգրավված 27կգ խեցգետինը կենդանի վիճակում բաց է թողնվել Սևանա լիճ, իսկ 116 հատ (10կգ) «կարաս» տեսակի ձուկ սահմանված կարգով հանձնվել է «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ: Առգրավվել է նաև 10 հատ ձկնորսական ցանց: Սակայն գրանցվել են նաև դեպքեր, երբ չի հաջողվում փրկել ապօրինի որսի օբյեկտ հանդիսացող կենդանիներին: Օրինակ, Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի արդյունքում արձանագրված դեպքի առնչությամբ 1 իրավախախտի նկատմամբ կայացվել է 70.000 ՀՀ դրամ գումարի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 25.000 ՀՀ դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մեկ այլ դեպքով, Երևանի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի արդյունքում առգրավվել է «սիգ» տեսակի 27 հատ տիրագուրկ ձուկ, ինչը սահմանված կարգով հանձնվել է Երևանի թիվ 141 գիշերօթիկ հանրակրթական մանկապարտեզ: Հաշվի առնելով այն, որ տուգանված իրավախախտները տուգանքը վճարելուց հետո շատ դեպքերում կրկնում են նույն

իրավախախտումը՝ գտնում ենք, որ Նախարարության գործունեության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել իրավախախտումների դեմ կանխարգելիչ արդյունավետ միջոցներ, քանի որ միայն տուգանքների կիրառումը բավարար չէ Նախարարության կանոնադրական նպատակին հասնելու համար, որոնցից է՝ Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի վրա վնասակար ներգործությունների կանխարգելումը կամ նվազեցումը:

Մտահոգիչ է Նախարարության դիրքորոշումն առ այն, որ բնության հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի որսագողության դեմ պայքարի աշխատանքներն օրենսդրության առումով առավել արդյունավետ դարձնելու հարցն ամբողջությամբ կարգավորվում է «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 88-րդ, 89-րդ ու 91-րդ հոդվածներով և ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածով: Նախ, «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքի դրույթները չեն նախատեսում գործող մեխանիզմներ որսագողության կանխարգելման համար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի և Քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածներն էլ, բնականաբար, վերաբերում են արդեն թույլ տրված իրավախախտման համար նախատեսվող պատասխանատվության միջոցներին: Այնինչ, հատկանշական է, որ Պաշտպանի՝ դեռևս 2012 թվականի տարեկան զեկույցում վերհանված այն խնդրին, որ Նախարարության կողմից նախաձեռնողական մոտեցում չի ցուցաբերվել իր ենթակայության տակ գտնվող տարածքների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում՝ արգելոցներում որսի դեպքերը բացահայտելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով, Նախարարությունը հայտնել էր, որ. «...ՀՀ տարածքում և, մասնավորապես բնության հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի որսագողության դեմ պայքարի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունն արդեն իսկ նախաձեռնել է հատուկ պահպանվող տարածքների մասին օրենսդրության բարեփոխումների, պահպանվող տարածքների ռեժիմն իրականացնող աշխատակազմի՝ մասնագիտական վերապատրաստման և տեխնիկական վերազինման, ֆինանսական միջոցների համալրման, ինչպես նաև համայնքային իրազեկման աշխատանքներ»: Ստացվում է, որ Նախարարությունը պատշաճ կարևորություն չի տալիս ապօրինի որսագողության դեմ պայքարի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելուն, ինչի հետևանքով էլ դեռ 2012 թվականին պլանավորված համապատասխան օրենսդրական բարեփոխումները 2013 թվականին չեն իրականացվել:

ՀԵԿ-երի անօրինական և անբարեխիղճ օգտագործման հետևանքով մի շարք գետեր կանգնած են եղել չորացման եզրին: Դեռևս 2012 թվականին Նախարարությունը բազմիցս ահազանգել էին ՀԵԿ-երից ջրառի խնդիրների վերաբերյալ: Թեև Նախարարությունը նախկինում հայտնել էր, որ խնդրի լուծման նպատակով նախատեսվում էր ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի «Ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման և հաշ-

վետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին» N 639-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը, այնուամենայնիվ 2013 թվականի ընթացքում նշված ակտերը չեն բարեփոխվել: Ավելին, 2013 թվականին շարունակվել է միևնույն խնդրի վերաբերյալ բարձրաձայնվել: Օրինակ, ականատեսները հայտնել են, որ Կոտայքի մարզի Մեղրաձորի երբեմնի ջրառատ ջրվեժից մնացել է ընդամենը մի բարակ առու: Պատճառն այն է, որ գետի վերին հոսանքի հատվածում կառուցված է փոքր ՀԷԿ, որի ջրառի կետը կլանում է գետի ամբողջ ջուրը, ինչի հետևանքով գետն ամբողջովին չորացել է: Հարկ ենք համարում նշել, որ վերը նկարագրվածը բնապահպանական հսկողության բացակայության միակ դեպքը չէ հանրապետության տարածքում:

Նախարարությունը որևէ միջոց չի ձեռնարկել Թաիրով գյուղի տարածքում կեղտաջրերից առաջացած հողերի քայքայումն ու ճահճացումները կանխելու համար: Դեռևս 2013 թվականի մայիսից Նախարարությունը տեղյակ է եղել այն մասին, որ Արմավիրի մարզի Թաիրով գյուղի «Զվարթնոց» օդանավակայանին հարող տարածքը լցվել է կեղտաջրերով: Խնդրի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության կողմից նշվել է, որ թափված կեղտաջրերից առաջացած իրավիճակը ոչ միայն կարող է վտանգել բնակչության, հատկապես՝ երեխաների, սանիտարահամաճարակային անվտանգությունը և նպաստել աղիքային վարակիչ հիվանդությունների տարածմանը, այլև կարող է առաջացնել հողերի ջրային և հողմային հողատարումներ, ողողումներ, ճահճացումներ: Պաշտպանը հայտնել է Նախարարությանը սույն խնդրի վերաբերյալ՝ միաժամանակ խնդրելով ձեռնարկված միջոցառումների մասին տեղյակ պահել, ինչին ի պատասխան՝ Նախարարությունը սեպտեմբերին հայտնել է, որ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ում Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից ներկա պահին (սեպտեմբերին) իրականացվում են ստուգումներ, ինչի շրջանակներում կպարզվեն նաև քննարկվող խնդրին վերաբերող փաստերը: Այնինչ, խնդրի լուծման արդյունքների վերաբերյալ հետագայում Պաշտպանի հիշեցմանն ի պատասխան՝ Նախարարությունն ընդամենը հայտնել է, որ «Երևան Ջուր» ՓԲ ընկերությունը ներառված է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության 2014 թվականի ստուգման ենթակա կազմակերպությունների ցանկում: Արդյունքում ստացվում է, որ խնդրի հրատապության մասին տեղյակ լինելով դեռևս 2013 թվականի մայիսից Նախարարությունը որևէ արդյունավետ միջոց չի ձեռնարկել խնդիրը հնարավորինս արագ լուծելու և հնարավոր հետագա ռիսկերը կանխելու նպատակով:

«Խոսարովի անտառ» արգելոցի տնօրենի պաշտոնի համար անցկացված մրցույթն իրականացվել է Կառավարության որոշման խախտմամբ, քանի որ այն բաց չի եղել հասարակական կազմակերպությունների և լրագրողների համար: Նախարարությունից ստացված տվյալներին համաձայն՝ Նախարարությունը համագործակցում է շուրջ 55 բնապահպանական հասարակական կազմակերպության հետ՝ առավել սերտ համագործակցություն իրականացնելով 17 բնապահպանական հասարակական կազմակերպության, ինչպես նաև մարզերի 13 Օրհուս տեղեկատվական կենտրոնների հետ: Ողջունելի է Նախարարության կողմից քաղաքացիական հասարակության

ներկայացուցիչների հետ համագործակցության եզրեր գտնելու փորձը, սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է նաև խորացնել համագործակցությունը ոչ միայն առանձին, այլև բոլոր հասարակական կազմակերպությունների հետ, քանի որ բնապահպանական հիմնախնդիրների շուրջ առավել սուր կարծիք հայտնող հասարակական մի շարք կազմակերպություններ այս համագործակցության մեջ ներառված չեն, և նրանց մասնագիտական կարծիքը որևէ կերպ հաշվի չի առնվում: Հատկանշական է, որ բնապահպանական հասարակական կազմակերպությունների և բնապահպան ակտիվիստների դժգոհությունն էր հարուցել այն փաստը, որ «Խոսքովի անտառ» պետական արգելոցի տնօրենի թափուր պաշտոնի համար Նախարարության անցկացրած մրցույթին, որի արդյունքում ընտրվել է նոր տնօրեն, ներկա չեն եղել հասարակայնության և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Իր գործողություններով Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 25.01.2005 թիվ 224-Ն որոշումը՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնի ընտրության մասին, ըստ որի, եթե կազմակերպությունը 100%-ով պատկանում է պետությանը, մրցութային հանձնաժողովում պետք է լինեն հասարակայնության և կառավարության ներկայացուցիչներ: Ոլորտի մասնագետների հավաստմամբ՝ նշվածի վերաբերյալ Նախարարության պատճառաբանությունը, որ «...բնապահպանների ու լրատվամիջոցների ներկայությունը կարող է կաշկանդել թեկնածուներին, մինչդեռ իրենք պարտավոր են ապահովել հանգիստ մթնոլորտ, որպեսզի կարողանան հարցերին պատասխանել...» տեղին չէ՝ հաշվի առնելով օրենսդրությամբ նախատեսված պահանջները, ինչպես նաև՝ դեռևս 2012 նոյեմբերի 23-ին կայացած մրցույթում հաղթած Գ.Պ.-ն, ով մրցույթի տեսանյութում չէր կարողացել անգամ ներկայացված հարցերին պատասխանել, ինչի շուրջն էլ մեծ աղմուկ էր բարձրացել: Բացի այդ, շատ դեպքերում բնապահպանական հասարակական կազմակերպությունների հարցումները Նախարարության կողմից մնում են անպատասխան: Այսպես, դեռևս 2013թ. ապրիլի 5-ին Համահայկական Բնապահպանական Ճակատը պաշտոնական հարցում էր ուղարկվել Նախարարություն, որի մեջ, ի թիվս այլ փաստաթղթերի, խնդրել էր տրամադրել նաև «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի ողջ գործունեության ընթացքում Բնապահպանական պետական տեսչության կողմից այդ ընկերության վերաբերյալ կազմված արձանագրությունների կրկնօրինակները, եթե դրանք առկա են: Ի պատասխան Նախարարությունից հայտնել էին, որ ելնելով նյութերի մեծ ծավալից և էլեկտրոնային տարբերակների բացակայությունից, դրանց կարելի է ծանոթանալ «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ում: Այնինչ, հատկանշական է, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը, իսկ նույն օրենքի 9-րդ հոդվածը նշում է նաև, որ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Այսինքն, Նախարարության պարտականությունն է միջոցներ ձեռնարկել, անկախ որևէ հանգամանքից, հարցման հեղինակին տրամադրելու հարցված տեղեկատվությունը պարունակող փաստաթղթերի պատճենները: Նշվածը վկայում է այն մասին, որ Նախարարությունը ոչ բոլոր հարցերում է

համագործակցում բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ, նույնիսկ, երբ դրա պահանջը ամրագրված է օրենսդրությամբ:

Չնայած մի շարք բողոքների, Նախարարությունը չի իրականացրել անհրաժեշտ ստուգումները՝ պարզելու, թե արդյոք Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծը անցել է փորձաքննություն, թե՛ ոչ: Դեռևս իր լուծումը չի ստացել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործող «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության լիցենզավորման խնդիրը. բնապահպանների պնդմամբ՝ կազմակերպությունը գործում է նոր ծրագրով, այնինչ լիցենզիան տրվել էր նախկինում ներկայացված ծրագրի հիման վրա, իսկ կազմակերպության գործունեության ներկայիս ծրագիրը լիցենզավորված չէ: Այսպես, բնապահպանների կողմից բազմիցս բարձրացվել է այն խնդիրը, որ դեռևս 2006թ. «Թեղուտ» ՓԲԸ-ին գործունեության թույլտվություն տրամադրվել է օրենսդրության մի շարք խախտումներով, ինչն էլ 2011թ. հունիսի 29-ից հուլիսի 1-ը Քիշնևում տեղի ունեցած Օրհուսի կոնվենցիայի գերագույն մարմնի՝ Կոնվենցիայի կողմ հանդիսացող երկրների հանդիպման ժամանակ հաստատել է նաև Կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն: Բացի այդ, թիվ ACCC/C/2009/43 հաղորդման առնչությամբ ՄԱԿ-ի Սոցիալական և տնտեսական հարցերով խորհուրդը իր թիվ ECE/MP.PP/2011/11/Add.1 զեկույցում նույնպես արձանագրել է, որ Թեղուտի հանքի շահագործման լիցենզիա ստանալու ընթացքում թույլ են տրվել կոնվենցիայի, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս կազմող օրենքի խախտումներ: Պահանջների չկատարման վերաբերյալ Խորհրդի եզրակացություններում, մասնավորապես նշված է՝ «Ի գիտություն ընդունելով III/6b որոշման իրագործման ուղղությամբ Մասնակից պետության կողմից շարունակաբար գործադրվող ջանքերը՝ Կոմիտեն գտնում է, որ Հայաստանի օրենսդրության և պրակտիկայի մեջ դեռևս առկա են թերություններ, եւ դրանց պատճառով Մասնակից պետությունը սույն գործով չի կատարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 9-րդ կետերի պահանջները»: Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ շեշտել նաև, որ Կոնվենցիան ունի բարձր իրավաբանական ուժ և պարտադիր է պետության կողմից կատարման: Խորհուրդը հաստատել է համապատասխանության կոմիտեի եզրակացությունն այն մասին, որ Հայաստանը ձախողել է Կոնվենցիայի իրականացումը: Ավելին, Պաշտպանին հասցեագրած դիմումներով հայտնվել էր, որ ներկայումս հանքավայրի շահագործումն իրականացվում է նոր մշակված նախագծով, որը փորձաքննության չի ենթարկվել, ինչի կապակցությամբ Նախարարությունը 2013 թվականի ընթացքում պարբերաբար պահանջ է ներկայացվել ստուգումներ իրականացնել Թեղուտի հանքավայրում, որոնք, սակայն, չեն իրականացվել. թեև Նախարարությունը հայտնել էր, որ «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումներ կիրականացվեն 2013 թվականի չորրորդ եռամսյակում, հետագայում Նախարարությունը հետաձգեց այդ ստուգումների իրականացումը՝ դրանք նախատեսելով իրականացնել 2014 թվականի ընթացքում: Հատկանշական է, որ Թեղուտում նախկինում երբևէ բնապահպանական ստուգումներ չեն իրականացվել, ինչի մասին է վկայում Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2014թ. ստուգման ենթակա կազմակերպությունների ցանկում ընդգրկված տեղեկատվությունը: Այնինչ, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1149-Ն

որոշմամբ հաստատված Նախարարության բնապահպանական պետական տեսչության կանոնադրության ուժով՝ տեսչությունը բնապահպանության և բնօգտագործման ոլորտում իր նպատակների և խնդիրների իրականացման նպատակով, ՀՀ օրենքով սահմանված կարգով, սուբյեկտներում վերահսկողություն է իրականացնում, մասնավորապես՝ բնապահպանական պետական փորձաքննական եզրակացության առկայության և փորձաքննության ենթարկված փաստաթղթերում ամրագրված բնապահպանական պահանջների ու միջոցառումների իրականացման նկատմամբ: Պետական լիազոր մարմնի կողմից նշված լիազորության իրականացումը պարտադիր բնույթ է կրում և չի կարող կախված լինել, Նախարարության կողմից իր պատասխան գրություններում վկայակոչված, հանքավայրում հանքաշահագործում փաստացի չիրականացումից:

Թեև Նախարարության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Քաջարանի բաց հանքի շահագործումը չի հանգեցնում օդի աղտոտվածության՝ ոլորտի մասնագետները շարունակում են պնդել հակառակը: Վերջիններիս հետազոտությունների համաձայն օդի աղտոտվածության հետևանքով մի շարք երեխաների մոտ հայտնաբերվել են քաղցկեղ առաջացնող նյութեր: Քաջարան գյուղի բնակիչները և բնապահպանական հասարակական կազմակերպությունները դեռ նախորդ տարիներից բազմիցս բարձրաձայնել են այն խնդիրը, որ Քաջարանում տեղակայված բաց հանքի շահագործման հետևանքով հանքին հարակից բոլոր տարածքների մթնոլորտը լցվում է ծանր մետաղներով և թունավոր տարրերով, որոնք ոչ միայն վնասում են շրջակա միջավայրը, այլև լուրջ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության և կյանքի համար: Նախարարությունը հայտնել է, որ 2011-2012թթ. ժամանակահատվածում չի կատարել քաղաքի մթնոլորտային օդի որակի դիտարկումներ, քանի որ նման աշխատանքներ նախատեսված չեն եղել պետբյուջեով ֆինանսավորման հիմնական ծրագրում: Այժմ էլ Քաջարան քաղաքում չկա օդի մոնիթորինգի դիտակայան: Չնայած նշվածին՝ Քաջարանի օդային ավազանի որակի մոնիթորինգի միջոցառումներ սկսվեցին իրականացվել միայն 2013 թվականի հուլիսից պասիվ նմուշառման մեթոդով, ինչի արդյունքները հրապարակված են «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում: Թեև մոնիթորինգի արդյունքների համաձայն ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները քաղաքի մթնոլորտային օդում դիտվել են սահմանային թույլատրելի նորմաների տիրույթում, այնուամենայնիվ շարունակվում են գանգատները քաղաքի բնակիչներից և բնապահպան ակտիվիստներից օդի ծայրաստիճան աղտոտվածության մասին: Ավելին, ոլորտի մասնագետների կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ Քաջարանից և հարակից գյուղերից, նաև՝ Կապանից, ԳԱԱ էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնը 10 երեխաների է տարել ստուգման, որի արդյունքում հայտնաբերվել է, որ բոլորը հիվանդ են. մազերի մեջ կուտակված ծանր մետաղներ են հայտնաբերել՝ սնդիկ, կադմիում, որոնք նույնիսկ լվանալուց հետո չեն հեռանում: Այդ տարրերը քաղցկեղածին հարուցիչներ են: Բացի այդ, հետազոտված երեխաների (մոտ 43 տոկոս) արյան մեջ հայտնաբերվել է բավականին բարձր կապարի պարունակություն, իսկ 3 տոկոսի մոտ առկա է տոքսիկացիա: Հայտնի է, որ կապարի բարձր պարունակությունն օրգանիզմում ազդում է նյարդային համակարգի վրա, կարող է առաջացնել մտավոր զարգացման խնդիրներ, տեսողության, լսողության և խոսքի

խախտումներ, ազդում է նաև երիկամների և ստամոքսի, նյութափոխանակության համակարգերի վրա: Օրգանիզմում պղնձի բարձր պարունակությունը թույն է: Եթե մետաղի պարունակությունը օրգանիզմում երկար ժամանակ բարձր է մնում, կարող են զարգանալ ուռուցքներ: Մետաղն ախտահարում է նյարդային համակարգը, երիկամները և լյարդը: Կադմիումի բարձր պարունակությունն առաջացնում է կմախքի տձևացում, թոքերի ախտահարում:

Իսկ այս մետաղների՝ օրգանիզմ թափանցելու ուղիները բազմաթիվ են՝ հողը, ջուրը, օդը և ընտանի կենդանիները: Օրինակ, Լեռնաձորի և Քաջարանի միջև ընկած տարածքում է գտնվում 1977թ. հողով ծածկված Ողջի պոչամբարը, որտեղ տասնյակ տարիների ընթացքում հավաքվում են պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնները: Պոչամբարը տեղակայված է Ողջի գետի ողողահունում: Այն զբաղեցրած մակերեսով (70 հա) ամենամեծն է: Ուսումնասիրության համաձայն՝ Ողջիի հողագրունտում հայտնաբերվել են մոլիբդենի և պղնձի բարձր խտություններ: Հաստատվել է նաև խտությունների աճման միտում՝ ըստ խորության: Պոչամբարի տարածքի խոտաբույսերում մի շարք թունավոր տարրերի բարձր պարունակությունների հայտնաբերումից հետո ուսումնասիրվել էր նաև Լեռնաձորի 3 խմբի կովերի կաթը: Կաթի պարունակության մեջ գրանցվել է կապարի, մկնդեղի, սնդիկի գերազանցումներ: Թեև տեղական իշխանությունների կողմից միջոցներ էին ձեռնարկվել ցանկապատել և կանաչապատել պոչամբարների տարածքները, այնուամենայնիվ, մասնագետները շեշտում են, որ պոչամբարները հողով ծածկելը ոչ միշտ է նպաստում հողաբուսածածկ համալիրի վերականգնմանը: Պոչամբարների մակերևույթն էրոզացված է, որի հետևանքով պոչամբարների նյութում առկա ծանր մետաղներն ակտիվորեն ենթարկվում են միգրացիայի և աղտոտում է կոհամակարգի բաղադրիչները: Բացի այդ, մասնագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օդի աղտոտվածությունը բարձր է նաև Երևանում, Ալավերդիում, Հրազդանում: Մասանվորապես, Երևանում օդը հագեցած է փոշով, ծանր մետաղներով և այլ վնասակար նյութերով՝ սնդիկ, մկնդեղ, կապար: Երևանի մթնոլորտում երկրաքիմիական արտանետումների առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնը ահագանգել էր, որ ամենաաղտոտվածը Երևանի կենտրոնն է: Միաժամանակ նշվել են նաև քաղաքի օդի աղտոտման հիմնական աղբյուրները, դրանք են՝ մանրախճի և ավազի շահագործվող հանքավայրերը, ապա՝ բուսազուրկ հողերը, շինհրապարակները: Մասնագետները հավաստել են նաև, որ ծանր մետաղներն ու փոշու շատ փոքր հատիկները քաղցկեղածին են: Այնինչ, նշված ուսումնասիրություններին Նախարարությունը պատշաճ կարգով չի արձագանքել:

Չի ստեղծվել Օրհուսի կոնվենցիայով նախատեսված հատուկ անկախ մարմին, որտեղ, դատարաններից բացի, հնարավոր կլիներ բողոքարկել Նախարարության որոշումները: Նախարարությունը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013 թվականի ընթացքում չի ձեռնարկել միջոցներ կատարելու համար բնապահպանության ոլորտում Հայաստանի միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը 1998 թվականի հունիսի 25-ին ստորագրել, իսկ 2001 թվականի օգոստոսի 1-ին վավերացրել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին

հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998թ. Օրհուսի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության սահմաններում պարտավոր է ապահովել, որ ցանկացած անձ, ով կարծում է, որ իր՝ 4-րդ հոդվածի պայմաններին համապատասխան ներկայացված տեղեկատվություն ստանալու մասին հարցումը չի քննարկվել, մասամբ կամ ամբողջությամբ անհիմն մերժվել է, պատշաճ ձևով չի բավարարվել կամ այդ հարցման նկատմամբ ցուցաբերվել է սույն հոդվածի դրույթների չհամապատասխանող մոտեցում, ունենա դատարանում կամ օրենքին համապատասխան ստեղծված այլ անկախ և անկողմնակալ մարմնում ընդունված որոշման վերանայման հնարավորություն»: Այն դեպքերում, երբ նախատեսվում է որոշման վերանայում դատարանում, Կողմն անձի համար ապահովում է նաև այլ պետական կամ անկախ և անաչառ մարմնի կողմից որոշման վերանայման օրենքով սահմանված վարձատրություն չպահանջող կամ նվազագույն վարձատրություն պահանջող արագ ընթացակարգերի մատչելիություն»: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանի 2000թ. դեկտեմբերի 26-ի ՄԴՈ-269 որոշման 2-րդ կետի 4-րդ պարբերությունն ամրագրում է, որ. «Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես, ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովել արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը»: Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի՝ Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի՝ Հայաստանի վերաբերյալ 26.09.2008թ. ECE/MP.PP/2008/2/Add.10 զեկույցի 1-ին կետի d) ենթակետում նշվում է, որ. «սույն Կողմը, չապահովելով շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչների համար քննարկման ընթացակարգին հասանելիությունը և չներկայացնելով իրավական պաշտպանության համապատասխան և արդյունավետ միջոցներ, չի պահպանել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-4 կետերը»: Մասնավորապես, նշված հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության շրջանակներում պարտավոր է ապահովել, որ շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչները, ովքեր՝ ա) ցուցաբերում են բավականաչափ շահագրգռվածություն, կամ որպես այլընտրանքային տարբերակ՝ բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա համապատասխան Կողմի վարչական վարույթի նորմերով սահմանվում է որպես նախապայման, ունենան ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և առանց նշված հոդվածի 3-րդ կետի կամ սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների խախտման, դատարանում և/կամ օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում՝ ընդունված որոշումների վերանայման հնարավորություն՝ 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում ընդունված ցանկացած որոշման, կատարված գործողության կամ անգործության օրինականությունը նյութական և ընթացակարգային իրավունքի տեսակետից վիճարկելու նպատակով: Հարկ է նշել նաև, որ ՄԱԿ-ի՝ Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի՝ Հայաստանի վերաբերյալ 02.04.2008թ. ECE/MP.PP/2008/5/Add.2 զեկույցի 15-րդ

կետի c) ենթակետով Խորհուրդը առաջարկել է Հայաստանի կառավարությանը պարբերաբար Խորհրդին ներկայացնել (2008թ. նոյեմբերին, 2009թ. նոյեմբերին և 2010թ. նոյեմբերին) մանրամասն տեղեկատվություն ECE/MP.PP/2008/5/Add.2 զեկույցում նշված առաջարկությունների իրականացման հետագա ընթացքի վերաբերյալ: Ուստի, հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև Նախարարության Կանոնադրությամբ ամրագրված Նախարարության այն գործառույթը, ըստ որի՝ Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ի թիվս այլ գործառույթների, ապահովում է նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը՝ գտնում ենք, որ Նախարարությունը անկախ այն հանգամանքից, թե իր իրավասության ոլորտին են վերաբերում Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները թե՛ ոչ, հանդիսանում է Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման համար պատասխանատու մարմինը: Վերոնշյալի կապակցությամբ մտահոգիչ է, մասնավորապես՝ Նախարարության եզրահանգումն այն մասին, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը չի ենթադրում նոր մարմնի ստեղծում, ամբողջությամբ հակասում է Կոնվենցիայի նշված հոդվածի տառացի բովանդակությանը և նպատակին՝ հիմք ընդունելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջն առ այն, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Հետաքրքիր է Նախարարության այն դատողությունը, որ, որպես Կոնվենցիայի 9-րդ հոդվածում նշված օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ մարմին, կարելի է համարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին: Նախարարությունը իրավացիորեն նշել է, որ Հայաստանում առկա է պրակտիկա, երբ Մարդու իրավունքների պաշտպանին են դիմում քաղաքացիներն ու հասարակական կազմակերպությունները շրջակա միջավայրին վերաբերող հարցերով, սակայն Կոնվենցիայի քննարկվող դրույթի նպատակը, ըստ էության, հատուկ, նույնիսկ մասնագիտացված մարմնի ստեղծումն է, որն այլընտրանք կհանդիսանա դատարան չդիմելու դեպքում այդ մարմին դիմել ընդունված որոշումների վերանայման համար, ինչպիսիք են, օրինակ, այլ ոլորտներում գործող ֆինանսական համակարգի հաշտարարը: Բացի այդ, հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի նշված նորմի բովանդակության համաձայն՝ դատարան դիմելը կամ այդ մարմնին դիմելը մեկը մյուսի համար հանդիսանում են հավասար աստիճանի այլընտրանքներ, ապա ստացվում է, որ որևէ հարցի վերաբերյալ այդ մարմնի կողմից կայացված ակտը պետք է կրի պարտադիր իրավական ուժ: Այդ մասին է անմիջականորեն վկայում նաև Կոնվենցիայի նույն հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունը, որի համաձայն. «Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված վերջնական որոշումները պարտադիր են համապատասխան տեղեկատվությունը տիրապետող պետական մարմնի համար»: Հարկ ենք համարում նշել, որ Նախարարությանը, որպես բնապահպանության ոլորտի լիազոր մարմին, օրենսդրորեն վերապահված է պարտադիր բնույթի որոշումներ ընդունել՝ ի պաշտպանություն և պահպանություն բնությանը և բնությանն առնչվող ամենատարբեր հիմնահարցերի լուծման նպատակով: Ի հակադրումը վերոնշյալին, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից

ընդունվող որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ: Մա նշանակում է, որ Կոնվենցիայով նախատեսված անկախ և անկողմնակալ մարմնի դերը Նախարարության կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին վերապահելը ոչ միայն վկայում է Նախարարության կողմից իր կանոնադրական լիազորությունների կատարման նկատմամբ ոչ մասնագիտական մոտեցման, այլև, ինչ-որ տեղ, նույնիսկ այդ լիազորությունների կարևորությունն անտեսելու մասին՝ հաշվի առնելով երկրում բնապահպանական խնդիրների ավելացման փաստը:

Դեռևս չի լուծվել քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացման և ոչնչացման խնդիրը, մինչդեռ դա հանդիսանում է Նախարարության կանոնադրական խնդիրը: Տևական ժամանակ բնապահպանները ահազանգում էին, որ Սյունիքի Լիճք համայնքի բնակիչների ջրամատակարարման և ոռոգման ջրի խողովակաշարի մի մասը բաղկացած է «ասբեստ» տեսակի նյութից պատրաստված խողովակներից, որը, հանդիսանալով վտանգավոր քիմիական նյութ, սպառնալիք է ներկայացրել ոչ միայն համայնքի բնակիչների առողջության անվտանգությանը՝ առաջացնելով օնկոլոգիական հիվանդություններ, այլև շրջակա միջավայրին: Հայաստանի Հանրապետության կողմից 1999 թվականին վավերացված «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան կոնվենցիայի հավելված 1-ի համաձայն՝ «ասբեստ (փոշի և մանրաթել)» նյութը ընդգրկված է թափոնների խմբում: Ըստ Նախարարության՝ ինքնին նյութը վտանգավոր չէ, վտանգավոր են դրա մանրաթելերն ու փոշին և խողովակներից մանրաթել և փոշի չի կարող ջրի մեջ լցվել, այնուամենայնիվ բնակիչները և ոլորտի մի շարք մասնագետներ հակառակն էին նշում: Բնակիչները նաև հայտնում էին, որ գյուղում երիտասարդ տարիքում մահացությունները շատ են, որոնց պատճառն էլ քաղցկեղային հիվանդություններն են: Նրանք ահազանգում էին, որ պատճառը խմելու ջրի աղտոտվածությունն է, նույնիսկ ջրամբարն էր բաց: Իսկ Նախարարությունը որևէ կերպ չէր արձագանքում բնակիչների ահազանգերին, որևէ ուսումնասիրություն չի իրականացվել: Իհարկե, խնդիրը ինչ-որ չափով լուծվեց 2013 թվականին, երբ ասբեստե խողովակաշարի 2.5 կմ երկարությամբ հատվածը հիմնովին փոխվեց, սակայն որպես մտահոգություն շարունակեց մնալ այն հարցը, թե ապամոնտաժված ասբեստե խողովակները, որոնք արդեն հանդիսանում էին ասբեստ պարունակող թափոն, արդյոք դրանց հեռացումը կատարվել է պատշաճ կարգով: Հետագայում Նախարարությունը նաև չի հայտնել, թե իր կողմից արդյոք կատարվել է վերահսկողություն այդ թափոնների՝ օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ հեռացման նկատմամբ, որպեսզի իսպառ բացառվի ասբեստ պարունակող նյութից բխող վտանգը: Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2013 թվականի ընթացքում կատարված ստուգումների արդյունքում թափոնների գործածության ոլորտում հայտնաբերել է 6 խախտում, կազմվել է վարչական տուգանքի 4 որոշում 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման 4 արձանագրություն 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ընդհանուր գումարով: Նախարարությունն ընդունել է, որ ՀՀ-ում առաջացող թափոնները հիմնականում կուտակվում են կազմակերպություններում կամ տեղափոխվում են աղբավայրեր, որտեղ կուտակվելով՝ հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման

աղբյուր: Նախարարության կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում նշված խնդիրների լուծման նպատակով 2012 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Մաքուր արտադրության» հայեցակարգը, որը կոչված է նպաստելու քիմիական նյութերի և թափոնների անվտանգ կառավարմանը, էկոլոգիապես մաքուր արտադրության ներդրմանը, աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության խնդրի համալիր լուծմանը, արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, դեռևս քննարկման փուլում է գտնվում «Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ներգործության ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությունը», որը ներառում է մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ներգործության ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներն ու դրանց իրականացման ուղիները: Այնուամենայնիվ, արձանագրված արդյունքները ցույց են տալիս, որ ձեռնարկված միջոցները բավարար չեն պատշաճ կերպով կանոնակարգելու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումը: Հայաստանի համար շարունակում են արդիական մնալ վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները, քանի որ դեռևս լուծված չեն այդ թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասագերծման և ոչնչացման հարցերը:

Նախարարությունը մշակել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի նախագիծը՝ հաշվի չառնելով բնապահպանների կարծիքը, որ այն ավելի շատ ուղղված է բիզնես միջավայրի զարգացմանը, քան բնապահպանական խնդիրների լուծմանն ու կանխմանը: Ըստ Նախարարության հայտնած տեղեկատվության՝ ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվում են հանրային քննարկումներ, և նախագծերը տեղադրվում են Նախարարության պաշտոնական կայքում, ընդ որում՝ նախապես տեղադրվում է նախագիծը, այնուհետև տեղադրվում է շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկություններով լրամշակված տարբերակը, և վերջին փուլում տեղադրվում է իրավական ակտերի նախագծերի այն տարբերակները, որոնք ներկայացվում են ՀՀ Կառավարություն: Սակայն Պաշտպանին հասցեագրված բողոքների համաձայն՝ հանրության մասնակցությունը որոշումների կայացմանը հաճախ պարզապես կրել է ձևական բնույթ և, բացի այդ, որպես կանոն, չի ազդել ընդունվող որոշումների վրա: Նախ, իրավասու մարմինների կողմից չեն պահպանվում օրենքի պահանջները հանրային լուծման կազմակերպման և անցկացման վերաբերյալ: Այնուհետև, առկա չեն համապատասխան մեխանիզմներ հանրության կարծիքը կայացվող որոշումներում ներառելու համար: Մեծ խնդիր է նաև շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության և կայացվող որոշումների մատչելիությունը. հաճախ որևէ տարածքում գործունեության իրականացման վերաբերյալ ազդակիր համայնքը տեղեկանում է միայն այն ժամանակ, երբ փաստացի գործողություններ են սկսվում իրականացվել, մինչդեռ տեղեկատվության մատչելիության և հասարակության մասնակցության ապահովումը ոչ թե հանդիսանում է պետության հայեցողական գործողություն, այլ միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություն (Օրհուսի կոնվենցիա): Միաժամանակ, Շարունակվում է չլուծված մնալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշների սահմանման խնդիրը: Խնդրի մասին բարձրաձայնվել էր դեռևս նախորդ տարիներին, որին

Նախարարությունը հայտնել էր, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել էր ԱԺ-ի քննարկմանը: Ողջունելի է, որ նոր օրենքը հստակություն կմտցնի փորձաքննության իրականացման ժամկետների, նախատեսվող գործունեությունների ցանկի, փորձաքննության իրականացման համար պետական տուրքի սահմանման, անդրսահմանային ազդեցությունների մեջ և էականորեն կազդի փորձաքննական գործընթացի կատարելագործման վրա: Այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ ոլորտի մասնագետները բարձրաձայնում են օրենքի նախագծի մի շարք բացթողումների մասին՝ նշելով, որ նախագիծն ավելի շատ ուղղված է բիզնես միջավայրի զարգացմանը, քան բնապահպանական խնդիրների լուծմանն ու կանխմանը:

Դեռևս 2011 թվականի ապրիլի 28-ին կառավարության նիստում ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան, Արծվանիկ, Սևաքար, Աճանան, Չափնի և Սյունիք համայնքների հողատարածքների մի մասը ճանաչվել էր որպես գերակա հանրային շահ (ՀՀ կառավարության 28.04.2011թ. թիվ 627-Ն որոշում)՝ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքն ընդլայնելու նպատակով: Կրկին անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կառավարության որոշումն ընդունվել էր առանց բավարար հիմնավորման, քանի որ այդ ժամանակահատվածում Կառավարության կայքէջում փաստաթղթեր չկային, առանց բնապահպանական փորձաքննության եզրակացության, որի մասին հայտնել էր Նախարարությունը, հանրային քննարկմանը չէր ներկայացվել արդյունահանման ծավալների ընդլայնման ծրագիրը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության պարտադիր գնահատականով, և չէին անցկացվել հասարակական լուսմներ: 2013 թվականի հունիսին Քաջարանի բնակիչները և բնապահպանները, ի դեմս «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության, բաց նամակ էին հղել Նախարարությանը, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ծրագրում է ավելացնել հանքաքարի վերամշակումը տարեկան մինչև 25 միլիոն տոննայի և նոր սարքավորում է տեղադրում: Անհանգստություն էր առաջացրել ցուցանիշների նման մեծ աճը: Հատկանշական է, որ 2011 թվականի ընթացքում կոմբինատը վերամշակել էր 15 միլիոն տոննա հանքաքար, իսկ 2012 թվականին՝ 17 միլիոն տոննա: Ոլորտի մասնագետները հավաստել են, որ մեկ տարվա ընթացքում արտադրությունը նույնիսկ 2 միլիոն տոննայով ավելացնելը հավասարազոր է նրան, որ հանքարդյունաբերության մեջ նոր ձեռնարկություն հայտնվի: Բնակիչների մոտ ողջամիտ մտահոգություն է ծագել, որ առաջացող պոչանքների համար կընդլայնվի գործող Արծվանիկի պոչամբարը և կօգտագործվեն հանրային գերակա շահ ճանաչված Չափնի և Սևաքար գյուղերի տարածքները: Չնայած վերոնշյալին՝ Նախարարությունը նշված ժամանակահատվածում չի արձագանքել բնակիչների և բնապահպանների հնչեցրած մտահոգություններին:

2013թ. սեպտեմբերին բնապահպանական հասարակական կազմակերպություններն իրենց մտահոգությունն էին բարձրաձայնել այն մասին, որ մի քանի ամիսներ շարունակ Նախարարությունը չի հրապարակել մթնոլորտային սահմանային թույլատրելի արտանետումների վերաբերյալ տվյալները, որոնք գերազանցում են սահմանային թույլատրելի չափերը: Բողոքները վերաբերում էին նաև նրան, որ Նախարարության պաշտոնական կայքէջի «Էլեկտրոնային կառավարում» բաժինը, որտեղ տեղադրված էր

գործող ձեռնարկությունների, կիրառվող տեխնոլոգիաների, վնասակար նյութերի արտանետումների քանակի և բաղադրության, օդում աղտոտվածության տարածման հաշվարկների մասին տեղեկատվությունը, չէր գործում: Այնինչ, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 27.12.2012թ. թիվ 1673 որոշման դրույթների համաձայն՝ սահմանային թույլատրելի արտանետումներով նախագծերը պետք է ներկայացված լինեն էլեկտրոնային տեսքով: Նշված նախագծերը հրապարակելը, նախ և առաջ կարևոր է, որպեսզի հնարավորություն լինի նախապես կանխել կամ համապատասխան միջոցներ ձեռնարկել պաշտպանվելու բարձր կոնցենտրացիաներով վնասակար նյութերի միանգամյա արտանետումներից, որոնք ավերգիկ հիվանդությունների առաջացման պատճառ կարող են հանդիսանալ: Միայն բնապահպանների կողմից հարցի բարձրաձայնման արդյունքում Նախարարության կայքէջում նոյեմբերից սկսեցին տեղադրվել համապատասխան փաստաթղթերը, որոնցից որոշները (մասնավորապես՝ «ՇԱՐՈՒՐ» ԱԿ-ի և «ԷՓԻՋԻ ԼԷԲՍ ԷՅԷՄ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված նախագծերը) տեղ-տեղ անընթեռնելի են՝ տեխնիկական թերացումների պատճառով, ինչը, ըստ էության, պետք է վերահսկվի Նախարարության կողմից:

2010 թվականի նոյեմբերի 25-ին ընդունվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1551-Ն որոշումը, սակայն դրա կատարման շրջանակներում Նախարարության կողմից մշակված «Բնապահպանական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրական հիմքերի և ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 991-Ա որոշումը Վարչապետի կողմից ընդունվել է միայն 2013 թվականի հոկտեմբերի 30-ին: Նշված որոշմամբ նախատեսվում է 2014-2015 թվականների ընթացքում մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» և «Հանրակրթության մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը: Սակայն հաշվի առնելով այն, որ Կառավարության թիվ 1551-Ն որոշումն ընդունվել է դեռևս 2010 թվականին և, ըստ էության, միջոցառումների ծրագրի ավարտը մոտենում է ընդամենը 1 տարուց, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ երկրում բնապահպանական խնդիրների առկայության դեպքում անհրաժեշտ է ապահովել բնակչության, առավել ևս խոցելի տարածքների բնակչության բարձր իրազեկվածության նախադրյալներ՝ գտնում ենք, որ էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրական հիմքերի մշակումը պետք է կատարվեր դեռևս 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում:

Առաջարկություններ

- Ձեռնարկել արդյունավետ կանխարգելիչ միջոցներ անօրինական ծառահատումների կանխման նպատակով, այդ թվում՝ խստացնելով օրենսդրությամբ նախատեսված պատժի չափերը:
- Ձեռնարկել միջոցներ՝ կանխելու բնության հատուկ պահպանվող տարածքներում անօրինական որսի դեպքերը՝ հաշվի առնելով այն, որ շատ դեպքերում տուգանված իրավախախտները տուգանքը վճարելուց հետո կրկնում են նույն իրավախախտումը:
- Հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի որսագողության դեմ պայքարի աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով նախաձեռնել համապատասխան օրենսդրական բարեփոխումներ:
- Պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ լուծելու ՀԷԿ-երից ջրառի վերաբերյալ շարունակական խնդիրները:
- Ձեռնարկել միջոցներ՝ Նախարարությանը ահազանգվող խնդիրները (օրինակ, Արմավիրի մարզի Թաիրով գյուղի «Զվարթնոց» օդանավակայանին հարող տարածքը կեղտաջրերով լցված լինելու խնդիրը) հնարավորինս սեղմ ժամկետներում լուծելու համար:
- Օրենքով նախատեսված բոլոր հարցերում համագործակցել բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ՝ պահպանելով օրենսդրության պահանջները:
- Պարբերաբար բնապահպանական ստուգումներ իրականացնել Թեղուտում, ինչպես նաև փորձաքննության ենթարկել նոր մշակված նախագիծը, որի հիման վրա փաստացիորեն շահագործվում է Թեղուտի հանքավայրը:
- Հետևողական գտնվել բնապահպանական հասարակական կազմակերպությունների և այլ շահառու անձանց (ինչպիսիք են, օրինակ, Քաջարան գյուղի բնակիչները) կողմից բարձրացված բոլոր բնապահպանական խնդրահարույց հարցերի վերաբերյալ՝ դրանց պատշաճ կարգով արձագանքելու միջոցով: Միջոցներ ձեռնարկել օդի մոնիթորինգի դիտակայան տեղադրել Քաջարան գյուղում՝ օդի աղտոտվածությունը պարբերաբար ստուգելու և անկախ օդի աղտոտվածության սահմանային թույլատրելի նորմաների տիրույթում գտնվելու մասին արձանագրված արդյունքներից՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով՝ հաշվի առնելով գյուղի բնակիչների շարունակական բողոքները:
- Ի կատարումն Օրհուսի 1998թ. կոնվենցիայի 9-րդ հոդվածի պահանջների՝ միջոցներ ձեռնարկել Կոնվենցիայով նախատեսված պետական կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորության ապահովման, ինչպես նաև՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծման ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել պատշաճ ձևով կանոնակարգելու և լուծելու թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրամշակել՝ հաշվի առնելով այսօր առկա բնապահպանական խնդիրները և ոլորտի մասնագետների կողմից ներկայացված ողջամիտ և հիմնավոր առաջարկությունները:
- Պատշաճ հետևողականություն ցուցաբերել բնապահպանների կողմից ահազանգվող այն խնդիրների վերաբերյալ, որոնց լուծումը, թեև Նախարարության անմիջական պարտականությունը չի, սակայն բխում է Նախարարության առջև դրված կանոնադրական խնդիրների և նպատակների բովանդակությունից:
- Հետևողական լինել մթնոլորտային սահմանային թույլատրելի արտանետումներով նախագծերի տվյալները պատշաճ կարգով ժամանակին հասարակությանը իրազեկելու ուղղությամբ:
- Ապահովել բնակչության, հատկապես խոցելի տարածքների բնակչության բարձր իրազեկվածության նախադրյալներ էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրական հիմքերի ներդրման ու համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածքներ հիմնելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ապահովում է ընտրությունների կազմակերպման և անցկացման աշխատանքները: Հանձնաժողովը հավաքում, մշակում և վերլուծում է ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հրապարակում պաշտոնական որոշումները և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանը 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական և 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընթացքում ի հայտ եկած խնդիրների և արձանագրված խախտումների վերաբերյալ՝ կատարելով մանրամասն և համապարփակ ուսումնասիրություն, ներկայացրել է արտահերթ զեկույցներ, որտեղ մանրակրկիտ ներկայացված են հայտնաբերված խնդիրներն ու խախտումները:

2013 թվականին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Ընտրությունների ընթացքում ստացվել էին ընտրախախտումների վերաբերյալ 300-ից ավել անազան գեր, օրինակ՝ ընտրակաշառք բաժանելը, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, լցնումը, լրագրողների և դիտորդների գործունեության խոչընդոտելը:
- Ընտրությունների ընթացքում գրանցվել էին վարչական ռեսուրսների չարաշահման դեպքեր, ինչպիսիք են՝ պետական ծառայողների լիազորությունները թեկնածուներից մեկի օգտին ծառայեցնելը, պետական ծառայողներին ընտրական քարոզարշավին ներգրավելը:
- Հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրություններին մասնակցելը չի եղել մատչելի, քանի որ հիմնականում ընտրատեղամասերը չեն ունեցել թեքահարթակներ, ինչպես նաև ընտրական օրենսգրքով նախատեսված չեն այդ մարդկանց համար հատուկ կարգավորումներ:
- Հակառակ օրենքի պահանջի՝ բազմաթիվ դեպքերում անձնագրերի դրոշմակնիքը հնարավոր է եղել հեշտորեն հեռացնել անձնագրերից: Չնայած նշվածին, Հանձնաժողովի կողմից չի քննարկվել դրոշմակնիքման փոխարեն մեկ այլ ավելի արդյունավետ մեթոդի ներդնման հարցը, օրինակ՝ ընտրողի մատների թանաքոտումը:
- Արձանագրվել է, որ այն տեղամասերում, որտեղ մասնակցությունը միջինից բարձր էր, հաղթած թեկնածուին կողմ քվեարկած ձայներն էականորեն մեծ թիվ են կազմել:
- Օրենսդրական բացի հետևանքով շարունակում է չլուծված մնալ դատապարտյալների ընտրելու իրավունքի ապահովման հարցը: Խնդիրն այն է, որ

բոլոր դատաբարտյալները, անկախ իրենց կատարած հանցագործության ծանրությունից, զրկված են ընտրելու իրավունքից:

- Բացակայել է ընտրությունների արդյունքների բողոքարկման արդյունավետ համակարգ, քանի որ, որպես կանոն, անձինք տեղեկացված չեն եղել օրենքով նախատեսված Վարչական դատարան բողոքարկելու հնարավորություններից, կամ դատարանը մերժել է իրենց բողոքները:

Արձանագրված դրական զարգացումները

- Հանձնաժողովին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրման ընթացքում խնդիրների լուծման ժամանակ էականորեն նվազել է իրավական ձևապաշտությունը (ֆորմալիզմը):
- Պարզեցվել է ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու և դիտորդական առաքելություն իրականացնելու որակավորում շնորհելու կարգը և գործընթացը:
- Էապես բարելավվել են ըտրությունների անցկացման վերաբերյալ մասնագիտական դասընթացների որակը և կազմակերպումը:

Ընդհանուր վերլուծություն

Ընտրությունների ընթացքում ստացվել էին ընտրախախտումների վերաբերյալ 300-ից ավել ահազանգեր, օրինակ՝ ընտրակաշառք բաժանելը, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, լցոնումը, լրագրողների և դիտորդների գործունեության խոչընդոտելը: Ընտրությունների ընթացքում ստացվել էին ընտրակաշառքի բաժանման շուրջ 200 ահազանգեր (2013թ. նախագահական ընտրություններ՝ 100, 2012թ. խորհրդարանական ընտրություններ՝ 102): Ընտրակաշառքների բաժանման պրակտիկայի վերացման նպատակով դեռևս 2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների առկայությունից ելնելով՝ ԿԸՀ-ի կողմից առաջարկվել էր, որպես ընտրակաշառքի դեմ պայքարի արդյունավետ միջոց, նախատեսել դրույթ, ըստ որի՝ ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնողներն ազատվեն քրեական պատասխանատվությունից: Մինչդեռ վերջինիս կողմից չի ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ կոնկրետ հոդվածի փոփոխությունը՝ համապատասխան ձևակերպմամբ: Հաշվի առնելով ընտրակաշառքների կանխարգելման կարևորությունը՝ հարկավոր է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին, սակայն նման դրույթ նախատեսված չէ կաշառք ստացող անձի համար: Ուստի հարկավոր է նաև օրենսդրությամբ սահմանել դրույթ թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով կաշառք ստանալու համար, կաշառքը ստացողի կողմից ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին:

Բացի այդ, 2013թ. նախագահական ընտրությունների քվեարկության օրը միջազգային դիտորդները նաև զեկուցել էին ընտրատուփի լցուման հնարավոր չորս դեպքերի մասին, իսկ Պաշտպանը ստացել էր ընտրակաշառքի, մեկից ավելի անգամ քվեարկելու և քվեատուփերի լցուման 25 ահազանգեր, որոց մասին պատշաճ կարգով տեղյակ է պահվել համապատասխան իրավապահ մարմիններին: Ընտրությունների ընթացքում ի հայտ եկած խնդիրների և արձանագրված խախտումների վերաբերյալ առավել մանրամասն և համապարփակ ուսումնասիրություն ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական և 2013թ. փետրվարի 18-ի նախագահական արտահերթ զեկույցներում:

Ընտրությունների ընթացքում գրանցվել էին վարչական ռեսուրսների չարաշահման դեպքեր, ինչպիսիք են՝ պետական ծառայողների լիազորությունները թեկնածուներից մեկի օգտին ծառայեցնելը, պետական ծառայողներին ընտրական քարոզարշավին ներգրավելը:

Ընտրական օրենսգիրքը արգելում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Մի շարք թեկնածուներ հրապարակավ իրենց մտահոգություններ էին արտահայտել վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի կապակցությամբ: Ըստ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցների՝ քարոզարշավի կանոնակարգումները չէին ապահովել բավարար պաշտպանություն վարչական ռեսուրսի չարաշահումից և չէին նպաստել պետության և իշխող կուսակցության միջև հստակ բաժանմանը: Վարչական ռեսուրսի օգտագործման դեպքերը խիստ մտահոգիչ են նաև այնքանով, որ դրանք կասկածի տակ են դնում պետության և քաղաքական կուսակցության բաժանման հարցը՝ ամրագրված ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերության մեջ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ երկարաժամկետ դիտորդները փաստել են վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի առկայություն՝ հոգուտ գործող Նախագահի: Վերջիններիս պնդմամբ՝ դա արտահայտվել է հետևյալ ձևերով. վերադասների կողմից պետական ծառայողների վրա ճնշման գործադրում՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով (13 դեպք), պետական ծառայողների ներգրավում ընտրական քարոզարշավին (16 դեպք), նախընտրական շտաբերի տեղակայում այն շինություններում, որտեղ նաև գտնվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և ընտրական հանձնաժողովները, պետական միջոցների օգտագործում քարոզչության նպատակով (11 դեպք): Վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ խնդիրները մեր կողմից արձանագրվել էին նաև Մարդու իրավունքների պաշտպանի թե 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների, և թե 2013 և 2008 թվականների նախագահական ընտրությունների վերաբերյալ արտահերթ զեկույցներում: Ընտրությունների գործընթացի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև մի քանի թաղամասերում կասկածելի գործողություններ կատարող տեղաբնակ տղամարդկանց անթույլատրելի ակտիվությունը, որի պատճառով եղել են քաղաքացիների անհարկի կուտակումներ, ընտրողների

ուղղորդման կասկածներ, ընտրական գործընթացի մի քանի մասնակիցների աշխատանքի խոչընդոտում և հոգեբանական ճնշում:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրություններին մասնակցելը չի եղել մատչելի, քանի որ հիմնականում ընտրատեղամասերը չեն ունեցել թեքահարթակներ, ինչպես նաև ընտրական օրենսգրքով նախատեսված չեն այդ մարդկանց համար հատուկ կարգավորումներ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրացվել է հաշմանդամություն ունեցող ընտրողների՝ ընտրություններին մասնակցելու մատչելիության հիմնախնդիրը: Մասնավորապես, 2013թ փետրվարի 18-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների ընթացքում մի շարք ահազանգերով ստացված տեղեկությունների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված մշտադիտարկումների արդյունքները վկայում են այն մասին, որ հանրապետության ընտրական տեղամասերի մեծամասնությունը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց մուտք ու ելքի համար: Այսինքն, հաշմանդամություն ունեցող անձինք փաստացի զրկվում են իրենց ընտրելու իրավունքից: Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ ընտրությունների ընթացքում առկա էին ընտրատեղամասեր, որտեղ տեղադրված չէին թեքահարթակներ կամ այլ սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրականացումը: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համաձայն՝ պետությունը պարտավորվում է ապահովել, որ քվեարկության ընթացակարգերը, վայրերը և միջոցները լինեն մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ ՀՀ Սահմանադրությունը սահմանում է պետության պարտավորությունը՝ խթանելու հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին, որն իր մեջ ներառում է նաև նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրություններին մասնակցելու իրավունքը: ՀՀ Ընտրական օրենսգրքը չի նախատեսում նաև որևէ հստակ դրույթ, որը կապահովեր բուժհաստատությունում չգտնվող, սակայն հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ընտրական տեղամաս այցելելու հնարավորություն չունեցող անձանց կողմից իրենց ընտրական իրավունքը մատչելի ձևով իրականացնելու համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համապատասխան ընտրական օրենսդրությունները հստակ կարգավորում և/կամ ապահովում են հաշմանդամների ընտրելու իրավունքի իրականացման մատչելիությունը: Որոշ երկրներում հաշմանդամություն ունեցող անձանց անունները ընդհանուր ընտրացուցակներից հանվում և ներառվում են շրջիկ արկղի համար նախատեսված ցուցակում (Վրաստան, Ուկրաինա, Ռուսաստան, Դանիա, Ռումինիա, Լատվիա): Ռուսաստանի Դաշնության օրինակում օրենսդիրը նույնիսկ նախատեսել է հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորություն՝ մինչև քվեարկության օրվա ավարտն առնվազն 6 ժամ առաջ անձամբ կամ այլ անձանց միջոցով բանավոր կամ գրավոր կերպով դիմել տարածքային ընտրական հանձնաժողով՝ իրենց գտնվելու վայրում քվեարկելու համար: Որոշ երկրներում նման անձինք կարող են քվեարկել սուրհանդակի միջոցով, ով կարող է լինել նաև այդ անձի ընտանիքի անդամը կամ նրան խնամողը (Շվեդիա): 2011 թվականի հունիսի 30-ին Հանձնաժողովը ընդունել է թիվ 19-Ն որոշումը, ըստ

որի, շարժասայլակով տեղաշարժվող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով սահմանվել է հատուկ կարգ: Համաձայն տվյալ որոշման՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղեկանալով, որ տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ է գտնվում շարժասայլակով տեղաշարժվող ընտրող, տեղամասային կենտրոնում հայտարարում է այդ մասին, մոտենում է ընտրողին և նրան բացատրում վերոնշյալ որոշման համապատասխան քվեարկությանը մասնակցելու կարգը: Տվյալ կարգի համաձայն շարժասայլակով տեղաշարժվող ընտրողի համաձայնությամբ ընտրելու գործընթացը իրականացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, վստահված անձանց կամ այլ քաղաքացիների կողմից, բացառությամբ քվեաթերթիկում համապատասխան նշում կատարելը, որը իրականացվում է տեղամասային կենտրոնի տեղակայման շենքից դուրս՝ ընտրողի կողմից: Այսինքն, այդ ամբողջ գործընթացի ընթացքում շարժասայլակով տեղաշարժվող ընտրողը գտնվում է տեղամասային կենտրոնի շենքից դուրս, և, արդյունքում, արդյունավետ կերպով չի ապահովվում վերջինիս ընտրելու իրավունքը, և միաժամանակ դրսևորվում է խտրական մոտեցում, քանի որ տվյալ ընտրողի նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում՝ ի տարբերություն այլ ընտրողների: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2012 թվականին բազմիցս բարձրաձայնվել է, ինչպես տեղամասային կենտրոնի տեղակայման շենքերի հաշմանդամ ընտրողների համար հասանելի և մատչելի լինելու պարտադիր պահանջը, և գտնում ենք, որ վերոնշյալ որոշմամբ սահմանված կարգը առհասարակ չի բխում Սահմանադրությամբ ամրագրված պարտավորությանը, այն է՝ խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին:

Հակառակ օրենքի պահանջի՝ բազմաթիվ դեպքերում անձնագրերի դրոշմակնիքը հնարավոր է եղել հեշտորեն հեռացնել անձնագրերից: Չնայած նշվածին, Հանձնաժողովի կողմից չի քննարկվել դրոշմակնքման փոխարեն մեկ այլ ավելի արդյունավետ մեթոդի ներդրման հարցը, օրինակ՝ ընտրողի մատների թանաքոտումը: Խնդիրն այն է, որ անձնագրերի դրոշմակնքման օրենսդրական պահանջը, որպես մեկից ավելի անգամ քվեարկելը բացառելու երկաստիճան համակարգի մաս, չի ծառայել իր նպատակին, քանի որ օգտագործված թանաքը հեշտորեն հնարավոր էր հեռացնել անձնագրերից: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում: Սակայն անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման գործընթացի վերաբերյալ ստացվել էին ահազանգեր ինչպես 2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում (64 ահազանգեր), այնպես էլ՝ 2013թ. նախագահական ընտրությունների ժամանակ (68 ահազանգեր): Կրկին ահազանգերը վերաբերել էին դրոշմակնիքի կամ շուտ անհետանալուն, կամ սահմանված 12 ժամից ավել մնալուն: Ահազանգերը վերաբերել էին նաև նրան, որ դրված կնիքները, անձանց ցանկության դեպքում, հեշտությամբ հնարավոր էր ջնջել: Նշված իրավիճակը նպաստավոր պայմաններ էր ստեղծում իրավախախտների կողմից ընտրակեղծիքներ կատարելու համար: Միջազգային մի շարք կազմակերպություններ դրական էին գնահատել 2011թ. ընդունված նոր Ընտրական օրենսգրքի մեջ դրոշմակնքման վերաբերյալ դրույթի ներառումը, քանի որ այն պետք է

հանդիսանալով ընտրախախտումների կանխարգելման մեխանիզմ: Մակայն ԿԸՀ-ի կողմից ընտրությունների ընթացքում այդպես էլ հնարավոր չի եղել ստանալ այնպիսի մի նյութ, որը կհամապատասխաներ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին և միջազգային չափանիշներին: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտրախախտումների կանխարգելման արդյունավետ մեխանիզմ է հանդիսանում ընտրողների ստուգման երկաստիճան համակարգը, այսինքն՝ ոչ միայն ընտրական ցուցակների կազմման, վարման, դրանց հրապարակայնության, ընտրական տեղամասում ընտրողների ցուցակում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալների գրանցման կանոնակարգումները, այլև դրանց դրոշմակնքումը կամ ընտրողի մատների թանաքոտումը (Եգիպտոս, Լատվիա, Հնդկաստան, Մեքսիկա, Պերու, և մի շարք այլ երկրներ): Դեռևս 2008թ. Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով դրոշմակնքման հարցին, առաջարկել էր օգտագործել մատների թանաքոտման ինստիտուտը՝ մտահոգիչ համարելով այն, որ անձնագրում դրվող դրոշմակնիքը կարող է չանհետանալ: 2011թ. հոկտեմբերի 17-ի Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ եզրակացության մեջ նշվել էր, որ դրոշմակնիքի թանաքը պետք է անհետանա մոտավորապես 12 ժամ հետո, ինչը կարող է լուծել անձը հաստատող փաստաթղթերում կնիքի առկայության պատճառով քաղաքացիների հնարավոր ահաբեկման (հետապնդման, ճնշումների) խնդիրները: Իսկ 2012թ. ԵՄԽՎ-ն հայտնել է իր կարծիքը Հայաստանում ընտրությունների ժամանակ քվեարկության ընթացքում ընտրախախտումների դեմ պայքարի որպես մեխանիզմ ընտրված անձը հաստատող փաստաթղթերում դրվող դրոշմակնիքի ինստիտուտի վերաբերյալ՝ նշելով, որ նման խնդրի լուծման համար առավել դասական և փորձված միջոց է ընտրողների մատների թանաքոտումը: ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, Ընտրական օրենսգրքի խախտումների, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 01.08.2012թ. ներկայացված հաղորդագրությամբ առաջարկվել էր հանել Ընտրական օրենսգրքի այն դրույթը, որը նախատեսում է ընտրողի անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքում այնպիսի նյութով, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում: Մակայն ելնելով ողջ վերոգրյալից և միջազգային փորձից կարելի է եզրակացնել, որ քննարկվող խնդրի արդյունավետ լուծում չի կարող հանդիսանալ ընտրողների ստուգման երկաստիճան համակարգի վերացումը: Վերոնշյալ խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջարկություն էր ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, որպեսզի վերջիններս պարզեն, թե հնարավոր է դրոշմակնքման համար այնպիսի նյութի ձեռքբերումը, որը կհամապատասխանի ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին և միջազգային չափանիշներին:

Արձանագրվել է, որ այն տեղամասերում, որտեղ մասնակցությունը միջինից բարձր էր, հաղթած թեկնածուին կողմ քվեարկած ձայներն էականորեն մեծ թիվ են կազմել: Որպես էական և մտահոգիչ խնդիր՝ ընդդիմադիրուժերի և որոշ միջազգային կազմակերպությունների կողմից բարձրացվել էր ընտրողների մասնակցության թվի և ընտրություններում արդեն հաղթած թեկնածուին կողմ քվեարկած ձայների

հարաբերակցությունը այն ՏՀՀ-ներում, որտեղ միջինից բարձր էր ընտրողների մասնակցությունը: Այսպես, համաձայն որոշ միջազգային կազմակերպությունների զեկույցներում տեղ գտած տվյալների՝ ԿՀՀ-ի կողմից հրապարակված արդյունքների վերլուծությունը սերտ հարաբերակցություն էր ցույց տվել ընտրություններին մասնակցության և ընտրություններում արդեն հաղթած թեկնածուի կողմից ստացված ձայների քանակի միջև՝ այդ թվում միջինից բարձր մասնակցություն ունեցած ՏՀՀ-ներում ևս ձայների մեծ բաժինը եղել էր ընտրություններում արդեն հաղթած թեկնածուի օգտին: 1988 ընտրական տեղամասերից 1746-ը ունեցել էր 300 կամ ավելի գրանցված ընտրողներ: Դրանցից 144-ում ընտրողների մասնակցությունը գերազանցել էր 88 տոկոսը, ինչը անհավանականորեն բարձր էր թվում, այս տեղամասերից 115-ում ընտրություններում արդեն հաղթած թեկնածուն ստացել էր ձայների 80 տոկոսից բարձր: 303 տեղամասերից 198-ում, որտեղ մասնակցությունը եղել էր 70-80 տոկոս, ընտրություններում արդեն հաղթած թեկնածուն ստացել էր ձայների ավելի քան 70 տոկոսը: 249 տեղամասերից 40-ում, որտեղ մասնակցությունը եղել էր 50 տոկոսից ցածր, ընտրություններում արդեն հաղթած թեկնածուն ստացել էր 50 տոկոսից ավել: Ընտրություններում արդեն հաղթած թեկնածուի բարձր արդյունքներ ունենալու միտումը, այն տեղամասերում, որտեղ մասնակցությունը բարձր էր եղել, ցույց է տալիս քվեարկության և ձայների հաշվարկման հետ կապված կոպիտ խախտումների հնարավորությունը: Սա մտահոգություններ է առաջացնում ընտրական գործընթացների արդարության վերաբերյալ:

Օրենսդրական բացի հետևանքով շարունակում է չլուծված մնալ դատապարտյալների ընտրելու իրավունքի ապահովման հարցը: Խնդիրն այն է, որ բոլոր դատապարտյալները, անկախ իրենց կատարած հանցագործության ծանրությունից, զրկված են ընտրելու իրավունքից: ՀՀ ընտրական օրենսգրքի և ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ընտրել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քաղաքացիները: Այնինչ, նշված հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներում հայտնել է իր հստակ դիրքորոշումը, որի համաձայն՝ բոլոր դատապարտված անձանց ընտրելու իրավունքից զրկումը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Առաջին լրացուցիչ արձանագրության 3-րդ հոդվածին: Դատապարտված անձնաց ընտրելու իրավունքը որևէ կերպ սահմանափակված չէ Շվեդիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Ֆինլանդիայի, Դանիայի, Իռլանդիայի, Լատվիայի, Լիտվիայի, Մոլդովայի, Խորվաթիայի, Կիպրոսի, Մոնտենեգրոյի, Սերբիայի, Սլովենիայի, և Ուկրաինայի ընտրական օրենսդրություններով: ՄԻԵԿ միայն 7 անդամ պետություններում են դատապարտված անձինք ամբողջությամբ զրկված սույն իրավունքից, այդ թվում՝ Հայաստանում: 2011 թվականին ՀՀ ԱԺ կողմից ընդունված Ընտրական օրենսգրքում նշված դրույթի նախատեսման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը հայտնել էր, որ ընտրելու իրավունքի (նաև ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում) նման սահմանափակող դրույթ նախատեսելու հետ մեկտեղ բացակայում է այն դրույթը, որը կհստակեցներ դատապարտված անձին ընտրելու իրավունքից զրկելու հատուկ դեպքերը: Վենետիկի հանձնաժողովի «Դրական ընտրական փորձի» կանոնները սահմանում են, որ ընտրական

իրավունքից զրկումը պետք է հիմնաված լինի «ծանր հանցագործության համար քրեական դատապարտման» վրա և առաջարկում են, որ «քաղաքական իրավունքների բացառումը պետք է կատարվի միայն դատարանի հստակ վճռով»: Այս համատեքստում միջազգային փորձը ցույց է տալիս, որ դատարանի վճռով ընտրելու իրավունքի սահմանափակման պրակտիկան առկա է ՄԻԵԿ որոշ անդամ պետություններում, օրինակ՝ Ավստրիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Նիդեռլանդներում, Լեհաստանում, Պորտուգալիայում և այլն: Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ Ընտրական օրենսգրքի այն դրույթը, որը զրկում է բոլոր դատապարտյալներին ընտրելու իրավունքից, անկախ նրանց կողմից կատարված հանցագործությունների ծանրության աստիճանից, կարիք ունի վերանայման:

Բացակայել է ընտրությունների արդյունքների բողոքարկման արդյունավետ համակարգ, քանի որ, որպես կանոն, անձինք տեղեկացված չեն եղել օրենքով նախատեսված Վարչական դատարան բողոքարկելու հնարավորություններից, կամ դատարանը մերժել է իրենց բողոքները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ ընտրական գործերը միանձնյա քննում և լուծում է վարչական դատարանի դատավորը, բացառությամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների, թեկնածուների ու կուսակցությունների ընտրական ցուցակները, ցուցակներում ընդգրկված թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերի, որոնք ըստ էության քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով: ՀՀ սահմանադրական դատարանը իր 14.03.2013թ. թիվ 62-Ա որոշման մեջ հստակ սահմանել է, որ ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված: Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությամբ, Սահմանադրական դատարանը իրավասու չէ քննության առարկա դարձնել այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են և վերանայման ենթակա չեն: Այսպիսով, ստացվում է, որ ՀՀ վարչական դատարանը լիազորվել է, որպես ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումները ըստ էության լուծող մարմին: Վարչական դատարանը, նշյալ գործերի քննության սահմաններում, օժտված է լիազորությունների լայն շրջանակով, մասնավորապես՝ իրավասու է պարզել քվեարկության իրական արդյունքներն այնպես, ինչպես դա կարող էր անել ընտրական հանձնաժողովն արդյունքներն ամփոփելիս: Սակայն, թե 2012 թվականի խորհրդարանական և թե 2013 թվականի նախագահական ընտրություններից հետո ՀՀ Վարչական դատարան ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումներ գրեթե չեն ներկայացվել, ինչը վկայում է այն մասին, որ Վարչական դատարանի նկատմամբ բացակայում է հասարակական վստահությունը:

Թեև թեկնածուների գրանցման ընթացքում օրենքի որևէ խախտում չի արձանագրվել, այնուամենայնիվ, առկա են օրենսդրական որոշ թերի կարգավորումներ: Դեռևս 2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում ծագել էր խնդիր՝ կապված որպես թեկնածու գրանցվելու օրենսդրական պահանջներից մեկի՝ վերջին հինգ (պատգամավորի թեկնածու գրանցվելու համար) կամ տասը տարում (նախագահի թեկնածու գրանցվելու համար) ՀՀ-ում մշտապես բնակվելու պահանջի բավարարման հետ, քանի որ Ընտրական օրենսգիրքը չէր հստակեցնում, թե արդյոք վերջին 5-10 տարում ՀՀ-ում մշտապես բնակվելը պետք է լինի *անընդմեջ*: ՀՀ ընտրական օրենսգիրքը թեկնածուների գրանցման համար չի որոշակիացնում «վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու» եզրույթը, հետևաբար՝ օրենքի այդ պահանջը լիարժեք և հստակ ձևակերպված չէ: «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշմամբ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող ՀՀ քաղաքացին պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել ՀՀ համապատասխան հյուպատոսական ծառայությանը կամ դիվանագիտական ներկայացուցչությանը, որը յոթնօրյա ժամկետում այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է կենտրոնական ռեգիստր վարող մարմնին: Պրակտիկայում վերոնշյալ դրույթի միջոցով է մեկնաբանվել «վերջին հինգտար տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող» եզրույթը: Այնինչ, Ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ ընտրական իրավունքը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտրական օրենսգրքով:

Առաջարկություններ

- Միջոցներ ձեռնարկել համապատասխան օրենքի նախագիծ մշակելու ուղղությամբ, որով կնախատեսվի թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով կաշառք ստանալու համար, կաշառքը ստացողի կողմից ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին դրույթ:
- Բարձրացնել վերահսկողությունն ինչպես ընտրական տեղամասերում ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչների, այնպես էլ նախընտրական քարոզարշավի իրականացման ընթացքում թեկնածուների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից չարաշահումները և վարչական ռեսուրսների օգտագործումը բացառելու նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել «վարչական ռեսուրս» եզրույթը ՀՀ օրենսդրությամբ սահմանելու և դրա դեմ պայքարելու նոր մեթոդներ մշակելու ուղղությամբ:
- Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հարմարեցնել տեղամասային կենտրոնի տեղակայման շենքերը թեքահարթակներով և նման այլ միջոցներ կիրառելով: Ինչպես նաև, Ընտրական օրենսգրքում նախատեսել բուժհաստատությունում չգտնվող, սակայն հիվանդության կամ հաշմանդամության

պատճառով ընտրական տեղամաս այցելելու հնարավորություն չունեցող անձանց կողմից իրենց ընտրական իրավունքի մատչելի ձևով իրականացումը կարգավորող հստակ մեխանիզմներ:

- Որպես ընտրախախտումների կանխարգելման առավել արդյունավետ մեխանիզմ և անձը հաստատող փաստաթղթում դրոշմակնիքի թանաքի անհետացման խնդրի լուծում՝ նախատեսել ընտրողների մատների թանաքոտումը՝ որպես ընտրողների ստուգման երկաստիճան համակարգ:
- ՀՀ ընտրական օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել դրույթ, որը կհատակեցնի դատապարտյալների ընտրելու իրավունքից զրկելու օրենքով սահմանված դեպքերը:
- Միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու ընտրությունների արդյունքների արդյունավետ բողոքարկման համակարգ:
- ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով հստակեցնել պատգամավորի/նախագահի թեկնածուների գրանցման համար սահմանված նստակեցության ցենզի պահանջը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաև վերահսկել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը՝ դրանով իսկ նպաստելով արտահայտվելու ազատության իրականացմանն ու տեղեկատվության ազատության ապահովմանը:

2013 թվականին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Մշտադիտարկումների արդյունքում բացահայտվել են հեռուստաընկերությունների կողմից գովազդային օրենսդրության պահանջների խախտման բազմաթիվ դեպքեր, որոնք ՀՌԱՀ-ի կողմից չեն արձանագրվել:
- Հեռուստահեռարձակման դաշտում առկա է եղել բազմակարծության պակաս, իսկ ՀՌԱՀ-ի կողմից իրականացված հսկողությունը այս պահանջի պահպանման նկատմամբ եղել է ակնհայտորեն անբավարար:
- Չնայած նրան, որ 2015թ. հուլիսը սահմանվել է որպես անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետ, թվայնացման գործընթացի իրավական կանոնակարգումը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով դեռևս չի իրականացվել:
- Հեռարձակման ոլորտի օրենսդրական թերությունները, թվայնացման գործընթացի երկարաձգումը խոչընդոտել են հեռուստաընկերությունների թափանցիկ գործունեության ապահովման և հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության ապահովմանը:
- Թեև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՌԱՀ-ը կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի օրենսդրական նախագծերի մշակմանը, ՀՌԱՀ-ի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել հակամենաշնորհային երաշխիքների ապահովման ուղղությամբ արդյունավետ օրենսդրական կարգավորումների մշակումը նախաձեռնելու ուղղությամբ:
- Լիարժեքորեն չի ապահովվել խուլուհամր հանրության համար տեղեկատվության ստացման մատչելիությունը՝ հեռուստաընկերությունների մեծամասնության կողմից լուսագրերը որպես սուրբոթարգանության այլընտրանք կիրառելու արդյունքում: Խնդրի արդյունավետ կարգավորման նպատակով ՀՌԱՀ-ի կողմից այս ուղղությամբ չեն իրականացվել ուսումնասիրություններ և չեն ձեռնարկվել համարժեք քայլեր:

- Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչների սահմանված չլինելու արդյունքում առկա է եղել ցերեկային ժամերին էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող հաղորդումների ցուցադրման վտանգ, որին ՀՌԱՀ-ը չի արձագանքել դրանց մշակված չլինելու հիմնավորմամբ:

Արձանագրված դրական զարգացումները

- 2013 թվականին տեղի ունեցած ընտրությունների ընթացքում ապահովվել են հավասար պայմաններ մասնակցող թեկնածուների և/կամ նրանց ներկայացուցիչների համար, ինչպես նաև հատկացված էթերաժամանակը բավարարել է նրանց նախընտրական քարոզարշավի ապահովման համար:
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում 2013թ. հուլիսին ուժի մեջ մտած փոփոխություններով ՀՀ-ի ամբողջ տարածքում անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետ սահմանվեց 2015թ. հուլիսի 1-ը:
- Միջազգային հեղինակավոր «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության տարեկան զեկույցով, որով ուսումնասիրվել է նաև 2013թ. աշխարհում հեռուստատեսության, ռադիոյի, լրատվության ոլորտում խոսքի ազատության մակարդակը, Հայաստանը տարածաշրջանում ճանաչվել է առաջատարը:

Ընդհանուր վերլուծություն

Ընթացիկ տարում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից Հայաստանի 6 հեռուստաընկերությունների մոնիթորինգի արդյունքներով արձանագրվել են հեռարձակման ոլորտում գովազդային օրենսդրության պահանջների մի շարք խախտումներ: Այսպես, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հանրային հեռուստառադիոընկերությունում առևտրային գովազդը չպետք է գերազանցի ընդհանուր հաղորդումների 7 տոկոսը: Միաժամանակ, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը պարունակում է գովազդային ընդմիջման սահմանափակման մի շարք դրույթներ: Մասնավորապես, արգելվում է մինչև 10 րոպե տևողությամբ ռադիոհաղորդումներում և մինչև 20 րոպե տևողությամբ հեռուստահաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը: Արգելվում է նաև ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 էթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տևողությամբ: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից Հայաստանի 6 հեռուստաընկերությունների՝ Հանրային Հ1 հեռուստաալիքի, Հայաստանի Երկրորդ հեռուստաալիքի, «Արմենիա», «Շանթ», «Երկիր Մեդիա» և «Կենտրոն» հեռուստաընկերությունների հաղորդումներում գովազդային ծավալների ու տեղաբաշխման՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության մոնիթորինգի

արդյունքների համաձայն՝ նշված հեռուստաընկերությունների կողմից միայն 2013թ. օգոստոս ամսի 15-21 ընկած ժամանակահատվածում արձանագրվել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի մեկ եթերային ժամում գովազդի 14 րոպե առավելագույն տևողության պահանջի վերաբերյալ դրույթի 30 խախտում: Նշված ժամանակահատվածում այս դրույթի խախտում թույլ չեն տվել միայն Հանրային Հ1 հեռուստաալիքը և Հայկական Երկրորդ հեռուստաալիքը, որտեղ բոլոր ժամերին գովազդը կազմել է օրենքով սահմանված 14-ից պակաս րոպե: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ մինչև 20 րոպեանոց հաղորդումները գովազդով մեկից ավելի անգամ չընդմիջելու պահանջի խախտում է արձանագրվել բոլոր վեց հեռուստաալիքներում՝ կազմելով 128 խախտում: Մասնավորապես, ըստ խախտումների հաճախականության տուժած հաղորդաշարերի թվին են դասվել, օրինակ՝ «Օտար ամառի ճամփեքի վրա» (Հ1), «Ինչ եփել այսօր» (Հ2), «Մանկական Նոր Ալիք» օրագիր («Արմենիա»), «Արարատյան խոհանոց» («Երկիր Մեդիա»), «Անցում Դուլյանի հետ» («Կենտրոն»), «Հորիզոն» («Շանթ»): Մոնիթորինգի արդյունքներով բացահայտվել են նաև հնարավոր քողարկված գովազդի ցուցադրման դեպքերը: Դիտարկված ժամանակահատվածում Հանրային հեռուստաընկերության առաջին ալիքը որևէ օր չի խախտել գովազդի՝ հաղորդումների ընդհանուր ծավալի յոթ տոկոսը չգերազանցելու օրենսդրական պահանջը: Հաշվետվությամբ ներկայացված վերլուծությունների և որոշակի առաջխաղացումների համատեքստում նշվել է նաև, որ դժվար է միանշանակ ասել, թե արդյոք իրավիճակը կլինի համանման նաև դիտարկվող դեկտեմբեր ամսվա ընթացքում, երբ, որպես կանոն, արձանագրվում են հեռուստագովազդի աճ գրեթե բոլոր հեռուստաալիքների եթերում: Հատկանշական է, որ Հանձնաժողովի կողմից հաշվետվությամբ նշված ժամանակահատվածում տվյալ հեռուստաընկերությունների մոտ մշտադիտարկման արդյունքում ՀՌԱՀ-ի կողմից խախտումներ չեն արձանագրվել:

Բազմակարծությունը խթանելու կարողությունը հանդիսանում է ՀՌԱՀ-ի կողմից լիցենզավորված անձի ընտրության չափանիշ, թեև 2013թ. ընթացքում բազմաթիվ են եղել դժգոհություններն ու բողոքները հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի վերաբերյալ, ՀՌԱՀ-ի կողմից լիցենզիայի պայմանների խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ավելին, իր ծրագրային քաղաքականությունն իրականացնելիս Հանրային հեռուստաադիորնկերության կողմից անկողմնակալության, բազմազանության և բազմակարծության սկզբունքների պահպանումը ՀՌԱՀ-ը հիմնավորել է միայն 2013թ. ընթացքում Հանրապետության Նախագահի և Երևանի ավագանու ընտրությունների համակողմանի և հավասար պայմաններով լուսաբանման և նշված ժամանակահատվածում խախտումներ չարձանագրելու հանգամանքներով: Այս հիմնավորումն ինքնին վկայում է ՀՌԱՀ-ի կողմից իրականացված հսկողության թերի և հատվածական բնույթի մասին, քանի որ ակնհայտ է, որ Հանրային հեռուստաընկերության կողմից բազմակարծության և անկողմնակալության սկզբունքների պահպանումը չի կարող պայմանավորված լինել միայն համապատասխան տարում անցկացվող ընտրությունների ընթացքում օրենսդրության պահանջների պահպանմամբ: Ավելին, «Բաց հասարակության հիմնադրամների» կողմից 2013թ. նոյեմբերին հրապարակված՝ «Հայաստանում մեդիաների թվայնացման քարտեզագրում» զեկույցով արձանագրվել է, որ հեռուստատեսությունը, որը դեռևս շարունակում է մնալ տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը, մեծապես հսկվում

է իշխանությունների կողմից: Առկա է լայնածավալ քողարկված գրաքննություն, որը լրատվամիջոցների նկատմամբ կիրառվող քաղաքական ճնշումների հետևանք է: Լրատվամիջոցների մեծ մասը կախվածության մեջ են գտնվում խոշոր ընկերություններից և քաղաքական վերնախավից, որոնց էլ վերջիններս ինտեգրվում են:

Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման թվայնացման գործընթացի հետագա կանոնակարգման ուղղությամբ: Դեռևս 2010 թվականին փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, ինչը խիստ քննադատության արժանացավ տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից: Նշված մտահոգությունները կապված էին թվային հեռարձակման ոչ պետական օպերատորների հիմնադրման և գործունեության իրավական հիմքերի, դրանից բխող լիցենզավորման գործընթացների՝ կարգավորման բացակայության, ինչպես նաև լիցենզիա տրամադրող մարմնի՝ կառավարությունից ոչ անկախ լինելու հանգամանքի հետ: Գնահատական տալով առկա գործընթացներին՝ ԵԱՀԿ ՋԼՄ հարցերով ներկա և նախկին ղեկավարներ Դունյա Միյատովիչը և Միկլոշ Հարաշտին, ինչպես նաև այլ միջազգային փորձագետներ հայտնել են, որ Հայաստանում զանգվածային լրատվամիջոցների գործունեության առումով հիմնական խնդիրը համարում է անցումը թվայնացման գործընթացին: Չնայած հայկական կողմը հայտնել է, որ խնդիրներ չեն լինի և 2015 թվականի վերջին արդեն հնարավոր կլինի լիարժեք անցում կատարել այդ համակարգին, այնուամենայնիվ, ԵԱՀԿ ներկայացուցիչներն այնքան էլ լավատեսական չեն տրամադրված: Նրանք պնդում են, որ, նախ և առաջ լիցենզիաների տրամադրման մրցույթն անցել է շատ հապշտապ և կասկածելի, որովհետև թվայնացումը ենթադրում է դաշտի ազատականացում, բազմակարծության ապահովում ուղրտում: Մինչդեռ, Հայաստանում ճիշտ հակառակ պրոցեսի ականատեսն են եղել միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Նշենք, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում 2013թ. հուլիսին ուժի մեջ մտած փոփոխություններով ՀՀ-ի ամբողջ տարածքում անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետ սահմանվեց 2015թ. հուլիսի 1-ը: 2010 թվականի հուլիսի 20-ից մինչև 2015թ. հունվարի 1-ը նախատեսված էր որպես անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցման ժամանակաշրջան, որի ընթացքում պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովմամբ պետք է իրականացվեր աստիճանական անցում թվային հեռարձակման: Համապատասխանաբար, վեց ամսով երկարաձգվեց նաև իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանց ստեղծելու համար մուլտիպլեքսորի լիցենզավորման կարգն ու պայմանները օրենքով սահմանելու ժամկետը: Ռադիոյի թվային հեռարձակումն ապահովման ժամկետը սահմանվեց 2016թ. գործող 2013թ. փոխարեն: Երկարաձգվեցին նաև համապատասխան ընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետները: Ժամկետների երկարաձգումը պայմանավորվեց ՀՀ տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման՝ տեխնիկական, նյութական և ֆինանսական դժվարություններով, որոնք դեռևս անհաղթահարելի համարվեցին թե պետության, թե հեռարձակողների և թե սպառողների համար: Միաժամանակ, արձանագրենք, որ 2010 թվականի հուլիսի 20-ին Հանձնաժողովը հայտարարված տասնութ հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթի

անցկացման արդյունքում 4-ով կրճատվեց Հայաստանում գործող հեռուստաընկերությունների թիվը, ինչը պատճառաբանվեց թվային հեռարձակման անցման գործընթացով: Թվայնացման գործընթացի շարունակական հետաձգումը փաստացի հանգեցնում է ոչ միայն հեռուստաալիքների սահմանափակմանը, այլև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը: Այսպես, 2006թ. Ժնևի համաձայնագրով ՀՀ-ը պարտավորություն է ստանձնել դադարեցնել անալոգային հեռարձակումը 2015թ. դրությամբ: Ավելին, մինչ օրս չեն սահմանվել թվայնացման գործընթացի իրավական կարգավորման համար անհրաժեշտ կանոնակարգումները «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, Օրենքում համապատասխան փոփոխությունների նախագիծը դեռևս ընդգրկված չէ ԱԺ-ի օրակարգում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև 18-րդ հոդվածով սահմանված են եթերային հեռարձակման բնագավառում հակամենաշնորհային երաշխիքները, ինչպես նաև հեռուստառադիոընկերությունների հիմնադրման սահմանափակումները, որոնց նպատակն է կանխել հեռարձակման շուկայի մենաշնորհացումը կամ գերկենտրոնացումը, ինչպես նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց կամ կուսակցությունների կողմից միջնորդավորված միջամտությունը հեռուստառադիոընկերությունների գործունեությանը: Հատկանշական է, որ ՀՌԱՀ-ի կողմից չի արձանագրվել հակամենաշնորհային երաշխիքների, ինչպես նաև հեռուստառադիոընկերությունների հիմնադրման սահմանափակումների պահանջների խախտման որևէ դեպք, այս պահանջների համապատասխանության ստուգումը Հանձնաժողովի կողմից իրականացվել է հեռուստառադիոհեռարձակողների եթերային հեռարձակման լիցենզավորման մրցույթի և հեռուստառադիոծրագրերի կաբելային ցանցով հեռարձակման լիցենզավորում իրականացնելիս, ինչպես նաև Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի միջոցով: Այնինչ, ստուգման այս մեխանիզմներն ու իրավական կարգավորումներն ակնհայտորեն բավարար չեն հեռուստառադիոընկերությունների գործունեության թափանցիկության ապահովման տեսանկյունից և ստեղծում են ոլորտի մենաշնորհացման կամ հեռուստառադիոընկերությունների գործունեությանը օրենքով արգելված միջամտության լուրջ վտանգ: Թեև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՌԱՀ-ը կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի օրենսդրական նախագծերի մշակմանը, ՀՌԱՀ-ի կողմից որևէ նախաձեռնողականություն չի ցուցաբերվում հեռուստաընկերությունների իրական հիմնադիրների, նրանց հետ փոխկապակցված անձանց բացահայտման, ինչպես նաև հակամենաշնորհային երաշխիքների ապահովման ուղղությամբ արդյունավետ օրենսդրական կարգավորումներ մշակելու ուղղությամբ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի համաձայն՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական

հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով: Թեև այս նորմի նախատեսումը նպատակ էր հետապնդում ապահովել խուլուհամր հանրության համար որոշակի տեղեկատվության մատչելիությունը, սակայն գործնականում այս նորմի կիրառումը չբերեց դրանով հասցեագրված հիմնական խնդրի լուծմանը, քանի որ հեռուստաընկերությունների մեծամասնությունը օգտագործել է լուսագրերի կիրառման դրույթը՝ որպես սուրդոթարգմանության այլընտրանք, այն դեպքում, երբ լուսագրերը հիմնականում պարունակում են հեռարձակվող նյութի կրճատ բովանդակությունը: Արդյունքում, ըստ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի կողմից տրամադրված տվյալների, լուսագրերի ընթերցումը խուլուհամր հանրության համար ստեղծել է լրացուցիչ բարդություններ թե՛ տեղեկատվության հրապարակման արագության, և թե՛ բովանդակության անհամապատասխանության տեսանկյունից՝ ըստ էության հանդիսանալով բնակչության այս հատվածի համար տեղեկատվության մատչելիության ապահովման ոչ արդյունավետ գործիք: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով բոլոր հեռուստաալիքներով համապատասխան հաղորդումների սուրդոթարգմանության ապահովման օբյեկտիվ խոչընդոտները, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերոնշյալ դրույթի արդյունավետ և նպատակային կիրառման ապահովման նպատակով: Որպես հնարավոր լուծում՝ կարող է սահմանափակվել համապատասխան հեռուստաընկերությունների թիվը՝ խուլուհամր հանրության համար միայն սուրդոթարգմանության ապահովման պահանջի ամրագրմամբ: Հատկանշական է, որ ՀՌԱՀ-ը չի տիրապետում այս դրույթի գործնական կիրառման վերաբերյալ տարբերակված տվյալների, ինչը պատճառաբանվել է Հանձնաժողովին՝ համապատասխան հաղորդումների սուրդոթարգմանությամբ և լուսագրերով հեռարձակման տոկոսային հարաբերակցության վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ իրականացնելու գործառույթ Օրենքով վերապահված չլինելու հանգամանքով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-ից մինչ 6.00-ն: Միաժամանակ, վերագրյալ դրույթը նախատեսում է, որ նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են օրենքով: Այնինչ, մինչ օրս օրենքով սահմանված չեն վերոգրյալ հաղորդումների որոշման չափորոշիչները, ինչը այս նորմի կիրառումը գործնականում դարձրել է գրեթե անհնարին: Այսպես, 2013թ. Պաշտպանը դիմում է ստացել՝ հեռուստաալիքներից մեկով երոտիկ կադրերով մուլտֆիլմ հեռարձակելու վերաբերյալ, որի առնչությամբ դիմել է Հանձնաժողով: Հանձնաժողովի կողմից դիմումի ընթացքի չապահովումը պատճառաբանվել է համապատասխան չափորոշիչների մշակված չլինելու հանգամանքով: Միևնույն ժամանակ, ՀՌԱՀ-ի կողմից այս ուղղությամբ որևէ միջոց չձեռնարկելը բացատրվել է օրենսդրական նախաձեռնություն չունենալու հանգամանքով: Մինչդեռ, ՀՌԱՀ-ի կողմից չի ցուցաբերվել որևէ նախաձեռնողականություն այս չափորոշիչների մշակման կամ իրավասու մարմինների նրանց մշակման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու ուղղությամբ: Հաշվի առնելով, որ

ՀՌԱՀ-ը հսկողություն է իրականացնում հեռուստաընկերությունների կողմից օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ, իսկ առանց վերոգրյալ չափորոշիչների մշակման, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կատարման նկատմամբ հսկողությունն, ըստ էության, դառնում է անհնարին, ինչպես նաև այն, որ ՀՌԱՀ-ը տեղեկացված է եղել խնդրի առկայության վերաբերյալ, Հանձնաժողովը այս ուղղությամբ չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Առաջարկություններ

- Ձեռնարկել արդյունավետ միջոցառումներ՝ հեռուստաընկերությունների կողմից գովազդային օրենսդրության պահանջների խախտման դեպքերը կանխելու ուղղությամբ:
- Ձեռնարկել համարժեք միջոցներ՝ հեռուստառադիոծրագրերում բազմակարծությունն ապահովելու նպատակով:
- Դրսևորել նախաձեռնողականություն՝ ուղղված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով թվայնացման գործընթացի իրավական կանոնակարգմանը, ինչպես նաև հեռուստաընկերությունների իրական հիմնադիրների, նրանց հետ փոխկապակցված անձանց բացահայտման, ինչպես նաև հակամենաշնորհային երաշխիքների ապահովման ուղղությամբ արդյունավետ օրենսդրական կարգավորումներ մշակելու ուղղությամբ:
- Ապահովել խուլուհամր հանրության լիարժեք տեղեկատվության ստացման մատչելիությունը:
- Ցուցաբերել նախաձեռնողականություն՝ ուղղված երոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչների մշակման կամ իրավասու մարմիններին դրանց մշակման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատու է հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման համար, որի նպատակն է հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ բացառելով սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականությունը:

2013 թվականին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Բացակայել են ջրի, էլեկտրաէներգիայի և գազի հաշվիչների ստուգման այլընտրանքային լաբորատորիաներ: Արդյունքում սպառողները զրկվել են այդ հաշվիչների անկողմնակալ ստուգման հնարավորությունից:
- Հանձնաժողովը հանրությանը պատշաճ չէր տեղեկացրել գազի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման և դրանց հիմնավորումների մասին:
- Չլուծված է մնացել մարդկանց շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը:
- Էլեկտրաէներգիայի, ջրի և այլ ոլորտների սպասարկման կանոններն ունեն նորացման անհրաժեշտություն:

Արձանագրված դրական զարգացումները

- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ձեռնարկված ջրային համակարգի կազմակերպությունների գործունեության մշտադիտարկումները կրել են շարունակական բնույթ:
- Հանձնաժողովի իրավասությանը վերաբերող խմելու ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ իրականացման վերաբերյալ դիմում-բողոքներին մեծամասամբ տրվել են դրական լուծումներ:
- 2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի գործողությունների և ստուգումների արդյունքում պատասխանատվության են ենթարկվել 9 կազմակերպություններ (13 դեպք):

Ընդհանուր վերլուծություն

Չլուծված է մնացել մարդկանց շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը հետևողական է խմելու ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ իրականացման վերաբերյալ քաղաքացիների կողմից բարձրաձայնված խնդիրներին: Մասնավորապես, նշված խնդրով 2013 թվականին Հանձնաժողովին հասցեագրված 279 դիմում-բողոքները ստացել են պատշաճ ընթացք: Բացի այդ, Հանձնաժողովը, կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարման սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից ներկայացվող տեղեկատվության ուսումնասիրության նպատակով, 2013 թվականի մայիսի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության մշտադիտարկում: Այսպես, Հանձնաժողովը ընտրանքային եղանակով գրավոր հարցումներ է կատարել նշված ընկերության սպասարկման տարածքի գյուղական համայնքների ղեկավարներին՝ վերջին անգամ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկների պահպանման վերաբերյալ: Հարցումների արդյունքներն ամփոփող համապատասխան վերլուծական տեղեկանքը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ՝ կարծիքի: Միաժամանակ հարկավոր է նշել, որ նույնիսկ նման միջոցառումների իրականացման արդյունքում դեռևս շարունակվում է չլուծված մնալ քաղաքացիների շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը: Մտահոգիչ է, որ խմելու ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից դանդաղ են ընթացել քաղաքացիների ջրամատակարարման բարելավմանն ուղղված գործընթացները:

Հանձնաժողովը հանրությանը պատշաճ չէր տեղեկացրել գազի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման և դրանց հիմնավորումների մասին: 2013 թվականի հունիսի 7-ին Հանձնաժողովն ընդունեց «Հայտուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների սահմանման մասին թիվ 190-Ն որոշման ընդունումը, որով ամսական մինչև 10 հազար խմ գազ օգտագործելու դեպքում սպառողների համար մեկ խորանարդ մետր գազի գինը սահմանվեց 156 դրամ՝ նախկին 132 դրամի փոխարեն, իսկ 10 հազար խորանարդ մետրից ավելի սպառողների համար յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի գին սահմանվեց 276 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Բացի այդ, ՀՇԿՀ-ն էլեկտրաէներգիային ցերեկային սակագինը սահմանող որոշում է ընդունել: Էլեկտրաէներգիային ցերեկային սակագինը բնակչության համար կկազմի 1 կՎտ.ժ դիմաց 38 դրամ՝ նախկինում գործող 30 դրամի փոխարեն, իսկ գիշերային սակագինը՝ 28 դրամ՝ նախկին 25 դրամի փոխարեն: Հանձնաժողովի կողմից պատշաճ հանրային քննարկումներ՝ սպառողների համար սահմանվող սակագների, հաշվարկման մեթոդիկանների, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցերի վերաբերյալ չկազմակերպելը հանգեցրել է որոշումների կայացմանը՝ հաշվի չառնելով սպառողների շահերը: Հարկ է նշել նաև, որ Հանձնաժողովը, թեև սակագների հիմքում դրված հաշվարկները և հիմնավորումները հրապարակել էր Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում, սակայն անձանց բողոքները դրանց մասին տեղեկացված չլինելու վերաբերյալ, վկայում են այն

մասին, որ պատշաճ միջոցներ չէին ձեռնարկվել թե այդ գործընթացի հանրային իրազեկվածությունն ապահովելու և թե սակագների փոփոխությունների հիմնավորումները հանրության համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Ավելին, լրատվական բազմաթիվ կայքէջերում վերը նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից որևէ պաշտոնական հայտարարություններ չեն հրապարակվել: Նշված կայքէջերում տեղ գտած լուսաբանումները կամ մայիսի 14-ից մինչև հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածից հետո կատարված պաշտոնական հայտարարություններն են, կամ էլ նշված ժամանակահատվածում հասարակական կազմակերպությունների կողմից տրված պարզաբանումները և վերջիններիս ձեռնարկած միջոցների մասին լուսաբանումներն են: Այնինչ, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հանձնաժողովի և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և ժամանակակից այլ միջոցներով ապահովելը հանդիսանում է Հանձնաժողովի ուղղակի պարտականությունը: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում գազի սակագնի փոփոխությունը հասարակության մեջ լայն արձագանք է գտել և տվյալ հարցը բազմաթիվ քննարկումների առարկա է դարձել, ապա կարելի է եզրակացնել, որ Հանձնաժողովի ձեռնարկած միջոցները այն լուսաբանելու կապակցությամբ բավարար և արդյունավետ չեն եղել: Նույն խնդիրը վերաբերում է նաև էլեկտրաէներգիայի սակագների փոփոխման հարցին:

Բացակայել են ջրի, էլեկտրաէներգիայի և գազի հաշվիչների ստուգման այլընտրանքային լաբորատորիաներ: Արդյունքում սպառողները զրկվել են այդ հաշվիչների անկողմնակալ ստուգման հնարավորությունից: Հանրապետությունում գազի, ջրի և էլեկտրաէներգիայի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաների բացակայությունը մի շարք խնդիրներ է ստեղծում սպառողների համար: Լինելով միակը՝ գործող լաբորատորիան կարող է օգտվել իր գերիշխող դիրքից և սահմանել հաշվիչների ստուգման, վերանորոգման համար բարձր գներ: Բացի այդ, բնակչության շրջանում առկա է այդ լաբորատոր ստուգումների օբյեկտիվության նկատմամբ անվստահություն: Հասարակության անվստահությունը պայմանավորված է մասնավորապես վերոհիշյալ լաբորատորիաների կողմից գազի կալորիականության որոշման և այդ որոշման անաչառության հետ: Չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովը չունի նշված կառույցների ստեղծմանը կամ գործարկմանն ուղղված լիազորություններ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ Հանձնաժողովը, որպես այս ոլորտը կարգավորող մարմին, պետք է նախաձեռնողականություն ցուցաբերեր՝ բարձրաձայնելով այլընտրանքային մասնավոր լաբորատորիաների ստեղծման խնդիրը: Այնինչ, Հանձնաժողովը նշված խնդրի լուծման ուղղությամբ 2013 թվականին որևէ միջոց չի ձեռնարկել: Մինևույն ժամանակ հաշվի առնելով, որ լաբորատորիայի կողմից տրված եզրակացության հիման վրա Հանձնաժողովը պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշում է ընդունում, ապա կարելի է եզրակացնել, որ Հանձնաժողովը պետք է շահագրգռված լինի այլընտրանքային մասնավոր լաբորատորիաների ստեղծմամբ:

Էլեկտրաէներգիայի, ջրի և այլ ոլորտների սպասարկման կանոններն ունեն նորացման անհրաժեշտություն: Պաշտպանը ստացել է բողոքներ գազի, էլեկտրոէներգիայի

և այլ ոլորտների սպասարկման որակի պահանջների արդիականացման անհրաժեշտության վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտում սպասարկման որակի պահանջներ սահմանող որոշումներ են ընդունվել: Հանձնաժողովի թիվ N376-380 որոշումները վերաբերում են համապատասխանաբար «Երևան ջուր» ՓԲԸ-ին, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին, «Շիրակ Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին, «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին, «Նոր Ակունք» ՓԲԸ-ին և ուղղված են խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների հաստատմանը: Սակայն ավելի նպատակահարմար կլիներ ընդունել խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջներ սահմանող մեկ համակարգային որոշում հետագա անհատականացված դրույթներից խուսափելու համար: Համակարգային որոշումը կնպաստի ընկերությունների նկատմամբ տարբերակված մոտեցման բացառման և կնվազեցնի հավելյալ որոշումների ընդունման անհրաժեշտությունը: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է համապատասխան համակարգային որոշումներ մշակել նաև հանրային ծառայությունների այլ ոլորտներում, մասնավորապես՝ գազի, էլեկտրոէներգիայի և այլն:

Առաջարկություններ

- Ձեռնարկել միջոցներ՝ քաղաքացիների շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը լուծելու ուղղությամբ:
- Նախքան գազի և էլեկտրոէներգիայի սակագների փոփոխման հարցերի առաջացումը, կազմակերպել հանրային քննարկումներ և պատշաճ կերպով հանրության ներկայացնել դրանց հիմնավորվածությունը:
- Նախաձեռնել քայլեր հանրապետությունում էլեկտրաէներգիայի, ջրի և, հատկապես, գազի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաների ստեղծման համար:
- Արդիականացնել՝ գազի, էլեկտրոէներգիայի և այլ ոլորտների սպասարկման որակի՝ իրավական ակտերով նախատեսված պահանջները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երևանի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ սույն զեկույցում ներկայացված խնդիրներն ու թերությունները հիմնականում վերաբերելի են նաև մյուս բոլոր տեղական ինքնակառավարման մարմիններին:

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում միջոցներ են ձեռնարկում բնակիչների իրավունքները և ազատություններն ապահովելու ուղղությամբ, իրականացնում են քաղաքային/համայնքային նշանակության քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների ազատ տեղաշարժի համար պայմաններ ստեղծելու, հասարակական տրանսպորտը հաշմանդամների տեղաշարժմանը հարմարեցնելու աշխատանքներ, շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր, կազմակերպում են ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքներ և այլն:

2013 թվականին, մասնավորապես, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Չեն սահմանվել ինքնակամ շինարարության հստակ և թափանցիկ պահանջներ, ինչի հետևանքով այդ շինությունների օրինական կամ անօրինական լինելու հարցը լուծելիս համայնքներին տրվել է չափազանց լայն հայեցողություն: Նման հայեցողությունը շատ դեպքերում առաջացրել է կոռուպցիոն ռիսկեր:
- Մի շարք մանկապարտեզների խմբերում երեխաների թվաքանակը նախատեսված 30-ից չափազանց մեծ է եղել, ինչի արդյունքում երեխաները անհրաժեշտ խնամք չեն ստացել:
- Քաղաքապետարանը տրանսպորտի սակագինը բարձրացնելու վերաբերյալ չէր կազմակերպել հանրային քննարկումներ, չէր ներկայացրել սակագնի բարձրացման բավարար հիմքերը և հնարավոր այլընտրանքային լուծումները, ինչն առաջացրել էր հանրության հիմնավոր վրդովմունքը:
- Երևանում մեքենաների կայանատեղերի համակարգը ներդրվել էր լուրջ թերացումներով, ինչպես օրինակ՝ անձինք 1 ժամից պակաս կայանելիս՝ ստիպված են եղել վճարել 1 ժամվա կայանման գումար, չեն նախատեսվել անվճար հատուկ կայանատեղեր հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև չէին կազմակերպվել հանրային քննարկումներ:
- Քաղաքապետարանը քաղաքի ծայրամասերում գտնվող կիսաքանդ փողոցները ասֆալտապատելու փոխարեն կրկնակի ասֆալտապատել է կենտրոնական փողոցները, չնայած դրանց բարեկարգ վիճակին:

- Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել Փակ շուկայի ապօրինի շինարարությունը կանխելու համար:
- Հաշվի չառնելով քաղաքաշինական նորմերի պահանջները, ինչպես նաև Կոմիտաս 5 հասցեի բնակիչների համար մի շարք բացասական հետևանքները, օրինակ՝ հարակից շենքերի լուսավորության էական նվազումը, տարածքի ծառերի հատումը և այլն, Քաղաքապետարանը, այնուամենայնիվ թույլատրել էր այդ տարածքում շինարարությունը:
- Քաղաքապետարանը որևէ միջոց չի ձեռնարկել Կոմայգում այլասերվածությունը վերացնելու ուղղությամբ, մասնավորապես չի լուսավորվել և չի ցանկապատվել այգու շրջակայքը, ինչպես նաև չի փակվել այգու մուտքը գիշերային ժամերին:
- Անմատչելի է եղել մի շարք շինություններ հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքը: Մի շարք դեպքերում ընդհանրապես բացակայել են թեքահարթակները, իսկ առկայության դեպքում էլ՝ դրանց թեքության աստիճանը չափազանց բարձր է եղել:
- Միջոցներ չեն ձեռնարկվել հասարակական տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու համար:

Արձանագրված դրական զարգացումներ

- Մայրաքաղաքի փողոցներում և բանուկ մասերում կառուցվել է 80 թեքահարթակ, թվով 293 թեքահարթակ է կառուցվել նաև ասֆալտ-բետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքներ իրականացված փողոցներում:
- Ճանապարհային խցանումները նվազեցնելու նպատակով շահագործման է հանձնվել Ուլնեցու և Ռուբինյանց փողոցները միացնող ճանապարհը, ավարտման փուլին են հասել Ծովակալ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցի հետ կապող նոր ավտոմայրուղու կառուցման աշխատանքները, շահագործման են հանձնվել 4 վերգետնյա անցումներ:
- «Աջակցություն առողջապահական կազմակերպություններին բժշկական սարքավորումների ձեռքբերման համար» ծրագրի շրջանակում Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող թվով 16 բուժհաստատության տրամադրվել է 44 անուն բուժսարքավորում՝ փոխարինելով մաշված և արդեն անպետք սարքավորումները:

Ընդհանուր վերլուծություն

Չեն սահմանվել ինքնակամ շինարարության հստակ և թափանցիկ պահանջներ, ինչի հետևանքով այդ շինությունների օրինական կամ անօրինական լինելու հարցը լուծելիս համայնքներին տրվել է չափազանց լայն հայեցողություն: Նման հայեցողությունը շատ դեպքերում առաջացրել է կոռուպցիոն ռիսկեր: Քաղաքապետարանի փոխանցմամբ 2013 թվականի ընթացքում շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման դեպքերի առնչությամբ կազմվել է 277 արձանագրություն, որոնցից 68-ի դեպքում ձեռնարկվել են համապատասխան միջոցներ դրանք քանդելու համար, իսկ կախված ինքնակամ կառույցի

ավարտվածության աստիճանից, հողամասի սեփականատեր լինելու և այլ հանգամանքներից՝ կառույցների հետագա տնօրինման գործընթացը կարգավորվել է ինքնակամ կառույցների և քաղաքաշինության բնագավառը կարգավորող օրենսդրության շրջանակներում: Ողջունելի է ինքնակամ շինությունների՝ օրենքի պահանջներին համապատասխան կառուցվելու նկատմամբ Քաղաքապետարանի կողմից ցուցաբերվող հետևողականությունը և հարկ եղած դեպքերում օրենսդրությամբ սահմանված պատշաճ միջոցներ ձեռնարկելը: Մակայն հարկ ենք համարում նշել, որ ոչ բոլոր դեպքերում են Քաղաքապետարանի գործողությունները բավարարել օրինականության պահանջները: Օրինակ՝ Երևանի քաղաքապետի 08.10.2003թ. թիվ 1943-Ս որոշմամբ՝ ք. Երևան, Այգեստան 8-րդ փող., տուն 9 հասցեում գտնվող արտադրամասի նկատմամբ ճանաչվել է քաղաքացի Ա.Վ.-ի սեփականության իրավունքը, որը պատշաճ կարգով գրանցվել է ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի կողմից: Արտադրամասի սպասարկման համար 138,5 քմ մակերեսով հողամասը 24.11.2003թ. թիվ 3434 պայմանագրով տրամադրվել է վարձակալության իրավունքով: ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված իրավունքից օգտվելու նպատակով բազմիցս դիմել է Քաղաքապետարան՝ վարձակալությամբ տրամադրված հողատարածքի մասով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու խնդրանքով, սակայն Քաղաքապետարանից հայտնել են, որ խնդիրն առնչվում է քննարկվող հողամասի սեփականության իրավունքով փոխանցմանը, և առաջարկվել է այն օտարելու համար սահմանված կարգով դիմել Քաղաքապետարան, չնշելով նաև այն իրավական հիմքերը, որոնց հիման վրա պետք է վճարվի հողի կադաստրային արժեքը: Քաղաքապետարանը պարզաբանել է, որ Օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված են որոշակի պարտադիր պայմաններ, որոնցից է՝ տվյալ հողամասը հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար սահմանված կարգով տրամադրված լինելու և դրա վրա սահմանված կարգով շենքեր և շինություններ կառուցված լինելու հանգամանքը: Մակայն, Ա.Վ.-ի սեփականության իրավունքով պատկանող արտադրամասի՝ ինքնակամ կառույց հանդիսանալու հանգամանքն արդեն իսկ բացառում է օրենքով նախատեսված պայմանների առկայության փաստը: Այնինչ, 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի (որն ուժի մեջ է մտել 2005 թվականի նոյեմբերի 26-ից) համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց ձեռք բերված հողամասերի՝ սույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար նախատեսված և սահմանված կարգով կառուցված, այդ թվում՝ կիսակառույց շենքերով, շինություններով զբաղեցված հողամասերը՝ անկախ շենքերի, շինությունների ավարտվածության աստիճանից: Իսկ սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունված ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի թիվ 2093-Ն որոշմամբ հանձնարարվել է ՀՀ մարզպետներին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) և առաջարկվել համայնքների

ղեկավարներին մեկամայա ժամկետում՝ շաբաթական պարբերականությամբ (տվյալ շաբաթվա ընթացքում ստուգված հողամասերի մասով), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ներկայացնել տեղեկատվություն՝ որոշման մեջ նշված հողամասերը Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում ընդգրկված լինելու կամ չլինելու մասին: Ընդ որում, համայնքների ղեկավարները նշված տեղեկատվությունն ուղարկում են համապատասխան մարզպետների միջոցով: Այնինչ, նշված տեղեկատվությունը գործարք կնքելու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրվում է դիմումը ստանալու օրվան հաջորդող 2 օրվա ընթացքում, եթե դրա մասին տեղեկատվությունը դեռևս չի փոխանցվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին: Մինչդեռ քաղաքացի Ա.Վ.-ն անհրաժեշտ ժամանակահատվածում նման տեղեկատվություն չի տրամադրվել: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել է Ա.Վ.-ի իրավունքի խախտում Քաղաքապետարանի գործողություններում (անգործության մեջ) և առաջարկվել է ձեռնարկել միջոցներ նշված հասցեում գտնվող արտադրամասի զբաղեցրած հողամասն օրենքի ուժով սեփականության իրավունքով, անհատույց Ա.Վ.-ին փոխանցելու համար վարձակալությամբ տրամադրված հողատարածքի մասով Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ուղղությամբ, ինչը Քաղաքապետարանը չի ընդունել: Հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ շինությունները ինքական որակելու և հետագայում օրինական ճանաչելու համատեքստում, Քաղաքապետարանին տրված է չափազանց լայն հայեցողություն, որն իր հերթին առաջացնում է երկակի ստանդարտների կիրառման իրական ռիսկ: Գտնում ենք, որ նշված գործառույթը պետք է հստակ կանոնակարգված և թափանցիկ լինի:

Մի շարք մանկապարտեզների խմբերում երեխաների թվաքանակը նախատեսված 30-ից չափազանց մեծ է եղել, ինչի արդյունքում երեխաները անհրաժեշտ խնամք չեն ստացել: Քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող մի շարք մանկապարտեզների գերբեռնվածության խնդիրը քննարկվել է դեռևս 2012 թվականին, որի առնչությամբ և ստացվել էին բողոքներ, և բազմիցս լուսաբանվել էր զանգվածային լրատվամիջոցներով: Համաձայն ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների խտության և նորմատիվների մասին ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. թիվ 29-Ն հրամանի՝ ընդհանուր նշանակության նախադպրոցական հաստատություններում (մանկապարտեզներում, որտեղ իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովվում է երեխաների խնամքը) երեխաների թիվը չի կարող գերազանցել 30-ը: Խնդրի վերաբերյալ դեռևս 2012 թվականին Քաղաքապետարանը հայտնել էր, որ խնդիրն օրակարգային է և խմբերում երեխաների թվաքանակի նվազեցման հարցը գտնվում է քննարկման փուլում: 2013 թվականին նույն խնդրի վերաբերյալ Քաղաքապետարանը հայտնել է, որ Քաղաքապետարանի ենթակայության տակ գործող մանկապարտեզների խմբերի երեխաների թվաքանակը հնարավորինս համապատասխանեցված է ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 29-Ն որոշման պահանջներին: Մտահոգիչ է, որ Քաղաքապետարանը չի բարձրաձայնել խնդրի լուծման նպատակով 2013 թվականին ձեռնարկված միջոցառումների մասին: Իսկ

զանգվածային լրատվության միջոցներով տրված պարզաբանմամբ Քաղաքապետարանից հայտնել են, որ Երևանի բյուջեով 2013 թվականին նոր մանկապարտեզներ հիմնելու ծախսեր նախատեսված չեն: Նշվածը վկայում է այն մասին, որ Քաղաքապետարանը հետաքրքրված չէ հասարակության մեջ լայն տարածում գտած հարցին վերջնական և արդյունավետ լուծում տալուն: Այնինչ, 2013 թվականին շարունակվում էին բողոքները այն մասին, որ 30 երեխայի համար նախատեսված սենյակներում քնում է 40, իսկ երբեմն էլ 40-ից ավել երեխա: Լինում են դեպքեր, երբ երեխաները քնում են հերթափոխով կամ երեխաների մի մասը չի քնում, ինչի հետևանքով երեխաների խնամքը տուժում է: Ստահոգիչ է, որ ներկայումս մանկապարտեզ գնալու համար հերթագրված երեխաների թիվը 5900 է: Բազմաթիվ երեխաներ մինչև դպրոց գնալը նույնիսկ չեն հասցնում մանկապարտեզ գնալ, դրանով զրկվում են նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքից: Նշվածի համատեքստում բավականին հետաքրքիր է Քաղաքապետարանի հայտնած տեղեկատվությունն այն մասին, որ 2013 թվականին Քաղաքապետարանի կողմից կատարված գույքագրման արդյունքում թվով 30 մանկապարտեզների շենքերից տարածքներ տրվել են վարձակալության կամ անհատույց օգտագործման: Դրանց գերակշիռ մասը տրվել է Երևանի նախկին թաղային համայնքների ավագանիների, թաղապետերի որոշումներով, որոնց նպատակային նշանակությունը ունի լրացուցիչ ուսումնասիրության կարիք: Հատկանշական է, որ այդ ուսումնասիրությունները, թեև կատարվում են 2012 թվականից, այնուամենայնիվ խնդրի լուծմանը դեռևս չեն նպաստել: Ուստի պարզ չէ, առհասարակ, նման ուսումնասիրությունների նպատակը:

Քաղաքապետարանը տրանսպորտի սակագինը բարձրացնելու վերաբերյալ չէր կազմակերպել հանրային քննարկումներ, չէր ներկայացրել սակագնի բարձրացման բավարար հիմքերը և հնարավոր այլընտրանքային լուծումները, ինչն առաջացրել էր հանրության հիմնավոր վրդովմունքը: Քաղաքապետի կողմից 2013 թվականի հուլիսի 19-ին ընդունված թիվ 3661-Ս որոշումը, որով նախատեսվել էր հանրային տրանսպորտի սակագնի թանկացում, հանրության համար մեծ մտահոգություն էր առաջացրել: Խնդրի բազմակողմանի ուսումնասիրման արդյունքում, թեև հաստատվել էր Քաղաքապետի կողմից նման որոշման՝ որպես անհատական (ոչ նորմատիվ) ակտ ընդունելու իրավաչափությունը, այնուամենայնիվ նշված որոշումը, ելնելով իր հանրային նշանակությունից, գործնականում անուղղակիորեն որոշակի պարտավորություն էր առաջացնում ներքաղաքային երթուղիները սպասարկող կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձանց համար՝ վճարելու 100-ի փոխարեն 150 ՀՀ դրամ փոխադրավարձ: Ուստի, գտնում ենք, որ հասարակության լայն զանգվածների համար, թեև անուղղակիորեն, սակայն միևնույն է պարտականություն առաջացնող նման որոշման ընդունումից առաջ Քաղաքապետարանը պետք է պատշաճ կարգով կազմակերպեր և անցկացներ հանրային քննարկումներ, ինչը փաստացիորեն չէր կատարվել: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը հստակեցնում է, որ հանրային քննարկումների իրականացման միջոցը ոչ միայն պաշտոնական կայքէջում նորմատիվ իրավական ակտի նախագծի հրապարակումն է, այլև՝ նախագիծ մշակող մարմնի նախաձեռնությամբ հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ, բաց լսումներ, քննարկումներ, ընդհուպ մինչև հասարակական հարցումներ կազմակերպելը:

Այնինչ, սույն հարցի վերաբերյալ Քաղաքապետարանի կողմից սակագնի փոփոխման մասին որոշման նախագիծը նույնիսկ Քաղաքապետարանի կայքէջում տեղադրված չի եղել : Հանրային լուսման անցկացումը միջազգայնորեն ընդունված պրակտիկա է, որի նպատակն է հասարակության համար էական մտահոգություն հանդիսացող հարցերի վերահանումը, հարցի վերաբերյալ մասնագիտական կարծիքը հաշվի առնելը, այլընտրանքային լուծումների հնարավոր տարբերակների վերահանումը, նախագծի մշակմանը առանձին խոցելի խմբերի մասնակցությունն ապահովելը, նախագծի շրջանակներում առկա փաստաթղթերի վերանայումը: Քաղաքապետարանի կողմից սակագնի փոփոխման վերաբերյալ որոշումն ընդունելուց առաջ, ինչպես նաև հանրորեն լայն արձագանք ստացած այլ հարցերի վերաբերյալ հանրային քննարկումներ չանցկացնելը վկայում է այն մասին, որ Քաղաքապետարանը պատշաճ կարևորություն չի տվել հանրային քննարկման միջոցով հասարակության կողմից ներկայացված առաջարկություններին, ինչի հետևանքով էլ չի կայունանում Քաղաքապետարանի և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը: Որոշ ժամանակ անց Քաղաքապետի նախաձեռնությամբ կատարվեց ուղևորափոխադրումների վարձը վերանայելու մասին վերը հիշատակված որոշումը, և հետագայում, ըստ Քաղաքապետարանի հայտնած տեղեկատվության, 2013 թվականի սեպտեմբերին խնդրի կարգավորման նպատակով Քաղաքապետարանի նախաձեռնությամբ Երևանի ներքաղաքային ուղևորափոխադրումների վարձի ձևավորման և կիրառման մեխանիզմների քննարկման, ինչպես նաև խնդրի առնչությամբ քաղաքացիական հասարակությանը հուզող հարցերի համակողմանի և լիարժեք տեղեկատվություն տրամադրելու նպատակով ստեղծվեց առանձին հանձնաժողով: Գտնում ենք, որ հանրային տրանսպորտի սակագինը վերանայելիս անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք մասնավորապես, ներկայացված են ստորև.

- Սակագնի մեծության վրա ազդող բաղկացուցիչների արժեքի կապակցությամբ կարծում ենք, որ անհրաժեշտ է առաջնորդվել հնարավորինս նվազագույն գներով՝ միաժամանակ նախատեսելով պայմանագրային հիմունքներով շուկայականից ցածր գնով դրանց մեծածախ ձեռքբերման հնարավորությունը, այլ ոչ՝ որևէ բաղկացուցիչի (տրանսմիսիոն և շարժիչի յուղեր, անվադողեր, մարտկոց և այլն) միջին շուկայական գներով: Այս առումով խնդրահարույց է նաև այն, որ բացի հանձնաժողովի կողմից ներկայացված հաշվարկ-առաջարկներից՝ որևէ այլ հակակշիռ կամ այլընտրանքային առաջարկ չի ներկայացվել, ինչը հնարավորություն կընձեռեր համեմատել և գնահատել վերջիններիս առավելություններն ու թերությունները:
- Արդարացված կլինի տարբերակված սակագնի սահմանումը միննույն կամ մոտ երկարություն ունեցող երթուղիների համար՝ արդեն կախված ուղևորահոսքից: Հատկանշական է, որ եվրոպական երկրների գրեթե բոլոր քաղաքներում (օրինակ՝ Ստոկհոլմում /Շվեդիա/, Բեռլինում, Մյունխենում /Գերմանիա/, Փարիզում, Լիոնում, Գրենոբլում /Ֆրանսիա/) գործում է հանրային տրանսպորտի սակագնային համակարգ: Ըստ այդ համակարգի՝ հանրային տրանսպորտի տարբեր սակագներից օգտվելու համար նախատեսված են տարբեր չափանիշներ, որոնցից մեկն է նաև տրանսպորտի երթուղու երկարությունը: Բացի նշված չափանիշից, յուրաքանչյուր քաղաքի հանրային տրանսպորտի սակագնային համակարգի մեջ որպես այլ

չափանիշներ սահմանվում են նաև հատուկ սակագներ հասարակության առանձի խմբերի ներկայացուցիչների համար՝ թոշակառուներ, ուսանողներ, երեխաներ, և այլն:

- Անհրաժեշտ է յուրաքանչյուր երթուղում նախատեսել տրանսպորտի հարմարեցում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Պաշտպանը բազմիցս բարձրաձայնել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելու մատչելիությունը չապահովելու խնդիրը: ՀՀ կառավարության կողմից 2012թ. դեկտեմբերի 20-ի նիստի ընթացքում թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատել է «Հաշմանդամություն ունեցող իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2012թ. հաշվետվությունը, որում նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովումը, բացի ՀՀ կառավարությունից, դրված է նաև տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Մասնավորապես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում հստակ նշվում է, որ, որպես քաղաքապետի լիազորություններ, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում սահմանվում է քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար պայմաններ ստեղծելու ծրագրերի իրականացումը:
- Նախատեսվող փոփոխությունների բարեխիղճ իրականացման կապակցությամբ անհրաժեշտ է ուղևորափոխադրման որակի, անվտանգության նկատմամբ իրական, գործուն վերահսկողության մեխանիզմների ու դրանց կիրառման երաշխիքների մշակումը, քանի որ նույնիսկ ներկայում գործող սակագնի պայմաններում ուղևորները որևէ կերպ ապահովագրված չեն տրանսպորտային միջոցների գերբեռնվածությունից, չվացուցակի անկանոնությունից և փոխադրամիջոցների մաշվածությունից բխող անհարմարություններից և վտանգներից, իսկ լիազոր մարմնի՝ Քաղաքապետարանի վերահսկողությունը շատ դեպքերում թերի է:
- Հանրային տրանսպորտի համակարգի միջոցով Քաղաքապետարանն, ըստ էության, մատուցում է ծառայություններ, որոնց սպառողը Երևան քաղաքի բնակչությունն է: Իսկ ՀՀ Սահմանադրության 31.1 հոդվածը հստակորեն ամրագրում է, որ. «Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ»: Նշված նորմի մեկնաբանության համաձայն՝ սպառողի իրավունքն է ձեռք բերել իր պահանջները բավարարող, որակյալ ու անվտանգ ծառայություններ: Ծառայություններ առաջարկող սուբյեկտների պարտականությունն է երաշխավորել ծառայությունների մատուցման գործընթացի անվտանգությունը, տրամադրվող ծառայությունների պատշաճ որակը: Սահմանադրության 31.1-րդ հոդվածից բխում է, որ ՀՀ-ում սպառողների իրավունքների պաշտպանությունը սահմանադրական պահանջ է, պետության սոցիալ-տնտեսական, իրավական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը, ուստի կարևոր է սպառողների պաշտպանության երաշխիքների գործուն

համակարգի ստեղծումը, (միջազգային փորձի ուսումնասիրումն ու կիրառումը) նույնիսկ եթե նման համակարգ դեռևս չի գործում:

Առանց կանխորոշելու տրանսպորտի սակագնի վերջնական արժեքը՝ կարծում ենք, որ միայն այս խնդիրների հստակ և կանխատեսելի լուծումների առկայության դեպքում կարելի է ունենալ որակյալ և անվտանգ հասարակական տրանսպորտ, ընդ որում՝ սակագնի վերանայման գործընթացում պետք է առաջնորդվել ուղևորափոխադրող կազմակերպությունների գերշահույթների բացառման սկզբունքով:

Երևանում մեքենաների կայանատեղերի համակարգը ներդրվել էր լուրջ թերացումներով, ինչպես օրինակ՝ անձինք 1 ժամից պակաս կայանելիս՝ ստիպված են եղել վճարել 1 ժամվա կայանման գումար, չեն նախատեսվել անվճար հատուկ կայանատեղեր հաշմանադամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև չէին կազմակերպվել հանրային քննարկումներ: «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թեև կոնկրետ համայնքում տուրքի դրույքաչափերը, դրանց վճարման ձևերը և այլ հարցերի կարգավորման իրավասությունը վերապահված է տվյալ դեպքում Երևան քաղաքի ավագանուն, այնուամենայնիվ, ավագանու որոշումները տուրքի վճարման ընթացքում վարորդի համար առաջացրել են ավելորդ, չհիմնավորված դժվարություններ և անհարմարություններ: Մասնավորապես, օրենքը նախատեսում է, որ տուրքի վճարման պարտավորությունը ծագում է ավտոմեքենան կայանելու պահից, սակայն Երևանի ավագանու որոշմամբ տուրքի վճարման հստակ վերջնաժամկետ սահմանված չէ: Առկա պայմաններում պարզ չէ, թե անվճար կայանել կարելի է միայն 5 րոպե, ապա անձը պարտավոր է կատարել տուրքի վճարումը հենց 5 րոպեի ընթացքում, թե՛ ոչ: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ, օրինակ, մայրաքաղաքին անձանոթ մարդը մեքենան կայանելուց հետո 5 րոպեի ընթացքում պետք է տեղեկատվական վահանակի միջոցով տեղեկանա տուրք վճարելու իր պարտականության մասին, նույն այդ ժամանակահատվածում կարողանա մոտակայքում գտնել վճարային որևէ կազմակերպություն կամ սարքավորում և կատարել տուրքի վճարումը, իսկ 5 րոպեն թեկուզ մեկ րոպեով գերազանցվելու դեպքում՝ կտուգանվի 5.000 ՀՀ դրամի չափով: Հետևաբար, այսպիսի իրավիճակից խուսափելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր վարորդին տալ ավելի երկար ժամանակով անվճար կայանելու հնարավորություն: Կազմակերպական առումով լուրջ բացթողում էր նաև տուրքի համակարգի մասին անբավարար հանրային իրազեկումը, ինչի ապացույց էին վարորդների բազմաթիվ անպատասխան հարցերը տուրքի վճարման, անդորրագրերի ստացման կարգի վերաբերյալ, ինչպես նաև այն փաստը, որ բազմաթիվ քաղաքացիներ վճարեցին ամբողջ տարվա համար սահմանված տուրքը, որից հետո միայն կատարվեց վերահաշվարկ, և նրանց վերադարձվեց այդ գումարի մի մասը: Նման խնդիրներից խուսափելու համար բազմիցս նշել ենք յուրաքանչյուր այսպիսի դեպքում հանրային քննարկումների կարևորության մասին: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հանրային քննարկումները չպետք է լինեն ձևական և ինքնանպատակ, քանի որ դրանց բացակայությունը իրավական ակտերը դարձնում է գործնականում անկիրառելի կամ հանգեցնում անձանց իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Վճարովի ավտոկայանատեղերի համակարգի ներդնման ընթացքի մեկ այլ թերություն վերաբերում է հետևյալին: Այսպես, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով

հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախագծի շրջանակներում Պաշտպանի կողմից Քաղաքապետարանին առաջարկվել է վերանայել Օրենքի վերնագիրը՝ «խախտումների» բառից հետո «կամ համայնքային վճարովի ավտոկայանատեղերի համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու» բառերով լրացնելը, քանի որ նման լրացմամբ, ըստ էության, «համայնքային վճարովի ավտոկայանատեղերի համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու» արարքը հավասարեցվում է «խախտում» արարքին՝ հաշվի առնելով Օրենքի, ինչպես նաև Նախագծով առաջարկվող դրույթների (համապատասխան սանկցիաների) բովանդակությունը: Մասնավորապես, խնդիրն այն է, որ նախագծային փաթեթում նախագծի հեղինակի պարզաբանման համաձայն. «...«Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված և զանապետական հաշվի մուտքերի տվյալների համադրման արդյունքում պարզվում է իրավախախտման՝ ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չվճարելու փաստը /որով ապացուցվում է նաև մեղքի առկայությունը/, որի դեպքում իրավախախտման արձանագրությունը կազմվում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց նկատմամբ»: Նշվածից բխում է, որ Քաղաքապետարանը նույնացնում է ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չվճարելու փաստը այդ արարքը կատարելու մեղքի հետ, ինչը չի բխում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներից, որտեղ նշվում է, որ իրավախախտման հատկանիշները (որոնցից է նաև մեղքը) համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում: Նշվածի պրակտիկ օրինակ կարող է հանդիսանալ այն իրավիճակը, երբ անձը համապատասխան չափի վճարում պատշաճ կարգով կատարել է, սակայն տարբեր հանգամանքների բերումով, վերջինիս կամքից անկախ, իր մեքենան սահմանված վայրում կայանված է մնացել վճարված տուրքին համարժեք ժամանակից ավել ժամանակահատված: Նշված դեպքում, ըստ Նախագծի հեղինակի, միայն այն փաստը, որ տեսախցիկը արձանագրել է տվյալ վայրում սահմանված ժամանակից ավել ժամանակով կայանելը (չբացահայտելով, թե ինչ պատճառներով է մեքենան կայանված մնացել այս վայրում վճարմանը համապատասխան ժամանակից ավել ժամանակով) և այն, որ ավել կայանված ժամանակահատվածի համար համապատասխան վճարում չի եղել (իսկ այս դեպքում վճարում չկատարելը ուղղակիորեն կապված է երկար կայանելու պատճառի հետ), ըստ էության, համարվում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի խախտում, քանի որ այս դեպքում վարչական վարույթ է հարուցվում առանց պարզելու իրավախախտման հատկանիշները: Սույն օրինակում տեսանյութը ոչ թե խախտումը կատարած անձի մեղքի, այլ անհրաժեշտ վճարումը կատարած չլինելու փաստի հետ համադրելը բավարար և հիմնավոր չէ և չի բխում Օրենքի պահանջից, քանի որ «իրավախախտման հատկանիշ» ասելով պետք է հասկանալ, ոչ թե համապատասխան վճարումը կատարած լինելը կամ չլինելը, այլ, տվյալ դեպքում, կոնկրետ տարածքում համապատասխան ժամկետից ավել

կայանելու անձի մեղքի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես դա պահանջում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը: Այնուամենայնիվ, նշված առաջարկությունը Քաղաքապետարանի կողմից հաշվի չի առնվել նախագծի հետագա մշակման փուլում: Մեկ այլ խնդիր է այն, որ Քաղաքապետարանը իր կողմից մշակված «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի հիմնավորման մեջ նշել էր, որ գործնականում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կիրառումն առաջացնելու է խնդիրներ և բարդություններ՝ կապված նշված օրենսգրքի հոդվածների և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրառման հետ (գործնականում բարդություններ կառաջանան կապված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը ներկայացվող պահանջի պահպանման հետ): Պարզ չէ՝ արդյոք նման բարդությունները հնարավոր չէր կանխատեսել նախքան համապատասխան համակարգի ներդնումը: Այսպես, ըստ Պաշտպանին ներկայացված բողոքների՝ որոշ դեպքերում Քաղաքապետարանի կողմից կայացրած վարչական ակտերը չեն եղել պատշաճ հիմնավորված: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ գրավոր վարչական ակտին ներկայացվում են այնպիսի պահանջներ, ինչպիսիք են ակտով լուծվող հարցի նկարագրությունը, ակտի ընդունման հիմնավորումը, ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել, և այլ պարտադիր տեղեկատվություն: Նույն օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի: Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իր ո՞ր իրավունքն է սահմանափակվում, իրեն ի՞նչ իրավունքից են զրկում, իրեն ի՞նչ իրավունք է տրամադրվում, կամ իր վրա ի՞նչ պարտականություն է դրվում: Նշված պայմաններն ապահովում են վարչական ակտի որոշակիությունը, քանի որ վարչական ակտի որոշակիությունն արտահայտվում է նրա ձևակերպման հստակությամբ, պարզությամբ և հասկանալի լինելու հանգամանքով: Նշենք, որ իրավական որոշակիության սկզբունքը նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով («Մանդի Թայմսը» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 26.04.1979; Մարկլիսը ընդդեմ Բեյլիայի գործով վճիռ 13.06.1979): ՀՀ

Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-753 մեջ հայտնել է դիրքորոշում, համաձայն որի՝ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Միաժամանակ, վերոնշյալ օրենքի 57-րդ հոդվածը սահմանում է, որ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Այսինքն, ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում վարչական մարմինը պարտավոր է տալ վարչական ակտի իրավական և փաստական հիմնավորումները: Վարչական ակտի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա վարչական մարմինը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Վարչական ակտի մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանել, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Բացի այդ, քաղաքացիներից ստացված մի շարք բողոքները վկայում են այն մասին, որ վարչական վարույթի ընթացքում պարզաբանումներ ստանալու նպատակով քաղաքացիները հրավիրվում են Քաղաքապետարան, սակայն արդյունքում քաղաքացիների կողմից տրված պարզաբանումները, ըստ էության, հաշվի չեն առնվում: Ստացվում է, որ նշված ընթացակարգը կրում է զուտ ձևական բնույթ: Նշված համատեքստում հատկանշական է սխալ կայանման դեպքում սխալ կայանված ժամանակահատվածի թույլտվության հաշվարկման մեթոդը Քաղաքապետարանի՝ տվյալ դեպքում որպես վարչական ակտ կայացնող մարմնի կողմից: Այսպես, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է ավտոկայանատեղի տուրքի դրույքաչափերի հետևյալ առավելագույն սանդղակները. մեկ ժամվա համար՝ մինչև 300 դրամ, մեկ օրվա համար՝ մինչև 2500 դրամ, մեկ շաբաթվա համար՝ մինչև 5000 դրամ, մեկ ամսվա համար՝ մինչև 25000 դրամ, մեկ տարվա համար՝ մինչև 100000 դրամ: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ օրենքի 10-րդ հոդվածում ամրագրված է, որ. «Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված տուրքի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար թույլտվության հաշվարկման մեթոդ»: Թեև Քաղաքապետարանի հայտնած տեղեկատվության համաձայն՝ դրույքաչափերի սահմանման համար հաշվի է առնվել այլ երկրների փորձը, այնուամենայնիվ գտնում ենք, որ վերը նշված երկու դրույթների համադրումից բխում է, որ հաշվի առնելով հաշվարկման նշված մեթոդը՝ դրույքաչափերի նման առավելագույն սանդղակների սահմանման համար բացակայում է իրավական հիմքը: Բացի այդ, բազմաթիվ քաղաքացիների մտահոգությունն այն էր, որ Երևան քաղաքի ավագանու

որոշմամբ ավտոկայանատեղի տուրքի դրույքաչափերը սահմանելիս հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ շատ դեպքերում ավտոտրանսպորտային միջոցները կայանվում են համապատասխան գծանշված հատվածներում մինչև 1 ժամ տևողությամբ, օրինակ՝ 20 րոպե, 35 րոպե, և այլն: Նման դեպքերում, այնուամենայնիվ, վարորդից գանձվում է 1 ժամ տևողությամբ կայանելու համար սահմանված գումարը: Նշված հարցի վերաբերյալ Քաղաքապետարանը հայտնել է, որ. ««Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքով թույլատրվող հաշվարկվող տեղական տուրքի դրույքաչափ նախատեսված չէ, մասնավորապես, օրենքի 10-րդ հոդվածով սահմանված է տեղական տուրք յուրաքանչյուր մեկ ժամվա համար, ինչպես նաև նախատեսված չէ տեղական տուրքի դրույքաչափի նվազեցում կամ տրոհում»: Թեև Օրենքը սահմանում է, որ ավտոկայանատեղի տուրքերի դրույքաչափերը կարող են սահմանվել ըստ կայանատեղի, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ օրերի և օրվա ժամերի, ըստ ամսվա և տարվա, այնուամենայնիվ, նույն Օրենքի 10-րդ հոդվածը միաժամանակ նշում է. «Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված տուրքի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար թույլտվության հաշվարկման մեթոդ»: Ելնելով 10-րդ հոդվածի բառացի մեկնաբանությունից՝ գտնում ենք, որ ավտոկայանատեղում կայանման ժամանակը կարող է հաշվվել նաև թույլտվություն, քանի որ նման կարգավորման հնարավորություն նախատեսվել է Օրենսդրի կողմից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ենթադրվում է, որ Քաղաքապետարանը, հիմք ընդունելով այս հարցի վերաբերյալ լայն արձագանք ստացած հանրության մտահոգությունը, կարող էր, որպես պատասխանատու և շահագրգռված մարմին, հանդես գալ նախաձեռնությամբ՝ առաջարկելով գործնականում գծանշված հատվածներում մինչև 1 ժամ տևողությամբ կայանելու դեպքում կատարել կայանված ժամանակահատվածին համապատասխան վճարում՝ կիրառելով թույլտվության հաշվարկման մեթոդը: Բացի այդ, պրակտիկայում Քաղաքապետարանի համար խնդրահարույց չէր լինի կայանված փաստացի թույլտվությունը հաշվելը՝ կայանման վայրերում տեղադրված տեսանկարահանող սարքերի միջոցով: Այնինչ, փոխարենը Քաղաքապետարանը Օրենքի 10-րդ հոդվածը մեկնաբանում է յուրովի՝ նշելով, որ 10-րդ հոդվածով սահմանված է տեղական տուրք յուրաքանչյուր 1 ժամվա համար, ինչպես նաև նախատեսված չէ տեղական տուրքի դրույքաչափի նվազեցում կամ տրոհում: Նման մեկնաբանումը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Քաղաքապետարանը քաղաքի ծայրամասերում գտնվող կիսաքանդ փողոցները ասֆալտապատելու փոխարեն կրկնակի ասֆալտապատել է կենտրոնական փողոցները, չնայած դրանց բարեկարգ վիճակին: Քաղաքապետարանի հայտնած դիրքորոշման համաձայն՝ քաղաքում ասֆալտապատման թիրախ հանդիսացող տարածքի ընտրությունը կատարվում է ելնելով այնպիսի չափորոշիչներից, ինչպիսիք են հիմնանորոգման ժամկետը, տեսանելի փոսերը, ճաքայցումների տեսանելի քայքայվածությունը, որոնք դժվարանցանելի են դարձնում փողոցները: Այնուամենայնիվ, ընթացիկ տարում արձանագրվել են փաստեր, երբ կրկնակի ասֆալտապատվել են արդեն բարեկարգ վիճակում գտնվող կենտրոնական փողոցները՝ անուշադրության մատնելով քաղաքի ծայրամասային փողոցները, ինչն առաջացրել է մի շարք բնակիչների արդարացի դժգոհությունը: Ավելին, կենտրոնական փողոցներում իրականացվող ասֆալտապատման աշխատանքները բազմիցս ստեղծել են

մեծ խցանումներ, որի լուծման իրավասությունը նույնպես պատկանում է Քաղաքապետարանին: Հատկանշական է նաև, որ Քաղաքապետարանի կողմից ձեռնարկվել են միջոցներ ապահովելու ձևամաքման աշխատանքները շուրջ 12 սանմաքման ընկերությունների միջոցով, այնուամենայնիվ, պետք է նշել, որ նշված աշխատանքների կատարման համար բավարար չէ սահմանափակվել քաղաքային նշանակության փողոցներով, քանի որ քաղաքացիների կողմից ստացվել են մի շարք բողոքներ բակերի և մայթերի ձևամաքման աշխատանքների բացակայության վերաբերյալ: Ձևամաքման աշխատանքները պատշաճ կատարելու և ցանկալի արդյունքը ստանալու համար Քաղաքապետարանը կարող է ընդլայնել իր համագործակցությունը սանմաքման ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ: Առանձնակի ուշադրության է արժանի Քաղաքապետարանի հայտնած տեղեկատվությունն առ այն, որ 2013 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անսարքության մասին ստացվել է 929 ահազանգ, որի գերակշիռ մասը ժամանակին վերացվել է, իսկ մնացածների վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ընթացքի մեջ են: Իհարկե, ողջունելի է Քաղաքապետարանի կողմից ստացված ահազանգերին պատշաճ ընթացք տալը, սակայն նշված համատեքստում անհասկանալի է Քաղաքապետարանի՝ 15.10.2013թ. թիվ 02/45-56351 հ գրությամբ հայտնված տեղեկատվությունն այն մասին, որ նշված տների հատվածում ջրամատակարարման և ջրահեռացման խողովակները 2013 թվականի դրությամբ գտնվել են բավարար աշխատանքային վիճակում և 2013 թվականի ընթացքում Վարդաշեն թաղամասի 6-րդ փողոցի 23-49 տների հատվածում ջրագծի և կոյուղագծի վթարի վերաբերյալ որևէ ահազանգ չի ստացվել, այն դեպքում, երբ նշված տների բնակիչները ոչ միայն 2013 թվականի ընթացքում, այլև դեռ նախորդ տարիներին բազմիցս բարձրաձայնել են ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների հետ կապված շարունակական խնդիրը:

Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել Փակ շուկայի ապօրինի շինարարությունը կանխելու համար: Դեռևս 2012 թվականից հասարակության լայն զանգվածը մտահոգված էր Մաշտոցի պողոտայում գտնվող կենտրոնական փակ շուկայում առանց համապատասխան շինարարական փաստաթղթերի ինքնակամ շինարարական աշխատանքների իրականացմամբ: Հատկանշական է, որ թեև Քաղաքապետարանի կողմից հայտնվել էր, որ շինության ծավալատարածական լուծումները պետք է պահպանվեն և պատմամշակութային հուշարձանի արտաքին տեսքը չպետք է խախտվի, սակայն կառուցապատողի կողմից փաստացիորեն իրականացվել է շենքի նոր հարկերի կառուցում՝ խախտելով հուշարձանի ծավալային չափերը: Նշվածի առնչությամբ, Քաղաքապետարանից հայտնել էին, որ կառուցապատողը թեև ենթարկվել է վարչական պատասխանատվության մի քանի անգամ և շինարարական աշխատանքները դադարեցվել են, այնուամենայնիվ որոշ ժամանակ անց դրանք նորից վերսկսվել են՝ այդ կերպ խախտելով Քաղաքապետարանի կողմից կիրառված վարչական միջոցները, ինչին Քաղաքապետարանը հետագայում պատշաճ ձևով չի արձագանքել: Ավելին, 2013 թվականին շուկայի ետնամասում առանց համապատասխան շինարարական փաստաթղթերի կառուցապատողի կողմից իրականացվեցին կցակառույցի տեղադրման շինարարական աշխատանքներ: Թեև ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2013 թվականի մարտի 6-ի նիստում քննարկվել էր

կառուցապատողի կողմից ներկայացված շուկայի մասնակի փոփոխման, պահպանված հատվածի ամրակայման (մասնակի վերակառուցման, պահպանված հատվածի վերականգնման և ուժեղացման) նախագիծը, որով նախատեսվեց նաև ապամոնիտաժել շուկայի ետնամասում ինքնակամ կառուցված նոր ծավալները, և Քաղաքապետարանը բազմիցս հայտնել էր, որ նշված տարածքում իր կողմից իրականացվում է համապատասխան հսկողություն, այնուամենայնիվ շուկայում ինքնակամ շինարարությունն ամբողջությամբ իրականացվեց: Հաշվի առնելով նշվածը՝ հարկ ենք համարում նշել, որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի ուժով քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության ղեկավարը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, իսկ համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ քաղաքապետը կազմակերպում է ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները: Այնինչ, արձանագրված փաստը վկայում է այն մասին, որ Քաղաքապետարանը հետևողական չէր իր օրենսդրական պարտականությունների պատշաճ կատարման նկատմամբ:

Հաշվի չառնելով քաղաքաշինական նորմերի պահանջները, ինչպես նաև Կոմիտաս 5 հասցեի բնակիչների համար մի շարք բացասական հետևանքները, օրինակ՝ հարակից շենքերի լուսավորության էական նվազումը, տարածքի ծառերի հատումը և այլն, Քաղաքապետարանը այնուամենայնիվ թույլատրել էր այդ տարածքում շինարարությունը: Դեռևս մի քանի տարի առաջ Կոմիտաս 5 հասցեում սկսված, իսկ վերջին ամիսներին՝ նույն հասցեում վերսկսված շինարարությունը լուրջ խնդիրների պատճառ է դարձել: Ոլորտի մասնագետների պնդմամբ՝ նշված հասցեում էլեկտրատրանսպորտի քարշի ենթակայանը և բազմաբնակարան 14-հարկանի շենքի կառուցումը ոչ միայն հակասում է քաղաքաշինական մի շարք նորմերին, այլև չի բխում Քաղաքապետարանի որդեգրած՝ բակային տարածքների կանաչապատման քաղաքականությունից: Բազմաթիվ են նշված հասցեի բնակիչների բողոքներն այն մասին, որ քննարկվող տարածքում շինարարության իրականացման համար կտրվել են տարածքի ծառերը, բարձրահարկ շենքի պատճառով արևի լույսի ներթափանցումը օրական 12 ժամից կրճատվում է մինչև 2-ից 2.5 ժամի, բացի այդ, էլեկտրատրանսպորտի քարշի ենթակայանի շինարարական նախագծում բացակայում են էլեկտրատրանսպորտի քարշի ենթակայանի աշխատանքի ընթացքում առաջացած աղմուկի մակարդակի հաշվարկները և դրանց համապատասխան իրականացվող աղմկակլանիչ միջոցառումները, որոնք նախատեսված են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001թ. հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանով սահմանված «Քաղաքաշինություն. Հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» ՄՆԻՊ 2.07.01-89 շինարարական նորմերով: Ընդ որում, փաստորեն չկան ոչ միայն ենթակայանի աշխատանքի ընթացքում առաջացած աղմուկի մակարդակների հաշվարկները, այլև՝ սանիտարական նորմերի պահանջներին դրանց համապատասխանության հիմնավորումը: Ստացվում է, որ Քաղաքապետարանը կառուցապատողին շինարարության թույլտվություն տալիս պատշաճ ուսումնասիրության չի ենթարկել կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային փաթեթները:

Քաղաքապետարանը որևէ միջոց չի ձեռնարկել Նելսոն Մտեփանյանի անվան մանկական զբոսայգում այլասերվածությունը վերացնելու ուղղությամբ, մասնավորապես չի լուսավորվել և չի ցանկապատկվել այգու շրջակայքը, ինչպես նաև չի փակվել այգու մուտքը գիշերային ժամերին: Արդեն երկար ժամանակ է, որ Պաշտպանին են հասցեագրվում դիմում-բողոքներ, ինչպես նաև պարբերաբար զանգվածային լրատվության միջոցներով է բարձրաձայնվում այն մասին, որ մի շարք անձինք Նելսոն Մտեփանյանի անվան մանկական զբոսայգում պարբերաբար զբաղվում են պոռնկությամբ, ինչպես նաև ունենում սեռական հարաբերություններ հենց մանկական այգու տարածքում: Նշվածի հետևանքով անհնարին է դառնում երեկոյան ժամերին զբոսայգի այցելելը: Բացի այդ, այդ անձինք շարունակաբար աղմկելով խախտում են բնակիչների անդորրը, ինչի մասին բազմիցս հայտնել են այգու հարակից շենքերի բնակիչները: Նշվածի վերաբերյալ Երևանի քաղաքապետը հայտնել է, որ խնդրի լուծմանն ուղղված գործողություններ կատարելու համար Երևանի քաղաքապետը չունի օրենքով նախատեսված լիազորություններ՝ նշելով, որ համապատասխան պետական լիազոր մարմինը ՀՀ Ոստիկանությունն է: Այնինչ, գտնում ենք, որ այգում այլասերվածության կանխումը հնարավոր է Քաղաքապետարանի կողմից հստակ գործողությունների ձեռնարկման դեպքում: Մասնավորապես, Քաղաքապետարանը կարող է միջոցներ ձեռնարկել ցանկապատելու այգին և փակելու այգու մուտքը գիշերային ժամերին (ինչպես օրինակ՝ Սիրահարների այգում), ինչպես նաև այդ ժամանակահատվածում ուժեղացնել լուսավորումը այգու շրջակայքում: Հատկանշական է, որ մի շարք եվրոպական քաղաքներում նման այգիները պատշաճ կերպով լուսավորված և ցանկապատված են: Հարկավոր է հաշվի առնել, որ նման գործողությունների ձեռնարկումը բխում է Քաղաքապետարանի լիազորություններից :

Անմատչելի է եղել մի շարք շինություններ հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքը: Մի շարք դեպքերում ընդհանրապես բացակայել են թեքահարթակները, իսկ առկայության դեպքում էլ դրանց թեքության աստիճանը չափազանց բարձր է եղել: Հաշմանդամություն ունեցող անձանց համար անմատչելի շինությունների կառուցման, հիմնանորոգման նպատակով կազմվում են սխալ, շինարարական նորմերին չհամապատասխանող ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, որոնք օրենքի պահանջներին հակառակ հաստատվում են համայնքի ղեկավարի՝ Երևանի քաղաքապետի կողմից: Արդյունքում, այն դեպքերում, երբ Քաղաքապետարանը տեղեկացվում է, որ իրենց կողմից հաստատված սխալ ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա կառուցվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար անմատչելի շինություն, նրանք հայտնում են, որ սխալն ի սկզբանե եղել է հայտի մեջ, իսկ նրանք պատրաստ են նոր ճիշտ հայտի դեպքում հաստատել այն , մինչդեռ դպրոցների և այլ համայնքային նշանակության շենքերի սխալ կառուցման և հիմնանորոգման համար, ստացվում է, պետական բյուջեից բավականին մեծ գումարներ են հատկացվում: Նշվածի օրինակ կարող է հանդիսանալ հետևյալը. հիմք ընդունելով քաղաքացիների՝ զանգվածային լրատվամիջոցներով տարածում գտած մտահոգությունը՝ Պաշտպանը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել է Երևանի թիվ 174 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության չափահովման հարցը: Այսպես, Երևանի թիվ 174 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը, որն իրականացնում է ներառական կրթություն, 2013

թվականին հիմնանորոգվել է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, սակայն վերանորոգման արդյունքում այն չի հարմարեցվել հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մասնավորապես՝ կառուցված թեքահարթակը չի համապատասխանում շինարարական նորմերին, դպրոցի սանհանգույցները, դռները մատչելի չեն: Եռահարկ շենքում չկան վերելակ կամ ամբարձիչ հարթակներ հաշմանդամ երեխաների ազատ տեղաշարժման համար: Խնդրի ուսումնասիրության նպատակով Պաշտպանի կողմից իրականացրած հարցումներից պարզ է դարձել, որ Երևանի թիվ 174 հիմնական դպրոցի հիմնանորոգման և կաթսայատան իրականացման համար 2007թ. հուլիսի 16-ին Քաղաքապետարանի կողմից տրվել է թիվ 18-07/2-1209-628 ճարտարապետահատակագծային առաջադրանքը ՀՀ քաղաքաշինության նախարարության համապատասխան հայտի հիման վրա, որում «հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ» տողում ոչինչ չի նշվել, մինչդեռ ՀՀ շինարարական նորմերի IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) ընդհանուր դրույթների 4.2 կետով հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերին /ԲՄԽ/ մատչելի օբյեկտների ցանկը, հաշմանդամների հաշվարկային թվաքանակը և կարգը, ինչպես նաև ԲՄԽ-ների շարժունակության խումբը /Հավելված Գ, աղյուսակ Գ1/ պետք է սահմանվեն նախագծման և ճարտարապետահատակագծային առաջադրանքով: Քաղաքապետարանից ստացված պատասխանի համաձայն՝ դպրոցի հիմնանորոգման և կաթսայատան իրականացման 16.07.2007թ. թիվ 18-07/2-1209-628 ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության համապատասխան հայտի հիման վրա, որում հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների իրականացման համար պահանջ չի առաջադրվել: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում գտնում ենք, որ Քաղաքապետարանի աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների /անգործության/ հետևանքով ներառական կրթություն իրականացնող Երևանի թիվ 174 հիմնական դպրոցի հիմնանորոգման և կաթսայատան իրականացման աշխատանքներն իրականացվել են շինարարական նորմերի խախտմամբ: Նախ, Քաղաքապետարանի պարզաբանումն առ այն, որ առաջադրանքը տրվել է սխալ հայտի հիման վրա և Քաղաքապետարանը պատասխանատվություն չի կարող կրել շինարարական նորմերի խախտմամբ իրականացված հիմնանորոգման համար իրավաչափ չէ, քանի որ ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշման դրույթների համաձայն՝ համայնքի ղեկավարը (ով Երևան քաղաքում Երևանի քաղաքապետն է) կառուցապատողին պարտավոր է տալ միայն այնպիսի ճարտարապետահատակագծային առաջադրանք, որը համապատասխանում է սահմանված շինարարական նորմերին և օրենքի պահանջներին: Իսկ ինչ վերաբերում է առաջադրանքի համար ներկայացված հայտում թույլ տրված սխալների համար Քաղաքապետարանի կողմից պատասխանատվություն չկրելուն, ապա տվյալ պարզաբանումն իրավաչափ չէ, քանի որ Երևանի թիվ 174 դպրոցը, հանդիսանալով ներառական կրթություն իրականացնող հաստատություն, չի հարմարեցվել հաշմանդամություն ունեցող անձանց պահանջներին (ինչը չի կարող սահմանափակվել միայն թեքահարթակի առկայությամբ): Այսպիսով, Քաղաքապետարանի գործողություններով (անգործությամբ) խախտվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, ինչի առնչությամբ Պաշտպանը կայացրել է խախտման որոշում՝

առաջարկելով Քաղաքապետարանին միջոցներ ձեռնարկել նման խախտումները բացառելու ուղղությամբ:

Միջոցներ չեն ձեռնարկվել հասարակական տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու համար: Դեռևս նախորդ տարիներից շարունակում են ստացվել բողոքներ այն մասին, որ հասարակական տրանսպորտը, համապատասխան հարմարանքներով կահավորված չլինելու հետևանքով, դեռևս անմատչելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս առումով անընդունելի է Քաղաքապետարանի կողմից անգործության դրսևորումը: Մասնավորապես, խնդրի առնչությամբ Քաղաքապետարանը հայտնել է, որ 2013 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման հարմարանքներով ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ չեն կահավորվել: Օրենսդիրը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում նախատեսել է Երևանի քաղաքապետի՝ որպես պարտադիր լիազորություն, քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտները և հասարակական տրանսպորտը հաշմանդամների ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագրերի իրականացումը: Նման կարևոր հարցի առնչությամբ Քաղաքապետարանի հայտնած սույն դիրքորոշումը կոպտորեն խախտում է անձի՝ ազատ տեղաշարժման սահմանադրական իրավունքը և չի բխում օրենքի պահանջներից:

Քաղաքապետարանի հայտնած տեղեկատվության համաձայն՝ 2013 թվականի ընթացքում Քաղաքապետարանի թեժ գծին ստացված հեռախոսազանգերի արդյունքում մուտքագրվել է 8889 փաստաթուղթ, որոնց առնչությամբ աշխատանքային մեկօրյա կատարման ժամկետով աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրվել են համապատասխան հանձնարարականներ: Իսկ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում գործող թեժ գիծ համարվող հեռախոսահամարներին ստացվել է 4160 հեռախոսազանգ: Նշված ցուցանիշն, իհարկե, տարբերվում է 2012 թվականին արձանագրված ցուցանիշներից, որոնց համաձայն՝ թեժ գիծ ծառայության միջոցով ստացվել էր 2156 ահազանգ: Հատկանշական է, որ ինչպես 2012 թվականին, այնպես էլ 2013 թվականին Քաղաքապետարանի թեժ գծին ստացված ահազանգերը վերաբերել են հիմնականում կոմունալ-կենցաղային բնույթի այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպում, կոյուղագծերի և ջրագծերի վթարներ, համատիրությունների դեմ բողոքներ՝ կապված բազմաբնակարան շենքերում տանիքների, մուտքերի վերանորոգման, վերելակների անսարքության վերացման աշխատանքների իրականացման, ծառերի էտման, վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման, բակային տարածքներում արտաքին լուսավորության համակարգի տեղադրման և այլ խնդիրների լուծման հետ: Նշվածը, ինչպես նաև այն, որ 2013 թվականի ընթացքում Քաղաքապետարանում գրանցվել է ընդհանուր թվով 30.422 ահազանգ, հիմք է տալիս ենթադրելու, որ Քաղաքապետարանը բավարար հետևողականություն չի ցուցաբերել նշված հարցերի արդյունավետ կարգավորման և երկարատև լուծումներ տալու կապակցությամբ:

Խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ անօրինական ծառահատումների վերաբերյալ 2013 թվականի վիճակագրական տվյալները էապես չեն տարբերվում 2012

թվականի տվյալներից, նույնիսկ որոշակի հետընթաց է գրանցվել: Այսպես, 2012 թվականին արձանագրվել էր ապօրինի ծառահատման 10 դեպք, որոնց հետևանքով թվով 6 ծառ ոչնչացվել էին, իսկ Քաղաքապետարանի և Քաղաքապետարանի հաղորդման հիման վրա այլ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում հիմնականում իրավախախտողներ չէին հայտնաբերվել, և միայն 2 դեպքով էր կիրառվել վարչական պատասխանատվություն: 2013 թվականին արձանագրվել է ապօրինի ծառահատման 9 դեպք, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, ոչնչացվել է 54 ծառ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում բացահայտվել է իրավախախտման 3 դեպք, իսկ Ոստիկանություն ուղարկված իրավախախտման մնացած դեպքերի վերաբերյալ դեռևս ընթանում է քննություն: Հարկ ենք համարում կրկին նշել, որ շրջակա միջավայրի պահպանությունը պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրությունից: 2012 և 2013 թվականների վերոնշյալ վիճակագրական տվյալներից կարելի է եզրակացնել, որ Քաղաքապետարանը չի գործադրում նշյալ խնդրի կանխարգելման և/կամ վերացման արդյունավետ մեխանիզմներ, ինչի հետևանքով էլ չի գրանցվում առաջընթաց սույն խնդրի լուծման հարցում: Այն հանգամանքը, որ 2012 թվականի ընթացքում արձանագրված ապօրինի ծառահատման 10 դեպքերի բացահայտման նկատմամբ Քաղաքապետարանը բավարար հետևողականություն չի ցուցաբերել, հանգեցրել է այն բանին, որ գրեթե նույն արդյունքն է արձանագրվել նաև 2013 թվականին:

Ողջունելի են Քաղաքապետարանի ձեռնարկված միջոցները, որոնց արդյունքում 2013 թվականին շուրջ 9 վարչական շրջանների շենքերի մուտքերը և շենքերի ներսի հատվածը հարմարեցվել է հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժումն ապահովելու համար, ինչպես նաև մայրաքաղաքի փողոցները և բանուկ մասերը վերազինվել են 80 թեքահարթակով: Այնուամենայնիվ, ստացված բազմաթիվ դիմում-բողոքներում քաղաքացիներն իրենց մտահոգությունն էին հայտնել կառուցվող թեքահարթակների արդյունավետության վերաբերյալ: Բացի այդ, զանգվածային լրատվության միջոցներով նույնպես բազմիցս բարձրաձայնվել է այն մասին, որ կառուցված թեքահարթակների թեքության աստիճանը հնարավորություն չի տալիս անվասայլակ օգտագործող անձանց ինքնուրույն օգտվելու այդ թեքահարթակներից, ինչն էլ ըստ էության, իմաստազրկում է թեքահարթակների առկայությունը և դրանց կառուցման համար ֆինանսական և մարդկային ռեսուրսների օգտագործումը:

Ողջունելի է, որ Քաղաքապետարանի ձեռնարկված միջոցների արդյունքում մայրաքաղաքի ճանապարհային ցանցում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերից 15-ում երթևեկության կազմակերպման համապատասխան տեխնիկական միջոցներով կահավորվել են 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի անձանց կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա փոխադրող տրանսպորտային միջոցների համար նախատեսված առանձին կայանման տեղեր: Սակայն գտնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար անվճար ավտոկայանատեղերի հատկացման երաշխիքը պետք է ձեռք բերի օրենսդրական կարգավորում: Հատկանշական է, որ միջազգային փորձի համաձայն՝ ավտոկայանատեղերի որոշակի մաս պետք է հատուկ հատկացված լինի տեղաշարժվելու հետ կապված խնդիրներ ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի անձանց տեղափոխող մեքենաների

կայանման համար, ընդ որում՝ նման հատուկ ավտոկայանատեղերը պետք է հնարավորինս մոտ գտնվեն համապատասխան շինություններին: Միաժամանակ, ՀՀ կառավարության 26.10.2006թ. թիվ 1699-Ն որոշման 55.20 կետի համաձայն՝ «Կայանման տեղ» (6.4) նշանի հետ կիրառվում է «Հաշմանդամներ» (8.17) ցուցանակը՝ նշելով, որ կայանման հրապարակը (կամ դրա մասը) հատկացված է 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա փոխադրող տրանսպորտային միջոցների կայանման համար: Սույն դրույթի ապահովման որևէ միջոցներ ամրագրված չեն Երևանի քաղաքի ավագանու 25.12.2012թ. թիվ 563-Ն որոշմամբ:

Առաջարկություններ

- Հետևողական լինել օրենքով սահմանված կարգով և դեպքերում կազմակերպելու պատշաճ հանրային քննարկումներ՝ դրա մասին հասարակության իրազեկման միջոց օգտագործելով ոչ միայն ինտերնետային կայքէջը, այլ նաև հանրության համար մատչելի այլ միջոցները՝ ներառյալ հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ, բաց լսումներ, քննարկումներ՝ ընդհուպ մինչև հասարակական հարցումներ կազմակերպելը:
- Երևանի ներքաղաքային ուղևորափոխադրումների սակագնի վերանայման ընթացքում հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են երթուղիների երկարությունը, տրանսպորտի հարմարեցումը հաշմանդամություն ունեցող անձանց համար, ուղևորափոխադրման որակը, և այլն:
- «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վերամշակել՝ հստակեցնելու, որ ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չվճարելու փաստը ինքնին չի հանդիսանում այդ արարքը կատարելու անձի մեղքը ապացուցող հանգամանք:
- Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ փոփոխություն կատարելու «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքում, ինչի արդյունքում կվերանայվեն ավտոկայանատեղի տուրքի դրույքաչափերի՝ օրենքով սահմանված առավելագույն սանդղակները, ինչպես նաև՝ գծանշված հատվածներում մինչև 1 ժամ տևողությամբ կայանելու դեպքում 1 ժամ կայանման համար նախատեսված վճարում կատարելու օրենսդրական պահանջը՝ հաշվի առնելով նույն օրենքում նախատեսված՝ մեկ ժամվա համար սահմանված տուրքի գանձում իրականացնելու դեպքում փաստացի կայանման համար բույներին հաշվարկման մեթոդը :
- Վարչական ակտ ընդունելիս հաշվի առնել դրանում հիմնավորումներ, ակտի բողոքարկման կարգ և այլ պարտադիր անհրաժեշտ տեղեկատվություն պարունակելու օրենսդրական պահանջները:

- Հաշվի առնելով Քաղաքապետարանի լիազորությունների շրջանակը՝ միջոցներ ձեռնարկել Կոմայգում այլասերվածությունը վերացնելու ուղղությամբ, մասնավորապես, լուսավորել և ցանկապատել այգու շրջակայքը, ինչպես նաև փակել այգու մուտքը գիշերային ժամերին:
- Վերանայել Կոմիտաս 5 հասցեում և նման այլ դեպքերում իրականացվող շինարարության հիմքում գտնվող նախագծային փաթեթները՝ բացառելու համար քաղաքաշինական նորմերի կոպիտ խախտումներով իրականացվող շինարարության դեպքերը: Հետագայում կառուցապատողների կողմից ներկայացված նախագծային փաթեթները պատշաճ ձևով ուսումնասիրել՝ նախքան շինարարության թույլտվություն տրամադրելը :
- Մահմանել ինքնակամ շինարարության հստակ և թափանցիկ պահանջներ, որի արդյունքում կպարզեցվի այդ շինությունների օրինական կամ անօրինական լինելու հարցը և կհստակեցվի համայնքներին տրված չափազանց լայն հայեցողությունը: Միջոցներ ձեռնարկել այս ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը վերհանելու, ինչպես նաև նման դեպքերը պատկան մարմիններին փոխանցելու ուղղությամբ:
- Բավարար միջոցներ ձեռնարկել հաճախ ծագող կոմունալ-կենցաղային խնդիրներին երկարաժամկետ լուծումներ տալու համար:
- Ընդլայնել համագործակցությունը սանմաքրման ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ՝ բարելավելու համար բակերի և մայթերի ձևամաքրման աշխատանքները:
- Ասֆալտապատման աշխատանքներ կատարելիս ուշադրության կենտրոնում պահել քաղաքի ծայրամասային փողոցները, որոնք ունեն բարեկարգման կարիք:
- Հետևողական գտնվել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անսարքության վերաբերյալ քաղաքացիների բարձրաձայնած խնդիրների լուծման ուղղությամբ:
- Իրականանել հետևողական քաղաքականություն՝ ոլորտում տեղի ունեցող ապօրինի ծառահատումների դեպքերի վերացման և հետագա կանխման արդյունավետ մեխանիզմներ մշակելու ուղղությամբ:
- Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժումը ապահովելու համար ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ մասնավորապես կառուցվող և կառուցված թեքահարթակների թեքությունը համապատասխանեցնել թեքահարթակներից օգտվող անձանց հնարավորություններին:
- Հաշվի առնելով օրենքի պահանջը՝ ապահովել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցները հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համապատասխան և անհրաժեշտ հարմարանքներով :
- Միջոցներ ձեռնարկել՝ օրենսդրորեն կարգավորելու հաշմանդամություն ունեցող անձանց համար անվճար ավտոկայանատեղերի պարտադիր հատկացումը:
- Հստակ միջոցներ ձեռնարկել՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող մի շարք մանկապարտեզներում երեխաների թիվը թույլատրելի քանակին համապատասխանեցնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն ապահովում է փախստականների իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը, միգրացիայի և փախստականներին առնչվող հարցերի բնագավառներում քաղաքականության մշակումը, ջրային համակարգերի անվտանգ օգտագործումը, տարածքային կառավարման իրականացումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները և այլն:

2013 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Գրանցվել են մի շարք դեպքեր, երբ համայնքի ղեկավարը չի կատարել կամ չարաշահել է իր լիազորությունները, օրինակ՝ առհասարակ չեն պատասխանել կամ ուշ են պատասխանել անձանց բողոքներին, չի կանխվել ինքնակամ շինարարությունը, չի լուծվել հաշմանդամություն ունեցող անձանց համար շինությունների հարմարվածության խնդիրը:
- Սևանա լճի ավազանի անտառների ոչնչացման հետևանքով 1993 թվականի համեմատ անտառների ծավալը 20000 հեկտարից նվազել է շուրջ 5000-ով, ինչի հետևանքով զգալիորեն վնասվել է Սևանի էկոհամակարգը:
- 900-ից ավել փախստական ընտանիք դեռևս չունի բնակարան, չնայած վերջիններիս բնակարանով ապահովելու պետության պարտավորությանը:
- Նախարարության ենթակայության և հսկողության տակ գտնվում է փախստականների համար միայն մեկ ժամանակավոր կացարան, որն էլ գերծանրաբեռնված է: Արդյունքում բազմաթիվ փախստականներ ստիպված բնակվում են այլ կացարաններում, որոնց սեփականատերերը կարող են ցանկացած պահի զրկել նրանց բնակատեղից:
- Պետական միգրացիոն ծառայությունը փախստականների դիմումները ուսումնասիրել է օրենքի խախտմամբ, օրինակ՝ չեն պահպանվել դիմումի քննարկման ժամկետները, չեն տրամադրվել փախստականի փաստաթղթերը և տեղեկանքները:
- Փախստականների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում նրանց երեխան կորցնում է իր փախստականի կարգավիճակը: Արդյունքում՝ երեխան ձեռք է բերում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ, որն, ի տարբերություն փախստականի, ավելի քիչ իրավունքներ է նախատեսում:

Արձանագրված դրական զարգացումները

- Փոխվարչապետն առաջարկություն էր ներկայացրել ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց օրենքով նախատեսված ընտրական իրավունքների ապահովման համար:
- Նախարարությունը 2013թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցած Սիրիայի 226 քաղաքացիների փախստական է ճանաչել և ապաստան տրամադրել:
- Տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմման նպատակով զգալիորեն վերաբաշխվել է ինչպես պետական բյուջեով, այնպես էլ այլ աղբյուրներով իրականացվող կապիտալ ներդրումները մարզերի և Երևանի միջև:
- ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 797-Ն որոշմամբ ստեղծված Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը, ընդհանուր առմամբ քննարկել է 73 քաղաքացիների դիմումները, որից 72 քաղաքացիների դիմումները բավարարվել են, քաղաքացիներից 20-ը դատապարտված էին ազատազրկման և Հանձնաժողովի որոշումից հետո ազատ են արձակվել:

Ընդհանուր վերլուծություն

Գրանցվել են մի շարք դեպքեր, երբ համայնքի ղեկավարը չի կատարել կամ չարաշահել է իր լիազորությունները, օրինակ՝ առհասարակ չեն պատասխանել կամ ուշ են պատասխանել անձանց բողոքներին, չի կանխվել ինքնակամ շինարարությունը, չի լուծվել հաշմանդամություն ունեցող անձանց համար շինությունների հարմարվածության խնդիրը: ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 28.12.2012թ «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 190-Ա հրամանի համաձայն՝ նախատեսվել էր հսկողություն իրականացնել ՀՀ 10 մարզերի 290 համայնքներում (Արագածոտնի մարզ՝ 37, Արարատի մարզ՝ 34, Արմավիրի մարզ՝ 29, Գեղարքունիքի մարզ 26, Լոռու մարզ՝ 36, Կոտայքի մարզ՝ 24, Շիրակի մարզ՝ 39, Սյունիքի մարզ՝ 36, Վայոց Ձորի մարզ՝ 10 և Տավուշի մարզ՝ 19): Հաշվետու ժամանակահատվածում անհրաժեշտություն է առաջացել հսկողություն իրականացնել Արարատի մարզի՝ Ավշար և Արագածոտնի մարզի՝ Արագած համայնքներում: Տարբեր պատճառներով հսկողություն չի իրականացվել Արմավիրի մարզի՝ Տարոնիկ և Լոռու մարզի՝ Վարդաբլուր և Պրիվոլնոյե համայնքներում: Հսկողության ընթացքում բացահայտվել և արձանագրվել են համայնքի ղեկավարի՝ սեփական կամ պետության կողմից պատվիրակված լիազորությունների սահմանազանցման մի շարք դեպքեր, օրինակ՝ համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից ընդունված անհատական կամ ներքին իրավական ակտերին և դրանց ծանուցմանն առաջադրվող պահանջների, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության պահանջների խախտումներ, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում համայնքի ղեկավարի կողմից հսկողության չիրականացման դեպքեր, որոշ դեպքերում արձանագրվել

են առանց թույլտվության ոգելից խմիչքների կամ ծխախոտի վաճառքի դեպքեր և այլն: Չեն պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները, հատկապես՝ 37-րդ 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջները, որոնց համաձայն՝ ընդունված իրավական ակտերը իրենց կառուցվածքով, վերնագրերով և իրավական տեխնիկայի կանոններով պետք է համապատասխանեն գործող օրենսդրական պահանջներին: Չեն պահպանվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ համայնքի ավագանին պետք է հաստատի բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը, համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Ինչպես նաև չեն պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, որի համաձայն՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում որպես պարտադիր լիազորություն՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում: Ինչպես նաև այն, որ համայնքներում ղեկավարները քաղաքացիներից ստացված դիմումներին պատասխանել են խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքները կամ առհասարակ չեն պատասխանել, կամ պատասխանել են սահմանված ժամանակահատվածից ուշ, հատկապես՝ Գյումրիում: Համաձայն ՀՀ կառավարության թիվ 39 արձանագրային որոշման 2-րդ հավելվածով հաստատված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2013 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկի թիվ 1.1 կետի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը վերահսկողություն է իրականացրել հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների կատարման նկատմամբ, որի արդյունքում արձանագրել է ՀՀ մարզերի 14 համայնքներում, համայնքների ղեկավարների կողմից ՃՀԱ-ների տրամադրման և նախագծերի համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների խախտում: Վերոնշյալ մի շարք խախտումները մարզերում և համայնքներում կրել են համատարած բնույթ: Գտնում ենք, որ անհրաժեշտ է Նախարարության կողմից կատարվող վերահսկողությունը ավելի ինտենսիվ դարձնել, ինչը կնպաստի համապատասխան համայնքի ղեկավարների լիազորությունների պատշաճ իրականացմանը: Մտահոգիչ են նաև մարզերում ինքնակամ շինարարություն իրականացնելու դեպքերը, ինչը վկայում է Նախարարության ոչ պատշաճ վերահսկողության և ոչ բավարար միջոցառումներ իրականացնելու մասին: 2013թ. ընթացքում ՀՀ մարզպետարանների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ հայտնաբերվել է ինքնակամ շինարարություն իրականացնելու 203 դեպք, ինչն ինքնին վկայում է ոչ արդյունավետ միջոցառումների ձեռնարկման մասին: Իսկ 2012 թվականի

ընթացքում ամբողջ հանրապետությունում հայտնաբերվել է ինքնակամ շինարարության 82 դեպք: Ակնհայտ է, որ մարզերում ինքնակամ շինարարության դեպքերի կանխման նպատակով միջոցները չեն ձեռնարկվել կամ ձեռնարկված միջոցները արդյունք չեն տվել: Գտնում ենք՝ Նախարարությունը, որպես ոլորտը կարգավորող մարմին, պարտավոր է պատշաճ վերահսկողություն իրականացնել և կոնկրետ միջոցներ ձեռնարկել նման խախտումները բացառելու և/կամ նվազեցնելու ուղղությամբ:

Սևանա լճի ավազանի անտառների ոչնչացման հետևանքով 1993 թվականի համեմատ անտառների ծավալը 20000 հեկտարից նվազել է շուրջ 5000-ով, ինչի հետևանքով զգալիորեն վնասվել է Սևանի էկոհամակարգը: 2013թ. ընթացքում Սևանա ավազանի անտառապատման և կանաչապատման անհրաժեշտության հարցը պատշաճ կերպով չի քննարկվել և դրա կապակցությամբ բավարար միջոցներ չեն ձեռնարկվել: Սույն խնդրի վերաբերյալ, ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի հանձնարարականի, ՀՀ բնապահպանության նախարարը մեզ հայտնել է, որ 2013թ. Սևանա լճի բնական պաշարների պահպանման, վերականգնման, բնականոն զարգացման և օգտագործման հիմնախնդիրների լուծմանն ուղղված պարբերաբար իրականացվել են Սևանա լճի և լիճ թափվող ջրային ռեսուրսների հիդրոլոգիական, հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական մոնիթորինգ, նախորդ տարիների համեմատությամբ մեծացել է լճի լուսաթափանցելիությունը, լճի կենտրոնական հատվածներում որոշակիորեն բարելավվել է ջրի որակը, կատարվել է Սևանա լճի առափնյա գոտու հողի մանրէաբանական և մակաբուծական հետազոտություն (ինչի արդյունքում շեղում չի հայտնաբերվել), 2013թ. պետական բյուջեի միջոցների հաշվին «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում Սևանա լիճ է բաց թողնվել «Արևածուկ» ՄՊԸ-ում և «Անգեղակոթի ձկնաբուծական կոմբինատ» ԲԲԸ-ում աճեցրած ամառային իշխանի 200000 հատ (3 և ավելի գրամ) և գեղարքունիքի 166667 հատ (5 և ավելի գրամ) մանրածուկ: Այնինչ, մասնագետների պնդմամբ, Սևանի ավազանի հետ կապված առկա են բազմաթիվ խնդիրներ: Կլիմայական պայմանները այդ ժամանակաշրջանում տաք էին, բուսականությունը՝ փարթամ, իսկ այժմ մեծ տարածում ունեցող չոր տափաստանային լանդշաֆտները քիչ տարածք են զբաղեցնում: Սևանա լճի արևմտյան և հարավային ափերի համեմատ հյուսիսային և արևելյան ափերը ավելի անտառապատ են եղել: Մակայն կլիմայական պայմանների աստիճանական չորացման պատճառով և մարդածին գործոնի անմիջական ազդեցությամբ՝ անտառապատվածությունը նվազել է: Սևանա լճավազանում Խորհրդային տարիներին իրականացվում էին լայնածավալ անտառատնկումներ, իսկ բնական անտառատարածությունները մեծամասամբ դրված էին պահպանության տակ: Արհեստական անտառկուլտուրաները ներկայումս զբաղեցնում են շուրջ 15 հազ., իսկ բնակավայրերի շուրջ ստեղծված կանաչ գոտիները՝ 17 հազ. հա: 1993 թվականին ավազանի պետական անտառֆոնդը կազմել է 20 հազ. հա: Բնական անտառատարածքը կազմում է 3400 հա, որից 100 հա-ն է բուն անտառապատ տարածքը: Այդ անտառատարածքից 370 հա-ն խոշորառեջ կաղնուտներն են, իսկ 3000 հա-ն՝ գիհունոսր անտառները: Վերջին երկու տասնամյակներին և՛ բնական, և՛ արհեստական անտառտարածքները զգալիորեն դեգրադացվել են բնամարդածին գործոնների ազդեցության տակ: Սևանա լճավազանի ներկա բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները

խիստ կերպով քայքայվել են կլիմայի փոփոխության և մարդու շարունակական ազդեցության տակ: Սևանա լճի մակարդակի ներկա, հիմնականում արհեստական, տատանումները խոչընդոտում են դրանց վերջնական ձևավորումը: Տափաստանային գոտու 80-90%-ը ներկայումս ամբողջությամբ բնամարդածին է, լեռնա-տափաստանից վերև գտնվող մարգագետնա-տափաստանը և մերձալպյան մարգագետինների մի մասը գտնվում են խոտհարքերի, ինտենսիվ և անկանոն արածեցման գոտում: Անտառազրկումը 1992-1996 թվականներին կազմել է 7200 հա, որից 2300 հա-ն՝ համատարած: Արհեստական անտառների անմխիթար վիճակը բացատրվում է անտառազրկմամբ, աղտոտմամբ, գերարածեցմամբ, ոչ կարգավորված ռեկրեացիայով և կենսաբանական բազմազանության նվազմամբ: Բնական անտառածածկի նախկին և ժամանակակից մակերեսների համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պատմական ժամանակաշրջանից բնական անտառածածկը 30-70 %-ով կրճատվել է: Նույնիսկ Սևանա լճի շուրջը տնկված արհեստական անտառներում 1992-95 թվականների ընթացքում կատարված ապօրինի հատումների հետևանքով արհեստական անտառը կրճատվել է 25%-ով: Նշվածը փաստում է, որ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել ուղղված Սևանա լճի էկոհամակարգի վերականգնմանը, պահպանմանը և վերարտադրմանը:

900-ից ավել փախստական ընտանիք դեռևս չունի բնակարան, չնայած վերջիններիս բնակարանով ապահովելու պետության պարտավորությանը: 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած առավել կարիքավոր փախստականների բնակարանային պայմանների վերաբերյալ պարզ է դարձել, որ 2013թ. ընթացքում տարբեր պատճառներով ազատված 4 բնակարաններ հատկացվել են 4 կարիքավոր փախստական ընտանիքների: ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի «Բնակելի տարածք նվիրելու մասին» թիվ 1440-Ս որոշմամբ՝ Երևան քաղաքի Մանանդյան 41 հասցեում բնակվող թվով 20 փախստական ընտանիքների նվիրաբերվել են իրենց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները: Ներկայումս իրականացվում է ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված՝ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը, որի չափանիշներին համապատասխան առաջնահերթ կարիքավոր փախստական ընտանիքների թիվը Երևանում կազմում է 670, իսկ մարզերում՝ 254, ընդամենը՝ 924 ընտանիք: 2009 թվականից ՀՀ պետական բյուջեով այդ ծրագրով ֆինանսավորում չի նախատեսվել, չնայած որ յուրաքանչյուր տարի ՀՀ ՏԿՆ միզրացիոն պետական ծառայությունը 4.0 միլիարդ դրամ գումարի բյուջետային հայտ է ներկայացնում ՀՀ կառավարություն: Նշենք, որ 1993թ. Հայաստանի համար ուժի մեջ է մտել ՄԱԿ-ի՝ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, որի 21-րդ հոդվածը հստակորեն նշում է, որ բնակարանով ապահովելու կապակցությամբ Պայմանավորվող պետությունները, այնքանով, որքանով հարցը կարգավորվում է օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով կամ Պայմանավորվող պետությունների իրավասու իշխանությունների վերահսկողության առարկա է, իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան ինչ նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին: Գտնում ենք, որ անհրաժեշտ է հետևողական գտնվել Կոնվենցիայի պահանջները կատարելու հարցում:

Նախարարության ենթակայության և հսկողության տակ գտնվում է փախստականների համար միայն մեկ ժամանակավոր կացարան, որն էլ գերծանրաբեռնված է: Արդյունքում բազմաթիվ փախստականներ ստիպված բնակվում են այլ կացարաններում, որոնց սեփականատերերը կարող են ցանկացած պահի զրկել նրանց բնակատեղից: Սույն հարցը բազմիցս բարձրացվել է Պաշտպանի կողմից, ինչպես նաև ներառվել էր 2012թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին Տարեկան զեկույցում և մինչ այսօր մնացել է չլուծված: Խնդիրն այն է, որ «Փախստականներին ժամանակավոր կացարաններում բնակեցնելու համար ուղեգրերի տրամադրման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի» կանոնակարգը վերաբերում է միայն Նախարարության պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող հանրակացարաններին: Իսկ այլ ժամանակավոր կացարաններում բնակեցնելու, հաշվառելու և հաշվառումից հանելու հարցը կատարվում է միայն այդ կացարանները տնօրինող մարմինների, դրանց սեփականատերերի հայեցողությամբ, ինչը իրական ռիսկ է պարունակում՝ անբարենպաստ պայմաններ ստեղծելու Նախարարության միզրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ չգտնվող ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների համար: Փախստականների բնակեցնելու, հանրակացարաններ տրամադրելու հարցի կարևորությանը անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող իրենց եզրակացությունում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ներկայիս օրենսդրական կարգավորումները հատուկ կերպ չեն երաշխավորում փախստականների այդ կացարաններում բնակվելու իրավունքը: Նշվածից ենթադրվում է, որ անհրաժեշտ է Նախարարության նախաձեռնողականությունը՝ ուղղված նշված խնդրի լուծմանը: Լուծման տարբերակ կարող է հանդիսանալ կոնկրետ ծրագիր և/կամ համաձայնագիր նշված ժամանակավոր կացարանների սեփականատերերի հետ, որոնցով կսահմանվի վերջիններիս պարտավորությունները և դրանով կընձեռնվի հնարավորություն այդ գործընթացը վերահսկելու համար, որն էլ, իր հերթին, կբացառի փախստականներին տնից վտարելու դեպքերը:

Պետական միզրացիոն ծառայությունը փախստականների դիմումները ուսումնասիրել է օրենքի խախտմամբ, օրինակ՝ չեն պահպանվել դիմումի քննարկման ժամկետները, չեն տրամադրվել փախստականի փաստաթղթերը և տեղեկանքները: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 4-րդ և 5-րդ հոդվածների՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, և վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված է, որ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության

համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Այնինչ՝ Նախարարության պետական միգրացիոն ծառայության կողմից պատշաճ չեն պահպանվել վերոնշյալ սկզբունքները: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքներից մեկի համաձայն՝ համապատասխան անձը դիմել է ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությանը՝ Ա. Ս.-ի և Ար. Ս.-ի վերաբերյալ փաստաթուղթ/տեղեկանք կամ որոշում/ տրամադրելու համար, որի հիման վրա նշված անձիք հնարավորություն պետք է ստանային ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն դիմել և ստանալ անձը հաստատող փաստաթուղթ: Միգրացիոն պետական ծառայությունից պատասխան գրությամբ հայտնել էին, որ ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում պահպանվող փաստաթղթերում առկա չեն Պաշտպանի գրության մեջ նշված փախստականի ընտանիքի վկայականը, ընտանիքի քարտը և հաշվառման թերթիկները: Այնինչ, փախստականի ընտանիքի վկայականը նշված անձանց տրվել է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կողմից: Նախարարություն և միգրացիոն պետական ծառայություն ուղղված մի շարք գրությունների արդյունքում ի վերջո ստացվել է պատասխան, որ ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում գտնվող Մ030470(0) կարգահամարի փախստականի ընտանիքի անկետայում (06.12.1995) կան գրառումներ վերոնշյալ անձանց վերաբերյալ: Անկետան արձանագրում է ընտանիքի՝ Ադրբեջանից բռնագաղթված լինելու հանգամանքը: Այսպիսով՝ վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ ոչ բոլոր դեպքերում է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությունը պահպանում օրենսդրական պահանջները, և այդպիսով խախտում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց իրավունքները:

Փախստականների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ձեռք բերելու դեպքում նրանց երեխան կորցնում է իր փախստականի կարգավիճակը: Արդյունքում երեխան ձեռք է բերում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ, որն, ի տարբերություն փախստականի, ավելի քիչ իրավունքներ է նախատեսում: Խնդիրն այն է, որ «Փախստականների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2004 թվականի մարտի 3-ին ընդունված թիվ ՀՕ-49-Ն օրենքի 20-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ սահմանվել է պայման, որի համաձայն՝ փախստականի կարգավիճակ ունեցող ծնողների՝ ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերելու դեպքում փախստական երեխան կորցնում է փախստականի կարգավիճակը: Նշյալ դրույթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դիմումատուներից մեկը իր ծնողների՝ 2002թ. ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերելու ժամանակ անչափահաս է եղել, հիմք է ընդունվել 2012թ. հունվարի 20-ին ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կողմից օրենքի դրույթն ուժի մեջ մտնելու պահին /15.04.2004թ./ անձի փախստականի կարգավիճակը դադարեցնելու մասին որոշման ընդունման համար: Մեկ այլ դեպքում իրավահարաբերությունը ծագել է մինչև համապատասխան օրենքի փոփոխությունը, քանի որ նրա ծնողները քաղաքացիություն են ձեռք բերել 2002 թվականին, իսկ փոփոխությունը, ինչպես նշվեց, կատարվել է 2004 թվականին: Հետևաբար, ծնողների քաղաքացիության ձեռք բերման պահին ուժի մեջ է եղել 03.03.1999թ. օրենքը, որում ծնողների կողմից քաղաքացիության ձեռքբերումը փախստականի կարգավիճակի դադարեցման հիմք չի հանդիսացել: Ավելին,

2004թ. փոփոխությունները չեն կարող հետադարձ ուժ ունենալ քննարկվող դեպքի շրջանակներում, քանի որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին: ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կողմից նման որոշումներ կայացնելու արդյունքում, հիմնականում նախկինում փախստականի կարգավիճակ ունեցած անձինք ձեռք են բերել քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ: Մինչդեռ, համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ ապաստան հայցողները և փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: Իսկ վերոնշյալ օրենքն, ի տարբերություն քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց համար նախատեսում է մի շարք արտոնություններ, ինչպես, օրինակ, համաձայն վերոնշյալ Օրենքի 19-րդ հոդվածի՝ փախստականների շարժական գույքի ձեռքբերման, տեղափոխման, անշարժ գույքի վարձակալության հետ կապված, ինչպես նաև գույքային այլ իրավահարաբերություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված նույն իրավունքներից օգտվելը և մի շարք այլ արտոնություններ: Այս հարցի վերաբերյալ մի շարք բողոքներ էին հասցեագրվել Պաշտպանին և դրանց քննարկման արդյունքում նույնիսկ դիմում է ներկայացվել ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ՝ առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանումներ ստանալու նպատակով: Ստեղծված իրավիճակը վկայում է, որ փախստականի կարգավիճակը դադարեցնելու մասին որոշումներ ընդունելու պրակտիկան արդյունքում հանգեցնում է նման անձանց իրավական կարգավիճակի վատթարացմանը:

Ստացվել են մի շարք ահազանգեր հանրապետությունում անցկացված ընտրությունների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական տեղամասերի մատչելիության բացակայության վերաբերյալ: ՀՀ ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ «տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ»: Ընտրատեղամասերի մատչելիության ապահովումն ուղղակիորեն կապված է նաև ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին պարբերության հետ, համաձայն որի Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեների մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք: Իսկ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի

7-րդ կետը սահմանում է պետության պարտավորությունը խթանելու հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին, որն իր մեջ ներառում է նաև նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրություններին մասնակցելու իրավունքը: Ինչպես նաև, պետությունը պարտավոր է ապահովել, որ քվեարկության ընթացակարգերը, վայրերը և միջոցները հաշմանդամություն ունեցող անձանց համար լինեն մատչելի ու դյուրին հասկանալու և կիրառելու համար, ինչը հստակ նախատեսվում է ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայով, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից 2010 թվականին: Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «... ընտրողների համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով տեղամասային կենտրոնի տեղակայման համար համայնքի ղեկավարը կարող է վարձակալել համապատասխան տարածքներ»: Նույն հոդվածի հաջորդ նախադասության իմաստով տեղամասային կենտրոնի գտնվելու վայրի ընտրության և քվեարկության սենյակի կահավորման համար պատասխանատու է համայնքի ղեկավարը: Այնինչ, ՀՀ նախագահի ընտրությունների օրը ինչպես Պաշտպանի աշխատակազմի, այնպես էլ տարբեր հասարակական կազմակերպությունների անցկացրած մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ հանրապետության ընտրական տեղամասերի մեծամասնությունը մատչելի չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի համար: Այսինքն, վերոնշյալ օրենսդրական պահանջը գործնականում չի կիրառվում, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձինք փաստացի զրկվում են իրենց ընտրելու իրավունքից:

Առաջարկություններ

- Իրականացնել արդյունավետ վերահսկողություն և ձեռնարկել հստակ կանխարգելման միջոցներ՝ համայնքի ղեկավարի սեփական կամ պետության պատվիրակված լիազորությունների չարաշահման և/կամ պարտավորությունների չկատարման դեպքերը կանխարգելելու նպատակով:
- Մարզերում ինքնակամ շինարարության իրականացման դեպքերը կանխելու կամ նվազեցնելու համար իրականացնել պատշաճ վերահսկողություն և կիրառել համաչափ պատասխանատվության միջոցներ:
- Միջոցներ ձեռնարկել Սևանա լճի ավազանի անտառների նվազման կանխման, ինչպես նաև Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման և վերարտադրման, այդ թվում անտառների ծավալների ընդլայնման ուղղությամբ, մասնակից դարձնելով նաև համապատասխան հասարակական կազմակերպություններին և ոլորտի մասնագետներին:
- Ձեռնարկել միջոցներ՝ լուծելու և/կամ բարելավելու փախստականների բնակարանային ապահովման և նրանց բնակարանային վատ պայմանների խնդիրները:
- Ստեղծել հստակ մեխանիզմներ՝ բացառելու Նախարարության միգրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ

չգտնվող այլ ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների մոտ առաջացած խնդիրները:

- Հետևողական լինել պետական միգրացիոն ծառայության կողմից իրականացվող փախստականի կարգավիճակ ունեցող անձանց համապատասխան փաստաթղթերի, տեղեկանքների տրամադրման գործընթացների օրինականության նկատմամբ:
- Նախաձեռնել օրենսդրական փոփոխություն՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում փախստական երեխայի կողմից իր փախստականի կարգավիճակը կորցնելու դրույթի վերաբերյալ:
- Հետևողականություն ցուցաբերել ընտրությունների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական տեղամասեր ինքնուրույն մուտք գործելու մատչելիության ապահովման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը պատասխանատու է կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավման համար և ապահովում է կառույցների շինարարության և շահագործման ընթացքում մարդկանց ու միջավայրի անվտանգության, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը և այլն:

2013 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Գրանցվել են քաղաքաշինական նորմերին հակասող, ինքնակամ շինարարության տասնյակ դեպքեր, օրինակ՝ Կոմիտաս 5, Փակ Շուկա, ինչպես նաև կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական պահանջների խախտման 500-ից ավել դեպքեր: Նշվածը վկայում է Նախարարության ոչ պատշաճ վերահսկողության և ոչ բավարար կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու մասին:
- Նախարարությունը բավարար միջոցներ չի ձեռնարկել բնակելի շենքերի վերականգնման և ուժեղացման համար: Արդյունքում, հազարավոր բնակելի շենքեր սեյսմակայուն չեն, իսկ դրանց մի մասը նաև վթարային է և վտանգավոր բնակչության համար:
- Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 808 ընտանիքներից ընդամենը 45 ընտանիքների են հատկացվել բնակելի տներ:
- Անտեսեով Հայաստանի միջազգային և ներպետական պարտավորությունները Նախարարությունը չի հարմարեցրել հին և, որոշ դեպքերում, նոր շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այդպիսի խախտումներ են գրանցվել ինչպես Երևանում, այնպես էլ մարզային քաղաքներում:

Արձանագրված դրական զարգացումները

- Կառավարության ընդունած որոշմամբ վերացվեց մի շարք իրավական ակտերում «բացվածք» հասկացությունը, իսկ համապատասխան այլ իրավական ակտերում այն փոխարինվեց օրենսդրությամբ ամրագրված «ոչ բնակելի տարածք» եզրույթով
- Նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ, որոնց արդյունքում օրենսդրության խախտման դեպքեր են բացահայտվել և համապատասխան միջոցներ կիրառվել դրանք վերացնելու ուղղությամբ:

- Ձեռնարկվել են բազմաբնակարան բնակարանային ֆոնդի հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործմանն ուղղված հստակ միջոցառումներ:

Ընդհանուր վերլուծություն

Գրանցվել են քաղաքաշինական նորմերին հակասող, ինքնակամ շինարարության տասնյակ դեպքեր, օրինակ Կոմիտաս 5, Փակ Շուկա, ինչպես նաև՝ կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական պահանջների խախտման 500-ից ավել դեպքեր: Նշվածը վկայում է Նախարարության ոչ պատշաճ վերահսկողության և ոչ բավարար կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու մասին: Այսպես՝ Նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից կատարված ստուգումների ընթացքում հայտնաբերվել են նախագծային փաստաթղթերի՝ քաղաքաշինական նորմերին անհամապատասխանության 12 դեպք: ՀՀ մարզպետարանների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2013 թվականի ընթացքում հանրապետության ողջ տարածքում հայտնաբերվել է ինքնակամ շինարարություն իրականացնելու 203 դեպք, որն ինքնին վկայում է ոչ արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկման մասին: Այդուհանդերձ, Երևանի Մաշտոցի 5 հասցեում գտնվող կենտրոնական փակ շուկայում իրականացվել են ապօրինի քանդման և առանց համապատասխան շինարարական փաստաթղթերի առկայության, այսինքն՝ ինքնակամ շինարարական աշխատանքներ: Ավելին, կառուցապատողի և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից Պաշտպանի գրությանն ի պատասխան հայտնվել է, որ շինության ծավալատարածական լուծումները պետք է պահպանվեն և պատմամշակութային հուշարձանի արտաքին տեսքը չպետք է խախտվի, սակայն ներկայումս ավարտվել են կառուցապատողի կողմից իրականացվող շենքի նոր հարկերի կառուցումը՝ խախտելով հուշարձանի ծավալային չափերը, և Նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից համապատասխան պայմաններ չէին ստեղծվել նշվածը բացառելու կապակցությամբ: Իսկ Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 5 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի և էլեկտրատրանսպորտի քարշի ենթակայանի կառուցման նախագծերի մշակման նպատակով «Լիբեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Երևանի քաղաքապետի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 2-ին տրվել է թիվ 01/18-07/2-41074-897 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, որի հիման վրա մշակված և 2013 թվականի հուլիսի 17-ի թիվ 01/18-05/2-40375-636 համաձայնեցված նախագծի (մինչև 0.000 նիշը) համաձայն՝ Երևանի քաղաքապետի կողմից 2013 թվականի հուլիսի 17-ին տրվել է թիվ 01/18-40564-680 շինարարության թույլտվությունը: Սակայն բնակիչները բողոքում էին, որ այդ շենքը կառուցվում է ճարտարապետական նորմերի բազմաթիվ խախտումներով, ինչի հետևանքով կփակվեն հարակից շենքերի արևն ու լուսավորությունը՝ նվազելով օրական 12 ժամից 3 ժամի, բացի այդ բնակչությունը կզրկվի շրջապատող վերջին ծառերից: Բնակիչների բողոքի հիման վրա վերոնշյալ քաղաքաշինական փաստաթղթերն ուղարկվել են լրամշակման: Այստեղից կարելի է եզրակացնել, որ, մինչև համապատասխան

գործունեությունը ավելի հստակ կարգավորող իրավական ակտերի ընդունումը, խախտումները կրելու են շարունակական բնույթ, և իրենց հերթին վնաս են հասցնելու քաղաքի ճարտարապետական կերպարի միասնականության պահպանմանը: Այնուամենայնիվ, բացահայտված խախտումները կազմում են նշված ոլորտում առկա չարաշահումների և թերությունների միայն մի մասը: Հաշվի առնելով նշվածը գտնում ենք, որ Նախարարությունը, որպես ոլորտը կարգավորող մարմին, պարտավոր է պատշաճ պայմաններ ստեղծել, վերահսկողություն իրականացնել և կոնկրետ միջոցներ ձեռնարկել նման խախտումները բացառելու համար, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ հետամուտ լինել դրանց կասեցմանը:

Նախարարությունը բավարար միջոցներ չի ձեռնարկել բնակելի շենքերի վերականգնման և ուժեղացման համար: Արդյունքում, հազարավոր բնակելի շենքեր սեյսմակայուն չեն, իսկ դրանց մի մասը նաև վթարային է և վտանգավոր բնակության համար: 2013 թվականի ընթացքում բազմաբնակարան շենքերի և անհատական բնակելի տների անբավարար տեխնիկական վիճակի վերաբերյալ Նախարարությունը ստացել է թվով 51 դիմում-բողոքներ, որոնցից 23-ը՝ թվով 8 բազմաբնակարան շենքերի (այդ թվում՝ 4 շենք՝ 4-րդ աստիճանի, իսկ 4 շենք՝ 3-րդ աստիճանի վնասվածության) բնակիչների կողմից, 28-ը հանրապետության տարբեր բնակավայրերի 21 անհատական բնակելի տների (այդ թվում, իսկ 14-ը՝ 4-րդ աստիճանի վնասվածության, իսկ աղետի գոտու գյուղական բնակավայրերում 7 տուն՝ 3-րդ աստիճանի) բնակիչների կողմից: Չնայած այն հանգամանքին, որ մի քանիսի խնդիրները լուծում են ստացել, այնուամենայնիվ զգալի մաս են կազմում վթարային բնակելի շենքերի բնակիչները, որոնց խնդրին դեռ լուծում չի տրվել, ինչն իր հերթին առաջացնում է նրանց կյանքին և առողջությանն անվտանգության ապահովմանն ուղղված մեծ ռիսկ: Մտահոգություն է առաջացնում նաև բնակելի շենքերի սեյսմակայունության խնդիրը: Նախարարությունից մեզ տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 2013 թվականի գերակա խնդիրների շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որին հավանություն է տրվել ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 53 արձանագրության 44-րդ կետով: Հայեցակարգի նպատակն է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ շենքերի սեյսմակայունության ապահովման ուղղությամբ՝ համակարգված և արդյունավետ մոտեցումների ցուցաբերման և հիմնավորված գործողությունների իրականացման համար: Գտնում ենք, որ ծրագիրը պետք է իրականացվի հրատապության կարգով, քանի որ երկրաշարժերը և այլ բնական աղետները վերահսկելը գրեթե անհնար է, իսկ ծրագրի իրականացումը կարող է ձգձգվել տարիներ, որն էլ, իր հերթին, մեծ վտանգ է առաջացնում համապատասխան շենքերի բնակիչների համար:

Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 808 ընտանիքներից ընդամենը 45 ընտանիքների են հատկացվել բնակելի տներ: Ստացված տեղեկության համաձայն՝ 2013 թվականի ընթացքում 808 ընտանիքներ ճանաչվել են աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների

բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շահառու: Նշված 808 ընտանիքներից ընդամենը 45 ընտանիքների է հատկացվել բնակելի տներ, իսկ 15 ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման նպատակով ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N1296-Ն որոշման համաձայն տրամադրվել է ուղղակի ֆինանսական աջակցություն՝ յուրաքանչյուրին 3.0 մլն դրամի չափով: Մնացած 763 ընտանիքների բնակարանային խնդիրները Նախարարությունը նախատեսում է լուծել 2014 թվականին իրականացվելիք բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացմամբ: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպես պետք է Նախարարությունը լուծի շուրջ 763 ընտանիքների բնակարանային խնդիրները, եթե 2013թ. ընթացքում կարողացել է բնակարանով ապահովել ընդամենը 45 ընտանիքի: Պարզ չէ նաև թե ինչով էր պայմանավորված 2013թ. ընթացքում ընդամենը 45 ընտանիքի բնակարանով ապահովելը: Ինչպես նաև ստացվել են բողոքներ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների կողմից՝ Նախարարություն համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու համար ՀՀ կառավարության թիվ 1515-Ն որոշմամբ սահմանված 26-օրյա ժամկետը չպահպանելու կապակցությամբ: Նշված ծրագրի արդյունավետ և նախատեսված ժամկետում իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2012 թվականի N1515-Ն որոշմամբ սահմանվել են հաշվառված ընտանիքների կողմից փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետները: Նշված որոշմամբ սահմանված վերջնաժամկետներում անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելու պարագայում այդ ընտանիքները կորցրել են աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրենց իրավունքը: Խնդիրն այն է, որ այլ կարգավորումներ չեն նախատեսվել այն շահառուների համար, որոնք հարգելի պատճառներով բաց են թողել վերջնաժամկետները: Արդյունքում, խախտվում են համապատասխան անձանց՝ բնակարան ստանալու լեզիտիմ ակնկալիքները:

Անտեսեով Հայաստանի միջազգային և ներպետական պարտավորությունները Նախարարությունը չի հարմարեցրել հին և, որոշ դեպքերում, նոր շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այդպիսի խախտումներ են գրանցվել ինչպես Երևանում, այնպես էլ մարզային քաղաքներում: Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշման 2-րդ հավելվածով հաստատված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2013 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկի թիվ 1.1 կետի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչությունը վերահսկողություն է իրականացրել հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների կատարման նկատմամբ՝ տարեկան ծրագրով նախատեսված տեսչական, ընթացիկ, ինչպես նաև ըստ

անհրաժեշտության ստուգումների միջոցով: Տեսչական ստուգումների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, ստուգումներ են անցկացվել նաև մարզերի 14 համայնքներում, որոնց արդյունքում հայտնաբերվել են մի շարք դեպքեր, երբ համայնքների ղեկավարների կողմից ՃՀԱ-ների տրամադրման և նախագծերի համաձայնեցման փուլերում չեն պահպանվել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների կատարումը: Շինարարական օբյեկտներում տարեկան ծրագրով նախատեսված ընթացիկ ստուգումների արդյունքում Նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժիններում կայացվել են 15 որոշումներ, որոնցում արձանագրվել են համայնքների ղեկավարների, կառուցապատողների և կապալառուների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների խախտումներ, այդ թվում Երևանում՝ 8, Թալին, Աշտարակ, Սասնաշեն, Վարդենիս /ՀՀ Արագծոտնի մարզ/, Լանջաղբյուր, Դիլիջան և Ախթալա համայնքներում՝ մեկական: Չնայած այն հանգամանքին, որ արձանագրված նշյալ խախտումների համար, աշխատանքներ իրականացնողների նկատմամբ կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ՝ համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, այնուամենայնիվ, կառուցված և վերակառուցված շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չլինելու վերաբերյալ խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Պաշտպանը բազմիցս բարձրաձայնել է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքի ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկման մասին: «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական իշխանության և կառավարման մարմինները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: ՀՀ կառավարության կողմից 2012թ. դեկտեմբերի 20-ի նիստի ընթացքում թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատել է նշված կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2012թ հաշվետվությունը, որում, նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովումը, բացի տեղական ինքնակառավարման մարմիններից, դրված է նաև ՀՀ կառավարության վրա: Հաշվի առնելով, որ Նախարարությունը հանդիսանում է սույն հարցի կարգավորմանն ուղղված կառավարության շահագրգիռ մարմիններից մեկը՝ գտնում ենք, որ հարցի արդյունավետ լուծման մեջ իր պարտադիր մասնակցությունը պետք է ունենա նաև Նախարարությունը՝ համապատասխանեցնելով բոլոր ճարտարապետահատակագծերը հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման ապահովման պահանջին: Թեև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքաշինական անարգել միջավայրի ապահովմանն ուղղված գործող իրավական ակտերից է համարվում նաև ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը, այնուամենայնիվ,

Նախարարությունը հայտնել է, որ վերջինս բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված շինությունների թվական տվյալներին չի տիրապետում, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Նախարարությունը հետևողականություն և բավականաչափ ուշադրություն չի ցուցաբերել վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի պատշաճ կատարման նկատմամբ:

Արձանագրվել են բազմաթիվ խախտումներ կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների պատշաճ չկատարման վերաբերյալ: 2013 թվականի ընթացքում քաղաքաշինական պետական տեսչությունը կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների պատշաճ կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացրել է ըստ անհրաժեշտության և ընթացիկ ստուգումների միջոցով. ստուգվել են 637 օբյեկտներ, որից շուրջ 551-ի նկատմամբ կայացվել է որոշում, իսկ 86-ի վերաբերյալ կազմվել է ստուգման տեղեկանք: Կայացրած 551 որոշումներից 526-ով նշանակվել է տուգանք, իսկ 25-ով տրվել է պարտադիր կատարման ցուցում: Բացի այդ, ստուգված օբյեկտներից 145-ում կատարվել է կրկնակի ստուգում և կազմվել տեղեկանքներ: Ընդհանուր առմամբ ստուգումների քանակը կազմել է 782: Ողջունելի է այն, որ Նախարարությունը հետևողականորեն իրականացրել է համապատասխան ստուգումները: Միաժամանակ ներկայացված թվերից կարելի է եզրակացնել, որ բազմաթիվ են կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների պատշաճ կատարման խախտումները: Ուստի հարկավոր է ուսումնասիրել նման մեծ քանակությամբ խախտումների պատճառը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկել:

Առաջարկություններ

- Օրենսդրորեն վերապահված լիազորությունների շրջանակում միջոցներ ձեռնարկել ինքնակամ շինարարության դեպքերի կանխման և վերացման, ինչպես նաև քաղաքաշինական նորմերին անհամապատասխանության դեպքերը ժամանակին վերհանելու ուղղությամբ:
- Մարդկանց կյանքի և առողջության անվտանգության պահպանման նկատառումներով հստակ ծրագրեր մշակել և միջոցներ ձեռնարկել՝ բնակելի շենքերի վթարայնության վերացման և սեյսմակայունությանն ուղղված աշխատանքների իրականացման համար:
- Լուծել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 763 ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրը: Ինչպես նաև Կառավարության թիվ 1515-Ն որոշմամբ սահմանված 26-օրյա ժամկետը հարգելի պատճառներով չպահպանած անձանց համար նախատեսել օրենսդրական այլընտրանքային կարգավորումներ :

- Հետևողական լինել նոր կառուցվող և արդեն կառուցված շինությունների՝ սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման հարցում:
- Ուսումնասիրել կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտման դեպքերը և մշակել արդյունավետ կանխարգելման մեխանիզմներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի խնդիրն է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը: Կադաստրն իրականացնում է գույքի (անկախ սեփականության ձևից) նկատմամբ իրավունքների, սահմանափակումների և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պետական գրանցում, ապահովում է անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների մասին տեղեկատվության հավաստիությունը, ամբողջականությունը, մատչելիությունը, արդիականությունը և հրապարակայնությունը, մշակում է բնագավառի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, տրամադրում է թույլտվություններ գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման համար, և այդ աշխատանքների նկատմամբ իրականացնում վերահսկողություն:

2013 թվականին ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պատասխանատվության ոլորտում էական և համակարգային թերացումներ չեն արձանագրվել: Կադաստրի պետական կոմիտեն դրսևորել է պատշաճ մոտեցում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին արձագանքելու ուղղությամբ և շարունակել է բարելավել իր գործունեությունը: Ոլորտում գրանցված ձեռքբերումները և հայտնաբերված որոշ խնդիրները և ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

2013 թվականին Կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և համապատասխանաբար նաև այլ իրավական ակտերի նախագծերի փաթեթը, որը մոտակա ժամանակահատվածում սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Ողջունելի է, որ Կադաստրի պետական կոմիտեի հետ իրականացրած համատեղ աշխատանքի արդյունքում նախագծային փաթեթում է ընդգրկվել նաև մի շարք քաղաքացիներին մտահոգություն պատճառող խնդրի լուծմանն ուղղված Պաշտպանի առաջարկությունն առ այն, որ, եթե գույքային իրավունքի ձեռք բերման համար հիմք հանդիսացած պայմանագրով կամ օրենքով պայմանագրի ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունների դադարման վերաբերյալ պայման սահմանված չէ, ապա պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց այդ պայմանագրի հիման վրա ձեռք բերված գույքային իրավունքների պետական գրանցումը (բացառությամբ հիփոթեքի պետական գրանցման) չեղարկելու համար բավարար է պայմանագրի կողմերից մեկի դիմումը: Միաժամանակ, եթե օրենքով կամ պայմանագրով պարտավորությունների դադարումը պայմանավորված է որոշակի պայմանով, ապա տվյալ պայմանագրերի հիման վրա իրականացված իրավունքի պետական գրանցումը նախատեսված ժամկետն

ավարտվելուց հետո կարող է չեղարկվել՝ պայմանագրի կողմերի համատեղ դիմումի, պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագրի կամ դատական ակտի հիման վրա:

Ձեռնարկված օրենսդրական բարեփոխումների արդյունքում անշարժ գույքի ռեգիստրը և հողի կադաստրի էլեկտրոնային համակարգը կմիացվի էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին, ինչի արդյունքում կբարելավվի մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման միջոցով պետական կառավարման համակարգի արդյունավետությունը: Համակարգերի կատարելագործմանն ուղղված նման միջոցների ձեռնարկման արդյունքում վարչական մարմինը բեռնաթափվում է իր հիմնական գործառնությո չհանդիսացող մի շարք գործողությունների կատարումից, որոնք ամենօրյա աշխատանքում բավականին ժամանակատար են (տիպային փաստաթղթերի պատրաստում, անձի նույնականացում, փաստաթղթերի ընդունում, պատրաստի փաստաթղթերի հանձնում և այլն) և խոչընդոտում են վարչական մարմին կենտրոնանալ իր հիմնական գործառնությո իրականացման որակի բարելավման վրա՝ հաշվի առնելով, որ վարչարարությունը հաճախ պահանջում է համապատասխան ոլորտում առավել խորը գիտելիքներ և փորձ: Ողջունելի է սպասարկման գործառնությո տարանջատումը վարչարարությունից, ինչը կապահովի բուն վարչարարության որակի բարձրացումը՝ ավելի շատ ժամանակ նախատեսելով պետական կառավարման մարմիններին՝ իրենց մասնագիտական գործունեության իրականացման համար:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ այն դեպքերում, երբ դատարանի կողմից կայացվում է վճիռ ալիմենտային պարտավորությունները կատարելու հարկադրանքի վերաբերյալ, այնուամենայնիվ, վճիռը շատ հաճախ մնում է չկատարված՝ առկա օրենսդրական բացի հետևանքով: Մասնավորապես, պրակտիկայում գրանցվել են դեպքեր և շարունակում է հիմնավոր ռիսկ մնալ այն, որ շատ դեպքերում, երբ դատարանում գործի քննության ընթացքում ապացուցվում է, որ պարտատերը փաստացի ունի բավարար միջոցներ (օրինակ՝ անշարժ գույք), որոնցով կարող է կատարել իր ալիմենտային պարտավորությունները, և, երբ դատարանը տալիս է կատարողական թերթ՝ ԴԱՀԿ-ի կողմից կատարողական վարույթ հարուցելու և համապատասխան գույքի իրացման աճուրդ կազմակերպելու համար, այնուամենայնիվ, ԴԱՀԿ ծառայության կողմից գույքի աճուրդ կազմակերպել չի հաջողվում, քանի որ պարտապանը չի կատարում (կամ նախապես չի կատարել, կամ գիտակցելով հնարավոր հետևանքները չի կատարում) իրեն փաստացիորեն պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը Կադաստրի պետական կոմիտեում: Ստացվում է, որ պարտապանների ոչ բարեխիղճ գործողությունների և/կամ անգործության արդյունքում՝ դատարանի կայացրած վճիռը փաստացիորեն մնում է չկատարված: Նշված խնդրի առնչությամբ Պաշտպանը առաջարկություն է ներկայացրել Կադաստրի պետական կոմիտե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել նոր դրույթով՝ հետևյալ ձևակերպմամբ. «Եթե իրավունքը ծագում է դատական ակտի հիման վրա կամ իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի հիման վրա, ապա իրավունքի ծագման, փոփոխման, փոխանցման կամ դադարման պետական գրանցում կարող է

իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի դիմումի հիման վրա»: Նշված առաջարկությունն, ըստ էության, ընդունվել է Կադաստրի կողմից, ինչը ողջունելի է:

Քաղաքացիներն իրենց մտահոգությունն են հայտնել այն մասին, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 25.10.2011թ. թիվ 290-Ն հրամանով և ՀՀ կառավարության 17.04.2003թ. թիվ 470-Ն որոշմամբ միևնույն շենքի հասցեի տարբեր կերպով մեկնաբանման հետևանքով նույն կարգավիճակում գտնվող շենքերի բնակիչները գույքահարկ են վճարել տարբեր գործակիցներով, արդյունքում միևնույն շենքում բնակվող անձի դեպքում այն եղել է բարձր, մյուսի դեպքում՝ հակառակը: Հրամանի և Որոշման դրույթներին գործնականում տրված տարբեր մեկնաբանությունները կարող են վերացվել նշված երկու իրավական ակտերի համապատասխան դրույթների հստակեցման արդյունքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն իրականացնում է տրանսպորտի և կապի բնագավառներում օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորումը, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և երթևեկության անվտանգության ապահովումը, միջպետական և միջմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթների կազմակերպումը, միջմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների միասնական համակարգի ապահովումը և այլն:

2013 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացվում են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Եղել են բազմաթիվ բողոքներ հանրային տրանսպորտի սպասարկման ցածր որակի վերաբերյալ, մասնավորապես՝ երթուղային տաքսիների գերբեռնվածությունը, մաշվածությունը, ժամականակացույցի չպահպանումը:
- Չնայած նրան, որ 2015թ. հուլիսը սահմանվել է որպես անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետ, Նախարարությունը բավարար միջոցներ չի ձեռնարկել հեռուստահեռարձակման թվայնացման իրավական, տեխնիկական, նյութական պայմանները և կանոնակարգումներն ապահովելու համար:
- Շարունակվում է չլուծված մնալ քաղաքներում ավտոկայարանների և ավտոկայանների վերանորոգման խնդիրը:
- Միջոցներ չեն ձեռնարկվել հասարակական տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու համար:
- Չի բարելավվել որոշ մարզերը, քաղաքներն ու համայնքներն իրար միացնող ճանապարհների որակը: Առանձին համայնքային ճանապարհներ նույնիսկ անանցանելի են:

Արձանագրված դրական զարգացումները

- Բարելավվել է մարդատար-տաքսի ավտոմեքենաների գործունեությունն ապահովող օրենսդրությունը:
- Առաջընթաց է արձանագրվել ՀՀ-ում կապի և տեղեկատվական հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում:
- Ներդրվել են արդի տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ փոստային կապի բնագավառում:

Ընդհանուր վերլուծություն

2013 թվականի ընթացքում եղել են բազմաթիվ մտահոգություններ հանրային տրանսպորտային միջոցների սպասարկման ցածր որակի վերաբերյալ: Քաղաքացիների կողմից ստացվել են բազմաթիվ բողոքներ կապված ոչ միայն երթուղիների չվացուցակների խախտման, այլև հանրային տրանսպորտային միջոցների սպասարկման որակի վերաբերյալ: Նախարարությունը 2013 թվականի ընթացքում ստացել է չվացուցակների խախտման վերաբերյալ 5 բողոք, իսկ սպասարկման որակի վերաբերյալ բողոքները լայն արձագանք էին գտել զանգվածային լրատվության միջոցներում: Մասնավորապես, քաղաքացիների բողոքները ուղղված էին այն խնդրին, որ օրվա՝ հիմնականում երեկոյան ժամերին, խիստ նվազում է որոշ տրանսպորտային միջոցների երթևեկության հաճախականությունը, ինչը անհնարին է դարձնում հանրային տրանսպորտով երթևեկությունը, օրինակ, երեկոյան 21.00-00.00 ժամերին: Ընդհանուր առմամբ հանրային տրանսպորտի սպասարկման ոլորտում 2013 թվականը նախորդ տարիներից չի տարբերվում էական առաջընթացով: Նշվածի համատեքստում հատկանշական է, որ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման վերաբերյալ Նախարարություն ստացված 15 դիմում բողոքներից 10-ը, իսկ 40 բողոք-հեռախոսազանգերից՝ 30-ը վերաբերում էին սպասարկման որակին, որոնց ի պատասխան Նախարարության կողմից երթուղիները սպասարկող կազմակերպությունները ընդամենը բանավոր զգուշացվել են, իսկ որոշ դեպքերում տրվել են գրավոր հանձնարարականներ: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ուղղակի բանավոր զգուշացումները չեն կարող ապահովել վերոնշյալ դեպքերի նվազումը, հարկավոր է կիրառել հստակ սահմանված պատասխանատվության միջոցներ, որոնք կնպաստեն նման խախտումների կանխարգելմանը:

Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել հեռուստահեռարձակման թվայնացման իրավական, տեխնիկական, նյութական պայմաններն ապահովելու ուղղությամբ: Այնինչ, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում 2013թ. հուլիսին ուժի մեջ մտած փոփոխություններով ՀՀ ամբողջ տարածքում անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետ է սահմանվել 2015թ. հուլիսի 1-ը: Նշենք, որ 2010 թվականի հուլիսի 20-ից մինչև 2015թ. հունվարի 1-ը նախատեսված էր անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցման ժամանակաշրջան, որի ընթացքում պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովմամբ պետք է իրականացվեր աստիճանական անցում թվային հեռարձակման: Համապատասխանաբար, վեց ամսով երկարաձգվեց նաև իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանց ստեղծելու համար մուլտիպլեքսորի լիցենզավորման կարգն ու պայմանները օրենքով սահմանելու ժամկետը: Ռադիոյի թվային հեռարձակումն ապահովման ժամկետը սահմանվեց 2016թ. գործող 2013թ. փոխարեն: Երկարաձգվեցին նաև համապատասխան ընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետները: Ժամկետների երկարաձգումը պայմանավորվեց ՀՀ տարածքում ռադիոհեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման՝ տեխնիկական, նյութական և ֆինանսական դժվարություններով, որոնք այդ ժամանակ անհաղթահարելի համարվեցին թե՛ պետության, թե՛ հեռարձակողների և թե՛ սպառողների համար: Նախկինում հանդիպած վերոգրյալ խոչընդոտները, ժամանակային

սահմանափակումն, ինչպես նաև գործընթացի երկարատևությունը վկայում են, որ անհրաժեշտ է հրատապ համալիր միջոցառումներ իրականացնել հեռուստահեռարձակման ամբողջական թվայնացման գործընթացի ապահովման համար: Հակառակ դեպքում՝ կարող է կրկին առաջանալ նշված գործընթացը հետաձգելու անհրաժեշտություն: Թվայնացման գործընթացի շարունակական հետաձգումը փաստացի հանգեցնում է ոչ միայն հեռուստաալիքների սահմանափակմանը, այլև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը: Այսպես, 2006թ. Ժնևի համաձայնագրով ՀՀ-ը պարտավորություն է ստանձնել 2015թ. դրությամբ դադարեցնել անալոգային հեռարձակումը:

Դեռևս չի ավարտվել «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացը: «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացի իրականացումը նախատեսվել էր դեռևս ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 9-ի թիվ 1055-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2012 թվականի գերակա խնդիրներում: Այստեղ մտահոգիչն այն է, որ թեև գործընթացի իրականացումը ի սկզբանե հաստատվել է որպես 2012 թվականի գերակա խնդիր, այնուամենայնիվ, գործընթացը ձգձգվում է արդեն երկրորդ տարին՝ փաստացիորեն դրա իրագործման հնարավորությունը նախատեսելով 2014 թվականի ընթացքում: Նախարարությունից պահանջվեց մոտ կես տարի Կառավարություն ներկայացնելու «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի գործունեության բարելավման, ավտոկայարանային համակարգի արդիականացման և կառավարման ծառայությունների ձեռքբերման գործընթացի և գործառության (ֆունկցիոնալ) նախնական նկարագիրը: Հաստատվելուց հետո 2013թ. հուլիս ամսին հայտարարվել է միջազգային մրցույթ, սակայն հայտատուների բացակայության պատճառով մրցույթը չի կայացել: «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի գործունեության բարելավման, ավտոկայարանային համակարգի արդիականացման և կառավարման ծառայությունների ձեռքբերման գործընթացի գործառության (ֆունկցիոնալ) նախնական բնութագիրն առավել զրավիչ դարձնելու նպատակով այն լրամշակվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի համաձայնեցմանը, որից հետո կհայտարարվի կրկնակի մրցույթ: 2013թ. հուլիսին անցկացրած մրցույթի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ Նախարարության կողմից 2012 թվականից մշակված «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի գործունեության բարելավման, ավտոկայարանային համակարգի արդիականացման և կառավարման ծառայությունների ձեռքբերման գործընթացի և գործառության (ֆունկցիոնալ) նախնական նկարագիրը բավարար չի եղել ընկերության գործունեությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և մասնավոր ներդրողներին պատշաճ առաջարկ ներկայացնելու համար: Արդյունքում, կրկնակի մրցույթը սպասվում է անցկացնել արդեն 2014 թվականի ընթացքում՝ արդեն երկրորդ տարին հետաձգելով գործընթացի իրականացումը: Ակնկալվում է, որ 2014 թվականի ընթացքում «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացը ամբողջությամբ կիրականացվի, ինչի արդյունքում լուծում կստանան ավտոկայանային համակարգի արդիականացման, ավտոկայարանների և ավտոկայանների վերանորոգման և

վերակառուցման, ինչպես նաև սակավաշարժ անձանց ազատ տեղաշարժման մատչելիության ապահովման խնդիրները:

Շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովման խնդիրը: 2013 թվականի ընթացքում միջմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցում ընդգրկված 189 ավտոբուսներից և 630 միկրոավտոբուսներից նորացվել և արդիականացվել են 41 ավտոբուսներ (մոտ 22 տոկոսը) և 121 միկրոավտոբուսներ (մոտ 19 տոկոսը): Մակայն ձեռնարկված միջոցները, ըստ էության չեն բավարարում գործընթացի նպատակներից մեկը, այն է՝ տրանսպորտային միջոցների հարմարեցումը հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ անձանց համար՝ ապահովելու վերջիններիս ազատ տեղաշարժման իրավունքը: Թեև 2013 թվականի ընթացքում գործող օրենսդրության պահանջ չի եղել կրկին կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման մրցույթներում հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովումը՝ որպես պարտադիր պայման նշելը (քանի որ ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշմամբ նման պահանջ սահմանված չի եղել), այնուամենայնիվ ողջունելի է, որ 2013 թվականի ընթացքում Նախարարության կողմից ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրական կարգավորման կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկի հետ համատեղ մշակվել, իսկ Կառավարության կողմից ընդունվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրավական ակտերի փաթեթը, որով մրցույթի պարտադիր պայման է սահմանվելու ավտոբուսային կանոնավոր երթուղիներում սակավաշարժուն անձանց համար նախատեսված տրանսպորտային միջոցների առկայությունը: Միաժամանակ, հարկավոր է հաշվի առնել, որ նշված օրենսդրական փոփոխությունը կարող է հանդիսանալ նոր տրանսպորտային միջոցների սակավաշարժուն անձանց մատչելիության հարցի լուծում, մինչդեռ, արդեն օգտագործվող տրանսպորտային միջոցների դեպքում հարցը կմնա չլուծված: Այնինչ, Պաշտպանը բազմիցս բարձրաձայնել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելու մատչելիությունը չապահովելու խնդրի մասին: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. դեկտեմբերի 13-ի կոնվենցիան, որով պարտավորություն է ստանձնել ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները դարձնելու համար տրանսպորտային միջոցները հավասարապես մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ինչպես նաև, «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական իշխանության և կառավարման մարմինները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: ՀՀ կառավարության կողմից 2012թ. դեկտեմբերի 20-ի նիստի ընթացքում թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատվել է նշված կոնվենցիայի իրականացման վերաբերյալ

2012թ հաշվետվությունը, որում, նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովումը, բացի տեղական ինքնակառավարման մարմիններից, դրված է նաև ՀՀ կառավարության վրա:

Մտահոգիչ է կենսական նշանակության ճանապարհների բարելավման և կառուցման խնդիրը: 2013 թվականի ընթացքում Նախարարության ձեռնարկած «Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրի» շրջանակներում իրականացվել են շինարարական աշխատանքները, որոնց արդյունքում վերականգնվել է շուրջ 60.95 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ: Չնայած այն հանգամանքին, որ ծրագրով նախատեսված է եղել 2013 թվականին վերականգնել 73 կմ ճանապարհահատված, ինչպես նաև վերականգնված 60.95 կմ ճանապարհահատվածից փաստացի շահագործման է հանձնվել միայն 33.85 կմ ճանապարհահատված՝ այս դեպքում հիմնավոր ենք համարում ստացած բողոքներն առ այն, որ որոշ ճանապարհներ դեռ շարունակում են գտնվել անբարեկարգ վիճակում: Բերդ-Ճամբարակ ավտոճանապարհի ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման աշխատանքներն իրականացրել է «Տավուշի ՇՃՃ» ՓԲԸ-ն, որի կողմից 2013 թվականի մայիս-հունիս ամիսներին կատարվել են ճանապարհի երթևեկելի մասի փոսային նորոգման աշխատանքներ: Բայց ձմռան ամիսներին տեղացած առատ ձյան և բուքի պատճառով ավտոճանապարհը եղել է անանցանելի: Նախարարությունը «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ին առաջարկել է տեղում կատարել ուսումնասիրություններ և նախարարությանը ներկայացնել առաջարկություններ Հ-36, Մ-4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի Վ. Ծաղկավան-Իծաքար-Գանձաքար ճանապարհահատվածի վերակառուցում իրականացնելու համար: Այդ ընթացքում ճանապարհահատվածը սպասարկող «Տավուշի ՇՃՃ» ՓԲԸ-ի և «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են որոշ շրջադարձերի լայնացման և թափվածքների մաքրման աշխատանքներ: ՀՀ Տավուշի մարզի Պառավաքար-Վազաշեն ճանապարհին՝ որպես այլընտրանք, կառուցվող 3.2 կմ երկարությամբ շրջանցիկ ճանապարհահատվածը շահագործման կհանձնվի միայն 2014 թվականի հունիս ամսին: Այն կրճատելու է ճանապարհի երկարությունը 1.8 կմ-ով և լինելու է առավել անվտանգ: Ճանապարհի անվտանգությունն ապահովելու են նաև 210 մ երկարությամբ ձգվող 2-5 մ բարձրությամբ պատնեշները և 1.15 կմ մետաղական արգելափակոցները: Կատարվել է հողային աշխատանքների 40 տոկոսը: Նախարարությունը ՀՀ կառավարություն է ներկայացրել շրջանցիկ ճանապարհի շինարարությունը ֆինանսավորելու համար որոշման նախագիծ: Ողջունելի է այն, որ Նախարարությունը պատշաճ ուշադրություն է սկսել դարձնել նշված խնդրին, և համապատասխան միջոցառումներ են իրականացվել դրա լուծման ուղղությամբ, սակայն մտահոգիչ է, որ դեռևս 2013 թվականին առկա կենսական նշանակության ճանապարհների բարելավման և կառուցման խնդիրը, ըստ էության իր լուծումը չի ստացել:

Առաջարկություններ

- Կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ բարձրացնելու հանրային տրանսպորտային միջոցների սպասարկման որակը:

- Միջոցներ ձեռնարկել հեռուստահեռարձակման թվայնացման իրավական, տեխնիկական, նյութական պայմանները և կանոնակարգումներն ապահովելու համար:
- Ապահովել «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացի ամբողջական իրականացումը՝ նպատակ ունենալով 2014 թվականում լուծել ավտոկայանային համակարգի արդիականացման, ավտոկայարանների և ավտոկայանների վերանորոգման և վերակառուցման, ինչպես նաև սակավաշարժ անձանց մատչելիության ապահովման խնդիրը:
- Տրանսպորտային միջոցները հարմարեցնել հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ անձանց համար՝ ապահովելով վերջիններիս ազատ տեղաշարժման իրավունքը:
- Պատշաճ հետևողականություն ցուցաբերել Նախարարության կողմից ձեռնարկված ծրագրերով նախատեսվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման և կառուցման աշխատանքների որակի և ժամկետների նկատմամբ:



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2013 ԹՎԱԿԱՆԻՆ
ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Թեև Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա իրականացվել են մի շարք միջոցառումներ, մշակվել և ընդունվել են ծրագրից բխող առանձին իրավական ակտեր, այնուամենայնիվ, հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ շարունակել է մնալ ցածր մակարդակում: «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013» հարցման արդյունքներով Հայաստանում անցկացված հարցման մասնակիցների 69%-ը համարել է դատական համակարգը կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված, իսկ հարցվածների 18%-ը հայտարարել է դատարաններին կաշառք տալու փաստի մասին¹:

ԱՄՆ պետքարտուղարության կողմից 2014թ. հրապարակված Մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցով արձանագրվել է, որ 2013 թվականին ՀՀ դատական համակարգը անկախ չի եղել և դատավորները չեն ունեցել արդյունավետ պաշտպանության միջոցներ այն դեպքերում, երբ գործադիր, օրենսդիր կամ վերադաս դատական իշխանության մարմինները որոշել են պատժամիջոցներ կիրառել իրենց նկատմամբ:

2012թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն² արձանագրել է Հայաստանում դատարանների անկախության պակասը, որը պայմանավորել է քաղաքական ճնշումների վտանգ պարունակող դատավորների նշանակման մեխանիզմով և կարգապահական պատասխանատվության անկախ մեխանիզմի բացակայությամբ: Կոմիտեին մտահոգել են նաև դատական համակարգում մշտական բնույթ ունեցող կոռուպցիայի վերաբերյալ պնդումներն ու բարձր մակարդակում կոռուպցիայի դեմ պայքարի համոզիչ արդյունքների բացակայությունը, որը հանգեցրել է արդարադատության նկատմամբ հանրային վստահության անկմանը:

2013թ. դեկտեմբերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցով (այսուհետ՝ Ձեկույց), որի հակիրճ բովանդակությունը ներկայացվում է ստորև: Ձեկույցի մշակման նպատակով հարցազրույցներ են անցկացվել ոլորտի շուրջ 120 մասնագետների հետ՝ փաստաբաններ, դատախազներ, դատավորներ, իրավաբան-գիտնականներ և այլ փորձագետներ: Ուսումնասիրվել են ՀՀ արդարադատության խորհրդի 2006-2013թթ.³ ընդունված բոլոր որոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2012-2013թթ. վարույթ ընդունված 270 վճռաբեկ բողոքները, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Արդարադատության խորհրդին ուղղված շուրջ 500 դիմումների ընթացքը, 2007-2013թթ. ժամանակահատվածում ներկայացված շուրջ 200 վճռաբեկ բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները, բազմաթիվ

¹ Թրանսփարենսի Ինթերնեշլ միջազգային հակակոռուպցիոն շարժում, «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013» հարցման արդյունքներ:

² Տե՛ս 2012թ. հուլիսի 27-ին հաստատված եզրափակիչ հետևություններ՝ Հայաստանի կողմից ներկայացված պարբերական զեկույցի վերաբերյալ

³ «2013 թ.» հիշատակումները մեծամասամբ վերաբերում են մինչև սեպտեմբերի 30-ը առկա տեղեկատվությանը:

դատական գործեր: Ձեկույցի մշակման նպատակով «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» Հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն «Հայ Ժողովրդավարական ֆորում» հասարակական կազմակերպության կողմից, որի արդյունքները նույնպես ներառվել են զեկույցում:

Իրականացված հարցումների հիման վրա Ձեկույցում ներկայացվել են դատական համակարգում կոռուպցիոն երևույթների և ճնշումների դրսևորման ձևերը.

Հարցվածները տարբեր կարծիքներ են հայտնել դատական համակարգում առկա կոռուպցիոն մեխանիզմների, շրջանառվող գումարի չափերի և ձևերի մասին: Հարցվածների մեծ մասի կարծիքով կաշառքի գումարի չափը որոշելու համար չկան միասնական չափանիշներ, յուրաքանչյուր դեպքում գումարը որոշվում է անհատական մոտեցմամբ: Շատերի համոզմամբ նույնիսկ այն դեպքերում, երբ գործը չունի քաղաքական բնույթ, և առկա չեն կոռուպցիոն ռիսկեր, դատավորների մեծ մասը կաշկանդված է մեղադրյալի նկատմամբ կալանավորում կիրառելու միջնորդությունը մերժելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ հոգուտ մեղադրյալի ցանկացած բնույթի գործողություն կամ որոշում կայացնելու գործում, քանի որ դրանք, ամենայն հավանականությամբ, կորակվեն որպես անձնական շահագրգռվածության դրսևորում:

Հարցումների արդյունքներով ուրվագծվել են նաև Վճռաբեկ դատարանի հետ պարտադիր համաձայնեցման ենթակա գործերի կատեգորիաները. հանրային հնչեղություն ունեցող գործերը, զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերը, քրեական գործերով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, սահմանված նվազագույն պատժից ցածր պատիժ նշանակելու, մեղադրական եզրակացությունից շեղվող դատավճիռ կայացնելու, խոշոր կազմակերպությունների մասնակցությամբ գործերը: Այս գործերը համաձայնեցվում են Վճռաբեկ դատարանի «գոնալ» դատավորի հետ, որին կցված են իր վերահսկողության ենթակա որոշակի թվով դատավորներ: Ըստ հարցման արդյունքների՝ դատավորների նկատմամբ ճնշումները որոշակի դրսևորումներ են ստացել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներսում՝ առանձին դատավորների մոտ առաջացնելով մեծ դժգոհություն և ընդվզում:

Հարցման արդյունքներից ելնելով՝ Ձեկույցում դատավորները պայմանականորեն բաժանվել են երեք կատեգորիաների. դատավորներ, որոնք գրեթե ցանկացած գործ համաձայնեցնում են Վճռաբեկ դատարանի հետ, այս դատավորները «ամենասիրված» դատավորներն են համարվում, որոնք արժանանում են խրախուսանքների, դատավորներ, որոնք համաձայնեցնում են միայն պարտադիր համաձայնեցման ենթակա գործերը և վերջապես, կա սակավաթիվ դատավորների մի դաս, որն ընդհանրապես որևէ գործ չի համաձայնեցնում Վճռաբեկ դատարանի հետ՝ կայացնելով ինքնուրույն որոշումներ: Այս դատավորները անկախ են և համարվում են «ամենաչսիրված» և «անկանխատեսելի» դատավորները, ուստի, ենթակա են ճնշումների ու «հետապնդումների» ենթարկվելու մեծ ռիսկի:

Ձեկույցի մշակման նպատակով իրականացված հարցումները վկայում են նաև այն մասին, որ Արդարադատության խորհուրդը հանդիսանում է Վճռաբեկ դատարանի կողմից

ստորադաս ատյանի դատարանների դատավորների նկատմամբ ուղղակի և անուղղակի ճնշումների գործադրման հիմնական լծակը: Բոլոր այս հետևությունները հիմնավորվում են Արդարադատության խորհրդի կողմից երկակի ստանդարտներով իրականացվող կարգապահական պատասխանատվության մեխանիզմների կիրառման և ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների համապարփակ վերլուծությամբ, որը մանրամասն ներկայացվել է Ձեկույցում:

Բացի այդ, Ձեկույցում վերլուծված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահն ունի գերակշիռ մասնակցություն: Մի շարք դեպքերում կարգապահական վարույթը հարուցվում է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից Վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը ստանալու նույն օրը կամ հաջորդ օրը, ինչը ցույց է տալիս, որ կարգապահական վարույթի հարուցումն ու դրա արդյունքները համապատասխան դեպքերում կանխորոշված են: 2010-2013թթ. ընթացքում ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցված 50 կարգապահական վարույթներից 32-ի դեպքում վարույթի հարուցման առիթ է հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը կամ որոշումը, 8-ի դեպքում՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը, 10-ի դեպքում՝ փաստաբանի, քաղաքացու դիմումները կամ այլ առիթները: 2010թ. Արդարադատության խորհուրդն, ընդհանուր առմամբ ստացել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու 208 դիմում⁴, 2011թ.՝ 220⁵, 2012թ.՝ 346⁶, իսկ 2013թ.՝ 434 դիմումներ⁷:

Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Արդարադատության խորհրդում.

1. Արդարադատության խորհրդում երկակի ստանդարտները կիրառվել են քննության փուլում գտնվող գործերով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը որոշելիս, որոշ դեպքերում դրանք զուգորդվել են ՀՀ դատական օրենսգրքի պահանջների ուղղակի խախտումներով.

Այսպես, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հարցը ՀՀ դատական օրենսգրքով պայմանավորված չէ գործն, ըստ էության, լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ վերադաս դատական ատյանում գործի՝ քննության փուլում չգտնվելու հանգամանքներով:⁸ Այս փաստը Պաշտպանին ուղղված պաշտոնական գրությամբ հաստատել է նաև ՀՀ դատական դեպարտամենտը, ընդունելով, որ օրենսդիրը

⁴ Դատական բարեփոխումների ինդեքսը ՀՀ-ի համար, 2012թ., Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն

⁵ Դատական բարեփոխումների ինդեքսը ՀՀ-ի համար, 2012թ., Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն

⁶ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված վիճակագրական տվյալներ

⁷ 2013թ. նոյեմբերի 27-ի դրությամբ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված վիճակագրական տվյալներ

⁸ ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 153, մաս 2, կետեր 1-ին և 2-րդ

դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ժամկետ դիտում է հողվածում նշված մեկ տարին՝ հաշված տվյալ դատական ակտի կայացման պահից:⁹ Այնուամենայնիվ, արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ գործը վերադաս դատական ատյանում քննության փուլում գտնվելու պատճառաբանությամբ կարգապահական հանձնաժողովի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

Այսպես, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա ս.թ. հուլիսին Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը հրաժարվել է վարույթ հարուցել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Բունիայանի նկատմամբ՝ քաղաքացիական գործը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում քննության փուլում գտնվելու և դատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության արգելքի հղումով¹⁰:

Դրա հետ միասին արձանագրվել է նաև տրամագծորեն հակառակ պրակտիկա, երբ առանձին գործերով ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել են կարգապահական վարույթներ, երբ համապատասխան գործը գտնվել է քննության փուլում վերաքննիչ դատարանում կամ դեռևս նույն դատավորի վարույթում: Ավելին, այդ գործերի մի մասով Արդարադատության խորհրդի կողմից խախտվել են ՀՀ դատական օրենսգրքի պահանջները, քանի որ դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, այն դեպքում, երբ գործն, ըստ էության, լուծող դատական ակտ դեռևս կայացված չի եղել:

Այսպես, Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 15.06.2012թ. թիվ N-Կ-2-1 որոշմամբ՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մերանգուլյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ նույն թվականի հուլիսի 24-ին դատավորը Արդարադատության խորհրդի թիվ ԱԽ-14-Ո-18 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, երբ քաղաքացիական գործը դեռևս գտնվում էր իր վարույթում (կասեցված վիճակում)՝ գործն, ըստ էության, լուծող դատական ակտը կայացված չլինելու պայմաններում: Միջանկյալ դատական ակտի կայացման համար դատավոր Ա. Մերանգուլյանի նկատմամբ վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հանգամանքները ընթացիկ գործի քննության վրա ունեցել են ուղղակի ազդեցություն՝ հանգեցնելով դատավորի կողմից թիվ ԵԷԴ/0970/02/11

⁹ ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել դատավորի կողմից տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում:

¹⁰ Նույն պատճառաբանությամբ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը վարույթ չի հարուցել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի նկատմամբ՝ 16.08.2012թ. «Հայփոստ» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Թիվ ԵԿԴ/3012/02/11 և ԵԿԴ/0019/04/12 քաղաքացիական գործերը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում քննության փուլում գտնվելու պատճառաբանությամբ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել նաև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սուքոյանի նկատմամբ՝ «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

քաղաքացիական գործով ինքնաբացարկ հայտնելու որոշմանը: Գործն, ըստ էության, լուծող դատական ակտը կայացվել է միայն 28.02.2013թ.՝ այլ դատավորի կողմից:

Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 19.02.2010թ. թիվ N-Կ-2-03/2010 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել ՀՀ վարչական դատարանի դատավոր Ք. Մկոյանի նկատմամբ, երբ իր վարույթում գտնվող վարչական գործով կայացված՝ գործի վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը գտնվում էր վարչական դատարանում քննության փուլում¹¹: ՀՀ վարչական դատարանի կողմից 22.02.2010թ. կայացվել է որոշում՝ բողոքը բավարարելու մասին, և գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացվել է¹²:

2. Արդարադատության խորհրդում երկակի ստանդարտները կիրառվել են նույնաբովանդակ խախտումների հիման վրա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու դեպքերում.

Այսպես, Արդարադատության խորհրդում դատավորի կողմից կասկածները փարատելու պատճառաբանությամբ ինքնաբացարկի միջնորդության բավարարման երկու նույնաբովանդակ դեպքերով տրվել են երկու բացահայտ իրարամերժ լուծումներ:

Ա դեպք. Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ արդարադատության խորհրդի 28.02.2013թ. թիվ ԱԽ-7-Ո-14 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Հունանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության թվով 6 քաղաքացիական գործերով ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունները՝ եղած կասկածները փարատելու պատճառաբանությամբ բավարարելու հիմքով: Խորհուրդը գտել է, որ դատավոր Ա. Հունանյանը, խախտելով ինքնաբացարկ հայտնելու իրավական պահանջները, թույլ է տվել դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, վարքագծի կանոնների կոպիտ խախտում, որոնք ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսանում: Դատավոր Ա. Հունանյանին հայտարարվել է նախազգուշացում¹³:

¹¹ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացող խախտումներից մեկի հիման վրա:

¹² ՀՀ արդարադատության նախարարի կողմից դատավոր Յ. Իսկոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի հիման վրա ՀՀ արդարադատության խորհուրդը 03.05.2013թ. թիվ ԱԽ-14-Ո-22 որոշմամբ ենթարկել է դատավորին կարգապահական պատասխանատվության, երբ քրեական գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դեռևս գտնվել է քննության փուլում:

¹³ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդության հիման վրա՝ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 30.01.2013թ. թիվ N-Կ-2-2/2013թ. որոշմամբ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ա. Մերանգույանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ կողմի չհիմնավորված կասկածները փարատելու պատճառաբանությամբ ինքնաբացարկի որոշում կայացնելու համար: Կարգապահական հանձնաժողովը փաստել է, որ դատավոր Ա. Մերանգույանի կողմից կայացված ինքնաբացարկի որոշումը կայացվել է ոչ թե համապատասխան իրավադրույթներով նախատեսված՝ ինքնաբացարկի հիմք հանդիսացող որևէ

Բ դեպք. Սույն գործով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել:

2013թ. Մայիսի 23-ին փաստաբան Հ. Հարությունյանի կողմից դիմում է ներկայացվել Արդարադատության խորհուրդ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Դ. Խաչատրյանին, Ն. Տավարացյանին և Ս. Միքայելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ¹⁴: Դիմումի ներկայացման համար հիմք է հանդիսացել մեկ վարույթում միացված թիվ ԵԿԴ 1304/02/11 և ԵԿԴ/1521/02/11 քաղաքացիական գործերով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կազմի բոլոր երեք դատավորների կողմից ինքնաբացարկ հայտնելու մասին որոշումների ընդունումը: Ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշումները պատճառաբանվել են հետևյալով. «...Հայտնում եմ, որ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված ինքնաբացարկ հայտնելու որևէ հիմք չունեմ և միջնորդության մեջ նշված պատճառաբանությունները համարում եմ անհիմն, քանի որ միջնորդությունը ներկայացրած կողմի նկատմամբ չունեմ կողմնակալ վերաբերմունք, ինչպես նաև կանխակալության որևէ պատճառ և տվյալ գործով միանշանակ կարող եմ լինել անկողմնակալ: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կողմը շարունակում է պնդել իր կասկածներն իմ անկողմնակալության կամ անաչառության վերաբերյալ, վերջինիս կասկածները փարատելու համար հայտնում եմ ինքնաբացարկ՝ վերջինիս մոտ արդարադատության նկատմամբ հավուր պատշաճի և օբյեկտիվ կարծիքի չխեղաթյուրման նպատակով...»:

Այս կարգապահական հանձնաժողովի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի երեք դատավորների կողմից նույն պատճառաբանությամբ ինքնաբացարկի միջնորդությունների բավարարման հիմքով կարգապահական վարույթ չհարուցելը վկայում է դատավորների նկատմամբ նույնաբովանդակ խախտումների դեպքում կիրառված երկակի ստանդարտների մասին:

Դատավորի կողմից դատական ակտը կողմին ուշացումով ուղարկելու երկու նույնաբովանդակ դեպքերով Արդարադատության խորհրդում տրվել են երկու բացահայտ իրարամերժ լուծումներ:

հանգամանքի առկայության պարագայում, այլ կողմի չհիմնավորված կասկածները փարատելու պատճառաբանությամբ: Այսինքն, որոշման հիմքում դրվել է օրենքով դատավորին ինքնաբացարկ հայտնելու համար հիմք չհանդիսացող հանգամանք, ինչի արդյունքում դատավորի կողմից ոչ միայն չեն պահպանվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինքնաբացարկ հայտնելու իրավական պահանջները, այլև դատավորը, փաստորեն, հրաժարվել է քաղաքացիական գործով արդարադատություն իրականացնելուց: Արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ռ-21 որոշմամբ դատավոր Ա. Մերանգույանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճվել է՝ դատավորի լիազորությունների դադարեցված լինելու հիմնավորմամբ:

¹⁴ Վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել 11.12.2012թ., առաջին նիստը կայացել է 23.01.2013թ., ինքնաբացարկի որոշումները կայացվել են 2013 թվականի ապրիլի 8-ին

Ա դեպք: Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ արձանագրվել է, որ դատարանը թիվ ԵՇԴ/0865/02/11 քաղաքացիական գործով վճիռը հրապարակել է 24.09.2012թ., սակայն դատական ակտը հայցվոր կողմը առձեռն ստացել է միայն 15.10.2012թ.: Խորհուրդն արձանագրել է, որ դատական ակտը հայցվորին հանձնելով վճռի հրապարակումից հետո քսանմեկերորդ օրը պայմաններ են ստեղծվել թիվ ԵՇԴ/0865/02/11 քաղաքացիական գործով հայցվոր կողմի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված անձի արդար դատաքննության տարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի խախտման համար: Դատավոր Ի. Բարսեղյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով:

Բ դեպք. Դատավորի կողմից թույլ տրված նույնաբովանդակ խախտման դեպքում Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել:

Թիվ ԵԿԴ 3012/02/11 քաղաքացիական գործով «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սուքոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Սույն քաղաքացիական գործով դատավոր Ա. Սուքոյանի կողմից վճռի հրապարակումը տեղի է ունեցել 24.05.2012թ., իսկ կողմին վճռի օրինակն ուղարկվել է միայն 14.06.2012թ. և ստացվել է 15.06.2012թ.¹⁵, այսինքն՝ վճռի հրապարակումից երեք շաբաթ անց:

Դարձյալ կարող ենք արձանագրել, որ թիվ ԵԿԴ 3012/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սուքոյանի կողմից թույլ տրված խախտումը նույնական է թիվ ԵՇԴ/0865/02/11 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ի. Բարսեղյանի կողմից թույլ տրված խախտման հետ, սակայն, ի հակադրություն վերջինիս, այն հիմք չի հանդիսացել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից բերված պատճառաբանությունները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի պահանջների խախտման և դատարանի դրսևորած անգործության արդյունքում կողմի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված՝ անձի արդար դատաքննության տարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի

¹⁵ Վճռի օրինակի ուղարկման և ստացման ամսաթիվը հաստատվում է փոստային ծրարի վրա առկա կնիքներով:

խախտման համար պայմաններ ստեղծելու վերաբերյալ, հավասարապես կիրառելի են նաև սույն գործով: Այնուամենայնիվ, կարգապահական հանձնաժողովի կողմից դատավոր Ա. Սուքոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ գործը ՀՀ վերաքննիչ դատարանում քննության փուլում գտնվելու և դատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության արգելքի պատճառաբանությամբ¹⁶:

Դատավորի կողմից անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտելու նույնաբովանդակ դեպքերով Արդարադատության խորհրդում տրվել են երկու բացահայտ իրարամերժ լուծումներ:

Ա. դեպք. Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ արդարադատության խորհրդի 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-2 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Արամյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելու մասին 27.11.2010թ. որոշման մեջ դատավորն օգտագործել է «... Ա. Պողոսյանը ... կրկին կատարել է ծանր հանցագործություն...» ձևակերպումը՝ այդպիսով, ըստ էության, դիրքորոշում հայտնելով Ա. Պողոսյանի մեղավորության մասին, ինչը «Վարքագծի

¹⁶ 2012թ. թիվ 28105311 քրեական գործով մեղադրյալ Կ. Քոչարյանի պաշտպան Տ. Սուրադյանը դիմում է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գ. Մելիք-Սարգսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Թիվ ՇՂ/0184/06/11 կալանքի վարույթի նյութերի ուսումնասիրությամբ հաստատվել է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ կալանավորման մասին որոշումը, որը բողոքարկվել է մեղադրյալի պաշտպանի կողմից, կայացվել է 25.09.2011թ., իսկ որոշման դեմ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է ուղարկվել 26.09.2011թ.: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ բողոքը բերվում է առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման մասին որոշումը հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում: Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում: Սույն գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 25.09.2011թ. կայացված կալանավորման մասին որոշման դեմ վերաքննիչ բողոքը մեղադրյալի պաշտպանի կողմից ներկայացվել է օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում, սակայն Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով: Գործի նյութերի ուսումնասիրությամբ հաստատվել է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվել է 11.10.2011թ., սակայն մեղադրյալին և պաշտպանին է ուղարկվել միայն 28.01.2012թ. որոշումն ընդունելուց 3.5 ամիս անց: (Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ դատարանի գրության մեջ նշված 17.10.2011թ. որոշումը մեղադրյալին ուղարկելու հանգամանքին, ապա Պաշտպանի կողմից կալանքի վարույթի նյութերի ուսումնասիրությամբ հաստատվել է, որ գործում առկա չէ դատարանի կողմից 17.10.2011թ. որոշումն ուղարկելու վերաբերյալ փոստային անդորրագիր):

Գործի նյութերի ուսումնասիրությամբ փաստվել է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը կալանավորման մասին որոշման դեմ ներկայացված բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով, այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է որոշման ընդունման հենց հաջորդ օրը՝ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում: Մենք արձանագրել ենք նաև, որ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը ուղարկվել է կողմին այն ընդունելու պահից 3.5 ամիս անց, որի հետևանքով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված որոշումը բեկանելու դրությամբ արդեն իսկ Կ. Քոչարյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը մտել էր օրինական ուժի մեջ: Թույլ տված խախտման հետևանքով մեղադրյալը ուղղակիորեն գրկվել է իր կալանավորումը վիճարկելու հնարավորությունից: Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վերագրյալ խախտումների հիմքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, մինչդեռ նույնաբնույթ խախտումներ թույլ տալու հիմքով ՀՀ արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ այլ դատավոր ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Ընդ որում, ի տարբերություն թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ արձանագրված խախտումների, որոնք տեղ էին գտել քաղաքացիական դատավարության շրջանակներում, սույն գործով խախտման հետևանքները, ըստ էության վերացնել հնարավոր չի եղել, քանի որ մեղադրյալն ուղղակիորեն գրկվել է կալանավորման մասին որոշումը բողոքարկելու հնարավորությունից:

կանոնների» 16-րդ կանոնի «է» կետով ամրագրված արգելքի խախտում է: Խորհուրդը փաստել է, որ խախտումն իր բնույթով կոպիտ է, քանի որ հանգեցրել է հիմնարար սահմանադրական արժեքի (անմեղության կանխավարկածի) ոտնահարման:

Նույնաբովանդակ հիմքերով ՀՀ արդարադատության խորհրդի 05.11.2010թ. թիվ ԱԽ-19-Ո-20 և 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-1 որոշումներով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացյանը և ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Արազյանը¹⁷:

Անմեղության կանխավարկածը խախտող և մեղադրյալի/ամբաստանյալի/ կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կատարելու հանգամանքը ընդունելու մասին վկայող նույնաբովանդակ ձևակերպումներ տեղ են գտել նաև այլ դատավորների որոշումներում, որոնք, սակայն, կարգապահական պատասխանատվության չեն ենթարկվել:

Բ դեպք. Սույն գործով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել

Բ 1. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մ. Սիմոնյանը վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգման է ենթարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ 27.11.2010թ. որոշման օրինականությունը: Դատարանն իր 09.12.2010թ. որոշման եզրափակիչ մասում նշել է. «... հաշվի առնելով մեղադրյալի կողմից նախկինում ծանր հանցագործություն կատարելու համար դատապարտված ու դատվածությունը մարված չլինելու պայմաններում նոր ծանր հանցագործություն կատարելը... դատարանի որոշումը պետք է թողնել ուժի մեջ՝ այն օրինական և հիմնավորված լինելու պատճառով»:

Սույն որոշումն ուշագրավ է նաև նրանով, որ նույն գործով առաջին ատյանի դատավոր Ս. Արամյանը նույնաբովանդակ ձևակերպման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության ՀՀ արդարադատության խորհրդի 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-2 որոշմամբ (առիթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը Կարգապահական հանձնաժողովին): Իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորը, որն իր որոշմամբ նույնպես մեղադրյալի կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ ձևակերպմամբ, ըստ էության, դիրքորոշում է արտահայտել Ա. Պողոսյանի մեղավորության վերաբերյալ, որն է պատասխանատվության չի ենթարկվել: Այսպիսով, նույն դատական գործի շրջանակներում երկու դատական ատյանների դատավորներ թույլ են տվել անմեղության

¹⁷ Բոլոր երեք կարգապահական գործերով վարույթի հարուցման առիթ է հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը՝ հասցեագրված Կարգապահական հանձնաժողովին:

կանխավարկածը խախտող նույն սխալները, սակայն կարգապահական պատասխանատվության է ենթարկվել միայն առաջին ատյանի դատարանի դատավորը:

Բ 2. Թիվ ԵԿԴ/0580/06/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.07.2010թ. որոշմամբ արձանագրվել է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, համապատասխանաբար, Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումները, *inter alia*, հիմնավորել են այն հանգամանքով, որ Ա. Առաքելյանը «կատարել է հանցանք...»: Այդպիսով փաստացի քննարկման առարկա է դարձվել իրեն վերագրվող արարքներում Ա. Առաքելյանի մեղավորության հարցը, և հաստատված է համարվել նրա մեղավորությունը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ա. Առաքելյանին կալանավորելու մասին դատական ակտում նրա մեղավորությունը հաստատված համարելը նրա անմեղության կանխավարկածի երաշխիքի խախտում է: Այնուամենայնիվ, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի համապատասխան դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որևէ գործընթաց չի եղել:

Այսպիսով, նույն՝ անմեղության կանխավարկածի խախտումը, որը նաև արձանագրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, ի տարբերություն վերոնշյալ դեպքերի, հիմք չի հանդիսացել Վճռաբեկ դատարանի կողմից Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին վարույթ հարուցելու միջնորդություն ներկայացնելու համար: Նշենք, որ կարգապահական խախտում թույլ տված դատավորը համապատասխան ժամանակահատվածում հանդիսացել է ՀՀ արդարադատության խորհրդի անդամ¹⁸:

3. Արդարադատության խորհրդում երկակի ստանդարտները կիրառվել են դատավորների կողմից թույլ տրված էականորեն տարբեր խախտումների դեպքերում նույն տեսակի կարգապահական տույժը կիրառելու դեպքերում.

¹⁸ Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գ. Խանդանյանը իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «...քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ Ա.Առաքելյանը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, կատարել է ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 5-10 տարի ազատազրկում, ուստի դատարանը գտնում է, որ հանցագործության ծանրությունը կարող է բավարար լինել նրան ազատությունից զրկելու համար»: ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. հուլիսի 23-ի որոշմամբ արձանագրվել է, որ առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա. Առաքելյանին գրավով կալանքից ազատելը ճանաչվել է անթույլատրելի, քանի որ վերջինս կատարել է ծանր հանցագործություն, մինչդեռ Ա. Առաքելյանին մեղսագրված արարքներից ոչ մեկը ծանր հանցագործություն չէ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ առաջին ատյանի դատարանը Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքում դնելով նաև նրա՝ լրություն պահպանելու իրավունքը, թույլ է տվել ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Եվրոպական կոնվենցիայի պահանջների խախտում: Գնահատելով Ա. Առաքելյանի կալանքի ժամկետի տևողությունը երկարացնելու գործընթացը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն չի համապատասխանել անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքին վերաբերող ինչպես երկրի ներքին օրենսդրության, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի հիմնարար պահանջներին: Վճռաբեկ դատարանը հաստատել է նաև, որ Ա. Առաքելյանին կալանքից գրավով ազատելը մերժելու և այն անթույլատրելի ճանաչելու մասին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն: Այնուամենայնիվ, ներկայացված հիմքերից ոչ մեկի հիման վրա կարգապահական վարույթի հարուցման գործընթաց չի նախաձեռնվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գ. Խանդանյանի նկատմամբ:

Արդարադատության խորհրդի ստորև ներկայացված որոշումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՀՀ արդարադատության խորհուրդը, 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-7 և ԱԽ-4-Ո-9 որոշումներով սահմանված հիմքերով և պատճառաբանությամբ մեկ գործով քննության ողջամիտ ժամկետների խախտման համար համաչափ համարելով «նախազգուշացում» կարգապահական տույժը, նույնքան համաչափ է համարել դրա կիրառումը դատավորի կողմից թվով 15 գործերով ողջամիտ ժամկետների անհամեմատ ավելի կոպիտ խախտման պարագայում /տես՝ թիվ ԱԽ-4-Ո-8/2013 որոշման մեջ արձանագրված խախտումները/:

Ա դեպք. Սույն գործերով քննության ողջամիտ ժամկետների խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նախազգուշացում» կարգապահական տույժի կիրառումը:

Ա. 1. ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-7 որոշմամբ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Վարդապետյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և վարքագծի կանոնների կոպիտ խախտում թույլ տալու հիմքերով՝ գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջը խախտելու համար: Մեղադրյալից բացի դատավարությանը մասնակցող անձինք են եղել նաև մեղադրողը, պաշտպանը, տուժողը, տուժողի ներկայացուցիչը և երկու վկա: Որոշմամբ արձանագրվել է, որ մինչ 07.11.2012թ. նշանակվել են 18 դատական նիստեր, որոնցից թվով 8 դատական նիստեր, ընդհանուր առմամբ, ավելի քան 3 ամսով հետաձգվել են մեղադրողի չներկայանալու պատճառով: Ընդ որում, նշված 8 դատական նիստերից 5-ին չի ներկայացել նաև տուժողի ներկայացուցիչը, ով, բացի այդ, բացակայել է ևս 2 այլ դատական նիստերից, և նրա չներկայանալու պատճառով գործի քննությունը հետաձգվել է ավելի քան 1 ամսով: Խորհուրդն արձանագրել է, որ թիվ ԵԱՆԴ/0010/01/12 քրեական գործը, Դատարանի կողմից վարույթ ընդունելու պահից սկսած, ավելի քան 11 ամիս գտնվել է դատարանի վարույթում, գործի քննության ընթացքում մեղադրողը՝ 8 անգամ, իսկ տուժողի ներկայացուցիչը՝ 5 անգամ չեն ներկայացել դատական նիստերին և դատավորի կողմից այդ կապակցությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Դատավոր Ա. Վարդապետյանին հայտարարվել է նախազգուշացում¹⁹:

¹⁹ Ա. 2. ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-9 որոշմամբ գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության է ենթարկվել Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Հովսեփյանը: Խորհրդի որոշմամբ արձանագրվել է, որ դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԱՔԴ/1297/02/10 քաղաքացիական գործի քննությունը տևել է ավելի քան 30 ամիս (2 տարի 6 ամիս), որից մոտ 7 ամիս գտնվել է կասեցված վիճակում: Խորհուրդը գտել է, որ Դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ քաղաքացիական գործի քննությունը անհարկի ձգձգումներից զերծ պահելու և ողջամիտ ժամկետում քննելու կապակցությամբ, որի արդյունքում խախտվել է օրենսդրությամբ և վարքագծի կանոններով սահմանված գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջը: Դատավոր Ս. Հովսեփյանին հայտարարվել է նախազգուշացում:

Բ դեպք. Թվով 15 գործերով դատավորի կողմից ողջամիտ ժամկետների անհամեմատ ավելի կոպիտ խախտման համար Արդարադատության խորհուրդը կրկին համաչափ է համարել նույն «նախազգուշացում» կարգապահական տույժը:

ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-8 որոշմամբ արձանագրվել է, որ թիվ ԵԿԴ/1067/02/09 քաղաքացիական գործը գտնվել է Դատարանի վարույթում շուրջ 41 ամիս՝ մինչ ինքնաբացարկի հայտնելը: Ընդ որում, 31.01.2012թ. նշանակված դատական նիստից հետո, որը չի կայացել Դատարանի վարույթում քննվող մեկ այլ անավարտ գործի քննության կապակցությամբ, հաջորդ դատական նիստը նշանակվել է միայն 10 ամիս անց: Թիվ ԵԿԴ/0367/02/11 քաղաքացիական գործը Դատարանի կողմից վարույթ ընդունելուց հետո առաջին դատական նիստը կայացել է ավելի քան 18 ամիս անց: Իսկ երեք քաղաքացիական գործերով առաջին նիստը կայացել է Դատարանի կողմից գործը վարույթ ընդունելուց հետո ավելի քան 12 ամիս անց: Բացի այդ, ևս 10 քաղաքացիական գործերի քննությունը դատավորի մոտ տևել է շուրջ 1 տարի 10 ամիս, 1 տարի 8 ամիս, 18 ամիս, 15 ամիս, 17 ամիս, 16 ամիս, 15 ամիս, 17 ամիս, 18 ամիս և 26 ամիս: Ընդ որում, նշված քաղաքացիական գործերից 8-ի նիստերի միջակայքը կազմել է 6-7 ամիս:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի նկատմամբ թվով 15 քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետները անհամեմատ ավելի կոպիտ կերպով խախտելու համար կիրառվել է կրկին «նախազգուշացում» կարգապահական տույժը:

4. Արդարադատության խորհրդում երկակի ստանդարտները կիրառվել են նույնաբովանդակ խախտումների հիման վրա դատավորների նկատմամբ կարգապահական տույժի տեսակը ակնհայտորեն անհիմն և տարբերակված մոտեցմամբ կիրառելու դեպքերում:

Դատավորների կողմից, ըստ էության, նույնաբովանդակ խախտումներ թույլ տալու համար Արդարադատության խորհուրդը առանց հիմնավորելու կիրառել է կարգապահական տույժի տարբեր տեսակներ:

Ա դեպք. Դատավորի կողմից համաներման կիրառման կարգի խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նախազգուշացում» կարգապահական տույժի կիրառումը:

ՀՀ արդարադատության խորհրդի 07.12.2012թ. թիվ ԱԽ-24-Ո-29 որոշմամբ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ս. Բաղդասարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության դատավճռով համաներման ակտը չկիրառելու համար: Խորհուրդն արձանագրել է, որ Գ. Փահլևանյանը մեղադրվում էր մինչև 2011թ. մայիսի 1-ը կատարած երկու հանցագործությունների մեջ, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ կիրառելի էր Համաներման ակտը: Խորհուրդը գտել է, որ Դատարանը թույլ է

տվել նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, քանի որ Գ. Փահլևանյանի կողմից կատարված արարքներից յուրաքանչյուրի դեպքում Համաներման ակտը կիրառելի լինելու պայմաններում Դատարանն իր դատավճռում ընդհանրապես չի անդրադարձել Համաներման ակտի կիրառման հարցին²⁰: Դատավոր Ս. Բաղդասարյանին հայտարարվել է նախազգուշացում²¹:

Այս դեպքում դատավորը թույլ է տվել նյութական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում, քանի որ չի կիրառել Համաներման ակտը, այն դեպքում, երբ այն եղել է կիրառման ենթակա: Վերոգրյալ որոշման մեջ մատնանշված փաստերը համադրելի են Արդարադատության խորհրդի մի քանի այլ որոշումներում մատնանշված փաստերի հետ, որոնցով նույնպես արձանագրվել է համաներման կիրառման կարգի խախտում: Ի տարբերություն վերը նշված գործի՝ ստորև ներկայացված գործերով դատավորի կողմից Համաներման ակտով նախատեսված արգելքի կամ սահմանափակման պայմաններում անձի նկատմամբ կիրառվել է համաներմում կամ Համաներման ակտի կիրառման ոչ ենթակա դրույթը:

Բ դեպք. Դատավորի կողմից համաներման կիրառման կարգի խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «խիստ նկատողություն՝ գուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով» կարգապահական տույժի կիրառումը:

Բ 1. ՀՀ արդարադատության խորհրդի 10.02.2012թ. թիվ ԱԽ-1-Ո-7 որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Լ. Աթանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ համաներման ակտով նախատեսված ուղղակի արգելքի պայմաններում դատապարտյալի նկատմամբ համաներմում կիրառելու համար²²: Երևանի քրեական դատարանի 08.07.2008թ. դատավճռով Ս. Գալուստովը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան երեք տարի ժամկետով: 27.06.2011թ. որոշմամբ դատարանը դատապարտյալի նկատմամբ կիրառել է համաներմում և նրան ազատել դատավճռով նշանակված պատժի կրումից: Խորհուրդն արձանագրել է, որ դատավոր Լ. Աթանյանը Համաներման ակտով նախատեսված սահմանափակումն անտեսելու հետևանքով, մասնավորապես այն, որ Ս. Գալուստովը դատապարտված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով, որի նկատմամբ համաներմումը կիրառելի չէր, Համաներման ակտի կիրառմամբ դատապարտյալին ազատել է դատավճռով նշանակված պատժի կրումից: Դատավոր Լ.

²⁰ Դատարանն իր կողմից կայացված դատավճռից շուրջ 9 ամիս անց, 25.09.2012թ. կայացրել է դատավճռի անհստակությունը լուծելու մասին որոշում, որով Գ. Փահլևանյանի նկատմամբ կիրառել է համաներման ակտը՝ ազատելով ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար նշանակված պատժից: Ընդ որում, 25.09.2012թ. անհստակությունը լուծելու մասին որոշմամբ դատավորի կողմից համաներման ակտի կիրառումը վարույթ հարուցող մարմինը գնահատել էր որպես դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում, որը, սակայն, Արդարադատության խորհրդի կողմից չի ընդունել:

²¹ Կարգապահական վարույթը հարուցվել է ՀՀ Արդարադատության նախարարի հրամանով:

²² Վարույթը հարուցվել է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից : Վարույթ հարուցելու առիթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը կարգապահական հանձնաժողովին:

Աթանյանին հայտարարվել է խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով²³:

Դատավորի կողմից Համաներման ակտը կիրառելի լինելու պայմաններում դատավճռով այն չկիրառելու համար Խորհուրդը դատավորի նկատմամբ կիրառել է «նախազուշացում» կարգապահական տույժը²⁴, որը, ըստ ՀՀ դատական օրենսգրքի, կիրառելի է Արդարադատության խորհրդի կողմից նվազ ծանրության ճանաչված կարգապահական խախտման համար: Միաժամանակ, դատավորի կողմից Համաներման ակտով նախատեսված արգելքի կամ սահմանափակման պայմաններում անձի նկատմամբ համաներմում կամ Համաներման ակտի կիրառման ոչ ենթակա դրույթը կիրառելու (պատժից ազատելու դրույթը՝ նշանակված պատժի չկրած մասը կրճատելու դրույթի փոխարեն) համար, երբ որոշ դեպքերում դատարանի կողմից նշանակված պատիժը ընդհանրապես եղել է պայմանականորեն չկիրառված, Խորհուրդն ընտրել է կարգապահական տույժի խիստ տեսակները: Ընդ որում, այս տույժերի տեսակների ընտրության չափանիշները նույնպես հաճախ եղել են անհասկանալի և չհիմնավորված:

Կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ որոշումների կապակցությամբ դատավորներին պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհուրդը կիրառել է երկակի ստանդարտներ:

Ա դեպք. ՀՀ արդարադատության խորհրդի 22.01.2009թ. թիվ ԱԽ-2-Ո-11 որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ափինյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ կալանավորման և կալանքը գրավով փոխարինելու անհիմն որոշում կայացնելու համար:

²³ Բ 2. ՀՀ արդարադատության խորհրդի 24.12.2009թ. թիվ ԱԽ-21-Ո-28 որոշմամբ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Մելքոնյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ համաներմում կիրառելու կարգը խախտելու համար: Համաներմումը կիրառվել է դատապարտյալի նկատմամբ, այն դեպքում, երբ վերջինիս նկատմամբ այն կիրառելի չի եղել: Դատարանի 21.08.2008թ. դատավճռով Հ. Ավագյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրա նկատմամբ նշանակված 1 տարի ազատազրկման պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշջան 2 տարի ժամկետով: Դատարանի 17.09.2009թ. որոշմամբ վերացվել է Հ. Ավագյանի նկատմամբ սահմանված պայմանական դատապարտությունը և նա ազատվել է 1 տարի ժամկետով ազատազրկումից: Խորհուրդն արձանագրել է, որ ՀՀ ԱԺ-ի «Համաներմում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ համաներմումը չի կիրառվում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ: Մինչդեռ, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ դատավճռով Հ. Ավագյանի նկատմամբ սահմանված պայմանական դատապարտությունը վերացվել է և նա ազատվել է մեկ տարի ժամկետով ազատազրկումից: Դատավոր Ռ. Մելքոնյանին հայտարարվել է նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

Բ 3. ՀՀ արդարադատության խորհրդի 10.02.2012թ. թիվ ԱԽ-1-Ո-4 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Լ. Ավետիսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ երկու գործերով համաներման դրույթների սխալ կիրառման համար՝ նյութական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով: Խորհուրդը գտել է, որ դատավոր Լ. Ավետիսյանը Համաներման ակտով նախատեսված սահմանափակումները անտեսելու հետևանքով խախտել է համաներմում կիրառելու կարգը: Երկու գործերով էլ կիրառվել էր Համաներման ակտի՝ նշանակված պատժից ազատելու դրույթը՝ նշանակված պատժի չկրած մասի ¼-ով կրճատելու դրույթի փոխարեն²³: Դատավոր Լ. Ավետիսյանին հայտարարվել է նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

Բ 4. ՀՀ արդարադատության խորհրդի 10.02.2012թ. թիվ ԱԽ-1-Ո-5 որոշմամբ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ռ. Մելքոնյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Համաներման ակտով նախատեսված ուղղակի արգելքի պայմաններում համաներմում կիրառելու համար: Դատավոր Ռ. Մելքոնյանին հայտարարվել է խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

²⁴ թիվ ԱԽ-24-Ո-29 (07.12.2012թ.) որոշում

Կարգապահական վարույթը հարուցվել է ՀՀ արդարադատության նախարարի հրամանով: Կարգապահական խախտման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի եզրակացությամբ արձանագրվել է, որ դատարանի հետևությունն այն մասին, որ բացակայում է դեպքին մեղադրյալի առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածը, անհիմն է, քանի որ պատճառաբանված չէ և չի բխում գործի նյութերից: Սույն գործով Խորհուրդն արձանագրել է, որ դատարանը պետք է իր որոշման մեջ ծանրակշիռ փաստարկներով հիմնավորի խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը, ապա դրա տեսակը ընտրելու պատճառները: Մինչդեռ, դատավորի՝ 16.09.2008 թվականի կալանավորման և կալանքը գրավով փոխարինելու որոշման մեջ նշված է. «... Բացի այդ Ս. Սաղաթեյանը իրեն մեղավոր չի ճանաչել վերագրվող արարքի կատարման մեջ, իսկ դատարանը քրեական գործի նյութերի հետազոտմամբ գտավ, որ հիմնավոր կասկածներ չկան այդ արարքների կատարմանը նրա առնչության վերաբերյալ»: Եթե դատավորը գտնում է, որ հիմնավոր կասկածներ չկան այդ արարքների կատարմանը Ս. Սաղաթեյանի առնչության վերաբերյալ, ապա պարզ չէ, թե ինչ իրավական հիմնավորմամբ է Ս. Սաղաթեյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել կալանքը երկու ամիս ժամկետով, այնուհետև կալանքը փոխարինել գրավով: Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ Ս. Սաղաթեյանի նկատմամբ գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասով, օրինական ուժի մեջ թողնելով նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով ընտրելու մասին որոշումը: Սույն կարգապահական գործով ՀՀ արդարադատության խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի ակնհայտ խախտում, և դատավոր Ռ. Ափինյանին հայտարարվել է նախազգուշացում:

Բ դեպք. Վերոհիշյալ որոշման հետ ուղղակիորեն համադրելի է Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի 24.06.2011թ. թիվ ԱԽ-13-Ո-17 որոշումը: Այս դեպքում Խորհրդի կողմից կիրառվել է կարգապահական տույժի ամենախիստ տեսակը՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը, որը ենթակա է կիրառման միայն այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար²⁵: Այսպես, Խորհուրդն արձանագրել է, որ Դատարանն իր 30.05.2011թ. որոշմամբ կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելիս որևէ ձևով չի պատճառաբանել նման եզրահանգման գալը, այլ ընդամենը որոշման պատճառաբանական մասում ուղղակի նշել է պաշտպանի կողմից դատարան ներկայացված միջնորդության հիմնավորումը և մեղադրող կողմի դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ: Նշենք նաև, որ որոշման ընդունումից հետո գրեթե մեկ ամիս

²⁵ ՀՀ դատական օրենսգրքը, հոդված 157, 3-րդ մաս

անց վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է (07.07.2011թ. որոշմամբ): Արդարադատության խորհուրդը դատավոր Ս. Մնացականյանի կարգապահական գործը քննելիս համադրել է այն 05.11.2010թ. թիվ ԱԽ 19-Ո-19 որոշման հետ: Հիմք ընդունելով նշված որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը²⁶ և այն համադրելով քննարկվող գործի փաստական հանգամանքների հետ՝ Խորհուրդը գտել է, որ սույն գործով Ս. Մնացականյանի կողմից նույնպես դրսևորվել է կամայական մոտեցում, քանի որ կամայական մոտեցում է համարվում փաստերի վրա չհիմնված և չպատճառաբանված դատական ակտի կայացումն անկախ այն հանգամանքից, թե այդ դատական ակտով անձը կալանավորվում է, թե կալանքից ազատ է արձակվում: Սակայն, ի տարբերություն Խորհրդի կողմից մեջբերված որոշման²⁷, որով ամբաստանյալին ազատությունից զրկելիս կամայական մոտեցում դրսևորելու համար դատավոր Ա. Խաչատրյանին հայտարարվել է նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, այս դեպքում մեղադրյալի նկատմամբ կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելիս կամայական մոտեցում դրսևորելու համար Արդարադատության խորհուրդը դատավոր Ս. Մնացականյանի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ դիմեց Հանրապետության Նախագահին՝ կիրառելով Դատական օրենսգրքով սահմանված ամենախիստ կարգապահական տույժը:

Գ դեպք. ՀՀ արդարադատության խորհրդի վերագրյալ որոշման լույսի ներքո Խորհրդի երկակի ստանդարտների կիրառումն առավել ակնհայտ է դառնում ստորև ներկայացված որոշման վերլուծության արդյունքում: Այսպես, ՀՀ արդարադատության խորհրդի 22.04.2011թ. թիվ ԱԽ-8-Ո-11 որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ս. Արդամանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին անհիմն որոշում կայացնելու համար: Սույն կարգապահական գործով ՀՀ արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ Վ. Գևորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշման հիմքում դրված ենթադրյալ գործողությունների կատարման հավանականությունը պայմանավորելով Վ. Գևորգյանի կողմից իր իրավունքներից օգտվելու հանգամանքներով, այն է՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստերին չմասնակցելով, առաջադրված մեղադրանքը չընդունելով և իրեն մեղավոր չճանաչելով, վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի և 3-րդ մասի պահանջները: Բացի այդ, Խորհուրդն արձանագրել է, որ որոշման մեջ նշելով, որ առկա է հիմնավոր կասկած, որ Վ. Գևորգյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը, Վերաքննիչ դատարանն իր այդ հետևությունը գործով ձեռք բերված որևէ ապացույցով չի

²⁶ «Անձին ազատությունից զրկելը կամայական է, երբ այն կատարվել է օրենքով սահմանված իրավական ընթացակարգերի խախտմամբ, ինչպես նաև այն դեպքում, երբ կողմնակի դիտորդի համար ակնհայտ է, որ տվյալ հանգամանքներում ազատությունից զրկելու հիմքերը պատշաճ և համոզիչ չեն: Այս հանգամանքները համակցության մեջ գնահատելով՝ Խորհուրդը եզրակացնում է, որ դատավորը ... ամբաստանյալին ... ազատությունից զրկելիս դրսևորել է կամայական մոտեցում»:

²⁷ ԱԽ 19-Ո-19 (05.11.2010թ.) որոշում

հիմնավորել: Վերաքննիչ դատարանը չի մատնանշել որևէ փաստական տվյալ, որը հնարավորություն կտար անաչառ դիտորդին եզրակացնելու, որ Վ. Գևորգյանը հնարավոր է, որ կատարած լինի նրան մեղսագրված արարքը: Հետևաբար, հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված և պատճառաբանված չէ: Վերոգրյալ խախտումները թույլ տալու համար Արդարադատության խորհրդի կողմից դատավոր Մ. Արդամանյանին հայտարարվել է նկատողություն՝ 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին չհիմնավորված որոշում կայացնելու համար, որի արդյունքում մեղադրյալը 2 ամիս 17 օր անհիմն կերպով մնացել է կալանավորված վիճակում, Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նկատողություն՝ 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով» կարգապահական տույժի կիրառումը, մինչդեռ, կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու չհիմնավորված և չպատճառաբանված որոշում կայացնելու համար, որի հետևանքով որևէ անձ ազատությունից անհիմն չի զրկվել, իսկ կալանքից ազատ արձակված անձը, ինչպես հետագայում հաստատվեց, որևէ առնչություն չի ունեցել իրեն վերագրվող հանցագործությանը, դատավորի նկատմամբ համաչափ է համարել ամենախիստ կարգապահական տույժի կիրառումը²⁸, որը ենթակա է կիրառման միայն այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար²⁹:

5. Արդարադատության խորհրդի որոշումների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում խնդրահարույց է եղել ոչ միայն դատավորի կողմից թույլ տրված խախտման որակումը որպես ակնհայտ և կոպիտ, այլև խախտման առկայությունն ընդհանրապես³⁰:

²⁸ Դատավոր Ս. Մնացականյանը ՀՀ Արդարադատության խորհրդի կողմից երբևէ կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

²⁹ Դ դեպք. Չպատճառաբանված դատական ակտ կայացնելու հետևանքով դատավորի կողմից թույլ տրված՝ դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումը, նույն հիմնավորմամբ դրվել է նաև ՀՀ արդարադատության խորհրդի 2013 թվականի ապրիլի 12-ի որոշման հիմքում: 12.04.2013թ. թիվ ԱՆ-12-Ո-20 որոշմամբ ՀՀ արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ չպատճառաբանված դատական ակտերը չեն կարող ապահովել դատական իշխանության և դատարանների կողմից կայացված դատական ակտերի նկատմամբ հանրության վստահությունը, այլ ընդհակառակը, չպատճառաբանված, չհիմնավորված դատական ակտերը նսեմացնում են դատական իշխանության հեղինակությունը և խաթարում են արդարադատության բուն էությունը: Տվյալ դեպքում Դատարանի վճռում արտացոլված չէ դատարանի կողմից որևէ ապացույցի հետազոտում և պարզ չէ, թե դատարանը որ ապացույցների հետազոտման արդյունքում է եկել եզրահանգման հայրը մերժելու առումով: Այսպիսով, դատարանի կողմից թիվ ԵՇԴ/1276/02/10 քաղաքացիական գործով ոչ միայն չի որոշվել ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, այլ նաև հայրը մերժելիս ընդհանրապես չի պատճառաբանվել, թե հայցվորի կողմից ներկայացված որ ապացույցն է գնահատվել և համարվել թույլատրելի կամ ոչ թույլատրելի: Վերոգրյալի արդյունքում Խորհուրդը գտել է, որ դատարանը, կայացնելով չպատճառաբանված դատական ակտ, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի, 131-րդ հոդվածի 1-ին մասի և 132-րդ հոդվածի 1-ին մասի ակնհայտ և կոպիտ խախտումներ: Բացի վերոնշյալ խախտումից Խորհուրդն արձանագրել է ևս երկու քաղաքացիական գործերով դատավորի կողմից թույլ տրված դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, սակայն այս դեպքում, ի տարբերություն 24.06.2011թ. թիվ ԱՆ-13-Ո-17 որոշմամբ դատավոր Ս. Մնացականյանի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի, դատավոր Ի. Բարսեղյանին հայտարարվել է նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

³⁰ ՀՀ արդարադատության խորհրդի 2009թ. փետրվարի 5-ի թիվ ԱՆ-3-Ո-14 որոշմամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ա. Պողոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Խորհրդի որոշմամբ արձանագրվել է. «ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Պողոսյան), խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, քննության է առել

6. Ձեկույցում արձանագրվել է նաև, որ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից խախտվում են ՀՀ սահմանադրության 27.1 հոդվածի և ՀՀ դատական օրենսգրքի պահանջները, իսկ 18.12.2012թ. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1063 որոշման ընդունումից հետո՝ նաև հիշյալ որոշման պահանջները, դրանով իսկ առավել խորացնելով ու ավելի հիմնավոր դարձնելով հանրության մոտ ձևավորված կարծիքը՝ Արդարադատության խորհրդի կողմից երկակի ստանդարտների կիրառման վերաբերյալ: Մեր կողմից ուսումնասիրված՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ 2011, 2012 և 2013թթ.³¹ ընթացքում ՀՀ արդարադատության խորհրդին ուղղված բոլոր դիմումներին տրված պատասխաններից պարզ է դարձել, որ տվյալ ժամանակահատվածում Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման մերժումն ըստ էության պատճառաբանելու դեպքեր չեն արձանագրվել³²: Խախտման վերաբերյալ տրված պատասխանները կրել են տիպային բնույթ՝ ներառելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բավարար չլինելու վերաբերյալ ձևակերպումը:

Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Վճռաբեկ դատարանում.

2013թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում մակագրված բողոքներից վարույթ է ընդունվել ընդամենը 6%-ը, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում վարույթ է ընդունվել բերված բողոքների 5%-ը³³: Ներկայացված բողոքների ճնշող մեծամասնությունը Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձվել է:

Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում ներկայացվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման չափանիշները և այն ամրագրող օրենսդրական նորմի կիրառման պրակտիկան:

վարչական գործն ըստ հայցի՝ Արմինե Աբրոյանի ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արարատի մարզի Մասիսի տարածքային ստորաբաժանման, ... անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, Արմինե Աբրոյանի սեփականության իրավունքը Արարատի մարզ, գ. Այնթափ, 7-րդ փողոց, թիվ 32, 194,7 քմ մակերեսով տան և 0,065 հա տնամերձ հողամասի նկատմամբ գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Արդյունքում ՀՀ վարչական դատարանը Արմինե Աբրոյանի հայցը բավարարել է ամբողջությամբ: Մինչդեռ ՀՀ վարչական դատարանը անտեսել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը...»: Մի կողմ թողնելով Խորհրդի կողմից բերված այլ փաստարկների իրավաչափության հարցը, բավարար է միայն արձանագրել, որ վկայակոչված՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռը, որը «անտեսվել է» Վարչական դատարանի դատավոր Ա. Պողոսյանի կողմից, ընդհանրապես որևէ առնչություն չունի քննված գործով ներկայացված հայցի հիմքերի հետ:

³¹ 2013թ. հոկտեմբերի դրությամբ.

³² Միայն մի դեպքում մի քանի նախադատությամբ գրությամբ անդրադարձ է կատարվել դիմումով ներկայացված խախտումներից մեկին:

³³ Տե՛ս Համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2012-2013թթ. գործունեության վերաբերյալ

Այսպես, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պահանջն ամրագրող դրույթներ սահմանվել են ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերում: Այս դրույթները սահմանվել են ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումների, այդ թվում՝ 2007թ. Ապրիլի 9-ի ՍԴՈ-690, 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765, 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691, 2009թ. հուլիսի 28-ի ՍԴՈ-818 որոշումների կատարման ապահովման նպատակով: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ³⁴ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1. հոդվածի (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) 2-րդ կետը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով: Նույն հիմնավորումներով ՀՀ սահմանադրական դատարանը 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2-րդ մասը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու առումով:

Մինչև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից վերոգրյալ որոշումների ընդունումը ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումները հիմնականում պատճառաբանում էր բողոքի ընդունելիության հիմքերի բացակայությամբ: Հենց այս պատճառաբանությամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներն են հիմք հանդիսացել համապատասխան անձանց կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի նշված դրույթները ճանաչվել են հակասահմանադրական: Ուսումնասիրելով Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-690 որոշմամբ շեշտել է, որ բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի բացակայության հետևանք է, որ ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և թե վերադարձնելու մասին որոշումներում, ըստ էության, չեն տրվում պատճառաբանություններ: Այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումները, դրանց հիման վրա ՀՀ դատական օրենսգրքում, քրեական, քաղաքացիական, վարչական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխություններն իրավակիրառ պրակտիկայում այդպես էլ էական փոփոխությունների չհանգեցրեցին: ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանցում արտահայտված դիրքորոշումներն, ըստ էության, Վճռաբեկ դատարանի կողմից

³⁴ Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

չկիրառվեցին՝ որոշումը պատճառաբանելու պահանջի նկատմամբ դրսևորվելով ձևական մոտեցում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2012թ. նոյեմբերի 29-ի՝ ՀՀ վճարեկ դատարան ներկայացվող բողոքների ընդունելիությանն առնչվող խնդիրների վերաբերյալ եզրակացությամբ հստակ շեշտվել է, որ «անկախ միջազգային պրակտիկայից, որը կարող է ավելի մեղմ պահանջներ առաջադրել, ՀՀ վճարեկ դատարանը ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պարտավորված է կիրառել վերադարձնելու մասին որոշումը պատճառաբանելու առավել խիստ չափանիշներ և, այսպիսով՝ պարտավոր է պատճառաբանել իր որոշումները»:

Պաշտպանի գնահատմամբ՝ վճարեկ բողոքի ընդունելիության հիմքերի բացակայության վկայակոչմամբ ՀՀ վճարեկ դատարանի տիպային պատճառաբանությունները բացառում են վճարեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պահանջի ապահովումը Վճարեկ դատարանի կողմից: Այս հետևությունը հաստատվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 08.10.2008թ. թիվ ՄԴՈ-765 որոշմամբ: Այսպես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ վճարեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը արտոնյալ վիճակում դնելու հայեցողությամբ և չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճարեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման: Մինչդեռ, ՀՀ վճարեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վճարեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների պատճառաբանման պահանջը ՀՀ վճարեկ դատարանի կողմից ընկալվում է համապատասխան ընդունելիության հիմքի ձևական վկայակոչման մակարդակում, քանի որ դրա բացակայությունն, ըստ էության, չի պատճառաբանվում:

Վճարեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների պատճառաբանման պահանջը անմիջականորեն պայմանավորված է վճարեկ բողոքը վարույթ ընդունելու որոշումների պատճառաբանման և ընդհանրապես Վճարեկ դատարանի կողմից բողոքի ընդունելիության հիմքերի կիրառման չափանիշներով: Այս չափանիշները դեռևս 2007թ. սահմանվել են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով. «Վճարեկ դատարանը, գործելով իր սահմանադրաիրավական գործառույթի շրջանակներում, պարտավոր է վճարեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ մեկնաբանել «Էական նշանակություն», «ծանր հետևանք», «վճարեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտ» հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն տալով իրավունքի սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները» (28.07.2009թ. ՄԴՈ-818): «Վճարեկ դատարանի կողմից «Էական նշանակություն», «ծանր հետևանք» և «Վճարեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պատճառաբանումը պայման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին կետի 4.1 ենթակետում և 231.2 հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճարեկ

վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար» (ՄԴՈ-690, 09.04.2007թ.):

Վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերի հստակեցված չլինելու պայմաններում տիպային պատճառաբանություններ պարունակող՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներ կայացնելու հետևանքով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից խախտվում են թե՛ ՀՀ օրենսդրության և թե՛ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների պահանջները: Նման պայմաններում լիովին արդարացված է հանրության շրջանում առկա անվստահությունը Վճռաբեկ դատարանի գործունեության նկատմամբ: Վճռաբեկ դատարանի լիազորությունների կամայական իրականացման, երկակի ստանդարտների կիրառման և որոշումների անկանխատեսելիության վերաբերյալ հետևությունը պայմանավորված է բողոքի ընդունելիության հիմքերի հստակեցված չլինելու պայմաններում այս որոշումները չպատճառաբանելու հանգամանքով, ինչը կամայական բնույթ է հաղորդում Վճռաբեկ դատարանի գործունեությանը: Մինչդեռ, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պայմանն օրենքով հստակ սահմանելը պետք է հանդիսանար Վճռաբեկ դատարանի կողմից իր հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումն ապահովող կարևոր իրավական երաշխիք³⁵

Ձեկույցում արձանագրվել է նաև, որ մի շարք դեպքերում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում քննարկվում են հարցեր, որոնք ենթակա են լուծման միայն գործի ըստ էության քննության ժամանակ³⁶: Վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանը հաճախ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում բողոքը վարույթ չընդունելը պատճառաբանել է բողոքի ընդունելիության հիմքերը բավարար հիմնավորված չլինելու հանգամանքով, այնինչ, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, բողոք բերող անձի համար նման հիմնավորման պարտականություն նախատեսված չէր:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2012-2013թթ. վարույթ ընդունված բոլոր բողոքների ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված 9 բողոքներ ընդհանրապես չեն պարունակել վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերի վերաբերյալ որևէ հղում կամ հիմնավորում, այսինքն՝ դրանք Վճռաբեկ դատարանի կողմից

³⁵ Տե՛ս՝ ՀՀ սահմանադրական դատարանի 27.05.2008թ. թիվ ՄԴՈ-754 որոշումը

³⁶ Քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում հաճախ հանդիպում են հետևյալ ձևակերպումները. «Վերլուծելով բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:» Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմք է հանդիսանում դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Նույնաբնույթ ձևակերպումներ հաճախ հանդիպում են նաև քրեական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում. «Վերլուծելով բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանք: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:»:

վարույթ են ընդունվել ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի պահանջների ակնհայտ խախտմամբ: Այս բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու փաստն ապացուցում է ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից օրենքով սահմանված պահանջների ուղղակի խախտումը, այլև Վճռաբեկ դատարանի կողմից երկակի ստանդարտների ակնհայտ կիրառումը՝ վարույթ չընդունված մի քանի հազար բողոքներ ներկայացրած անձանց նկատմամբ: «Վճռաբեկ դատարանը պարտավոր է վերադարձնել վճռաբեկ բողոքը, եթե այն չի համապատասխանում օրենսգրքում նախանշված բովանդակային պահանջներին կամ չի պարունակում վճռաբեկ բողոքի ընդունելիության որևէ հիմքի հիմնավորում» (2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՌ-690 որոշում):

Զեկույցում արձանագրվել է նաև, որ վարույթ ընդունված և վերադարձված վճռաբեկ բողոքների ուսումնասիրության արդյունքում հիմնականում հնարավոր չէ բացահայտել, թե ինչ չափանիշներով են վճռաբեկ բողոքները ընդունվում վարույթ կամ վերադարձվում Վճռաբեկ դատարանի կողմից:

Արձանագրվել է նաև, որ Վճռաբեկ դատարանը հիմնականում ձևական մոտեցում է դրսևորում Սահմանադրական դատարանի որոշումների և դրանցում արտահայտված դիրքորոշումների նկատմամբ՝ ըստ էության, չկատարելով Սահմանադրական դատարանի պարտադիր իրավաբանական ուժ ունեցող որոշումների պահանջները: Առանձին դեպքում ձևական մոտեցումը հանգեցրել է նրան, որ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ մեխանիկորեն վերարտադրվել է դիմողի կողմից թույլ տրված սխալը կամ վրիպակը: Օրինակ, 2012թ. հունվարի 11-ի ԵՄԴ /0644/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՌ-897 որոշման հիման վրա նոր հանգամանքների հիմքով նախկին որոշումը վերանայելու հիմքերի բացակայության մասին և բողոքի քննության ընդունումը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ «... բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը»: Այնինչ, Սահմանադրական դատարանի հիշյալ համարով որոշումն ընդունվել է 2010թ. հունիսի 22-ին և վերաբերում է միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությանը³⁷:

Զեկույցում արձանագրվել է նաև, որ Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում այնպիսի խախտումների դեպքերում, որոնց համար վարույթ է հարուցվում ստորադաս ատյանի դատարանի դատավորների նկատմամբ: Համապատասխան դեպքերի մանրամասները ներկայացված են ամբողջական Զեկույցում³⁸: Արտահերթ զեկույցում վեր են լուծվել նաև ՀՀ դատական համակարգի օրենսդրական խնդիրները, որոնց մի մասը ներառվել է ՀՀ արդարադատության նախարարության բաժնում:

³⁷ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի ՍԴՌ-767 որոշում:

³⁸ <http://www.pashspan.am/library/library/page/101/type/3>

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալներով³⁹ 2012թ. բնակչության մոտ ամեն երրորդը՝ 32.4% եղել է աղքատ, նրանցից 13.5%՝ շատ աղքատ, իսկ 2.8%՝ ծայրահեղ աղքատ: Չնայած, որ 2012թ. աղքատության մակարդակը 2011թ. նկատմամբ նվազել է, սակայն գերազանցել է 2008թ. թե՛ աղքատության մակարդակը, թե՛ դրա խորությունն ու սրությունը⁴⁰: Աղքատության նման ցուցանիշի գոյացման վրա ազդող գործոններից մեկը Հայաստանում անձանց տնտեսական և սոցիալական իրավունքների ոչ պատշաճ ապահովումն է:

1. 2013թ. մայիսին Արժույթի միջազգային հիմնադրամը հրապարակեց «Սովետային տնտեսությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում» զեկույցը, որի համաձայն՝ Հայաստանում սովետային տնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի մոտ 35%-ը, ինչը համեմատությամբ ավելի բարձր է, քան հարևան Վրաստանում և Ադրբեջանում: Ընդ որում, ըստ ԱՄՀ-ի՝ Հայաստանում սովետային տնտեսության ձևավորման վրա ազդում են հետևյալ գործոնները՝ հարկային բեռը 10.6%-ով, աշխատանքային շուկայի կարգավորումները՝ 15%-ով, ինստիտուցիոնալ որակը (դատական մարմինների ցածր արդյունավետություն, թափանցիկության պակաս, անհարկի վարչարարություն և այլն)՝ 28.8%-ով, ֆինանսական ու ապրանքային շուկաների կարգավորումների բեռը՝ 45.7%-ով⁴¹:

Անձանց՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ (Հոդված 33.1), որի համատեքստում պետությունը պարտավոր է կանխել շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունը:

Տնտեսական ոլորտում, փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացմանը շարունակում են խոչընդոտել մի շարք խնդիրներ: Այս ուղղությամբ Կառավարության կողմից ձեռնարկվել են տարբեր իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքներ, փորձաքննության են ենթարկվել շուրջ 360 իրավական ակտեր, սակայն օրենսդրական խնդիրները դեռևս լիովին լուծված չեն՝ առաջին հերթին օրենսդրական ակտերում իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից, որին ավելանում է նաև տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հաճախ կիրառվող անհամաչափ բարձր հարկային բեռը: Հարկային օրենսդրության բարեփոխումներին զուգահեռ ընդունված նոր իրավական ակտերի նորմերը հաճախ տարամեկնաբանությունների և տարընկալումների տեղիք են տալիս, ինչի հետևանքով հարկատուները ենթարկում են անհամաչափ պատասխանատվության: Ընդ որում, ինչպես բազմաթիվ հարկատուների դժգոհությունները, այնպես էլ Պաշտպանի կողմից դիմումների քննարկման ընթացքը վկայում են, որ պետական լիազոր մարմինը հաճախ խուսափում է

³⁹ 2013թ. բնակչության աղքատության վերաբերյալ տվյալները սույն զեկույցի մշակման ընթացքում դեռևս ամփոփված չեն եղել ՀՀ ԱՎԾ կողմից:

⁴⁰ http://armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf

⁴¹ Measuring the Informal Economy in the Caucasus and Central Asia, 2013; <http://www.imf.org/external/pubs/ft/wp/2013/wp13137.pdf>

երկիմաստ իրավական նորմերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ տրամադրելուց, մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով վերջինս այդպիսի պարտականություն է կրում՝ որպես տվյալ իրավական ակտերը կիրառող պետական մարմին: Այսպես, օրինակ, 2013թ. բազմաթիվ գործարարներ տույժերի և տուգանքների են ենթարկվել ՊԵԿ-ի կողմից «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի տարաբնույթ մեկնաբանման և ձևական պահանջների առաջադրման արդյունքում: Նույնաբնույթ խնդիր է արձանագրվել նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ ֆիզիկական անձանց կողմից ԱԱՀ վճարելու պարտավորություն նախատեսող դրույթի մեկնաբանության և կիրառման առնչությամբ:

ՀՀ օրենսդրությամբ գործում է հարկային և մաքսային ծառայողների կողմից իրենց աշխատանքի հետ համատեղ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք⁴², որի նպատակը տնտեսության ոլորտում գործարարներին հավասար պայմաններ և առողջ մրցակցություն ապահովելն է, որպեսզի կանխվի տնտեսական մրցակցության ոլորտում շահերի բախումը: Նման դեպքերում առկա է վտանգ, որ գործարարությամբ զբաղվող հարկային և մաքսային մարմինների ծառայողները և նրանց մտերիմ ազգականներն ու բարեկամները կարող են օգտվել օրենքով չսահմանված արտոնություններից՝ հոգուտ իրենց բիզնես շահերի: Չնայած օրենսդրական արգելքին՝ ընթացիկ տարում գործարարների շրջանում եղել են մի շարք դժգոհություններ օրենքի այս պահանջի չպահպանման վերաբերյալ: Թեև 2013թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում հարկային մարմնի պաշտոնատար անձանց կամ նրանց հետ ուղղակի փոխկապակցված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ընդամենը 2 դեպք է հայտնաբերվել⁴³, անհրաժեշտ է հետևողական և արդյունավետ քաղաքականություն տանել այս ոլորտում՝ բացառելով տնտեսական շահերի բախումը⁴⁴: Հարկատուներից բազմաթիվ դժգոհություններ են ստացվել նաև հարկային ծառայողների կողմից հեռախոսազանգերի միջոցով շահութահարկի կանխավճարներ պահանջելու և, չվճարելու դեպքում, վերջիններիս համար անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքների վերաբերյալ: Բացի այդ, մի շարք դեպքերում հարկատուները դժգոհություններ են հայտնել ստուգումների, չափազորումների իրականացման ժամանակ հարկային ծառայողների կողմից իրենց նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ: Հաճախ հարկատուների կողմից այս խնդիրները չեն բարձրացվում իրավասու պետական մարմինների առջև՝ հետագայում հնարավոր ճնշումներից խուսափելու համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հարկ վճարողի գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խնդրահարույց է եղել: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր 2013թ. հունվարի 30-ի ՍԴՈ-1073

⁴² «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 13; «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 25:

⁴³ Մանրամասները տես ՊԵԿ բաժնում:

⁴⁴ Նույն տեղում:

որոշմամբ հստակ պարզաբանել է, որ գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը պետք է իրացնել միայն հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ օրենքով նախատեսված այլ հնարավորությունների սպառման պարագայում, և խիստ վերահսկելի ձևով: Այսինքն, հարկային մարմնի կողմից գույքի նկատմամբ արգելանքը կարող է կիրառվել միայն այլ տույժերի, կրկնապատկվող տույժերի կիրառման և այլ հնարավորությունների սպառման դեպքում և միայն դատական խիստ վերահսկողության պարագայում: Այնուամենայնիվ, 2013թ. ՊԵԿ-ի կողմից կայացվել է գույքի արգելադրման 5712 որոշում, իսկ 2012թ. ընթացքում՝ 5715 որոշում: Գտնում ենք, որ նշված ինստիտուտի կիրառման նման քաղաքականությունը ՊԵԿ-ի կողմից չի համապատասխանում Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը: Ավելին, 2014թ. փետրվարի 20-ի Կառավարության նիստի օրակարգում ընդգրկված «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնավորման մեջ⁴⁵ արձանագրվել է, որ «գործնականում արգելադրվում են գործարարների բանկային հաշիվներին առկա ամբողջ դրամական միջոցները, առանց հաշվի առնելու պարտավորության չափը, ինչը առաջացնում է խոչընդոտներ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների համար»:

Բողոքներ են ստացվել հատկապես տրանսպորտային միջոցների մաքսագերծման համար անհրաժեշտ տեղեկատվության անմատչելիության վերաբերյալ: Քաղաքացիներին որոշ դեպքերում մերժել են մաքսագերծել տրանսպորտային միջոցներն իրենց ձեռքբերման գնով ներկայացված փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների պատճառով: Ընդ որում, ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ այդպիսի բացթողումները լրացնելու համար անձին պետք է տրվի երկօրյա ժամկետ, սակայն դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ այդ հնարավորությունը, երբեմն, չի տրվում: Արդյունքում, ներմուծողները հայտնվում են այնպիսի իրավիճակում, որ չեն կարողանում մաքսագերծել իրենց գնած մեքենաները, քանի որ ստիպված են վճարել իրենց նախատեսած գումարից զգալիորեն ավելի բարձր մաքսային վճարներ:

2013թ. ընթացքում ստացվել են մի շարք բողոքներ նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման միջոցով գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ ՏՄՊՊՀ) հայտնել է 2013թ. ընթացքում գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ ընդամենը մեկ դեպքի բացահայտման մասին, որն արձանագրվել է դեղերի շուկայում: Սակայն, ՏՄՊՊՀ-ի կողմից չեն իրականացվել լայնածավալ աշխատանքներ այլ շուկաներում գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և պատասխանատվության միջոցների կիրառման ուղղությամբ: Այսպես, օրինակ, հարկատուները դժգոհություններ են հայտնել, որ ՀԴՄ-ների շուկայում բացակայում են դրանց ձեռքբերման այլընտրանքային հնարավորությունները, ինչպես նաև նոր բազմաֆունկցիոնալ ՀԴՄ-ների ներմուծման ու իրացման հավասար մրցակցային

⁴⁵ <https://www.e-gov.am/sessions/archive/2014/02/20/>

պայմանները: Պաշտպանը, համապատասխան դիմում-բողոքի հիման վրա, առաջարկել է ՏՄՊՊՀ-ին ուսումնասիրություն իրականացնել ՀԴՄ-ների շուկայում մրցակցային պայմանների գնահատման նպատակով: Սակայն ՏՄՊՊՀ-ն մերժել է շուկայի ուսումնասիրության կատարումը, չնայած նրան, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ուներ դրա համար անհրաժեշտ լիազորությունները: ՏՄՊՊՀ-ի կողմից չեն ձեռնարկվել նաև գործուն քայլեր տնտեսվարող սուբյեկտներին արգելված պետական օժանդակություն տրամադրելու դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Ընթացիկ տարում եղել են մրցակցային օրենսդրության չարաշահումների դեպքեր, երբ պետական գնումների մրցութային գործընթացների շրջանակներում առանձին տնտեսվարող սուբյեկտներ համաձայնեցրել են իրենց քայլերը, ինչի մասին են վկայում 2013թ. ՏՄՊՊՀ-ի կողմից ուսումնասիրված շուրջ 200 մրցությունների արդյունքները, որոնք հայտարարվել էին սոցիալական ոլորտում գործող 88 հաստատության կողմից (ծերանոց, մանկատուն, գիշերօթիկ հաստատություն, մանկապարտեզ) սննդամթերքի, գույքի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով: Հակամրցակցային համաձայնությունները հանդիսանում են մրցակցային օրենսդրության խախտումներից առավել վտանգավորներից մեկը⁴⁶:

2. Աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար, անվտանգ պայմանների իրավունքի ապահովումը սոցիալական պետություններում մարդու իրավունքների ապահովման հիմնական խնդիրներից է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով 2014 թվականի հունվարի վերջի դրությամբ Հայաստանում գործազուրկների թիվը կազմել է 55.878 մարդ⁴⁷: Սակայն այս վիճակագրությունը, բնականաբար, չի կարող արտահայտել երկրում գործազուրկների իրական թիվը, քանի որ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն «գործազուրկ» կարգավիճակը, ի թիվս այլ պայմանների, որոշվում է պետական լիազորված մարմնում հաշվառված լինելու հանգամանքով:

2013թ. ընդունված և 2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով վերացվել է նախկինում պետության կողմից տրամադրվող գործազրկության նպաստը: Մինչդեռ, ՀՀ-ի կողմից վավերացված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 12.1-րդ հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքը ներառում է նաև պետության կողմից համապատասխան անձանց գործազրկության նպաստի տրամադրման պարտավորությունը, որն արձանագրվել է նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի՝ Հայաստանի կողմից խարտիայի կիրառման վերաբերյալ 2013թ. եզրակացությամբ⁴⁸:

⁴⁶ ՊԵԿ բաժին

⁴⁷ http://www.armstat.am/file/article/sv_01_14a_141.pdf

⁴⁸ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

2013 թվականի ընթացքում արձանագրվել են բողոքներ՝ գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի ընդունելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու, աշխատանքի ժամանակացույցը ներքին իրավական ակտով ընդունելու պարտականության խախտման դեպքերի վերաբերյալ: Այս դեպքերի վիճակագրության և ուսումնասիրության վերաբերյալ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀ նախարարություն) կողմից տեղեկատվություն չի տրամադրվել՝ պատճառաբանելով ՀՀ աշխատանքի պետական տեսչության վերակազմավորմամբ⁴⁹: Առանց պայմանագրերի կնքման աշխատողներին աշխատանքում ներգրավելու երևույթը սերտորեն կապված է նաև սովերային տնտեսության հետ: Մի կողմից, իրավական կարգավիճակի բացակայության հետևանքով գործնականում հնարավոր չի լինում իրավական միջոցներով պաշտպանել այդ աշխատողների իրավունքները, մյուս կողմից՝ առանց պայմանագրի աշխատող անձինք հաճախ գերադասում են չդիմել իրավասու պետական մարմիններին իրենց իրավունքների պաշտպանության համար՝ հաշվի առնելով այդ անձանց զբաղվածության ապահովման այլընտրանքային հնարավորությունների բացակայությունը և բողոքի դեպքում ունեցած աշխատանքը կորցնելու վտանգը:

Շարունակվում են չլուծված մնալ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները՝ վճարման համար պատասխանատու կազմակերպության լուծարման ժամանակ համապատասխան կարգավորումների բացակայության հետևանքով: Համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում, այն քաղաքացիները, ովքեր տուժել են 2004թ. օգոստոսից հետո լուծարված կազմակերպություններում աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով, չեն ստացել վնասի փոխհատուցում: Մինչդեռ, ՀՀ կողմից վավերացված «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925թ. կոնվենցիայի համաձայն՝ ազգային օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այնպիսի կարգավորումներ, որոնք պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց կապահովեն համապատասխան փոխհատուցման վճարում, եթե նման վճարում գործատուն կամ ապահովագրողն ի վիճակի չեն կատարել: Նույնաբովանդակ պարտավորություն նախատեսված է նաև «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992թ. կոնվենցիայով, համաձայն որի գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները, որոնք առկա չեն Հայաստանում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել առ այն, որ առանձին դեպքերում անձանց՝ արտադրական խեղման համար վնասի փոխհատուցումը անօրինական կերպով

⁴⁹ Մանրամասն տեղ՝ ԱՍՀՆ բաժնում:

դադարեցվել է գործատուների կողմից, երբ քաղաքացին ձեռք է բերել կենսաթոշակի իրավունք: ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը քաղաքացիների առողջությանը պատճառած վնասի փոխհատուցման գումարները վճարելու պահանջով գործատուին տվել էր պարտադիր կատարման հանձնարարական, որը մինչ օրս չի կատարվել գործատուի կողմից, և հետևաբար, չեն վերականգնվել անձանց խախտված իրավունքները⁵⁰: Ընդհանուր առմամբ, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն անբավարար է համարել Հայաստանում իրականացվող աշխատանքային պայմանների անվտանգության և աշխատավայրում առողջության ապահովման պետական քաղաքականությունը, ինչը նշել է Հայաստանի վերաբերյալ 2013թ. իր եզրակացությամբ⁵¹:

Պաշտպանի կողմից 2013թ. ընթացքում բարձրացվել է այն հարցը, որ կենսաթոշակային տարիքի լրանալու դեպքում, աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու պարագայում, աշխատողները բախվում են գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի միակողմ լուծելու հայեցողության վտանգին: Թեև ՀՀ ՄԴ-ն իր՝ 2011թ. թիվ ՄԴՈ-991 որոշմամբ նշել է, որ այս օրենսդրական բացթողման արդյունքում գործնականում աշխատանքային հարաբերություններում հետևողականորեն հաշվի չեն առնվում կենսաթոշակային տարիքի անձի սահմանադրական իրավունքների առանձնահատկությունները: Բացի այդ, նույն որոշմամբ ՄԴ ընդգծել է, որ անհրաժեշտ է Աշխատանքային օրենսգրքով նախատեսել կենսաթոշակային տարիքի հասած անձի աշխատունակություն, ինչպես նաև՝ աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի և գործատուի միջև երկկողմ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորությունը *գնահատելու* հստակ ընթացակարգեր, ինչը կբացառի այս հարցում գործատուի սուբյեկտիվ հայեցողությունը: Սակայն 2013թ. ընթացքում բացակայել են անձի աշխատունակության (աշխատանքային պիտանիության) գնահատման հստակ մեխանիզմները, որոնք թույլ կտան պարզել, թե կենսաթոշակային տարիքի հասած անձը պատշաճ կերպով կատարում է իր աշխատանքային պարտականություններն ամբողջ ծավալով, համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին և կորցրել է գործատուի վստահությունը թե՛ ոչ⁵²:

3. Արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը անձի աշխատանքային իրավունքների ապահովման երաշխիքներից է: Ընթացիկ տարում արհեստակցական միությունների գործունեությունը աշխատողների շահերի պաշտպանության գործում եղել է ոչ արդյունավետ, իսկ այս ինստիտուտի ամրապնդմանը խոչընդոտել են երկրում առկա ոչ բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններն ու գործազրկությունը: Աշխատաշուկայի անկայունության պայմաններում անհրաժեշտության և ցանկության դեպքում գործատուներն առանց առանձնակի բարդությունների աշխատանքից կարող են ազատել աշխատողին և նոր աշխատողներ ընդունել: Արդյունքում՝ աշխատողները, որպես կանոն, չեն ձեռնարկել միջոցներ իրենց իրավունքների

⁵⁰ Մանրամասն տես՝ ԱՍՀՆ:

⁵¹ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

⁵² Մանրամասները տես՝ ԱՍՀՆ բաժնում:

պաշտպանության համար, այդ թվում նաև՝ արհեստակցական միությունների միջոցով⁵³: Մի շարք դեպքերում քաղաքացիները չեն փորձել դիմել արհմիության միջոցով իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանությանը՝ համարելով այն ոչ արդյունավետ պաշտպանության միջոց, իսկ առանձին դեպքերում, պարզապես տեղեկացված չեն եղել արհմիությունների գործունեության վերաբերյալ: Դրա պատճառներից է նաև այն, որ արհմիությունը շատ դեպքերում միջոցներ չի ձեռնարկում աշխատողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

4. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում ամրագրված անձի սոցիալական ապահովության իրավունքը (Հոդված 12) ներառում է պետության կողմից տրամադրվող բժշկական օգնության, տարիքային կենսաթոշակի, աշխատանքային վնասվածքի դեպքում օգնության, ընտանեկան նպաստի և երեխայի խնամքի նպաստի իրավունքը:

ՀՀ կառավարության 2013թ. հունվարի 10-ի թիվ 1-Ն որոշման համաձայն՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը սահմանվել է 30.00 միավոր, իսկ ընտանեկան նպաստի բազային մասը՝ 16000 դրամ, երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ 50000 դրամ, իսկ ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 430000 դրամ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը՝ 18000 դրամ: Համեմատելով պետական այս նպաստների չափերը ստորև պատկերված աղյուսակում նշված նվազագույն սպառողական զամբյուղի և պարենային զամբյուղի արժեքների հետ՝ պարզ է դառնում, որ պետության կողմից տրամադրվող սոցիալական օգնությունը բավարար չէ անձի բավարար կենսամակարդակի ապահովման համար, ուստի, չի ապահովվում անձանց սոցիալական ապահովության իրավունքը:

Ընթացիկ տարում նվազագույն ամսական աշխատավարձը, համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի կազմել է 45.000 դրամ, իսկ նախքան այս օրենքում 2013թ. հունիսի 20-ի օրենսդրական փոփոխություն կատարելը՝ այն կազմում էր 35.000 դրամ:

⁵³ Նույն տեղում:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝

2013թ.				
	առաջին եռամսյակ /հազար/	երկրորդ եռամսյակ /հազար/	երրորդ եռամսյակ /հազար/	չորրորդ եռամսյակ /հազար/
նվազագույն սպառողական գամբյուղի արժեք /ամսական կտրվածքով/	55.3	56.7	56.4	56.2
պարենային գամբյուղի արժեք /ամսական կտրվածքով/	31.2	32	31.8	31.7

Վերոնշյալ վիճակագրությունից ստացվում է, որ մինչև 2013թ. երկրորդ եռամսյակը պետության սահմանած 35.000 դրամ նվազագույն ամսական աշխատավարձը գրեթե հավասար է եղել նույն ընթացքում հաշվարկված պարենային գամբյուղի արժեքին: Պետության կողմից սահմանված սոցիալական վճարների հաշվարկման հիմքում չի դրվել նվազագույն սպառողական և պարենային գամբյուղի արժեքը, և այն չի դիտարկվել որպես պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության հիմք: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն՝ իր 2013թ. եզրակացությամբ արձանագրել է, որ Հայաստանում գործող՝ անձանց տարիքային կենսաթոշակի չափերը բավարար չեն անձանց նորմալ կենսամակարդակ ապահովելու համար⁵⁴:

5. Անձի բավարար կենսամակարդակի իրավունքը ամրագրված է մի շարք միջազգային համաձայնագրերով և ներառում է բնակարանային ապահովության իրավունքը: Այս առումով բողոքներ են ստացվել ԱՍՀ նախարարության կողմից քաղաքացիներին հասանելիք բնակարանի չտրամադրման և/կամ ձգձգումներով տրամադրման դեպքերի վերաբերյալ⁵⁵: Բացի այդ, խնդրահարույց է մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու հարցը: Թեև ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1009-Ն որոշմամբ հաստատվել են համապատասխան շենքերում բնակարան ստացող թվով 35 մանկատան շրջանավարտների ցուցակը, Կառավարության 2013թ. օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ բնակելի տարածությունից օգտվելու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) ցուցակը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, և մանկատանների մի շարք շրջանավարտներ շարունակում են զրկված մնալ անհրաժեշտ բնակելի տարածքից⁵⁶:

6. Դեռևս 2011-2012թթ. Պաշտպանի կողմից բարձրացվել են հասարակության և պետության կարիքների համար օտարված գոտիներում գտնվող գույքի սեփականատերերի

⁵⁴ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

⁵⁵ Օրինակ՝ քաղաքանի Երեմ Դուկասյանի իրավունքների խախտումը, ԱՍՀՆ բաժին:

⁵⁶ Նույն տեղում:

իրավունքների պաշտպանությանն առնչվող հիմնախնդիրները, որոնք վերաբերել են առավելապես օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման և պետության կողմից ձեռքբերողների նկատմամբ պատշաճ հսկողության բացակայության խնդիրներին: Դրանք բացահայտվել են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի կիրառման ընթացքում՝ Երևան քաղաքում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված մի շարք տարածքների իրացման գործընթացում:

Համարժեք փոխհատուցման խնդրի վերաբերյալ Պաշտպանի կողմից առաջարկվել է հստակեցնել գույքի շուկայական արժեքի որոշման կարգն ու պայմանները, ապահովել անշարժ գույքի սեփականատիրոջը՝ ոչ իր միջոցների հաշվին գույքի այլընտրանքային գնահատման հնարավորությունը, բարձրացնել գույքի սեփականատիրոջ հետ պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ վարելու ընթացակարգի արդյունավետությունը: Բարձրացվել էր նաև պետության կողմից պատշաճ հսկողության մեխանիզմների բացակայության և պատասխանատվության հարցը օտարման գործընթացում: Այսպես, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետության կողմից սուբսիդիար պատասխանատվություն կրելու միայն երկու դեպք՝ 1. ձեռքբերողի կողմից ուսումնասիրության ընթացքում կատարված գործողությունների հետևանքով, ինչպես նաև ձեռքբերողի կողմից ուսումնասիրվող սեփականության նկատմամբ սահմանափակումներ սահմանելու հետևանքով սեփականատիրոջը պատճառած վնասների համար և 2. ձեռքբերողի կողմից սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցողին օտարման պայմանագրի նախագիծը չուղարկելու կամ սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին փոխհատուցման գումարը չհանձնելու կամ սահմանված ժամկետում սեփականության օտարման հայցով դատարան չդիմելու կամ դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը դեպոզիտ հաշվին չփոխանցելու դեպքում: Իսկ մնացյալ բոլոր դեպքերում, օրինակ, ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև պայմանագրի կնքման դեպքում, երբ կողմերի համաձայնությամբ են սահմանվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման ձևը, կարգը, ժամկետներն ու պայմանները, պետությունը որևէ պատասխանատվություն չի կրում: Բնականաբար, նման պարագայում խնդիրներ են առաջանում ձեռքբերող կազմակերպության լուծարման, շինարարության կասեցման և այլ պատճառներով ձեռքբերողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքերում:

Դեռևս 2012թ. Բուզանդի մի խումբ բնակիչներ դիմել էին Պաշտպանին իրենց անշարժ գույքի օտարման գործընթացի հետ կապված խնդրով: ՀՀ կառավարության 25.01.2007թ. թիվ 108-Ն որոշմամբ Բուզանդի 103, 105, 107 հասցեների իրացման ենթակա տարածքի ձեռք բերող ճանաչված «Լիդեր-Մոբիլ» ՍՊԸ-ի հետ իրացման գործունեության շրջանակներում պայմանագիր է կնքվել համապատասխան բնակիչների հետ, համաձայն որի «Լիդեր-Մոբիլ» ՍՊԸ-ն պարտավորվել է ձեռք բերել նշյալ տարածքում սեփականատերերին պատկանող անշարժ գույքը, որի դիմաց պարտավորվել է 36 ամիս հետո վերջիններիս հատկացնել

բնակարաններ տեղում կառուցվելիք բազմաբնակարան շենքից, սակայն ՍՊԸ-ն իր պայմանագրային պարտավորությունները չի կատարել, «Լիդեր-Մոբիլ» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել դատարանի որոշմամբ⁵⁷: Այսպիսով, օտարման գործընթացի համատեքստում մեր կողմից բարձրացված բոլոր հիմնախնդիրները իրավակիրառ պրակտիկայում շարունակում են մնալ արդիական և պահանջում հրատապ լուծումներ:

Նշենք, որ պետության կարիքների համար գույքի օտարման մի շարք դեպքերով ՀՀ-ի դեմ ներկայացված գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացվել են վճիռներ, որոնցով ճանաչվել է սեփականության իրավունքի խախտում՝ դիմումատուներին գույքից զրկումը և օգտագործման իրավունքի դադարեցումը «օրենքով նախատեսված պայմաններով» չիրականացնելու հիմքով⁵⁸: ՀՀ փաստաբանների պալատի 2013թ. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը Հայաստանում» հետազոտությամբ արձանագրվել է, որ նշյալ գործերից Թունյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի վճռով սահմանված փոխհատուցման վճարումը պետության կողմից սահմանված ժամկետում չի կատարվել: Ընդ որում, Է. Թունյանի գործի պարագայում գործ ունենք մի բացառիկ իրավիճակի հետ, երբ 2005թ. վերջինս ընտանիքի հետ վտարվել է հողամասից, տանից և ինքնակամ շինություններից՝ առանց որևէ փոխհատուցման վճարման, քանի որ դատական ակտի հարկադիր կատարումն իրականացվել է միայն վտարման պահանջի մասով, իսկ նույն ակտով սահմանված փոխհատուցման պարտավորությունն առ այսօր չի կատարվել:

7. Յուրաքանչյուր մարդ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունք ունի: Ընթացիկ տարում Հայաստանի առողջապահության ոլորտում գրանցվել են մի շարք խնդիրներ: 2013թ. ընթացքում ստացվել են բազմաթիվ բողոքներ քաղաքացիներին անհրաժեշտ դեղորայք չտրամադրելու, դրան փոխարինող ավելի էժան և ավելի ցածր որակով դեղեր տրամադրելու, անբավարար չափաքանակով տրամադրելու հետ կապված: Հաճախ դրա պատճառը գործող օրենսդրությամբ ամրագրված դեղերի գնման գործընթացն է: ՀՀ-ում մինչև յոթ տարեկան երեխաների բժշկական սպասարկումն ու դեղերն անվճար են, սակայն եղել են անվճար սպասարկում և դեղեր չտրամադրելու դեպքեր, որոնց վերացման ուղղությամբ չի կատարվել անհրաժեշտ վերահսկողություն:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր 2013թ. գեկույցում նշել է, որ սոցիալապես անապահով անձանց՝ անվճար բժշկական օգնություն ստանալու շեմը Հայաստանում շատ ցածր է սահմանված, ինչի արդյունքում միայն ծայրահեղ աղքատներն են օգտվում անվճար օգնություն ստանալու արտոնությունից, այն դեպքում, երբ համեմատաբար ավելի բարձր եկամուտ ունեցող անձանց համար այս ծառայությունները նույնպես մատչելի չեն: Սա հակասում է Խարտիայի պահանջներին⁵⁹:

⁵⁷ Վարչապետի որոշմամբ 2012թ. ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի նպատակն է Երևան քաղաքում որոշ կառուցապատման ծրագրերով առկա խնդիրների վերաբերյալ ՀՀ կառավարության աշխատակազմին առաջարկություններ ներկայացնելը:

⁵⁸ Մինայանը և Սեմիրջյանն ընդդեմ Հայաստանի, Հովհաննիսյանը և Շիրոյանը ընդդեմ Հայաստանի, Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Թունյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի

⁵⁹ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

Մտահոգության տեղիք է տալիս հոգեբուժարաններում ժամկետանց դեղերի առկայությունը, ինչպես նաև ոչ արդիական և տեղական արտադրության դեղորայքի օգտագործումը, որն ըստ համապատասխան հաստատությունների բժիշկների՝ շատ դեպքերում արդյունավետ չէ և ունի բազմաթիվ կողմնակի ազդեցություններ⁶⁰:

Մտահոգիչ են բժշկի անփութության կամ բժշկական սխալի հետևանքով ոչ ճիշտ բժշկական միջամտություն ցուցաբերելու դեպքերը, որոնք առանձին դեպքերում հիվանդի կյանքի համար անդառնալի հետևանքների են հանգեցրել: Պատճառը միասնական բժշկական չափորոշիչների (ստանդարտների) բացակայությունն է. հիվանդությունների ախտորոշման, բուժման հստակ ուղեցույցներ չկան, որոնց հետ համեմատելու արդյունքում պարզ կդառնա բուժաշխատողի կողմից նման սխալ թույլ տրվել է, թե՛ ոչ: Թեև այս գործընթացը չափազանց աշխատատար և ծախսատար է՝ նման նախագծի մշակումը բխում է թե հանրության և թե՛ Նախարարության շահերից, ուստի՝ անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ խնդիրները լուծելու և հստակ կարգավորելու ուղղությամբ:

Պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ քաղցկեղով հիվանդ անձանց անվճար քիմիոթերապիայի ոչ պատշաճ տրամադրման վերաբերյալ: Հիվանդները բողոքել են անհրաժեշտ քիմիոթերապիան անվճար ստանալու համար երկարատև հերթերի և դեղերի տրամադրման գործընթացի ոչ թափանցիկ լինելու, ինչպես նաև վերջիններիս անորակության և/կամ ոչ նպատակային օգտագործման մասին⁶¹:

8. Անձանց կրթության իրավունքը պետության կողմից պետք է ապահովվի բոլորի համար հավասար հիմունքներով: Հայաստանը որդեգրել է համընդհանուր ներառական կրթության ներդրման քաղաքականությունը, որով պետք է ներդրվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցության եռաստիճան համակարգ: Մա, նախ և առաջ, պայմանավորված է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով: Սակայն 2012թ. առաջին ընթերցումն անցած «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, դեռևս չի ընդունվել:

2011թ. առ այսօր Հայաստանում 1400 դպրոցներից ընդամենը 117 հանրակրթական ուսումնական հաստատություններն են իրականացնում ներառական կրթություն, ընդ որում դրանք հավասարապես բաշխված չեն բոլոր համայնքներում⁶², ինչի պատճառով հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ չեն կարողանում հաճախել իրենց բնակության վայրին մոտ գտնվող դպրոցը և ստիպված են լինում ծնողի ուղեկցությամբ հաճախել այլ համայնքում գտնվող դպրոց: Մեկ այլ խնդիր է, որ այսօր գործող ներառական դպրոցներից շատերը հարմարեցված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

⁶⁰ Մանրամասն տես՝ ԲԳԱՄ բաժին:

⁶¹ Մանրամասն տես՝ Առողջապահության նախարարության բաժնում:

⁶² Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկ՝ http://www.edu.am/DownloadFile/389arm-hat_cucak-2014.pdf

ունեցող երեխաների համար շենքերի մատչելիության առումով, առկա են նաև խնդիրներ մանկավարժների մասնագիտական գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև երեխաների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի դրսևորման ոլորտում⁶³:

ՀՀ-ը ստանձնել է միջազգային պարտավորություններ՝ բարձրագույն կրթությունը բոլորի համար հավասարապես մատչելի կազմակերպելու ուղղությամբ՝ աստիճանաբար անվճար կրթության ներմուծման ճանապարհով, ինչը նախատեսված է ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով: Կառավարության թիվ 1183-Ն որոշման՝ 2013թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունների արդյունքում պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում տրամադրվում է յուրաքանչյուր տարի ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ուսանողներին: Այսպիսով, վերոգրյալ որոշմամբ գործնականում ուսանողը կարող է օգտվել ուսման վճարի փոխհատուցումից՝ միայն հաջորդ ուսումնական տարում՝ նախորդ տարվա առաջադիմության արդյունքների հիման վրա: Փաստորեն, սոցիալապես անապահով ընտանիքի երեխան, նման իրավակարգավորման պայմաններում, անկախ առաջին ուսումնական տարվա ընթացքում իր հնարավոր առաջադիմությունից, կարող է զրկվել բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից, քանի որ վերջինիս՝ որպես ուսանող հրամանագրումը կախվածության մեջ է դրված ուսման վարձի վճարման հանգամանքից:

⁶³ Մանրամասն տես՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին զեկույցում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Հավաքների ազատությունը օրինակ՝ ապրիլի, որպես անձի կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը, հնարավորություն է տալիս մարդկանց մասնակցելու հասարակությանը հուզող ընդհանուր հարցերի քննարկմանը, օժանդակելու կամ արտահայտելու անհամաձայնությունը պետական քաղաքականության նկատմամբ, հանրոքեն արտահայտելու մարդկանց դիրքորոշումը պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ:

Ինչպես 2012, այնպես էլ 2013 թվականին շարունակել են գրանցվել դեպքեր, երբ տարբեր հավաքների դեպքում հավաքի մասնակիցների նկատմամբ համապատասխան մարմինների կողմից դրսևորվել են տարբերակված մոտեցումներ, օրինակ՝ հավաքի ժամանակ վրանի տեղադրման հարցում⁶⁴:

2013թ. օգոստոսի 24-ին Կոմիտաս 5 հասցեում շինարարական աշխատանքների դեմ բողոքող մի քանի տասնյակ քաղաքացիներից Ոստիկանությունը պահանջել է դադարեցնել ակցիան, իսկ հավաքը սկսելուց շուրջ 50 րոպե հետո կիրառել է ֆիզիկական ուժ, բերման ենթարկել տասնյակ քաղաքացիների և ցրել հավաքը, չնայած իրական այլընտրանքային միջոցների առկայությանը⁶⁵:

Գրանցվել են նաև այլ դեպքեր, երբ Ոստիկանության ծառայողները ոչ անհրաժեշտ և ոչ իրավաչափ ֆիզիկական ուժ են կիրառել որոշ անձանց նկատմամբ, օրինակ՝ ապրիլի 9-ին տեղի ունեցած հավաքի ժամանակ Արմեն Մարտիրոսյանի և Ոստիկանության ծառայողների միջև միջադեպը⁶⁶:

Դեկտեմբերի 2-ին իրավապահ մարմինները ուժ են գործադրել ցրելու 500-1000 մասնակցից բաղկացած ցույցը: Ոստիկանությունը ձերբակալել է տասնյակ մարդկանց, ներառյալ՝ ցուցարարներ, երթը լուսաբանող լրագրողներ, ակտիվիստներ և այլ անձանց, որոնք գտնվում էին անմիջականորեն երթին կամ նախագահական նստավայրին մոտ⁶⁷: Դեպքի վերաբերյալ Պաշտպանի 116 թեժ գծին ստացվել էր 30 ահազանգ՝ տասնյակ քաղաքացիների Ոստիկանության բաժանմունքներ բերման ենթարկելու և քաղաքացիների խաղաղ հավաքին խոչընդոտելու վերաբերյալ⁶⁸:

Մինչդեռ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ Ոստիկանության ծառայողը պարտավոր է ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի: Բացի այդ, Եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ երբ անձն

⁶⁴ Մանրամասն՝ տե՛ս Պաշտպանի հայտարարությունը՝ http://pashtpan.am/library/view_news/article/1062

⁶⁵ Մանրամասն՝ տե՛ս Պաշտպանի հայտարարությունը՝ http://pashtpan.am/library/view_news/article/1085

⁶⁶ Մանրամասն՝ տե՛ս Պաշտպանի հայտարարությունը՝ http://pashtpan.am/library/view_news/article/971

⁶⁷ <http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?year=2013&dlid=220251#wrapper>

⁶⁸ Մանրամասն՝ տե՛ս Պաշտպանի հայտարարությունը՝ http://pashtpan.am/library/view_news/article/1113

Մանրամասն՝ տե՛ս Զեկույցի՝ Ոստիկանության բաժնում

արդեն փաստացիորեն վնասագերծվել է, վերջինիս նկատմամբ ուժի չարդարացված կիրառումը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում⁶⁹:

Բազմաթիվ դեպքերում Ոստիկանության աշխատակիցները հավաքների մասնակիցներին ենթարկել են վարչական բերման և շուրջ երեք ժամ պահել Ոստիկանության ստորաբաժանումներում՝ հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված «խախտողի բերում» կարգավորումը: Առանձին դեպքերում արձանագրվել են 3 ժամից ավել պահելու դեպքեր: Սակայն Օրենսգրքով սահմանված չեն այն իրավախախտումները կամ դեպքերը, որոնք պարտադիր ենթադրում են անձին Ոստիկանության ստորաբաժանում բերումը: Նշված կարգավորման որոշակիության և կանխատեսելիության պակասի, ինչպես նաև հավաքների մասնակիցներին վարչական բերման ենթարկելու վերաբերյալ Ոստիկանության որդեգրած ոչ հստակ մոտեցումների հետևանքով, անհարկի սահմանափակվել է որոշ անձանց հավաքների ազատության իրավունքը:

Առանձին դեպքերում հավաքների մասնակիցներին շուրջ 3 ժամ Ոստիկանության բաժնում պահելուց հետո որևէ արձանագրություն չի կազմվել: Հարկավոր է հաշվի առնել, որ միջազգային փորձում ընդունված է այն մոտեցումը, որ անկախ այն հանգամանքից անձը բերման է ենթարկվում թե սեփական կամքով է այցելում Ոստիկանության բաժանմունք, պետք է վերջինիս տվյալները արձանագրվեն: Նշվածը նպատակ է հետապնդում կանխարգելելու այն դեպքերը, երբ բերված անձինք համապատասխան մատյաններում ուշ են գրանցվում կամ, առհասարակ, չեն գրանցվում, որի դեպքում առաջանում է բռնության, անձի ազատությունը ապօրինի սահմանափակման ռիսկ⁷⁰:

2. Քաղաքական իրավունքների իրացման տեսանկյունից 2013 թվականին տեղի են ունեցել երկու առանցքային ընտրություններ՝ ՀՀ նախագահի համապետական ընտրությունները և Երևանի ավագանու ընտրությունները: Ընտրությունների ընթացքում արձանագրված բողոքների մեծ մասը վերաբերել է ընտրակաշառք բաժանելուն, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն, լցոնմանը, ինչպես նաև վստահված անձի, դիտորդի, լրագրողի նկատմամբ բռնության, ինչպես նաև՝ կուտակումների և դրոշմակնքման հետ կապված հարցերին:

Ընտրությունների ընթացքում տեղի ունեցած ընտրախախտումների վերաբերյալ Պաշտպանի կողմից կատարված հարցումների և ստացված պատասխանների ուսումնասիրությունից և ամփոփումից պարզ է դառնում, որ պատասխանատու մարմինները՝ Ոստիկանությունը, ՀՔԾ-ն և Դատախազությունը 2013 թվականի Նախագահական ընտրությունների և Երևանի ավագանու ընտրությունների վերաբերյալ ուսումնասիրել են շուրջ 300-ից ավել առերևույթ քրեական և վարչական իրավախախտումներ: Բողոքների մեծ մասը վերաբերել է ընտրակաշառք բաժանելուն,

⁶⁹ ՄԻԵԴ, Կլասն ընդ. Գերմանիայի, Ռեբոքն ընդ. Սլովենիայի, Գյունայդինն ընդ. Թուրքիայի գործեր

⁷⁰ Տե՛ս նույն տեղում

մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն, լցունմանը, ինչպես նաև վստահված անձի, դիտորդի, լրագրողի նկատմամբ բռնության դեպքերին: Արտաշատի թիվ 17/5 ընտրական տեղամասում քվեաթերթիկների լցունման փաստի առթիվ ՀԲԾ-ի կողմից հարուցվել էր քրեական գործ: Նշված ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը գտել էր, որ արդյունքները չէին կարող համարվել հավաստի և իր ՄԴՈ-1077 որոշմամբ ճանաչել էր անվավեր⁷¹: Միաժամանակ, նշված գրեթե բոլոր գործերը իրավապահ մարմինների կողմից մերժվել էին կամ չէին բացահայտվել⁷²: Առերևույթ քրեական և վարչական իրավախախտումների նման համատարած մերժումը, որոշ դեպքերում մակերեսային ուսումնասիրումը, ինչպես նաև պատասխանատուներին չհայտնաբերելու դեպքերը հանգեցրել էին նրան, որ շատերը չէին հավատում ընտրությունների արդարությանը:

2013թ. ընտրությունների ընթացքում, արձանագրվել են վարչական ռեսուրսի չարաշահման այնպիսի դեպքեր, ինչպիսիք են, օրինակ, հանրային կառավարման անկողմնակալության պակասը, պետական և տեղական կառավարման մարմինների պաշտոնյաների ակտիվ մասնակցությունը քարոզչական միջոցառումներին, նախընտրական շտաբերի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում գտնվելը⁷³: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ երկարաժամկետ դիտորդները նույնպես փաստել են վարչական ռեսուրսի չարաշահման դեպքեր⁷⁴: Նշված խնդրին անդրադարձ էր կատարել նաև Սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-1077 որոշմամբ նշելով, որ երկրում քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճումը՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի, ձևախեղման վտանգ է առաջացնում⁷⁵:

Միննույն ժամանակ ԱՄՆ պետական դեպարտամենտը Հայաստանի նախագահական ընտրությունները գնահատել էր, ընդհանուր առմամբ, լավ կազմակերպված⁷⁶: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը նույնպես, ընդհանուր առմամբ, դրական է գնահատել 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահական ընտրությունների ընտրական գործընթացների համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին և այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը⁷⁷: ՀՀ Նախագահի թեկնածուների քարոզչության լուսաբանման և խոսքի ազատության ապահովման օրենսդրական պահանջները պատշաճ կարգով պահպանվել են և հավասար հնարավորություններ են ընձեռվել բոլոր թեկնածուների համար⁷⁸: Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում մրցակից ուժերի քարոզչության լուսաբանման և խոսքի

⁷¹ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1077.pdf>

⁷² ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը 2013թ. ՀՀ նախագահի ընտրությունների վերաբերյալ <http://pashtpan.am/library/library/page/101/type/3>

⁷³ Տե՛ս նույն տեղում

⁷⁴ Տե՛ս <http://www.osce.org/hy/odihr/elections/101982>

⁷⁵ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1077.pdf>

⁷⁶ Տե՛ս <http://translations.state.gov/st/english/texttrans/2013/02/20130221142832.html#ixzz2vZFw9s53>

⁷⁷ Տե՛ս <http://www.osce.org/hy/odihr/elections/101982>

⁷⁸ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը 2013թ. ՀՀ նախագահի ընտրությունների վերաբերյալ <http://pashtpan.am/library/library/page/101/type/3>

ագատության ապահովման օրենսդրական պահանջները պատշաճ կարգով ևս պահպանվել են: Երևանի մամուլի ակումբի 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության համաձայն՝ հեռարձակվող ՁԼՄ-ները, ընդհանուր առմամբ, խտրականություն կամ բացահայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսևորել ՀՀ նախագահի նախկին թեկնածուների նկատմամբ⁷⁹:

Որպես էական և մտահոգիչ մեկ այլ խնդիր ընդդիմադիր ուժերի և որոշ միջազգային կազմակերպությունների կողմից բարձրացվել է ընտրողների մասնակցության թվի և ընտրություններում արդեն հաղթած թեկնածուին կողմ քվեարկած ձայների հարաբերակցությունը այն ՏՀՀ-ներում, որտեղ միջինից բարձր էր ընտրողների մասնակցությունը⁸⁰: Այսպես, համաձայն 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցի տվյալների՝ ԿՀՀ-ի կողմից հրապարակված արդյունքների վերլուծությունը սերտ հարաբերակցություն էր ցույց տվել ընտրություններին մասնակցության և ընտրություններում արդեն հաղթած թեկնածուի կողմից ստացված ձայների քանակի միջև, այդ թվում՝ միջինից բարձր մասնակցություն ունեցած ՏՀՀ-ներում ևս ձայների մեծ բաժինը եղել էր ընտրություններում արդեն հաղթած թեկնածուի օգտին: 1988 ընտրական տեղամասերից 1746-ը ունեցել էր 300 կամ ավելի գրանցված ընտրողներ: Դրանցից 144-ում ընտրողների մասնակցությունը գերազանցել էր 88 տոկոսը, ինչը անհավանականորեն բարձր էր թվում. այս տեղամասերից 115-ում ընտրություններում արդեն հաղթած թեկնածուն ստացել էր ձայների 80 տոկոսից բարձր: 303 տեղամասերից 198-ում, որտեղ մասնակցությունը եղել էր 70-80 տոկոս, ընտրություններում ներկայումս արդեն հաղթած թեկնածուն ստացել էր ձայների ավելի քան 70 տոկոսը: 249 տեղամասերից 40-ում, որտեղ մասնակցությունը եղել էր 50 տոկոսից ցածր, ընտրություններում ներկայումս արդեն հաղթած թեկնածուն ստացել էր 50 տոկոսից ավել ձայներ⁸¹:

Հարկ է նշել նաև, որ բացակայել է ընտրությունների արդյունքների բողոքարկման արդյունավետ համակարգ, քանի որ, որպես կանոն, անձինք տեղեկացված չեն եղել օրենքով նախատեսված Վարչական դատարան բողոքարկելու հնարավորություններից, չեն վստահել դատարանին, կամ դատարանը մերժել է իրենց բողոքները: ՀՀ սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-1077 որոշման մեջ հստակ սահմանել է, որ Սահմանադրական դատարանը իրավասու չէ քննության առարկա դարձնել այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են և վերանայման ենթակա չեն⁸²: Սակայն 2013 թվականի ընտրություններից հետո ՀՀ Վարչական դատարան ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված

⁷⁹ Տե՛ս http://www.ypc.am/upload/YPC%20Monitoring_RA%20Presidential%20Elections%202013_arm.pdf

⁸⁰ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը 2013թ. ՀՀ նախագահի ընտրությունների վերաբերյալ <http://pashtpan.am/library/library/page/101/type/3>

⁸¹ Տե՛ս <http://www.osce.org/hy/odihr/elections/101982>

⁸² Տե՛ս նույն տեղում:

հայցադիմումներ համեմատաբար քիչ թիվ են կազմել⁸³: Միաժամանակ, անձնագրերի դրոշմակնքումը, որպես կրկնակի քվեարկության բացառման երկաստիճան համակարգի մաս, չի ծառայել իր նպատակին, քանի որ օգտագործված թանաքը հեշտորեն հնարավոր էր հեռացնել անձնագրերից, կամ դրանք սահմանված 12 ժամից ավել էին պահպանվել: Հաշվի առնելով այն, որ ընտրողի մատների թանաքոտումը ընդունված է և արդյունավետորեն գործում է մի շարք երկրներում (Եգիպտոս, Լատվիա, Հնդկաստան, Մեքսիկա, Պերու)՝ Պաշտպանը առաջարկել էր ԿԸՀ-ին քննարկել ՀՀ օրենսդրության մեջ դրա ներդնման հնարավորության հարցը⁸⁴:

2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընտրական գործընթացի թերությունների մասին 1988 ընտրական տեղամասերից միայն 44 ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել համապատասխան գրառումներ, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում կրկնակի քվեարկության և այլ էական ընտրախախտումների վերաբերյալ գոնե առերևույթ հիմնավոր ահազանգերը շուրջ հինգ տասնյակ են եղել, մինչդեռ գրանցված արդյունքներով մրցակից ուժերի միջև եղած ձայների տարբերությունը էականորեն գերազանցել է ընտրախախտումների մասին հրապարակված կասկածների այս ծավալը: ՀՀ Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ու ՀՀ Նախագահի թեկնածուների կողմից առաջադրված է եղել թվով 20690 վստահված անձ և հանձնաժողովի անդամներ: Մասնավորապես, «Ժառանգություն» կուսակցությունը 1988 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 1884-ում (95%) ունեցել է առաջադրած անդամներ: Ընդդիմության ներկայացուցիչները ներկայացրել են միայն 12 վերահաշվարկի դիմում և միայն 70 քվեարկության արդյունքներ անվավեր ճանաչելու դիմում (118 տեղամասերում):

3. Իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ բռնության ու ծեծի ենթարկելու մի շարք դեպքեր են գրանցվել: Այսպես, 2013թ. հուլիսի 20-ից Երևան քաղաքում ներքաղաքային տրանսպորտի սակագների վերանայման կապակցությամբ հասարակական անհանդուրժողականություն արտահայտող քաղաքացիական նախաձեռնությունը խաղաղ, առանց զենքի շուրջօրյա նստացույց էր կազմակերպել Քաղաքապետարանի շենքի դիմաց, որին մասնակցում էին ոչ միայն ցուցարարներ, այլև ոլորտի իրավապաշտպաններ: Այնինչ, արձանագրվել են դեպքեր, երբ օգոստոս ամսին նստացույցին մասնակցած իրավապաշտպաններին անհայտ անձինք գիշերային ժամին ծեծի են ենթարկել⁸⁵: Մեկ այլ դեպք վերաբերում է քաղաքական և հասարակական ակտիվիստ Կարո Եղնուկյանին, ով Պաշտպանին հայտնել էր, որ անհանգստացած է սեփական անվտանգության համար, քանի որ ակտիվորեն մասնակցել է «Ազատագրենք հուշարձանն օլիգարխից» ակցիային: Նշվածի վերաբերյալ Պաշտպանի գրությամբ շտապ տեղյակ են պահվել իրավապահ մարմինները⁸⁶:

⁸³ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցները 2013թ. ՀՀ նախագահի ընտրությունների և 2012թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ <http://pashtpan.am/library/library/page/101/type/3>

⁸⁴ Մանրամասն՝ տե՛ս Պաշտպանի հայտարարությունը՝ http://pashtpan.am/library/view_news/article/921

⁸⁵ <http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?year=2013&dldid=220251#wrapper>

⁸⁶ Մանրամասն՝ տե՛ս Պաշտպանի հայտարարությունը՝ http://pashtpan.am/library/view_news/article/1096

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից հաստատված՝ Հայաստանում մարդու իրավունքների վիճակի մասին 2010 թվականի զեկույցում հատուկ զեկույցողը իր մտահոգությունն էր հայտնել իրավապաշտպանների օրինական գործունեության խոչընդոտման և բռնությունների վերաբերյալ⁸⁷: Նշվածը վկայում է, որ առաջացել է նման գործունեությամբ զբաղվող անձանց համար քրեական քաղաքականության շրջանակներում նոր երաշխիքների ամրագրման անհրաժեշտություն: Ներկայումս ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ դրույթ, որը կհանդիսանար իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերը կանխարգելելու և նշյալ անձանց պաշտպանելու երաշխիք: Ավելին, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ նաև «իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձ» եզրույթի սահմանումը: ՄԱԿ-ի կողմից 1998 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված իրավապաշտպանների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հռչակագրի 1-ին հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունքի ունի անհատապես կամ այլ անձանց հետ միասին պայքարելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համար և աջակցելու դրանց իրականացմանը: Հռչակագրի համաձայն՝ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները իրավասու մարմինների կողմից պաշտպանելու համար յուրաքանչյուրին անհատապես կամ այլ անձանց հետ միասին ցանկացած խախտումից, սպառնալիքից, հատուցումից, թշնամությունից, խտրականությունից, ճնշումից կամ այլ կամայական գործողություններից՝ որպես հետևանք իր այն իրավունքների իրավաչափ իրականացման, որոնք վկայակոչված են Հռչակագրում:

4. Հասարակական միավորումներ, ինչպես նաև կուսակցություններ ստեղծելու անձանց քաղաքական իրավունքը հսկայական դերակատարում ունի ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության կայացման գործում: Նշված իրավունքների պատշաճ իրացումը երաշխավորված է Սահմանադրությամբ: ՀՀ համապատասխան օրենսդրական դաշտի, մասնավորապես՝ «Կուսակցությունների մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին», «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում օրենսդրորեն ապահովվում է այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու՝ սահմանադրորեն ամրագրված իրավունքը. անձանց համար որևէ խոչընդոտներ չկան ստեղծելու կամ անդամագրվելու հասարակական միավորումներին (հասարակական կազմակերպություններ, կուսակցություններ, քաղաքացիական նախաձեռնությունների և այլն) և այդ կերպ արտահայտելու այս կամ այն հարցի վերաբերյալ իրենց քաղաքական կամ քաղաքացիական դիրքորոշումը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման համար առանցքային դեր է զբաղեցնում կամավորական աշխատանքի ինստիտուտը: Հայաստանում օրենսդրորեն հստակ կարգավորված չէ կամավորական աշխատանքը, ինչը ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում հանդիսանում է քաղաքացիական

⁸⁷ Տե՛ս <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/179/19/PDF/G1017919.pdf?OpenElement>

ակտիվության հիմնական տարրերից մեկը: Կամավորականությունը, կամավորների կատարած աշխատանքը չի ենթադրում դրամական փոխհատուցում և կատարվում է pro bono (հասարակական) հիմունքներով: Անհրաժեշտ է մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն կամավորականության զարգացումը Հայաստանում՝ միննույն ժամանակ բացառելով գործատուների կողմից աշխատանքային հարաբերությունների չարաշահման, չգրանցված աշխատողներ պահելու և աշխատողների իրավունքների ոտնահարման, հարկերի վճարումից խուսափելու հնարավորությունը: Այս նպատակով ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, սակայն գտնում ենք, որ անհրաժեշտ է հետևողական գտնվել նախագիծը հնարավորինս կարճ ժամկետներում կյանքի կոչելու համար⁸⁸:

⁸⁸ Տե՛ս <http://www.justice.am/legal/view/article/593>

ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Ոստիկանության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2013 թվականի ընթացքում զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների կամ լրագրողների նկատմամբ բռնության կամ նրանց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու դեպքերով նախապատրաստվել են 19 նյութեր, որոնցից 13-ով որոշումներ են կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, իսկ 3-ով հարուցվել են քրեական գործեր, որոնցից երկուսը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 1-ի վարույթը կարճվել է, 3 նյութեր ուղարկվել են ըստ քննչական ենթակայության՝ Հատուկ քննչական ծառայություն և Պաշտպանության նախարարության քննչական ծառայություն⁸⁹:

Հարուցված երեք քրեական գործերից կարճվել է «iLur.am» կայքի լրագրող Հ. Կարապետյանի հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործը՝ Երևանի ավագանու ընտրությունների հետ կապված հանդիպման վայրում լրագրողի գործունեությանը խոչընդոտելու, նրան քաշքշելու, բռնակցություններով հարվածելու, նկարահանումներ կատարել թույլ չտալու փաստի առթիվ: Քրեական գործի վարույթը կարճվել է տուժողի հետ հաշտվելու հիմքով: Միաժամանակ Ոստիկանության կողմից Պաշտպանին տրամադրված տվյալների համաձայն՝ «iLur.am» կայքէջում զետեղված հոդվածի կապակցությամբ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության շտաբի հետաքննության բաժանմունքում անցկացվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով երեք անձ ենթարկվել է կարգապահական սույժի:

Ուշագրավ է այն փաստը, որ 2013թ. տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների և Նախագահի ընտրությունների ժամանակահատվածում նախընտրական քարոզարշավի և ընտրությունների լուսաբանման ընթացքում լրագրողի գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ հաղորդումների հիման վրա, բացի վերոգրյալ մեկ գործից, Ոստիկանության կողմից մյուս հաղորդումներով քրեական գործերի հարուցումը մերժվել է, իսկ 21.02.2013թ. Հատուկ քննչական ծառայություն փոխանցված երկու հաղորդումների հիման վրա հարուցված քրեական գործերի վարույթներից մեկը կարճվել է, մյուսը՝ կասեցվել լրագրողի գործունեությանը խոչընդոտած անձանց ինքնությունը հայտնի չլինելու պատճառով:

Նշված վիճակագրությունը որոշակիորեն հիմնավորում է լրագրողների գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ գործերի քննության նկատմամբ հանրային անվստահությունը, հատկապես՝ ընտրությունների լուսաբանման համատեքստում:

Թեև ընթացիկ տարում գրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայում արձանագրվել են դրական միտումներ՝ վնասի փոխհատուցման առավելագույն չափերի կիրառման տեսանկյունից, սակայն արձանագրվել են խնդիրներ առանձին ինստիտուտների պատշաճ մեկնաբանման և կիրառման առումով: Խոսքը

⁸⁹ Նշված գերատեսչություններում երկուսի վարույթը կասեցվել է համապատասխան անձանց ինքնությունը հայտնի չլինելու պատճառով, իսկ մեկի վարույթը՝ կարճվել հանցակազմի բացակայության հիմքով:

առավելապես վերաբերում է գրպարտության և վիրավորանքի գործերով արգելանքը՝ որպես հայցի ապահովման միջոց կիրառելու առանձնահատկություններին, որոնք որոշ դեպքերում համարժեք կերպով հաշվի չեն առնվել դատական պրակտիկայում: Քաղաքացիները դատարաններում գրկված են եղել ոչ հրապարակային ձևով արտահայտված վիրավորանքի դեմ իրավական պաշտպանություն միջոցների հնարավորությունից, քանի որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային, երրորդ անձի բացակայությամբ: Ոչ հրապարակային վիրավորանքի համար պատասխանատվության բացակայության հարցը բարձրացվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2011թ. ՀՀ Սահմանադրական դատարանում: Իսկ ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ⁹⁰ արձանագրել է, որ այս իրավակարգավորման բացը հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը: Այնուամենայնիվ, մինչ օրս այս խնդիրը իրավական կարգավորում չի ստացել:

Խնդրահարույց են եղել հեռուստաթերթում բազմակարծության և բազմազանության, գովազդային օրենսդրության պահանջների ապահովման հարցերը: Թեև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն (այսուհետ՝ ՀՌԱՀ) ունի հստակ լիազորություններ հեռուստաընկերությունների գործունեությունը վերահսկելու, իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով հեռուստառադիոընկերություններում ուսումնասիրություններ և ստուգումներ իրականացնելու, մշտադիտարկումներ անցկացնելու ուղղությամբ, ընթացիկ տարում ՀՌԱՀ-ի կողմից չի արձանագրվել՝ հեռուստառադիոընկերությունների կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման որևէ դեպք: Այս վիճակագրությունն ինքնին լուրջ կասկածներ է հարուցում ՀՌԱՀ-ի գործունեության արդյունավետության վերաբերյալ, հաշվի առնելով ընթացիկ տարում անցկացված տարբեր մշտադիտարկումների և հետազոտությունների արդյունքները: Այսպես, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից միայն Հայաստանի 6 հեռուստաընկերությունների մոնիտորինգի արդյունքների համաձայն՝ 2013թ. օգոստոս ամսի 15-21 ընկած ժամանակահատվածում արձանագրվել է մեկ եթերային ժամում գովազդի՝ 14 րոպե առավելագույն տևողության պահանջի վերաբերյալ դրույթի 30 խախտում, մինչև 20 րոպեանոց հաղորդումները գովազդով մեկից ավելի անգամ չընդմիջելու պահանջի 128 խախտում և այլ խախտումներ:

Բազմակարծությունը խթանելու կարողությունը հանդիսանում է ՀՌԱՀ-ի կողմից լիցենզավորված անձի ընտրության չափանիշ, թեև 2013թ. ընթացքում բազմաթիվ են եղել դժգոհություններն ու բողոքները հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի վերաբերյալ, ՀՌԱՀ-ի կողմից լիցենզիայի պայմանների խախտման որևէ դեպք չի

⁹⁰ Թիվ ՍԴՈ-997

արձանագրվել: Ավելին, իր ծրագրային քաղաքականությունն իրականացնելիս Հանրային հեռուստառադիոընկերության կողմից անկողմնակալության, բազմազանության և բազմակարծության սկզբունքների պահպանումը ՀՌԱՀ-ը հիմնավորել է միայն 2013թ. ընթացքում Հանրապետության Նախագահի և Երևանի ավագանու ընտրությունների համակողմանի և հավասար պայմաններով լուսաբանման և նշված ժամանակահատվածում խախտումներ չարձանագրելու հանգամանքներով: Այս հիմնավորումն ինքնին վկայում է ՀՌԱՀ-ի կողմից իրականացված հսկողության՝ թերի և հատվածական բնույթի վերաբերյալ, քանի որ ակնհայտ է, որ Հանրային հեռուստառադիոընկերության կողմից բազմակարծության և անկողմնակալության սկզբունքների պահպանումը չի կարող պայմանավորված լինել միայն համապատասխան տարում անցկացվող ընտրությունների ընթացքում օրենսդրության պահանջների պահպանմամբ: Ավելին, Բաց հասարակության հիմնադրամների կողմից 2013թ. նոյեմբերին հրապարակված՝ «Հայաստանում մեդիաների թվայնացման քարտեզագրում» գեկույցով արձանագրվել է, որ հեռուստատեսությունը, որը դեռևս շարունակում է մնալ տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը, մեծապես հսկվում է իշխանությունների կողմից: Առկա է լայնածավալ քողարկված գրաքննություն, որը լրատվամիջոցների նկատմամբ կիրառվող քաղաքական ճնշումների հետևանք է: Լրատվամիջոցների մեծ մասը կախվածության մեջ են գտնվում խոշոր ընկերություններից և քաղաքական վերնախավից, որոնց էլ դրանք ինտեգրվում են⁹¹:

ՀՌԱՀ-ի կողմից չեն արձանագրվել հեռուստառադիոընկերությունների հիմնադրման սահմանափակումների պահանջների խախտման որևէ դեպք, այս պահանջների համապատասխանության ստուգումը հանձնաժողովի կողմից իրականացվել է հեռուստառադիոհեռարձակողների եթերային հեռարձակման լիցենզավորման մրցույթի և հեռուստառադիոծրագրերի կաբելային ցանցով հեռարձակման լիցենզավորում իրականացնելիս, ինչպես նաև Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի միջոցով: Ստուգման այս մեխանիզմներն ու իրավական կարգավորումներն ակնհայտորեն բավարար չեն հեռուստառադիոընկերությունների գործունեության թափանցիկության ապահովման տեսանկյունից և ստեղծում են կուսակցությունների, պաշտոնյաների, օտարերկրյա կազմակերպությունների և այլ անձանց կողմից հեռուստառադիոընկերությունների գործունեությանը օրենքով արգելված միջամտության, ինչպես նաև հակամենաշնորհային պահանջների խախտման լուրջ վտանգ: Ավելին, թեև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՌԱՀ-ը կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի օրենսդրական նախագծերի մշակմանը, ՀՌԱՀ-ի կողմից որևէ նախաձեռնողականություն չի ցուցաբերվում այս խնդիրների կանխարգելման ուղղությամբ արդյունավետ օրենսդրական կարգավորումներ մշակելու համար:

⁹¹ Mapping digital media, Armenia, Country report, OSF, November 2013

Արձանագրվել են խնդիրներ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 2013թ. ընթացքում տեղեկություն տնօրինող տարբեր մարմինների ներկայացվել են տեղեկություն ստանալու նպատակով 203 հարցումներ: Իրականացված հետազոտությունների հիման որպես տեղեկատվության ազատության ոլորտի հիմնական խնդիրներ մատնանշվել են լուռ մերժումները, ինչպես նաև՝ ոչ լիարժեք, թերի պատասխանները: Տարեկան հաշվետվությամբ արձանագրվել է, որ թեև հիմնախնդիրը շարունակում է մնալ պետական մարմիններում հրապարակային և թափանցիկ աշխատանքի բացակայությունը, սակայն տեղեկություն տրամադրելու ընթացակարգերում խնդիրները փոխվել են: 2011թ. համեմատ լուռ մերժումների թիվը 2013թ. նվազել է շուրջ 3 անգամ: Սակայն լուռ մերժումների թիվը կրճատվել է՝ փոխարինվելով մեծամասամբ թերի կամ անհիմն պատասխաններով կամ անհիմն մերժումներով: 2011թ. համեմատ՝ թերի պատասխանների թիվը 2013թ. աճել է 10 անգամ, անհիմն մերժումների թիվը՝ 4 անգամ, իսկ անհիմն պատասխանների թիվը՝ 2 անգամ: Տեղեկատվության ազատության ոլորտում առկա մյուս հիմնական խնդիրը տեղեկության տրամադրման ժամկետների խախտումներն են:

Զանգվածային լրատվամիջոցներին առնչվող օրենսդրական դաշտում ընթացիկ տարում հատկանշական է եղել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարման նախագիծը, որին տարեվերջին հավանություն տրվեց ՀՀ կառավարության կողմից⁹²: Նախագծով նախատեսվում է Հանրային հեռուստատեսությամբ առևտրային գովազդի ցուցադրման արգելքը, բացառությամբ սոցիալական գովազդի, ինչպես նաև մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին որոշ տեղեկություններ նշելու դեպքերի: Այս փոփոխությունները դրական են՝ Հանրային հեռուստատեսության առաքելության և նախատեսված նպատակների համատեքստում, սակայն դրանց լույսի ներքո առավել խնդրահարույց է դառնում սոցիալական գովազդի որոշման չափորոշիչների և ընթացակարգերի իրավական կարգավորման բացակայության հարցը: «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված է գովազդակրի՝ բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և առևտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար եթերային ժամանակի որոշակի ծավալ տրամադրելու պարտականությունը: Որևէ այլ կարգավորում սոցիալական գովազդի որոշման չափանիշների և կարգի վերաբերյալ նախատեսված չէ:

ՀՀ Ազգային ժողովի հինգ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով 2013թ. ներկայացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ, որը, ի թիվս այլ փոփոխությունների, նախատեսում էր զրպարտության և վիրավորանքի համար նախատեսված փոխհատուցման

⁹² Նախագիծը 24.02.2014թ. ընդգրկվել է ԱԺ-ի չորսօրյա նիստերի օրակարգ:

չափերի նվազեցում: Կառավարությունը դեմ է արտահայտվել նախագծի ընդունման ամբողջությամբ: Գտնում ենք, որ նախագծով ներկայացված՝ զրպարտության և վիրավորանքի համար նախատեսված փոխհատուցման չափերի նվազեցման առաջարկը ենթակա էր քննարկման ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 15.11.2011թ. թիվ ՄԴՈ-997 որոշման լույսի ներքո: Այսպես, հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ փոխհատուցման կոնկրետ չափի սահմանումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1577(2007) բանաձևի առաջարկը՝ սահմանել ողջամիտ առավելագույն սահման զրպարտության գործերով վնասի փոխհատուցման գումարի չափի առումով, այնպես, որպեսզի չվտանգվի պատասխանատու մամուլի կենսունակությունը, նպատակահարմար է համարել օրենսդրի կողմից քննարկելու առավելագույն սահմանի վերանայումը՝ նվազեցման միտումով, որպեսզի այն գործնականում բացառի արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը: Նման եզրահանգումը պայմանավորված է ոչ միայն իրավակիրառական պրակտիկայում տեղ գտած միտումներով, այլև այն իրողությամբ, որ Հայաստանում փոխհատուցման վերին սահմանի և բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի հարաբերակցությունն ավելի մեծ է, քան Եվրախորհրդի անդամ որոշ երկրներում, որոնք որդեգրեցին վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացման մոտեցումը: Հետևաբար, թեև իրավակիրառ պրակտիկայում դրական միտումներ են արձանագրվել զրպարտության և վիրավորանքի գործերով առավելագույն փոխհատուցման չափերի կիրառման առումով, սակայն, Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-997 որոշումից ակնհայտ է, որ փոխհատուցման առավելագույն չափի վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած միտումներով, այլև փոխհատուցման վերին սահմանի և բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի հարաբերակցության, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1577(2007) բանաձևով սահմանված՝ ողջամիտ առավելագույն սահմանի սահմանման անհրաժեշտությամբ, որը կրում է գործնականում արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը բացառելու նպատակ:

Փոփոխություններ են կատարվել նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում, որոնցով սահմանվել են լրատվական նյութի օգտագործման պայմանները, տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրման կարգը՝ այլ տպագիր լրատվական միջոցներում և ինտերնետային կայքերում: Այս փոփոխությունների կատարումը դրական է հեղինակային իրավունքների առավել հստակ և կանխատեսելի պաշտպանության կառուցակարգերի ապահովման տեսանկյունից, այնուամենայնիվ, նույնքան կարևոր է նախատեսված իրավակարգավորումների պատշաճ կիրառումը դատական պրակտիկայում, որը այս փուլում դեռևս գնահատվել չի կարող:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում 2013թ. հուլիսին ուժի մեջ մտած փոփոխություններով ՀՀ-ի ամբողջ տարածքում անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետ սահմանվեց 2015թ. հուլիսի 1-ը: Հիշեցնենք, որ 2010 թվականի հուլիսի 20-ից մինչև 2015թ. հունվարի 1-ը նախատեսված էր որպես անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցման ժամանակաշրջան, որի ընթացքում պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովմամբ պետք է իրականացվեր աստիճանական անցում թվային հեռարձակման: Համապատասխանաբար վեց ամսով երկարաձգվեց նաև իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանց ստեղծելու համար մուլտիպլեքսորի լիցենզավորման կարգն ու պայմանները օրենքով սահմանելու ժամկետը: Ռադիոյի թվային հեռարձակումն պահովելու ժամկետը սահմանվեց 2016թ. գործող 2013թ. փոխարեն: Երկարաձգվեցին նաև համապատասխան ընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետները: Ժամկետների երկարաձգումը պայմանավորվեց ՀՀ տարածքում ռադիոհեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման՝ տեխնիկական, նյութական և ֆինանսական դժվարություններով, որոնք դեռևս անհաղթահարելի համարվեցին թե պետության, թե հեռարձակողների և թե սպառողների համար: Արձանագրենք, որ 2010 թվականի հուլիսին Ազգային հանձնաժողովի հայտարարված տասնութ հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթի անցկացման արդյունքում 4-ով կրճատվեց գործող հեռուստաընկերությունների թիվը, ինչը պատճառաբանվեց թվային հեռարձակման անցման գործընթացով: Թվայնացման գործընթացի շարունակական հետաձգումը փաստացի հանգեցնում է ոչ միայն հեռուստաալիքների սահմանափակմանը, այլև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը: Այսպես, 2006թ. Ժնևի GE-06 համաձայնագրով նախատեսված է դադարեցնել անալոգային հեռարձակումը 2015թ. հունիսի 17-ին⁹³: Ավելին, մինչ օրս չեն սահմանվել թվայնացման գործընթացի իրավական կարգավորման համար անհրաժեշտ կանոնակարգումները «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում. համապատասխան փոփոխությունների նախագիծը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

⁹³ International Telecommunication Union (ITU), at http://www.itu.int/newsroom/press_releases/2006/11.htm

ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ազատագրված անձանց իրավունքների խախտման հիմնական գործոններն առնչվում են խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և ուժի կիրառման հնարավոր սահմանազանցման դեպքերին⁹⁴:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 3-րդ հոդվածով ուղղակիորեն նախատեսված է խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը: Նույն արգելքը վերարտադրված է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ⁹⁵:

Քրեակատարողական հիմնարկներում ազատագրվածների նկատմամբ վատ, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորման ձևերից է շարունակական անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող կենցաղային պայմաններում վերջիններիս պահելը⁹⁶: Այս հիմքով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջների խախտումներ են արձանագրվել Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված գործերով: Այսպես, Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի գործով արձանագրվել է, որ վերջինս յոթ այլ անձանց հետ միասին պահվել է 8.75 քմ մակերես ունեցող խցում, որն ուներ շատ փոքր, մետաղական ճաղերով, կեղտոտ պատուհան, ինչը խոչընդոտում էր բնական լույսի ներթափանցումը խուց: Խցում չեն եղել մահճակալներ և կալանավորվածները ստիպված են եղել քնել գետնին: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով⁹⁷: Թեև իր կալանավորման չորրորդ օրը դիմումատուն տեղափոխվել է այլ խուց, ինչը հանգեցրել է իր կալանքի պայմանների թեթևակի բարելավման⁹⁸, այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքում տարածքը էականորեն ավելի փոքր էր, քան այն 4 քմ տարածքը, որը, ԽԿԿ չափանիշների համաձայն, բազմամարդ խցում մեկ բանտարկյալի համար նախատեսված նվազագույն պահանջն է: Նման պայմանները ՄԻԵԴ-ի կողմից գնահատվել են որպես նվաստացուցիչ և անմարդկային վերաբերմունք և հանգեցրել Կոնվենցիայի խախտմանը: Մեկ այլ գործով (Կարապետյանն ընդդեմ Հայաստանի) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է արձանագրել կալանքի ժամանակ⁹⁹ անձնական նվազագույն տարածքի բացակայության, մենախցի հակահիգիենիկ պայմանների, բնական լույսի և քնելու հարմարանքների բացակայության և հակասանիտարական զուգարանի առկայության պատճառով¹⁰⁰:

⁹⁴ Ազատագրվածների նկատմամբ ուժի և հատուկ միջոցների կիրառման նվազագույն չափանիշները սահմանված են Եվրոպական բանտային կանոնների 64-69 կանոններով: Այս կանոնները, ի թիվս այլ հարցերի, պահանջում են ուժի կիրառման մասին մանրակրկիտ ընթացակարգի առկայություն, ինչպես նաև ուժի կիրառումից հետո համապատասխան մարմիններին հաշվետվությունների ներկայացման պարտավորություն:

⁹⁵ ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդված, ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդված, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված և այլն:

⁹⁶ Մանրամասն՝ տես Զեկույցի ԲԿԱՄ-ի բաժինը:

⁹⁷ ՄԻԵԴ, 02/12/2008, *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի /Kirakosyan v. Armenia/*, դիմում թիվ 31237/03, 40-59 կետեր:

⁹⁸ 2.2 քմ անձնական տարածք:

⁹⁹ Կալանքը տևել է 10 օր:

¹⁰⁰ ՄԻԵԴ, 27/10/2009, *Կարապետյանն ընդդեմ Հայաստանի /Karapetyan v. Armenia/*, դիմում թիվ 22387/05, 33-47 կետեր:

Թեև վերոնշյալ գործերը վերաբերում են 2003 թվականին, այնուամենայնիվ քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների բազմաթիվ խնդիրներ են արձանագրվել նաև 2013 թվականին: Այսպես, իրականացված այցելությունների արդյունքում արձանագրվել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում խցերի մեծ մասը գտնվում է խոնավ ու հակասանիտարական վիճակում, սանհանգույցների ոչ բարվոք վիճակի պատճառով ազատազրկված անձինք ստիպված են օրվա ընթացքում շնչել առկա գարշահոտը: Բացի այդ, կոյուղու հաճախակի վթարների արդյունքում ջուրն արտահոսում է միջանցքներ (առաջին հարկի տարբեր մասերում), ինչը նպաստում է պատերին և հատակին խավարասերների և այլ միջատների տարածմանը: 2013թ. առաջին կիսամյակում կատարված այցելությունների ընթացքում «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 25 քմ մակերես ունեցող խցում բնակվում էին 17 դատապարտյալներ, որոնց համար տեղադրված էին 12 մահճակալներ: Նույն ժամանակահատվածում «Վարդաշեն» ՔԿՀ կատարած այցի ընթացքում արձանագրվել է, որ 12 քմ մակերես ունեցող խցում պահվում էին 6 դատապարտյալներ: Շենքային վատ պայմաններ են արձանագրվել նաև «Գորիս» ՔԿՀ-ում, որը կառուցվել է դեռևս 19-րդ դարի վերջին: Խցերում բարձր է խոնավության աստիճանը, իսկ սանհանգույցները գտնվում են սանիտարական վատթար վիճակում: Քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հիմնախնդիրները ավելի են սրվում սոցիալ-հոգեբանական ծառայությունների ցածր մակարդակի, զբաղվածության և վերականգնողական ծրագրերի ապահովման հատվածային բնույթի, սննդի անբավարար որակի հետևանքով: Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների մանրամասն վերլուծությունը ներկայացված է Ջեկույցի ԲԿԱՄ բաժնում:

Քրեակատարողական հիմնարկներ իրականացված այցելությունների ընթացքում արձանագրվել են նաև բուժսպասարկման ապահովման անբավարար պայմաններ¹⁰¹: Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ազատազրկման վայրերում պատշաճ բուժօգնության բացակայության հարցերը նույնպես դիտարկվում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համատեքստում: Այսպես, Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով բողոքի հիմքում դրված է եղել կալանքի ժամանակ անհրաժեշտ բժշկական օգնության բացակայությունը: Դատարանն արձանագրել է, որ կալանավորված անձը պահանջել է իրեն անհրաժեշտ բուժօգնությունը, որը նրան հասանելի չի եղել: Տվյալ հանգամանքը բավարար է համարվել, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք արձանագրելու համար:

Ուսումնասիրություններով արձանագրվել է նաև ազատազրկվածների շրջանում որոշակի ենթամշակույթի առկայությունը, որի արդյունքում՝ ոչ ֆորմալ հիերարխիայի ամենաբարձր տեղում գտնվող ազատազրկվածների կողմից նվաստացնող վերաբերմունքի են արժանանում «խոցելի» ազատազրկվածները: Այս խնդրին անդրադարձ է կատարվել անգամ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) զեկույցում: Մասնավորապես, արձանագրվել է, որ ազատազրկվածների նկատմամբ վերահսկողություն

¹⁰¹ Մանրամասն տես Ջեկույցի՝ ԲԿԱՄ-ի բաժինը:

սահմանելու նպատակով քրեակատարողական հիմնարկներում առկա է վարչակազմի կողմից որոշակի իրավասություններ պատվիրակելու միտում այն անձանց, ովքեր գտնվում են բանտային ոչ ֆորմալ հիերարխիայի վերնախավում (բանտային «առաջնորդներին», այսպես կոչված «զոն նայողներին»): Այս հիերարխիան «բանտի ստվերային կառավարման» տեսակ է, որն ընդունվում է քրեակատարողական հիմնարկների ղեկավարության մեծ մասի կողմից: Անձնակազմը, որի հետ առանձնագրույցներ է ունեցել ԽԿԿ պատվիրակությունը, «առաջնորդ» ազատազրկվածներին ողջամիտ աստիճանի իրավասությունների պատվիրակման երևույթը պարզաբանել է սահմանափակ մարդկային ռեսուրսի պայմաններում քրեակատարողական հիմնարկներում անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Միաժամանակ, անձնակազմը այս տիպի «կառավարումը» կենսունակ է համարել այնքանով, որքանով այն թույլ է տալիս ապահովել, որպեսզի «առաջնորդ» ազատազրկվածն իր հեղինակությունը չօգտագործի ազատազրկվածների մեծամասնության նկատմամբ՝ ի վնաս քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի¹⁰²:

Այսպիսով, համապատասխան ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներում արձանագրված մի շարք դեպքեր կարող են որակվել որպես ազատազրկվածների նկատմամբ շարունակական բնույթ կրող անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորում¹⁰³:

Շարունակում են խիստ մտահոգիչ մնալ քրեակատարողական հիմնարկներում ինքնախեղման և հացադուլի հաճախակի դեպքերը, որոնք որպես հուսահատության արտահայտման ծայրահեղ միջոցներ օգտագործվում են ազատազրկվածների կողմից իրենց խնդիրների նկատմամբ իշխանությունների և հանրության ուշադրությունը գրավելու նպատակով: Միայն 2013թ. ընթացքում Պաշտպանի գրասենյակ մուտքագրվել է թվով 31 դիմում հացադուլ հայտարարելու վերաբերյալ: Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև ԽԿԿ զեկույցում¹⁰⁴:

Հատուկ ուշադրության են արժանի ցմահ ազատազրկման դատապարտված անձանց խնդիրները: 2013թ. ընթացքում ցմահ ազատազրկվածների շրջանում արձանագրվել է ինքնասպանության դեպք: Այս ոլորտում առկա են համակարգային չլուծված խնդիրներ. սոցիալ-հոգեբանական պատշաճ ծառայության (նախատեսված է մեկ հոգեբան 100-ից ավելի ցմահ դատապարտյալի համար, ընդ որում՝ տվյալ հոգեբանը սպասարկում է նաև այլ դատապարտյալների), արդյունավետ վերականգնողական ծրագրերի (չկան մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպման, դատապարտյալի ազատ ժամանակը արդյունավետ տնօրինելու պայմաններ), գործերի վերանայման արդյունավետ մեխանիզմների, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ռեժիմների

¹⁰² 2010թ. մայիսի 10-ից մինչև 21-ը Խոշտանգումների և անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) կողմից Հայաստան կատարած այցելության ՀՀ կառավարությանն ուղղված զեկույց, Ստրասբուրգ, օգոստոսի 17, 2011թ.:

¹⁰³ ՀՀ ազգային ժողովի կողմից համաներում հայտարարելու մասին որոշման կիրառման արդյունքում 2013թ. չորրորդ եռամսյակում լուծվել է քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդիրը:

¹⁰⁴ Մանրամասն տես Արդարադատության նախարարության բաժնում:

փոփոխության և պատժի կրումից վաղաժամկետ ազատման ճկուն համակարգի բացակայություն:

Թեև ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներում հայտարարելու մասին որոշման կիրառման արդյունքում տարեվերջին լուծվել է քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդիրը, այնուամենայնիվ, դրան նպաստող էական հանգամանքներից մեկը շարունակում է մնալ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու իրավակիրառ պրակտիկան: ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հրապարակված՝ ՀՀ դատարանների 2012-2013թթ. գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծությամբ արձանագրվել է, որ 2013թ. ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 3172 միջնորդություն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որոնցից 3011-ը (94.9%) բավարարվել է, 153-ը՝ (4.85%) մերժվել, իսկ 8-ը թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասին 576 միջնորդություն, որից 129-ը (22.4%) բավարարվել է, 427-ը (74.1%)՝ մերժվել, 16-ը թողնվել է առանց քննության: Նշված վիճակագրությունը ևս մեկ անգամ հաստատում է կալանավորումը, որպես խափանման միջոց, դատարանների կողմից կիրառելու լայնածավալ պրակտիկան, այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշումները հիմնականում դատարանների կողմից ըստ էության չեն պատճառաբանվում:

Մտահոգիչ են նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առկա կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան սահմանված չափորոշիչների և ընթացակարգերի, ինչպես նաև դրանց՝ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից: Այս խնդիրը Պաշտպանի կողմից գտնվում են համակարգային ուսումնասիրության և գնահատման փուլում:

Մեր կողմից իրականացված այցելությունների ընթացքում կալանավորված և դատապարտված անձանցից ստացվում են բազմաթիվ բողոքներ՝ հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինների կողմից ցուցմունքներ տալուն հարկադրելու նպատակով վերջիններիս խոշտանգումների կամ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու վերաբերյալ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2013 թվականի ընթացքում բացահայտվել են նման 4 դեպքեր¹⁰⁵: Շատ դեպքերում այս պնդումները ներկայացվում են նաև դատարաններում, սակայն դրանց որևէ պատշաճ գործողություն կամ արձագանք չի հետևում: 2012թ. հուլիսի 6-ի ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի կողմից Հայաստանի վերաբերյալ տրված եզրափակիչ հետևություններում Կոմիտեն մտահոգություն է հայտնել՝ ամբաստանյալի կողմից խոշտանգումների միջոցով ցուցմունքներ տալու մասին հայտարարությունների հիման վրա դատաքննությունը չկասեցնելու մասին ստացված տեղեկությունների վերաբերյալ¹⁰⁶: ՀՀ-ին առաջարկվել է

¹⁰⁵ Մանրամասն տես Ջեկոյցի՝ Ոստիկանության բաժինը:

¹⁰⁶ Concluding observations of the Committee against Torture. Armenia. 06/07/2012. COMMITTEE AGAINST TORTURE. Forty-eighth session. 7 May–1 June 2012:

երաշխավորել, որպեսզի նման դեպքերում ապահովվի դատաքննության կասեցումը մինչև բողոքի խորքային քննության ավարտը: Միաժամանակ, նույն փաստաթղթով ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն, որպես խոշտանգումների կանխարգելման լրացուցիչ միջոց, առաջարկել է կիրառել ոստիկանության բաժիններում հարցաքննությունների աուդիո և/կամ վիդեո ձայնագրատման մեթոդը: Այս առաջարկը Պաշտպանի կողմից ներկայացվել է որպես միջոցառում՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության գործողությունների ծրագրում ներառելու նպատակով:

Պաշտպանն արձանագրում է, որ մինչ օրս ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չէ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Կոնվենցիայի պահանջներին համապատասխանող «խոշտանգում» հանցակազմը¹⁰⁷: Այս խնդիրը դեռևս 2000թ. պարբերաբար բարձրացվել է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի կողմից¹⁰⁸, վերջին անգամ՝ 2012թ. հաստատված եզրափակիչ հետևություններով, սակայն առ այսօր ՀՀ քրեական օրենսգրքը չի համապատասխանեցվել Կոնվենցիայի պահանջներին:

Հաջորդ էական իրավական խնդիրը պայմանավորված է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկված անձանց՝ արդարացի և համարժեք փոխհատուցման մեխանիզմների բացակայությամբ, որոնց ապահովումն ուղղակիորեն բխում է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի պահանջներից: Սահմանադրական դատարանի 2013թ. նոյեմբերի 5-ի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ¹⁰⁹, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մի շարք հոդվածներին հակասող և անվավեր: Որոշմամբ արձանագրվել է, որ խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը չեն կարող չուղեկցվել հոգեկան և բարոյական տառապանքների պատճառամբ, որոնք կարող են նույնիսկ ավելին լինել, քան դրանց հետևանքով պատճառված հնարավոր ֆիզիկական (մարմնական) կամ նյութական վնասը, և առանց որոնց ողջամիտ և արդարացի փոխհատուցման հնարավոր չէ ամբողջությամբ հատուցել անձին և նրա արժանապատվությանը պատճառված վնասը¹¹⁰:

¹⁰⁷ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ խոշտանգում նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոշմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են միայն օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց:

¹⁰⁸ Concluding observations of the Committee against Torture. Armenia. 17/11/2000. COMMITTEE AGAINST TORTURE. Twenty-fifth session. 13-24 November 2000:

¹⁰⁹ Ինչպես նաև չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը:

¹¹⁰ ՀՀ Սահմանադրական դատարանի 05.11.2013թ. թիվ ՍԴՈ-1121 որոշում (Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով):

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ընթացիկ տարում զինծառայողների իրավունքների ապահովման ոլորտում արձանագրվել են ներքոնշյալ հիմնախնդիրները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված պաշտոնական տվյալների համաձայն՝ 2013թ. ընթացքում գրանցվել է զինվորական ծառայություն անցնելու ընթացքում 23 պարտադիր և 7 պայմանագրային զինծառայողների մահվան դեպք: Ըստ պաշտոնական տվյալների՝ մահացության 30 դեպքից 6-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքներ են, 8-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 3-ը՝ սպանության, 4-ը՝ հիվանդության, 3-ը՝ դժբախտ պատահարի, 4-ը՝ ծառայության հետ կապված ավտովթարի, 1 դեպք՝ ակնի պայթյունի և 1 դեպք՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման: Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ խաղաղ պայմաններում արձանագրված մահվան դեպքերի զգալի մասը կապված է ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, հիվանդության, սպանության հետ, որոնք էլ հետևանք են բանակում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի, ոչ կանոնադրային հարաբերությունների, զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի պահպանման նկատմամբ անպատշաճ հսկողության, ինչպես նաև բուժօգնության կազմակերպման, բժշկական հսկողության լուրջ թերացումների հետ:

Խնդրահարույց է մնում խաղաղ պայմաններում զինծառայողների մահվան դեպքերի քննությունը: Այս գործերի թե նախաքննության և թե դատաքննության նկատմամբ առկա է հանրային մեծ անվստահություն: 2013թ. Պաշտպանի կողմից ուսումնասիրվել է ՀՀ զինված ուժերում ծեծի, այլ բռնի գործողությունների ենթարկված և հետագայում մահացած զինծառայող Ժորա Մկրտչյանի քրեական գործը, որի արդյունքում արձանագրվել է, որ նախաքննական մարմինը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ վերջինիս ապօրինի կերպով մարտական հերթապահության ուղարկված պաշտոնատար անձանց արարքներին համապատասխան քրեաիրավական գնահատական տալու հարցում: Վարույթ իրականացնող մարմնի կողմից անհապաղ չեն ձեռնարկվել միջոցներ անհրաժեշտ փորձաքննություններ նշանակելու ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքներով կայացվել է մարդու իրավունքների խախտման մասին որոշում:

Զինծառայողի իրավունքների խախտման հիմնական գործոններից են հանդիսանում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտումները: «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրը» ՀՀ օրենքի համաձայն՝ զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները (պետերը), սպայական ու ենթասպայական մյուս անձնակազմը: Կանոնադրքով սահմանված է նաև, որ, զինվորական կարգապահությունն ամրապնդելու և կարգազանց

զինծառայողին կարգապահական տույժի ենթարկելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու դեպքում, հրամանատարը (պետը) ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության: 2013 թվականի ընթացքում արձանագրվել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտման 241 դեպք, սակայն տարվա ընթացքում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ընդամենը 10 զորամասերի հրամանատարներ¹¹¹: Թեև նման երևույթների կանխման ուղղությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ, վերոնշյալ վիճակագրությունը վկայում է իրականացվող վերահսկողության, իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների և կատարված անհատական աշխատանքների անբավարար լինելու, ինչպես նաև պատասխանատվության մեխանիզմների անարդյունավետ կիրառման մասին:

Առկա են նաև զինվորական ծառայության ընթացքում պատշաճ բուժօգնության կազմակերպման և բժշկական հսկողության հետ կապված խնդիրներ: Առողջական որևէ խնդրով զորամասի բուժօժանդություն դիմած զինծառայողին հիմնականում տրվում է միայն ըստ ախտանիշի բուժում /օրինակ՝ մարմնի ջերմությունը տվյալ պահին իջեցվում է/, իսկ իրական հիվանդությունը չի բացահայտվում կամ քողարկվում է այնքան ժամանակ մինչև ի հայտ են գալիս նոր ախտանիշներ և բարդություններ, որոնք անդառնալի հետևանքներ կարող են առաջացնել, ընդհուպ մահ:

2013թ. զորակոչի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ստացել է ահագանգեր զորակոչիկների ծնողներից՝ առողջական լուրջ խնդիրներ ունենալու պայմաններում վերջիններիս զինված ուժեր զորակոչելու վերաբերյալ: Մեծ մասամբ այդ մտահոգությունները հաստատվել են, տրամադրված ուղեգրերի հիման վրա իրականացվել է կրկնակի բուժօգնություն, և զորակոչիկները ստացել են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում՝ առողջական վիճակի պատճառով: Առանձին դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նիստերին: Պաշտպանության նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ ընթացիկ տարում ստացվել է 728 դիմում-բողոք կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների վերաբերյալ: Բոլոր դիմում-բողոք ունեցող զորակոչիկները կրկնակի փորձաքննվել են: 21 զորակոչիկի նկատմամբ որոշումները փոխվել են: Որոշման փոփոխության պատճառը հանդիսացել է թերի հետազոտումը: Հատկանշական է, որ այս որոշումների փոփոխության մեջ հանձնաժողովի բժշկի սխալ չի հայտնաբերվել, ինչից կարելի է եզրակացնել, որ որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել սխալ կայացրած որոշումների համար:

2014թ. հունվարից գործում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության պիտանելիության սահմանափակումների հարցերը կարգավորող ձեռնարկ, որի միջոցով

¹¹¹ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված պաշտոնական տվյալներ

առողջական խնդիրներով զինապարտները զորամասի բուժօժանոթայության և հրամանատարական կազմի կողմից տեղեկացվում են ծառայության իրենց հակացուցված ձևերի մասին: Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 410 հրամանի՝ եթե շարքային կազմի պարտադիր զինծառայողն անհատական կարգով ճանաչվում է պիտանի ծառայությանը՝ սահմանափակումով, ապա ԿՌԲՀ-ի որոշման մեջ նշվում է, թե ծառայության որ ձևերն են տվյալ անձին հակացուցված: Մեր համոզմամբ՝ անհրաժեշտ է մշակել զորակոչիկների՝ իրենց վերաբերող ռազմաբժշկական հանձնաժողովների որոշման և այդ որոշման մեջ հստակ նշված ծառայության հակացուցված ձևերին ծանոթանալու առավել հստակ և արդյունավետ միջոցներ, նախքան զինվորական ծառայության փաստացի անցնելը: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Պաշտպանի կողմից առաջարկություն էր արվել, որ նախքան զինվորական ծառայության փաստացի անցնելը առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկներին հնարավորություն ընձեռնվի ծանոթանալու իրենց վերաբերող որոշմանը՝ առանց անհարկի խոչընդոտների ու ձգձգումների և այդ որոշման մեջ հստակ նշվի, թե ծառայության որ ձևերն են վերջիններիս հակացուցված: Նման մոտեցումը կնպաստի նաև զինծառայողի մարտական ոգու բարձրացմանը, քանի որ վերջինս հստակ կպատկերացնի թե որտեղ և ինչ պայմաններում է անցնելու զինվորական ծառայությունը:

«Պիտանի ծառայության՝ սահմանափակումով» եզրույթը սահմանված չէ ՀՀ օրենքով: «Պիտանի ծառայության՝ սահմանափակումով» եզրույթը հարկավոր է սահմանել օրենքով, ինչը առավել հստակորեն կամրագրի սահմանափակումով զորակոչված զինծառայողի իրավական կարգավիճակը և կապահովի զինծառայողների իրավունքների պաշտպանության առավել երաշխավորված կառուցակարգ: Ավելին, համահունչ կլինի ՀՀ Սահմանադրության պահանջին առ այն, որ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

2013 թվականին դեռևս մնում է չլուծված հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից փոխհատուցման պայմանով հրաժարվելու զեկուցագիր ներկայացրած որոշ սպաների՝ զինվորական ծառայությունից արձակման ժամկետների չպահպանման խնդիրը: Նման խնդիրները հիմնականում պայմանավորված են եղել արձակման դիմելու հիմքերի ու պատճառների ուսումնասիրությամբ, և ողջունելի է ՀՀ պաշտպանության նախարարության այն մոտեցումը, որի արդյունքում խնդրի լուծման նպատակով խորը և մանրամասնորեն ուսումնասիրվում են զինծառայողների մտահոգությունները և/կամ բողոքները, սակայն նշվածը պետք է փորձ արվի իրագործել սեղմ և ողջամիտ ժամկետներում, այլապես նման իրավիճակը, ըստ էության, հավասարեցվում է հարկադիր աշխատանքի, որն արգելված է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2013 թվականին թվով 37 զինծառայող ապահովվել է բնակարանով, այնուամենայնիվ, մի շարք

զինծառայողների բնակարանով ապահովելու խնդիրը դեռևս արդիական է: Ուղջունելի է, որ Նախարարությունը շատ դեպքերում զինծառայողների բնակարանային ապահովումը իրականացնում է ծառայողական բնակարանների տրամադրման և վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով, և 2014 թվականի հունվարի 1-ից բնակարանի վարձակալության դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարի չափը ավելացել է 10%-ով: 2013 թվականի ընթացքում թվով 1204 զինծառայողի տրվել է վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցման թույլտվություն:

Ձորամասերում հայտնաբերվել է զինծառայողներին պարենամթերքի բաշխման չարաշահման 51 դեպք, որոնցից ընդամենը 7-ով է քրեական գործ հարուցվել, իսկ 44-ով անցկացվել են ծառայական քննություններ: Մեղավոր զինծառայողները ենթարկվել են կարգապահական տույժի, իսկ հասցված վնասը նրանց կողմից փոխհատուցվել է:

Թեև շարունակվում են զորամասերի բարեկարգման աշխատանքները, այնուամենայնիվ, զորամասերի որոշ շինությունների պայմաններ շարունակում են մնալ անբավարար: Այսպես, զորամասերի շենք-շինությունները հին են (Երևանի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի, Արմավիրի մարզերի զորամասերի որոշ շինություններ), ոչ տիպային (Երևանի, Լոռու, Կոտայքի մարզերի զորամասերի որոշ շինություններ), ունեն կապիտալ վերանորոգման կարիք և որոշ զորամասերում գտնվում են զորամասի տարածքից դուրս (Լոռու, Գեղարքունիքի մարզերի որոշ շինություններ)¹¹²:

Ընթացիկ տարում բարելավվել են այլընտրանքային զինվորական և այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու պայմանները, ինչն էական առաջընթաց է ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում 2013 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում այլընտրանքային զինվորական ծառայության տևողությունը կրճատվեց՝ դառնալով 30 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը՝ 36 ամիս: ՀՀ կառավարության 25 հուլիսի 2013 թվականի N 796-Ն որոշմամբ՝ ցանկով նախատեսվեցին այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու կոնկրետ վայրերը /կազմակերպություններ/, ինչպես նաև՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության ընթացքում կատարվող աշխատանքները:

¹¹² Առավել մանրամասն տես Զեկույցի՝ ԲԿԱՄ բաժինը

ԱՌՈՂՋ ԵՎ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Իսկ պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 10): Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար¹¹³: ՀՀ-ն մի շարք միջազգային փաստաթղթերով պարտավորություններ է ստանձնել ապահովելու անձի՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու, բնապահպանական տեղեկատվություն ստանալու, շրջակա միջավայրի հետ կապված որոշումների կայացմանը մասնակցելու, արդարադատության մատչելիության և այլ բնապահպանական իրավունքները, սակայն գործնականում այսօր առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչընդոտում են այս իրավունքների անարգել իրականացումը:

Բնապահպանական լուրջ հիմնախնդիր է ապօրինի ծառահատումը. ըստ պաշտոնական տվյալների՝ 2013 թվականին ապօրինի հատված ծառերի ընդհանուր քանակը կազմել է 2031, ինչը շուրջ 10%-ով ավել է 2012թ. ցուցանիշից¹¹⁴: Վերջին 70 տարիների ընթացքում Հայաստանի հսկայական անտառապատ տարածքներ ոչնչացվել են, ինչի հետևանքով խաթարվել են անտառների վերաճի պայմանները՝ բացասաբար ազդելով ողջ էկոհամակարգի վրա: Ապօրինի ծառահատումների հիմնական պատճառները պայմանավորված են եղել արդյունաբերության մեջ փայտի օգտագործման և սոցիալապես անապահով խավերին վառելափայտով ապահովելու անհրաժեշտությամբ: Չնայած պետական իրավասու մարմինների կողմից իրականացվել են ապօրինի ծառահատման դեպքերի բացահայտմանն ուղղված աշխատանքներ, այնուամենայնիվ, նման դեպքերի աճը վկայում է ձեռնարկված կանխարգելիչ միջոցների ոչ արդյունավետ լինելու մասին: Նշենք, որ ապօրինի ծառահատումների թվի վերաբերյալ այլընտրանքային հետազոտություն վերջին մի քանի տարիներին չի իրականացվել, սակայն 2010թ. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությամբ¹¹⁵ արձանագրվել է ապօրինի հատումների, փաստացի նվազագույն մակարդակի համեմատությամբ, պաշտոնական վիճակագրության՝ մոտ 80 անգամ ավելի պակաս տվյալներ ներկայացնելու հանգամանքը: Թեև Նախարարության կողմից միջոցներ են ձեռնարկվել իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, ինչի արդյունքում կազմվել է վարչական իրավախախտման 419 ակտ, իրավախախտումների ոչ բոլոր դեպքերն են բացահայտվել:

¹¹³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 33.2

¹¹⁴ Մանրամասն տես Բնապահպանության նախարարության բաժնում

¹¹⁵ Հայաստանի գյուղական բնակչության վրա անտառների շահագործման անկայուն գործելակերպի և ապօրինի հատումների սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն՝ հիմնադրամ (ICARE), Երևան-2011թ.

Ընթացիկ տարում «Խոսքովի անտառ» արգելոցում և հանրապետության այլ հատուկ պահպանվող տարածքներում արձանագրվել են ապօրինի որսի մի շարք դեպքեր, ինչը վկայում է այն մասին, որ Բնապահպանության նախարարության կողմից իրականացված վերահսկողությունը և որսագողությունը կանխարգելելու ուղղությամբ իրականացված աշխատանքները հաճախ եղել են անարդյունավետ¹¹⁶:

Փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք ի հայտ են գալիս համապատասխան կազմակերպությունների կողմից գործունեություն ծավալելու սկզբնական փուլերում և հանդիսանում են գործնականում օրենսդրական պահանջների խախտման, պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների չկատարման և գործող օրենսդրության բացերի հետևանք: ՀԷԿ-ի կառուցման գործընթացի առաջին փուլը հողի հատկացման թույլտվության տրամադրման փուլն է, որը հասարակության համար հասանելի չի լինում, հետևաբար դրա վրա ազդեցության մեխանիզմներ գոյություն չունեն: Հասարակությունը նման որոշումների կայացմանը մասնակից է դառնում միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլում, որը, բնապահպանական փորձաքննության հասարակական մոնիթորինգի արդյունքներով, հաճախ իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով¹¹⁷: ՀԷԿ-երի շահագործման հետ կապված հիմնական խնդիրները վերաբերում են էկոլոգիական թողքերին, որոնք հաճախ չեն պահպանվում՝ հանգեցնելով գետերի էկոհամակարգի վնասմանը: Միայն 2013թ. օգոստոսին Բնապահպանության նախարարության արագ արձագանքման խմբի Լոռու և Գեղարքունիքի մարզերում գործող երեք փոքր ՀԷԿ-երում պատահական ստուգումների իրականացման արդյունքում արձանագրվել են խախտումներ: Այսպես, Լոռու մարզում գտնվող «Տիրակալ» ՍՊԸ-ին պատկանող «Կուրթան» փոքր հիդրոէլեկտրակայանի ջրընդունիչ կայանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կայանից ջրի էկոլոգիական թողքը սահմանված նորմերից անհամեմատ ցածր է եղել: Իսկ Գեղարքունիքի մարզի «Գրիար» փհէկ-ի ջրընդունիչ կայանի ուսումնասիրություններից պարզվել է, որ Գետիկ գետի վրա կառուցված կայանում էկոլոգիական թողքը գրեթե հասցված է 0-ի, ինչը բնապահպանական օրենսդրության և նորմատիվների կոպիտ խախտում է: Նույնանման ուսումնասիրություն է իրականացվել նաև Գեղարքունիքի մարզի «Էրիկ» ՓՀԷԿ-ում¹¹⁸: Մի շարք դեպքերում մեկ գետի վրա կառուցվում են բազմաթիվ ՀԷԿ-եր՝ առանց հաշվի առնելու գետի վրա առաջացող ծանրաբեռնվածության հետևանքները¹¹⁹: Որոշ դեպքերում փոքր ՀԷԿ-երը կառուցվում են

¹¹⁶ Մանրամասն տես՝ Բնապահպանության նախարարության բաժինը

¹¹⁷ “Փոքր ՀԷԿ-երը միջազգային ֆինանսական ինստիտուտների հովանու ներքո”, “ԷկոԼուր” տեղեկատվական հասարակական կազմակերպություն, Երևան 2013թ.

¹¹⁸ <http://www.mnp.am/?aid=2117#sthash.b4hr6X7R.dpuf>

¹¹⁹ «Եղեգիս գետը, որը ձևավորում է Եղեգիսի կիրճի էկոհամակարգը, 3 տարվա ընթացքում փոխել է իր կազմը: ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոնի տվյալների համաձայն՝ 2009թ-ից մինչև 2011թ-ը գետում ջրի ջերմաստիճանը բարձրացել է 1 աստիճանով: Թափանցելիությունը նվազել է 3 միավորով (սմ), թթվածնի պարունակությունը՝ 2 միավորով (մգ/լ): Դա անդրադարձել է ձկնապաշարների վրա: Գետի ստորին հատվածներում կարմարխայտ էնդեմիկ ձկնատեսակն

հատուկ պահպանվող տարածքներում: «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից 2013թ. հրապարակված հետազոտությամբ¹²⁰ արձանագրվել են ազգային պարկերում, արգելոցների բուֆերային գոտիներում, արգելավայրերում օրենսդրական պահանջների խախտմամբ փոքր ՀԷԿ-երի կառուցման դեպքեր: Նույն հետազոտությամբ արձանագրվել է նաև, որ փոքր ՀԷԿ-երի նախագծերով հաշվի չեն առնվում ազդակիր համայնքի կարիքները, շատ դեպքերում դրանց կառուցումն ու շահագործումը ուղղակի բացասական ազդեցություն է ունենում համապատասխան համայնքների բնակչության բարեկեցության վրա՝ զրկելով արոտավայրերից, ոռոգման պաշարներից, հանգստի գոտիներից և կենսական նշանակության այլ ռեսուրսներից:

Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), որտեղ սահմանված են փորձաքննության ենթակա գործունեության տեսակները, ինչպես նաև ներկայացված են նախատեսվող գործունեության սահմանային չափերը, որից ցածր լինելու դեպքում՝ տվյալ գործունեությունը ենթակա չէ փորձաքննության: Չնայած հիշյալ փորձաքննությունը պետության կողմից իրականացվող պարտադիր գործողություն է, այնուամենայնիվ, գործնականում օրենսդրական այս պահանջը հաճախ անտեսվում է և փորձաքննության են ներկայացվում արդեն շինարարական աշխատանքներ սկսած և/կամ նույնիսկ արդեն գործող օբյեկտների նախագծային փաստաթղթերը¹²¹: Այս համատեքստում քննարկման է ենթակա Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրը: Բնապահպանական հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունների համաձայն՝ հանքի շահագործումն իրականացվում է փորձաքննության չենթարկված նախագծով, և, չնայած դրա վերաբերյալ հնչեցված բազմաթիվ ահազանգերին, Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից մինչ օրս այդ ուղղությամբ ստուգումներ չեն իրականացվել¹²²: Նշենք նաև, որ բնապահպանական կազմակերպությունների կողմից բազմիցս բարձրացվել է այն խնդիրը, որ դեռևս 2006թ. «Թեղուտ» ՓԲԸ-ին գործունեության թույլտվություն տրամադրվել է օրենսդրության մի շարք խախտումներով, ինչն էլ 2011թ. հաստատել է Օրհուսի կոնվենցիայի հիման վրա գործող Համապատասխանության կոմիտեն: Բացի այդ, թիվ ACCC/C/2009/43 հաղորդման առնչությամբ ՄԱԿ-ի Սոցիալական և տնտեսական հարցերով կոմիտեն իր եզրակացությամբ նույնպես արձանագրել է, որ Թեղուտի հանքի շահագործման լիցենզիա տրամադրելու ընթացքում թույլ են տրվել կոնվենցիայի պահանջների խախտումներ:

արդեն անհետացել է: Նման ճնշում գետի վրա գործադրում են փոքր ՀԷԿ-երը, որոնց համար 12 լիցենզիա է տրամադրվել (<http://www.ecolur.org/hy/news/water/yeghegis-river-changes-its-composition-for-three-years/4701/>):

¹²⁰ Փոքր ՀԷԿ-երը միջազգային ֆինանսական ինստիտուտների հովանու ներքո, “ԷկոԼուր” տեղեկատվական հասարակական կազմակերպություն, Երևան 2013թ.

¹²¹ <http://www.mnp.am/?aid=1998>, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության բացահայտումները (01.07-13.07.2013թթ.), <http://ecolur.org/hy/news/mining/quotat-metalsquot-llc-performing-operation-without-documents/5096/>

¹²² Մանրամասն տես՝ Բնապահպանության նախարարության բաժնում

2001թ. վավերացնելով «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիան՝ ՀՀ-ն պարտավորվել է շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ապահովել հանրության մասնակցությունը, մինչդեռ իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ օրենսդրական այս պահանջը որոշ դեպքերում առհասարակ անտեսվում է, իսկ երբեմն էլ կրում է զուտ ձևական բնույթ և որևէ կերպ չի ծառայում իր նպատակին¹²³: Օրենքով սահմանված է հասարակական լսումների անցկացման պահանջը, սակայն հասարակայնության իրավունքներն ու դերը հատակ սահմանված չեն, այն սահմանափակվում է փաստաթղթերի հետ ծանոթանալու կամ դրանց մասին տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև դրանց վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ ներկայացնելու իրավունքով: Հասարակության կարծիքներն արձանագրվում են և այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացվում համապատասխան մասնագետին և փորձագետին, ինչը, սակայն, կրում է ձևական բնույթ, քանի որ չունի պարտադիր նշանակություն: Ավելին, 2010 թվականի աշնանը Օրհուսի Համապատասխանության կոմիտեի եզրակացությամբ արձանագրվել էր, որ Հայաստանը, որպես կոնվենցիայի կողմ, չի կատարել ստանձնած որոշակի պարտավորություններ, մասնավորապես՝ Թեղուտի հանքավայրի շահագործման նախագծի առնչությամբ խախտվել էր կառավարության որոշումների կայացման գործընթացին հասարակայնության արդյունավետ մասնակցության իրավունքը:

Բնապահպանական կազմակերպությունների կողմից ստացվել են նաև մի շարք ահազանգներ և բողոքներ՝ շրջակա միջավայրին առնչվող որոշումներին առնչվող տեղեկատվության անմատչելիության վերաբերյալ, երբ որևէ հարցի կապակցությամբ պետական իրավասու մարմիններին հասցեագրված դիմումներին տրվում են ոչ լիարժեք պատասխաններ, իսկ երբեմն էլ առհասարակ պատասխան չի ստացվում: Այսպես, դեռևս 2013թ. ապրիլի 5-ին Համահայկական Բնապահպանական Ճակատը պաշտոնական հարցում էր ուղարկվել Նախարարություն, որի մեջ, ի թիվս այլ փաստաթղթերի, խնդրել էր տրամադրել նաև «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի ողջ գործունեության ընթացքում Բնապահպանական պետական տեսչության կողմից այդ ընկերության վերաբերյալ կազմված արձանագրությունների կրկնօրինակները՝ առկայության դեպքում: Նշված փաստաթղթերը չեն տրամադրվել ծավալուն լինելու պատճառաբանությամբ, փոխարենը առաջարկվել էր ծանոթանալ դրանց «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ում:

Ոլորտի մեկ այլ խնդիր վերաբերում է վերականգնվող բնական պաշարների կորուստին (անտառ, ջրային ռեսուրսներ, հող և այլն): Սահմանված չեն տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցվող բնապահպանական վնասի տնտեսական գնահատման չափանիշները՝ դրանց շուկայական արժեքին համապատասխան: Ընդերքի

¹²³ Որպես օրինակ կարելի է նշել Վայոց ձորի Շատին գյուղում իրականացվող «Եղեգ» ՓՇԷԿ-ի կառուցումը, որտեղ իրականացվել էր միայն մեկ հանրային լսում և ազդակիր համայնքը դեմ էր քվեարկել նախագծին, սակայն դա որևէ կերպ հաշվի չէր առնվել լիազոր մարմինների կողմից:

շահագործման համար տրամադրվող վերականգնվող բնական պաշարները հանքարդյունաբերողին տրամադրվում են ոչ թե դրանց շուկայական, այլ կադաստրային արժեքով, ինչի հետևանքով այդ բնական պաշարների համար վճարումները սահմանվում են չափազանց ցածր գնով¹²⁴: Մինչդեռ օրենսդրությամբ պետք է հստակ սահմանվի էկոլոգիական վնասի տնտեսական հատուցման ինստիտուտն ու մեթոդաբանությունը, որը, գիտականորեն հիմնավորված հաշվարկների հիման վրա, հաշվի կառնի բնությանը հասցված իրական վնասը:

Հանքարդյունաբերության ներկայիս ծավալների պայմաններում արդի խնդիր է արդյունաբերական թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացումը՝ դրանց միջազգային չափանիշներին համապատասխան կառավարման միջոցով, մինչդեռ ՀՀ-ում այսօր այդ խնդիրը պատշաճ իրավական կարգավորում չունի: Բացի այդ, լեռնաարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոնների համար սահմանված է 0 դրամ դրույքաչափ¹²⁵: Տնտեսվարողների կողմից հաճախ չեն պահպանվում պոչամբարների կառավարմանն ուղղված օրենսդրական պահանջները, իսկ պետական վերահսկողությունն այս գործունեության նկատմամբ ոչ պատշաճ է:

Բնապահպանական մեկ այլ արդի խնդիր կապված է ջրային ռեսուրսների կառավարման հետ, որն անմիջական ազդեցություն է ունենում բնակչության առողջության և կենսական նորմալ պայմանների պահպանման վրա: Առկա են ջրերի արդյունաբերական, գյուղական և կենցաղային աղտոտման, ջրային ռեսուրսների էական կրճատման, ջրային էկոհամակարգերի դեգրադացման լուրջ խնդիրներ: Արարատյան դաշտավայրում գործող բազմաթիվ ձկնաբուծարաններ անօրինական կերպով տարիներ ի վեր շահագործում են խորքային հորեր, ինչի հետևանքով զգալի չափով նվազում են ջրային ռեսուրսները: Բնապահպանական կազմակերպությունների ուսումնասիրությունների համաձայն՝ նման հորերի առկայությունը Արարատյան դաշտավայրում ռոռգման ջրի էական նվազման պատճառ է հանդիսացել, որի արդյունքում խնդրի լուծման համար պետական իրավասու մարմինների կողմից պարբերաբար բարձրացվում է Սևանա լճից հավելյալ ջրաքանակի բացթողման անհրաժեշտության հարցը, ինչը բացասական ազդեցություն կարող է ունենալ, քանի որ լճի մակարդակի հաճախակի տատանումները կարող են հանգեցնել լճի ճահճացմանը և էկոհամակարգի խախտմանը¹²⁶:

Բնապահպանության ոլորտի կարևորագույն խնդիրներից է նաև արդարադատության մատչելիության ապահովումը, որի պահանջը ուղղակիորեն բխում է Օրհուսի կոնվենցիայի դրույթներից¹²⁷: Դեռևս 2006թ. Դալմայի այգիների վերաբերյալ Օրհուսի կոնվենցիայի հիման

¹²⁴ Օրինակ՝ Armenian Coppar Program ընկերությունը օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով Թեղուտի հանքավայրի մոտ գտնվող Շնող գետը գնահատվել է ընդամենը 175 հազար դրամ, իսկ ոչնչացվող անտառային էկոհամակարգի համար՝ միայն փայտանյութի արժեքը՝ հաշվարկված ապօրինի ծառահատումների համար վճարվելիք տուգանքի չափին համապատասխան:

¹²⁵ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք

¹²⁶ Ներկայումս Ազգային ժողովում է գտնվում Սևանա լճից ջրի բացթողման ծավալի մեծացման վերաբերյալ օրինագիծը, համաձայն որի՝ ջրաքանակը պետք է կազմի 170 միլիոն խմ-ի փոխարեն 240 միլիոն խմ:

¹²⁷ Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն իր ազգային օրենսդրությամբ պետք է ապահովի անկախ և անաչառ մարմնում ընդունված ցանկացած որոշման, գործողության կամ անգործության օրինականությունը (որոնք խախտում են ջրջակա

վրա գործող Համապատասխանության կոմիտեին ուղղված դիմումի կապակցությամբ¹²⁸ արված եզրակացության մեջ առաջարկվել է ՀՀ կառավարությանը ձեռնարկել համապատասխան գործնական միջոցառումներ՝ ապահովելու արդարադատության մատչելիություն՝ ներառյալ Օրհուսի կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածներով կարգավորվող առարկաների առնչությամբ ընդունվող որոշումների օրինականությունը՝ վիճարկելու համար պատշաճ և արդյունավետ միջոցների առկայությունը: Այս խնդրին իր՝ 07.09.2010թ. թիվ ՄԴՈ-906 որոշմամբ անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ «մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում հանդես գալու որոշակի խմբի կողեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է: Այսպիսի դիրքորոշում է, ըստ էության, արտահայտված նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում¹²⁹»: Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումը դատարանների կողմից մեկնաբանվեց հակառակ իմաստով: Այսպես, Թեղուտի հանքավայրի շահագործմանն առնչվող թիվ ՎԴ/3275/05/09 գործի շրջանակներում կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի ՄԴՈ-906 որոշումը, կայացրել է իր նախորդ որոշմանը տրամագծորեն հակասող որոշում¹³⁰: Մինչդեռ, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ, անդրադառնալով Վճռաբեկ դատարանի որոշմանը, վերահաստատել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «...հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալու որոշակի խմբի կողեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է» և արձանագրել, որ «... ՀՀ վարչական դատարանը, նույն կերպ, նաև 01.04.2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, սխալ են մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հասարակական կազմակերպությունների

միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները) իրավական և ընթացակարգային տեսակետից վիճարկելու հնարավորություն, ապահովի վարչական և դատական ընթացակարգերի մատչելիությունը, ստեղծի համապատասխան մեխանիզմներ այս իրավունքն իրացնելու համար:

¹²⁸ Օրհուսի Կոնվենցիայի համապատասխանության կոմիտեին ուղղված հասարակական կազմակերպությունների երկու դիմումի կապակցությամբ՝ 07.04.2006թ. (Դավնայի այգիների) և 01.07.2011թ. (Թեղուտի անտառի), կոմիտեն փորձագիտական եզրակացություններով ճանաչել է Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում ՀՀ-ի ստանձնած պարտավորությունների խախտումներ և մինևույն ժամանակ մի շարք առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարությանը:

¹²⁹ Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/09 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրհուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

¹³⁰ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար, ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով, գործողությամբ կամ անգործությամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից:

դատավարական իրավասուրբեկտության վերաբերյալ՝ վերջիններիս գրկելով իրենց կանոնադրական նպատակներից բխող հարցերի առնչությամբ դատարան դիմելու իրավունքից:» Այնուամենայնիվ, մինչև օրս չեն սահմանվել այն օրենսդրական երաշխիքները, որոնք կօժտեն հասարակական կազմակերպություններին դատավարական իրավասուրբեկտությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում¹³¹:

131 Բնապահպանական ոլորտի այլ խնդիրները մանրամասն՝ տես Բնապահպանության նախարարության բաժնում

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որի հիման վրա 2012 թվականին ՀՀ կառավարությունը ներկայացրել է կոնվենցիայի իրականացման վերաբերյալ իր առաջին զեկույցը: Դրան զուգահեռ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինքի հետ համատեղ պատրաստվել է այլընտրանքային զեկույց Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Չնայած ամրագրված իրավական երաշխիքներին՝ գործնականում հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ կերպով պաշտպանված չեն խտրականությունից, իսկ ՀՀ-ում գործող օրենքները չեն նախատեսում խտրականության կանխարգելման և վերացման համար արդյունավետ մեխանիզմներ:

Պետության կողմից ձեռնարկված միջոցներն արդյունավետ կերպով չեն լուծում հաշմանդամների գործազրկության խնդիրը: ԱՄՆ պետական դեպարտամենտի զեկույցի համաձայն՝ աշխատունակ հաշմանդամների շրջանում արձանագրվել է 90% գործազրկություն¹³²: Թեև այս ուղղությամբ իրականացվել են որոշակի միջոցառումներ¹³³, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության ընդհանուր ցուցանիշների համատեքստում պետության կողմից ձեռնարկված ծրագրերն այս ոլորտում արդյունավետ չեն եղել: Տարբեր տարիների ընթացքում Պաշտպանի աշխատակազմի և տարբեր հասարակական կազմակերպությունների իրականացրած մշտադիտարկումների արդյունքում բացահայտվել է, որ աշխատավարձի փոխհատուցման պետական ծրագրով հաշմանդամներին աշխատանքի ընդունած գործատուները պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, մի շարք դեպքերում, ազատում են աշխատանքից և մեկ այլ հաշմանդամի հետ կնքում աշխատանքային պայմանագիր՝ ֆինանսական արտոնություններից օգտվելու նպատակով: Այս առումով կարևոր է աշխատավայրերում քվոտաների ներդրումը¹³⁴, ողջունելի է, որ 2013 թվականին ընդունված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսվեցին հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվներ (քվոտաներ), որոնք պետական սեկտորի համար ուժի մեջ են մտնելու 2015 թվականից, իսկ ոչ պետականի համար՝ 2016 թվականից: Խնդրահարույց է եղել հաշմանդամություն ունեցող անձանց գործազուրկ համարվելու հետ կապված օրենսդրական կարգավորումը, որը շտկվեց միայն 2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով: Այսպես, 2013-ի ընթացքում գործող «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքին համապատասխան՝ Զբաղվածության պետական ծառայությունը դադարեցնում էր անձի գործազուրկի

¹³² <http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?year=2013&dliid=220251#wrapper>

¹³³ 2013 թվականին նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 200 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից 179-ը զբաղվածության պետական ծրագրերի արդյունքում:

¹³⁴ Մանրամասն՝ տես Զեկույցի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բաժնում

կարգավիճակը, եթե վերջինս ճանաչվել է հաշմանդամ և, հետևաբար, չէր կարող ստանալ նաև գործազրկության նպաստ: Սա հանգեցնում էր հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորման, որի արդյունքում խախտվում էր հաշմանդամություն ունեցող գործազուրկ անձի սոցիալական պաշտպանության իրավունքը:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի հարմարեցման ուղղությամբ չեն ձեռնարկվում անհրաժեշտ քայլեր. շենքերն ու շինությունները, հասարակական տրանսպորտային միջոցները, փողոցները, դատարանների շենքերը, քրեակատարողական հիմնարկները, հանրային օգտագործման տարածքները հիմնականում շարունակում են մնալ անմատչելի վերջիններիս համար: Քաղաքաշինության ոլորտում հաճախ անտեսվում են ՀՀ օրենսդրությամբ ամրագրված շինարարական նորմերը, որոնք ուղղված են շինությունների մատչելիության ապահովմանը: Դրան գուցահեռ՝ չեն ձեռնարկվում բավարար միջոցներ արդեն կառուցված շենքերի հարմարեցման ուղղությամբ: Չնայած նրան, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչությունը 2013 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացրել ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների կատարման նկատմամբ և արձանագրել է խախտումներ, այնուամենայնիվ, կառուցված և վերակառուցված շինությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չլինելու խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Այսպիսով, ընթացիկ տարում ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել շենքերի և շինությունների մատչելիության ապահովման համար: Արդյունքում, անմատչելի միջավայրը սահմանափակել է անձի աշխատանքային, կրթական, առողջապահական և այլ իրավունքների իրականացումը: Ոլորտի իրավասու պետական մարմինները մատչելիությանն ուղղված միջոցառումների ցանկը հաճախ ընկալում և սահմանափակում են թեքահարթակների կառուցմամբ՝ անտեսելով շինությունների ներսում անհրաժեշտ հարմարությունների ստեղծման, համապատասխան ազդանշանով լուսացույցերի տեղադրման, ճանապարհների հարմարեցման և այլ միջոցառումները: Առավել սուր է դրված հանրային տրանսպորտի մատչելիության ապահովման հարցն ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում: 2012 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանը Չինաստանից ներմուծել էր հաշմանդամների համար անմատչելի 66 ավտոբուսներ: Հաշմանդամների հիմնահարցերով Երևանի քաղաքային հանձնաժողովի 2013թ. գործունեության ծրագրով նախատեսվում էր այդ ավտոբուսներից 10-ը հարմարեցնել հատուկ վերելակների տեղադրմամբ, սակայն դա այդպես էլ չիրագործվեց: Հիշեցնենք, որ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով առհասարակ չի թույլատրվում տրանսպորտային միջոցների մշակումն ու արտադրությունը, եթե դրանք հաշմանդամների մատչելիության և օգտագործման համար հարմարեցված չեն:

ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հիվանդությունների որոշակի ցանկ, որոնց առկայության դեպքում սահմանափակվում է անձանց՝ երեխա որդեգրելու իրավունքը: Այդ ցանկում ներառված հիվանդությունները հաճախ բերում են անձի հաշմանդամության, ինչի արդյունքում սահմանափակվում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով (Հոդված 23) ամրագրված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ կապված երեխաների որդեգրման ինստիտուտի հետ:

Ներկայումս գործող ներառական կրթություն իրականացնող 117 հանրակրթական դպրոցներից¹³⁵ շատերը, շենքերի մատչելիության առումով, հարմարեցված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, առկա են նաև խնդիրներ մանկավարժների մասնագիտական գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև երեխաների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի դրսևորման ոլորտում: Բազմաթիվ դպրոցներ, որտեղ սովորում են հաշմանդամ երեխաներ, չունեն տարրական հարմարություններ, ինչը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում երեխայի կրթական և սոցիալական ինտեգրացիայի հարցում:

Չնայած ընտրությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ ձեռնարկված մի շարք դրական քայլերի՝ շարունակում է մնալ չլուծված ընտրատեղամասերի մեծ մասի մատչելիության հարցը¹³⁶, ինչը սահմանափակում է անձի ընտրելու իրավունքը: Բացի դրանից, ՀՀ Ընտրական օրենսգիրքը չի ապահովում այն մարդկանց ընտրելու իրավունքը, որոնք չեն գտնվում բուժհաստատությունում, սակայն հաշմանդամության պատճառով ընտրական տեղամաս այցելելու հնարավորություն չունեն:

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք դեռևս լիարժեք ինտեգրված չեն հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին, ինչին նպաստում է նաև բնակչության մեծամասնության խտրական վերաբերմունքը և կարծրատիպերը հաշմանդամության հետ կապված: Այս առումով հատկապես խոցելի են հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաները. նրանք ավելի հաճախ են ենթարկվում ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության: Երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգն արդյունավետ չի գործում: Չեն ձեռնարկվում անհրաժեշտ քայլեր Հայաստանում խնամատար ընտանիքի ինստիտուտի՝ որպես մանկատների այլընտրանք, զարգացման համար: Իսկ մանկատներում ապրող երեխաները հանդիպում են լուրջ սոցիալական խնդիրների: Ընդ որում, հաշմանդամություն ունեցող աղջիկ երեխաներն ավելի շատ են բախվում խտրականության և հասարակության անբարյացկամ վերաբերմունքի, սեռերի միջև տարբերություններն ավելի ակնհայտ են ՀՀ մարզերում: Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կատարած հետազոտության՝ հաշմանդամություն ունեցող աղջիկ երեխաներին համեմատաբար ավելի շատ են տանում

¹³⁵ Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկ՝ <http://www.edu.am/DownloadFile/349arm-nerar-cucak-yst-marzeri-2013.pdf>

¹³⁶ <http://www.osce.org/hy/odihr/elections/91962>; <http://www.osce.org/hy/odihr/elections/101982>

մանկատուն, և մանկատանն ապրող աղջիկներին ծնողները ավելի քիչ են այցելում, քան տղաներին: Աղջիկներն ավելի շատ են հակված դուրս մնալ դպրոցից, քան տղաները¹³⁷:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2012 թվականին որդեգրված 75 երեխաներից 40-ին (որոնցից 34-ն ունեցել են առողջական խնդիրներ) որդեգրել են օտարերկրյա քաղաքացիներ: 2013 թվականի ընթացքում, կենտրոնացված հաշվառման տվյալներով, մանկատներից որդեգրվել է հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող ընդամենը 33 երեխա: Այս ցուցանիշները վկայում են այն մասին, որ հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրումը հիմնականում իրականացվում է օտարերկրյա քաղաքացիների կողմից: Ավելին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մոնիթորինգային այցերի արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրում, որպես կանոն, տեղի չի ունենում: Ուստի, հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրման պրակտիկայի ներդրման ուղղությամբ անհրաժեշտ է համալիր քայլեր ձեռնարկել: Խնդրահարույց է նաև որդեգրման ոլորտում համապատասխան մարմինների գործունեության թափանցիկության պակասը:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալների՝ մանկատներում ապրող հաշմանդամություն ունեցող երեխաների 72%-ը չի հաճախում դպրոց ընդհանրապես: Համաձայն նույն ուսումնասիրության՝ մանկատներում ապրող հաշմանդամություն ունեցող երեխաների 5%-ն է միայն հաճախում միջնակարգ դպրոց, իսկ 23%-ը հաճախում է հատուկ դպրոց: Երեխաների դպրոց չհաճախելու հիմնական պատճառ է բերվել այն, որ երեխաների ծնողները գտնում են, որ երեխան չի կարող սովորել դպրոցում: Մարզերում այդպես են կարծում դպրոց չհաճախող երեխաների ծնողների 51%-ը, Երևանում՝ 36%-ը: Քիչ թվով պետական մանկապարտեզներ են պատրաստ ընդունելու հաշմանդամություն ունեցող երեխաների, որի հիմնական պատճառը մասնագետների պակասն է (չունեն համապատասխան ֆինանսավորում մասնագետներ ունենալու համար): Մանկապարտեզների շենքերը հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար, իսկ աշխատողները չեն անցնում վերապատրաստում հաշմանդամ երեխաների հետ աշխատելու առանձնահատկությունների վերաբերյալ: Արդյունքում հաշմանդամություն ունեցող երեխաներից միայն 35% է հաճախում մանկապարտեզ, իսկ գյուղական բնակավայրերում՝ 23%-ը¹³⁸:

Լուրջ հիմնախնդիրներ կան հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի և սոցիալական պաշտպանության հաստատություններում: Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ ապրում են մտավոր և ֆիզիկական ծանր հաշմանդամություն ունեցող երեխաներ, նախատեսված է մինչև 18 տարեկան երեխաների համար, սակայն այնտեղ 2013թ. դրությամբ ապրում է նույնիսկ մինչև 35 տարեկան մոտ 100 անձ՝ պետության կողմից բնակելի տարածք չստանալու պատճառով: Մանկատանն առաջացել է գերբեռնվածություն:

¹³⁷ «Խոսքը ներառման մասին է» ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012
<http://www.un.am/res/Library/UNICEF%20Publications/UNICEF%20Disability%20Report%20ARM.pdf>

¹³⁸ Տես նույն տեղում

նոր երեխաներ են ավելանում, բայց շրջանավարտներ չկան: Խիստ մտահոգիչ են շարունակում մնալ հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի ապահովման և պահման պայմանները նաև գիշերօթիկ հաստատություններում և հատուկ դպրոցներում¹³⁹: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2013թ. ընդունված եզրափակիչ դիտողությունների մեջ նշվում էր, որ հաշմանդամ երեխաները շարունակում են մնալ խնամքի հաստատություններում համապատասխան տարիքը լրանալուց հետո, քանի որ այս հարցին պետությունը համակարգային լուծում չի տվել, փոխարենը՝ ոմանց տեղափոխում են հոգեբուժական հաստատություններ: Կոմիտեն առաջարկել է պետությանը՝ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր խնամքի հաստատությունների շրջանավարտ հաշմանդամություն ունեցող երեխաներին համապատասխան օժանդակություն ցուցաբերելու և իրենց համայնքում ինտեգրելու ուղղությամբ¹⁴⁰:

Հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են արտոնյալ կամ անվճար հիմունքներով դեղեր ստանալու իրավունքից, սակայն Պաշտպանը ստացել է բազմաթիվ դիմումներ՝ քաղաքացիներին անհրաժեշտ դեղորայք չտրամադրելու, դրան փոխարինող ավելի ցածրարժեք և ավելի ցածր որակով դեղեր տրամադրելու, անբավարար չափաքանակով տրամադրելու հետ կապված: Շատ դեպքերում դրա պատճառը, գործող օրենսդրությամբ ամրագրված, դեղերի գնման գործընթացն է: Բժշկական հաստատությունների մեծ մասը, հատկապես մարզերում, մատչելի չէ հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար¹⁴¹:

Խնդրահարույց է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հասարակության մեջ ներգրավվածության ապահովման գործընթացը: Պետության կողմից չեն ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման, նրանց ինտեգրման և ազատության անձեռնմխելիության ապահովման ուղղությամբ: Լուրջ հիմնախնդիրներ կան կապված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ստացիոնար պայմաններում պահման¹⁴², ինչպես նաև նրանց անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի պատշաճ որակի հետ, որի վերաբերյալ ստացվել են բազմաթիվ բողոքներ, սակայն այդ բողոքների հիման վրա չեն ձեռնարկվել համալիր և արդյունավետ միջոցներ հարցի լուծման ուղղությամբ: Հարկ է նշել, որ տեղական արտադրության հոգեմետ դեղորայքի ցածր որակի և անբավարար արդյունավետության հարցը բարձրացվել է նաև որոշ հոգեբույժների կողմից՝ ԲԿԱՄ-ի՝ հոգեբուժարան կատարած պլանային այցելությունների ընթացքում:

Կոնվենցիան վավերացնելուց չորս տարի անց հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող ՀՀ ներպետական իրավական ակտերը դեռևս չեն համապատասխանեցվել Կոնվենցիայով սահմանված հասկացություններին, ինչպես նաև պետության կողմից չի ստեղծվել Կոնվենցիայով նախատեսված անկախ մեխանիզմ, որը պետք է վերահսկի դրա կիրարկումը:

¹³⁹ Մանրամասն՝ տես ԲԿԱՄ զեկույցում

¹⁴⁰ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

¹⁴¹ Մանրամասն՝ տես Առողջապահության նախարարության բաժնում

¹⁴² Մանրամասն՝ տես ԲԿԱՄ զեկույցում

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Թեև ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների և սեռի սկզբունքով խտրականության արգելքի սկզբունքները, Հայաստանի Հանրապետությունում գործնականում առկա է կանանց նկատմամբ քողարկված խտրականություն, որի հիմքը հասարակության մեջ պահպանվող և ամրապնդվող՝ կանանց և տղամարդկանց դերերի ավանդական ընկալումներն են, կանանց իրավունքների իրականացման համար փաստացի անհավասար հնարավորությունների, խտրականության բացառմանն ուղղված արդյունավետ իրավական մեխանիզմների, ոլորտի մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը:

Թեև 2013թ. ընդունվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), այնուամենայնիվ, դրա կիրարկումն ապահովող կոնկրետ միջոցառումների և ծրագրերի ընդունված չլինելու պայմաններում օրենքում սահմանված կարգավորումներն ինքնին չեն կարող ունենալ որևէ արդյունավետ ազդեցություն կանանց և տղամարդկանց իրական հավասարության ապահովման հարցում: Օրենքում սահմանված՝ «զենդեր» եզրույթը տարբեր ընկալումների և մեկնաբանությունների տեղիք տվեց հանրության շրջանում, ինչը որոշակի իմաստով հանգեցրեց նաև Օրենքի՝ կանանց և տղամարդկանց իրական հավասարության ապահովման ընդհանուր նպատակի խեղաթյուրմանը: Դրան հետևեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որը բուռն քննարկման առարկա դարձավ թե՛ քաղաքական շրջանակներում և թե՛ հանրության շրջանում:

Այս քննարկումների համատեքստում կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, մասնավորապես՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության նկատմամբ արձանագրվեցին որոշակի ճնշումների և սպառնալիքների դրսևորումներ, որոնք համարում ենք խիստ բացասական և դատապարտելի, քանի որ նման երևույթները և իրավասու մարմինների կողմից դրանց պատշաճ արձագանքի բացակայությունը կարող են էականորեն վտանգել իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում:

Սեռային խտրականության համատեքստում համակարգային բնույթ ունի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը, որը կանանց նկատմամբ խտրականության դրսևորման եղանակներից է, որի միջոցով ծնողները ազատվում են դեռևս չծնված աղջիկ երեխաներից: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ 1991թ. ի վեր Հայաստանում նորածինների սեռերի հարաբերակցությունը խախտվել է . 2012թ. 100 աղջկա դիմաց կազմել

Է 114 տղա, մինչդեռ բնականոն է համարվում 100 աղջկա դիմաց 102-106 տղա հարաբերակցությունը: ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի կողմից 2011թ. նախաձեռնած հետազոտության տվյալներով Հայաստանում տարեկան չի ծնվում շուրջ 1400 աղջիկ¹⁴³: Նման երևույթի պատճառը տոհմը շարունակելու նպատակով և տղաների սոցիալապես և տնտեսապես առավել մոբիլ լինելու հանգամանքով պայմանավորված՝ տղա երեխային գերապատվություն տալն է, սեռի ընտրության առաջատար տեխնոլոգիաների առկայությունը, ինչպես նաև ծնելիության անկումը: Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համակարգված քաղաքականություն՝ արդյունավետ օրենսդրական կարգավորումների նախատեսման, թիրախավորված սոցիալական քաղաքականության և խնդրի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների, բուժաշխատողների և ապագա մայրերի հետ անհատական աշխատանքների իրականացման ուղղությամբ:

Որպես սուր համակարգային խնդիր՝ շարունակում է մնալ ընտանեկան բռնության հիմնախնդիրը: Ըստ ՀՀ ոստիկանության պաշտոնական տվյալների՝ 2013թ. ընթացքում գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 580 դեպք: Հասարակական կազմակերպությունների կողմից արձանագրվել է 2013թ. առաջին ինը ամիսների ընթացքում ընտանեկան բռնությունից կանանց մահացության 3 դեպք, որի հետևանքով 6 մանկահասակ երեխա մնացել են առանց մայրական խնամքի: Ընտանեկան բռնության վերաբերյալ լիարժեք վիճակագրություն առկա չէ, քանի որ հստակ տվյալներ չկան բռնության մյուս տեսակների վերաբերյալ, միևնույն ժամանակ, կանայք հաճախ պետական մարմինների նկատմամբ անվստահության, ամոթի, վախի և այլ պատճառներով հրաժարվում են բարձրաձայնել իրենց նկատմամբ բռնության դեպքերի մասին: Ընտանեկան բռնությունը չունի նաև հստակ իրավական կարգավորում: Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվել է ապահովել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի համաժողովի հիմնական հանձնարարականների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների կատարումը, այդ թվում՝ ազգային օրենսդրության համապատասխանեցումը ՀՀ միջազգային փաստաթղթերի պահանջներին, մասնավորապես, «ընտանեկան բռնություն» հասկացության ներառումն իրավական ակտերում: 2013թ. «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է Կառավարություն, սակայն նման օրենքի ընդունումը համարվել է ոչ նպատակահարմար: Վարչապետի կողմից հանձնարարվել է ՀՀ արդարադատության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին, իրավական և դատական բարեփոխումների ծրագրի շրջանակներում համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելիս, ապահովել ընտանեկան բռնության դրսևորումների և դրանց արձագանքելու և կանխարգելելու մեխանիզմների ներառումը: Հատկանշական է, որ ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության բացառման կոմիտեն ՀՀ-ի վերաբերյալ

¹⁴³ «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում» ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն 2013թ.:

դեռևս 2009թ. հաստատված եզրափակիչ հետևություններում մտահոգություն է հայտնել ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին օրենսդրության բացակայության վերաբերյալ և կոչ է արել հատուկ օրենսդրական կարգավորում նախատեսել կանանց նկատմամբ բռնության երևույթի և բռնության զոհերի իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ:

Կանայք խտրականության երևույթին բախվում են նաև աշխատանքային իրավունքների իրականացման ընթացքում: Չնայած այն հանգամանքին, որ բարձրագույն կրթություն ունեցողների մեծ մասը կանայք են, միևնույն ժամանակ, գործազրկությունը կանանց շրջանում այսօր բավականին բարձր է: 2013թ. դեկտեմբերի վերջի դրությամբ միայն պաշտոնապես գրանցված՝ 56.000 գործազուրկների թվից 41.300-ը եղել է կին¹⁴⁴: Նման վիճակագրության պատճառ են հանդիսանում ընտանիքում և հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ կարծրատիպերը, կանանց և տղամարդկանց աշխատանքային իրավունքների իրականացման համար անհավասար հնարավորություններն ու պայմանները, կանանց նկատմամբ խտրական մոտեցումները, ընտանեկան խնդիրներով զերծանրաբեռնվածությունը: Առկա չեն կանանց զբաղվածության ապահովման համար պետական արդյունավետ ծրագրեր, վերահսկողության հստակ մեխանիզմներ՝ ուղղված աշխատանքի ընդունվելիս կանանց նկատմամբ խտրականության բացառմանը, աշխատանքի վայրում սեռական ռոտնձգության դեպքերի բացահայտմանն ու համարժեք պաշտպանության ապահովմանը:

Կանայք ակտիվ մասնակցություն չունեն քաղաքական կյանքին, բավարար չափով ներգրավված չեն պետական կառավարման որոշումների կայացման մակարդակում, գոյություն չունեն քաղաքականության մեջ նրանց ներգրավումը խրախուսող, քաղաքական գործընթացներին մասնակցություն ապահովող վերապատրաստման ծրագրեր: Չնայած իրականացված օրենսդրական որոշ փոփոխությունների¹⁴⁵, կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներում, մի շարք դեպքերում, կրում է ձևական բնույթ, որի պատճառ են հանդիսանում կանանց նկատմամբ անվստահությունը և հասարակության ու իրենց իսկ կողմից ցածր ինքնագնահատականը, քաղաքական ոլորտում տղամարդկանց դերի վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, ընտրական գործընթացներում առկա թերությունները:¹⁴⁶

¹⁴⁴ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին, նախնական տվյալներ (http://www.armstat.am/file/article/sv_12_13a_141.pdf)

¹⁴⁵ Ներկայումս ՀՀ Ընտրական օրենսգրքում նախատեսված թվտան կանանց համար 20% է, նախկին 15% տոկոսի փոխարեն (Կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով հնգյակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը): 2012թ. Ազգային ժողովի ընտրություններն անցկացվեցին արդեն իսկ փոփոխված թվտայով, մինչդեռ կանանց ներկայացվածությունը Ազգային ժողովում էականորեն չփոխվեց՝ 10.68% նախկին՝ 9.2%-ի դիմաց:

¹⁴⁶ ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության բացառման կոմիտեն ՀՀ-ի վերաբերյալ 2009թ. հաստատված եզրափակիչ հետևություններում մտահոգություն է հայտնել նաև կանանց քաղաքական իրավունքների իրականացման վերաբերյալ՝ կոչ անելով պետությանը ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցներն այդ իրավունքների անարգել իրականացման համար, ուշադրություն դարձնելով կարծրատիպային մոտեցումների վերացմանը, ՋԼՄ-ների դերին, կանանց համար վերապատրաստման դասընթացների նախատեսմանը:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների 2013թ. արձանագրվել է թրաֆիքինգի դեպքերի նվազում, իսկ ԱՄՆ պետքարտուղարության կողմից ՀՀ-ը դասվել է առաջին խմբի երկրների շարքին, ինչը նշանակում է, որ թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպմանն ուղղված ջանքերը եղել են նպատակային: Ներկայումս մշակման փուլում է գտնվում նաև «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ՀՀ-ը հանդիսանում է թրաֆիքինգի ծագման երկիր, այդ պատճառով առաջնային է հանդիսանում այս երևույթի կանխարգելմանն ուղղված արդյունավետ միջոցների նախատեսումը: Չնայած ոլորտում արձանագրված առաջընթացին, դեռևս առկա են երևույթի առաջացմանը նպաստող մի շարք պայմաններ՝ աղքատություն, գործազրկություն, սոցիալական ծանր պայմաններ, բավարար հանրային իրազեկման բացակայություն: Որոշակի խնդիրներ կան նաև թրաֆիքինգի գոհերի բացահայտման հետ կապված, քանի որ հաճախ նրանք կամ չեն գիտակցում իրենց կարգավիճակը, կամ խուսափում են հասարակության արձագանքից: Հետևաբար՝ ոլորտի դերակատարների կողմից պետք է շարունակվեն հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված համակարգված աշխատանքների իրականացումը և արդյունավետ ծրագրեր նախատեսվեն գոհերի սոցիալական ինտեգրման համար:

Չնայած այն հանգամանքին, որ պետական ուսումնական հաստատություններում հանրակրթությունն իրականացվում է անվճար հիմունքներով, առկա են որոշակի խնդիրներ կանանց բարձրագույն և հետբուհական կրթության ապահովման ոլորտում: Հաճախ գյուղական համայնքներում կանայք հրաժարվում են բարձրագույն կրթությունից սոցիալական պայմանների, վաղ ամուսնությունների և ընտանիքի սոցիալական հոգսերը հոգալու բեռն իրենց վրա վերցնելու պատճառով: Նման դեպքերի պատճառ են հանդիսանում նաև կնոջ դերի վերաբերյալ հասարակության մեջ առկա մոտեցումները, որոնք հատկապես արտահայտված են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների դեպքում: Կանանց նկատմամբ առկա է որոշակի խտրական վերաբերմունք հետբուհական բարձրագույն կրթության ապահովման բնագավառում, երբ անվճար ուսուցման տեղերի հատկացման հարցում նախապատվությունը տրվում է արական սեռի ներկայացուցիչներին՝ հաշվի առնելով պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման հնարավորությունը:

Առկա են որոշակի խնդիրներ կանանց առողջության պահպանման իրավունքի իրականացման ոլորտում: Դրանք նույնպես հատկապես նկատելի են մարզերում, որտեղ հանրային իրազեկման մակարդակը ցածր է և կանայք բավարար տեղեկացվածություն չունեն վերարտադրողական առողջության պահպանման միջոցների և կարևորության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ներկայիս տղամարդկանց արտագաղթի տեմպերը, կանայք առավել քան խոցելի են սեռավարակների նկատմամբ: Ընթացիկ տարվա 11 ամսվա ընթացքում գրանցված ՄԻԱՎ-ով հիվանդների 52%-ը արտերկրում վարակվածներն են, մոտ 23%-ը՝ նրանց զուգընկերները, այսինքն՝ 75% դեպքում առկա է եղել

միգրացիայի գործուն¹⁴⁷: Այս առումով անհրաժեշտ է շարունակել կանանց և տղամարդկանց շրջանում հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված համակարգված աշխատանքների իրականացումը, միջոցներ ձեռնարկել մարզերի բժշկական հաստատությունների մասնագիտական ռեսուրսների զարգացման և համալրման ուղղությամբ, նվազեցնել հղիության ընդհատման միջոցով ընտանիքի պլանավորման միտումները:

Առկա են բազմաթիվ խնդիրներ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների ապահովման ոլորտում: Առողջապահական ծառայությունները վերջիններիս համար մատչելի չեն կարող համարվել այն պատճառով, որ բուժհաստատությունների մեծ մասի շենքային պայմանները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, նույնը կարելի է ասել կրթական, մշակութային հաստատությունների մասին: Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության բարձր ցուցանիշներն իրենց ուղղակի հետևանքներն են թողնում հաշմանդամ կանանց զբաղվածության ապահովման խնդրի վրա¹⁴⁸: Այս կապակցությամբ հաշմանդամ կանանց հիմնախնդիրների լուծման, մասնավորապես՝ բոլոր իրավունքների իրականացման հավասար հնարավորություններ ապահովելու համար անհրաժեշտ է ձեռնարկել առավել արդյունավետ և գործուն միջոցներ:

¹⁴⁷ <http://www.moh.am/?section=news/open&id=143&mid=2318>

¹⁴⁸ Մանրամասն՝ տես Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների բաժին:

ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1992թ. Հայաստանը միացել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային, վավերացրել է այլ կարևոր միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են հիշյալ կոնվենցիայի երկու կամընտիր արձանագրությունները, Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի մասին, Ջինված բախման մեջ երեխաների մասնակցության մասին, Երեխաների աշխատանքի մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության 182-րդ կոնվենցիան, և այլ միջազգային պայմանագրեր: Դրանց համապատասխան մի շարք բարեփոխումներ են իրականացվել ՀՀ օրենսդրության մեջ: Մշակվել է նաև Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. գործողությունների ազգային ծրագիրը: Չնայած իրավական այս բոլոր կարգավորումների նախատեսմանը՝ այնուամենայնիվ, երեխաների իրավունքների ապահովման ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք պայմանավորված են օրենսդրության կիրառման անարդյունավետ մեխանիզմների բացակայությամբ, անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների ներդրման և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրներով:

Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներից է երեխաների մուրացիկությունը: Սոցիալապես անապահով ընտանիքները հաճախ երեխաներին դրդում են մուրացիկության՝ դրանով երեխային առավել խոցելի դարձնելով բռնության ենթարկվելու համար, զրկելով կրթությունից, նորմալ կենսապայմաններից, վտանգելով նրա կյանքն ու առողջությունը և բնականոն զարգացումը: Չնայած 2013թ. մուրացիկության և թափառաշրջիկության երևույթը կանխարգելելու նպատակով ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ՝ ներկայումս գործում են թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի համար ստեղծված 3 կենտրոններ, իրականացվում են առանձին միջոցառումներ նման երեխաների հայտնաբերման և պաշտպանության ուղղությամբ¹⁴⁹, այնուամենայնիվ խնդիրը դեռևս լուծված համարվել չի կարող: Չկան երկարաժամկետ ծրագրեր, որոնք անհրաժեշտության դեպքում նույնիսկ ամենօրյա աշխատանք կտանեն նման երեխաների և նրանց ընտանիքների հետ, չկա արդյունավետ համագործակցություն պետական իրավասու բոլոր այն մարմինների միջև, որոնք պատասխանատվություն են կրում երեխաների իրավունքների պաշտպանության համար: Արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկվում մարզերում առկա մուրացիկ երեխաների հայտնաբերման և աջակցության նպատակով, այն դեպքում, երբ սոցիալ-տնտեսական խնդիրները մարզերում առավել սուր բնույթ են կրում: Միջոցներ չեն ձեռնարկվում նաև մուրացիկությանը նպաստելուն ուղղված գործողություններից զերծ պահելու նպատակով հանրությանը իրազեկելու վերաբերյալ¹⁵⁰:

2011թ. ՀՀ կառավարության գործունեության գերակա խնդիր համարվող մանկատների բեռնաթափման գործընթացն արդյունավետ կերպով չի իրականացվում: Թեև 2013թ. այս

149 Մանրամասն՝ տե՛ս Զեկույցի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բաժինը

150 2013թ. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ՍՕՍ մանակական գյուղեր հասարակական կազմակերպության հետ համատեղ երեխաների մուրացիկության դեմ պայքարին ուղղված միջոցառումներ է իրականացրել: Մասնավորապես իրականացվել է քայլերը և նկարահանվել է սոցիալական գովազդ, որի նպատակն էր հանրությանը իրազեկել խնդրի վերաբերյալ, ինչպես նաև բացատրել, որ մուրացիկ երեխաներին փողոցում գումար տալով, ոչ թե օգնում, այլ նպաստում են նրանց իրավունքների ոտնահարմանը:

ուղղությամբ իրականացվել են որոշակի միջոցառումներ¹⁵¹, վերակազմակերպվել են որոշ խնամքի հաստատություններ, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը մինչ օրս արդյունավետ կերպով չի ապահովվում: Հաշմանդամություն չունեցող երեխաների համար նախատեսված մանկատներում երեխաների թվի նվազման հետ մեկտեղ մասնագիտացված մանկատներում այն յուրաքանչյուր տարի ավելանում է՝ պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ: Հաճախ հաշմանդամություն ունեցող երեխաները մնում են խնամքի հաստատություններում նույնիսկ ավարտելուց հետո, բնակարանային խնդիրների, ինչպես նաև հասարակությանը լիարժեք ինտեգրման ծրագրերի և պայմանների բացակայության պատճառով, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները որոշ դեպքերում տեղավորվում են հոգեբուժարաններում¹⁵²:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման նպատակով 2007թ. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ սկսվեց իրականացվել խնամատար ընտանիքների ներդրման ծրագիրը, որի շրջանակներում ընտրվեցին 20 խնամատար ընտանիքներ: 2012թ. այս գործընթացը ստանձնել է ՀՀ կառավարությունը, սակայն մինչ օրս խնամատար ընտանիքների թվի ավելացման համար բյուջետային հատկացումներ այդպես էլ չեն նախատեսվել: Խնամատար ընտանիքների թիվը չավելանալու փաստը պայմանավորված է նաև հասարակության իրազեկված չլինելու և առկա միջոցները ոչ արդյունավետ և նպատակային օգտագործելու հանգամանքներով¹⁵³:

Այսօր որոշակի խնդիրներ առկա են նաև երեխաների որդեգրման գործընթացի հետ կապված: Այն կարգավորվում է ՀՀ կառավարության 2010թ. մարտի 18-ի թիվ 269-Ն որոշմամբ, որով սահմանվում է որդեգրման կարգը: Այսպես, որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմերը իրենց ենթակայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով: Պետք է նշել, որ այս գործընթացում ևս առկա են որոշակի թերություններ: Մասնավորապես, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները հիմնված են ծնողների նյութական վիճակի, այլ ոչ թե ծնողավարման հմտությունների վրա: Մեկ այլ խնդիր կապված է նաև որդեգրման գործընթացի թափանցիկության հետ: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն 2013թ. եզրափակիչ

¹⁵¹ 2013 թվականի ընթացքում Լոռու մարզում 25 երեխայի մուտքը հաստատություններ կանխարգելվել է, իսկ 25 երեխա հաստատություններից վերադարձել է ընտանիք:

¹⁵² Այս մասին մտահոգություն է հայտնել նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական գեկույցի վերաբերյալ:

¹⁵³ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խնամատար ընտանիքներում երեխայի խնամքի կազմակերպումն առավել քիչ ծախսատար կարող է լինել պետության համար: Երեխային մանկատանը պահելու համար տարեկան ծախսում է շուրջ 4000 ԱՄՆ դոլլար, իսկ խնամատար ընտանիքների ծրագրի արդյունավետ իրագործման դեպքում պետությունը կարող է տարեկան տնտեսել 1 մլն 800 հազար ԱՄՆ դոլլար, քանի որ այս դեպքում երեխայի համար ընտանիքին մեկ ամսվա համար հատկացվում է 87 000 ՀՀ դրամ, որն էլ կազմում է տարեկան մոտ 2700 ԱՄՆ դոլլար:

հետևություններով մտահոգություն է հայտնել խնդրի վերաբերյալ՝ արձանագրելով, որ որդեգրման գործընթացին մասնակցող սուբյեկտների մասնավոր գաղտնիքի պաշտպանությունն օգտագործվում է պատճառաբանելու որդեգրման գործընթացի մշտադիտարկման սահմանափակումները: Այս կապակցությամբ պետք է արդյունավետ մեխանիզմներ ստեղծել որդեգրման գործընթացի անկախ մշտադիտարկման իրականացման համար, ինչպես նաև սահմանել որդեգրող ծնողների համար հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն այնպիսի պայմանների վրա, որոնք հնարավորություն կընձեռեն երեխային ապրելու ապահով և առողջ միջավայրում:

Հայաստանում առկա չէ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման պրակտիկա¹⁵⁴: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մոնիթորինգային այցերի արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրում, որպես կանոն, տեղի չի ունենում: Հաշմանդամ երեխաներ որդեգրած ընտանիքների համար որպես խրախուսման միջոց սահմանված չեն ֆինանսական արտոնություններ, երեխայի առանձնահատուկ կարիքները հոգալու համար բավարար պետական ֆինանսական աջակցություն, վերականգնողական և խնամքի ծառայություններ: Հասարակության հետ հաշմանդամ երեխաների որդեգրման վերաբերյալ հանրային իրազեկման բավարար աշխատանքներ չեն իրականացվում:

Հայաստանում դեռևս հանդիպում են երեխայի ծնունդը չգրանցելու դեպքեր, որոնց իր գործունեության ընթացքում առնչվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանը: Պատճառները տարբեր են. ծնողների անձը հաստատող փաստաթղթերի բացակայություն, տնային ծննդաբերություններ, որոնք հետագայում չեն գրանցվում, ծնողների կողմից դրա անհրաժեշտությունը չգիտակցելը, հաշվառման վայր չունենալու հետևանքով անձնագրավորված չլինելը և այլն: Երեխայի ծնունդը գրանցված չլինելու հանգամանքը հանգեցնում է մի շարք սահմանափակումների՝ առողջապահական ծառայություններից և պետական սոցիալական աջակցությունից օգտվելու, նախադպրոցական և դպրոցական հաստատություններ հաճախելու, ազատ տեղաշարժի իրավունքը իրականացնելու հարցում: Այսօր ՀՀ-ում բացակայում են ծննդյան վկայական չունեցող երեխաների վերաբերյալ միասնական վիճակագրական տվյալները, ինչն էլ ավելի դժվար է դարձնում նման դեպքերի բացահայտումը և ծնողներին համապատասխան աջակցության տրամադրումը:

Օրենսդրական բացերի, ինչպես նաև ձևավորված իրավակիրառ պրակտիկայի հետևանքով երեխաների իրավունքների պաշտպանության լուրջ հիմնախնդիրներ են առաջանում ծնողների միջև առկա վեճերի դեպքում: Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ դատարանի վճռով երեխայի խնամքը հանձնվում է ծնողներից մեկին, սակայն Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների կողմից չեն ապահովվում դատական ակտերի կատարումը: Հստակ իրավական կարգավորում չունեն նաև այն

¹⁵⁴ Մանրամասն՝ տե՛ս Զեկույցի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժինը

դեպքերը, երբ չկա դատարանի համապատասխան վճիռ երեխայի խնամքը ծնողներից որևէ մեկին հանձնելու վերաբերյալ, սակայն նրանցից մեկը թույլ չի տալիս երեխային շփվել մյուս ծնողի հետ: Նման դեպքերում շատ հաճախ խնդրի լուծմանը հրաժարվում են ներգրավվել Խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ պատճառաբանելով որ իրենք բավարար լիազորություններ չունեն, ինչպես նաև Ոստիկանությունը՝ պատճառաբանելով, որ ծնողի արարքը չի կարող որակվել որպես առևանգում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 167 հոդվածը՝ ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ փոխելը, այս դեպքում կիրառելի չէ:

Երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված բազմաթիվ խնդիրներ առկա չէին լինի, եթե արդյունավետ կերպով գործեին համայնքներում ընտանիքների և, հատկապես, երեխաների հետ անմիջական աշխատանք իրականացնող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները: Հիշյալ հանձնաժողովների վրա պետության կողմից դրված են չորս տասնյակից ավելի երեխայի իրավունքների և շահերի համար ծայրահեղ կարևոր նշանակություն ունեցող գործառույթներ¹⁵⁵, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական կարողություններ և համապատասխան ռեսուրսներ, մինչդեռ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները գործում են հասարակական հիմունքներով, իսկ սոցիալական աշխատողների ներգրավումը հանձնաժողովի կազմում կրում է հայեցողական բնույթ:

Գոյություն ունեն մի շարք խնդիրներ երեխաների նախադպրոցական և դպրոցական կրթության կազմակերպման հետ կապված: Միջոցներ չեն ձեռնարկվել նախադպրոցական հաստատությունների գերբեռնվածության խնդիրը արդյունավետ կերպով լուծելու համար: Թեև խմբերում երեխաների թիվը հնարավորինս համապատասխանեցվել է օրենսդրությամբ սահմանված պահանջներին, սակայն որևէ առարկայական լուծում չի տրվել հերթացուցակներում ընդգրկված երեխաների նախադպրոցական կրթությունը կազմակերպելու հարցին, այս երեխաները տևական ժամանակահատվածով կարող են ընդգրկված մնալ ցուցակներում, ընդհուպ մինչև դպրոցական տարիքի հասնելը: Այս խնդիրը Պաշտպանի կողմից բարձրացվել է դեռևս 2012թ.: Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ կատարվում են գույքագրման աշխատանքներ վարձակալությամբ այլ կազմակերպություններին հանձնված մանկապարտեզներին պատկանող տարածքները ետ վերադարձնելու խնդրի լուծման նպատակով: Երկու տարի անց, սակայն, կարող ենք արձանագրել, որ քաղաքապետարանի կողմից գործուն քայլեր չեն ձեռնարկվել այս խնդրի լուծման ուղղությամբ¹⁵⁶:

Հայաստանում այսօր առկա երեխաների աղքատության մեծ ցուցանիշներն իրենց ազդեցությունն են ունենում նաև երեխաների կրթության իրավունքի իրականացման վրա:

¹⁵⁵ ՀՀ կառավարության 24.02.2011թ. թիվ 164-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. ոհմիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում

¹⁵⁶ Մանրամասն՝ տե՛ս Զեկույցի՝ Երևանի քաղաքապետարանի բաժնում:

Սոցիալապես անապահով մի շարք ընտանիքների երեխաներ դպրոց չեն հաճախում գրենական պիտույքներ, հագուստ և անհրաժեշտ այլ պարագաներ չունենալու պատճառով: Կան դեպքեր, երբ ծնողները թույլ չեն տալիս նրանց սովորել, որպեսզի կարողանան աշխատել և որևէ կերպ նպաստել ընտանիքի գոյատևմանը: Խնդիրն առավել սուր արտահայտված է մարզերում: Այս առումով պետք է նշել, որ չնայած ձեռնարկված որոշակի միջոցառումներին¹⁵⁷, այնուամենայնիվ խնդիրն ամբողջովին լուծված համարել չենք կարող: Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և աջակցության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է, ձևավորել արդյունավետ համագործակցություն երեխայի խնամքի և պաշտպանության համար պատասխանատու մարմինների միջև, քանի որ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում հայտնի են դարձել դեպքեր, երբ դպրոցական տարիքի երեխաները կրթությունից դուրս են մնացել, իսկ համայնքում գործող երեխաների պաշտպանության համար պատասխանատու մարմինները առհասարակ տեղեկացված չեն եղել խնդրին:

Կրթության իրավունքի ապահովման խոչընդոտներից են նաև մի շարք դպրոցների շենքային պայմանները, որոնք հաճախ վտանգ են ներկայացնում նույնիսկ երեխաների կյանքի և առողջության համար: Խնդրի վերաբերյալ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ քաղաքաշինության նախարարը հայտնել էր, որ Հանրապետությունում շուրջ 1500 դպրոցներից հիմնանորոգման կարիք ունեն 1100-ը, որոնցից առաջնահերթ են համարվում 589 կրթական օբյեկտներ: 2014թ. շինանրարական աշխատանքներ նախատեսվում են իրականացնել միայն 52 կրթական օբյեկտներում, հետևաբար չնայած պետության կողմից ձեռնարկվող որոշակի քայլերին, խնդրի վերջնական լուծում դեռևս հնարավոր չէ ակնկալել:

ՀՀ-ում դեռևս ներդրված չէ անչափահասների արդարադատության համակարգ: Առկա են խնդիրներ նաև անչափահաս դատապարտյալների կրթության իրավունքի ապահովման ոլորտում: Պաշտպանի կողմից մի շարք դեպքերում բողոքներ են ստացվում Ոստիկանությունում անչափահասների նկատմամբ վատ վերաբերմունքի¹⁵⁸, առանց ծնողի իմացության Ոստիկանության բաժիններ բերման ենթարկելու, նրանց հարցաքննելու դեպքերի վերաբերյալ:

Երեխաների իրավունքների պաշտպանության մի շարք հիմնախնդիրներ առկա են երեխաների խնամքի հաստատություններում՝ մանկատներում, գիշերօթիկ հաստատություններում և հատուկ հանրակրթական դպրոցներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմը մոնիթորինգային այցերի ընթացքում արձանագրել է տվյալ հաստատություններում առկա ոչ բարեկարգ պահման և խնամքի պայմաններ (թիվ 2 հատուկ հանրակրթական դպրոցի

157 ՀՀ բոլոր մարզերի պետական հանրակրթական դպրոցներում գործում է «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը», որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր աշակերտի մասին հավաքագրված անձնավորված տեղեկատվությունը կուտակել մեկ միասնական տեղեկատվական շտեմարանում, վերահսկել աշակերտի դպրոցից դպրոց տեղափոխության գործընթացը: Այս համակարգը միաժամանակ հնարավորություն է ընձեռում դիտարկել դպրոցից դուրս եկող աշակերտների շարժը: Համակարգը ներկայումս տեղադրված է 1386 դպրոցներում:

158 Մանրամասն՝ տե՛ս Զեկույցի՝ ՀՀ Ոստիկանության բաժնում

տանիքը վթարային է, առաստաղներն ու պատերը խոնավ): Առկա է նաև ոչ բավարար կահավորման խնդիր (հնամաշ մահճակալներ, անհատական պահարանների բացակայություն, հնամաշ և կոտրված խոհանոցային կահույք ու սպասք, պահարանների բացակայություն պահեստում և այլն), խաղասենյակները և դասապատրաստման սենյակները պատշաճ կահավորված չեն, նույնիսկ առկա է ոչ բավարար լուսավորություն:

Մտահոգիչ են սննդամթերքի պահման անվտանգության պայմանները: Օրինակ, Բյուրեղավանի դպրոց թվով 3 անգամ կատարած այցերի ընթացքում արձանագրվել են տարբեր սննդամթերքների (կաթնամթերք, մսամթերք) պահման ժամկետների և ռեժիմի խախտումներ, անգամ բորբոսնած, ոչ պիտանի ծիրանի պահածոներ, իսկ Սպիտակի թիվ 1 հատուկ հանրակրթական դպրոցում հանդիպել է օգտագործվող, սակայն ժամկետանց բուսական յուղի մեծ քանակություն: Դրա հետ մեկտեղ բացակայում է պատշաճ վերահսկողությունը բարեգործական նպատակներով տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի պատշաճ պահման և երեխաներին, ըստ անհրաժեշտության, համապատասխան իրերի տրամադրման նկատմամբ (Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ հանրակրթական դպրոցում երեխաներին օգտագործման համար տրամադրվել էր ժամկետանց ատամի մածուկ):

Խնդրահարույց է բուժօգնության տրամադրման միջոցով առողջության ապահովման խնդիրը, քանի որ դիտարկվող հաստատություններում բուժանձնակազմը չունի հստակ գործառնություններ, չափորոշիչներ, որի պատճառով դժվար է գնահատել նրանց աշխատանքը (առկա է ժամկետանց դեղորայք, որոշ հաստատությունների բուժմասերի առանձնացված մեկուսացման սենյակները նպատակային չեն օգտագործվում): Ավելին, որոշակի խնդիրներ են առաջանում բժշկական նեղ մասնագետների խորհրդատվության պատշաճ կազմակերպման կապակցությամբ, քանի որ երեխաների բուժապասարկումն իրականացվում է ըստ բնակության վայրի, սակայն, հաճախ այդ վայրը գտնվում է համապատասխան հաստատությունից հեռու (երեխաները տուն են վերադառնում հանգստյան օրերին, երբ սպասարկող տեղամասային բուժամբուլատորիան չի գործում, իսկ դպրոցի տարածքը սպասարկող բուժհաստատությունը համապատասխան պայմանագրերի բացակայության պատճառով մերժում է երեխաների բուժապասարկումը):

Առկա է նաև երեխաների նկատմամբ անհատական մոտեցման, անհրաժեշտ բժշկահոգեբանամանկավարժական կարիքների գնահատման պատշաճ վերահսկողության բացակայության խնդիր, ինչի հետևանքով հատուկ հանրակրթական դպրոցներում մի շարք դեպքերում սովորում են երեխաներ, ովքեր մտավոր զարգացման հետ կապված խնդիրներ չունեն և կարող են հաճախել ընդհանուր հանրակրթական դպրոցներ:

ԽՏՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՂՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու՝ գրեթե բոլոր իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերը պարունակում են խտրականության բացառման և հավասար իրավունքների ապահովման հիմնարար սկզբունքները: Ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ գործնականում ամեն տեսակի խտրական դրսևորումների բացառումից զատ պետությունները նաև պարտավոր են ձեռնարկել գործուն քայլեր տարբեր խմբերի ինտեգրման և հասարակության մեջ հանդուրժողականություն սերմանելու ուղղությամբ: Հավասար հնարավորությունների և պայմանների ստեղծման, հանդուրժողականության ամրապնդման համատեքստում միջազգային հանրության ուշադրությունը ավանդաբար եղել է հասարակության մեջ առավել խոցելի խմբերի պաշտպանության հարցի վրա, ինչպիսիք են, օրինակ՝ ազգային, կրոնական, սեռական փոքրամասնությունները, քանի որ վերջիններիս՝ բնակչության մեծամասնության կողմից խտրականության ենթարկվելու վտանգն առավել բարձր է:

1. Համաձայն 2011 թվականի մարդահամարի տվյալների՝ Հայաստանի ընդհանուր բնակչությունը կազմում է 2.773.266 մարդ, որոնցից հայեր են՝ 2.721.414-ը, եզդիներ՝ 31.600-ը, ռուսներ՝ 11.179-ը, ասորիներ՝ 2.528-ը, քրդեր՝ 1.894-ը, ուկրաինացիներ՝ 1.137-ը, հույներ՝ 849-ը, վրացիներ՝ 593-ը, պարսիկներ (իրանցիներ)՝ 447-ը, այլ՝ 1533-ը, հրաժարվել են պատասխանել՝ 92-ը ¹⁵⁹: Հայաստանում շարունակում են բնակվել նաև բելառուսական, լեհական, հրեական և գերմանական համայնքներ:

ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների Համակարգող խորհուրդը ստանում է պետական դրամաշնորհ՝ նախկինում 10 մլն դրամի չափով, որը հետագայում դարձել է 20 մլն դրամ, սակայն այդ գումարից 10 մլն բաշխվում է հավասարապես բոլոր 11 համայնքների միջև՝ չնայած նրան, որ ըստ համայնքների չափերի՝ համայնքները ունեն տարբեր կարիքներ: Իսկ մնացած 10 մլն դրամը տրամադրվում է համայնքներին իրենց նախաձեռնությունների և միջոցառումների լրացուցիչ ֆինանսավորման կարիքի դեպքում: Որոշ օգնություն են ստանում նաև այն փոքրամասնությունները, որոնք ունեն պետականություն և ստանում են աջակցություն իրենց էթնիկական պատկանելության պետությունից, օրինակ՝ ռուսները, հույները, լեհերը և այլոք:

Չնայած նրան, որ ազգային փոքրամասնություններն իրենց կոմպակտ բնակության վայրերում ունեն համայնքային դպրոցներ, որտեղ սովորում են իրենց ազգային լեզուն, այնուամենայնիվ դեռևս չկան իրենց լեզուներով գործող նախադպրոցական հաստատություններ: Առանձին համայնքներում ցածր է երեխաների կրթության մակարդակը, իսկ աղջիկ երեխաների շրջանում, կախված տվյալ համայնքի ավանդույթներից և սովորույթներից, հաճախ են հանդիպում վաղ ամուսնությունները, ինչի պատճառով երեխաները դուրս են մնում կրթական գործընթացից և չեն հաճախում դպրոց¹⁶⁰:

¹⁵⁹ <http://armstat.am/file/doc/99478368.pdf>

¹⁶⁰ ԵՄ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի Հայաստանի վերաբերյալ զեկույց, 2010 /չորրորդ մոնիթորինգային շրջան/

Հայաստանում բնակվող ռուսախոս համայնքները (ռուսներ, բելառուսներ, ուկրաինացիներ և այլոք), մշտապես հայտնել են իրենց դժգոհությունն առ այն, որ իրենց ծննդյան և ամուսնության վկայականներում իրենց լեզվով ազգանուններն ու հայրանունները գրվում են ըստ հայերենի քերականության կանոնների, ինչը չի համապատասխանում ռուսերեն լեզվի կանոններին և տառադարձությանը /տրանսկրիպցիային/: Նշվածի հետևանքով, նրանք հանդիպում են խոչընդոտների իրենց փաստաթղթերն այլ լեզուներով թարգմանելու ժամանակ, քանի որ իրենց հայրանունները գրվում են հայերենի հոլովման կանոններով /օրինակ՝ Իվանի/: Անհրաժեշտ է, որ պետության կողմից ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ այս հարցի կարգավորման համար¹⁶¹:

Ազգային փոքրամասնությունների համայնքային դպրոցներն ունեն իրենց ազգային լեզվի մասնագետների պակաս, ինչպես նաև մասնագետների որակավորման անբավարար մակարդակ:

2013 թվականի ընթացքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումների վերլուծությունից պարզ է դառնում, որ նրանց իրավունքների խախտումները, եթե եղել են այդպիսիք, առավելապես կրել են ընդհանուր բնույթ և կապված չեն եղել նրանց ազգային կամ էթնիկ պատկանելության հետ (օրինակ՝ բնակարանային խնդիրներ, սոցիալական ծառայությունների ոլորտում հանդիպող դժվարություններ, ՀՀ դատական մարմինների կողմից կայացված դատական ակտերից դժգոհություններ և այլն): Այդ բողոքների մեծամասնությունը պայմանավորված է երկրում առկա սոցիալ-տնտեսական պայմաններով, որոնք պահանջում են ընդհանրական լուծումներ: Նույնաբովանդակ բողոքներ Պաշտպանին ներկայացվում են նաև ազգությամբ հայերի կողմից:

2. Ըստ 2011 թվականի մարդահամարի տվյալների՝ Հայաստանում Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդների թիվը կազմում է ճնշող մեծամասնություն, այնուհետև ըստ թվաքանակի՝ գերակշռում են Ավետարանական, ՇարՖադիական, Կաթոլիկ, Եհովայի վկա, Ուղղափառ եկեղեցուկազմակերպության հետևորդները:

Փոքրամասնություն կազմող կրոնական կազմակերպությունների և նրանց անդամների նկատմամբ հասարակության վերաբերմունքը հիմնականում շարունակում է մնալ բացասական, իսկ հաճախ՝ նույնիսկ անհանդուրժող: Կրոնական կազմակերպություններին կոչում են «աղանդներ»¹⁶², որն ունի բացասական նշանակություն և ընկալվում է՝ որպես

¹⁶¹ ԵՄ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառումը Հայաստանում, 3-րդ մոնիթորինգային շրջան, հունվարի 15, 2014 թվական:

ԵՄ Նախարարների կոմիտեի բանաձև (2012, փետրվարի 1) Հայաստանի կողմից Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ շրջանակային կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ

¹⁶² Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է «աղանդ» եզրույթին՝ համարելով, որ այն ցույց է տալիս, որ տվյալ կրոնական համայնքը չունի նույն իրավունքներն ու կարգվիճակը, ինչ մեկ այլ «հիմնական» կրոնական ուղղություն: http://www.echr.coe.int/Documents/Research_report_religion_ENG.pdf

շեղում հիմնական ուղղվածությունից, ովքեր, իրենց պնդմամբ, պառակտում են ազգը, ապագային արժեքներ տարածում, վնասում ազգային անվտանգությանը և այլն¹⁶³:

Մյուս կողմից, անհանգստացնում է, որ Հայաստանում գործող առանձին խմբեր, քաղաքացիների վրա ճնշումներ գործադրելով, իրենց մասին սուտ տվյալներ ներկայացնելով և քաղաքացիներին մոլորեցնելով, թիրախավորում են բնակչության սոցիալապես առավել խոցելի խմբերի ներկայացուցիչներին՝ իրենց շարքերը համալրելու նպատակով: Բացի այդ, նման խմբերը օգնության անվան տակ տրամադրվող նյութական/սոցիալական բնույթի առավելությունը կամ անձի նյութական և հոգեբանական կախվածությունն օգտագործում են նրան խմբում ներգրավելու համար, ինչպես նաև հաճախ հոգեբանական ներգործության միջոցով իրենց անդամներին դրդում են գումարներ վճարել կազմակերպությանը: Քաղաքացիների մոլորեցման պատճառ է նաև նման քաղաքացիների անբավարար իրազեկվածությունն այսպիսի խմբերի գործունեության մասին: Նման երևույթները կանխելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակ սահմանել «հոգևորություն» եզրույթը /ոչ պատշաճ պրոսեկյուտիվը/, որով հնարավոր կլինի, մի կողմից, պաշտպանել քաղաքացիներին նման խմբերի բացասական ազդեցությունից, մյուս կողմից, չսահմանափակել այլ կազմակերպությունների խղճի ազատությունը և սեփական համոզմունքները տարածելու իրավունքը: Նման սահմանում նախատեսված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքի նոր նախագծի մեջ:

Մեկ այլ խնդիր է, որ բնակչության մեծամասնությունը ներկայացնող եկեղեցու որոշ ներկայացուցիչներ և հետևորդներ, ցանկանալով պահել Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդներին և ներառել նոր անդամների, առանձին դեպքերում տարածում են անհանդուրժողականություն այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Մինչդեռ, հետևորդների ներգրավման առավել արդյունավետ միջոց է տվյալ եկեղեցին ներկայացնող հոգևորականների պատշաճ վարքը և եկեղեցու համապատասխան սոցիալական ակտիվությունը:

Կրոնական տարբեր կազմակերպությունների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը, ատելության կոչերը հաճախ լուսաբանվում են զանգվածային լրատվության միջոցներով՝ ներկայացնելով վերջիններին որպես ազգային անվտանգության սպառնալիք: Այս առումով պետության կողմից չեն ձեռնարկվում անհրաժեշտ միջոցներ խտրականության վերացման և հավասար իրավունքների ապահովման, ինչպես նաև մամուլում ատելության և անհանդուրժողականության կոչերի բացառման ուղղությամբ¹⁶⁴:

Ստացվել են բազմաթիվ բողոքներ, որ կրոնական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ շարունակաբար այցելում են քաղաքացիների տներն իրենց կրոնական

¹⁶³ ԱՄՆ Պետական Դեպարտամենտի Մարդու իրավունքների վերաբերյալ զեկույց, 2013 <http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?year=2013&dldid=220251#wrapper>

¹⁶⁴ <http://www.state.gov/j/drl/rls/irf/religiousfreedom/index.htm#wrapper>

համոզմունքները քարոզելու համար, որոնք, առանձին դեպքերում, վերածվում են հետապնդման և ճնշումների: Այս հարցը նույնպես դեռ օրենսդրությամբ կարգավորված չէ:

Հայաստանում բարեփոխվել է այլընտրանքային զինվորական և այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու պայմանները, ինչն էական առաջընթաց է ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում 2013 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում այլընտրանքային զինվորական ծառայության տևողությունը կրճատվեց՝ դառնալով 30 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը՝ 36 ամիս, ինչը համաչափ է մարդու իրավունքների տեսանկյունից և համապատասխանում է միջազգային նորմերին, այն է՝ այլընտրանքային ծառայության ժամկետը մեկ ու կես անգամից ավել չի կարող գերազանցել զինվորական ծառայությունը¹⁶⁵: Բացի այդ նաև հստակ սահմանվել են այլընտրանքային աշխատանքային ծառայության պայմանները, որոնք տարածվում են այն անձանց վրա, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայության անցնելը: Ընդ որում, այլընտրանքային աշխատանքային ծառայության նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն, ինչը համապատասխանում է ՀՀ կողմից վավերացված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի պահանջներին:

Մի շարք իրավապաշտպաններ մտահոգություն են հայտնում հանրակրթական դպրոցներում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի կողմնակալ բնույթի վերաբերյալ: Մասնավորապես, Հայ Առաքելական Եկեղեցին իրավունք ունի մասնակցելու նշյալ դասընթացի ուսումնական ծրագրի և դասագրքերի մշակմանը, սահմանել չափանիշներ առարկայի ուսուցիչների ընտրության համար: Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր ուղղված հանրակրթական դպրոցներում տարբեր կրոնների և դավանանքների նկատմամբ հանդուրժողականության տարածմանը, տպագրել և հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ոլորտի մասնագետների շրջանում տարածել Թուլեդոյի ուղղորդող սկզբունքները:

Երևանի քաղաքապետարանը և մի քանի այլ համայնքներ ձեռնարկել են միջոցներ փողոցներում փակցված աստելության կոչերով լի թռուցիկների վերացման ուղղությամբ, որտեղ թիրախավորվում են կոնկրետ կրոնական կազմակերպություններ և կոչեր են արվում պայքարել դրանց դեմ:

Հասարակության մեջ շարունակում է գերիշխել բացասական վերաբերմունքը սեռական փոքրամասնությունների նկատմամբ՝ նույնասեռականությունը դիտարկելով որպես հիվանդություն, մինչդեռ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (WHO) 1990 թվականից ի վեր չի համարում նույնասեռականությունը հիվանդություն:

¹⁶⁵ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե, Եզրակացություններ 2008, Էստոնիա, կետ 1.2, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագիտական կարծիք օրենքի նախագծի վերաբերյալ, Վարշավա, մայիսի 2, 2012

Նույնասեռականները հաճախ մեկուսացվում են հասարակության կողմից, ենթարկվում խարանի աշխատավայրում, կրթական հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում և այլ հաստատություններում: Իսկ իրենց ինքնությունը կամ սեռական կողմնորոշումը բացահայտած՝ նույնասեռականները խուսափում են պարտադիր զինվորական ծառայությունից՝ սովորաբար հոգեկան առողջության խնդիրների հիմնավորմամբ:

Մի շարք տրանսգենդեր անձինք պարբերաբար զբաղվել են պոռնկությամբ և ունեցել սեռական հարաբերություններ Երևանի Ն. Ստեփանյանի անվան մանկական զբոսայգու (առավել հայտնի՝ որպես Կոմայգի) տարածքում¹⁶⁶: Ինքնին անօրինական այս երևույթը իրենից երկակի վտանգ է ներկայացնում. մի կողմից, Ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի անգործության հետևանքով չեն կանխվում մանկական այգում տեղի ունեցող անօրինականությունները, որոնք վտանգում են հասարակության առողջությունն ու բարոյականությունը, իսկ մյուս կողմից, շարունակվող անօրինականությունները բնակչության մոտ ծնում են հումֆոբիա և վատթարացնում հասարակության ունեցած առանց այն էլ բացասական կարծրատիպերը սեռական փոքրամասնությունների վերաբերյալ:

¹⁶⁶ Մանրամասների համար տես՝ Ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի բաժինը:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի և 1967թ. Արձանագրության անդամ պետություն: ՀՀ-ը միացել է նաև 1954թ. Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակին վերաբերող և 1961թ. Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիաներին: 2008թ. ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, որն, ըստ էության, համապատասխանում է պետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի պահանջներին:

Այնուամենայնիվ, ՀՀ-ում փախստականները շարունակում են բախվել լուրջ սոցիալական խնդիրների հետ: Մինչ օրս լուծված չեն 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների բնակարանային խնդիրները¹⁶⁷: Թեև ընթացիկ տարում ՀՀ կառավարության որոշումների հիման վրա 20 փախստական ընտանիքների նվիրաբերվել են իրենց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները, «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի տնօրինության ենթակա հանրակացարաններում թվով 64 ընտանիքներ սեփականաշնորհել են զբաղեցրած բնակելի տարածքները¹⁶⁸, սակայն, ըստ պաշտոնական տվյալների, ներկայումս ՀՀ-ում բնակվում են բնակապահովության առաջնային կարիք ունեցող Ադրբեջանից բռնագաղթած 924 փախստական ընտանիքներ: Այս ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով 2009 թվականից ՀՀ պետական բյուջեով որևէ ֆինանսավորում չի նախատեսվել:

Բացի բնակարանային ապահովման առաջնային կարիք ունեցող վերոգրյալ անձանցից, առկա է նաև վարձակալությամբ կամ այլ վայրերում բնակվող փախստականների ստվար գանգված, որի բնակարանային ապահովության հարցի լուծումը նախատեսված չէ Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով: Ավելին, բազմաթիվ փախստական ընտանիքներ բնակվում են հանրակացարաններում, որոնց շենքային պայմանները, շատ դեպքերում, վթարային են, գուրկ են տարրական կենցաղային պայմաններից, հետևաբար, նույնիսկ բռնագաղթումից 25 տարի անց, այս անձինք հաճախ կանգնում են տարրական կենսական պայմանների ապահովման խնդրի առջև:

2013թ. Միգրացիայի պետական ծառայություն է դիմել 320 օտարերկրացի, որոնցից 290-ը ժամանել են Սիրիայից¹⁶⁹, նրանցից փախստական են ճանաչվել և ապաստան են ստացել 226-ը¹⁷⁰: Հայաստան ժամանած սիրիահայերի աջակցության համար պետության կողմից ձեռնարկվել են որոշակի միջոցներ՝ քաղաքացիության, աշխատանքի թույլտվության, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով վարկերի տրամադրման, անվճար բուժօգնություն և կրթություն ստանալու հնարավորությունների ապահովման

¹⁶⁷ Մանրամասն տես՝ Տարածքային կառավարման նախարարության բաժին:

¹⁶⁸ ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության հաշվետվություն, 2013թ.

¹⁶⁹ http://www.smsmta.am/upload/Tarekan_2013.pdf

¹⁷⁰ Մյուսների դիմումները գտնվում են քննարկման փուլում

կապակցությամբ: 2013թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ հանդիպման ժամանակ սիրիահայ փախստականները հիմնականում բարձրացրել են աշխատատեղերի բացակայությամբ պայմանավորված զբաղվածության ապահովման խնդիրները, ինչպես նաև աշխատանքով ապահովված լինելու դեպքում՝ ցածր վարձատրության խնդիրները, որոնք հնարավորություն չեն տալիս վերջիններիս կացարանից հեռանալու և ծախսերը ինքնուրույն հոգալու համար:

Փախստականների իրավունքների ապահովման տեսանկյունից առկա է որոշակի վտանգ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ չգտնվող կացարաններում փախստականների տեղավորման դեպքերում: Գործող օրենսդրությամբ նման դեպքերի համար առանձին իրավական կարգավորում չի նախատեսվում, ինչն էլ հանգեցնում է որոշակի խոչընդոտների՝ վերջիններիս իրավունքների ապահովման նկատմամբ լիարժեք պետական վերահսկողության իրականացման համար: Հետևաբար, անհրաժեշտ է որոշակի կարգավորում նախատեսել՝ պետության և փախստականներին կացարան տրամադրող ոչ պետական կազմակերպությունների միջև, սահմանելով փոխադարձ իրավունքներ և պարտականություններ և ապահովել վերահսկողության մեխանիզմների կիրառումը նման հաստատություններում բնակվող փախստականների իրավունքների պաշտպանության նպատակով:

Հաջորդ խնդիրն առնչվում է փախստականների սոցիալ-տնտեսական իրավունքների իրականացման հարցերին: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փախստականներն ունեն շարժական գույքի ձեռք բերման, անշարժ գույքի վարձակալության, աշխատանք փնտրելու և աշխատելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ընդհանուր կրթության, սոցիալական և բժշկական ծառայություններից ՀՀ քաղաքացիներին հավասար օգտվելու իրավունքներ, սակայն հաշվի առնելով նրանց սոցիալապես խոցելի լինելու հանգամանքը, սահմանված իրավական երաշխիքները բավարար չեն վերջիններիս հասարակությանը լիարժեք ինտեգրման համար:

Փախստականի կարգավիճակի սահմանման հարցազրույցի ժամանակ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ Միգրացիոն պետական ծառայությունը բավարար չափով հայերեն չտիրապետող ապաստան հայցողներին պարտավոր է անվճար հիմունքներով թարգմանիչ տրամադրել, իսկ ցանկության դեպքում, ապաստան հայցողն իր հաշվին իրավունք ունի օգտվելու այլ թարգմանիչ ծառայությունից: Թարգմանչական ծառայությունների տրամադրման դեպքերում որոշակի դժվարություններ են առաջանում մասնագիտական տերմինաբանության օգտագործման, փախստականներին բնորոշ իրավիճակի վերաբերյալ տեղեկացվածության և իրենց դերի հստակեցման հետ կապված: Գործնականում եղել են դեպքեր, երբ թարգմանություն իրականացնելիս ասվածի բովանդակությունը հասկանալու համար թարգմանիչն իր կողմից հավելյալ հարցեր էր տվել փախստականին, նպատակ ունենալով առավել տրամաբանական պատասխան ներկայացնել, արդյունքում՝ որոշակիորեն ազդելով հարցազրույցի բովանդակային

գործընթացի վրա¹⁷¹: Վերոգրյալի լույսի ներքո փախստականներին թարգմանչական ծառայություններ մատուցող թարգմանիչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպումը դառնում է խիստ անհրաժեշտ:

Փախստականների կարգավիճակի սահմանման գործընթացում առանց ուղեկցության կամ ընտանիքից բաժանված երեխաների համար օրենքով սահմանվում է խնամակալի պարտադիր ներգրավման մեխանիզմ, սակայն մտավոր կամ այլ անկարողությամբ դիմողների համար որևէ իրավական ընթացակարգ նախատեսված չէ: Մինչ օրս Հայաստանում առանց ուղեկցության երեխայի կողմից ապաստան հայցելու միայն մեկ դեպք է գրանցվել, որի պարագայում, սակայն, լիազոր ներկայացուցչի ապահովում չէր իրականացվել¹⁷²: Այս երևույթը առավելապես պայմանավորված է գործընթացին մասնակից պատասխանատու դերակատարների՝ Միգրացիոն պետական ծառայության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, մարզպետարանների երեխաների պաշտպանության բաժինների և խնամակալության և հոգաբարձության մարմինների միջև փոխգործակցության անարդյունավետությամբ: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ ընթացակարգեր սահմանել նման դեպքերում իրավասու մարմինների միջև պատշաճ համագործակցության ապահովման համար՝ նրանցից յուրաքանչյուրի համար նախատեսելով հստակ գործառույթներ և պարտականություններ, ինչպես նաև օրենսդրական կարգավորում տալ մտավոր կամ սահմանափակ այլ կարողություններով անձանց համար օրինական ներկայացուցչի նշանակման հարցին:

Առկա չէ ապաստան հայցողների համար պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմ՝ ոչ դիմումի ներկայացման և ոչ էլ բողոքարկման ընթացակարգերում¹⁷³: Ապաստանի հետ առնչվող խնդիրներով հատուկ մասնագիտացած իրավաբանների թիվը խիստ սահմանափակ է, իսկ նրանց ծառայությունների արժեքը հաճախ գերազանցում է ապաստան հայցողների ֆինանսական հնարավորությունները:

Առկա են խնդիրներ նաև փախստականների համար նախատեսված ծառայությունների և աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության առնչությամբ: Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության հանձնաժողովի կողմից Հայաստանի վերաբերյալ հրապարակված զեկույցում: Այս կապակցությամբ պետք է արդյունավետ միջոցներ նախատեսել փախստականներին իրենց իրավունքների պաշտպանության հնարավոր բոլոր միջոցների մասին իրազեկելու համար, հաշվի առնելով նաև տարիքային առանձնահատկությունները, լեզվական խնդիրները, ֆիզիկական և մտավոր սահմանափակումները և այլն:

¹⁷¹ «Արևելյան եվրոպայում և հարավային կովկասում ապաստանի համակարգերի որակի նախաձեռնություն» խնդիրների վերլուծություն, հաշվետվություն Հայաստան 2013թ.

¹⁷² Տես՝ նույն տեղում

¹⁷³ Ապաստան հայցողների համար անվճար իրավաբանական օգնության առանձին ծրագրեր իրականացվում են հասարակական կազմակերպությունների կողմից:

2013թ. օգոստոսի 5-ից ՀՀ հինգ մաքսատներում և անձնագրային անցակետերում տեղադրվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 116 թեժ գծի ցուցանակներ, իսկ Զվարթնոց օդանավակայանում ցուցադրվում են տեղեկատվական հոլովակներ: Նման նախաձեռնության նպատակներից է ապաստան հայցող անձանց Պաշտպանի թեժ գծի վերաբերյալ իրազեկումը, որի միջոցով վերջիններիս կարող է տրամադրվել իրավական և այլ աջակցություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ
ՈՐՊԵՍ ԲՈՆՈՒՅԹՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ԶԵԿՈՒՅՑ 2013թ.

ԵՐԵՎԱՆ 2014

Ներածություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, ճանաչվելով ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի Կամբոջիա արձանագրությամբ կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ (այսուհետ՝ բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմ՝ ԲԿԱՄ), 2013թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման Փորձագիտական խորհրդի հետ համատեղ իրականացրել է 213 այցելություն անազատության կամ սահմանափակ ազատության վայրեր, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ (այսուհետ նաև՝ ՔԿՀ-ներ), ՀՀ ոստիկանության բաժիններ և ձերբակալված անձանց պահման վայրեր (այսուհետ նաև՝ ՁՊՎ-ներ), ՀՀ պաշտպանության նախարարության զորամասեր, հոսպիտալներ, ռազմական ոստիկանություն (այսուհետ նաև՝ ՌՈ), կարգապահական գումարտակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, տուն-ինտերնատներ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործող հատուկ հանրակրթական դպրոցներ, ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող հոգեբուժական հաստատություններ, տարածքային կառավարման մարմինների ենթակայության տակ գտնվող հաստատություններ (հոգեբուժական հաստատություններ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ):

Որոշ հաստատություններ այցելություններն իրականացվել են երկու և ավելի անգամ: Այցելությունների ընթացքում օգտագործվել են մշտադիտարկման հետևյալ մեթոդները.

- դիտարկում,
- հարցազրույցներ և առանձնազրույցներ վերը նշված հաստատություններում պահվող անձանց և վարչակազմի ներկայացուցիչների հետ,
- փաստաթղթերի ուսումնասիրություն,
- տրիանգուլյացիա (դիտարկման, հարցազրույցների և առանձնազրույցների, փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ստացված տեղեկությունների համադրում և վերլուծություն),
- այլ աղբյուրների ուսումնասիրություն, այդ թվում նաև՝ Պաշտպանի աշխատակազմում ստացված դիմում-բողոքների, մամուլում հրապարակված նյութերի, դիտորդական խմբերի, միջազգային կառույցների կողմից հրապարակված նյութերի ուսումնասիրություն,
- օրենսդրական վերլուծություն,
- քննարկումներ պատկան մարմինների հետ:

ԲԿԱՄ-ի այցելություններն իրականացվում են նախապես պլանավորված ժամանակացույցին համաձայն՝ առանց նախազգուշացման:

ԲԿԱՄ-ի կողմից իրականացված այցելությունների ընթացքում ԲԿԱՄ-ի անդամները հանդիպել են մի շարք խոչընդոտների.

- հաստատություններ մուտք գործելու խոչընդոտներ,
- հաստատություններում փաստաթղթերի ուսումնասիրության խոչընդոտներ,
- հաստատություններում դիտարկումներ իրականացնելու ընթացքում որոշ տարածքներ մուտքի արգելք:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Հիմնախնդիրներ

- ՔԿՀ-ներում, որպես կանոն, քիչ են սոցիալ-հոգեբանական ծառայությանը տրվող հաստիքները, ինչպես նաև համապատասխան որակավորում ունեցող մասնագետները,
- առկա են սոցիալ-հոգեբանական ծառայության մասնագետների համար համակարգված վերապատրաստման ապահովման խնդիրներ,
- խնդրահարույց է հոգեբանի կողմից ծառայողական համագգեստի կրումը, որն ազատագրկվածների մոտ առաջացնում է անվստահություն,
- ՔԿՀ-ներում վարձատրվող աշխատանքները հասանելի են սակավաթիվ ազատագրկված անձանց,
- ՔԿՀ-ներում անհրաժեշտ է մասնագիտական կրթական ծրագրերի կիրառում,
- առկա է անչափահաս ազատագրկվածների կրթության ոչ բավարար մակարդակ,
- ՔԿՀ-ների գրադարանները կարիք ունեն գրքերով վերազինման,
- բավարար չեն վարչակազմի համար մասնագիտական դասընթացների կազմակերպման միջոցառումները,
- ՔԿՀ-ներում վարչակազմի համար նախատեսված չեն աշխատանքային բարենպաստ պայմաններ,
- ՔԿՀ-ներում կալանավորված և դատապարտված անձանց պահման պայմանները հիմնականում անբավարար են,
- ՔԿՀ-ներում օրենքով սահմանված զբոսանքի իրավունքը պատշաճ չի ապահովվում,
- ՔԿՀ-ներում սննդի ապահովումը պատշաճ չի կազմակերպվում,
- Հիվանդություններ ունեցող ազատագրկված անձանց համար բացակայում է հատուկ տեսակի սննդակարգը,
- Որոշ ՔԿՀ-ներում պատժախցի բացակայության պատճառով կարանտինային խցերն օգտագործվում են նաև որպես պատժախուց և/կամ մեկուսացման խուց,
- Առկա է կարանտինային խցերի ոչ բարվոք վիճակ,
- Խնդրահարույց է ազատագրկվածին պատժախուց տեղափոխելու կարգապահական տույժի մասին որոշման կայացման գործընթացին բժշկի մասնակցությունը,
- Պատժախուց տեղափոխելու որոշումը կայացնելուց հետո առկա է իրականացվող բժշկական զննության ոչ պատշաճ իրականացում, ինչպես նաև՝ բժշկական քարտերում համապատասխան գրառումների բացակայություն,
- կարգապահական պատիժ նշանակելուց առաջ, որպես կանոն, չի իրականացվում ազատագրկվածի կողմից կատարված խախտումների պատճառների բազմակողմանի ուսումնասիրություն, այդ թվում՝ հաշվի չի առնվում նրա առողջական վիճակը,
- արգելված իր հայտնաբերելու դեպքում չի կատարվում բազմակողմանի, օբյեկտիվ քննություն,

- ՔԿՀ-ներում առկա է բուժսպասարկման ցածր մակարդակ, իսկ մի շարք դեպքերում բացակայում են անհրաժեշտ բուժսարքավորումներ և դեղամիջոցներ,
- Առկա են բժշկական փաստաթղթերի ոչ պատշաճ լրացման դեպքեր /ջնջումներ, ուղղումներ/,
- Առկա են բուժմասերի, ինչպես նաև «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի անբարենպաստ և ոչ սանիտարահիգիենիկ պահման պայմաններ,
- Մի շարք դեպքերում ՔԿՀ-ների բուժմասեր, ինչպես նաև «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխվում են առողջական լուրջ խնդիրներ չունեցող անձինք,
- Առկա է արտաքին զննության ոչ պատշաճ կազմակերպում,
- ՔԿՀ-ներում գործող միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի գործունեության աշխատակարգը և չափորոշիչները կարգավորված չեն,
- ՔԿՀ-ներում առկա փաստաթղթերի վարումը թերի է իրականացվում:

Քրեակատարողական հիմնարկը պետական հիմնարկ է: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներ են ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը:

Թեև քրեակատարողական հիմնարկներն ունեն ուղղիչ գործառույթներ, գործնականում դրանք, ըստ էության, չեն իրականացվում: Տվյալ երևույթն ավելի է արտահայտվում ՔԿՀ-ներում սոցիալ-հոգեբանական ծառայության ոչ պատշաճ լինելու, զբաղվածության մասնակի ապահովման, կրթական և վերաինտեգրման ծրագրերի ոչ բավարար լինելու պայմաններում:

Սոցիալ-հոգեբանական ծառայության աշխատանքի ցածր արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքներով, որ վարչակազմը չունի անհրաժեշտ ռեսուրսներ, որոշ մասնագետներ չունեն պատշաճ մասնագիտական հմտություններ, բավարար մասնագիտական վերապատրաստման հնարավորություններ, առկա են տեխնիկական հագեցվածության խնդիրներ:

Ազատագրվածների հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ վերջիններս հիմնականում չեն վստահում սոցիալ-հոգեբանական աշխատանքներ իրականացնող մասնագետներին, քանի որ վերջիններս ընկալվում է որպես ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացուցիչներ, ինչին նպաստում է նաև հոգեբանի՝ համապատասխան համազգեստի կրումը:

ՔԿՀ-ներում զբաղվածության (աշխատանքային, սպորտային, մշակութային, կենցաղային և այլն) անբավարար ապահովումը հանգեցնում է պահվող անձանց ներխմբային հիերարխիկ ենթամշակույթի ձևավորմանը և հետագայում հասարակության մեջ վերաինտեգրման դժվարությունների: Թեև որոշ ՔԿՀ-ներում իրականացվում են տարբեր դասընթացներ (ատաղձագործական, խեցեգործական, կարուձև և այլն), որոնք որոշ չափով նպաստում են դատապարտյալների զբաղվածության ապահովմանը, սակայն իրականացվող դասընթացներին ներգրավվում են սակավաթիվ ազատագրված անձինք:

Մտահոգիչ է անչափահաս ազատագրվածների կրթության ապահովման համար ոչ բավարար պայմանների առկայությունը:

- հստակ դասացուցակի բացակայություն կալանավորված անչափահասների համար,
- դպրոցի կոմունալ-կենցաղային վատթար վիճակ և նյութատեխնիկական հագեցվածության անբավարարություն,
- - ուսուցիչների կողմից մի շարք առարկաների համատեղում, որը բերում է կրթության որակի արդյունավետության նվազման:

Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ ՔԿՀ-ներում գործող գրադարանների գրականությունը հիմնականում չի թարմացվում, գրադարանից օգտվողների թիվը փոքր է, մինչդեռ, գրականությունը կարող է էական բարոյահոգեբանական դեր ունենալ: Հատկանշական է, որ ազատազրկված անձինք իրենք են հաճախ պահանջում ճանաչողական գրականության և ֆիլմերի տրամադրում՝ ժամանցը կազմակերպելու համար: Միջազգային պրակտիկայում առկա են գրականության ընթերցումը խրախուսելու տարբեր մեխանիզմներ, օրինակ, Մեքսիկայի Հանրապետությունում յուրաքանչյուր կարդացված գիրքը խրախուսվում է 1 օր պատժի նվազեցմամբ:

Վատ վերաբերմունք

ՔԿՀ-ներում պահվող անձինք որոշ դեպքերում առանձնագրույցների ընթացքում ԲԿԱՄ-ի անդամներին հայտնել են վարչակազմի կողմից իրենց կամ խցակիցների նկատմամբ կիրառված վատ կամ նվաստացուցիչ վերաբերմունքի մասին: Հատկանշական է, որ ազատազրկված անձանց նկատմամբ վարչակազմի կողմից ուժի կիրառման դեպքերը մշտապես գնահատվում են որպես իրավաչափ: Վատ վերաբերմունքն անուղղակիորեն կապվում է նաև վարչակազմի համար ոչ բարենպաստ աշխատանքային պայմանների, ոչ բավարար մասնագիտական գիտելիքների և ցածր վարձատրության հետ: Դրա դրսևորման գործոններից են հանդիսանում նաև նման դեպքերի բացահայտման և քննության ուղղությամբ պատշաճ և հետևողական գործողությունների բացակայությունը:

Պահման պայմաններ

Չնայած ընթացիկ տարում ՔԿՀ-ներում իրականացվել են որոշ վերանորոգման աշխատանքներ, հիմնականում շարունակվում է չլուծված մնալ պատշաճ պահման պայմանների ապահովման խնդիրը: Պետք է հաշվի առնել, որ ՔԿՀ-ներում ազատազրկվածների պահման անբավարար պայմանները կարող են դիտարկվել որպես անձի արժանապատվության ոտնահարում՝ հանգեցնելով վերջիններիս նկատմամբ նվաստացուցիչ և անմարդկային վերաբերմունքի դրսևորման:

Այսպես, որոշ ՔԿՀ-ների շինություններ համալիր վերանորոգման կարիք ունեն: Օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ընդհանուր պայմաններն անբավարար են, խցերը գտնվում են խոնավ ու հակասանիտարական վիճակում՝ բացառությամբ որոշ խցերի, որտեղ, ըստ ազատազրկված անձանց հետ ունեցած առանձնագրույցների, պահվում են «քրեական հեղինակություն» հանդիսացող անձինք: Հիմնականում սանհանգույցները գտնվում են առավել անմխիթար վիճակում, ինչի հետևանքով դատապարտյալները

ստիպված են օրվա ընթացքում շնչել առկա գարշահոտը: Բացի այդ, հիմնարկի օդի խոնավությունը բարձր է, իսկ կոյուղու հաճախակի վթարների արդյունքում ջուրն արտահոսում է միջանցքներ (առաջին հարկի տարբեր մասերում), ինչը նպաստում է պատերին և հատակին խավարասերների և այլ միջատների առաջացմանը: Վերոնշյալ վիճակն ավելի է սրվում օդափոխության համակարգի բացակայությամբ:

Շենքային վատ պայմաններ են արձանագրվել նաև «Գորիս» ՔԿՀ-ում, որը կառուցվել է դեռևս 19-րդ դարի վերջին: «Գորիս» ՔԿՀ-ում, ինչպես և «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, խցերը խոնավ են, ինչը կարող է տարբեր առողջական խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ: Խցերի սանհանգույցները գտնվում են սանիտարական վատ վիճակում: Թեև «Գորիս» ՔԿՀ-ին տրված է բոլոր ռեժիմներով ազատազրկվածներին պահելու գործառնություն, սակայն շենքային պայմանները թույլ չեն տալիս ապահովել համապատասխան ռեժիմները: Ողջունելի է «Սևան» ՔԿՀ-ում կարանտինային բաժանմունքի, ինչպես նաև պատժախցերի ընթացիկ վերանորոգումը:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախատեպային պրակտիկան՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում ազատազրկված անձանց պահման պայմանները, մի շարք դեպքերում, կարող են հավասարեցվել անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի:

Գերբնակեցում

Թեև 2013թ. ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներում հայտարարելու մասին որոշումը, որի կիրառման արդյունքում թվով 169 կալանավորված անձ և 706 դատապարտյալ ազատ արձակվեց¹⁷⁴, այնուամենայնիվ, որոշ ՔԿՀ-ներում («Նուբարաշեն», «Վարդաշեն», «Կոշ» ՔԿՀ-ներ) 08.01.2014թ. դրությամբ առկա է եղել գերբնակեցման խնդիր: Զբոսանք

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը նախատեսում է դատապարտյալի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը: Իսկ օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալի զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում, բացի այդ՝ դատապարտյալի զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից: Օրենսգիրքը նաև ամրագրում է, որ դատապարտյալի նկատմամբ պատիժը կատարող հիմնարկի պետը, սահմանված կարգով, կարող է կիրառել խրախուսման միջոցներ, այդ թվում նաև՝ զբոսանքի ժամանակի մեկ ժամով ավելացում՝ մինչև մեկ ամիս ժամկետով: Այնուամենայնիվ, ազատազրկված անձանց հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում ԲԿԱՄ-ը պարզել է, որ զբոսանքի իրավունքը պատշաճ կերպով չի ապահովվում: Այսպես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում զբոսանքները կազմակերպվում են միայն որոշակի օրերի, իսկ կիրակի օրը հիմնականում զբոսանք չի կազմակերպվում: Նշվածը բացահայտվել է նաև ԲԿԱՄ-ի հետ առանձնազրույցի արդյունքում, երբ նախորդ օրը զբոսանքի գնացած անձանց քանակի

¹⁷⁴ Արդարադատության նախարարության պաշտոնական տվյալներով ՔԿՀ-ների ընդհանուր լրակազմը 4395 է, իսկ 08.01.2014թ. դրությամբ ՔԿՀ-ներում գտնվում է թվով 3926 ազատազրկված անձ:

վերաբերյալ հարցին ի պատասխան, դատապարտյալներից մեկը շփոթված պատասխանել է, որ նախորդ օրը կիրակի է եղել: Ջրոսանքի ոչ պատշաճ կազմակերպման պատճառ է հանդիսանում նաև ՔԿՀ-ների աշխատակիցների ոչ բավարար քանակը: Խնդրահարույց են նաև մատյաններում արձանագրված՝ մեծ թվով ազատազրկված անձանց՝ զբոսանքից միաժամանակյա հրաժարման դեպքերը («Նուբարաշեն», «Արթիկ», «Վանաձոր» ՔԿՀ-ներ), որոնք, սակայն, հաստատված չեն ստորագրությամբ կամ առկա է միայն խցակիցներից մեկի ստորագրությունը՝ բոլորի փոխարեն, մի շարք դեպքերում չեն նշվում նաև զբոսանքից հրաժարված անձանց տվյալները: Համապատասխան ժամանակահատվածում զբոսանքից հրաժարման պատճառ է հանդիսացել նաև ազատազրկված անձանց հերթափոխով քնելու հանգամանքը («Նուբարաշեն» ՔԿՀ):

Մնունդ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

ՔԿՀ-ներում գրանցվել են սննդամթերքի որակի, քանակի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության խախտումներ: ԲԿԱՄ-ի հետ առանձնագրույցների ընթացքում դատապարտյալները դժգոհել են սննդի որակի վերաբերյալ՝ շեշտադրելով հատկապես կերակուրներում օգտագործվող յուղի որակը և մեծ քանակը, ինչպես նաև ճաշացանկում հաճախ օգտագործվող շոգեխաշած թթու կաղամբը: Խնդիր է նաև քրոնիկ հիվանդություններով տառապող անձանց (թոքախտ, լյարդի ցիռոզ, Հեպատիտ C, քրոնիկ գաստրիտ և այլն) տրամադրվող սնունդը: Այս պարագայում ցուցված է դիետիկ սնունդ, սակայն բոլոր դատապարտյալները ստանում են միևնույն սնունդը, իսկ որպես համապատասխան սննդակարգ՝ տրամադրվում է հավելյալ 1 ձու և կարագ, որը նշված հիվանդությունների դեպքում բավարար չէ: Որոշ հիվանդությունների դեպքում պահանջվում է հատուկ տեսակի սննդակարգ, որը նախատեսված չէ ազատազրկված հիվանդների համար սահմանված հավելյալ սննդակարգում:

Սննդի որակը, ճաշերի բազմազանության բացակայությունը, խոհանոցի և ճաշարանի վատթար պայմանները պատճառ են հանդիսացել ազատազրկվածների կողմից սննդից հրաժարման համար: Այսպես, «Սևան» ՔԿՀ-ում ճաշարանը գտնվում էր անբավարար սանիտարահիգիենիկ վիճակում: ԲԿԱՄ-ի այցելության ընթացքում ճաշից օգտվեցին ՔԿՀ-ում այդ պահին պահվող 511 ազատազրկվածներից 30-ը, այն էլ միայն հացից: Ճաշարանում բացակայում էին աղամանները, իսկ աղը մատուցվում էր զուգարանի թղթի վրա: Դատապարտյալների հետ առանձնագրույցների ընթացքում պարզվեց, որ մեծամասամբ վերջիններս մատուցվող սնունդից օգտվում են միայն հացից, իսկ ճաշատեսակները պատրաստում են նաև անձամբ՝ ստացված հանձնուքներից:

ՔԿՀ-ների սննդի պահեստների պայմանների ուսումնասիրությամբ արձանագրվել են սննդի պահման անբարենպաստ պայմաններ, իսկ սննդի տեսականին չի համապատասխանել ՀՀ կառավարության 10.04.2003թ. թիվ 413-Ն որոշման պահանջներին:

Այսպես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ճաշացանկում հաճախ օգտագործվող թթու կաղամբը բորբոսնած է եղել, որի արդյունքում՝ պահեստում առկա էր գարշահոտ:

Կարանտինային խցեր

Համաձայն քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը բժշկական զննություն անցնելու և ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում: Կարանտինային բաժանմունքում դատապարտյալը գտնվում է պատիժը կրելու առնվազն նույն պայմաններում: Կարանտինային բաժանմունքում դատապարտյալի գտնվելու առանձնահատկությունները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը կարանտինային բաժանմունքում տեղավորվելուց անմիջապես հետո տեղեկացվում է իր հիմնական իրավունքներին և պարտականություններին, ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգին, ինչի մասին տեղեկանքը կցվում է դատապարտյալի անձնական գործին:

Չնայած սույն օրենսդրական կարգավորմանը, այնուամենայնիվ, գործնականում նշված ընթացակարգի պատշաճ ապահովումը շարունակում է մնալ խնդրահարույց: Հաճախ համապատասխան մատյանները պատշաճ կերպով չեն լրացվում, խցում պահվող անձանց համար չի կազմակերպվում զբոսանք, խցերը գտնվում են անբարեկարգ վիճակում, չկան անկողնային պարագաներ, բավարար սպասք և այլն: Որոշ ՔԿՀ-ներում կարանտինային խցերն օգտագործվում են նաև որպես պատժախուց և/կամ մեկուսացման խուց, իսկ ըստ դատապարտյալների՝ ԲԿԱՄ-ի հետ ունեցած առանձնագրույցների՝ «արտոնյալ» կարգավիճակ ունեցող ազատագրկվածները կարանտինային գոտում չեն պահվում և միանգամից տեղափոխվում են համապատասխան խուց: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առկա է եղել կարանտինային խցերի գերբնակեցում, իսկ ջեռուցումն իրականացվել է խցի հատակին անցկացված էլեկտրական պարույրի (սպիրայ) միջոցով:

2012թ. իրականացված այցելությունների ընթացքում «Երևան-Կենտրոն» և «Սևան» ՔԿՀ-ներում արձանագրվել էր կարանտինային գոտու բացակայություն, իսկ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կարանտինային խցերն ունեին վերանորոգման և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման կարիք: Ողջունելի է, որ ԲԿԱՄ-ի կողմից բարձրացված վերոնշյալ խնդիրները 2013 թվականին ստացել են ամբողջական կամ մասնակի լուծումներ:

Պատժախցեր

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ տույժի միջոցներ կիրառելու կարգը, որտեղ հստակ ամրագրված է, որ դատապարտյալը տեղափոխվում է պատժախուց՝ պարտադիր նշելով այդ վայրում պահելու ժամկետը: Բացի այդ, օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ պատժախցում պահվող դատապարտյալը պետք է գտնվի

բժշկական հսկողության ներքո: Համաձայն նույն հոդվածի՝ պատժախուց տեղափոխված դատապարտյալն իրավունք ունի օգտվելու մեկ ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքից:

ԲԿԱՄ-ի կողմից իրականացված այցելությունների ընթացքում մի շարք խնդիրներ են արձանագրվել Երևան քաղաքի և մարզային քրեակատարողական հիմնարկների պատժախցերում, որոնք կրում են շարունակական բնույթ: Պատժախցերը գտնվում են խիստ անբարեկարգ և հակասանիտարական վիճակում (օրինակ՝ «Վարդաշեն» և «Էրեբունի» ՔԿՀ-ներ): Արձանագրվել են նաև առողջական խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց անբարենպաստ պայմաններում պահման դեպքեր, իսկ մի շարք դեպքերում՝ վերջիններիս չի տրամադրվել պատշաճ բժշկական օգնություն (օրինակ՝ «Վանաձոր» ՔԿՀ): ԲԿԱՄ-ի այցելության ժամանակ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պատժախցերում պատիժ էին կրում 7 ազատազրկված անձ: Պատժախցերում առկա էին կոտրված և պոլիէթիլենային տուպրակներով փակված պատուհաններ: Պատժախցերում գտնվող ազատազրկված անձանցից միայն մեկին, բժշկի որոշմամբ, ողջ օրվա համար տրամադրվել էին անկողնային պարագաներ: Վերջիններս նախաձաշից չէին օգտվել, զբոսանքի դուրս չէին եկել, իսկ զրույցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ նրանց մի մասը տեղեկացված չէր զբոսանքից օգտվելու իրավունքի մասին:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցները և, որպես տույժ, առանձնացնում է նաև պատժախուց տեղափոխումը: Առհասարակ դատապարտյալի նկատմամբ տույժի միջոց կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը՝ նախքան խախտումը կատարելը: Կիրառվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման ծանրությանը և բնույթին: Նման պայմաններում դատապարտյալի տեղափոխումը պատժախուց առաջացնում է համաչափության և մարդասիրության սկզբունքների հետ համատեղման խնդիր:

Խնդրահարույց է ՔԿՀ-ներում պատժախուց տեղափոխելու մասին որոշում կայացնելիս բժիշկի կողմից կատարվող գրառումը՝ առողջական վիճակի բավարար լինելու վերաբերյալ, որի արդյունքում բժիշկն անուղղակիորեն մասնակցում է պատժի նշանակման գործընթացին: Դրա հետևանքով բժիշկը հաճախ կորցնում է վստահությունն ազատազրկվածի մոտ և դիտվում՝ որպես պատժի նշանակմանն աջակցող անձ: Ավելին, բժշկական քարտերի գրառումների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ ազատազրկվածը պատժախուց տեղափոխվելիս չի ենթարկվում պատշաճ բժշկական զննության և համապատասխան գրառումը կրում է ձևական բնույթ:

Հանդիպել են նաև դեպքեր, երբ անձի նկատմամբ կիրառվել են այլ կարգապահական տույժեր (նկատողություն, խիստ նկատողություն)՝ հաշվի չառնելով ազատազրկվածի առողջական վիճակը: Այսպես, դատապարտյալը չի կարողացել մասնակցել անվանականչին, քանի որ այդ պահի դրությամբ ունեցել է բարձր ջերմություն: Արդյունքում կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը, իսկ կրկնվելուց հետո՝ անձը տեղափոխվել է պատժախուց:

ԲԿԱՄ-ի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ պատժախուց տեղափոխելը, որպես կարգապահական տույժ, կիրառվել է մեծ մասամբ բջջային հեռախոսների հայտնաբերման հիմքով: Միաժամանակ, ազատազրկվածների մոտ հեռախոսների

հայտնվելու ճանապարհը հիմնականում մնում է չբացահայտված: Այս երևույթն իր մեջ ներառում է կոռուպցիոն ռիսկեր, քանի որ բջջային հեռախոսները և/կամ այլ արգելված իրերը ՔԿՀ-ներում կարող են հայտնվել հիմնականում վարչակազմի իմացությամբ:

Որոշ ՔԿՀ-ներում («Նուբարաշեն, «Սևան», «Գորիս» ՔԿՀ-ներ) պատժախցերում պահման պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը ոչ բավարար են, չի ապահովվում պատշաճ ջեռուցում և օդափոխություն: Այսպես, «Սևան» ՔԿՀ-ի պատժախցերից մեկի դիտարկման ընթացքում պարզվեց, որ առկա երեք մահճակալներից մեկի վրա դրված էին ջրով լի շշեր: Ազատագրվածներից մեկի հետ առանձնագրույցի ընթացքում (այդ պահին պատժախցում գտնվում էին թվով 3 ազատագրվածներ) պարզ դարձավ, որ այդ մահճակալը չի օգտագործվում, ինչի արդյունքում դատապարտյալներից մեկը գիշերը քնում է սեղանի վրա:

ԲԿԱՄ-ի կողմից իրականացված առանձնագրույցների ընթացքում նշվել է, որ երբեմն պատժախուց տեղափոխելու կարգապահական տույժի կիրառման ցուցանիշ ապահովելու նպատակով վարչակազմը դիմում է ՔԿՀ-ի «քրեական հեղինակություն» ունեցող անձին՝ պատժախուց տեղափոխելու համար ազատագրված անձանց որոշակի քանակի ապահովման խնդրով՝ դրա դիմաց երաշխավորելով նրանց արտոնյալ կարգավիճակը (պատշաճ սնունդ, զանգահարելու իրավունք և այլն):

Հարցումներից պարզ է դարձել նաև, որ պատժախցում գտնվողները հիմնականում չեն օգտվում ՔԿՀ-ի սննդից, ինչը խնդրահարույց է կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից, քանի որ ՀՀ օրենսդրությամբ արգելված է պատժախցում գտնվելու ժամանակահատվածում հանձնույթների ստացումը:

Առողջության պահպանության երաշխիքներ

Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունք:

ՔԿՀ-ներում բուժմասերի՝ այդ թվում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի պայմաններն ու սանիտարահիգիենիկ վիճակը ԲԿԱՄ-ի կողմից գնահատվում է ոչ բավարար: ՔԿՀ-ներում բուժսպասարկումը շարունակում է մնալ անբավարար: Մասնավորապես՝ առկա է բուժանձնակազմի համալրման խնդիր, մի շարք դեպքերում բացակայում են համապատասխան բժշկական սարքավորումները և անհրաժեշտ դեղամիջոցները, ոչ պատշաճ կերպով են լրացվում բժշկական փաստաթղթերը: Արձանագրվել են նույնիսկ դեպքեր, երբ բուժանձնակազմը չի գրանցել ազատագրվածների մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքները: ԲԿԱՄ-ը բուժմասում («Նուբարաշեն» ՔԿՀ) ականատես է եղել արյունով լցված ներարկիչների առկայությանը, որոնք անվանական չեն եղել և չեն պահվել անհրաժեշտ պայմաններում: 2-րդ օրվա դրությամբ հետազոտում չէր իրականացվել, իսկ աշխատակցի պնդմամբ դրանք ենթակա էին ոչնչացման:

Այսպես, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ինչպես բժշկական (վիրաբույժ, սրտաբան, էնդոկրինոլոգ, պատանատոմ), այնպես էլ սոցիալ-հոգեբանական և այլ ծառայություններում անձնակազմի համալրման կարիք ունի: Այցելության պահին

հիմնարկում աշխատում էր միայն մեկ վիրաբույժ: Դեռևս 2012թ. ընթացքում ՔԿՀ-ից իրենց դիմումի համաձայն ազատվել են շուրջ 30 աշխատողներ՝ պարզաբանելով, որ աշխատանքը ծանր և վտանգավոր է, իսկ աշխատավարձը չի բավարարում ընտանիքի հոգսերը հոգալու համար: Ներկայումս գիշերային հերթափոխը կազմակերպվում է մեկ բժշկի և մեկ բուժակի կողմից: Նման պայմաններում անհնար է բոլոր բաժանմունքներում, որոնք գտնվում են տարբեր մասնաշենքերում, պատշաճ բուժօգնություն տրամադրել գիշերային ժամերին, առավել ևս, այն դեպքերում, երբ այցելության պահին ՔԿՀ-ում 46 ծանր և առանձնապես ծանր հիվանդ էր հաշվառված: Բուժանձնակազմը համալրելուց բացի, անհրաժեշտ է համալրել նաև հսկիչների հաստիքացուցակը, քանի որ քաղաքացիական հիվանդանոցում ազատագրկվածներին պահելու համար անհրաժեշտ հսկիչներ տրամադրելու հետևանքով նվազում է հսկիչների քանակը ՔԿՀ-ում: Միևնույն ժամանակ, մտահոգության տեղիք է տալիս այն, որ ազատագրկվածի բուժումը համապատասխան բժշկական հաստատությունում կազմակերպելու համար ՔԿՀ-ն, մի շարք դեպքերում, կաշկանդված է լինում լրացուցիչ պահակային կետ ունենալու հարցում, ինչը լուրջ հետևանքներ կարող է ունենալ ազատագրկված անձի բուժումը, հետազոտումը, կամ բժշկական խորհրդատվությունը մասնագիտացված հաստատություններում կազմակերպելու համար:

Խիստ անբարեկարգ վիճակում են գտնվում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի որոշ բաժանմունքներ (վիրաբուժական, ինֆեկցիոն) և տարբեր բաժանմունքների մի շարք հիվանդասենյակներ (թերապևտիկ, վիրաբուժական, ինֆեկցիոն), մասնավորապես՝ չկա կենտրոնացված ջեռուցում, հիվանդասենյակները ջեռուցվում են էլեկտրական սալիկներով, որոնք հաճախ լինում են անսարք: Բուժհիմնարկի մասնաշենքերը հիվանդների համար անհարմար դասավորվածություն ունեն: Այսպես, հիվանդ ազատագրկվածը (ջերմոդը կամ խնամքի կարիք ունեցողը) անբարենպաստ եղանակային պայմաններին ստիպված է դուրս գալ մասնաշենքից և իրեն անհրաժեշտ ներարկումները կամ դեղորայքը ստանալ այլ մասնաշենքում: Ըստ բժշկի՝ միայն տեղաշարժվելու հնարավորություն չունեցող թվով 3 ազատագրկված անձ է հիվանդասենյակում ստանում համապատասխան բուժօգնություն: Առկա է նաև խնդիր պատշաճ դեղորայք ձեռք բերելու կապակցությամբ, քանի որ ոչ կանխատեսելի դեղորայքի անհրաժեշտություն առաջանալու դեպքում ՔԿՀ-ն չի կարողանում կարճ ժամանակահատվածում կազմակերպել գնումը:

Արձանագրվել են բողոքներ առ այն, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխվելը և այնտեղ բժշկական օգնություն ստանալը հաճախ կատարվում է որոշակի դրամական գումարի դիմաց, հակառակ դեպքում՝ բուժհիմնարկ տեղափոխվելը կամ միանգամից մերժվում է, կամ անհարկի ձգձգվում («Նուբարաշեն» ՔԿՀ): Բացի այդ, հիվանդասենյակները գտնվում են ոչ բավարար սանիտարահիգիենիկ վիճակում: Մի շարք բողոքների համաձայն՝ ՔԿՀ-ի տրամադրած դեղորայքն անարդյունավետ է, իսկ համապատասխան հիմնարկների բժիշկների պարզաբանմամբ՝ անարդյունավետությունն անմիջականորեն կապված է տրամադրվող դեղորայքի ընտրության սահմանափակումների հետ:

Որոշ ՔԿՀ-ների բուժկետերում հիվանդ դատապարտյալներն իրենց սեփական միջոցներով են դեղամիջոցներ ձեռք բերում: Դրա մասին է վկայում նաև մի շարք դեպքերում հիվանդության պատմագրերի բացակայությունը, օրինակ՝ այցելության պահին «Վարդաշեն»

ՔԿՀ-ի բուժմասում պահվում էր թվով 11 ազատազրկված անձ և որևէ մեկի համար հիվանդության պատմագիր բացված չէր, ինչն անհնար է դարձնում ազատազրկվածների ախտորոշումների համապատասխան կարգավիճակի գնահատումը:

Հիվանդներից ումանք ունեին բժշկական փաստաթղթեր, որոնցում ախտորոշումները համապատասխանում էին ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-ն որոշմամբ հաստատված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին, բայց հիմնարկի վարչակազմը որևէ միջոցներ չէր ձեռնարկել նրանց պատիժը կրելուց ազատելու ուղղությամբ: Դատապարտյալներից մեկը նույնիսկ նշել է, որ Բժշկաաշխատանքային հանձնաժողովի ներկայացուցիչներն իրեն հայտնել են, որ մինչև իր վիճակի ծայրահեղ բարդացումը չեն ձեռնարկվելու համապատասխան միջոցներ: Խնդիրն ավելի է բարդանում, քանի որ ՔԿՀ-ներում գործող միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի գործունեության աշխատակարգը և չափորոշիչները կարգավորված չեն: Մեկ այլ հիվանդ երեք ամիս գտնվել էր «Էրեբունի» բժշկական կենտրոնում և ստացել պատշաճ բժշկական օգնություն իր սեփական միջոցներով: Այնուհետև, իրականացվել էր դատապարտյալի տեղափոխումը ՔԿՀ, թեև անհրաժեշտ բժշկական օգնության ապահովումը համապատասխան հիմնարկում հնարավոր չէր կազմակերպել (թթվածնային բուժման ապահովման բացակայություն):

Արտաքին զննությունը ՔԿՀ-ներում իրականացվում է ոչ պատշաճ: Արտաքին զննության մասին արձանագրությունների ուսումնասիրություններից և հարցումներից պարզ է դարձել, որ ՔԿՀ-ի բուժաշխատողի կողմից արտաքին զննությունը կազմակերպվում է ազատազրկվածին ուղեկցող ջոկատի և ՔԿՀ-ի հերթապահ-նոսրիկանների, ինչպես նաև վարչակազմի այլ ներկայացուցիչների ներկայությամբ: Հիմնականում արտաքին զննությունը համատեղվում է անձնական խուզարկության հետ: Ավելին, երբեմն մի քանի ազատազրկվածների արտաքին զննությունն իրականացվում է միաժամանակ և համատեղ, որը հաստատվում է նաև համապատասխան արձանագրությունների ուսումնասիրությունից: Համապատասխան փաստաթղթերի գրառումների համադրումից պարզվել է նաև, որ գրառումները ձևական բնույթ են կրում և որոշ ՔԿՀ-ներում ոչ բոլոր մուտք գործած անձինք են ենթարկվել արտաքին զննության («Վարդաշեն» ՔԿՀ, ուսումնասիրվող ժամանակահատվածում 35 ազատազրկվածներից ընդամենը 11-ի վերաբերյալ կար արտաքին զննության արձանագրություն):

Ըստ ԲԿԱՄ-ի դիտարկման՝ արտաքին զննությունը կազմակերպվում է ոչ պատշաճ, քանի որ բուժաշխատողը հաճախ չի ներկայանում, հագուստը չի համապատասխանում իր կարգավիճակին (չի կրում բժշկական համազգեստ), չի պարզաբանում արտաքին զննության բնույթը և անհրաժեշտությունը, զննությունն իրականացնում է մասնակի (հրահանգվում է իջեցնել տաբատը և բարձրացնել վերին հագուստը՝ չիրականացնելով ոտնաթաթերի և մարմնի որոշ մասերի արտաքին զննությունը) և առանց պարզաբանելու առաջարկում է ստորագրել արձանագրությունը՝ հաճախ թելադրելով արձանագրությունում նշվող անհրաժեշտ գրառման բովանդակությունը:

Խնդրահարույց է համապատասխան մատյաններում արդեն իսկ կատարված գրառումների ակնհայտ ջնջումներն ու շտկումները, որը բռնություններն ու հնարավոր խոշտանգումները չբացահայտելու միջոց կարող է հանդիսանալ:

Կապն արտաքին աշխարհի հետ

Քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածը նախատեսում է, որ ուղղիչ հիմնարկի վարչակազմն է ստեղծում համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Այնուամենայնիվ, ԲԿԱՄ-ը հանդիպել է դեպքերի, երբ կարճատև և երկարատև տեսակցությունները փաստացի չեն ապահովվել: Շատ դեպքերում տեսակցությունները ոչ պատշաճ են կազմակերպվում՝ համապատասխան պայմանների բացակայության պատճառով: Այսպես, «Սևան» ՔԿՀ-ի դատապարտյալները դժգոհություն են հայտնել, որ կարճատև տեսակցության սենյակը մեկն է և ընդհանուր է, այսինքն, միաժամանակ կազմակերպվում է մի քանի դատապարտյալի և հարազատների տեսակցություն, որը խոչընդոտում է լիարժեք շփմանը, իսկ մի քանի երկարատև տեսակցության սենյակների համար նախատեսված է ընդամենը մեկ խոհանոց, և թե՛ ազատագրկվածները, թե՛ իրենց մոտ տեսակցության եկած հարազատները ստիպված են լինում երկար սպասել խոհանոցից օգտվելու իրենց հերթին: «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում ընդհանրապես բացակայում է երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակ: Տրամադրած տեղեկատվության համաձայն՝ երկարատև տեսակցությունները կազմակերպվում են այլ քրեակատարողական հիմնարկներում:

Տեսակցության իրավունքի իրականացման հետ կապված խնդիրներ են առաջանում օտարերկրյա քաղաքացիների մոտ, քանի որ նրանց հարազատները հիմնականում բնակվում են այլ երկրներում: Այս պարագայում շփման հիմնական միջոցը հեռախոսակապն է և նամակագրությունը, որի կապակցությամբ մի շարք դժգոհություններ են արձանագրվել ազատագրկվածների կողմից:

Խոցելի խմբեր

ՀՀ ՔԿՀ-ները մինչ օրս հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող ազատագրկվածների համար, չնայած որ նրանք հատուկ պայմանների, իսկ երբեմն՝ խնամքի կարիք ունեն:

ԲԿԱՄ-ը մտահոգված է նաև ցմահ ազատագրկման դատապարտված անձանց խնդիրներով, քանի որ ցմահ ազատագրկվածների հետ չեն կատարվում պատշաճ սոցիալ-հոգեբանական աշխատանքներ (նախատեսված է մեկ հոգեբան 100-ից ավելի ցմահ դատապարտյալի համար, ընդ որում՝ տվյալ հոգեբանը սպասարկում է նաև այլ դատապարտյալների), բացակայում են արդյունավետ վերականգնողական ծրագրերը (չկան մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպման, դատապարտյալի ազատ ժամանակը արդյունավետ տնօրինելու պայմաններ), գործերի վերանայման արդյունավետ

մեխանիզմները, ցմահ ազատագրկման դատապարտված անձանց ռեժիմների փոփոխության և պատժի կրումից վաղաժամկետ ազատման ճկուն համակարգը:

Խոցելի է նաև ՔԿՀ-ում գտնվող կրոնական տարբեր ուղղությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների կրոնի ազատության իրավունքի ապահովման հարցը (նրանց թվում են նաև օտարերկրյա քաղաքացիներ): Այսպես, չկան պատշաճ պայմաններ աղոթքի, հոգևոր ներկայացուցչի հետ հանդիպելու, կրոնական առանձնահատկություններին համապատասխան սննդակարգի ապահովման համար (պահք, ծով):

Առավել նվաստացուցիչ պայմաններում են գտնվում համասեռականները, որոնք կատարում են ՔԿՀ-ների աղբահանման և մաքրման աշխատանքները, այդ թվում՝ սանհանգույցների: Միաժամանակ, համասեռականների հանդեպ առկա է խտրական վերաբերմունք, ինչպես ազատագրկվածների, այնպես էլ վարչակազմի կողմից: Նման դրսևորումներներից մեկը համասեռականների՝ ՔԿՀ-ի ընդհանուր սպասքից օգտվելու «անթույլատրելիությունն» է: Առկա է նաև ՀՀ օրենսդրության խախտումների դրսևորումներ («Վանաձոր» ՔԿՀ-ում 16 քմ մակերեսով խցում պահվում էին թվով 6 համասեռական ազատագրկվածներ, ընդ որում՝ նրանցից մեկը կալանավոր էր):

Պաշտպանության իրավունք

ԲԿԱՄ-ի կողմից հարցազրույցների ընթացքում արձանագրվել է, որ դատապարտյալները հիմնականում չգիտեն, թե ինչպես կարելի է պաշտպանել սեփական իրավունքները, ինչ մեխանիզմներով և միջոցներով: Նրանց մոտ գրեթե բացակայում է օրինական ճանապարհներով սեփական իրավունքների պաշտպանության մշակույթը: Ավելին՝ դատապարտյալների մոտ հիմնականում գերիշխում է չբողոքելու, ճշմարտությունը չբարձրաձայնելու, չհամագործակցելու, իրական վիճակը թաքցնելու սովորույթը, որը բխում է քրեական ենթամշակույթից: Այս տեսակետից սեփական խնդիրների լուծման համար իրենց իրավունքները պաշտպանող մարմինների հետ համագործակցելու փոխարեն դատապարտյալները հակված են զուսպ տանել իրենց հանդեպ իրականացված խախտումները՝ մինչև ազատ արձակումը: Նման պայմաններում բռնությունն ու անմարդկային վերաբերմունքը դառնում են ներքին խնդիր, որը բարձրաձայնելն արգելված է:

Միաժամանակ, ԲԿԱՄ-ն արձանագրել է մի շարք բողոքներ առ այն, որ նամակագրությունը պարտադիր ենթարկվում է գրաքննության, շատ դեպքերում տարբեր պատճառաբանություններով այն չի վերցվում ազատագրկվածներից կամ վերադարձվում է, հետևաբար՝ դիմում-բողոքները չեն հասնում հասցեատերերին:

Վերհանված խնդիրների կապակցությամբ արձանագրած թերությունների և բացթողումների վերաբերյալ առաջարկվում է.

- Ավելացնել սոցիալ-հոգեբանական ծառայությանը տրվող հաստիքները, և ծառայությունը համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով,

- Միջոցներ ձեռնարկել սոցիալ-հոգեբանական ծառայության մասնագետների համար համակարգված մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել սոցիալ-հոգեբանական ծառայության իրականացման համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծելու ուղղությամբ,
- Բացառել հոգեբանի կողմից ծառայողական համազգեստի կրումը՝ նկատի ունենալով, որ այն ազատագրկվածների մոտ անվստահության առաջացման պատճառներից մեկն է,
- Քննարկել ՔԿՀ-ներում վարձատրվող աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները՝ գործարարների ներգրավմամբ,
- Ապահովել խրախուսման մեխանիզմներ՝ կրթական տարբեր ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով,
- Դատապարտյալների շրջանում մասնագիտական պահանջարկին համահունչ՝ ավելացնել մասնագիտական կրթական ծրագրերը,
- Բարձրացնել անչափահաս ազատագրկվածների կրթության որակի բարձրացում,
- Կանխել և բացահայտել վատ կամ նվաստացուցիչ վերաբերմունքի հնարավոր դրսևորումները,
- Վարչակազմի համար կազմակերպել արդյունավետ մասնագիտական վերապատրաստման դասընթացներ,
- Բարելավել ՔԿՀ-ներում վարչակազմի աշխատանքային պայմանները,
- Բարելավել ՔԿՀ-ներում դատապարտյալների պահման պայմանները,
- Ապահովել ազատագրկվածների՝ օրենքով նախատեսված զբոսանքի իրավունքը, այդ թվում նաև՝ հանգստյան օրերին,
- Միջոցներ ձեռնարկել ՔԿՀ-ներում սննդի որակի, պահման պայմանների բարելավման և սննդի բազմազանության ապահովման ուղղությամբ,
- Մշակել որոշակի հիվանդություններ ունեցող ազատագրկվածների համար հատուկ տեսակի սննդակարգեր,
- Բացառել ՔԿՀ-ներում անբավարար պայմանների հետևանքով կարանտինային խցերի՝ որպես մեկուսացման խուց օգտագործման դեպքերը,
- Միջոցներ ձեռնարկել կարանտինային խցերի բարելավման ուղղությամբ,
- Բացառել բժշկի մասնակցությունը պատժախուց տեղափոխելը ազատագրկվածի նկատմամբ՝ որպես կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման կայացման գործընթացին,
- Խիստ վերահսկողություն սահմանել պատժախուց տեղափոխելու որոշումը կայացնելուց հետո իրականացվող բժշկական զննության պատշաճ իրականացման, ինչպես նաև բժշկական քարտերում համապատասխան գրառումներ իրականացնելու նկատմամբ,
- Հաշվի առնել ազատագրկվածի առողջական վիճակը նրա կողմից թույլ տրվող յուրաքանչյուր իրավախախտման դեպքում,
- Յուրաքանչյուր արգելված իր հայտնաբերելու դեպքում կատարել բազմակողմանի, օբյեկտիվ քննություն, որը թույլ կտա բացահայտել արգելված իրի փոխանցման

մեխանիզմը ՔԿՀ, կանխել նմանատիպ երևույթները, ինչպես նաև գործուն միջոցներ ձեռնարկել կոռուպցիոն ռիսկերը վերացնելու ուղղությամբ,

- Պատժախցում գտնվելու ժամանակահատվածում ապահովել ազատագրկվածների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները (զբոսանք, բժշկական սպասարկում և այլն),
- ՔԿՀ-ներում բարելավել բուժսպասարկումը՝ համալրելով անհրաժեշտ հաստիքներ, ապահովելով համապատասխան բուժսարքավորումներ և դեղամիջոցներ, ինչպես նաև ապահովել ազատագրկված անձանց՝ իրենց առողջական վիճակի վերաբերյալ բարձրացված բողոքների պատշաճ քննարկում,
- Խիստ վերահսկողություն սահմանել բժշկական փաստաթղթերի պատշաճ լրացման ուղղությամբ՝ բացառելով ջնջումները և ուղղումները,
- Բարելավել բուժմասերի, ինչպես նաև «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի պահման պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը,
- Միջոցներ ձեռնարկել կալանավորված և դատապարտված անձանց արտաքին զննությունը պատշաճ կազմակերպելու ուղղությամբ,
- Լրամշակել ՔԿՀ-ներում գործող միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի գործունեության աշխատակարգը և չափորոշիչները,
- Օտարերկրյա ազատագրկվածների համար կազմակերպել տեսազանգերի իրականացում հարազատների հետ ինտերնետային կապի միջոցով,
- ՔԿՀ-ներում փաստաթղթաշրջանառության հարցի կարգավորման և հնարավոր չարաշահումներից զերծ մնալու համար ստեղծել էլեկտրոնային համակարգ, որտեղ կներառվեն ազատագրկվածի վերաբերյալ բոլոր տեղեկությունները, այդ թվում նաև նրա տեղաշարժման (խցից խուց, զբոսանք, տեսակցություն, հեռախոսազանգերի, դատարան, հարցաքննության և այլն), ինչպես նաև նրա նկատմամբ կիրառված խրախուսանքների և տույժերի, բուժզննության արդյունքների, սննդից հրաժարվելու մասին տեղեկությունները և այլն:

ՀՀ ՊՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ

ԲԿԱՄ-ն այցելություններ է կատարել թե՛ Երևանի և թե՛ մարզային զինվորական հաստատություններ, ռազմական ուստիկանություն, ռազմական ուստիկանության մեկուսարաններ, կարգապահական գումարտակ և հոսպիտալներ:

Հիմնախնդիրներ

- Մտահոգության տեղիք են տալիս գորամասերում ժամկետային զինծառայողների միջև առկա ոչ կանոնադրային հարաբերությունները,
- Զորամասերի կենցաղային պայմանները հիմնականում անբավարար են, Կարգապահական գումարտակի պահման պայմանները շարունակում են մնալ խիստ խնդրահարույց,
- Զորամասերում առկա է բժշկական պատշաճ սպասարկման ապահովման խնդիր, գորամասերի բժիշկների աշխատանքում առկա է գերծանրաբեռնվածություն, մտահոգիչ է գորամասերում հոգեբանի հաստիքի բացակայությունը,
- Արձանագրվել են վատ վերաբերմունքի դեպքեր,
- Զորամասերում առողջական խնդիրներ ունեցող զինծառայողների նկատմամբ բժիշկների կողմից տրվող խորհրդատվական ցուցումները, որպես կանոն, չեն իրականացվում,
- Առկա է սննդի որակի բարելավման և սննդակարգի միատեսակության խնդիր, պահեստներում սննդի պահման պայմաններն անբավարար են,
- Առկա է բուժհաստատությունների վերանորոգման և վերազինման խնդիր,
- Մտահոգիչ է պատվաստումը անմիջապես գորակոչի ժամանակ իրականացնելու հանգամանքը,
- Որոշ գորամասերում բուժմատյանները պատշաճ լրացված չեն,
- Առկա է բուժկետերում գտնվող զինծառայողների սննդի՝ գորամասի ճաշարանից բուժկետ տեղափոխման, ինչպես նաև՝ դիետիկ սննդակարգի մշակման և ապահովման խնդիր,
- Մտահոգիչ է գորամասերի հիվանդասենյակների մաքրմանը հիվանդ զինծառայողների մասնակցությունը,
- Զորամասերում ախտահանման մեթոդական ուղեցույցի կանոնները մի շարք դեպքերում չեն պահպանվում,
- Մտահոգիչ են բժիշկների մասնագիտական ոչ մանրակրկիտ հետազոտման արդյունքում տրվող եզրակացությունները,
- Բուժհաստատություններում առկա է ջերմային ռեժիմի ապահովման խնդիր,
- Խնդրահարույց է կարգապահական տույժերի նշանակման և կիրառման կարգը,
- Մտահոգիչ է գորամասերում ծառայողական քննությունների հաշվառման մատյանի բացակայությունը,

- Առկա են ձեռքբերված և կալանավորված անձանց պահման կարգի խախտումներ, փաստաթղթաշրջանառության ոչ ճիշտ վարում,
- Առկա են մեկուսարանների մատյանների լրացման և պահպանման կարգի խախտումներ,
- Կարգապահական գումարտակի կառույցը ոչ տիպային է:

Վատ վերաբերմունք, ոչ կանոնադրային հարաբերություններ

Ինչպես 2012թ., այնպես էլ 2013թ. ընթացքում կատարված այցելությունների ընթացքում արձանագրված խնդիրներից խիստ մտահոգության տեղիք են տալիս ՀՀ տարածքում գործող զորամասերում ժամկետային ծառայողների միջև առկա ոչ կանոնադրային հարաբերությունները: Դրա մասին են վկայում նոր գորակոչված զինծառայողների նկատմամբ բարոյահոգեբանական ճնշումները, որոնք դրսևորվում են սպաների՝ իրենց ենթակաների մոտ ոչ պատշաճ ներկայանալով, անհարգալից և սպային ոչ վայել դիմելաձևով, ոչ կանոնակարգային հրամաններ տալով, ինչպես նաև փողոցային արատավոր վարքագծով: Այսպես, Մեղրիի զորամասում սպաներից մեկը զինծառայողների շարքի առջև դրսևորում էր ոչ պատշաճ վարքագիծ՝ կքանստած վիճակում, ձեռքում պտտեցնելով բջջային հեռախոսը, սպային ոչ վայել պահվածքով դիմելով զինծառայողներին:

Զինծառայողների մոտ չի ձևավորվում վերադաս հրամանատարության հանդեպ բավարար հարգանք, ինչի վկայությունն է զինվորական ողջույնի կատարումը միայն բարձրաստիճան հրամանատարական կազմի նկատմամբ:

Ոչ կանոնադրային հարաբերությունների առաջացման հիմքում ընկած է նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից որոշ զինծառայողների նկատմամբ դրսևորվող հովանավորչությունը, որն ինքնաբերաբար հանգեցնում է խտրական մոտեցման: Այսպես, նման զինծառայողները չեն նշանակվում օրապահ, ճաշարանի վերակարգ, ինչպես նաև չեն ներգրավվում այլ տնտեսական աշխատանքներում:

ԲԿԱՄ-ն ուսումնասիրել է նաև զինծառայողների անհատական գրքույկները, որոնք հիմնականում լրացված չեն եղել: Այս հանգամանքը փաստում է անմիջական հրամանատարի՝ զինծառայողների հետ տարվող անհատական աշխատանքների բացակայության մասին: Վատ վերաբերմունքի դրսևորում է նաև սահմանափակումով գորակոչված զինծառայողներին ծառայության ընթացքում իրենց առողջությանը հակացուցված պարտականություններ սահմանելը:

Զինծառայողներն առանձնագրույցների ընթացքում հայտնել են, որ հաճախ ունենում են հոգեբանի մասնագիտական օգնության կարիք՝ պայմանավորված անձնական խնդիրներով կամ հոգեկան ծանր վիճակով:

ԲԿԱՄ-ն արձանագրել է նաև զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքեր: Այսպես.

1. Ձորամասում ուսումնական գումարտակի հերթապահ սերժանտը խախտում թույլ տալու համար անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով (ԱՀՏԱԳ) հրամանատարի տեղակալի կողմից երկու օր անընդմեջ թողնվել էր նույն վերակարգում:

2. ԲԿԱՄ-ի մեկ այլ այցելության ընթացքում պարզվեց, որ ջերմություն ունեցող զինծառայողը դիմել է բուժկետ, սակայն որևէ բուժօգնություն չի ստացել, փոխարենը կարգադրվել է շարունակել ծառայությունը:
3. Մեկ այլ դեպքում, թեև բժիշկը ցուցում էր տվել վատառողջ զինծառայողին ֆիզիկական պատրաստությունից ազատելու վերաբերյալ, հրամանատարը հաշվի չէր առել բժշկի խորհուրդը:
4. Հայերեն լեզվին չտիրապետող զինծառայողներին հրահանգվում է կարճ ժամանակահատվածում սովորել իրենց պարտականությունները, իսկ կարգադրության չկատարման դեպքում՝ վերջիններս ենթարկվում են կարգապահական տույժի:

Պայմաններ

Թեև շարունակվում են զորամասերի բարեկարգման աշխատանքները, այնուամենայնիվ, ԲԿԱՄ-ն արձանագրում է, որ զորամասերի որոշ շինությունների պայմանները շարունակում են մնալ անբավարար:

Այսպես.

1. զորամասերի շենք-շինությունները հին են (Երևանի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի, Արմավիրի մարզերի զորամասերի որոշ շինություններ), ոչ տիպային (Երևանի, Լոռու, Կոտայքի մարզերի զորամասերի որոշ շինություններ), ունեն կապիտալ վերանորոգման կարիք և որոշ զորամասերում գտնվում են զորամասի տարածքից դուրս (Լոռու, Գեղարքունիքի մարզերի որոշ շինություններ):
2. Հաշվի առնելով, որ զորանոցներից շատերը ոչ տիպային են, այլ հարմարեցված, հաճախ բացակայում են կենցաղասպասարկման, ժամանցի կազմակերպման սենյակներ, սանհանգույց:
3. Որոշ զորամասերում սանիտարահիգիենիկ վիճակը ծայրահեղ անբավարար է. լոգարանները գտնվում են հակասանիտարական վիճակում, բացակայում է ցնցուղների մի մասը, խողովակները կոտրված են, հատակը հեղեղված է ջրով, ծորակները չեն աշխատում: Զուգարաններն անբարեկարգ են, իսկ մաքրման աշխատանքները կատարվում են ոչ պատշաճ:

Մնունդ

Մի շարք դեպքերում ճաշարանների նախասրահների լվացարանները, թեև առկա են, սակայն փաստացի չեն գործում. ծորակները չեն աշխատում, բացակայում է օձառը և ձեռքերը չորացնելու համար անհրաժեշտ պարագաներ: Ճաշարաններում և խոհանոցներում բացակայում է պատշաճ օդափոխություն, որի պատճառով ճաշարանի տարածքում առկա է տհաճ հոտ, իսկ խոնավության հետևանքով խոհանոցի առաստաղի ձեփանյութերը առանձին դեպքերում թափվում են սնունդի մեջ: Մնունդը կրկնվող է, միատեսակ, ճաշացանկում բացակայում է բավարար բազմազանությունը, որակն անբավարար է.

1. Ճաշացանկում մշտապես տեղ զբաղեցնող կարտոֆիլը հիմնականում անորակ է,

2. Մենդի պահման պայմանների ոչ բավարար լինելու պատճառով բանջարեղենը շուտ փչանում է, որն այդ վիճակում օգտագործվում է տրամադրվող սննդում:

Չնայած որ խոհանոցներում կան բանջարեղենի մշակման արտադրամասեր, սակայն առկա տեխնիկան չի օգտագործվում կամ չի վերանորոգվում, փոխարենը՝ տվյալ աշխատանքները կատարում են զինծառայողները, արձանագրվել են տաք ջրի և/կամ սպասք լվանալու հեղուկի բացակայության դեպքեր:

Հաճախ ճաշի նմուշները չեն պահպանվում կամ պահվում են ոչ պատշաճ պայմաններում: Երբեմն հերթապահ բժիշկը չի ստուգում զինծառայողներին տրամադրվող սնունդը, ինչի մասին են վկայում ԲԿԱՄ-ի կողմից արձանագրված դեպքերը, երբ հերթապահ բժիշկը չի ստորագրել սննդի հսկողության մատյանում:

Սննդի պահեստներում մի շարք դեպքերում սխալ է կազմակերպվում սննդի պահումը.

1. Նպարեղենը դրվում է հատակին,
2. Սառնարանները բացակայում են կամ չեն աշխատում,
3. Օդափոխության խնդիրը լուծված չէ, պատերը խոնավ են:

Բժշկական ծառայություն

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 342-րդ հոդվածով նախատեսվում է, որ բուժկանխարգելիչ հիմնական միջոցառումներն են զինծառայողների դիսպանսերացումը, ամբուլատորային, ստացիոնար և առողջարանային բուժումը: Վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով բուժծառայության առաջարկած կանխարգելիչ միջոցառումները պարտադիր են բոլոր զինծառայողների համար:

Ի թիվս ԲԿԱՄ-ի կողմից ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ մարզերում տեղակայված տարբեր զորամասերում արձանագրված խնդիրների՝ 2013թ. կրկին գրանցվել են թերություններ նշյալ հաստատությունների բուժսպասարկման ոլորտում: Մասնավորապես, բուժմասերը գտնվում են հակասանիտարական վիճակում, համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվում՝ վարակիչ հիվանդության պատճառով (ջրծաղիկ և այլն) բուժմասում գտնվող զինծառայողներին ընդհանուր հիվանդներից մեկուսացնելու նպատակով, քանի որ մեկուսարանները վատթար վիճակում են: Հանդիպել են դեպքեր, երբ մեկուսարանում գտնվող հիվանդ զինծառայողները չեն կարողացել օգտվել մեկուսարանի զուգարանից (այս զուգարանից օգտվում է բուժանձնակազմը)՝ փոխարենը ստիպված են եղել օգտվել բուժմասի՝ բոլոր հիվանդների համար նախատեսված մյուս զուգարանից: Նման պարագայում խնդրահարույց է հիվանդների մեկուսացման միջոցների արդյունավետությունը: Մի շարք դեպքերում բուժմասերում բացակայել են անհրաժեշտ դեղամիջոցներն ու բժշկական պարագաները: Գրեթե բոլոր զորամասերում ԲԿԱՄ-ն արձանագրել է ժամկետանց դեղորայք: Նույնիսկ այն դեպքերում, երբ բժշկի եզրակացությամբ հիվանդ զինծառայողը ենթակա է որոշակի զինվորական գործառույթներից ազատման, վերջնական որոշումն այդ կապակցությամբ կայացնում է

հրամանատարը, ինչը հաճախ հանգեցնում է բժշկի մասնագիտական եզրակացության անտեսմանը:

Մտահոգության տեղիք է տալիս անմիջապես զորակոչի ժամանակ կատարվող պատվաստումը, քանի որ այն հանգեցնում է օրգանիզմի դիմադրողականության (իմունիտետի) թուլացման:

Ձորամասերի բուժկետերի մատյանները հիմնականում լրացվում են բացթողումներով, թերացումներով, առկա են ուղղումներ և ջնջումներ: Մի շարք դեպքերում վնասվածքների հաշվառման մատյանում չեն նշվում վնասվածք ստանալու պատճառների և հանգամանքների մասին տեղեկություններ:

Հատկանշական է այն, որ բժշկի մոտ այցելության ժամանակ զինծառայողների կողմից առողջական գանգատների առկայության վերաբերյալ հարցին բացասական պատասխանելը, բժշկի համար ինքնըստինքյան բավարար հիմք է հանդիսանում զինծառայողի՝ առողջ լինելու վերաբերյալ գրառում կատարելու համար: ԲԿԱՄ-ը խիստ մտահոգիչ է համարում նաև այն, որ այցելված զորամասերի բուժկետերը չունենին հավաքաբար, և սանիտարական մաքրությունն ապահովում էին հիվանդ զինծառայողները: Կան մի շարք բուժմասեր, որոնք տիպային կառույցներ չեն, տեղակայված են հնամաշ մասնաշենքերում, որտեղ մի շարք դեպքերում բացակայում է սանհանգույցը:

Որոշ զորամասերի բուժկետերի կենտրոնական ջեռուցումից օգտվելու հնարավորության բացակայության պատճառով ցուրտ եղանակային պայմաններում հիվանդասենյակների ջերմությունը հասնում էր մինչև 15° C աստիճան (ընդ որում՝ էլեկտրական տաքացուցիչը միացված էր անմիջապես սենյակային ջերմաչափի տակ), ինչի պարագայում չի ապահովվել ջերմային ռեժիմի կարգով նախատեսված սանդղակը (հիվանդասենյակների համար +22° C):

Բուժկետերի ճաշասենյակներում նույնպես ջեռուցումը բավարար չէր, իսկ ոչ տիպային բուժկետերում ճաշարանի դեր կատարում են միջանցքը կամ այլ հարմարեցված սենյակ (Լոռվա մարզի զորամաս): Հանդիպում են դեպքեր, երբ հիվանդ զինծառայողներն իրենց սննդի տեղափոխումը զորամասի ճաշարանից հոգում են ինքնուրույն: Մտահոգիչ է, որ զորամասի տարբեր ենթակառույցների, այդ թվում՝ խոհանոցի ախտահանման աշխատանքները կատարվում են՝ չպահպանելով ախտահանման մեթոդական ուղեցույցի կանոնները (օրինակ՝ քլորի փոշին ցանված է խոհանոցի հատակին, որը կարող է վնասակար հետևանքներ ունենալ):

Ձորամասերի բուժկետեր ընդունվող զինծառայողների համազգեստները պահվում են մաքուր անկողնային պարագաների, հիվանդ զինծառայողներին տրամադրվող հագուստների և այլ իրերի հետ:

Բժիշկների հետ ունեցած հարցազրույցների ընթացքում պարզ դարձավ, որ առկա է կադրային քաղաքականության վերաբերյալ մտահոգություն, ինչը պայմանավորված է նրանով, որ բժիշկները զորակոչվում են բանակ և ծառայում են այնպիսի տեղերում, որտեղ բացակայում է իրենց նեղ մասնագիտության անհրաժեշտությունը: Օրինակ՝ դիմաձնտային վիրաբույժն աշխատում է որպես ատամնաբույժ՝ համապատասխան հաստիք չունենալու պատճառով, իսկ վնասվածքաբանը կամ մաշկաբանը ծառայում են բուժկետում, այնինչ նույն մասնագետը կարող է իր հմտությունները կիրառել հոսպիտալում,

որտեղ դրա կարիքն իսկապես առկա է: Այսպես, Վանաձորի զինվորական հոսպիտալում չկա վնասվածքաբան, հոգեբույժ և ուրոլոգ, մինչդեռ հոսպիտալը սպասարկում է Տավուշի և Լոռվա մարզերի զորամասերը:

Որոշ զորամասերի բուժկետերում չկար ատամնաբույժ (Գորիսի, Մեղրիի զորամասեր), բուժքույրեր, սանիտարական հրահանգիչներ, ինչը հանգեցնում է բժիշկների գերծանրաբեռնվածությանը, որի հետևանքով կարող է նվազել բուժսպասարկման արդյունավետությունը:

Հարկ է անդրադառնալ զինվորական հոսպիտալների անբավարար պայմաններին: Հոսպիտալներն ապահովված չեն բավարար քանակության կահավորանքով (քիչ են մահճակալները, կողապահարանները): Օրինակ, Վանաձորի հոսպիտալը ոչ տիպային շենք է, ինֆեկցիոն բաժանմունքը, ֆյուրոգրաֆիկ և ռենտգեն կաբինետները տեղակայված են հոսպիտալի հիմնական տարածքից դուրս՝ փողոցի հանդիպակաց կողմում՝ տեղակայված մասնաշենքում, որը 1950-ական թվականներին կառուցված երկաթգծի պոլիկլինիկայի ոչ տիպային շենք էր:

Ինֆեկցիոն բաժանմունքի սանհանգույցը գտնվում էր բակում, հակասանիտարական վիճակում և չունեի դուռ: Մասնաշենքի մի մասը, որը քանդված վիճակում էր, պատկանում էր անհատ անձի: Ինֆեկցիոն բաժանմունքում առանձնացված էր երկու հիվանդասենյակ՝ երկհարկանի մահճակալներով, մի հիվանդասենյակում՝ ութը մահճակալ, որտեղ տարածքը 12 քմ էր, մյուսում՝ չորս մահճակալ, որտեղ սենյակի մակերեսը 10 քմ էր: Ինֆեկցիոն բաժանմունքում պառկած էին ջրծաղիկով և լակունար անգինայով ութ հիվանդ, որոնց մեկուսացումը, շենքային պայմաններից ելնելով, ապահովված չէր: Մանիպուլյացիոն սենյակը ծառայում էր նաև որպես միջանցք, որտեղ դրված էր ճաշասեղանը, չիրկիզվող պահարանն իր դեղորայքով և հերթապահող քույրերի անկյունը: Հոգնա կատարվում էր միջանցքում բժշկի սենյակի դիմաց դրված թախտին, և զգուշացվում էր բոլորին սենյակներից դուրս չգալու մասին: Ամբողջ ինֆեկցիոն մասնաշենքում հոսող ջուր առկա էր հիվանդասենյակներից միայն մեկում: Մասնաշենքը լոգասենյակ չունեի, ռենտգեն կաբինետը ծայրահեղ վատթար վիճակում էր, հատակը՝ քանդված, ինչի հետևանքով առկա էր կրծողների կողմից բժշկական տեխնիկայի և բարձր լարման մալուխների վնասման վտանգ: Ռենտգենի երևակման լաբորատորիան ջրամատակարարում չունեի, վիրակապարանը գտնվում էր անբավարար վիճակում: Հոսպիտալի բաժանմունքները մասնակի վերանորոգվել են: Վերանորոգվել են նաև սանհանգույցները, լոգարանը և լաբորատորիան:

Թեև հոսպիտալների թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքները մասնակի վերանորոգվել են, այնուամենայնիվ, մնացած հատվածները, այդ թվում նաև ճաշասենյակները, վերանորոգման խիստ կարիք ունեն: Գույքը գտնվում է վատթար վիճակում, առկա աթոռների հենակները պոկված են:

Առաջնային խնդիր է հանդիսանում հիվանդասենյակների վերանորոգումը, որտեղ մահճակալները հին են, պաստառները՝ պատռված, անհատական պահարաններ չկան, պատուհանները հիմնականում չեն փակվում: Առկա են խնդիրներ նաև ճաշացանկի հետ կապված, որտեղ սնունդը հաճախ կրկնվում է և ճաշին, և ընթրիքին (կարտոֆիլի պյուրե)՝

կարտոֆիլի փչանալու պատճառաբանությամբ: Նման մոտեցումը չի կարող ընդունելի համարվել:

Դիետիկ սննդի կարիք ունեցող զինծառայողների համար չկան հատուկ մշակված համապատասխան սննդակարգեր և կաթնամթերք:

Ողջունելի է Սիսիանի և Վարդենիսի զինվորական հոսպիտալների շենքային պայմանների բարելավումը, մասնագետների և տեխնիկական հագեցվածության ապահովումը: Այնուամենայնիվ, մտահոգիչ են Սիսիանի զինվորական հոսպիտալի ինֆեկցիոն բաժանմունքի պայմանները:

Կենտրոնական և Երևանի կայագործի զինվորական հոսպիտալները նույնպես վերանորոգման կարիք ունեն, հատկապես, հիվանդասենյակներն ու ճաշասենյակները, որտեղ հանդիպում են ցեմենտապատ հատակներ, կահավորանքի քանակի անհամապատասխանություն:

Հատուկ դեպքերի բաժանմունքը կիսանկուղային հարկում էր, հիվանդ զինծառայողները պահվում էին ճաղապատ դռնով հիվանդասենյակներում, վերջիններս չունեին առանձնացված սանհանգույց, օգտվում էին մեկ ընդհանուր ճաշարանից, սանհանգույցից և լոգարանից:

Երևանի կայագործի զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում արձանագրվել է գերբնակեցում, քանի որ նախատեսված 34 հիվանդի փոխարեն բուժում էին ստանում 67-ը: Արդյունքում, զինծառայողներից երկուսը քնում էին նույն մահճակալին, բոլոր մահճակալները միացված էին միմյանց, իսկ միջանցքներում դրված էին լրացուցիչ մահճակալներ: Ճաշարահը տեղակայված էր միջանցքում, նախատեսված չէր ծխարան, հանդիպման և ժամանցի սենյակ: Հոսպիտալում առկա է հոգեբույժների համալրման կարիք:

Կարգապահության խնդիրներ

ԲԿԱՄ-ն արձանագրել է զորամասերում օրվա կարգացուցակի չպահպանման դեպքեր, հիմնականում՝ մարտական պատրաստակամության պարապմունքների անցկացման հետ կապված: Արդյունքում՝ օրվա որոշ ժամանակահատվածում զինծառայողների զբաղվածության խնդիրը չի լուծվում:

Կարգապահական տույժերի կիրառման դեպքերի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է, որ խախտման վերաբերյալ անցկացվող ծառայողական քննությունները, մի շարք դեպքերում, կրում են ձևական բնույթ: Այսպես, ԲԿԱՄ-ն արձանագրել է դեպքեր, երբ համապատասխան ծառայողական քննությունը դեռևս չէր ավարտվել, սակայն կարգապահական տույժն արդեն կիրառվել էր:

Ծառայողական քննության ընթացքում չեն պահպանվում քննությունների անցկացման կանոնակարգի կանոնները, մասնավորապես, բացակայում է բժիշկի կողմից տրվող տեղեկանքը, անձնական քարտից քաղվածքը, իրավախախտում կատարած անձին չեն ծանոթացնում ծառայողական քննության նյութերին, իսկ քննության ընթացքում կազմված նյութերը ոչ լիարժեք են արտացոլում զանցանք կատարած անձի մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքները, ինչպես նաև դիտավորության առկայությունը կամ բացակայությունը:

Կիրառվում են նաև կարգապահական կանոնագրքով չնախատեսված կարգապահական տույժեր: Այսպես, Վանաձորի գորամասերից մեկի վաշտի հրամանատարի զեկուցագրի հիման վրա բացասական վարքագիծ դրսևորած զինծառայողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունը երկարացվել էր 10 օրով և այլ զինծառայողների ներկայությամբ հայտարարվել էր երկարացման պատճառների մասին:

Զինծառայողների հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ կիրառվում են կարգապահական կանոնագրքով չնախատեսված զանգվածային կատարման կարգապահական տույժեր: Այսպես, մեկ զինծառայողի զանցանքի համար կարող է պատժվել ամբողջ վաշտը, ինչը միջանձնային հարաբերությունների լարվածության առաջացման պատճառ կարող է հանդիսանալ: Նշենք նաև, որ որոշ գորամասերում բացակայում է ծառայողական քննությունների հաշվառման մատյանը:

Զինծառայողների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում ԲԿԱՄ-ի անդամներին տեղեկություններ են հայտնվել առ այն, որ որպես խրախուսանք դրամական պարգևի տրամադրումը կրում է շահադիտական բնույթ և չի ծառայում իր նպատակին, քանի որ օգտագործվում է այլ նպատակներով:

Զեկուցագրեր և դիմում-բողոքներ

ԲԿԱՄ-ի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինծառայողները հիմնականում կաշկանդված են դիմում-բողոք ներկայացնելու հարցում, ինչի մասին է վկայում նաև դրանց սակավաթվությունը:

Խնդրահարույց է զինծառայողների՝ վերադասին տրվող զեկուցագրերի նկատմամբ վարվող հաշվառումը, որի արդյունքում զեկուցագրերը մուտքագրվում են միայն հրամանատարի դրական գնահատականը ստանալուց հետո:

Պատշաճ ընթացք չի տրվում նաև սպայական կազմի՝ զինվորական ծառայությունը վաղաժամկետ դադարեցնելու մասին զեկուցագրերին, չնայած որ զինծառայողները պատրաստ են վճարել անհրաժեշտ փոխհատուցման գումարները:

Ռազմական ուստիկանություն, մեկուսարաններ, կարգապահական գումարտակ

ՀՀ ՊՆ ռազմական ուստիկանության Երևանի և մարզային ստորաբաժանումներ կատարած այցելությունների ընթացքում արձանագրված բողոքները և խախտումները, հիմնականում, վերաբերել են կալանավորներին խցից դուրս բերման, մեկուսարան ընդունված անձանց հաշվառման, խցերից դուրս բերման մատյանները պատշաճ կարգով չվարելուն, մատյաններում գնության արդյունքների գրառման համար նախատեսված հատվածը չլրացնելու կամ ոչ ըստ համապատասխանության լրացնելու դեպքերին: Արձանագրվել են դեպքեր, երբ համապատասխան մատյաններն ընդհանրապես բացակայել են:

Մեկուսարանների պայմանները բավարար չեն, ինչը պայմանավորված է մեկուսարանների՝ ի սկզբանե որպես կարգապահական մեկուսարան կառուցված լինելու

հանգամանքով: Այսպես, պատժախցերի համար նախատեսված պատին փակցվող մահճակալները մնացել են անփոփոխ:

Արձանագրված բողոքները հիմնականում վերաբերել են ճաշարանի վերանորոգման անհրաժեշտությանը, ինչպես նաև սանհանգույցի ոչ բարվոք վիճակին, ինչի հետևանքով լոգանքը և լվացքը կազմակերպվում են հարևան գորամասում:

Կալանավորված զինձառայողների համար նախատեսված մեկուսարանի կենցաղային պայմաններն անբավարար են, մասնավորապես՝ այն չունի կարանտինային ու տեսակցության համար նախատեսված սենյակներ, մեկուսարանի զբոսաբախում բացակայում է ծածկը՝ անձրևից պաշտպանվելու համար: Բուժակի հայտնած տեղեկատվության համաձայն՝ արտաքին զննությունը կատարվում է առանձին, ինչին միայն ինքն է մասնակցում, այնուհետև կազմվում է արձանագրություն՝ նշում արվելով առանձին մատյանում: Մտահոգիչ է այն, որ բուժակը աշխատում է մինչև 18.00-ն, և գիշերային հերթապահություն նախատեսված չէ:

Ինչպես ՀՀ Ոստիկանության ստորաբաժանումներում, այնպես էլ ՊՆ Ռազմական ոստիկանության կողմից մի շարք դեպքերում չեն պահպանվում զինձառայողներին բերման ենթարկելու և նրանց պահելու համար օրենսդրորեն սահմանված ժամկետները: Մասնավորապես, բերման ենթարկված անձանց հաշվառման մատյաններում առկա էին ժամային էական խախտումներ: Այսպես, օրինակ, թեև օրենքով անձի պահման համար նախատեսված է առավելագույնը 3 ժամ, բերման ենթարկված անձին պահել են մինչև 16 ժամ և ավելի: Մատյանները լրացված չէին մինչև վերջ, նշված չէր, թե ուր են տեղափոխել բերման ենթարկվածին և այլն: Վերոնշյալ խախտումը պատճառաբանվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի ոչ բավարար լինելու հանգամանքով (Վանաձորի Ռազմական ոստիկանություն):

Հանդիպել են դեպքեր, երբ խցերի արհեստական լուսավորությունն ապահովված չի եղել, անկողնային պարագաները կեղտոտ էին, իսկ սպիտակեղենն ընդհանրապես բացակայում էր: Խցի օդափոխությունն ինքնուրույն հնարավոր չէ կազմակերպել խցի պատուհանների՝ ճաղավանդակներից հեռու գտնվելու պատճառով: Հիմնականում խցերում բացակայում են ձեռքակալված և կալանավորված անձանց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվական թերթիկները:

Հարկ է նշել, որ ԲԿԱՄ-ի կողմից այցելված Ռազմական ոստիկանության մեկուսարաններին (Լոռու, Սյունիքի, Գեղարքունիքի մարզեր) կից իրականացվում են շինարարական աշխատանքներ՝ «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքին համապատասխան կարգապահական վաշտերի կառուցման համար:

Կարգապահական գումարտակ

Հարկ է անդրադառնալ Հրազդանի Կարգապահական գումարտակի պահման պայմաններին, որոնք այցելության արդյունքում որակվել են անբավարար: Գումարտակում գտնվում են ծառայության ընթացքում 3 ամսից մինչև 3 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված զինձառայողներ: Գումարտակի շենքը հին կառույց է, ոչ տիպային, քանի որ ի սկզբանե նախատեսված է եղել որպես պահեստ: Շինությունն իր մեջ ներառում է երկու

մեծ հանրակացարանային սենյակներ, որոնցից մեկում բնակվում են զինծառայողները: Սենյակն օգտագործվում է որպես ննջարան, դասասենյակ և այլն, բացի այդ, սենյակի տարածքը բավականին մեծ է, հատակի և առաստաղի միջև բարձրությունը կազմում է 6.30 մետր, ինչի հետևանքով այն դժվարությամբ է ջեռուցվում, այդ իսկ պատճառով շահագործվում է երկու վառարան, որոնք ջեռուցվում են փայտով: ԲԿԱՄ-ի այցելության պահին սենյակը լցված էր ծխով: Երկրորդ հանրակացարանային սենյակն օգտագործվում է որպես սպորտդահլիճ, չի ջեռուցվում: Նույն շինության մեջ են գտնվում նաև խոհանոցը, լոգարանը և սանհանգույցը: Խոհանոցում, որը վերանորոգման կարիք ունի և գտնվում է հակասանիտարական վիճակում, բավականին ցուրտ է, ինչը խոչընդոտում է սնվելու գործընթացին: Սանհանգույցը և լոգարանը նույնպես կապիտալ վերանորոգման կարիք ունեն, գտնվում են հակասանիտարական վիճակում: Լոգարանում 6 ցնցուղներից աշխատում են միայն երկուսը: Կարգապահական գումարտակը չունի կարանտինային սենյակ: Ընդհանուր հանրակացարանային սենյակի անկյունում տեղադրված է մեկ մահճակալ, որը ծառայում է որպես կարանտինային «բաժին»: Ըստ ազատագրված զինծառայողների, իրենց զբոսանքը չի ապահովվում (օրակարգով նախատեսվում է 10 րոպե տևողությամբ զբոսանք 21.50-ից 22.00-ն ընկած ժամանակահատվածում), իսկ ԲԿԱՄ-ի հարցին, թե արդյոք զինծառայողներն, առհասարակ, դուրս են գալիս շինությունից, աշխատակիցներից մեկը պատասխանեց, որ միայն աշխատանքների (ձյուն մաքրել և այլ աշխատանքներ, ինչպես նաև կանոնակարգով չնախատեսված աշխատանքներ) կատարման դեպքում: Կարգապահական գումարտակն ունի երկու պատժախուց, որոնք, աշխատակիցների հավաստմամբ, ընդհանրապես չեն օգտագործվում՝ անհրաժեշտ պայմանների և ջեռուցման բացակայության պատճառով:

Առաջարկություններ

- Միջոցներ ձեռնարկել զորամասերում ժամկետային զինծառայողների միջև ոչ կանոնադրային հարաբերությունների կանխման և բացառման, կանոնադրային կանոնների խախտման դեպքերի բացահայտման և պատշաճ քննության ապահովման ուղղությամբ,
- Բարելավել ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերի կենցաղային պայմանները,
- Միջոցներ ձեռնարկել Կարգապահական գումարտակում պահման պայմանները բարելավելու ուղղությամբ,
- Ջորամասերն ապահովել պատշաճ բժշկական ծառայությամբ՝ անհրաժեշտ բժշկական սարքավորումների, դեղամիջոցների և բուժանձնակազմի համալրման միջոցով,
- Բացառել սահմանափակումով զորակոչված զինծառայողներին ծառայության ընթացքում իրենց առողջությանը հակացուցված պարտականությունների սահմանումը,
- Ջորամասերում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման նպատակով զորամասերում նախատեսել հոգեբանի հաստիք,

- Ապահովել զորամասերում առողջական խնդիրներ ունեցող զինծառայողների նկատմամբ բժշկների կողմից տրվող խորհրդատվական ցուցումների կատարումը և հսկողություն սահմանել դրանց կատարման ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել սննդի որակի բարելավման և սննդակարգի բազմազանության ապահովման ուղղությամբ,
- Սննդի պահեստներում կազմակերպել պատշաճ պահման պայմաններ և սահմանել խիստ վերահսկողություն,
- Վերանորոգել և վերազինել բուժհաստատությունները,
- Վերանայել բժշկական փաստաթղթերի և մատյանների վարման կարգը,
- Միջոցներ ձեռնարկել բուժկետերում գտնվող զինծառայողների սննդի՝ զորամասի ճաշարանից բուժկետ տեղափոխման հարցի, ինչպես նաև դիետիկ սննդակարգի մշակման և ապահովման կանոնակարգման ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել զորամասերի հիվանդասենյակների մաքրմանը հիվանդ զինծառայողների մասնակցությունը բացառելու ուղղությամբ, միաժամանակ կազմակերպելով անհրաժեշտ սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքները,
- Ապահովել անհրաժեշտ ջերմային ռեժիմը բուժհաստատություններում,
- Միջոցներ ձեռնարկել կարգապահական խախտումների վերաբերյալ անցկացվող ծառայողական քննությունները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացնելու ուղղությամբ, սահմանել խիստ վերահսկողություն կարգապահական տույժերի նշանակման և կիրառման նկատմամբ,
- Վերահսկողություն սահմանել մեկուսարաններում առկա մատյանների՝ պատշաճ կարգով լրացման և պահպանման ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել կարգապահական գումարտակը տիպային կառուցելու ուղղությամբ:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Ոստիկանության բաժիններ, ՁՊՎ-ներ

Հիմնախնդիրներ

- Առկա են բերման ենթարկված կամ հրավիրված անձանց՝ օրենքով սահմանված առավելագույնը 3 ժամից ավել ոստիկանության բաժիններում պահելու դեպքեր,
- Արձանագրվել են ՁՊՎ-ներում պահման համար օրենքով սահմանված 72 ժամը գերազանցելու դեպքեր,
- ՁՊՎ-ներում վարվող մատյանների մի մասը լրացվում է ոչ պատշաճ կարգով,
- Խնդրահարույց են ՁՊՎ-ներում սննդի ոչ բավարար չափով տրամադրման, պահման անբավարար պայմանների, արգելված իրերի փոխանցման կանխարգելման ոչ արդյունավետ մեթոդների կիրառման դեպքերը,
- ՁՊՎ-ներից ազատազրկվածների տեղափոխումը, որոշ դեպքերում, իրականացվում է սահմանված կարգի խախտմամբ՝ աշխատակիցների անձնական մեքենաներով,
- ՁՊՎ-ներում արտաքին զննությունը հաճախ կրում է ձևական բնույթ,
- ՁՊՎ-ներում (բացառությամբ Երևանի ՁՊՎ-ից) բացակայում է բուժաշխատողի հաստիքը,
- ՁՊՎ-ներում հայտնաբերվել են ժամկետանց դեղորայք, բժշկական պարագաներ, որոնք չեն կարող կիրառվել ոչ մասնագետի կողմից,
- Բուժզննությունը կազմակերպվում է ոչ պատշաճ,
- ՁՊՎ-ներում պահվող կանանց վերահսկման հարցում առկա է սեռային խնդիր:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության կողմից մարդուն խոշտանգումների, բռնության, այլ դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը պատժվում է օրենքով:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131¹ հոդվածի 1-ին մասի՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո 3 ժամվա ընթացքում կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Պրակտիկայում տարածված են սույն օրենսդրական պահանջի խախտման դեպքեր: Մի շարք դեպքերում՝ ինչպես 2012թ., այնպես էլ 2013թ. ընթացքում բերման ենթարկված անձանց հարցաքննության ժամանակահատվածը, մինչև ձերբակալման արձանագրություն կազմելը, գերազանցել է օրենքով սահմանված 3 ժամը: Այսպես, Երևանի ոստիկանության Շենգավիթ վարչական շրջանի բաժին գիշերային ժամի բերման է ենթարկվել Ա. Վ.-ն և, ըստ գրառումների, այնտեղ է պահվել շուրջ 4 ժամ: Արձանագրվել են դեպքեր, երբ անձը, բերման ենթարկվելուց հետո, չարձանագրված ժամի հանձնվել է ոստիկանության այլ բաժին: Ավելին, ոստիկանության բաժիններում արձանագրվել են բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանների ոչ պատշաճ լրացման դեպքեր, երբ,

օրինակ, բերման ենթարկված անձի նկատմամբ ձեռնարկված միջոցառումների կամ նրա հետագա ուղարկման վայրի համար նախատեսված սյունակը համապատասխանաբար չի լրացվել կամ, շատ դեպքերում, մատյանում արձանագրվել է միայն բերման ենթարկելու և բաժին բերելու ժամանակը, մինչդեռ անձին ազատ արձակելու ժամանակը մատյանում չի նշվել:

ՀՀ Սյունիքի մարզային վարչության Մեղրիի ոստիկանության բաժնում ԲԿԱՍ անդամներն արձանագրել են, որ ոստիկանությունում հայտնված անձը բաժնում պահվել է սահմանված կարգի բազմաթիվ խախտումներով. համապատասխան գրառումների բացակայության պատճառով անհասկանալի էին անձին հրավիրելու, բաժնում պահելու իրավական հիմքերը, ավելին՝ չէր հրավիրվել պաշտպան: Չի ապահովվել բժշկի ներկայությունը, չնայած բազմաթիվ մարմնական վնասվածքների առկայությանը, ինչպես նաև չէր կազմվել մարմնական վնասվածքների մասին արձանագրություն և չէր տրամադրվել սնունդ¹⁷⁵:

Ավելին, թեև ոստիկանության բաժին բերման ենթարկվելու մասին մատյաններում գրառումները համապատասխանել են օրենքով սահմանված ժամկետների պահանջներին, ԲԿՀ-ներում պահվող անձանց հետ զրույցների ընթացքում ԲԿԱՍ-ի անդամներին բազմիցս հայտնել են Ոստիկանության բաժիններում իրենց ազատությունից զրկելու օրենքով սահմանված ժամկետների խախտումների մասին: Խիստ մտահոգիչ է, որ օրենքով սահմանված լրացումների պահանջը գործնականում կարող է կրել ձևական բնույթ:

Ձերբակալված անձանց պահելու վայրեր

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր, իսկ կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր փոխադրվելուց անմիջապես հետո գրանցվում է դրա համար նախատեսված գրանցամատյաններում և անհատական քարտերում: Ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի համար վարվում է անձնական գործ, որում պարտադիր կարգով պետք է ներառվեն ընդունելու և արգելանքից կամ կալանքից ազատելու տարեթվերն ու ամսաթվերը: Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձն ապահովվում է առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով, որի նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սննդի որակը և սննդարարությունը սահմանված նվազագույն չափաբաժիններից պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

Այդուհանդերձ, ԲԿԱՍ-ի կողմից ՁՊՎ-ներ կատարած այցելությունների ընթացքում արձանագրվել են մի շարք խախտումներ, որոնք հիմնականում վերաբերել են՝ համապատասխան մատյանները ոչ պատշաճ լրացնելուն, ՁՊՎ-ներում անձանց պահման օրենսդրությամբ նախատեսված ժամկետների խախտմանը, անբավարար չափով սննդի

¹⁷⁵ Հարցի կապակցությամբ Պաշտպանի գրության հիման վրա Հատուկ քննչական ծառայությունը հարուցել է քրեական գործ, իրականացվում է նախաքննություն:

տրամադրմանը, պահման պայմաններին, արգելված իրերի փոխանցման կանխարգելման ոչ արդյունավետ մեթոդների կիրառմանը, դեղորայքի և բժշկական ծառայության ոչ պատշաճ ապահովմանը և այլ խնդիրներին: Ըստ էության, ինչպես 2012թ., այնպես էլ 2013թ. ընթացքում արձանագրված խնդիրները տվյալ հաստատություններում մնացել են անփոփոխ:

Այսպես, օրինակ՝ արձանագրվել է, որ վարվող մատյանները ոչ պատշաճ են լրացվում, մասնավորապես՝ ԲԿԱՄ-ի կողմից այցելված ՁՊՎ-ների արտաքին զննության մատյաններում հիմնականում կատարվում են հետևյալ համառոտ գրառումները. «զանգատ չունի», «բողոք չունի», ինչը ԲԿԱՄ-ին հիմք է տալիս եզրակացնելու, որ ՁՊՎ-ներում արտաքին զննությունը պատշաճ կարգով չի իրականացվում: Հիմնականում մատյաններում չեն արձանագրվում նաև տեսակցությունների տրամադրման, խցերից դուրս բերման և հանձնույթների ընդունման համապատասխան գրառումներ, չնայած այն հանգամանքին, որ, ըստ հիմնարկի աշխատակցի հայտնած տեղեկատվության, ձերբակալված անձինք սնվում են հիմնականում հանձնույթների միջոցով:

Չլուծված խնդիր է ՁՊՎ-ներում անձանց պահելու օրենսդրորեն սահմանված ժամկետի, այն է՝ 72 ժամի խախտման բազմաթիվ դեպքերի առկայությունը: Հատկանշական է, որ նշված անորոշ ժամանակահատվածից հետո անձին այլ հիմնարկ տեղափոխելիս՝ տվյալ անձի մոտ հայտնաբերվում են մարմնական նոր վնասվածքներ (օրինակ՝ Երևանի քննչական գլխավոր վարչություն, Մալաթիայի ոստիկանության բաժին): Այսպես, Կ.Հ.-ն մուտք է գործել Վանաձորի ոստիկանության ՁՊՎ 06.03.13թ.՝ ժամը 23:40-ին, 07.03.13թ. ժ. 20:00-ին տեղափոխվել է Սպիտակի ՁՊՎ: 09.03.13թ. 16:10-ին կրկին ընդունվել է Վանաձորի ՁՊՎ, 09.03.13թ. 22:10-ին տեղափոխվել է Վանաձորի ՔԿՀ, ինչը, ոստիկանների հավաստմամբ, պայմանավորված է եղել ՁՊՎ-ի ծանրաբեռնվածությամբ, մինչդեռ ՁՊՎ-ում, ըստ գրառումների, այդ ընթացքում երեք անձ է պահվել: ԲԿԱՄ-ը Վանաձորի ՔԿՀ-ում հանդիպել էր Կ.Հ.-ին, որի արտաքին զննությամբ արձանագրվել էին ճակատի կենտրոնական մասի, ձախ ծնկի արտաքին մասի քերծվածքներ և աջ դաստակի երեսի երրորդ մատի այտուց մարմնական վնասվածքները: Վերջինս հայտնել է, որ ոստիկանությունում իրեն հարվածել են, որի հետևանքով Կ.Հ.-ն ընկել և վնասել է ոտքը, սակայն, չճանաչելով ոստիկանին, չի կարողացել որևէ տեղեկատվություն տրամադրել նրա մասին: Դեպքի առնչությամբ՝ քրեակատարողական հիմնարկն համապատասխան տեղեկություն է տրամադրել ՀՀ դատախազությանը:

ԲԿԱՄ-ը պարզել է, որ ոստիկանության ՁՊՎ-ներում տրամադրվող սննդի չափաբաժինները անբավարար են: Մի շարք ՁՊՎ-ներում սնունդը տրամադրվում է մեկ անգամ (օրինակ՝ Վանաձորի, Վաղարշապատի ոստիկանության ՁՊՎ-ներ), իսկ որոշ այլ ՁՊՎ-ներում՝ օրը 2 անգամ (օրինակ՝ Աբովյանի ոստիկանության ՁՊՎ), քանի որ հատկացվող 690 դրամով անհնարին է ապահովել երեքանգամյա սնունդ: ԲԿԱՄ-ի այցելության ընթացքում Ճամբարակի ոստիկանության ՁՊՎ-ում գտնվող անձին նախորդ օրվանից տրամադրվել էր միայն լավաշ ու երշիկ:

Շարունակում են վատթար վիճակում գտնվել ՁՊՎ-ների պահման պայմանները: Մասնավորապես՝ ՁՊՎ-ների խցերն ապահովված չեն սանհանգույցով: Բացառությամբ Երևանի ՁՊՎ-ի՝ մյուս ՁՊՎ-ներում բացակայում են լվացքի կազմակերպման

հնարավորությունները, ինչպես նաև չկան որևէ լվացքատան հետ կնքված պայմանագրեր, ինչի արդյունքում նշված գործընթացը կազմակերպվում է ՁՊՎ-ի աշխատակիցների կողմից, որը ոչ միայն բավականին դժվար է, այլև իր մեջ կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկեր:

ՁՊՎ-ների քննչական սենյակները չեն ջեռուցվում, որի մասին ԲԿԱՄ-ին դժգոհություն են հայտնել նույնիսկ ՁՊՎ այցելած քննիչները (օրինակ՝ Վաղարշապատի ՁՊՎ): Քննչական սենյակներում բացակայում է նաև բնական լուսավորությունը:

Պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել որոշ ՁՊՎ-ներում արգելված իրերի փոխանցումը կանխելու ուղղությամբ: Մասնավորապես, ոստիկանության որոշ ՁՊՎ-ներում տեսակցությունների համար նախատեսված է 30ամ բարձրությամբ միջնապատ, որն ամրացված է սեղանին և կարող է արդյունավետ միջոց չհանդիսանալ արգելված իրերի փոխանցումը կանխելու համար (օրինակ՝ Հրազդանի և Սպիտակի ՁՊՎ-ներ): Արգելված իրերի փոխանցումը կանխելու նպատակով՝ հերթապահ ոստիկանը ներկա է գտնվում տեսակցությանը:

Հարկ է նշել, որ որոշ ՁՊՎ-ներում տեսակցության, բուժզննության, հեռախոսազանգերի տրամադրման, քննչական և հերթապահ ոստիկանի սենյակները առանձնացված չեն, այլ համատեղված են մեկ սենյակում (օրինակ՝ Հրազդանի ՁՊՎ-ում տեսակցության, քննչական և հեռախոսակապի տրամադրման սենյակները համատեղված են մեկ սենյակում, իսկ Ճամբարակի ՁՊՎ-ում հերթապահի սենյակում էր կազմակերպվում բուժզննությունը, Տաշիրի ՁՊՎ-ում քննչական գործողություններն ու բուժզննությունը կատարվում էին նույն սենյակում):

ԲԿԱՄ-ին մտահոգության տեղիք է տալիս այն փաստը, որ, բացառությամբ Երևանի ՁՊՎ-ի, ոչ մի այլ ՁՊՎ-ում չկա բուժաշխատողի հաստիք: Մինչդեռ, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Այս պարագայում խնդրահարույց է բուժզննության կազմակերպումը, որն իրականացվում է խուզարկության հետ համատեղ՝ ուղեկցող հերթապահ ոստիկանների ներկայությամբ: Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, թեև Երևանի ՁՊՎ-ում առկա է բուժակ, այնուամենայնիվ, բուժզննությունը իրականացվում է խուզարկության հետ համատեղ, որը փաստվում է նաև արձանագրություններով: ԲԿԱՄ-ը գտնում է, որ բժշկական զննությունն ու բուժօգնությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է քննարկել բուժզննությունն ու բուժօգնությունը տեղամասային բուժհաստատություններում իրականացնելու հարցը՝ նկատի ունենալով տվյալ հաստատություններում շուրջօրյա բժշկական հերթապահության առկայությունը:

Այս համատեքստում խնդրահարույց է առաջին բուժօգնության տրամադրման համար անհրաժեշտ դեղորայքից բացի՝ այլ դեղորայքի, բժշկական պարագաների առկայությունը՝ ՁՊՎ-ների բուժկետերում: Հաշվի առնելով ՁՊՎ-ներում բուժաշխատողի բացակայությունը՝ դեղորայքը կարող է տրամադրվել ոչ մասնագետի (ոստիկանի) կողմից, ինչը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ:

ԲԿԱՄ-ը մտահոգիչ է համարում նաև այն, որ դեռ առկա են դեպքեր, երբ ՁՊՎ-ներից ազատազրկվածների տեղափոխումը իրականացվում է սահմանված կարգի խախտմամբ՝ աշխատակիցների անձնական մեքենաներով:

ԲԿԱՄ-ը հարկ է համարում նշել, որ ՀՀ տարածքում գործող ՁՊՎ-ներում բացակայում են կին ոստիկաններ, որոնք կիրականացնեին ՁՊՎ ընդունվող կանանց և աղջիկների խուզարկությունը, կուղեկցեն նրանց սանհանգույց և այլն:

Այսպիսով, վերոնշյալ թերությունների և բացթողումների կապակցությամբ առաջարկվում է.

- Բացառել բերման ենթարկված կամ հրավիրված անձանց՝ օրենքով սահմանված առավելագույնը 3 ժամից ավել ոստիկանության բաժիններում պահելու դեպքերը, ինչպես նաև՝ ՁՊՎ-ներում օրենքով սահմանված ժամկետը գերազանցելու դեպքերը,
- Ապահովել ՁՊՎ-ներում վարվող մատյանների պատշաճ լրացումը,
- Միջոցներ ձեռնարկել ՁՊՎ-ներում սննդի չափաբաժինների, անբավարար պահման պայմանների, արգելված իրերի փոխանցման կանխարգելման ուղղությամբ,
- Բացառել ՁՊՎ-ներից ազատազրկվածների՝ սահմանված կարգի խախտմամբ (աշխատակիցների անձնական մեքենաներով) տեղափոխման դեպքերը,
- ՁՊՎ-ներում ապահովել անձի արտաքին զննության պատշաճ իրականացումը,
- Վերանայել ՁՊՎ-ներում դեղորայքի տրամադրման քաղաքականությունը,
- Քննարկել բուժզննությունը տեղամասային բուժհաստատություններում կազմակերպելու հարցը՝ բուժզննության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով,
- Ապահովել ՀՀ տարածքում գործող ՁՊՎ-ներում նաև կին ոստիկանների ներգրավումը՝ ՁՊՎ ընդունվելուց անցկացվող արտաքին զննության ու խուզարկության կազմակերպման համար:

ՀԱՏՈՒԿ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Հիմնախնդիրներ

- Հատուկ հանրակրթական դպրոցներում առկա են ոչ բարեկարգ պահման և խնամքի պայմաններ,
- Առկա է սննդի տրամադրման, պահման, մատուցման ոչ պատշաճ կազմակերպման խնդիր,
- Առկա են խնդիրներ երեխաներին անհրաժեշտ սննդով ապահովելու չափորոշիչների կապակցությամբ, ինչի հետևանքով երեխաները հաճախ մնում են կիսաքաղց,
- Բացակայում է պատշաճ վերահսկողություն բարեգործական հիմունքներով տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի պատշաճ պահման և, ըստ անհրաժեշտության, երեխաներին համապատասխան իրերի տրամադրման նկատմամբ,
- Հատուկ դպրոցներում լուրջ խնդիր է երեխաների առողջության ապահովման խնդիրը՝ համապատասխան բուժօգնության տրամադրման միջոցով,
- Առկա են խնդիրներ երեխաների փաստացի գտնվելու վայրում անվճար պարտադիր բժշկական սպասարկման մեխանիզմի կիրառման հարցում,
- Հատուկ հանրակրթական դպրոցներում տրամադրվող բուժօգնությունը կանոնակարգված չէ,
- Առկա է մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների համալրման խնդիր,
- Հատուկ դպրոցներում երեխաների ուսուցումն անարդյունավետ է կազմակերպվում,
- Հաստատություններում չկան երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման մատյաններ (մարմնական վնասվածքների հաշվառման մատյան),
- Մտահոգիչ է Գյումրու թիվ 3 հատուկ հանրակրթական դպրոցում երեխաների խնամքի ոչ պատշաճ կազմակերպումը:

ԲԿԱՄ-ն այցելություններ է իրականացրել ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգում գործող հատուկ հանրակրթական դպրոցներ: Այցելությունների հիմնական նպատակներն էին վերոնշյալ հաստատություններում գտնվող երեխաների պահման պայմաններին ծանոթանալը, բուժսպասարկման կազմակերպման, ինչպես նաև նշված հաստատություններում պահվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ուսումնասիրությունը:

Հատուկ հանրակրթական դպրոցները կազմակերպում են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների առանձնահատկություններին համապատասխան կրթություն:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին

համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

Թեև կատարվել են աշխատանքներ հատուկ հանրակրթական դպրոցների շինարարության և վերանորոգման ուղղությամբ, այնուամենայնիվ, ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ մի շարք հատուկ հանրակրթական դպրոցներ կամ դպրոցների մասնաշենքեր գտնվում են ոչ բարվոք վիճակում (թիվ 16, 17 հատուկ հանրակրթական դպրոց, Վաղարշապատի թիվ 2 հատուկ հանրակրթական դպրոց և այլն): Օրինակ, թիվ 2 հատուկ հանրակրթական դպրոցի տանիքը վթարային էր, առաստաղներն ու պատերը՝ խոնավ: Առկա է նաև ոչ բավարար կահավորման խնդիր (հնամաշ մահճակալներ, անհատական պահարանների բացակայություն, հնամաշ և կոտրված խոհանոցային կահույք ու սպասք, պահարանների բացակայություն պահեստում և այլն): Խաղասենյակները և դասապատրաստման սենյակները պատշաճ կահավորված չեն, առկա է ոչ բավարար լուսավորություն:

ԲԿԱՄ-ը հիմնականում արձանագրել է հատուկ հանրակրթական դպրոցների խոհանոցների սանիտարահիգիենիկ պայմանների ոչ բավարար վիճակ: Հիմնականում, ըստ կարգի, 24 ժամվա ընթացքում չեն պահպանվում սննդի նմուշները: Թեև առկա է ճաշացանկ, սննդակարգը և մատուցված սնունդը չեն համապատասխանում իրար (Հանրապետական թիվ 2 կրթահամալիր): Որոշ հատուկ հանրակրթական դպրոցներում չկա ճաշացանկ (թիվ 2 հատուկ հանրակրթական դպրոց): Բավարար չէ նաև տրամադրվող սննդի որակը, անգամ տրամադրվում է ժամկետանց կամ սննդամթերքի պահպանման ռեժիմի խախտմամբ սնունդ: Մտահոգիչ է սննդամթերքի անվտանգության ապահովման խնդիրը, քանի որ ԲԿԱՄ-ի կողմից արձանագրվել են դեպքեր, երբ երեխաների համար անհրաժեշտ սնունդը գնվում է մասնավոր անձանցից (Սպիտակի հատուկ հանրակրթական դպրոցում՝ թթվասեր և այլ կաթնամթերք) կամ մթերվում է աշխատակիցների կողմից: Այսպես, Հանրապետական թիվ 2 կրթահամալիրի պահեստում ԲԿԱՄ-ն ականատես է եղել ապակյա տարաներով վերալցված ծիրանի ջեմի 10-ից ավելի տարաների, որոնց մեջ կային բորբոսնած և ոչ պիտանի պահածոներ: Փոխտնօրենի հավաստմամբ՝ և ջեմը, և 3 լիտրանոց ապակյա տարաներով ծիրանի հյութերը կրթահամալիրի բակից հավաքված ծիրանից են պատրաստված:

Արովյանի թիվ 1 հատուկ օժանդակ դպրոցի խոհանոցում պահվում էր առաջին օգնության ժամկետանց դեղորայք, որը դրված էր երեխաներին հասանելի վայրում, և դեղորայքի պահման պայմանները պահպանված չէին:

Երեխաների հիմնական բողոքները սննդի առնչությամբ կապված են անբավարար չափաբաժինների հետ, ինչի արդյունքում իրենք քաղցած են մնում: ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ պահեստում առկա է միս և մսամթերք (երշիկ, նրբերշիկ), բայց ճաշացանկում այն ներառված չէ: Իսկ ներառված լինելու դեպքում՝ հանդիպել է դեպք, երբ ճաշասեղանի շուրջ նստած թվով 4 երեխայից միայն մեկին է տրամադրվել ապուրի միսը (թիվ 16 հատուկ հանրակրթական դպրոց):

Սննդի պահեստում չկան սննդի պահման համապատասխան պայմաններ, որոշ դեպքերում չկան սառնարաններ (որոշ դեպքերում սառնարանները չեն աշխատում, տարողունակ չեն կամ քանակը բավարար չէ) կամ պահարաններ (Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ հանրակրթական դպրոցում): Օրինակ՝

Աբովյանի թիվ 1 հատուկ օժանդակ դպրոցում սննդամթերքի պահեստում նրբերշիկը պահվում էր ոչ ճիշտ ջերմային ռեժիմում, բանջարեղենը դրված էր տնտեսական իրերի հետ:

Մտահոգիչ է նաև բարեգործական հիմունքներով դպրոցներին տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի ոչ պատշաճ պահման և երեխաներին համապատասխան ժամկետանց իրերի տրամադրման խնդիրը (Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ հանրակրթական դպրոցում երեխաներին օգտագործման համար տրամադրվել էր ժամկետանց ատամի մածուկ):

Հիմնականում սանհանգույցները և բաղնիքները վատթար վիճակում են, ծորակները կոտրված են, ցնցուղները նույնպես կոտրված են կամ բացակայում են, չկա նաև զուգարանի թուղթ, օձառ, ձեռքերը չորացնելու հարմարանք: Պահպանված չեն նաև սանիտարահիգիենիկ պայմանները: Որոշ հատուկ հանրակրթական դպրոցներ ապահովված չեն մշտական ջրով, որի արդյունքում սպասարկող անձնակազմը ջուրն ապահովում էր դույլերով:

Թիվ 17 հատուկ հանրակրթական դպրոցում մտահոգիչ է զուգարանից օգտվելու հնարավորության հետ կապված խնդիրը, քանի որ աղջիկները և տղաները օգտվում են նույն զուգարանից:

ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ լիարժեք պահպանված չէ երեխաների անվտանգությունը: Այսպես, ննջասենյակներում, խաղասենյակներում, միջանցքներում, խոհանոցներում չկան վարդակներ, հոսանքալարերը բաց են: Երեխաները ծանոթ չեն տեղահանման պլանին: Հատուկ հանրակրթական դպրոցներում տարածքը հսկող պահակի աշխատանքը հիմնականում ձևական բնույթ է կրում:

Հատուկ հանրակրթական դպրոցները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար. չկան թեքահարթակներ, զուգարանները հարմարեցված չեն և այլն: Կառույցների տիպային չլինելու պատճառով՝ երեխաները սնվելու համար ստիպված են եղանակային վատ պայմաններին դուրս գալ հիմնական մասնաշենքից, անցնել անբարեկարգ ճանապարհով՝ մինչ ճաշարանի մասնաշենք հասնելը (Արթիկի թիվ 1 հատուկ հանրակրթական դպրոցում):

Թեև հատուկ հանրակրթական դպրոցներում կան բուժսենյակներ, այնուամենայնիվ, բուժանձնակազմը չունի հստակ գործառույթներ, չափորոշիչներ, որի պատճառով դժվար է գնահատել նրանց աշխատանքի սահմանները և գործառույթների կազմակերպումը:

Հանդիպել է ժամկետանց դեղորայք, որի առկայությունը, օրինակ թիվ 17 հատուկ հանրակրթական դպրոցում, պարզաբանվել է այն հանգամանքով, որ դեղորայքը չի տրամադրվում դպրոցի կողմից և բուժաշխատողն անձամբ է գնել այն, սակայն, օպտիկական սկնոցները չվերցնելու հետևանքով, դեղորայքի ժամկետը չի ստուգվել:

Թեև բուժմասերում առանձնացվել են մեկուսացման սենյակներ, այնուամենայնիվ, դրանք նպատակային չեն օգտագործվում: ԲԿԱՄ-ը բազմիցս ականատես է եղել, որ չի մեկուսացվել նույնիսկ ջերմող երեխան:

Մարզային հատուկ հանրակրթական դպրոցներում խնդրահարույց է բժշկական նեղ մասնագետների խորհրդատվության պատշաճ կազմակերպումը: Նկատի ունենալով, որ երեխաների բուժապասարկումը իրականացվում է ըստ բնակության վայրի, և հաճախ այդ վայրը գտնվում է փաստացի դպրոցից հեռում, խնդիր է առաջանում երեխաներին

անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու հարցում: Այսպես, երեխաները տուն են վերադառնում հանգստյան օրերին, երբ սպասարկող տեղամասային բուժամբուլատորիան չի գործում, իսկ դպրոցի տարածքը սպասարկող բուժհաստատությունը, համապատասխան հաշվառման բացակայության պատճառով, մերժում է երեխաների բուժսպասարկումը:

Հանդիպում են բուժանձնակազմի ոչ մասնագիտական մոտեցման դեպքեր: Այսպես, Երևանի թիվ 11 հատուկ օժանդակ դպրոցում մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հետ բժիշկը խոսում է ռուսերեն՝ գիտակցելով, որ մտավոր խնդիրներ ունեցող երեխան չի ընկալում ռուսերենը: Ցավալի է, որ բուժանձնակազմը հիմնականում որևէ միջոց չի նախաձեռնում՝ կանոնակարգելու իր աշխատանքը՝ երեխաների պատշաճ բժշկական սպասարկումը կազմակերպելու նպատակով:

Խնդրահարույց է նաև, որ գրեթե բոլոր հատուկ հանրակրթական դպրոցներում երեխաները մինչև երեկոյան քնի ժամը իրենց ննջասենյակներ մտնելու «իրավունք» և հնարավորություն չունեն, լույսերը մարված են և կարող են կառավարվել միայն միջանցքից:

ԲԿԱՄ-ը խնդրահարույց է համարում, որ երեխաների վերականգնողական ծրագրերը ոչ պատշաճ են կազմակերպվում և չեն բխում երեխաների կարիքներից: Այսպես, անհասկանալի է մտավոր թերզարգացում ունեցող երեխաների Երևանի թիվ 11 հատուկ օժանդակ դպրոցում առկա փայտամշակման սենյակը, որը չի օգտագործվում երեխաների կողմից, քանի որ երեխաներն, իրենց ֆիզիկական տվյալներից ելնելով, ի վիճակի չեն օգտվել դրանից:

Վարչակազմի կողմից մշտապես բարձրացվում է փոխադրամիջոցի բացակայության խնդիրը. մարզերում բնակվող երեխաները հանգստյան օրերին ստիպված են մնալ դպրոցում, քանի որ ծնողները հնարավորություն չունեն սեփական միջոցներով երեխային տանելու տուն: Խնդիրը ավելի է բարդանում, երբ դպրոցը հեռու է գտնվում համայնքային տրանսպորտային միջոցների կանգառներից, և երեխաների տեղաշարժը դժվար է կազմակերպվում:

ԲԿԱՄ-ի փորձագետները մտահոգիչ են համարում հատուկ հանրակրթական դպրոցների աշխատակիցների կողմից որոշ դեպքերում անտարբեր վերաբերմունքը երեխաների նկատմամբ: Այսպես, Հանրապետական թիվ 2 կրթահամալիրում դեմքին արյան հետքերով երեխային առաջնահերթ օգնություն ցուցաբերելու փոխարեն՝ աշխատակիցները փորձել են տարբեր պատճառաբանություններով թաքցնել կատարվածը (պատճառաբանվել է, որ դա ներկի հետքեր են, իսկ մեկ այլ աշխատակցի մեկնաբանմամբ՝ ճակնդեղի):

Դիտարկվող հաստատություններում չկան երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման մատյան:

Մտահոգիչ է նաև դպրոցների աշխատակիցների ոչ մանկավարժադաստիարակչական պահվածքը: Օրինակ, Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ հանրակրթական դպրոցի տնօրենը ԲԿԱՄ-ի այցի պահին (աշխատանքային ժամին) գտնվում էր ոչ սթափ վիճակում:

Հատուկ ուշադրության են ենթակա Գյումրու թիվ 3 հատուկ հանրակրթական դպրոցի պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը, ինչը որևէ կերպ չի փոխվել 2012թվականից ի վեր: Այսպես, դպրոցի մուտքի մոտ և բակում լցված էին ծխախոտի մնացորդներ, որոնց կուտակումներն ավելի շատ էին տնօրենի պատուհանի տարածքում: Դպրոցի պահակը,

ննջարաններից մեկում երեխաների մահճակալին նստած, հեռուստացույց էր դիտում և ծխում: Բոլոր ննջարաններում էլեկտրական լարերը գտնվում էին բաց վիճակում և կախված էին երեխաների մահճակալների վրա: Սանհանգույցը գտնվում է ննջարաններից հեռու, հակասանիտարական վիճակում, հատակը հեղեղված էր կեղտաջրերով, դպրոցի ողջ տարածքում առկա էր գարշահոտ: Թեև լոգասենյակը վերանորոգված էր, սակայն նույնպես գտնվում էր հակասանիտարական վիճակում: Լոգասենյակի դռան առջև սառցե շերտ էր գոյացել, ինչը երեխաների համար լոգարանից օգտվելու դժվարություններ էր առաջացնում:

Վերոնշյալ թերությունների վերացման ուղղությամբ առաջարկվում է.

- Հատուկ հանրակրթական դպրոցները ապահովել պատշաճ պահման և խնամքի պայմաններով,
- Խիստ վերահսկողություն սահմանել սննդի տրամադրման, պահպանման, մատուցման պատշաճ կազմակերպման գործընթացում,
- Վերամշակել երեխաների համար անհրաժեշտ սննդի նախատեսման չափորոշիչները՝ երեխաներին բավարար քանակությամբ սննդով ապահովելու նպատակով,
- Վերահսկողություն սահմանել բարեգործական հիմունքներով տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի պատշաճ պահպանման և, ըստ անհրաժեշտության, երեխաներին համապատասխան իրերի տրամադրման նկատմամբ,
- Միջոցներ ձեռնարկել հատուկ հանրակրթական դպրոցներում տրամադրվող բուժօգնությունը կանոնակարգելու ուղղությամբ,
- Ստեղծել պայմաններ երեխաների փաստացի գտնվելու վայրում անվճար պարտադիր բժշկական սպասարկման մեխանիզմը կիրառելու համար,
- Հատուկ հանրակրթական դպրոցներն ապահովել անհրաժեշտ վերապատրաստում ունեցող մասնագետներով,
- Ապահովել երեխաների ուսուցման արդյունավետ կազմակերպումը՝ հաշվի առնելով երեխաների ունակությունները և կարիքները,
- Կազմակերպել փոխադրամիջոցների հասանելիություն՝ հանգստյան օրերին երեխաների երթևեկությունը կազմակերպելու համար,
- Ապահովել անհատական վերականգնողական ծրագրերի լիարժեք իրականացումը,
- Հաստատություններում վարել երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման մատյան (մարմնական վնասվածքների հաշվառման մատյան),
- Ձեռնարկել հրատապ միջոցներ Գյումրու թիվ 3 հատուկ հանրակրթական դպրոցում երեխաների խնամքի պատշաճ կազմակերպման ուղղությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնախնդիրներ

- Արձանագրվել են խնդիրներ դիտարկվող հաստատություններում ոչ բարենպաստ պահման պայմանների և խնամքի ոչ պատշաճ իրականացման կապակցությամբ,
- Առկա է դեղացանկի համալրման խնդիր,
- Մտահոգիչ է դիտարկվող հաստատություններում պահվող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը,
- Որոշ դեպքերում խնդրահարույց է դիտարկվող հաստատություններում թեքահարթակների բացակայությունը,
- Սոցիալական խնամքի հաստատություններում առկա է անձնակազմի համալրման և նրանց ցածր վարձատրման խնդիրը,
- Մտահոգիչ են ժամկետանց դեղերի առկայությունն ու ներարկիչների բազմակի օգտագործման դեպքերը:

Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող տուն-ինտերնատներում:

Տուն-ինտերնատը բժշկասոցիալական կազմակերպություն է և ստեղծված է խնամքի, սոցիալական սպասարկման և բժշկական օգնության կարիք ունեցող միայնակ տարեցների և հաշմանդամների մշտական բնակության համար:

ԲԿԱՄ-ի անդամներն այցելել են Երևան քաղաքի և մարզային սոցիալական խնամքի հաստատություններ: 2013թ. այցելությունների ընթացքում ԲԿԱՄ-ի կողմից արձանագրված հիմնական խնդիրներն էականորեն չեն տարբերվել 2012թ. ընթացքում վերհանված խնդիրներից:

Շարունակում է չլուծված մնալ ԲԿԱՄ-ի կողմից արձանագրված դիտարկվող հաստատություններում տիրող ոչ բարենպաստ պահման և խնամքի պայմանների խնդիրը: Մասնավորապես՝ շենքային պայմաններն ու սանիտարահիգիենիկ վիճակն անբավարար են, որոշ հաստատություններում ջրամատակարարումը պատշաճ չէ (օրինակ, Նորքի տուն-ինտերնատ), բնակելի սենյակներն անբարեկարգ վիճակում են, հատկապես՝ անկողնային հիվանդների բաժանմունքներում:

Նպատակահարմար չէ տարվա կտրվածքով դեղացանկի հաստատումը, որը անհրաժեշտության դեպքում անհնարին է համալրել նոր անվանացանկով, ինչի արդյունքում անհրաժեշտության դեպքում հաստատված դեղացանկից դուրս դեղորայքն անհասանելի է խնամքի տակ գտնվող անձանց համար: Այցելությունների ընթացքում հանդիպել են ժամկետանց դեղորայք և միանգամյա օգտագործման համար նախատեսված ներարկիչների կրկնակի օգտագործման դեպքեր (օրինակ, Գյումրու տուն-ինտերնատ):

Կարգավորված չէ նաև շահառուների զբաղվածության հարցը. նախատեսված են միայն հեռուստացույց և սեղանի խաղեր (շախմատ, նարդի): Մակայն հանգստի սենյակների բացակայության պատճառով հեռուստացույցը տեղադրված է միջանցքում և խանգարում է մյուս շահառուների հանգիստը:

Մեկ այլ խնդիր է, տվյալ հաստատություններում թեքահարթակների բացակայությունը, ինչը խախտում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ շինություն առանց խոչընդոտների մուտք ու ելք անելու իրավունքը:

ԲԿԱՄ-ի կողմից այցելված սոցիալական խնամքի հաստատություններում կրտսեր բուժանձնակազմը հիմնականում բարձրացնում էր հաստիքներով համալրման խնդիրը, քանի որ անկողնային ծանր հիվանդների թիվը մեծ է և նրանք անհատական խնամքի կարիք ունեն: Մտազոհիչ էր այդպիսի պայմաններում աշխատողների ցածր վարձատրությունը:

Տուն-ինտերնատների վարչակազմը բարձրաձայնում էր չհաշվառված, սակայն փաստացի հոգեկան խանգարումներ ունեցող անձանց տեղավորման հարցը: Գործնականում չհաշվառված, սակայն փաստացի հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ներկայացնում են հոգեբուժական դիսպանսերում հաշվառված չլինելու տեղեկանք, արդյունքում՝ անձը տեղավորվում է տուն-ինտերնատում՝ ունենալով հոգեկան առողջության խնդիրներ, իսկ վարչակազմը չունի արդյունավետ մեխանիզմներ անձին համապատասխան ծառայություններ մատուցելու համար:

Անհրաժեշտ է անդրադառնալ Նորքի տուն-ինտերնատի ջրամատակարարման խնդրին: Այսպես, ամռան ամիսներին ջուրը հասանելի չի լինում 2-րդ և 3-րդ հարկերում, այն դեպքում, որ այդ հարկերում են բնակվում ծերերը, այնտեղ են գտնվում սանհանգույցը և լոգարանը: Ավելին, անկողնային հիվանդների բաժանմունքը, որը տեղակայված է 1-ին հարկում, ապահովված չէ տաք ջրով, չունի լոգարան: Անկողնային հիվանդների բաժանմունքի մասնաշենքի տանիքի ծածկը կոտրված է, ինչի արդյունքում տեղումների ժամանակ անձրևաջրերը լցվում են սենյակներ: Թեև առանձնացված էր կարանտինային սենյակ, սակայն պայմանները ծայրահեղ վատթար էին (կոյուղաջրերը լցվում էին սենյակ, կահույքը հնամաշ էր, պատուհանները չէին փակվում):

Խնդրահարույց է, որ անկողնային հիվանդների բաժանմունքում տղամարդկանց և կանանց համար ապահովված չէին առանձին հիվանդասենյակներ, ավելին՝ համապատասխան պայմանների բացակայության պատճառով նաև առանձնացված չեն առավել ծանր հիվանդները (գանգրենայով հիվանդը գտնվում է կոտրվածք ունեցող հիվանդի հետ):

Մատչելի չէր ռենտգենոգրաֆիկ հետազոտությունը, քանի որ տուն-ինտերնատը սպասարկող տարածքային պոլիկլինիկան, չունենալով անհրաժեշտ սարքավորումներ, պայմանագրային հիմունքներով օգտվում է Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցից, սակայն կուտակված պարտքերի պատճառով դադարեցվել էին ռենտգեն հետազոտումները:

Թիվ 1 տուն-ինտերնատի առաջին մասնաշենքը մասնակի վերանորոգված է, սակայն չվերանորոգված մասը գտնվում է անբարեկարգ վիճակում: Երկրորդ մասնաշենքը, որը նախատեսված է անկողնային հիվանդների համար, կարիք ունի կապիտալ վերանորոգման, շենքը գտնվում է ոչ սեյսմակայուն վիճակում:

Խոհանոցը նույնպես կարիք ունի վերանորոգման. այցելության պահին այն գտնվում էր հակասանիտարական վիճակում: Օդափոխության համակարգ չկար, սպասքը բավականին հին էր, սննդի նմուշները չէին պահպանվում:

Լոգարանները, սանհանգույցները և լվացքատունը նույնպես կարիք ունեին վերանորոգման, գտնվում էին ոչ սանիտարահիգիենիկ վիճակում: Լվացքատանը չկար չորանոց, որի պատճառով շահառուներն իրենց մասնաշենքերում էին չորացնում հագուստը:

Նշված թերությունների և բացթողումների վերացման նպատակով առաջարկվում է.

- Միջոցներ ձեռնարկել դիտարկվող հաստատությունների կենցաղային պայմանների և խնամքի բարելավման ուղղությամբ,
- Վերանայել դեղացանկի սահմանման մեխանիզմը,
- Լուծել հաստատություններում պահվող անձանց զբաղվածության խնդիրը,
- Մոցիլալական խնամքի հաստատություններն ապահովել թեքահարթակներով,
- Համալրել խնամք իրականացնող անձնակազմը և քննարկել նրանց վարձատրության բարձրացման հնարավորությունը,
- Բացառել ժամկետանց դեղերի առկայությունն ու ներարկիչների բազմակի օգտագործման դեպքերը:

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Հիմնախնդիրներ

- Արձանագրվել են խնդիրներ դիտարկվող հաստատություններում ոչ բարենպաստ պահման պայմանների և խնամքի ոչ պատշաճ իրականացման կապակցությամբ,
- Մի շարք հոգեբուժական հիմնարկներում առկա է անձնակազմի համալրման խնդիր,
- Դիտարկվող հաստատություններում առկա են խնդիրներ սննդի պատշաճ ապահովման կապակցությամբ,
- Խնդրահարույց է որոշ հոգեբուժարաններում որպես բարոյահոգեբանական ճնշման միջոց իրականացվող զսպման միջոցների կիրառումն այլ հիվանդների ներկայությամբ,
- Մտահոգության տեղիք է տալիս հոգեբուժարաններում ժամկետանց դեղերի առկայությունը, ինչպես նաև արդիական հոգեմետ դեղորայքի բացակայությունը,
- Մտահոգիչ է դիտարկվող հաստատություններում պահվող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը,
- Խնդիր է հոգեբուժարաններից դուրս գրման ենթակա և խնամող չունեցող անձանց տուն-ինտերնատներում տեղավորման հարցը,
- Մտահոգիչ է հոգեկան խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ վերականգնողական սոցիալ-հոգեբանական միջոցառումներ չկազմակերպելն ու յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը,
- Հիվանդների զբոսանքը պատշաճ չի կազմակերպվում,
- Մտահոգիչ է դատարանի վճռով ընդհանուր հարկադիր բուժման մեջ գտնվող հիվանդներին ընդհանուր բաժանմունքներում գտնվող հիվանդների, ինչպես նաև հոգեկան խնդիրներ ունեցող անչափահասներին չափահասների՝ կանանց, տղամարդկանց հետ միասին բուժում կամ խնամք իրականացնելը,
- Հոգեբուժարաններում բացակայում է պատշաճ ջեռուցում՝ ըստ եղանակային պայմանների,
- Խնդիր է Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի դատահոգեբուժական փորձաքննության բաժանմունքին, ըստ անհրաժեշտության, ուղեկցող ջոկատի շուրջօրյա չտրամադրման հարցը,
- Առկա է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ այլ բուժհաստատություններում հետազոտվելու կամ նեղ մասնագիտական խորհրդատվության կամ բուժման ապահովման և անմատչելիության խնդիր:

«Հոգեբուժական օգնության մասին» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հոգեկան առողջության պահպանումը ներառում է՝ հոգեկան առողջության բարելավումն ու հոգեկան խանգարումների կանխարգելումը, հոգեկան խանգարումներով տառապող անձանց անհրաժեշտ բազմակողմանի և մատչելի բժշկական օգնության, խնամքի ու

օգնության այլ ձևերի ապահովումը, հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ հասարակության կողմից համապատասխան վերաբերմունքի, առաջին հերթին՝ հանդուրժողականության, բարյացակամության ձևավորումը, որը համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ և 16-րդ հոդվածների՝ բացառում է որևէ խտրականություն:

ԲԿԱՄ-ի անդամներն այցելել են թե Երևան քաղաքի և թե ՀՀ մարզային հոգեբուժական կլինիկաներ, որտեղ զրուցել են վարչակազմի, բուժանձնակազմի և հիվանդների հետ, ծանոթացել են նրանց պահման պայմաններին, նրանց կողմից ներկայացվող բողոքներին, ունեցել են առանձնազրույցներ:

2013թ. այցելությունների ընթացքում ԲԿԱՄ-ի կողմից արձանագրված հիմնական խնդիրներն էականորեն չեն տարբերվել 2012թ. ընթացքում վերհանված խնդիրներից՝ վերաբերելով անձնակազմի համալրմանը, ոչ բարենպաստ պահման պայմաններին և խնամքի ոչ պատշաճ իրականացմանը, պահվող անձանց զբաղվածության ապահովմանը, հոգեբուժական հիմնարկներում՝ որպես բարոյահոգեբանական ճնշման միջոց իրականացվող զսպման միջոցների կիրառմանն այլ հիվանդների ներկայությամբ և մի շարք այլ խնդիրների, որոնք ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Շարունակվում է չլուծված մնալ այցելությունների ընթացքում ԲԿԱՄ-ի կողմից արձանագրված դիտարկվող հաստատություններում տիրող ոչ բարենպաստ պահման և խնամքի պայմանների խնդիրը: Արձանագրված խնդիրներից են եղել, մասնավորապես, հիվանդասենյակների, աշխատասենյակների անմխիթար վիճակը, խոհանոցի և լվացքատան ոչ բարվոք վիճակը, գրադարանի, մարզասրահի բացակայությունը: Առկա է նաև անբավարար սանիտարահիգիենիկ պայմանների, ինչպես նաև հիգիենիկ և անկողնային պարագաների բացակայության խնդիր: Համատարած է դիտարկվող շինությունների վերանորոգման և կահավորման անհրաժեշտությունը:

ԲԿԱՄ-ի կողմից այցելված մի շարք հոգեբուժական հիմնարկներում շարունակում է արդիական մնալ անձնակազմի համալրման, մասնավորապես՝ հոգեբույժների, սանիտարների (հատկապես տղամարդկանց) ոչ բավարար քանակի խնդիրը, ինչը հանգեցնում է տվյալ հաստատությունների շահառուների նկատմամբ բուժման և խնամքի ոչ լիարժեք իրականացմանը: Այսպես, Սևանի հոգեբուժարանի յուրաքանչյուր բաժանմունքում պահվում է 50-70 հիվանդ, որոնց հսկում է մեկ բուժքույր, մեկ սանիտար և մեկ հսկիչ: Բաժանմունքներում կան նաև անկողնային հիվանդներ, որոնց անհրաժեշտ է առանձնահատուկ խնամք, ինչը, սակայն, նման սակավաթիվ աշխատակիցների պարագայում հնարավոր չէ ապահովել:

Հանդիպել են դեպքեր, երբ բուժքույրը ինքն է կատարում վիրակապություն՝ առանց վիրաբույժի նշանակման, կամ հոգեբույժն է նշանակում թերապևտիկ հիվանդությունների համար բուժում (Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա): Հիմնականում դա նեղ մասնագետների բացակայության, վերջիններիս, ըստ անհրաժեշտության, չհրավիրելու, ինչպես նաև այլ հիվանդանոցների մասնագիտացված բաժանմունքներ տեղափոխելու հնարավորության բացակայության արդյունք է:

ԲԿԱՄ-ն այցելությունների ընթացքում կրկին խնդիրներ է արձանագրել դիտարկվող հաստատություններում սննդի պատշաճ ապահովման կապակցությամբ: Հիմնականում

շահառուները սնվում են հարազատների բերած հանձնուքներով: Հիվանդները հիմնականում բողոքում են միատեսակ և ոչ որակյալ սննդից: Այսպես, Սևանի հոգեբուժարանի ճաշի պատրաստումը կատարվել է ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում (օրինակ՝ պատրաստվող ճաշի կաթսայի կողքին կատու էր նստած): Աշխատակիցների հավաստմամբ՝ ճաշացանկը կազմվում է յուրաքանչյուր օրվա համար: Այնուամենայնիվ, այցելության պահին ճաշարանի պահեստում արդեն իսկ դրված էր մեկ պարկ բրինձ, որը նախատեսված էր հաջորդ օրվա նախաճաշի համար, ընդ որում՝ նույն օրը ճաշացանկով նախաճաշին նախատեսված էր կրկին բրնձով փլավ: Ընդ որում, պարզվել է, որ որոշ հիվանդների, որպես հավելյալ սնունդ, տրամադրվում է միայն մակարոնով փլավ:

Խնդրահարույց է որոշ հոգեբուժարաններում զսպման միջոցների՝ որպես բարոյահոգեբանական ճնշման միջոց, այլ հիվանդների ներկայությամբ կիրառումը, ինչն արձանագրվել էր նաև 2012թ. կատարած այցելությունների ընթացքում: Մասնավորապես, առկա են դեպքեր, երբ անմիջապես սենյակում, բոլոր հիվանդների ներկայությամբ, հոգեբուժարանի աշխատակիցները հիվանդի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելով հանգստացնող դեղ են ներարկում:

Մտահոգության տեղիք է տալիս հոգեբուժարաններում ժամկետանց դեղերի առկայությունը, ինչպես նաև ոչ արդիական և տեղական արտադրության դեղորայքի օգտագործումը, որն, ըստ բժիշկների, արդյունավետ չէ և ունի բազմաթիվ կողմնակի ազդեցություններ:

Մտահոգիչ է դիտարկվող հաստատություններում պահվող անձանց պատշաճ զբաղմունքի ապահովման խնդիրը: Միակ զբաղմունքի միջոցը հեռուստացույցն է կամ մի քանի տեսակի խաղերը (նարդի, շաշկի, դոմինո, խաղաքարտեր) որոնք, ըստ հիվանդների, իրենց հաճախ չեն տրամադրվում:

ԲԿԱՄ-ի կողմից այցելած հոգեբուժարաններում տեսկանորեն չլուծվող խնդիր է պահվող անձանց սոցիալական կապերի, մասնավորապես, իրենց ընտանիքների հետ կապի խզումը, ինչը հանգեցնում է նշյալ անձանց հասարակության կողմից մեկուսացմանը: Արդյունքում, այն անձինք, ովքեր ենթակա են դուրսգրման հոգեբուժարաններից և չունեն խնամող, լուրջ դժվարություններ են ունենում տուն-ինտերնատներում տեղավորվելու հարցում:

Հարկ է նշել, որ հոգեբուժարանների բաժանմունքներում հիմնականում բացակայում է հիվանդների իրավունքների մասին տեղեկատվական պաստառներ, ինչպես նաև՝ օրվա ռեժիմի մասին տեղեկատվական թերթիկ: Հիվանդները հիմնականում տեղեկացված չեն իրենց այնտեղ գտնվելու ժամկետների և պատճառների մասին:

Հոգեբուժարանում ապրող հիվանդները, ըստ իրենց առողջական վիճակի, շատ դեպքերում առանձնացված չեն: Օրինակ, ռեմիսիոն շրջանում գտնվող հիվանդները բնակեցված են հիվանդության սրացման փուլում գտնվող հիվանդների հետ: Դատարանի վճռով ընդհանուր հարկադիր բուժման մեջ գտնվող հիվանդները նույնպես բնակվում են ընդհանուր բաժանմունքներում: Մտահոգիչ է նաև հոգեկան խնդիրներ ունեցող անչափահասներին չափահասների՝ կանանց, տղամարդկանց հետ միասին բուժում կամ խնամք իրականացնելը (Լոռու մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր):

Հիվանդների նկատմամբ չի ցուցաբերվում անհատական մոտեցում, ինչպես նաև չի իրականացվում վերականգնողական սոցիալ-հոգեբանական միջոցառումներ, հոգեբուժարաններում հիմնականում չի կազմակերպվում հիվանդների զբոսանքը, զբոսահրապարակները բարեկարգված չեն, հաճախ չեն ունենում նստարաններ:

Խնդրահարույց է Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի դատահոգեբուժական փորձաքննության բաժանմունքից դուրս այլ հիվանդանոցներում լաբորատոր-գործիքային ախտորոշման կազմակերպումը, քանի որ հոգեբուժարանը համալրված չէ համապատասխան բուժաքրավորումներով: Միաժամանակ, ուղեկցող ջոկատի շուրջօրյա աշխատանքի բացակայության պարագայում վարչակազմը, ըստ անհրաժեշտության, չունի հնարավորություն փորձաքննվողներին այլ հիվանդանոցներ ոչ աշխատանքային օրերին և ժամերին տեղափոխում իրականացնելու համար:

Սևանի հոգեբուժարանում գտնվող հիվանդների մի մասը բնակվում են տարիներ շարունակ: Պահվող հիվանդների 25-30%-ի սոցիալական կապերը խզված են: Ոմանք կամ չունեն անձնագիր կամ անձնագրի ժամկետը լրանալու կապակցությամբ անձնագիրը ենթակա է փոխման: Անձնագրերի հետ կապված խնդիրների կապակցությամբ հարց է առաջանում նաև նրանց բանկային հաշվեհամարների բացման և քարտերի տիրապետման հետ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այն հիվանդները, որոնք տարիներ շարունակ բնակվում են հոգեբուժարանում, ոչ միշտ են ստանում և տիրապետում իրենց հասանելիք թոշակները:

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ առկա են դեպքեր, երբ բուժաշխատողները կիրառում են ֆիզիկական ուժ՝ հիվանդների միջև միջանձնյա վեճեր առաջանալու դեպքերում:

Բաժանմունքների պայմաններն անբավարար էին, հիվանդասենյակներում շատ ցուրտ էր, հիվանդները տարածքում շրջում էին բաճկոններով կամ այլ դրսի ձմեռային հագուստներով: Աշխատակազմի ներկայացուցիչները պատճառաբանում էին, որ ջեռուցումը կմիացվի, ըստ սահմանված կարգի, միայն նոյեմբերի 15-ից:

Վիրաբուժարանի և ատամնաբուժարանի պայմաններն անբավարար էին, գտնվում էին հակասանիտարական վիճակում, առկա էր ժամկետանց դեղորայք, անհրաժեշտ բժշկական գործիքներն ու սարքավորումները սակավաթիվ էին:

ԲԿԱՄ-ը հատկապես ցանկանում է անդրադառնալ ՀՀ ԱՆ հոգեկան առողջության Գյումրու կենտրոնին: Այցի ընթացքում ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ շենքը անմխիթար վիճակում էր, պարսպապատված չէր, ինչի հետևանքով հիվանդները անվտանգության ապահովման նպատակով զբոսանքի դուրս չէին բերվում (նմանատիպ իրավիճակ է նաև Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում): Սանհանգույցների կոյուղաջրերի սխալ կառուցվածքի հետևանքով կոյուղաջրերը դուրս են գալիս դեպի հարևան բնակելի տների բակերն ու հողամասերը: Միաժամանակ առկա է սանհանգույցների հիվանդների համար չհարմարեցված լինելու խնդիրը (ասիական տիպի զուգարանից օգտվելու համար անհրաժեշտ է բարձրանալ աստիճաններով, երբ չկան անգամ բռնակներ, իսկ հոգեմետ դեղորայքի ազդեցության տակ դժվարանում է հիվանդների կոորդինացիան: Լվացքատունն ու խոհանոցը գտնվում են առանձին մասնաշենքում և անմխիթար վիճակում են: Կաթսայատունը նույնպես գտնվում է այդ մասնաշենքում, որի

հարևանությամբ չի թույլատրվում շահագործել այլ շինություն, այսինքն՝ ապահովված չէ անվտանգությունը: Ավելին, այցելության պահին հիվանդների լոգանքը կազմակերպվում էր կաթսայատանը՝ լոգանքին չհարմարեցված պայմաններում, որի արդյունքում կրկին վտանգված է իրենց առողջությունը: Հիվանդասենյակները խիտ բնակեցված են, որոշ սենյակներում բացակայում են հիվանդների թվին համապատասխան անհատական օգտագործման իրերի պահման պահարանները:

Հատկանշական է, որ Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում հիվանդները բողոքում էին սննդի միատեսակությունից: Հիմնականում սննդակարգում ներառված էր միայն բարեգործական ընկերության կողմից տրված բրինձը՝ հավի մսի չորացած կտորներով, իսկ պահեստի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա է միայն վերոնշյալ սնունդը, մեկ այլ բարեգործական կազմակերպության կողմից տրամադրված պանիր և հիվանդների մեղվապահությունից ստացված մեղր:

Վերոնշյալ թերությունների վերացման ուղղությամբ առաջարկվում է.

- Միջոցներ ձեռնարկել դիտարկվող հաստատությունների վատ կենցաղային պայմանները, ինչպես նաև խնամքը բարելավելու ուղղությամբ,
- Համալրել հոգեբուժարանների աշխատակազմը անհրաժեշտ և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող աշխատողներով՝ հոգեբուժարանների խնամյալների խնամքը բարելավելու նպատակով,
- Ձեռնամուխ լինել հոգեբուժական հիմնարկներում սննդի որակի պատշաճ ապահովմանը,
- Բացառել որոշ հոգեբուժարաններում՝ որպես բարոյահոգեբանական ճնշման գործիք իրականացվող գսպման միջոցների կիրառումն այլ հիվանդների ներկայությամբ,
- Հոգեբուժական հիմնարկներում բացառել ժամկետանց դեղերի առկայության դեպքերը և միջոցներ ձեռնարկել արդիական հոգեմետ դեղորայքի գնման ուղղությամբ,
- Լուծել հաստատություններում պահվող անձանց զբաղվածության խնդիրը,
- Միջոցներ ձեռնարկել՝ լուծելու հոգեբուժարաններից դուրս գրման ենթակա և խնամող չունեցող անձանց տուն-ինտերնատներում տեղավորման հարցը,
- Միջոցներ ձեռնարկել հոգեկան խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ վերականգնողական սոցիալ-հոգեբանական միջոցառումներ կազմակերպելու և յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել հիվանդների զբոսանքի պատշաճ կազմակերպման ուղղությամբ,
- Ձեռնարկել միջոցներ դատարանի վճռով ընդհանուր հարկադիր բուժման մեջ գտնվող հիվանդներին ընդհանուր բաժանմունքներում գտնվող հիվանդներից, ինչպես նաև հոգեկան խնդիրներ ունեցող անչափահասներին չափահասներից՝ կանանց, տղամարդկանցից առանձնացնելու ուղղությամբ,
- Հոգեբուժարանների սենյակներում ապահովել պատշաճ ջերմաստիճան՝ ըստ եղանակային պայմանների,

- Միջոցներ ձեռնարկել Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի դատահոգեբուժական փորձաքննության բաժանմունքին, ըստ անհրաժեշտության, ուղեկցող ջոկատի շուրջօրյա տրամադրման ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ այլ բուժհաստատություններում հետազոտվելու կամ նեղ մասնագիտական խորհրդատվություն կամ բուժում ստանալու ապահովման և մատչելիության ուղղությամբ:

ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՏՆԵՐ

Հիմնախնդիրներ

- Խնդրահարույց է մանկատան սաներին հետազայում կացարանով ապահովումը,
- Խնդիր է 0-3 տարեկան երեխաներին խնամքի համար անհրաժեշտ տակդիրների, հիգիենայի և անկողնային պարագաների ոչ բավարար քանակը,
- Գիշերօթիկ հաստատություններում առկա են ոչ բարեկարգ պահման պայմաններ և խնամքի կազմակերպմանն առնչվող խնդիրներ,
- Մտահոգիչ է սննդամթերքի պահման անվտանգության պայմանները գիշերօթիկ հաստատություններում,
- Բացակայում է պատշաճ վերահսկողությունը բարեգործական նպատակներով տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի պահման և երեխաներին, ըստ անհրաժեշտության, համապատասխան իրերի տրամադրման նկատմամբ,
- Լուրջ խնդիր է երեխաների հիգիենայի ոչ պատշաճ կազմակերպումը գիշերօթիկ հաստատություններում,
- Խնդրահարույց է գիշերօթիկ հաստատություններում երեխաների՝ համապատասխան բուժօգնության տրամադրման միջոցով առողջության ապահովման խնդիրը,
- Առկա է գիշերօթիկ հաստատությունների երեխաների անվճար բժշկական սպասարկման խնդիր, այն դեպքերում, երբ երեխաների փաստացի գտնվելու և բնակության վայրերը տարբեր են,
- Խնդիր է սոցիալական աշխատողի աշխատանքի անարդյունավետությունը գիշերօթիկ հաստատություններում,
- Երեխաների նկատմամբ չի ցուցաբերվում անհատական մոտեցում,
- Մտահոգիչ է գիշերօթիկ հաստատություններում երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման մատյանի (մարմնական վնասվածքների հաշվառման մատյան) բացակայությունը,
- Բացակայում է վերահսկողությունը բժշկահոգեբանամանկավարժական կարիքների գնահատման նկատմամբ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը վերահսկողություն է իրականացնում մանկատներում՝ (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաներին տեղավորելու, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառման նկատմամբ: Մանկատներում երեխաների տեղավորման կարգը և նրանց խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգևոր ունակությունների լիարժեք զարգացման, նրան ինքնուրույն կյանքի նախապատրաստելու նպատակով մանկատներում,

գիշերօթիկ հաստատություններում ստեղծվում են ընտանեկանին մոտ պայմաններ: Մանկատանը գտնվող կամ տեղավորված և խնամակալի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալի պարտականությունները, ինչպես նաև այդ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում է մանկատան ղեկավարը»:

Մանկատները հիմնականում գտնվում են բարվոք վիճակում: Որպես համակարգային խնդիր չլուծված է մնում մանկատների սաների բնակարանային ապահովման խնդիրը:

ԲԿԱՄ-ի կողմից արձանագրվել է մանկատներում 0-3 տարեկան երեխաների խնամքի համար անհրաժեշտ հիգիենայի (տակդիրներ) և անկողնային պարագաների անբավարարություն:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի՝ դպրոցահասակ երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը կարող է իրականացվել երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների կողմից (09.11.2006թ. ՀՀ կառավարության թիվ 1735-Ն որոշում):

Թեև կատարվել են որոշակի շինարարական և վերանորոգման աշխատանքներ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում, (այսուհետ՝ գիշերօթիկ հաստատություններ) այնուամենայնիվ, ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ մի շարք հաստատություններ և նրանց մասնաշենքեր ունեն բարեկարգման կարիք: Առկա է նաև ոչ բավարար կահավորման խնդիր (անհատական պահարանների բացակայություն, հնամաշ դասապատրաստման և խաղասենյակների կահույք): Խոհանոցները հիմնականում գտնվում են սանիտարական բավարար վիճակում, սակայն հանդիպել են ժամկետանց սննդի և սննդամթերքի պահման ռեժիմների խախտումների դեպքեր: Այսպես, Բյուրեղավանի դպրոց ԲԿԱՄ-ի կողմից թվով 3 անգամ կատարած այցերի ընթացքում արձանագրվել են տարբեր սննդամթերքների (կաթնամթերք, մսամթերք) պահման ժամկետների և ռեժիմի խախտումներ: Առկա էր նաև բորբոսնած, ոչ պիտանի ծիրանի պահածոներ: Առկա են եղել խնդիրներ բարեգործական նպատակներով տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի ոչ պատշաճ պահման և երեխաներին, ըստ անհրաժեշտության, համապատասխան իրերի ժամկետանց տրամադրման կապակցությամբ:

Գիշերօթիկ հաստատություններում սանհանգույցները և լոգարանները բարվոք վիճակում են, սակայն անհրաժեշտ պարագաները շատ դեպքերում բացակայում են (զուգարանի թուղթ, օձառ, ձեռքերը չորացնելու միջոց): Թեև հաստատությունների աշխատակիցների պնդմամբ՝ պատշաճ կազմակերպվում է երեխաների լոգանքը, ննջասենյակներում առկա հոտը անուղղակիորեն վկայում է լոգանքի՝ ըստ անհրաժեշտության չկազմակերպելու մասին:

Խնդրահարույց է լվացքի կազմակերպումը (Բյուրեղավան), քանի որ մի քանի լվացքի մեքենաների առկայության պարագայում օգտագործվում է մեկը՝ չպահպանելով հիգիենայի նորմերը (բոլորի ներքնագգեստները լվացվում են միասին և այլն):

ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ երեխաների անվտանգությունը լիարժեք ապահովված չէ: Երեխաները ծանոթ չեն տեղահանման պլանին: Տարածքը հսկող պահակի աշխատանքը հաճախ կրում է ձևական բնույթ:

Ինչպես և հատուկ հանրակրթական դպրոցներում, այնպես էլ գիշերօթիկ հաստատություններում կան բուժսենյակներ, սակայն բուժանձնակազմը չունի հստակ գործառնություններ, չափորոշիչներ, որի պատճառով դժվար է գնահատել նրանց աշխատանքի սահմանները և գործառնությունների կազմակերպումը: Հանդիպել է ժամկետանց դեղորայք: Բուժմասերում առանձնացված մեկուսացման սենյակները նպատակային չեն օգտագործվում: ԲԿԱՄ-ը բազմիցս ակնատես է եղել, որ նույնիսկ ջերմող երեխան չի մեկուսացվել: Խնդրահարույց է նեղ մասնագետների խորհրդատվության պատշաճ կազմակերպումը: Նկատի ունենալով, որ երեխաների բուժապասարկումը իրականացվում է ըստ բնակության վայրի և հաճախ այդ վայրը գտնվում է փաստացի հաստատությունից հեռու, խնդիր է առաջանում երեխաներին անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու հարցում: Այսպես, երեխաները տուն են վերադառնում հանգստյան օրերին, իսկ համապատասխան տարածքը սպասարկող բուժհաստատությունը հաշվառման բացակայության պատճառով մերժում է երեխաների բուժապասարկումը:

Նշված հաստատություններում ոչ արդյունավետ է իրականացվում երեխաների ընտանիքների հետ սոցիալական կապերի վերականգնումն ու պահպանումը: Նկատի ունենալով շահառուների մեծ քանակը, փաստացի բնակության տարածքների հեռավորությունը և սոցիալական աշխատողներին տեղաշարժման ծախսերը չտրամադրելու հանգամանքը՝ սոցիալական աշխատողի աշխատանքը դառնում է ոչ արդյունավետ:

ԲԿԱՄ-ը բազմիցս արձանագրել է, որ անհատական վերականգնողական քարտերը պատշաճ չեն լրացվում, ինչն անուղղակիորեն վկայում է անհատական մոտեցման բացակայության մասին: ԲԿԱՄ-ն արձանագրում է, որ դիտարկվող հաստատություններում չկա երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության դեպքերի գրանցման մատյան:

Վերոնշյալ թերությունների վերացման ուղղությամբ առաջարկվում է.

- Հետևողական և համակարգային քայլեր ձեռնարկել մանկատների սաների բնակարանային ապահովման խնդիրը լուծելու ուղղությամբ,
- Անհրաժեշտ քանակով ապահովել 0-3 տարեկան երեխաներին խնամքի համար պահանջվող տակդիրներով, հիգիենայի և անկողնային պարագաներով,
- Գիշերօթիկ հաստատություններն ապահովել պատշաճ պահման և խնամքի կազմակերպման պայմաններով,
- Գիշերօթիկ հաստատություններում պահպանել սննդամթերքի անվտանգության պայմանները,
- Գիշերօթիկ հաստատություններում վերահսկողություն սահմանել բարեգործական հիմունքներով տրամադրված սննդամթերքի և կենցաղային իրերի պատշաճ պահման և երեխաներին, ըստ անհրաժեշտության, համապատասխան իրերի տրամադրման նկատմամբ,
- Գիշերօթիկ հաստատություններում ապահովել երեխաների պատշաճ հիգիենան,
- Ձեռնարկել միջոցներ գիշերօթիկ հաստատությունների երեխաների փաստացի գտնվելու վայրում անվճար պարտադիր բժշկական սպասարկման ապահովման ուղղությամբ,

- Միջոցներ ձեռնարկել գիշերօթիկ հաստատություններում տրամադրվող բուժօգնության ապահովման ուղղությամբ,
- Միջոցներ ձեռնարկել գիշերօթիկ հաստատությունների սոցիալական աշխատողի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ,
- Հաստատություններում վարել երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության դեպքերի գրանցման մատյան (մարմնական վնասվածքների հաշվառման մատյան):